

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԱՐԺՈՒՅԹԸ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ԳՐԱԲԱՐԻ
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԱՐԺՈՒՅԹԸ**



**«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
ԵՐԵՎԱՆ
2000թ.**

ԴՏՀ 809.198.1 (075)
ԳՄԴ 81.23 ց73
Խ - 282

Հրատարակման է ներկայացրել
Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի
հայոց լեզվի ամբիոնը

Ցայազրվում է
Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ եւ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գրախոսներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է.Ռ.ԱԹԱՅԱՆ
Ք.Գ.Ք. Ղ.Ս.ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Խմբագիր՝

Ք.Գ.Ղ. Լ.Շ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ.

Խ - 282 ԳՐԱԲԱՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ: /Գուրգեն
Խաչատրյան.-Եր.: Վան Արյան, 2000.-308էջ:/

Մենագրությունը նվիրված է շարահյուսության բնագավառի
արդիական հարցերից մեկի՝ բայի արժույթի ուսումնասիրությանը,
որի համար լեզվական նյութ են ընտրվել դասական հայերենի վեր-
լուծական (հարադրավոր, գուգաբայական և պատճառական հարա-
դրավոր) բայերը: Հեղինակը համակարգված քննության է ենթարկել
այդ բայերի արտահայտության ու բովանդակության պլանները և
արժութային առանձնահատկությունները:

Նախատեսվում է հայերենի քերականությամբ հետաքրքրվող-
ների համար:

Խ - $\frac{4602020100}{854(01)-2000}$ 2000թ.

ԳՄԴ 81.23 ց73

ISBN 99930-57-51-7

© ԽԱՉԱՏՐՅԱՆ Գ., 2000թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գրերի գյուտից հետո՝ տակավին 5-րդ դարում, «կրոնակեղեցական, պատմական, փիլիսոփայական, կանոնական, հակաճառական, մեկնողական, վարքագրական բովանդակությամբ»¹ բազմաթիվ գործերին գուգահեռ հայերեն թարգմանվեց նաև Դ.Թրակացու «Արվեստ քերականության» աշխատությունը, որով և ընդունված է նշանավորել հայ քերականագիտության սկիզբը: Հետագա դարերը գիտության այս բնագավառի համար եղել են որոնումների ու հայտնագործությունների վերընթաց աստիճաններ: Այս տեսանկյունից արգասավոր են հատկապես վերջին երկու (19-20-րդ) դարերը, որոնց ընթացքում կատարվել են մանրակրկիտ և համակարգված բազմաթիվ ուսումնասիրություններ (դրանք հիմնականում վերաբերում են գրական հայերենի աշխարհաբար շրջանին): Ասվածն, անշուշտ, չի նշանակում, թե հայոց լեզվի բոլոր հարցերն ու խնդիրները լուծված սպառված են: Մասնավորապես գրական հայերենի հին և միջին շրջաններին վերաբերող մի շարք առաջնահերթ հարցեր առ այսօր չեն գտել իրենց որոշակի պատասխանները: Խոսքը վերաբերում է նաև բայի արժույթին, որն ուսումնասիրում ենք գրաբարի վերլուծական բայերի մասին հավաքած լեզվական նյութի հիման վրա:

Շարահյուսական արժույթի գաղափարը գիտական շրջանառության մեջ է դրվել մեր դարակեսին և անմիջապես դարձել լեզվաբանների ուշադրության առարկան: Քերականական այդ երևույթի շուրջ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, արտահայտվել կարծիքներ, որոնք միշտ չէ, որ համընկնում են: Սկզբնական շրջանում արժույթը գնա-հատվել է որպես նախադասության կենտրոնական անդամի՝ դիմավոր բայ-ստորոգյալի՝ առարկա անվանող այլ անդամների հետ կապակցելիության հնարավորությունների արտահայտություն²: Հետագայում արժույթի արտահայտություն են դիտվել նաև բառ կազմող ձևույթների կապակցելիության հնարավորությունները³: 1980-90-ական թվականները արժույթի ուսումնասիրության պատմության մեջ նշանավորվել են որպես նոր փուլ. տեսական հետազոտություններին գուգահեռ կազմվել են և շարունակում

են կազմվել բառարաններ⁴, որոնցում ընդգրկված բառային միավորները գնահատվում են ըստ արժույթի:

Հայ լեզվաբաններից քչերն են զբաղվել արժույթի ուսումնասիրությամբ (Է.Աթայան⁵, Գ.Ջահուկյան⁶, Հ.Հարությունյան⁷, Ս.Գյուլբուդադյան⁸, Գ.Ադամյան⁹ և ուրիշներ)¹⁰: Մասնավորապես գրաբարի բայի արժույթին նվիրված որևէ ուսումնասիրություն չի կատարվել: Արժույթի գաղափարին առաջինն անդրադարձել է Է.Աթայանը: Զննության առնելով Լ.Տենիերի առաջ քաշած տեսությունը՝ գիտնականն ուսումնասիրվող հարցի նկատմամբ ցուցաբերել է նոր մոտեցում՝ առանձնացնելով արժույթի երկու դրսևորում՝ լեզվական, որը կարող է ունենալ թե՛ անհրաժեշտ, թե՛ ֆակուլտատիվ դրսևորումներ¹¹ և խոսքային, որտեղ արժույթի ֆակուլտատիվ դրսևորումները նույնպես վերածվում են անհրաժեշտի¹²: Արժույթի ուսումնասիրության քննադատում յուրջ ներդրում ունի նաև Գ.Ջահուկյանը: Առանձնացնելով արժույթի չորս դրսևորում (ենթակառուցություն, ստորոգառություն, խնդրառություն, պարագառություն)¹³ լեզվաբանը կատարել է արդի հայերենի բայերի դասակարգում՝ ըստ նշված արժույթների¹⁴: Հ.Հարությունյանը հակված է ավելի ընդլայնելու արժույթի գաղափարը՝ դրա տակ նկատի առնելով ոչ միայն բայի, այլև մյուս խոսքի մասերի՝ կառավարման եղանակով ստորադաս անդամ պահանջելու ունակությունը¹⁵:

Այսուհանդերձ, գիտական ասպարեզի վրա եղած տեսական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արժույթի ընդգրկման սահմաններին, արժույթի դրսևորում հանդիսացող միավորների, վերջիններիս ընտրության սկզբունքներին վերաբերող մի շարք հարցեր դեռևս կարոտ են հստակեցման և համակարգված ուսումնասիրության:

Շարահյուսական մակարդակի առանցքային միավորը նախադասությունն է¹⁶, հետևաբար նախադասության հետ առնչվող քերականական իրողություններից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը լրացնում է նախադասության մասին եղած գիտելիքների համակարգը: Մասնավորապես գրաբարի բայական հարադրությունների արժույթի ուսումնասի-

բությունն այն առաջնահերթ խնդիրներից մեկն է, որի հնարավորին չափ սպառնիչ լուծումն իր հերթին կնպաստի նախադասության ձևավորման գործընթացն ապահովող հանգամանքների մասին եղած տեսական նյութի ամբողջացմանը:

Արժույթի ուսումնասիրությունն իր մեջ ներառում է ոչ միայն դիմավոր բայի կապակցելիության հնարավորություններին, այլև նրա հետ նախադասություն կազմող շարահյուսական միավորների արտահայտության պլանին, դասային պատկանելությանը և դրանց կապակցման եղանակներին վերաբերող հարցերի համակարգը:

Ուսումնասիրության նորույթը շարահյուսական արժույթի ամբողջական քննության առաջին փորձն է, որը կատարել ենք դասական հայերենի վերլուծական բայերի լեզվական նյութի վրա: Այստեղ քննության են ենթարկվում գրաբարի վերլուծական բայերը ըստ արտահայտության և բովանդակության պլանների և վերջիններիս փոխհարաբերության, ըստ նախադասություն կազմող միավորների հետ կապակցելիության հնարավորությունների և ըստ կապակցվող միավորների դասային պատկանելության:

Ձեռնարկելով այս աշխատանքը՝ նպատակ ենք հետապնդել գիտական ասպարեզի վրա դնել գրաբարի բայական հարադրությունների և նրանց արժույթի համակողմանի բնութագիրը, որը փորձել ենք իրականացնել հետևյալ խնդիրների լուծման ճանապարհով.

1. բացահայտել գրաբարի վերլուծական բայերի տարբեր տեսակների ձևավորման ուղիները, սահմանները, դրանցից յուրաքանչյուրի առանձնահատուկ գծերը,

2. ցույց տալ հարադրավոր, զուգաբայական և պատճառական հարադրավոր բայերի կապն ու առնչության եզրերը միմյանց, ինչպես նաև կազմությամբ համադրական այլ միավորների հետ,

3. տալ գրաբարի վերլուծական բայերի արտահայտության ու բովանդակության պլանների և դրանց փոխհարաբերությունների ամբողջական նկարագիրը (արտահայտության կադապարներ, սեռ, իմաստային դրսևորումներ, ձևաիմաստային առնչություններ և այլն),

4. առանձնացնել գրաքարի վերլուծական բայերի խմբերն ըստ ենթակաների և խնդիրների հետ կապակցման դասային խմբերի,

5. դասակարգել գրաքարի վերլուծական բայերի տեսակներն ըստ սեռի քերականական կարգի՝ արժեքավորելով դրանցից յուրաքանչյուրի կապակցելիության հնարավորությունները ենթակայի, կոչականի, ստորոգելիի, խնդրի (խնդիրների) և պարագայի (պարագաների) հետ,

6. ի հայտ բերել արժութային այն սահմանափակությունները, որոնք պայմանավորված են գրաքարի վերլուծական բայերի և նրանց հետ կապակցվող առարկաների դասային պատկանելությամբ, բաղադրիչների իմաստային-քերականական յուրահատկություններով, ոճական կամ այլ հանգամանքներով:

Աշխատանքի համար լեզվական նյութ են ծառայել գրաքարի բայական հարադրությունները և նրանցով կազմված մախադասությունները, որ համատարած ընտրանքի սկզբունքով քաղել ենք 5-րդ դ. յոթ հայ հեղինակների (Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշէ, Խորենացի, Կողբացի, Կորիւն, Փարպեցի) բնագրերից, «թարգմանական գրականության ամենախոշոր կոթողից»¹⁷ Աստվածաշնչից, ինչպես նաև «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակից՝ վերջին դեպքում կարևորելով 5-րդ դ. մյուս բնագրերի և մաքուր հայկաբան ոճով թարգմանված երկերի վկայությունները, որոնք բերվում են համապատասխան բառահոդվածներից՝ հեղինակների համառոտագրված անուններով հանդերձ: Ըստ անհրաժեշտության՝ նշված բառարանից քաղել ենք նաև ուշ շրջանի լեզվական փաստեր¹⁸, որոնք մյուսներից առանձնանում են (ՆՀԲ) հղումով¹⁹: Հարկ է նշել, որ Աստվածաշնչի և մի շարք երկերի անթերի թարգմանությունը լավագույնս վկայում է գրաքարի բառագանձի և հաղորդակցական միավորների հարուստ հնարավորությունների մասին: Դրանք այս առումով մի կատարյալ գանձարան են, ուր տեղ են գտել բառաքերականական այնպիսի իրողություններ, որոնք այս կամ այն պատճառով (թեմատիկա, ոճ և այլն) բացակայում են հայ հեղինակների երկերում: Նշված գործերից առանձնացրել ենք շուրջ 2500 վերլուծական բարդ բայեր, ապա դրանցով ձևա-

վորված բազմաթիվ նախադասությունների քննության հիման վրա շարա-
դրել ուսումնասիրության տեսական նյութը:

* * *

Արժույթի գաղափարը²⁰ գիտական շրջանառության մեջ է դրել
Ֆրանսացի լեզվաբան Լ.Տենիերը, որն ընտրել է արժույթը բնութագրելու
ավելի քան պատկերավոր միջոց: Նա բայը համեմատում է կեռիկներ
ունեցող ատոմի հետ, որն իր ունեցած՝ թվով շատ կամ քիչ կեռիկներով դեպի
իրեն է ձգում համապատասխան թվով ակտանտներ (գործողություն
կատարողներ, գործողության մասնակիցներ²¹), որպեսզի դրանք պահի իր
մոտ²²: Ըստ Տենիերի՝ բայի ունեցած կեռիկների թիվը և բայի կողմից
կառավարվող ակտանտների թիվն էլ հենց ներկայացնում են բայի արժույթ
կոչված քերականական իրողության էությունը²³: Լ. Տենիերի աշ-
խատության մեջ արժույթի գաղափարն անմիջականորեն կապված է բայ
խոսքի մասի միայն դիմավոր ձևի հետ: Ասվածն ինքնին նշանակում է, որ
Տենիերը (հետագայում նաև մյուս լեզվաբանները) արժույթի դրսևո-
րումներն ուսումնասիրում են շարահյուսական մակարդակի լեզվական
միավորներից մեկի՝ նախադասության կազմում: Լեզվաբանն առանձնաց-
նում է դիմավոր բայի արժույթի ընդամենը երեք արտահայտություն²⁴:
Դրանք նախադասության դիմավոր բայի հետ սերտորեն կապված անդամ-
ներն են, որոնց անմիջական մասնակցությամբ սկսվում և ավարտվում է
գործողությունը: Տենիերի կողմից այդպիսի միավորներ են դիտվում՝ ա) գոր-
ծողություն կատարող առարկան՝ ենթական, բ) գործողությունն ուղղա-
կիորեն կրող առարկան՝ սեռի խնդիրը, և գ) գործողությունն անուղղա-
կիորեն կրող առարկան՝ բնության խնդիրը: Վերջինիս դեպքում Տենիերը
նկատի ունի գործողությունն անուղղակիորեն կրող ոչ թե բոլոր խնդիր-
ները, այլ միայն նրանք, հանուն կամ ընդդեմ որոնց կատարվում է գոր-
ծողությունը: Փաստորեն Տենիերը սահմանափակվում է կենդանի էակ կամ
առարկա անվանող²⁵ և դիմավոր բայի կողմից պարտադիր կերպով

ենթադրվող ենթակայի ու խնդիրների հետ տվյալ բայի կապակցելիության հնարավորությունների ուսումնասիրությամբ՝ զանց առնելով նախադասության մեջ բայի հետ կապակցվող այլ անդամներն ու միավորները:

Հետագայում նկատվում է արժույթի բովանդակության ընդլայնման միտում, որը տարբեր լեզվաբանների կողմից գիտականորեն հիմնավորվում է տարբեր տեսանկյուններից, որոնք բոլոր դեպքերում հետապնդում են հարցը հնարավորին չափ մանրաքնին ուսումնասիրելու նպատակ:

Մի խումբ լեզվաբաններ վերանայում են կենտրոնական անդամի՝ դիմավոր բայի հետ կապակցվող շարահյուսական միավորների թվի հարցը: Լ.Տենիերի կողմից կարևորված նախադասության անդամներից բացի՝ նրանք արժույթի արտահայտություններ են դիտում նաև այլ անդամներ: Ընդ որում, վերջիններիս ընտրությունը կատարվում է երկու ճանապարհով:

Մի դեպքում հաշվի են առնում այդ անդամների և՛ դիմավոր բայի կողմից պարտադիր կերպով ենթադրվելը, և՛ կապակցման եղանակը: Այստեղ դիմավոր բայի հետ կապակցվող միավորներն արտահայտվում են առարկա անվանող թեքվող խոսքի մասերով կամ վերջիններիս անմիջական մասնակցությամբ, և կապակցումը տեղի է ունենում համաձայնության կամ կառավարման եղանակով: Հարցին այս տեսանկյունից մոտեցող լեզվաբաններն առանձնացրել են արժույթի այլ արտահայտություններ ևս: Այսպես՝ ըստ Գ.Ջահուկյանի՝ դիմավոր բայի կապակցման հնարավորությունները հանդես են գալիս «...որպես՝ ա) *ենթակաառություն* (բառային-քերականական ենթակա ստանալը կամ չստանալը), բ) *ստորոգառություն* (ստորոգելի կամ ստորոգելիական խնդիր ստանալը կամ չստանալը²⁶), գ) *խնդրառություն* (տարբեր տիպի խնդիրներ ստանալը կամ չստանալը, ընդ որում, սրա մի դրսևորումը կլինի անցողական-անանցողականությունը՝ ուղիղ խնդիր ստանալը կամ չստանալը, մի այլ դրսևորումը՝ դերբայությունը՝ անորոշ դերբայ ստանալը կամ չստանալը) և դ) *պարագաառություն* (տարբեր տիպի պարագաներ ստանալը կամ չստանալը)»²⁷: Հարկ է նկատել, որ գիտնականը՝ ա) ստորոգառությունն ուսումնասիրելիս քննության նյութ է դարձրել ոչ միայն առարկա, այլև

հատկանիշ ցույց տվող այն ստորոգելիներն ու ստորոգելիական խընդիրները, որոնք կապակցվում են կառավարման եղանակով, բ) խնդրառությունն ուսումնասիրելիս քննության մյուս է դարձրել պարտադիր կերպով ենթադրվող և պահանջվող բոլոր խնդիրները՝ անկախ դրանց քերականական իմաստից, գ) պարագաառության դեպքում նկատի ունի ոչ թե պարագաներն ընդհանրապես, այլ, այսպես կոչված, պարագայական խնդիրները, որոնք արտահայտվում են տեղ անվանող առարկաների որևէ հոլովաձևով կամ վերջինիս մասնակցությամբ ձևավորված կապական կառույցներով և բայի հետ կապակցվում են կառավարման եղանակով:

Երկրորդ դեպքում արժույթի բովանդակությունն ընդլայնում են՝ հաշվի առնելով դիմավոր բայի հետ կապակցվող միավորների պարտադիր կերպով ենթադրվելը: Հարցին այս տեսանկյունից մոտեցող գիտնականները չեն կարևորում ո՛չ կապակցման եղանակները, ո՛չ էլ, հետևաբար, բայի հետ կապակցվող միավորների խոսքիմասային պատկանելությունը: Այս դեպքում արժույթի արտահայտություններ են դիտվում մախաղասության դիմավոր բայի կողմից ենթադրվող և վերջինիս հետ ցանկացած եղանակով կապակցվող թե՛ ակտանտները, թե՛ սիրկոնստանտները (մակբայներով կամ վերջիններիս համարժեքներով արտահայտվող և գործողության տեղ, ժամանակ, չափ, ձև ցույց տվող բառեր)²⁸: Այսպես՝ ռուս լեզվաբան Տ.Մորոզովան և ուրիշներ արժույթի արտահայտություն են դիտում ոչ միայն համաձայնության ու կառավարման, այլ նաև առդրության եղանակով կապակցվող միավորները, որոնցից առաջին երկուսն արտահայտվում են առարկա անվանող բառերով կամ վերջիններիս թեք ձևերի մասնակցությամբ, իսկ վերջինը՝ հատկանիշ կամ հանգամանք անվանող ժամանակի, տեղի, աստիճանի և չափի մակբայներով²⁹: Փաստորեն այս դեպքում տեղ է տրվում բայի արժույթի նաև մասնակի դրսևորումներին, որոնք էական չեն այնքանով, որ վերաբերում են միայն սահմանափակ թվով բայերի:

Լեզվաբանների մյուս խումբը արժույթի բովանդակությունն ընդլայնում է այլ տեսանկյունից: Այս դեպքում վերանայվում է կենտրոնական

անդամի հարցը, որի արդյունքում դիմավոր բայից բացի ուսումնասիրության են ենթարկվում նաև այն բառերը, որոնք օժտված են կառավարման եղանակով կապակցվող ստորադաս բաղադրիչ(ներ) ենթադրելու գործությամբ: Հարցին այս կտրվածքով մոտեցող լեզվաբանների կողմից ուսումնասիրության նյութ են դառնում ոչ միայն բայերի, այլ նաև բազմաթիվ այլ բառերի (դրանք հիմնականում բայանուններ են՝ գոյականներ, ածականներ, մակբայներ) արժութային առանձնահատկությունները:

Հատկանշականն այն է, որ թեև տարբեր լեզվաբանների կողմից արժույթի բովանդակության ընդլայնումը կատարվում է տարբեր տեսանկյուններից և տարբեր չափով, սակայն բոլորի համար էական է դիմավոր բայի կամ գերադաս այլ բառի հետ կապակցվող միավորների՝ պարտադիր կերպով ենթադրվելը՝ կախված գերադաս բաղադրիչի սեռի քերականական կարգից կամ բառիմաստից:

Լեզվաբանական գրականության մեջ տեղ է գտել նաև ներքին արժույթ քերականական հասկացությունը: Ի հակադրություն արտաքին արժույթի, որը շարահյուսական միավորների կապակցելիության հնարավորությունների արտահայտությունն է, ներքին արժույթի միջոցով արտահայտվում է բառային մակարդակի միավորներից մեկի՝ ձևույթի՝ այլ ձևույթների հետ կապակցելիության հնարավորությունները³⁰:

Հայտնի է, որ նախադասության անդամների կապակցումը տեղի է ունենում չորս եղանակներով³¹՝ համաձայնությամբ, կառավարմամբ, առդրությամբ և ընդհանրական շարահարությամբ³² կամ հարակցությամբ³³:

Նախադասության տարբեր անդամներ միմյանց հետ կապակցվում են տարբեր եղանակներով, որոնք մեր լեզվամտածողության արդյունքներն են՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Շարահյուսական կապակցության եղանակը կարող է պայմանավորված լինել նրանով, թե կապակցվող գույգերը որ խոսքի մաս(եր)ով են արտահայտվել կամ որ խոսքի մասի դերով են կիրառվել: Այսպես՝ բայերը մակբայների հետ կապակցվում են առդրության, իսկ գոյականների հետ՝

կառավարման եղանակով: Հմմտ. *Երբեմն* այսպես ուտե սուր և *երբեմն* այնպես (Բ Թագ., ԺԱ, 25): Խօսեր *մարդկօրէն*, այլ կեղեքէր *գազանաբար* (Մանդ.) և *Զաջ թևն* Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր *գազանօքն* (Եղիշէ, 117): Թվականները ժամանակակից հայերենում բայերի հետ չեն կապակցվում³⁴, մինչդեռ փոխանվանաբար գործածվելով՝ հնարավորություն են ստանում նրանց հետ կապակցվել համաձայնության կամ կառավարման եղանակով: Օրինակ՝ Վերստին ետ ես դառնում շոր ու կարին, Կամ երագում, որ «*չորսերդ*» դառնան «*հինգեր*»³⁵: Թե նա *մեկին տասն* է տալիս մի թիզ արտից և կամ այգուց³⁶:

2. Կարևոր է նաև այն հանգամանքը, թե կապակցվող քերականական գույգերը իմաստային և քերականական ինչ առանձնահատկություններով են աչքի ընկնում: Այսպես, բայը խոսքի մեջ հանդես է գալիս դիմավոր կամ անդեմ ձևով: Դրանցից առաջինը խոսք կազմող միավորների հետ կարող է քերականական կապի մեջ մտնել թե՛ համաձայնության, թե՛ կառավարման և թե՛ առդրության եղանակներով: Օրինակ՝ Իսկ *գունդն* Հայոց *իրբև լուաւ գայս գոյժ* դառնութեան, *ոչ ինչ թուլացեալ լքան ի քաջութենէ* (Եղիշէ, 71): Բայց ընդ քո *յոյժ* զարմացեալ եմ *ընդ* մտացո *ծննդականութիւն* (Խոր., 11) և այլն: Մինչդեռ անդեմ ձևերը համաձայնության եղանակով կապի մեջ մտնել չեն կարող, քանի որ գուրկ են դեմքի և թվի քերականական կարգերից: Որակական ածականները կարող են ստորադաս անդամ պահանջել կա՛մ առդրության, կա՛մ կառավարման եղանակով: Օրինակ՝ Եւ եմ, որ ոչ եմ ստոյգ արդար (Փարպ., 113): Նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր (Խոր., 166) և այլն: Մինչդեռ հարաբերական ածականներն ստորադաս քաղադրիչ չեն ստանում:

3. Էական դեր ունի և այն, թե կապակցվող քաղադրիչները շարահյուսական ինչպիսի հարաբերություն են ձևավորում՝ համադասակա՞ն, թե՞ ստորադասական: Այսպես, ենթակայի և ստորոգյալի միջև ձևավորվում է համադասական հարաբերություն, որն իրականանում է համաձայնության եղանակով: Օրինակ՝ Եւ այլ մեծամեծ *աջողութիւնք կատարէին* ի ձեռն զօրականին (Եղիշէ, 70): Ես աւերակացս ու՞մ *թագաւորեմ* (Խոր., 192): Եւ

նա ապէ. «*Ղու՛ երթիջիր, զի ի քարինս դիւաց է շահատակել*» (Խոր., 330) և **այլն:** **Նկատենք,** որ ենթակա-ստորոգյալ գույգի համաձայնությունը ոչ թե լրիվ, այլ մասնական բնույթ ունի³⁷: Այստեղ կարևոր են համարվում բայ-ստորոգյալի միայն դեմքի և թվի քերականական կարգերը, իսկ բայ-ստորոգյալը և ենթական ներկայացնող բառերի քերականական մյուս կարգերը (սեռ, հոլովում, առկայացում և այլն) համարվում են ոչ էական: Որոշի և որոշյալի միջև ձևավորվում է ստորադասական հարաբերություն, որն իրականանում է կա՛մ համաձայնության, կա՛մ կառավարման, կա՛մ առդրության եղանակով: Օրինակ՝ Ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել և հովիւք առանց *քարիոք* վերականգնուի (Խոր., 311): Եհան ծառայս անօթս *ոսկւոյ* և անօթս *արծաթոյ* (Ծննդ., ԻԴ, 53): *Այնպիսոյ քարոյ* Աստուծոյ որդի ի չարեն որդոյն սատակեցաւ (Եզնիկ, 142) և այլն:

4. Կապակցման եղանակի հարցում կարող է էական լինել նաև կապակցվող միավորների շարադասությունը, որոշ դեպքերում էլ՝ կազմությունը: Այսպես, կախված ստորադաս բաղադրիչի շարադասությունից և վանկերի քանակից՝ գրաբարում ածականով արտահայտված որոշիչը որոշյալի հետ կապակցվում է տարբեր եղանակներով: Նախադաս ածական որոշիչը, եթե բազմավանկ է, «հոլովով ու թվով չի համաձայնում իր որոշյալին»³⁸, այսինքն՝ կապակցումը տեղի է ունենում առդրության եղանակով: Օրինակ՝ *Չարաթոյն օղոցն* շնչմամբ խստութեան դառնութեան՝ խորշակահար ցամաքեցուցանէ *զվարսածն բոյսս* դալարոյն (Ագաթ., 276): Զի քաջ արանց է *յարծակ դաշտի* և *յազատ տեղոք* կռուել (Խոր., 290) և այլն: «Ետադաս գործածության դեպքում ածական անունները հոլովվում են՝ թվով ու հոլովով համաձայնելով գոյական անվանը»³⁹. որոշյալի հետ կապակցվում են համաձայնության եղանակով: Օրինակ՝ Առլցեալք *մարգարտովն պատուականաւ* (Ագաթ., 8): *Յանօթս ցանկալիս ականքք պատուականօք* պաշտամանց տեղիսն մեծարէր (Ագաթ., 19):

5. Կարևոր հանգամանքներից մեկն էլ այն է, թե շարահյուսական կապակցության որ անդամի դերն է կատարում կապակցվող բաղադրիչներից յուրաքանչյուրը՝ համագո՞րի, գերադասի՞, թե՞ ստորադասի: Այսպես,

եթե ածականը ժամանակակից հայերենում հանդես է գալիս որպես ստորադաս բաղադրիչ, ապա գերադաս բաղադրիչի հետ կապակցվում է միայն առդրության եղանակով⁴⁰։ Օրինակ՝ «*Սահուն* քայլերով, աննշմար, որպես *քնքուշ* մութի թև...»⁴¹։ Մինչդեռ գերադաս բաղադրիչի գործառույթ կատարելու դեպքում ածականը կարող է ստորադաս բաղադրիչ ստանալ թե՛ առդրության և թե՛ կառավարման եղանակով։ Հմմտ. «Ու հավիտյան էլ մնացին քնած, *Դավին* անտեղյակ, *ցավին* անտալքեր»⁴² և «Այնպես անխիճ են և նրման լացին երգերն իմ երկրի, այնպես տխրագին»⁴³։

Քանի որ մեր ուսումնասիրության հիմնախնդրի՝ արժույթի հանգուցային միավորը բայն է, ստորև կփորձենք ներկայացնել միայն այդ խոսքի մասի՝ շարահյուսական կապակցությունների մեջ դրսևորած առանձնահատկությունները։

Շարահյուսական կապակցությունների մեջ բայը կարող է հանդես գալ բոլոր հնարավոր դիրքերում՝ կատարելով մի դեպքում՝ համագոր, մյուս դեպքում՝ գերադաս, երրորդ դեպքում՝ ստորադաս բաղադրիչի քերականական գործառույթ։ Դրանցից արժույթի արտահայտության միջոց են ծառայում այն կապակցությունները, որոնցում բայը հանդես է գալիս կամ համադաս, կամ գերադաս բաղադրիչի շարահյուսական գործառույթով։ Ինչ վերաբերում է ստորադաս բաղադրիչի գործառույթ կատարող բայերին, ապա վերջիններիս դերը բայի արժույթի գնահատման գործում էական չէ։ Համագոր և գերադաս բաղադրիչների գործառույթներով հանդես եկող դիմավոր բայերի մասնակցությամբ ձևավորվում են *ենթակա-ստորոգյալ*, *կոչական-ստորոգյալ*, *ստորոգելի-հանգույց*, *խնդիր-լրացյալ* և *պարագա-լրացյալ* քերականական կապակցություններ, որոնք իրականանում են տարբեր եղանակներով։

Լեզվական փաստերը վկայում են, որ գրաբարում դիմավոր բայը *ենթակայի* հետ կարող է կապակցվել համաձայնության, *կոչականի* հետ՝ համաձայնության կամ հարակցության, *ստորոգելիի* հետ՝ համաձայնության, կառավարման կամ առդրության, *խնդրի* հետ՝ կառավարման, իսկ *պարագայի* հետ՝ կառավարման կամ առդրության եղանակներով։

Սակայն խոսքային իրադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, կախված կապակցման եղանակից, համագոր և գերադաս բաղադրիչների գործառույթով հանդես եկող դիմավոր բայերի հետ կապակցվող ոչ բոլոր միավորներն են արժույթի արտահայտություն:

Ըստ կապակցվող շարահյուսական միավորների քերականական կարգերի համապատասխանության՝ համաձայնության եղանակը լինում է *լրիվ* կամ *մասնակի*:

Համաձայնությունը լրիվ է համարվում կապակցվող կողմերին հատուկ բոլոր քերականական կարգերի համապատասխանության դեպքում: Մասնակի է համարվում այն համաձայնությունը, որտեղ առկա է կապակցվող կողմերին հատուկ ոչ բոլոր քերականական կարգերի համապատասխանություն: Համաձայնության եղանակով կապակցվում են ենթակաստորոգյալ, կոչական-ստորոգյալ և բացահայտյալ-բացահայտիչ քերականական զույգերը: Գոյականներով արտահայտված բացահայտյալ-բացահայտիչ զույգի կապակցումը կատարվում է լրիվ համաձայնությամբ, մինչդեռ անձնական դերանունով և գոյականով արտահայտված բացահայտյալ-բացահայտիչ, ինչպես նաև ենթակա-ստորոգյալ և կոչական-ստորոգյալ շարահյուսական զույգերի կապակցումը տեղի է ունենում մասնակի համաձայնությամբ:

Բացահայտյալ-բացահայտիչ կապակցությունը հասկանալի պատճառով դուրս է մնում մեր ուսումնասիրության շրջանակից: Ինչ վերաբերում է ենթակա-ստորոգյալ և կոչական-ստորոգյալ զույգերին, ապա նկատելի է, որ առաջին դեպքում կապակցումը կատարվում է դեմքի և թվի, իսկ երկրորդ դեպքում՝ միայն թվի քերականական կարգերի համապատասխանությամբ:

Մեր պատկերացմամբ, ենթակա-ստորոգյալ և կոչական-ստորոգյալ շարահյուսական զույգերի կապակցումը միաժամանակ ուղեկցվում է փոխկառավարմամբ: Բանն այն է, որ և՛ ենթական, և՛ կոչականը, և՛ ստորոգյալն արտահայտվում են թեքվող խոսքի մասերով և չեն կարող այս կամ այն կապակցության մեջ որևէ կերպ չկառավարվել: Եվ քանի որ

ենթակա-ստորոգյալ և կոչական-ստորոգյալ գույգերի բաղադրիչ միավորները քերականորեն համագոր են, ուստի սրանց միջև տեղի է ունենում ոչ թե միակողմանի կառավարում (օրինակ՝ ենթական՝ ստորոգյալին կամ հակառակը), այլ փոխկառավարում: Ընդ որում, ենթակա-ստորոգյալ կապակցության մեջ ենթական միշտ արտահայտվում է ուղղական հոլովի որոշյալ կամ անորոշ առմամբ (քերականական գրո ձև), իսկ ստորոգյալը՝ միշտ դիմավոր բայաձևով (քերականական թեք ձև): Ի դեպ, ենթակա-ստորոգյալ գույգի փոխկառավարումն ավելի քան ակնհայտ է գրաբարում, որտեղ, ուղղականով ենթակա-դիմավոր բայաձևով ստորոգյալ գույգից բացի, նախադասություն կարող է կառուցվել նաև սեռականով ենթակա-դիմավոր բայաձևով ստորոգյալ կապակցությամբ: Այս դեպքում կապակցվող երկու բաղադրիչներն էլ հանդես են գալիս թեք ձևով: Հմմտ. *Ես ի թիկունս ոչ եկից* նոցա (Բուգ., 116) և *Եթե իմ չէր զայս պատմել ձեզ* (Բուգ., 36): *Զի իմ արծակեալ լիցի* գրեզ (Բուգ., 203):

Ինչ վերաբերում է կոչական-ստորոգյալ կապակցությանը, ապա այստեղ կոչականը միշտ արտահայտվում է ուղղական հոլովի անորոշ առմամբ, իսկ ստորոգյալը՝ միշտ դիմավոր ձևով: Օրինակ՝ *Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցասէրդ, հայեա՛ց* աստանօր (Խոր., 17):

Կառավարման եղանակը բնութագրելիս *ուժեղ* և *թույլ*, *պարտադիր* և *ոչ պարտադիր* տեսակներին զուգահեռ լեզվաբաններն առանձնացնում են նաև *հատուկ* և *ընդհանուր* տեսակները⁴⁴: Ս.Գյուլբուրդադյանի կարծիքով, եթե որևէ լրացում պահանջվում է «առանձին խումբ բայերի»⁴⁵ կողմից, ապա «կառավարումը կոչվում է ուժեղ (պարտադիր կամ հատուկ)»⁴⁶, իսկ եթե այն պահանջվում է «տվյալ խոսքի մասին պատկանող բոլոր»⁴⁷ բայերի կողմից, ապա լրացումն ընդհանուր է, և կառավարումը համարվում է ոչ պարտադիր, թույլ⁴⁸: Թեև թույլ կառավարման եղանակով կապակցությունների ստորադաս բաղադրիչները ևս արտահայտվում են որևէ հոլովաձևով կամ կապական կապակցությամբ, սակայն պարտադիր լինելու տեսանկյունից զիջում են այն ստորադաս բաղադրիչ(ներ)ին, որոնց առկայությունը միարժեքորեն անհրաժեշտ է՝ պայմանավորված գերադաս

բաղադրիչի սեռի քերականական կարգով կամ բառիմաստով: Թույլ կառավարման դեպքում գերադաս անդամը չի ենթադրում որոշակի քերականական ձևով արտահայտված ստորադաս անդամի հանդես գալու անհրաժեշտություն կամ հնարավորություն⁴⁹: Նկատելի է նաև, որ թույլ կառավարմամբ կապակցված ստորադաս բաղադ-րիչը հանդես է գալիս միայն խոսքի մեջ՝ դառնալով լրացուցիչ տեղեկության արտահայտ-չամիջոց: Խոսքից դուրս՝ բառակապակցության մեջ, նշված ստորադաս անդամի արտահայտած քերականական իմաստը չի ենթադրվում, հետևաբար տվյալ անդամի առկայությունը պարտադիր չէ: Ասվածից հետևում է, որ թույլ կառավարմամբ կապակցված ստորադաս անդամը խոսքի մեջ ոչ միայն կապակցման ամրության աստիճանով է գիջում ուժեղ կառավարմամբ կապակցված ստորադաս անդամին, այլև տեղեկության կարևորության տեսանկյունից: Դրան հակառակ՝ ուժեղ կառավարմամբ իրականանում է մի կապակցություն, որի ստորադաս անդամը պարտադիր կերպով ենթադրվում է և՛ խոսքային իրադրության մեջ, և՛ խոսքային իրադրությունից դուրս⁵⁰:

Հենց ուժեղ (պարտադիր, հատուկ) կառավարման գաղափարն էլ ըն-կած է արժույթի դրսևորումներից երեքի՝ խնդրառության, պարագաառության և ստորոգառության հիմքում: Հարկ է նշել, որ վերջինս խնդրառական արժույթի տարբերակն է (հմմտ. *սկսանէր զգործ և սկսանէր խօսել*):

Առդրությունը՝ որպես կապակցման եղանակ, «հակադրվում է համա-ծայնությանն ու խնդրառությանը⁵¹ (իմա՝ կառավարում-Գ.Խ.), որոնց դեպքում լրացումները փոփոխության են ենթարկվում՝ ստանալով գե-րադաս անդամի թելադրած կամ պահանջած ձևը»⁵²: Առդրության եղա-նակով կապակցությունների մասին Հ.Օհանյանը նշում է, որ «գերադաս անդամը չի ազդում լրացման վրա, որևէ դեր չունի նրա դրսևորման մեջ: Լրացումը կախվածության մեջ չէ գերադաս անդամից⁵³ և կիրառվում է անփոփոխ ձևով՝ անտարբեր գերադաս անդամի իմաստի կամ քերա-կանական հատկանիշների նկատմամբ»⁵⁴: Հարկ է նկատել, որ, եթե գե-րադաս անդամի քերականական հատկանիշների նկատմամբ առդրվող

ստորադաս անդամի, այսպես կոչված, անտարբեր լինելու մասին ասվածը միարժեքորեն ընդունելի է, ապա իմաստի նկատմամբ անտարբեր լինելու մասին ասվածը պետք է ընդունել որոշ վերապահումով: Բանն այն է, որ առդրության եղանակով իրականացող որոշ կապակցությունների մեջ ստորադաս բաղադրիչի առկայությունը միարժեք կերպով պարտադիր է և ռոդակիորեն պայմանավորված գերադաս անդամի իմաստով: Այսպես՝ *ի ներքս, ի վեր, ի վայր, ներքուստ, վերուստ* և այլ մակբայների առդրությունը *անկանիմ, իջանել, մտանել* բայերի հետ ասվածի լավագույն վկայությունն է: Սակայն քանի որ՝ ա) առդրության եղանակով կապակցվող բաղադրիչների փոխհարաբերությունն ընդհանուր առմամբ ազատ է, բ) այսպես կոչված, պարտադիր առդրությամբ միմյանց հետ կարող են կապակցվել ընդամենը մի քանի բայեր ու մակբայներ և գ) նշված մակբայները գրաբարի կտրվածքով կա՛մ կապական կապակցություններ են (*ի վեր*), կա՛մ քարացած հոլովածներ (*ներքուստ*), որոնց՝ բայի հետ կապակցումն սկզբնապես կատարվել է կառավարման և ոչ թե առդրության եղանակով, —ատենախոսության մեջ առդրության եղանակով կապակցվող մակբայներն ուսումնասիրության չենք դիտել:

Բայի կապակցելիության հնարավորությունները վերը՝ նշված միջոցներով ու եղանակներով չեն սահմանափակվում:

Բայի հետ կարող են կիրառվել նաև առդրության եղանակով կապակցվող ստորոգելին և պարագաները, որոնք, արտահայտվում են չթեքվող բառերով (թվական, ածական, մակբայ և այլն), ինչպես նաև թույլ կառավարման եղանակով (կառավարում՝ լայն առումով⁵⁵) կապակցվող խնդիրը և պարագայական խնդիրը, որոնք, որպես կանոն, արտահայտվում են կա՛մ թեքվող բառերով, կա՛մ «կապվող բառածեկապ» կաղապարով: Սակայն նշված շարահյուսական միավորների ստորադաս բաղադրիչներն անմիջականորեն չեն ենթադրվում գերադաս անդամի կողմից, այլ տվյալ խոսքային իրադրության մեջ գրավում են երկրորդական դիրք՝ կատարելով ոչ թե անհրաժեշտ, այլ լրացուցիչ տեղեկատվական գործառույթ: Այդ անդամների առկայությունը պայմանավորված է ողջ

նախադասության բովանդակությամբ: Չհաշված մեկ-երկու բացառություն՝ դրանք խոսքից դուրս չեն ենթադրվում, իսկ խոսքի մեջ կարող են ենթադրվել միևնույն դասը, սեռը կամ իմաստը ներկայացնող բոլոր բայերի կողմից, ուստի չեն կարող արժույթի արտահայտության միջոց ծառայել: Հենց այս նկատառումով էլ առդրության և թույլ կառվարման եղանակներով ձևավորված կապակցությունները մեր կողմից ուսումնասիրության նյութ չեն դարձել:

Լեզվական փաստերը վկայում են, որ շարահյուսական ոլորտում դիմավոր բայի ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ նախադասության մեջ կարող է կատարել պարզ ստորոգյալի գործառույթ: Օրինակ՝ Արայ *խնամակալեաց* իւրոց հայրենեացն (Խոր., 60): Ճշմարիտ գեղոյն *փութայր հասանել* (Ազաթ., 169):

Դիմաթվային քերականական կարգերի շնորհիվ բայը խոսքի մեջ ձեռք է բերում ենթակայի հետ կապակցվելու գործություն: Ենթակաառությամբ օժտված են գրեթե բոլոր դիմավոր բայերը: Այս տեսանկյունից բացառություն են կազմում մի քանի միադիմի բայաձևեր, որոնք միջին դիրք են գրավում դիմավոր և անդեմ բայերի շարքում. արտահայտության պլանում դիմավոր լինելով (ունեն 3-րդ դեմքի քերականական ձևավորում)՝ բովանդակության պլանում դրանք անդեմ են: Օրինակ՝ Յործամ *անձրև լեալ իցէ*, և արև տայցէ (Եզնիկ, 219): Յործամ *անձրևէ*, հարկ է իմաստնոյն շրջել, թանալ (Եւս.) և այլն:

Ենթակաառությամբ արժութագուրկ են նաև՝ անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ կառույցների մեջ գերադաս անդամի շարահյուսական գործառույթով հանդես եկող դիմավոր բայաձևերը: Օրինակ՝ *Պատմեցին Աբրամու*, թէ ահա ծնաւ Մելքա (Ծննդ., ԻԲ, 20): Եւ թաղեցին զնա ի Գայի (Բ Օրէն., ԼԴ, 5):

Սակայն այս խմբի բայաձևերը ենթակաառությամբ արժութագուրկ են ոչ թե ընդհանրապես (բնությամբ), այլ մասնավոր դեպքերում (դրությամբ): Այլ կիրառությունների մեջ նշված բայաձևերը կարող են ենթակա ստանալ: Օրինակ՝ Եկին *ծառայքն* Իսահակայ և *պատմեցին* նմա վասն

ջրհորոյն (Ծննդ., ԻԶ, 32): Դէտ արծակեաց Յուդա: *Եկին պատմեցին* և ասեն (Ա Մակ., Ե, 38) և այլն:

Դիմավոր բային հատուկ է նաև ստորոգառութիւնը: Այս հատկանիշով օժտված են միայն սահմանափակ թվով բայեր⁵⁶: Դրանցից են՝ *եմ, լինիմ, կամիմ, սկսանիմ* և այլն: Օրինակ՝ Եւ բազումք ահաբեկեալք *սկսան զրահել* պնդապէս (Եղիշէ, 42): Բայց *էր* սա *այր* քաղցր (Բուգ., 230) և այլն:

Ստորոգառութիւնը բայերի կապակցելիության ոչ թե բուն, այլ լրացուցիչ (չեզոք բայերի համար) կամ տարբերակային (ներգործական բայերի համար) հնարավորություններից մեկն է: Բանն այն է, որ ստորոգառութիւնը խոսքի մեջ հանդես են գալիս երկակի դերով⁵⁷:

Այս կամ այն բայն ստորոգառու է դառնում այն դեպքում, երբ խոսքի մեջ կորցնում է լիարժեք դիմավոր բայերին հատուկ գործառնութենէն՝ ա) զրկվում է իր բուն բառիմաստից՝ ձեռք բերելով եղանակավորիչ կամ վերացական բայերին հատուկ իմաստ, բ) դադարում է շարահյուսական անկախ միավոր (պարզ ստորոգյալ) լինելուց՝ վերածվելով կախյալ բաղադրիչի (հանգույց) և գ) ենթակային վերագրում է ոչ թե իր իսկ, այլ մեկ ուրիշ բառով (ստորոգելի) արտահայտված հատկանիշը՝ այսպիսով կատարելով սոսկ դիմաթվային ձևութիւն հատուկ գործառնութ: Հմմտ. *էր* բանակն Շապիոյ թագաւորին Պարսից ի գաւառին Բագրևանդայ (Բուգ., 150): *Ոչ կամիմ* զմահ մեղաւորին, այլ զդառնալն նորա և զկեալն (Փարսլ., 57) և Ինքն էր *ընթերցող* և *թարգմանիչ* (Խոր., 317): Այլ զխստութիւն *կամիմ ասել* (Խոր., 246):

Ըստ իրենց արտահայտած բայական հատկանիշի՝ ստորոգառու բայերը բաժանվում են երկու խմբի:

Առանձին շարք են կազմում այն բայերը, որոնք չեզոք սեռի են և կատարում են սոսկ ստորոգողի քերականական դեր՝ ենթակային վերագրելով առանձին բաղադրիչով արտահայտված կայուն, փոփոխվող կամ էլ առարկայացված հատկանիշ: Օրինակ՝ Եւ *եղև* նա մայր ողբոցն (Բուգ., 103): Այնչափ *էր* երկիւղած ի Տեառնէ (Բուգ., 27): Իսկ ձին *էր* գունաւոր և գնացող (Բուգ., 226): Ես և դու ո՞վ *իցեմք*, զի զանքնինս քննիցեմք (Ոսկ.) և

այլն:

Երկրորդ խմբի ստորոգառու բայերը ներգործական սեռի են և դարձյալ կատարում են ստորոգողի քերականական դեր, բայց բառիմաստի գորությամբ միաժամանակ երանգավորում են առանձին բառով արտահայտված և ենթակային վերագրվող հատկանիշը: Օրինակ՝ Քանգի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով *ջանային* տիրել ի վերայ միմեանց (Խոր., 33): Ապա խօսել *սկսանէր* սուրբ Ներսէս և ասէր (Բուզ., 101) և այլն: Նշված կարգի բայերն ստորոգառու են դառնում՝ գրկվելով խնդրառական արժույթից:

Ստորոգելին կարող է արտահայտվել և՛ հատկանիշ, և՛ առարկա ցույց տվող բառերով: Դրանցից արժույթի արտահայտության միջոց ենք դիտել միայն առարկա անվանող գոյականներն ու դերանունները և փոփոխվող հատկանիշ անվանող անորոշ դերբայները՝ հաշվի առնելով, որ դրանք ստորոգառու բայի հետ կապացվում են կառավարման եղանակով:

Խոսքի մեջ դիմավոր բային հատուկ է մաս խնդրառությունը: Ընդ որում, խնդրառու կարող են լինել և՛ ներգործական, և՛ կրավորական, և՛ չեզոք սեռի բայերը: Օրինակ՝ Ապա որդի մի Վահանայ եհար սատակեաց *գհայր* և *գմայր* իւր (Բուզ., 152): Զիարդ սատակեցաւ Վահան և կինն *յիւրեանց որդւոյն* (Բուզ., 54): Մի ոմն ի քաջ գօրականէն Հայոց թշնամանս դնէր *անօրինին* (Եղիշէ, 122) և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրառությամբ օժտված են ոչ բոլոր բայերը:

Պարտադիր խնդրառությամբ աչքի են ընկնում ներգործական և կրավորական բոլոր բայերը, որոնք ենթադրում և պահանջում են սեռի խնդիր: Օրինակ՝ Հարքն ձեր սպանին *զնոսա* (Ղուկ., ԺԱ, 47): Որ սպանաւ *ի ձէնջ* (Յայտ., Բ, 13) և այլն:

Ներգործական և կրավորական մի շարք բայեր անհրաժեշտության դեպքում ենթադրում և պահանջում են ևս մեկ կամ երկու, բայց արդեն ոչ թե սեռի, այլ բնության խնդիր⁵⁸: Օրինակ՝ Որ տուաւ քեզ *յԱրարչէն* (Փարպ., 35): Ամենևին ոչ կարէին խոնարհեցուցանել զմիտս առնն ճշմարտի *ի բանս*

խանդադատական աղաչանաց խրեանց (Փարպ., 27): Եւ՝ *ծիթով*, և՝ *գինով* օծեալ գվէրսն (Փարպ., 27) և այլն:

Ինչ վերաբերում է շեզոք բայերին, ապա դրանց միայն մի մասն է խնդրառու: Չեզոք բայերը, ի տարբերություն ներգործականների և կրավորականների, ենթադրում և պահանջում են ոչ թե սեռի, այլ բացառապես բնության խնդիր⁵⁹: Օրինակ՝ Ապա ոխացեալ թագաւորն *ընդ պատանեկին* Գնելոյ (Բուգ., 99): Տկարանայր *ի հաւատն* (Փարպ., 116): Նպաստեալ իմում տկար *խորհրդոյս*՝ աղաչեմ (Փարպ., 7) և այլն:

Չեզոք բայերի մյուս մասը խնդրառությամբ արժութագուրկ է: Օրինակ՝ Իսկ այր խորագէտ հազիւ հանդարտս ժպտի (Սիր., ԻԱ, 23): Յորժամ ծով մրմռիցի (Ոսկ.): Մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ (Սաղմ., ԼԷ, 9) և այլն:

Որպես կանոն, խնդիրներն արտահայտվում են առարկա անվանող բառաձևով (կամ վերջինիս անմիջական մասնակցությամբ) և գերադաս անդամի հետ կապակցվում են կառավարման եղանակով: Օրինակ՝ Ջգունդըն առաջին տային *ցնեքշապուհ* Ռմբոսեան (Եղիշէ, 74): Եւ երդնու Շապուհ *յարեգական* և *ի ջուր* (Բուգ., 107): *Ջկապելոցն* ոչ էրբեք չարախօս կամէր լինել (Եղիշէ, 195) և այլն:

Խնդիրները լինում են սեռի և բնության: Սեռի խնդիրները երկու տեսակ են՝ ուղիղ և ներգործող: Օրինակ՝ Որք *զկամս* նորա կատարեն (Եզնիկ, 109): Մեծարեցաւ *ի նմանէ* բազում պատուով և մեծաւ փառօր (Բուգ., 105):

Բնության խնդիրներն ունեն բառային-բերականական մի շարք իմաստներ, որոնցից են՝

ա) հանգման - Մի՛ ցանկանար *տան* ընկերի քո (Ել., Ի, 14):

բ) անջատման - Խոյս ետ թագաւորն *իւրմէ եղբարցն* (Բուգ., 14):

գ) միջոցի - Չարդարեցին զՏրդատիոս *ի զարդ* կայսերական (Ագաթ., 26):

դ) վերաբերության - Ամբաստանէին *զՄուշեղէ* (Բուգ., 159) և այլն:

Սակայն խնդիրներից արժույթի արտահայտության միջոց են ծա-

ռայում ոչ բոլորը, այլ միայն այնպիսիք, որոնք պարտադիր կերպով ենթադրվում են բայ-գերադաս անդամի կողմից: Այսպես՝ «*Լնուին գղաշտն առ հասարակ դիակամքք մեռելոց*» (Բուզ., 15) նախադասության՝ գործիականով արտահայտված *դիակամքք* խնդիրն արժույթի արտահայտության միջոց է, քանի որ պարտադիր կերպով ենթադրվում է *լնուլ* բայի բոլոր կիրառությունների մեջ, մինչդեռ «*Հարիւր հազար զօրօքն գայր հասանէր մինչև ի Հայս*» (Բուզ., 53) նախադասության՝ գործիականով արտահայտված խնդրի (*զօրօքն*) առկայությունը պայմանավորված է ոչ թե *գայր հասանէր* դիմավոր բայի իմաստային առանձնահատկությամբ, այլ տվյալ խոսքային իրադրությամբ:

Արժույթի արտահայտության պարտադիր միջոցներ են անխտիր բոլոր ներգործական և կրավորական բայերի սեռի խնդիրները, որոնք ենթադրվում են՝ պայմանավորված սեռի քերականական կարգով և կապակցվում են ուժեղ կառավարմամբ: Օրինակ՝ Ոչ իրք հաւաստիք պատմին *ի նոցանէ*, այլ առասպելք կարկատունք (Եզնիկ, 127): *Չմանուկ* մի փախուցեալ դայակքն ապրեցուցին (Խոր., 274) և այլն:

Բնության խնդիրներից արժույթի արտահայտության միջոց են ծառայում վերը նշված խնդիրների այն բոլոր կիրառությունները, որոնք անմիջականորեն պայմանավորված են բայական անդամի բառիմաստով, ենթադրվում և պահանջվում են բոլոր խոսքային իրավիճակներում և, որպես կանոն, կապակցվում են ուժեղ կառավարմամբ:

Խնդրառական արժույթով օժտված են նաև որոշ գոյականներ, ածականներ և մակբայներ⁶⁰: Վերջիններս կառավարման եղանակով ձևավորված կապակցությունների մեջ հանդես են գալիս գերադաս անդամի շարահյուսական գործառնությով և գործություն ունեն ենթադրելու կամ պահանջելու ուժեղ և պարտադիր կառավարմամբ կապակցվող խնդիր: Օրինակ՝ *Ի գառնութենէ ի գայլութիւն փոփոխման*՝ այն այր եղև պատճառ կորստեան բազմաց (Փարպ., 42): *Գժտութիւն ընդ Հերովդի* Արշամայ (Խոր., 141): Եւ մեռանի՝ ոչ ինչ գործ արութեան *արժանի յիշատակի* ցուցեալ (Խոր., 196): Յաստուածոց համարէր *զպատահումն* նմա *խուժ-*

կին (Փարպ., 95): *Ի ցասմանէ և ի ցանկամալոյ ի վեր և ազատ* (Եզնիկ, 226): Եւ գործն *հաւասար հրամանին* առնոյր զկատարումն (Խոր., 52): Երթային այն օրն ի գետոյ մի... *հենի ի Նիւշապիոյ* որպէս հրասախօք վեցիւք (Փարպ., 96) և այլն: Սակայն լեզվական նյութի քննությունը ցույց է տալիս, որ, նախ՝ արժույթով բնորոշվում են ոչ թե բոլոր գոյականները, ածականներն ու մակբայները, այլ դրանցից քչերը միայն: Երկրորդ՝ նշված բառերը գուրկ են արժույթի այլ դրսևորումներից (ենթակաառություն և այլն): Եվ վերջապես՝ խնդրառու գոյականները, ածականներն ու մակբայները գերազանցապես բայանուններ են՝ գուրկ սեռի խնդրառական արժույթից:

Ելնելով մեր առջև դրված խնդիրներից՝ մենք սահմանափակվել ենք միայն բայի խնդրառական արժույթի ուսումնասիրությամբ, սակայն համոզված ենք, որ մյուս խոսքի մասերի խնդրառական արժույթի ուսումնասիրությունը ոչ պակաս կարևոր և հետաքրքրական փաստեր կարող է արձանագրել:

Դիմավոր բայի բնորոշ հատկանիշներից մեկն էլ պարագաառությունն է: Նախադասության մեջ պարագայական իմաստները կարող են արտահայտվել ոչ միայն հատկանիշ և հանգամանք ցույց տվող մակբայներով, դերանուններով ու ածականներով, այլ նաև առարկա անվանող գոյականով: Օրինակ՝ Այծմ *զիա՞րդ* խօսի ընդ քեզ (Բուզ., 141): Հրաման տայր հովանել զամենայն ազատ կանանին և նստուցանել *աստի-անտի* ասպարիսին (Բուզ., 150): Մուծէ՛ք զդա *ի տուն* պատմունակացն (Բուզ., 172) և այլն:

Պարագաները նախադասության մեջ կիրառվում են կա՛մ ըստ անհրաժեշտության, կա՛մ պարտադիր կերպով: Առաջին դեպքում որևէ պարագայի առկայությունը պայմանավորված է միայն տվյալ նախադասության բովանդակության պլանով: Այսպես՝ «Ըստ հրամանի թագաւորին կախեցին զՀաման զփայտէ» (Եսթ., Է, 10) նախադասության *կախեցին* բայի պահանջած *ըստ հրամանի* պարագան այլ նախադասությունների մեջ կարող է նաև չհիշատակվել: Օրինակ՝ Կախէին զբեռն զրաստուց (Նեեմի,

ԺԳ, 15): Նորա ոգին կախեալ կայ գոյորա ոգւոյդ (Ծննդ., ԽԴ, 50): Գրեթէ բոլոր աշխարհս կախեալ է զնմանէ (Եղիշէ, 162): Որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան (Եզնիկ, 203) և այլն:

Մինչդեռ կան պարագաներ, որոնք միևնույն բայի կողմից պարտադիր կերպով ենթադրվում և պահանջվում են բոլոր կիրառությունների մեջ: Այսպէս՝ բերված բոլոր նախադասությունների մեջ *կախել* բայը պարտադիր կերպով պահանջում է մի տեղի պարագա, որից կախվում է ո-րևէ առարկա: Պարագաների նշված երկու տեսակներից արժութային կարևորություն ունեն վերջիններս:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարում, չհաշված որոշ բացառություններ⁶¹, արժույթի արտահայտության միջոց են ծառայում գործողության կատարման տեղի քերականական իմաստ արտահայտող պարագաները: Վերջին հանգամանքը պատճառաբանվում է այն բանով, որ որևէ գործողության կատարման համար պարտադիր հանգամանքներ են տեղը⁶² և ժամանակը: Սակայն եթե գործողության կատարման տեղն արտահայտվում է տվյալ բայի կողմից ենթադրվող առանձին շարահյուսական միավորով, ապա ժամանակի իմաստի արտահայտման միջոց է ծառայում հենց ինքը՝ դիմավոր բայը: Այդ է պատճառը, որ առանձին շարահյուսական միավորով արտահայտված ժամանակի պարագան դիմավոր բայի հետ կիրառվում է ոչ թե վերջինիս կողմից պարտադիր կերպով ենթադրվելու հետևանքում, այլ տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված: Ժամանակի պարագան ընդամենը որոշակիացնում, մասնավորում է դիմավոր բայով արտահայտված գործողության ընդհանուր ժամանակահատվածը՝ այդ իսկ պատճառով արժույթի դրսևորման տեսանկյունից դառնալով ոչ էական: Տեղի պատագաները գրաբարում հանդես են բերում հետևյալ նրբիմաստները.

ա) բուն - Նստէր յԱռեւծ *լերինն* (Բուզ., 184):

բ) սկզբնակետի - Եթէ ոչ յարիցես զնասցես *ի տանէս* (Բուզ., 132):

գ) անցման - Անցանէր *ընդ կամուրջն* Երասխայ (Փարպ., 144):

դ) վերջնակետի - Ընթանայր *ի խորանն* արքունի (Բուզ., 101):

ե) պարառական - Նստան *շուրջ գրերդան* (Բուգ., 144):

Սակայն պետք է նշել, որ արժույթային կարևորությամբ աչքի են ընկնում ոչ բոլոր տեղի պարագաները: Այլ կերպ ասած՝ նախադասության արտահայտության պլանում տեղ գտած ոչ բոլոր տեղի պարագաներն են պարտադիր կերպով ենթադրվում դիմավոր բայի կողմից: Այսպես՝ *սատակել* բայի իմաստային դաշտում տեղի պարագա է կիրառվում ոչ թե պարտադիր կերպով, այլ տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված: Հմնտ. Այսպես սատակեցին գտիկինն Փառանձեն (Բուգ., 147) և Յադագս համբարակապետին, որ.... սատակեցաւ ի Սաղամաս (Բուգ., 134):

Պարտադիր պարագաները ենթադրվում են՝ պայմանավորված բայի բառիմաստով: Սեռի քերականական կարգն այս դեպքում որևէ դեր չունի. այնպես որ, պարագաառական արժույթով կարող են բնորոշվել թե ներգործական, թե կրավորական և թե չեզոք սեռի բայեր:

Գրաբարում բայը պարագաառությամբ կարող է լինել առավելագույնս եռարժույթ: Այս դեպքում նա կարող է ենթադրել սկզբնականի, անցման, վերջնականի պարագաներ: Սակայն հազվադեպ է պատահում, որ միևնույն նախադասության մեջ ենթադրվող տեղի պարագայական երեք արժույթներն էլ բառային արտահայտություն ստանան: Հնարավոր երեք տեղի պարագաներից խոսքի մեջ սովորաբար հիշատակվում են այն մեկը կամ երկուսը, որոնք տեղեկատվական տեսանկյունից կարևոր են և նպաստում են տվյալ նախադասության իմաստի ամբողջացմանը: Օրինակ՝ Հրաման տայր ընդ փողոցս ելանել ի շինէն (Փարսլ., 123): Բայց Սմբատ ելանէ առ ափն ծովուն Գեղամայ գկողմամբք Արագածն կոչեցեալ լերինն (Խոր., 170): Հարկ է տանել առ բժիշկ առողջ գվիրաւոր եկեղեցոյս իմոյ զոչխար (Փարսլ., 21) և այլն:

Որոշ բայեր, պայմանավորված բառիմաստային յուրահատկությամբ, հնարավորություն ունեն մի դեպքում՝ պահանջելու խնդիր, մյուս դեպքում՝ պարագա (պարագայական խնդիր), որոնցից վերջինն արտահայտվում է տեղ ցույց տվող գոյականով: Այդ բայերը երկու դեպքում էլ օժտված են արժույթային նույն յուրահատկություններով: Հմնտ. Բոյսք և

սերմունք հասեալ *ի կատարելութիւն* մատուցանեն մարդկան զկեալն բարի (Փարպ., 40): Եւ յարքայից արքայի *ի ծառայութենէ* մի՛ ելանէք (Փարպ., 147) և Եկեալ հասանէր յիւր աշխարհն (Թուղթ, 185): Ջի սոքա ելեալ *ի քաղաքաց* և *ի գիւղից*՝ հետամուտք լինէին կոտորելոյ զգազանս (Եզնիկ, 146):

Տեղի պարագա են ենթադրում նաև մի շարք գոյականներ և ածականներ⁶³, որոնք բայանուններ են: Վերջիններիս հետ կապակցվող պարագաներն արտահայտվում են որևէ հոլովածևով (սովորաբար՝ բացառականով) կամ կապական կապակցությամբ և ուժեղ կառավարման արտահայտություններ են: Օրինակ՝ Յիշեցէ՛ք զօրն *ելից* ձերոց *յերկրէն* Եգիպտացոց (Բ Օրէն., ԺԶ, 3): Դրոշմեաց զհամբերութիւն *տեւողութեանն* այնչափ ամս *ի վիրապին* (Փարպ., 3): *Շրջագայութեանքք* չորիւք *յեղանակօք* կատարեալ գործեն գտարևոր սպասաւորութիւնն (Եղիշէ, 2) և այլն: Թեև բերված նախադասությունների ընդգծված տեղի պարագաներն արժույթի դրսևորումներ են, սակայն գրաբար աղբյուրներում ունեն բացառիկ կիրառության դեպքեր և պահանջվում են սահմանափակ թվով բառերի կողմից: Աշխատանքի մեջ պարագաառու գոյականների և ածականների ուսումնասիրությանը տեղ չենք տվել:

Մեր պատկերացմամբ, դիմավոր բայի արժույթներից մեկն էլ կոչականառությունն է (բառային-քերականական կոչական ստանալը կամ չստանալը): Բանն այն է, որ 2-րդ դեմքի դիմավոր բայը կարող է քերականորեն կապակցվել ոչ միայն ենթակայի, ստորոգելիի, խնդրի և պարագայական խնդրի, այլ նաև կոչականի հետ, որը նախորդների նման անվանում է գործողության հետ կապված առարկա⁶⁴: Այս դեպքում կատարվում է համաձայնության եղանակով կապակցում⁶⁵, որն այստեղ իրականանում է դիմավոր բայի և կոչականի՝ միայն թվի քերականական կարգի համաձայնությամբ⁶⁶: Օրինակ՝ - Ես ի քեզ, Տէ՛ր, յուսացայ, և դու *յուրիցես* ինձ, *Տէ՛ր Աստուած իմ* (Սաղմ., ԼԷ, 16): - Բազում *արարեր* դու, *Տէ՛ր Աստուած իմ* (Սաղմ., ԼԹ, 6) և այլն: Կոչական - 2-րդ դեմքի բայածև գույգի քերականական կապը դեռևս Մ.Աբեղյանն է նկատել, երբ գրում է. «Եթե բայն առաջին կամ երրորդ դեմքով է, կոչական անունը մնում է խոսքի

կապակցությունից դուրս»⁶⁷: Ասվածին հակառակ՝ երկրորդ դեմքով արտահայտված բայերը ենթակային գուգահեռ⁶⁸ կապակցվում են նաև կոչականի հետ, որն, իբրև կանոն, անվանում է անձ: Ընդ որում, բազմաթիվ կառույցների• բովանդակության պլանում կոչականի նշված տեսակի արտահայտած իմաստն ավելի որոշակի ու, հետևաբար, կարևոր է, քան թե ենթակայինը, որն այդ դեպքում արտահայտվում է անորոշ անձ անվանող 2-րդ դեմքի դերանունով: Կոչականը հենց անորոշ անձ անվանող դերանունով արտահայտված ենթական որոշակիացնող անդամն է: Այդ է պատճառը, որ նշված կառույցների մեջ կոչականի բառային արտահայտությունը պարտադիր է, մինչդեռ ենթակայինը՝ ոչ: Օրինակ՝ - Մի՛ երկնչիր, *Աբրա՛մ*, ես վերակացու եղեց քեզ (Ծննդ., ԺԵ, 1): - *Աբգա՛ր*, *աղախի՛ն* Սարայի, ուստի՞ գաս կամ յո՞ւ երթաս (Ծննդ., ԺԶ, 8) և այլն:

Այս կարգի կառույցներում ենթակայի քերականական իմաստը կարող է արտահայտվել նաև դիմորոշ հոդի տեսքով, որը կրում է կա՛մ դիմավոր բայը, կա՛մ կոչականը: Օրինակ՝ Ընկե՛ր, վասն որո՞յ *եկիրդ* (Մատթ., ԻԶ, 50): Գիտեա՛, ո՛վ մեծդ ի դիցազանց (Խոր., 34) և այլն:

Նշված տեսակի կոչականի կիրառության ոլորտը բավականին սահմանափակ է մի քանի տեսանկյուններից: Նախ՝ կոչականն արտահայտվում է միայն անձնանիշ գոյականներով և այլ բառերով, ուստի դասային այլ խմբեր ներկայացնող բայերի հետ չի կապակցվում: Երկրորդ՝ կոչական են առնում միայն 2-րդ դեմքի դիմավոր բայերը: Երրորդ՝ կոչականը կիրառվում է միայն հրամայական, հարցական և բացականչական հնչերանգով կառույցների (ընդ որում՝ ոչ բոլորի) մեջ, մինչդեռ չեզոք հնչերանգով կառույցներում, որոնք հաղորդակցական միավորների հիմնական մասն են կազմում, կոչականի այս տեսակը չի կիրառվում: Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ բուն շարադրանքում բայի՝ կոչականի հետ կապված արժույթն առանձին քննության նյութ չենք դարձրել:

Եվ այսպես, մեր պատկերացմամբ, բայի արժույթի գնահատման հարցում էական դեր են կատարում համաձայնության եղանակով կապակցվող ենթական, կոչականն ու ստորոգելին և ուժեղ կառավարմամբ (կա-

ռավարում՝ նեղ առումով⁶⁹) կապակցվող խնդիրներն ու պարագաները: Դրանք խոսքի այն կարևոր միավորներն են, որոնցից գոնե մեկի բացակայության դեպքում տվյալ նախադասության բուն իմաստը մնում է թերի: Ընդ որում, եթե բայի հետ կապակցվող խնդիրները կարող են լինել տարբեր բնույթի (սեռի և բնության) և հանդես բերել շարահյուսական տարբեր գործառույթներ, ապա պարագաների շարահյուսական դերը խիստ որոշակի է. դրանք բոլորը ցույց են տալիս գործողության կատարման տեղը՝ տարբեր նրբիմաստներով:

Արժույթի տեսանկյունից անհրաժեշտ շարահյուսական միավորները բայի հետ հանդես են գալիս տարբեր կարգի համադրություններով (բայ-ենթակա-կոչական, բայ-ենթակա-պարագա, բայ-ստորոգելի-ենթակա-պարագա, բայ-ենթակա-խնդիր-պարագա և այլն): Համադրվող միավորներից ամեն մեկի առկայությունն անմիջականորեն կապ ունի տվյալ կապակցության բայով արտահայտված կենտրոնական անդամի իմաստային և/կամ քերականական առանձնահատկությունների հետ: Ըստ բայի հետ համադրվող միավորների թվի էլ ընդունված է առանձնացնել արժութագուրկ, միարժույթ, երկարժույթ, եռարժույթ և քառարժույթ բայեր:

Խոսքի մեջ միշտ չէ, որ բայի կողմից ենթադրվող բոլոր արժույթները բառային արտահայտություն ունեն: Ոճական և այլ նկատառումներով որոշ արժույթների դիմաց ենթադրվող այս կամ այն միավորը (ենթակա, խնդիր կամ խնդիրներ, պարագա և այլն⁷⁰) երբեմն բացակայում է: Օրինակ՝ Եւյետ վճարելոյ այսպէս գործոյ պատերազմին, և մարդասիրին Աստուծոյ զիւր սիրելիսն առ ինքն կոչելոյ՝ հրովարտակ առնէր Մուշկան Նիւսալավուրտ առ թագաւորն Արեաց Յազկերտ և (*Մուշկան Նիւսալավուրտ-Գ.Խ.*) զելս գործոյ պատերազմին գիտել տայր (*Ճմա-Գ.Խ.*) (Եղիշէ, 73): Լ.Տենիերը նշում է, որ բնավ պարտադիր չէ, որպեսզի որևէ բայի բոլոր արժույթները զբաղեցված լինեն համապատասխան ակտանտներով, միշտ լինեն հազեցած: Որոշ արժույթներ կարող են չզբաղեցվել՝ մնալ ազատ⁷¹: Նախադասության մեջ որևէ բայի կողմից ենթադրվող այս կամ այն արժութային միավորի գեղչված լինելը տվյալ բայի արժույթի գնահատման

հարցում դեր չի խաղում:

Աշխատանքի մեջ նախընտրել ենք ուսումնասիրության ենթարկել գրաբարի վերլուծական բայերի արժույթը՝ նկատի առնելով, որ վերլուծական բայերը գրաբարում ներկայացնում են մի բարդ ու հետաքրքիր պատկեր՝ բառակազմական, իմաստային և քերականական առանձնահատկություններով էապես տարբերվելով համադրական բայերից⁷²:

Վերլուծական բայերը⁷³ հայերենի անբաժան մասն են կազմում դեռևս նրա պատմության վաղ շրջաններից⁷⁴ և հայերենի բառապաշարի հարստացման ներքին միջոցներից մեկն են⁷⁵: Բնավ պատահական չէ այդ բարդությունների հաճախակի գործառությունը մեզ հասած առաջին իսկ գրավոր աղբյուրներում (լինեն դրանք բնագիր, թե թարգմանական): Հայերենի վերլուծական բայերի ուսումնասիրության բնագավառում անուրանալի է Ալ. Մարգարյանի դերը: Նշված աշխատության մեջ⁷⁶ նա հիմնավոր պատասխաններ է տվել առաջ քաշված հարցերին՝ հիմնականում շեշտը դնելով արդի հայերենի վերլուծական բայերի ընձեռած լեզվական օրինաչափությունների վրա: Գրաբարի վերլուծական բայերին գիտնականն անդրադարձել է՝ ցույց տալու այն ճանապարհը, որով արդի հայերենին է անցել նշված բայերի այս կամ այն տեսակը: Այդ նպատակով նա հաճախ դիմել է գրական հայերենի զարգացման նախորդ շրջանների լեզվական փաստերին (դրանք հիմնականում բերվում են ծանոթությունների տեսքով)՝ հիմնավորելով այն կապը, որ առկա է արդի հայերենի և գրաբարի ու միջին հայերենի վերլուծական բայերի որոշ տեսակների միջև:

Քանի որ մեր ուսումնասիրությունը նվիրված է գրաբարի վերլուծական բայերի արժույթին, ուստի առանձին գլուխներում փորձել ենք, նախ՝ բնութագրել նշված բայերի յուրաքանչյուր տեսակն ըստ արտահայտության և բովանդակության պլաններում ցուցաբերած առանձնահատկությունների, ապա՝ անդրադառնալ դրանց արժութային դրսևորումներին:

Կազմությամբ վերլուծական բայերը հայ լեզվաբանների կողմից անվանվել են տարբեր կերպ՝ *հարադրական բայեր*⁷⁷, *հարադիր բայեր*⁷⁸ *բայական հարադրություններ*⁷⁹ կամ *վերլուծական բայեր*: Դրանցից ա-

տենախոսության մեջ նախընտրել ենք վերջինը, որը հակադրամիասնություն է կազմում համադրական բայեր եզրույթի հետ:

Փորձելով հիմնավորել պատճառական հարադրավոր բարդությունների՝ վերլուծայան բայերի առանձին տեսակ լինելը՝ հետևել ենք այն լեզվաբաններին, որոնք առանձնացնում են վերլուծական բայերի ոչ թե երկու, այլ երեք տեսակ.

1. *հարադրավոր բայեր*, որոնց հարադիրն արտահայտված է անուն խոսքի մասով, կապական կապակցությամբ կամ մակբայով, իսկ հարադրյալը՝ միմիայն բայով (*անհոգ առնել*),

2. *գուգաբայական հարադրություններ*, որոնք արտահայտված են երկու (հազվադեպ՝ երեք կամ չորս) բայով (*խաղալ գնալ*),

3. *պատճառական հարադրավոր բայեր*, որոնք արտահայտված են «անորոշ դերբայ-տալ բայ» կադապարով (*տամ բերել*):

Գրաբարի վերլուծական բայերը հանդես են գալիս ամենաբազմազան մասնակադապարներով, որոնք ներկայացվում են հետևյալ պայմանական նշաններով⁸⁰ S-սկզբնահիմք, a-ածանց, f-բառահարաբերական ձևվույթ, j-հոդակապ, c-շաղկապ, p-նախդիր, S-հիմքի հնչյունափոխված կամ ձևավոր տարբերակ, S¹-բերականական ձևավորում ունեցող հիմք:

Բաղադրիչների անջատ կիրառությունը ներկայացվում է բաղադրիչների միջև դրվող գծով /-/, միասնաբար հանդես եկող բաղադրյալ ձևույթները ներկայացվում են դրանց միջև դրվող /+/ նշանով: Եթե հարադիրը կամ բայական բաղադրիչը բաղադրված է երկու հարադիր տարրերից, ապա դրանք իրար են հարադրվում /+/ նշանով: Հարադրի խոսքիմասային պատկանելությունը ներկայացվում է հետևյալ պայմանական նշաններով (որոնք ևս կիրառվում են լեզվաբանական աշխատություններում)⁸¹. Noun-գոյական, Adj-ածական, Num-թվական, Pron-դերանուն, V-բայ, Adv-մակբայ, Int-ձայնարկություն:

ԳՐԱԲԱՐԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺՈՒՅԹԸ

Ա. ԳՐԱԲԱՐԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ

Գրաբարի հարադրավոր բայերն ըստ կառուցվածքի գերազանցապես լինում են *երկբադադրիչ* (կազմված են հարադրից և բայական բադրիչից՝ հարադրյալից):

Հարադիրները գրաբարում ունեն հիմնականում նախադաս շարադասություն. *դաշինս կոել* (Բ Մակ., ԺԲ, 26), *ի բաց կալ* (Բ Թագ., Բ, 22), *խնայ առնել* (Սիր., ԻԳ, 3), *յադօքս կալ* (Եղիշէ, 150), *գբանիք անկանին* (Բ Մակ., Ե, 3), *խրախոյս բառնալ* (Ա Մակ., Ե, 33), *ձեռն դնել* (Բուգ., 214) և այլն:

Սակայն որոշ հարադրավոր բայերի մեջ՝ ընդհանրապես, իսկ մի շարք բայերի մեջ էլ միայն հաղորդակցման շղթայում հարադիրները գրավում են վերջադաս դիրք⁸². *տալ գահ և գերկիւղ* (Բ Օրեն., Բ, 25), *տալ գհոգի* (Գ Մակ., Ե, 11), *փշել գհոգի* (ՆՀԲ), *գալ ըստ կամաց* (Եղիշէ, 172), *դնել գանձն ի մահ* (Ագաթ., 3) և այլն:

Երկբադադրիչ բարդությունների հարադիրները հիմնականում արտահայտվում են որևէ լիմաստ բառով (կազմությամբ պարզ, ածանցավոր, բարդ կամ բարդ ածանցավոր), բառաձևով կամ կապական կապակցությամբ, որոնց բայ լինելը տեսականորեն բացառվում է. *անձին* առնել (Բ Մակ., ԺԴ, 49), *ի կենաց* արկանել (Եւս.), *ամօթով* կալ (Ոսկ.), *հալա-ծական* լինիմ (Ողբ., Ե, 5), *թիկունս* դարձուցանել (Ա Թագ., Ժ, 9), *պա-տուէր* տալ (Եղիշէ, 96), *առ ոտն* կոխել (Մատթ., Է, 6), *ընդ լուծ* մտանել (Կոչ.), *ըստ ակն* անկանին (Բուգ., 14), *գաղմկաւ* լինիմ (Դատ., Գ, 26) և այլն:

Բացառիկ դեպքերում երկբադադրիչ հարադրավոր բայերի հարադիրներն իրենք անկախ կիրառվող անվանական հարադրավոր բարդություններ են. կամ էլ բառերի այնպիսի կապակցություններ, որոնք իրենց հերթին խոսքի մեջ հանդես են գալիս որպես ինքնուրույն անվանական հարադրություններ. *հարց և փորձ* առնել (Յովբ, ԼԱ, 14), *այպն և կատակ*

առնել (Ոսկ.), *զայսու զայնու* լինիմ (ՆՀԲ), *վայր ի վայր* իջանել (Բ Օրեն., ԻԸ, 43) և այլն:

Այս շարքն են դասվում նաև այն բարդությունները, որոնց հարադիրներն արտահայտված են սեռականով հավելադրությամբ. *մարտ պատերազմի* տալ (Բուզ., 9), *պատուէր հրամանի* տալ (Եղիշէ, 80):

Երկբադադրիչ հարադրավոր բայերից բացի՝ առանձնանում են այնպիսիք, որոնք թեև առաջացել են երկբադադրիչ բարդությունների հենքի վրա, սակայն պարտադիր կերպով պահանջում են մի երրորդ եզր, այսինքն՝ *եռաբադադրիչ* են: Երրորդ բադադրիչը բարդությանը հաղորդում է բոլորովին նոր իմաստ: Այս ճանապարհով սովորաբար առաջանում են դարձվածային կամ փոխաբերական իմաստ արտահայտող հարադրավոր բարդություններ: Հմմտ. *ճարակ տալ* և *սրոյ ճարակ տալ*, որոնցից վերջինը բոլոր դեպքերում ունի դարձվածային հարադրավոր բայի արժեք: Որպես երրորդ եզր կարող է հանդես գալ տվյալ հարադրավոր բայի կա՛մ հարադրի, կա՛մ բայական բադադրիչի լրացումը: Այս տիպի բարդություններն ունեն արտահայտության հետևյալ պլանները.

ա) (*հրոյ*) *ճարակ տալ* (Գ Մակ., 2, 5),

բ) *արկանել ի բերան (սրոյ)* (Յեսու, 2, 21),

գ) *տալ (զգլուխ) ջուր* (Երեմ., Թ, 1),

դ) *դնել (զոգի) ի ձեռին* (Յովհ., ԺԳ, 14),

ե) *դնել (զանձն) ի վերայ* (Դ Թագ., Ե, 11) և այլն:

Սրանցից տարբերվում են այն հարադրավոր բարդությունները, որոնցում հարադիր կազմող բադադրիչները միևնույն գոյականի ուղիղ և թեք կամ նախդրավոր ձևեր են՝ *գուժկան գուժկանի* դիպեսցի (Երեմ., ԺԱ, 31), *այր ընդ այր* անկանիմ (Ես., Գ, 5), *այր զարամբ* ելանել (Խոր., 87) և այլն:

Ինչ վերաբերում է հարադրավոր բայերի հարադրյալին, ապա այն կազմությամբ լինում է միայն մենաբառ՝ արտահայտված համադրական բայի անդեմ կամ դիմավոր (պարզ, բադադրյալ կամ կրկնաբադադրյալ) ձևով. յարևե *արկանիցեն* (Եզնիկ, 229), յաւարի *առնուլ* (Բ Օրեն., Ի, 14), ի

վարձու *ունիմ* (Նէեմ., ԺԳ, 2), ողբովք *անկանիցիմ* (Բ Մակ., ԺԱ, 6), ընդ գինի *մտանել* (Գ Թագ., Բ, 16), *գրռամբ ածելոց է* (Յովբ, Գ, 8) և այլն:

Կազմությամբ բազմաբառ հարադրյալներ սովորաբար չեն լինում, հակառակ դեպքում դրանք ոչ թե հարադրավոր բայերի բաղադրիչներ են, այլ գուգաբայական կամ պատճառական հարադրավոր բայերի բաղադրիչներ. *Արիք կամք յաղօքս* (Բուգ., 226): *Յանձն ետուք առնուլ* (Փարպ., 83): *Ետ ածել ունել* զնոսա առ ի դուրս սենեկին (Ագաթ., 100) և այլն:

Հարադրավոր բայերն ունեն արտահայտության պլանի բազմազանություն: Դրանցից նշենք հետևյալները.

1. S-S₂, որտեղ նախադաս բաղադրիչը (հազվադեպ՝ նաև վերջադաս) հարադիրն է՝ արտահայտված՝

ա) *գոյականի ուղիղ ձևով*, որի բայական բաղադրիչն, իբրև կանոն, մի չեզոք սեռի բայ է, քանի որ ներգործական լինելու դեպքում հարադիրն արտահայտված է լինում հայցական հոլովով: Ասվածն ինքնին նըշանակում է, որ գոյականի ուղիղ ձևով և ձեզոք սեռի հարադրյալով ձևավորված բարդությունների բաղադրիչների միջև նախապես եղել է ենթակա-ստորոգյալ շարահյուսական հարաբերություն: Օրինակ՝ *բան ելանել, գութ անկանիմ* (Բ Մակ., ԺԴ, 25), *փոյթ լինիմ* (ՆՀԲ), *գերի գալ* (Եսթ., Բ, 6), *յայտ եկն* (Բ Մակ., ԺԴ, 45), *հող դառնալ* (Ծննդ., Գ, 19), *խնդիր լինել* (Յովհ., Գ, 25), *դեպ լինի* (Ագաթ., 87), *ծաղր լինիմ* (Ա Մակ., Ժ, 70), *ոգի ելանել, գլուխ կալ* (Բուգ., 224) և այլն:

Թեև այս դեպքում հարադրի գործառույթով սովորաբար հանդես են գալիս կազմությամբ պարզ գոյականներ, սակայն ուղղական հոլովով հարադրի գործառույթ կատարող գոյականները կազմությամբ կարող են լինել նաև ածանցավոր ու բարդ. *հովանի լինիմ* (ՆՀԲ), *մոռացումն եղև* (Բ Եզր., Բ, 61), *գաղտագողօնք լինիմ* (Բ Մակ., Գ, 39), *դադարումն լինիմ* (Խոր., 322), *մոռացօնք լինիմ* (Դեւտ., Ե, 3), *ժամադիր լինիմ* (Բուգ., 203), *գօրածողով լինիմ* (Բ Մակ., ԺԱ, 2), *ունկնդիր լինիմ* (Ա Թագ., ԻԸ, 21) և այլն: Նկատենք, որ բարդ գոյականների վերջին բաղադրիչը սովորաբար մի բայարմատ է կամ բայանուն:

բ) *Ածականով*, որի հետ հարադրվող բայը կարող է լինել թե՛ ներգործական և թե՛ չեզոք սեռի: Ինչ վերաբերում է հարադրին, ապա այն կազմությանը կարող է լինել՝

ա) *պարզ*, ինչպես՝ *կազմ* կալ (Նէեմի, Դ, 10, 14), *գեղջ* լինիմ (Եզնիկ, 127), *խուլ* լինիմ (Սաղմ., ԼԸ, 3), *խոնարհ* լինիմ (Սաղմ., ԼԷ, 7, 9), *լի* առնել (Ես., Գ, 18), *կուռ* կալ (Խոր., 35), *լուռ* կալ//լինիմ, *հույ* գալ, *պինդ* ունիմ և այլն:

բ) *Ածանցավոր*, որոնք, ի դեպ, մեծ թիվ են կազմում. *հաճոյ* առնել (ԲՕրէն., ԺԲ, 28), *փառաւոր* լինիմ (ՆՀԲ), *դիպան* ելանել (Բուգ., 161), *փախստեայ* լինիմ (Փարպ., 112), *ուտելի* առնել (Բ Մակ., Բ, 11), *իմաստուն* լինիմ (Առակ., Ը, 33), *տեղեակ* լինիմ (Եղիշէ, 86), *փախստական* լինիմ (Ագաթ., 409), *յանցաւոր* լինիմ (Ծննդ., ԽԳ, 3) և այլն:

Հատկանշական է, որ հարադրի գործառնությով կարող են հանդես գալ նաև առավելական բաղդատական աստիճան ներկայացնող – *ազոյն* ածանցով ձևավորված բառաձևեր. *գօրագոյն* լինիմ (Ծննդ., ԻԶ, 16), *դիւրագոյն* լինիմ (Ա Թագ., ԺԶ, 16), *խոնարհագոյն* լինիմ (Եզեկ., ԻԹ, 15) և այլն:

գ) *Բարդ*, որոնք մեծ մասամբ հոդակապով բարդություններ են՝ բաղադրված «գոյական–(Ա հոդակապ)–բայարմատ» կաղապարով⁸³, ինչպես՝ *վշտամբեր* լինիմ (Եղիշէ, 200), *սրտաթափ* լինիմ (Ագաթ., 26), *տարագիր* լինիմ (Եզնիկ, 297), *օրէնսգէտ* առնել (Սաղմ., ԻԶ, 11), *ժուծկալ* լինիմ (Բուգ., 144), *կիսամեռ* լինիմ (ՆՀԲ), *հրապարականեծ* լինիմ (Առակ., ԺԱ, 26), *լծընկէց* լինիմ (Ովսէ, Դ, 16), *մեղադիր* լինիմ (Հռովմ., Գ, 9), *նախանձաբեկ* առնել (Սիր., Թ, 1), *շարախօս* կալ (Յոհ., Ե, 45) և այլն: Այստեղ որպես վերջին բաղադրիչ կիրառվում են – *կից*, – *խնդիր*, – *քարշ*, – *կոտոր*, – *կտուր*, – *կոծ*, – *վէժ*, – *սոյգ*, – *մոյն*, – *կէզ*, – *կարծ*, – *կոխ*, – *թափ*, – *ծիգ*, – *դիր*, – *ընկէց*, – *տու*, – *հատ* և այլ բայարմատներ, ընդ որում, ակտիվությանը առանձնանում է – *կից* բայարմատի գործածությունը, որով կազմված քիչ բարդություններ կան (օրինակ՝ *քաղաքակից*), որոնք հարադրի կամ ստորոգելիի գործառնությ չեն կատարում:

Հարկ է նկատել, որ բարդ հարադիրների մի մասը գուրկ է անկախ կիրառությունից, այսինքն՝ դադարել է առանձին բառ լինելուց և կատարում է միայն բարդ բառի բաղադրիչի (տվյալ դեպքում՝ հարադրի) գործառույթ: Դրանցից են՝ *տրտմակից, նշդեհակից, որդնալից, ճաշակից, դիմակալ, պարզեատու, ճայնատու, արօրադիր, քարալից, դաշտամուխ, զրահետ, հրապարականեծ, գօրընտիր, մօտակտուր, դիագերծ, բարեմոյն, խրամակարկատ* և այլն:

Սրանցից քչերն են շեղվում վերը նշված կաղապարից. *յօժարամիտ* լինիմ (Ա Մնաց., ԻԹ, 14, 17), *գերիվերոյ* լինիմ (Առակ., ԺԹ, 11), *կարեվեր* առնել (Փարպ., 56) և այլն:

զ) *Մակբայներով*, որ սովորաբար տեղի իմաստ են արտահայտում: Այս կապակցությամբ Ալ.Մարգարյանը գրում է. «....ինչպես վաղուց հայագիտությունն է հաստատել, տեղի կամ տարածական իմաստ ունեցող հարադիրները բայաբառակազմության գործում իսկապես բավական մեծ դեր են խաղում»⁸⁴: Որպես հարադիր՝ մակբայները կիրառվում են թե՛ ներգործական և թե՛ չեզոք բայերի հետ: Օրինակ՝ *շուրջ կալ* (Ա Թագ., Դ, 15), *առաջ կալ* (Ա Թագ., ԺԲ, 7), *արտաքսելանել* (Յայտ., Գ, 12), *մօտ հասանել* (Բ Օրեն., ԺԲ, 9), *հեռի լինիմ* (ՆՀԲ), *հեռի առնել* (Սաղմ., ԻԱ, 20), *յանդիման լինիմ* (Եղիշե, 80), *դեմ դնել* (Երեմ., ԽԴ, 12) և այլն:

Հարադրի գործառույթ կարող են կատարել կազմությամբ ոչ միայն պարզ, այլև նախդրավոր ու բարդ մի շարք մակբայներ նույնպես. *դեմ ընդդեմ դնել* (Ծննդ., ԺԵ, 10), *այսր և անդր դառնալ* (Գ Թագ., ԺԸ, 45), *ի վայր արկանել* (Մատթ., Դ, 6), *վայր ի վայր իջանել* (Բ Օրեն., ԻԸ, 43), *ի մէջ գալ* (Իմաստ., ԺԷ, 5), *յառաջ բերել* (Սիր., Ի, 28), *յետս կալ* (Բ Մակ., Ա, 7), *ի վերայ հասանել* (Ա Մակ., Զ, 56), *ի դուրս կորզել* (Սաղմ., ԿԷ, 23), *ի բաց կալ* (Բ Թագ., Բ, 22)⁸⁵, *ի ներքս անկանիմ* (Խոր., 56), *թաւալզլոր խաղացուցանել* (ՆՀԲ) և այլն:

Մակբայ-հարադիրների հետ ավելի հաճախ բայական բաղադրիչի գործառույթ են կատարում ընթացք ցույց տվող *գալ, գնալ, երթալ, դառնալ, իջանել, խաղալ, անցանել* չեզոք բայերը, որոնց հարադրությամբ

կիրառվող տեղանիշ մակբայները ճշտում, որոշակի են դարձնում կատարվող շարժման կամ ընթացքի ուղղությունը կամ մեկ այլ հանգամանք: Դրանք նախապես բայի արժույթի արտահայտություններ են եղել: Ջրկվելով ինքնուրույն գործածությունից և դառնալով բարդության բաղադրիչ՝ դրանք նպաստում են բայի՝ արժույթի այլ արտահայտություն ձեռք բերելուն *զհետ երթալ, յառաջ խաղալ, զկնի գնալ, մօտ հասանել, յետս դառնալ, շուրջ գալ, ի վայր իջանել* և այլն:

Նմանատիպ բայերն առավել հաճախադեպ են Խորենացու, Բուզանդի, Փարպեցու երկերում: Ընդ որում, կան դեպքեր, երբ միևնույն հարադրի հետ կիրառվում են նույնիսկ տասնյակ բայեր: Օրինակ՝ *ի բաց*-ը հարադրվում է շուրջ քսան բայի հետ. *ի բաց ընկենուլ//թողուլ//դառնալ//գալ//գնալ//հալածել//անցանել//մերժել//արձակել//փախուցանել//խզել//դնել//տանիմ* և այլն:

դ) *Բայարմատով*, որը հարկ եղած դեպքում կիրառվում է նաև համադիր կառույցների մեջ: Հմմտ., համապատասխանաբար, *խեղդ* արկանել (Ա Կոր., Է, 35), *խնայ* առնել (Սիր., ԻԳ, 3), *բարգաւաճ* առնել (Բ Օրեն., ԻԶ, 13), *ողորմ* անկանիմ (Երեմ., ԼԷ, 19), *նախատ* լինիմ (Եփր.), *ժաման* առնել (Սաղմ., Ի, 4), *աշխատ* առնել (Գաղատ., Զ, 17), *ջախջախ* լինիմ (Դան., Բ, 42), *խրախոյս* բառնալ (Ա Մակ., Ե, 33), *պիշ* ունել (ՆՀԲ), *բաղ* հանել (ՆՀԲ), *խաբ* գործել (ՆՀԲ), *խաբ* տալ (ՆՀԲ), *մխիրճ* հարկանել (Ոսկ.), *ժոյժ* ունել (Ա Կոր., Ե, 9), *խոյս* տալ (Առակ., ԻԵ, 9) և *խեղդել, խնայիմ, բարգաւաճել, ողորմիմ, նախատել, ժամանել, ջախջախել, խրախուսել, պշնուլ, բաղհանել, խաբել, մխրճիմ, ժուժալ, խուսել* բայերը:

Անշուշտ, կան նաև «բայարմատ-բայական բաղադրիչ» մասնակազապարով բարդություններ, որոնց բայարմատ-հարադիրը ոչ միայն կազմությամբ համադրական պարզ բայի հիմք չի դառնում, այլև հիմնականում հանդես է գալիս կախյալ կիրառությամբ՝ որպես հարադիր բարդության բաղադրիչ. *խրախ լինիմ* (Փիլիպ., ԺԸ, 6), *կուր արկանել* (Գ Մակ, Ե, 18), *հիռ գալ* (Նիս.) և այլն:

2. S^f-S_v, որտեղ S^f-ը գոյականի (կամ թեքվող այլ բառի) թեք բառածև

է՝ արտահայտված՝

ա) *Սեռական-տրականով*, որ ուղղականի և հայցականի համեմատությամբ սակավ կիրառություն ունի, քանի որ տրական հոլովի քերականական իմաստն ավելի հաճախ արտահայտվում է նախդրավոր կապակցություններով: Տրականով արտահայտված հարադիրներն ու բայական բաղադրիչները կարող են հանդես բերել ոչ միայն սովորական, այլև դարձվածային արժեք: Օրինակ՝ *զհետ լինել ցբոյն* (Ես., Ե, 11), *արևուցուցանել* (Եզնիկ, 199), *ծափի հարկանել* (ՆՀԲ), *անծին առնել* (Բ Մակ., ԺԴ, 49), *ակնարկի առնել* (Սաղմ., ԼԴ, 19), *չլուելոյն առնել* (Բուգ., 184), *առն լինիմ* (Ղևտ., ԻԲ, 12), *արանց լինիմ* (Մատթ., ԻԲ, 30), *սրոյ մատնել* (Խոր., 293), *զնոց առնուլ* (Կող., Դ, 5), *տալ քնոյ* (Գ Մակ., Ե, 11), *տալ ժանգոյ* (Սաղմ., ՀԷ, 46) և այլն:

բ) *Հայցականով*, որպիսիք, անկասկած, գործածվում են ներգործական սեռի բայով արտահայտված բաղադրիչի հարադրությամբ⁸⁶ և աչքի են ընկնում արտահայտության պլանի բազմազանությամբ: Ընդ որում, նկատելի է, որ գրաբարի այս տիպի վերլուծական բայերը նույնպես ունեն կա՛մ սովորական, կա՛մ դարձվածային արժեք: Օրինակ՝ *զխունկ արկանել* (Ա Մակ., 58), *զմէջ ածել* (Երեմ., ԺԳ, 1), *զոզի թափել* (Յովհ., Ժ, 24), *տալ զոզի* (Ես., ԽԲ, 1), *զղէմ դնել* (Երեմ., ԽԳ, 12), *կալ զթիւ* (Թիւ., Գ, 40), *նախանձուկս արկանել* (Թիւ., ԺԱ, 29), *սպանումն առնել* (Երեմ., ԻԸ, 17), *այրեծի առնել* (Ա Մակ., Դ, 28), *դատաստան առնել* (Եզեկ., ԻԸ, 26), *փոյթ առնել* (Խոր., 325), *ակօս հատանել* (Ոսկ.), *մեղ դնել* (Առակ., ԺԹ, 5), *ժամ դնել* (Ել., Ը, 9), *զտեղի ունիմ* (ՆՀԲ), *ակն կառուցանել* (ՆՀԲ), *ջան տանել* (ՆՀԲ), *խնամ տանել//տածել* (Խոր., 30), *սպասաւորութիւն հարկանել* (Բ Թագ., ԺԹ, 18), *ակն ունիմ* (ՆՀԲ), *ակն դնել* (Բուգ., 103), *պատուէր տալ* (Եղիշէ, 96) և այլն:

Հարադրի գործառույթով հանդես են գալիս նաև մի շարք անեզական գոյականների հայցական ձևեր՝ որոշյալ կամ անորոշ առումներով: Օրինակ՝ *իրաւունս՝ -հաստատել* (Գ Մակ., Է, 8), *-առնել* (Սաղմ., ՉԱ, 3), *-խնդրել* (Ել., ԺԳ, 15), *-տալ* (Յովբ, ԼԶ, 6), *-դնել* (Ես., ԻԸ, 17), *դաշիմս՝ -*

առնել (Ա Մակ., ԺԱ, 66), *–հաստատել* (Խոր., 204), *–կռել* (Բ Մակ., ԺԲ, 26), *թիկունս դարձուցանել* (Ա Թագ., Ժ, 9), *զաղօթս մատուցանել* (Ղուկ., ԺԸ, 29), *զերեսս հաստատել* (Ղուկ., Թ, 51), *զաղաչանս մատուցանել* (ՆՀԲ), *պարծանս՝ –տալ* (Գաղատ., Զ, 4), *–ունիմ* (Հոովմ., Դ, 2), *խօսս դնել* (Եւս.), *օրէնս դնել* (Բ Մակ., Գ, 15), *պէտս ունիմ* (ՆՀԲ), *թշնամանս դնել* (Եղիշէ, 185), *արշաւանս դնել* (Ագաթ., 2), *վագս առնուլ* (Երզ., Բ, 8)⁸⁷. *զճենս առնուլ* (Գ Մակ., ԺԲ, 35) և այլն:

Հայցական հոլովով և *առնել* բայով բաղադրված բայական որոշ հարադրություններին հակադրվում են դարձյալ հայցական հոլովով, սակայն *լինիմ* բայով բաղադրված հարադրությունները. *հալածական լինիմ* (Ողբ., Ե, 5), *նզովս լինիմ* (Հոովմ., Թ, 3) և այլն: Արտահայտելով կրավորական սեռի քերականական իմաստ՝ *լինիմ*-ով բաղադրված բայական այդ հարադրությունները հականշային դաշտ են ստեղծում այն հարադիր բայերի հետ, որոնք *առնել*, *առնուլ* և այլ բայերի մասնակցությամբ արտահայտում են ներգործական սեռի քերականական իմաստ: Հմնտ. *հալածական լինիմ* և *հալածական առնել* (Ա Մակ., Բ, 47), *նզովս լինիմ* և *նզովս առնել* (Բ Մնաց., Զ, 22) և այլն:

Հայտնի է, որ գրաբարը զուրկ է խոսքից դուրս կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող նշանակիր բայերից (կան մեկ-երկու բացառություններ, որոնք թեև աննշանակիր են, սակայն խոսքից դուրս արտահայտում են կրավորական սեռի քերականական իմաստ, ինչպես՝ *պարտիմ* բայը՝ «*պարտվել*» նշանակությամբ): *Լինիմ* բայով հարադրված և մի շարք այլ վերլուծական բայեր ակտիվորեն լրացնում են կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող ինքնուրույն բայերի շարքը՝ նպաստելով քերականական այդ իրողության արտահայտության և բովանդակության պլանների հետագա զարգացմանն ու կայունացմանը:

Բացառիկ դեպքերում այս խմբի հարադրավոր բարդություններն արտահայտվում են $S_v - S^f + S^f$ մասնակադապարով: Այստեղ հարադիրը անվանական բարդություն է՝ արտահայտված բաղիյուսական հարադրությամբ, որի բաղադրիչները կարող են կապակցվել կամ բառային միջոցով՝

և շաղկապով, կա՛մ առանց դրա⁸⁸: Օրինակ՝ տալ *զահ և գերկիդ* (Բ Օրեն., Բ, 25), *հարց և փորձ* առնել (Յովբ, ԼԱ, 14), *դուլ և պատուէր* տալ (Ես., Ոսկ.), *այսն և կատակ* առնել (Ոսկ.), *հանգիստ և դարման* առնել (Բուզ., 65), *գութ և խնամ* ունիմ (Բուզ., 24), *կոծ և աշխար* դնել (Բուզ., 102) և այլն⁸⁹:

«Հայցական հոլովածև-ներգործական սեռի բայ» մասնակադապարով ձևավորված հարադրավոր բարդությունների մեծ մասն արտահայտում է ոչ թե ներգործական, այլ չեզոք սեռի քերականական իմաստ: Պատճառն այն է, որ ներգործական սեռի բայով արտահայտված բաղադրիչը կապակցության մեջ՝ հայցականով հարադրի կողքին, կորցնում է անցողական սեռի բայերին հատուկ իր ակտիվությունը և կատարում միայն բայականական գործառույթ՝ հարադրի հետ միասին պահանջելով որևէ բնության խնդիր: Օրինակ՝ Որ *իմծ ալն եդ*, վասն իմ ետ սպանանել զնա (Բուզ., 103): Յադագս քագաուրելոյ Տիգրանայ և *արշաւանս առնելոյ ի Պաղեստինէ* (Խոր., 94) և այլն:

Այս տիպի հարադրավոր բարդությունների հետ գործածվում են սեռական հոլովով հոմանիշ բառածևեր, որոնք այլ բան չեն, քան գրաբարին հատուկ ոճական հնարներից մեկի արտահայտման միջոց: Օրինակ՝ *զահ երկիդի* առնուլ (Ազաթ., 6), *թիւ համարոյ* տալ (Ա Մակ., ԻԱ, 5), *թիւ համարոյ* առնել (Եղիշէ, 120), *մարտ պատերազմի* դնել (Ա Մակ., Զ, 31), *հրաման պատուիրանաց* առնուլ (Եղիշէ, 53) և այլն:

զ) *Բացառականով արտահայտված բառածևերով*, որոնք հարադիր են դառնում թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի բայերի կապակցությամբ⁹⁰. *ի ձեռաց* քափել (Բ Մակ., ԺԲ, 35), *յաչաց* անկանիմ (Գործ., Թ, 18), *յոզոց* ելանել (Ողբ., Ա, 8), *յերեսաց* հանել (Եզնիկ, 286), *ի մտաց* քափել, *ի մտաց* անկանիմ (Ոսկ.) և այլն:

Նկատելի է, որ «բացառական հոլովածև-բայ» մասնակադապարով արտահայտված հարադրավոր բարդությունները հիմնականում դարձվածային արժեք ունեն: Օրինակ՝ *յաշխարիէ ելանել* «մեռնել» (Ա Ար., Ե, 10), *յոզոց հանել* «հառաչել», «հեծել» (Ես., ԺԹ, 8), *յաթոռոյ անկանիմ*

«գահագրկվել» (Դան., Զ, 12), *յաչաց ելանել «աչքից ընկնել»*, «տհաճանալ» (ՆՀԲ), *ի մտաց անկանիմ «մոռացվել»* (Ագաթ., 109), *յարևե անկանիմ «մեռնել»* (Ոսկ.) և այլն⁹¹ :

Թե՛ ներգործական և թե՛ չեզոք սեռի բայերը, հարադրի հետ միասին կիրառվելով, պահպանում են իրենց հատուկ սեռի քերականական իմաստը, որն այս դեպքում վերագրվում է ողջ հարադրությանը:

Ներգործականներից այսպիսի կապակցության մեջ են մտնում խնդրառությանը երկարժույթ այն բայերը, որոնք, սեռի խնդրից բացի, կարող են պահանջել բացառականով բնության խնդիր: Երկարժույթ այդ ներգործականները, հարադրավոր բարդության եզր կազմելով, խնդրառությանը դառնում են միարժույթ. կորցնում են իրենց՝ բացառականով բնության խնդիրը (վերջինս տվյալ դեպքում վերածվում է կախյալ բառամասի՝ զրկվելով թե՛ անկախ գործածությունից և թե՛ անկախ իմաստ արտահայտելու գործությունից), սակայն պահպանում են ներգործական սեռի բայի բուն հատկանիշը (պահանջում են սեռի խնդիր), որով արդեն բնութագրվում է ողջ բարդությունը: Օրինակ՝ *արկանել*—ը ներգործական սեռի բայ է. ներգործական է նաև *ի կենաց արկանել* հարադրավոր բայը, որն այս դեպքում խնդրառությանը ոչ թե երկարժույթ է, այլ միարժույթ [*ի կենաց արկանեին զնա յեզիպտոս* (Եւս.)]: Այսպես նաև՝ *Զնոսա յաչաց հանեին* (Եղիշէ, 143): *Զոմն յընչից և յարևե արկանիցեն* (Եզնիկ, 144): *Զորս և փիլիսոփայքն յընչաց քերեն* (Եզնիկ, 229) և այլն:

Չեզոքներից այսպիսի կապակցության մեջ են մտնում խնդրառության տեսանկյունից միարժույթ այն բայերը, որոնք կարող են պահանջել բացառականով բնության խնդիր: Այսպիսի բայերի և բացառականով բնության խնդրի սերտ կապից առաջանում են մեկ բառային արժեք ունեցող բարդություններ, որոնցում միարժույթ չեզոք բայերը խնդրառությանը դառնում են արժութագուրկ (մի հատկանիշ, որով արդեն բնութագրվում է տվյալ հարադիր բարդությունը): Օրինակ՝ *Յանկարծակի սկսաւ ելանել ի մտաց* իւրոց (Եւս.): *Եւագորաս ի մտաց անկաւ* (Եւս.) և այլն:

դ) *Գործիականով արտահայտված բառաձևերով*⁹², որոնք ևս կարող

են հանդես գալ թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի բայերի հարադրությամբ: Հմմտ. մի կողմից՝ *հրաւ առնել* (Ովս., ԺԳ, 10), *գինու* վառել (Դատ., ԺԸ, 11), *հրով* սրբել//դատել (Ա Մակ., Է, 55), *ածելով* ածել (ՆՀԲ), *ամօթով* առնել (ՆՀԲ), մյուս կողմից՝ *գրով* անցանել (Ես., Պիտ.)⁹³, *ոխութեամբ* գնալ (Բուգ., 104), *հոգւով* յափշտակիմ (Բ Կոր., ԺԲ, 2), *սիրով* հարկանիմ (Բուգ., 103), *ամօթով* կալ (Ոսկ.) և այլն:

Նկատենք, որ հարադիրը կարող է արտահայտվել նաև անեզական գոյականների գործիական հոլովածևով. *աշօք* արածել (ՆՀԲ), *մտօք* յափշտակիմ (Բ Կոր., ԺԲ, 4) և այլն:

Գործիականով բաղադրված հարադրավոր բայերի մեծ մասը նույնպես հանդես է բերում դարձվածային արժեք. *ախտի անկանիմ* «*հիվանդանալ*» (Յովբ, ԻԲ, 23), *համարով տալ* «*հաշվել*» (Ա Եզր., Ը, 64), *դժուարօք բերել* «*վշտացնել*» (ՆՀԲ), *ամօթով լինիմ* (ՆՀԲ), *սուսերաւ ածել* (Խոր., 230), *բանի անցանել* (Խոր., 245) և այլն:

Նման հարադիրների հետ բայական բաղադրիչի գործառույթով կիրառվող բայերը ևս հարադրության մեջ պահպանում են իրենց հատուկ սեռի քերականական իմաստը: Այսպես՝ *տալ*-ը ներգործական. սեռի բայ է. այդպիսին է նաև *քարամբք տալ* (ՆՀԲ) հարադիր բայը: *Անկանիմ*-ը չեզոք սեռի բայ է. նույն սեռի է նաև *քնով անկանիմ* (Ա Թեաաղ., Ե, 6) բարդությունը: Օրինակ՝ *Ջհեր* գլխոյն *ածելեաւ ածին* (ՆՀԲ): *Ջգաւառս սրով դատի* յանխնայ (Խոր., 263): *Համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ* (Բուգ., 199) և այլն:

Այս խմբի որոշ բայական բարդությունների հարադիրը մի անվանական հարադրություն է. *ողբովք և արտասուօք անկանիմ* (Բ Մակ., ԺԱ, 6):

3. $P+S_{\text{noun}}^f-S_v$, որտեղ S_v բաղադրիչի հետ հարադրի գործառույթ են կատարում կապական կապակցությունները՝ արտահայտված որևէ մախրով (P) և կապվող բառածևով (S^f): Օրինակ՝ *ի սուր* ածել (Ել., ԺԵ, 22), *ի վարձու* տալ (Եզեկ., ԺԱ, 8), *գքարի* հարկանել (Ես., Ը, 4), *ընդ գինի* մտանել (Գ Թագ., Ի, 16), *յինքն գալ* (Մանդ.) և այլն:

$P+S_{\text{noun}}^f-S_v$ կադապարով արտահայտված հարադրավոր բայերի հա-

րադիրը ($P+S_{\text{noun}}^r$) կարող է բաղադրվել՝

ա) «*Ի(յ)–(+)*տրական հոլովածն» մասնակադապարով, որով թեև սովորաբար արտահայտվում է բուն տեղի պարագայի քերականական իմաստ, սակայն չեզոք և ներգործական սեռերի մի շարք բայերի հետ հանդես է գալիս հարադրի գործառույթով: Օրինակ՝ *ի վարժու* տալ (Սաղմ., ԺԴ, 5), *յաւարի* առնուլ (Բ Օրեն., Ի, 14), *յանձին* կալնուլ (Յովք, Խ, 9), *ի մտի* դնել (Ա Մակ., Ա, 17), *ի սպասու* կալ (Ծննդ., Խ, 4), *ի տարակուսի* կալ (Յուդ., Է, 12), *ի դողման* լինիմ (ՆՀԲ), *յերաշխի* առնուլ (Առակ., ԻԸ, 17), *ի բանի* արկանել (Գործ., ԺԲ, 20), *ի բանի* կալ (Ագաթ., 146) և այլն:

Հարադրի գործառույթով *Ի(յ)* նախդրի հետ հանդես են գալիս միայն եզակի տրական հոլովածներ, քանի որ գրաբարում *Ի(յ)* նախդրի և հոգնակի տրականի կապակցությունը հոգնակի բացառականի արտահայտչամիջոցն է: Տրականով հարադիրների մեծ մասն անվանում է վերացական առարկա. *ի կասկածի* լինիմ (Խոր., 239), *յանձին* առնեմ//լինիմ, *յամօթի* առնել//լինիմ (Եզնիկ, 58, 156), *ի գայթակղի* գտանիմ (Բուգ., 40), *յուխտի* կալ (Բուգ., 141), *ի վարժու* ունիմ (Նենեմ., ԺԳ, 2) և այլն:

Որոշ հարադիրներ երկբաղադրիչ են. *ձեռն յանձին* հարկանել (Եփր.), *հոգ յանձին* ունիմ (Եղիշէ, 165), *փոյթ յանձին* ունիմ (Խոր., 55), *զոգի ի բռին* ունիմ (Փարպ., 138), *հոգ ի մտի* արկանել (Կորիւն, 62) և այլն: Սրանց «*Ի(յ)–(+)*տրական հոլովածն» մասնակադապարով արտահայտված կապական կապակցություններն առանձին էլ կարող են հարադիր դառնալ. ինչպես՝ *յանձին* կալնուլ (Խոր., 272), *յանձին* ունիմ (Ագաթ., 26), *ի բռին* դնել (Ոսկ.) և այլն:

Միևնույն հարադրի և տարբեր բայերի միջոցով արտահայտվում են ոչ միայն բառային տարբեր իմաստներ, այլև սեռի քերականական կարգի տարբեր դրսևորումներ: Հմմտ. *ի հարկի կալ* (Փարպ., 106) և *ի հարկի կացուցանել* (Բուգ., 177) բարդությունները, որոնցից առաջինի միջոցով արտահայտվում է չեզոք, իսկ երկրորդի միջոցով՝ ներգործական սեռի քերականական իմաստ:

«*Ի(յ)–(+)*տրական հոլովածն» մասնակադապարով հարադրված

բայերի մեծ մասն ունի դարձվածային արժեք: Ընդ որում, տրական հոլովածներ կամ մարմնի մաս անվանող բանձրացական գոյական է, կամ վերացական գոյական. *ի ձեռին ունիմ «ղեկավարել»* (Փարպ., 34), *յանձին ունիմ «խոստանալ»*, *«խոստովանել»*, *«ընդունել»* (Յոբ, Խ, 9, Ոսկ.), *ի բանի առնել «համոզել»* (Գործ., ԺԲ, 20), *ի բանի պահել «գործածել»* (ՆՀԲ), *ի գրի հարկանել «գրառել»*, *«արձանագրել»* (ՆՀԲ), *ի մտի դնել «վճռել»* (Ես., ԽԲ, 25), *ի դիմի հարկանիմ «դիմակայել»* (Փարպ., 68), *ի մտի ունիմ «որոշել»*, *«մտադրվել»* (Ա Մնաց., ԻԸ, 12), *ի սրտի դնել «խորհել»* (Երեմ., ԺԲ, 11) և այլն: Օրինակ՝ *ի դիմի հարցի մոցա* հոդմ բռնութեան (Իմաստ., Ե., 24): *Ջօրէնս* մոգութեան *յանձին կալջիք* (Եղիշէ, 17) և այլն:

Սակավաթիվ դեպքերում *Ի(յ)* նախդրի հետ գործածվում է իր անվանող այլ գոյականի տրական. Թէ յապակի սպիտակ ջուր արկեալ՝ *յարևու ունիցիս...* (Եզնիկ, 219): Եւ ինքն *ի գինուջ* էր (Գ Թագ., Ի, 12):

Նշված մասնակադապարով հարադիրների մասնակցությամբ ձևավորվում են նաև ոչ դարձվածային հարադրավոր բայեր. *ի բանտի դնել* (Խոր., 184), *յուխտի կալ* (Բուզ., 141), *յապահովի կալ* (Եզնիկ, 31), *ի վարձու տալ* (Իսիւք), *ի վարձու առնուլ* (Ել., ԻԲ, 15), *ի վարձու ունիմ* (Ծննդ., Լ, 16) և այլն:

բ) «*Ի(յ)*-(+)հայցական հոլովածն» մասնակադապարով, որտեղ հայցականը կարող է արտահայտված լինել կամ՝ եզակի, կամ՝ հոգնակի թվով: Հմմտ. *յողոք* անկանիմ (Բ Կոր., ԺԲ, 19), *ի պահ դնել* (Ա Եզր., Բ, 10), *ի գղջումն* գալ (Առակ., Բ, 19), *ի միտ դնել* (Ագաթ., 468), *ի համար* արկանել (Ագաթ., 175), *ի փախուստ* դաժուցանել (Խոր., 107), *ի լրումն* ածել (ՆՀԲ) և *ի գուճս* իջանել (Յուդ., Դ, 10), *ի քիկունս* հասանել (Ա Մակ., Ը, 25), *յորդեգիրս* առնուլ (Բ Մակ., ԺԴ, 26), *յանհնարինս* մտանել (Գործ., ԻԵ, 20) և այլն:

Ի(յ) նախդրի հետ հարադրի գործառույթով կարող են հանդես գալ նաև մի շարք անեզական գոյականների հայցական հոլովածները, որոնք տվյալ դեպքում նախդրի հետ չեն արտահայտում տեղի պարագայի իմաստ:

Դրանցից են՝ *ի խելս* գալ (ՆՀԲ), *ի միտս* գալ (Գուկ., ԺԵ, 17), *ի միտս* ունիմ (Խոբ., 22), *ի մեղս* դառնալ (Փարպ., 85), *յարդիւնս* գալ (ՆՀԲ), *յերեսս* գալ//բերել (ՆՀԲ), *ի կարծիս* գալ (ՆՀԲ), *յաղօթս* կալ (Եղիշէ, 150) և այլն:

Թեև «*Ի(յ)-(+)եզակի հայցական հոլովածն*» մասնադակապարը *Ա, Ո* և *Ո-Ա* հոլովումներին պատկանող գոյականների համար բուն տեղի պարագայի քերականական իմաստի արտահայտման միջոց է, այնուամենայնիվ նշված հոլովումներին ենթարկվող բառերի հայցական հոլովածները նույնպես *Ի(յ)* նախդրի հետ երբեմն գործածվում են իբրև բարդության հարադիր. *ի քուն* լինիմ (Ա Եզր., Գ, 3), *յուղի* անկանիմ (Գ Մակ., Է, 10), *ի փորձ* մտանել (Կոչ.), *ի գործ* արկանել (Յոբ, ԻԳ, 16) և այլն:

Մի շարք հարադրությունների մեջ *Ի(յ)* նախդրի հետ կապակցվում է դերանունների հայցական. *յինքն* գալ (Գ Մակ., Բ, 12), *յինքն* թափել (Բուգ., 157), *յինքն* հանել (Բուգ., 226), *յինքն* ունիմ (Բուգ., 152), *յինքն* տանել (Եղիշէ, 137), *յիրեարս* գալ (Խոբ., 157) և այլն:

«*Ի(յ)-(+)հայցական հոլովածն*» մասնադակապարով արտահայտվող հարադիրների հետ չպետք է շփոթել «*Ի(յ)-(+)մակբայ*» մասնակադապարով արտահայտվածները. *յառաջ* բերել (Ես., ԾԴ, 16), *յառաջ* խաղալ (Ա Մակ., Զ, 41), *յետ* դառնալ (Ծննդ., ԺԴ, 17), *ի դուրս* տալ (Ես., ԽԲ, 22), *ի մէջ* անկանիմ (Եղիշէ, 67), *ի ներքս* իջանել (Բուգ., 190), *ի բաց* իջանել (Բուգ., 160) և այլն:

«*Ի(յ)-(+)հայցական հոլովածն*» մասնադակապարով արտահայտվող հարադիրների հետ չպետք է շփոթել նաև այնպիսիները, որոնցում *Ի(յ)* նախդրի հետ գործածվել են ոչ թե հայցականով արտահայտված բառածներ, այլ կախյալ կամ անկախ գործածվող բայարմատներ. *ի խոստ* ածել (ՆՀԲ), *ի խոստ* գալ (ՆՀԲ), *ի գուճ* իջանել (ՆՀԲ), *ի գուճ* անկանիմ (Ոսկ.), *ի գուճ* հարկանել (Կիւրդ.), *ի փուլ* գալ (ՆՀԲ), *ի փուլ* ածել (ՆՀԲ), *ի խաբս* անկանիմ (ՆՀԲ) և այլն:

«*Ի(յ)-(+)հայցական հոլովածն*» մասնադակապարով արտահայտված հարադիրներից շատերը բայական բաղադրիչների հետ միասին հանդես են բերում դարձվածային արժեք. *ի միտ դնել* «մտադրվել», «որոշել»

(Յուդ., Ժ, 10), *ի վեզ գալ* «հակառակվել», «կամակորել» (Ա Մակ., Զ, 59), *ի մահիճս անկանիմ* «հիվանդանալ» (Ա Մակ., Ա, 6), *ի հող դառնալ* «մահանալ» (Սաղմ., ԺԳ, 29), *յակն ածել* «աչք ածել» (Առակ., ԻԶ, 21), *յոտն անկանիմ* «աղերսել», «խնդրել» (Գործ., ԺԲ, 8), *ի գլուխ հանել* «ավարտել» (Փարպ., 89): Օրինակ՝ Վնասակար ծառայք չիշխեն *յերեսս անկանել* /«երևալ»–Գ.Խ./ թագաւորաց (ՆՀԲ): Եւ ոչ ողորանացն իսկ *երեսս* ինչ *արար* /«ուշադրութիւն դարձրեց»–Գ.Խ./ (Եղիշէ, 159) և այլն:

Այս դեպքում հարադրի գործառնութիւնը ավելի հաճախ կիրառվում են գոյականների իմաստային հետևյալ խմբերը.

α) *մարմնի մաս անվանող գոյականներ*, ինչպես՝ *յողն* կալ (Գ Մակ., Գ, 12), *յողն* անկանիմ (Ոսկ.), *յողն* երթալ (Վեցօր.), *ի գլուխ* տանել, *ի գլուխ* գալ /*ի գլուխ* երթալ//*ի գլուխ* հասանել//*ի գլուխ* կատարիմ//*ի գլուխ* ելանել//*ի գլուխ* ածել//*ի գլուխ* հանել//*ի գլուխ* բերել//*ի գլուխ* լինիմ, *ի ծեռն* տալ (Փարպ., 65), *յակն* գալ (Բուգ., 150), *յոտն* կալ (Ել., ԼԳ, 10), *յերեսս* անկանիմ (ՆՀԲ), *ի ծունր* իջանել (Մատթ., ԺԷ, 14), *ի դէմս* գալ (Առ որս.), *ի դէմս* ածել// *ի դէմս* բերել (ՆՀԲ), *ի գիրկս մտանել* (Դ Թագ., Դ, 16) և այլն:

β) *Վերացական գոյականներ*, ինչպես՝ *ի գղջումն* դառնալ (Բուգ., 49), *ի գղջումն* գալ (Եզնիկ, 235), *ի գգաստութիւն* գալ (Բուգ., 181), *ի բանս* գալ (Բուգ., 154), *ի հնազանդութիւն* գալ (Փարպ., 136), *ի հնազանդութիւն* կալ (Փարպ., 11), *ի հաւանութիւն* գալ (Խոր., 270), *ի քուն* կալ (Եղիշէ, 148), *ի չափ* կալ (ՆՀԲ), *ի փախուստ* դառնալ (Փարպ., 125), *յուշ* գալ (ՆՀԲ), *կարգ* ընկենուլ (Խոր., 352), *յաշխարհ* մտանել (Եզնիկ, 235), *ի խնդիր* մխել «գալ», *ի խնդիր* լինիմ (Եզնիկ, 22, 34, 140), *ի դէպ* ելանել (Եղիշէ, 103), *ի դէպ* գալ (Բ Պետր., Բ, 25), *ի համար* բերել (ՆՀԲ): Նման բարդութիւնների մեջ նույնպես բացառված չեն սեռականով հավելադրութիւնները, ինչպես՝ *յաղերս աղաչանաց* անկանիմ (Խոր., 307) և այլն:

Հազվադեպ հարադրի գործառնութիւն են կատարում նաև իր անվանող գոյականներ. դատել *ի սուր* (ՆՀԲ), *ի գէն* ընթանալ (Եղիշէ, 56), *ի խաչ* հանել (Բուգ., 177), *յարտասուս* դառնալ (Եղիշէ, 89), *ի հրապարակ* գալ

(Եղիշէ, 130), *ի տուր* հանել (Խոր., 309) և այլն:

գ) «*Չ+տրական հոլովածե*» մասնակադապարով, որտեղ հատկապես վերացական գոյականների տրական հոլովածեները կիրառվում են՝ *Չ* նախդրի հետ միասին հարադրվելով *հարկանել* և *գարկանել* բայերի դիմավոր կամ անդեմ ձևերին:

Նկատելի է, որ այս շարքի հարադրավոր բայերը ևս հիմնականում հանդես են բերում դարձվածային արժեք. *գահի հարկանիմ*—«գարհու-րել» (Բ Օրէն., Թ, 19), *գերկիդի հարկանիմ*—«երկյուղել» (ՆՀԲ), *գդողման//գդողմանի հարկանիմ*—«դողալ» (ՆՀԲ), *գճչի հարկանիմ*—«ճչալ» (Եւագր.), *գահի գամօթի* հարկանել (Եսթ., Ե, 8) և այլն:

Իրանիշ գոյականներից «*Չ+տրական հոլովածե*» մասնակադապարի ձևավորմանը մասնակցում են *ծափ*, *քար*, *գետին* բառերի տրականները. *ծափ գծափի* հարկանել (Բուգ., 103), *գգետնի* գարկանել (ՆՀԲ), *գքարի* հարկանել (Սաղմ., Դ, 12) և այլն:

դ) «*Չ+հայցական հոլովածե*» մասնակադապարով, որի դեպքում նկատելի են մի շարք իրացումներ:

Հայտնի է, որ *Չ* նախդիրը հայցական հոլովածեի համար որոշիչ հո-դի դեր է կատարում: Սակայն որոշյալ առմամբ հայցականը գրաբարում բազմիցս կիրառվում է հարադրի գործառույթով, որտեղ արդեն չի պահպանվում առկայացման քերականական իմաստը: Օրինակ՝ *գփործ առնուլ* (Ագաթ., 66), չի նշանակում «*փործը վերցնել*», այլ՝ «*փործել*», *գնմանութիւն բերել* (Եղիշէ, 292) հարադրավոր բայը չի նշանակում «*բերել նմանությունը*», այլ ունի «*նմանվել*», «*հետևել*» իմաստները: Օրինակ՝ Երանի թէ և դուք ըստ բժշկական արուեստին *բերէիք գնմանութիւն* (Եղիշէ, 191, ՆՀԲ) և այլն:

Բնական է, որ «*Չ+հայցական հոլովածե*» մասնակադապարով հարադիրները հանդես են գալիս ներգործական սեռի բայերի հարադրությամբ. *գչափ առնուլ* (Բուգ., 143), *գչար ոգել* (ՆՀԲ), *գակն տալ* (ՆՀԲ), *գհետ արծակել* (ՆՀԲ), *գճակատ մդել//ճակատ տալ* (Բուգ., 54, 112), *գինքն թափել* (ՆՀԲ), *գմուտս առնել* (Խոր., 187), *գշունչ կլանել//գօղս կլանել* (Կոչ., Առ որս.), *փչել գհոգի* (ՆՀԲ), *գակն դնել* (Բուգ., 103), *գտեղի ունիմ/*

/գտեղի առնուլ (Բուգ., 94, 111) և այլն:

Սակայն այս մասնակադապարով հարադիրը բարդության բաղարիչ է դառնում որոշ չեզոք բայերի հետ նույնպես. զճակատ *մտանել*, զանց *լինիմ* (Եսթ., Ժ, 5), զոգի *ելանել*, զճանապարհ *երթալ* (Ծննդ., ԼԲ, 1), զճանապարհ *գնալ* (Ծննդ., ԺԸ, 5) և այլն. մի հանգամանք, որ խոսում է Ջ նախդրի՝ տվյալ դեպքում որոշիչ հոդ չլինելու օգտին:

Նշված մասնակադապարի և բայական բաղադրիչի հարադրությամբ գրաբարում առաջացել են բազմաթիվ դարձվածային բարդություններ. օրինակ՝ *զգիճի թափել* «սթափվել» (Սաղմ., ՀԷ, 65), *թափել զոգի* «տանջել», «չարչարել» (Ողբ., Բ, 12) և այլն: Սրանցում հարադրի գործառույթով առավել հաճախ գործածվում են՝

ա) *մարմնի մաս անվանող գոյականները*. *զակն* պահել (Խոր., 257), *զարտևանունս թօթափել* (ՆՀԲ), *զգլուխ* բառնալ (Ագաթ., 112), *զակն//զաչս* արկանել (Ես., ԾԸ, 7), *զակն//զաչս* յառել (ՆՀԲ), *զմէջ(ս)* պնդել (ԳԹագ., ԺԸ, 46, Ոսկ.), *զսիրտ* բեկանել (Ոսկ.), *ծունր* խոնարհեցուցանել (ՆՀԲ), *զթիկունս* դարձուցանել (Խոր., 270), *զսիրտ* դնել (Բուգ., 139), *զերեսս* դնել (Եփր.), *զղէմ* ունիմ (Ա Մակ., Գ, 53), *զակն* տալ (ՆՀԲ), *զձեռն* լնուլ (Դևտ., Ը, 33), *զճակատ* հարկանել (Ագաթ., 405) և այլն:

բ) *Վերացական գոյականները*. *զհամար* տալ//*զհամար* առնել (Դուկ., ԺԶ, 2, Թիւ., ԼԱ, 26), *զողբս* հարկանել (Ոսկ.), *զաղաղակ* բառնալ (Եղիշէ, 118), *զփորձ* առնուլ (Ագաթ., 66), *զետղ* առնուլ (Ագաթ., 423), *գտեղի* առնուլ (Ագաթ., 423), *զվրէժ* խնդրել (Բ Օրէն., ԺԸ, 19), *գտեղի* ունիմ (Բուգ., 111), *զվճիռ* տալ (Կոչ.), *զերկիւղ* ածել (Երեմ., ԽԹ, 5), *զբան* մերկանալ (Գ Մակ., Զ, 19), *զծառայութիւն* հարկանել (Կորին., 84), *զսպասաւորութիւն* հարկանել (Եզնիկ, 185), *զաղաչանս* դնել (Փարսլ., 53), *զաղօթս* մատուցանել (Բուգ., 163) և այլն:

գ) Հարադրի գործառույթ կարող են կատարել նաև որոշ *թանձրացական գոյականներ*. *զարև* հատանել (Եղիշէ, 198), *զաղեղն* լնուլ (Բ Մնաց., ԺԸ, 33), *զհողմն* արածել (Առակ., ԻԹ, 3), զբոզս արածել (Առակ., ԻԹ, 3), *զկին* արծակել (Ոսկ.), *զաճիւն* լիզել (ՆՀԲ), *զգօտի* ածել (Առակ.,

ԼԱ, 17), *զօժիս* արկանել (Եփր.), *զսուր* թօթափել (ՆՀԲ), *զկապուտ* թափել (Բուգ., 210), *զանձն* թափել (Յովբ, Ե, 15) և այլն:

ծ) Հարադրի հետ կարող են հանդես գալ նաև սեռականով հավելադրություններ. *զճայն աղաղակի* բարձրացուցանել (Եզեկ., ԻԱ, 22), *զահ երկհուղի առնուլ* (Ագաթ., 6) և այլն:

է) Հազվադեպ հարադիրն ինքնին մի հարադրավոր բարդություն է, ինչպես՝ տալ *զահ և զերկհուղ* (Բ Օրեն., Բ, 25):

չ) Որոշ բայերի հարադրությամբ, «*Ձ+հայցական հոլոված*» մասնակադապարով արտահայտված կապական կապակցությունից բացի, կիրառվում են «*Ի(յ)-(+)տրական հոլոված*» կամ «*Ի(յ)-(+)հայցական հոլոված*» մասնակադապարներով արտահայտված բաղադրիչներ. ունիմ զոգի *ի բռին* (Փարպ., 138), դնել զոգի *ի բաց* (Խոր., 172), դնել զանձն *ի մահ* (Ագաթ., 3), տալ զանձն *ի մահ* (Փարպ., 109), արկանել զանձն *ի ջանս* (Խոր., 317), հարկանել զոք *յոգի* (Ծննդ., ԼԵ, 21) և այլն: Նմանատիպ հարադրավոր բայերի մեծ մասն ունի դարձվածային արժեք:

ե) «*Ձ+գործիական հոլոված*» մասնակադապարով, որը գործածվում է և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի բայերի հարադրությամբ: Հմնտ. զառաջեալ *ածել* (Փարպ., 48), զբռամբ *արկանել* (Բ Մակ., ԺԴ, 13) և զճանապարհալ *գնալ* (ՆՀԲ), զանձամբ *լինիմ* (Աղեքս.), զբանիք *անկանիմ* (Բ Մակ., Ե, 9), զմտօք *գալ* (Ագաթ., 271) և այլն:

Նշված մասնակադապարով հարադիրների մասնակցությամբ ձևավորվում են դարձվածային հարադրավոր բարդություններ, որտեղ *Ձ* նախդրի հետ հանդես են գալիս հատկապես մարմնի մաս անվանող բառերի և անձերին վերաբերող այլ գոյականների գործիական հոլովածներ. *զբռնամբ ածել* «տիրել», «ձեռք բերել» (Խոր., 49), *զբանիք գալ* «կրկնաբանել» (Ոսկ.), *զգիներօք անկանիմ* «գինովանալ» (Մծբն.), *զինի գալ զականք* «հարբել» (Բուգ., 174), *զմտալ ածել* «մտածել», «մտաբերել» (Փարպ., 172), *զանձամբ արկանել* «հագնել» (Եղիշէ, 136), *զհրամանալ անցանել* (Եղիշէ, 171), *զխրատու անցանել* (Խոր., 30), *զուշով գալ* (Յճխ.), *զուշով ածել* (ՆՀԲ), *զարամբ գալ* (ՆՀԲ), *զականք գալ* (ՆՀԲ), *զզլխով ածել*

(Եզեկ., Ե, 4), *զշափով անցանել* (Ազաթ., 140), *զանձամբ առնուլ* (Ել., ԼԳ, 4) և այլն:

Ընդգծված հարադիրներից բացի՝ այդ գործառնությունը կարող են հանդես գալ այլ գոյականների եզակի կամ հոգնակի գործիականները ևս: Հմնտ. *զաղմկալ* լինիմ (Դատ., Գ, 26), *զբոցով* ածել (Գ Թագ., ԻԳ, 10) և *զբանիւք* անկանիմ (Գ Մակ., Ժ, 9), *զգրովք* գալ (ՆՀԲ), *զաւուրքք* անցանել (Ղուկ., Բ, 36) և այլն:

Մի քանի գործիականների՝ հոգնակի թվով արտահայտվելը պայմանավորված է այդ գոյականների անեզականությանը. *զօժեօք* արկանել (Ա Մակ., Դ, 39), *զմիմեամբք* ելանել (Հոովմ., ԺԲ, 10) և այլն:

Որոշ բարդությունների մեջ հարադիր են դառնում միևնույն բառի և՛ եզակի, և՛ հոգնակի գործիականները: Հմնտ. *զմտալ* ածել (Փարպ., 172) և *զմտօք* զառանցուցանել (Բուգ., 200), *զառաջեալ* ածել (Փարպ., 82) և *զառաջեօք* անգանիմ (Բուգ., 130), *զգրով* գալ (ՆՀԲ) և *զգրովք* գալ (ՆՀԲ): Այս երևույթը կարելի է պատճառաբանել տարբեր տեսանկյուններից. մի դեպքում՝ թե՛ եզակի, թե՛ հոգնակի գործիականները իմաստային տարբերություն չեն հաղորդում բարդությանը (*մտալ*–*մտալք*), մյուս դեպքում՝ դրանցից ամեն մեկով արտահայտվում է առանձին իմաստ (*զառաջեալ*–*զառաջեալք*) և այլն:

Քանի որ այս կարգի բարդությունների հարադիրները հիմնականում մարմնի մաս անվանող կամ անձերին վերաբերող գոյականներ են, ուստի պատահական չէ, որ հաճախ միևնույն հարադիրը հանդես է գալիս մեկից ավելի բայերի հարադրությամբ. *զընչովք ունիմ//կալ//առնուլ //լինիմ, զբռամք ածել//արկանել, զանձամբ առնուլ//բառնալ//դառնալ// լինիմ//արկանել* և այլն:

Որոշ բարդությունների կազմում Ձ նախդրի հետ միաժամանակ հարադրի ձևավորմանը մասնակցում են այլ նախդիրներ կամ նախադրություններ. *զընդ զրով* անկանիմ (Անյ.), *շուրջ զտնկով* ածել (Եզեկ., ԼԱ, 4) և այլն:

Երբեմն դարձվածային հարադրավոր բայերի հարադիրներն իրենք

իսկ կազմությամբ հարադրավոր բարդություններ են. *զայսու զայնու* լինիմ (ՆՀԲ), *ոտն գոտամբ* արկանել (Բուզ., 74) և այլն:

զ) «*ԸՆԴ–տրական հոլովածև*» մասնակադապարով, որն *ԸՆԴ* նախդրով և հայցական, գործիական հոլովածևներով մյուս կապակցությունների համեմատությամբ աչքի է ընկնում կապակցելիության սահմանափակ դրսևորումներով:

Նշված կապակցությամբ արտահայատված հարադիրները հիմնականում անվանում են անձ կամ էլ անձին վերաբերող երևույթ (իրողություն) և կարող են կապակցվել ներգործական, ավելի հաճախ՝ չեզոք սեռի բայերի հետ՝ հանդես բերելով դարձվածային արժեք. *ընդ անձին մտանել* «կովել», «պայքարել» (Ոսկ.), *ընդ անձին արկանել//առնել* «ինքնասպան լինել» (Խոր., 301), *ընդ մտի (այլոց) լինիմ, ընդ կնոջ լինիմ//հարկանել//մնջել* (Թիւ., ԻԵ, 14, Բ Օրեն., ԻԵ, 20), *ընդ թուով արկանել* (Անյ.), *ընդ օրինօք մտանել* (Եղիշէ, 6) և այլն:

է) «*ԸՆԴ–հայցական հոլովածև*» մասնակադապարով, որ հանդես է գալիս և՛ ներգործական և՛ չեզոք սեռի բայական բաղադրիչների հարադրությամբ: Հմնտ. *ընդ ակն խոցել* (Ոսկ.), *ընդ թիւ անցուցանել* (Կիրդ.) և *ընդ զէնս ելանել* (Բ Մակ., ԺԲ, 22), *ընդ լսելիս անկանիմ* (Եղիշէ, 196), *ընդ աղեղն մտանել* (Դ Թագ., ԺԳ, 16):

«*ԸՆԴ–հայցական հոլովածև*» մասնակադապարով և բայական բաղադրիչի հարադրումով գրաբարում առավել հաճախ ձևավորվում են դարձվածային միավորներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում մարմնի մաս անվանող բառերը. *ընդ ունկն մտանել* (ՆՀԲ), *ընդ կրուկն դառնալ* (Բ Թագ., ԺԱ, 15), *ընդ գլուխ հանել* (Իմաստ., ԺԴ, 13), *ընդ կառափն հանել* (ՆՀԲ), *ընդ ոտն կալ* (Բուզ., 200) և այլն:

Այստեղ հանդիպում են նաև հոգնակի հայցականով կապակցություններ. *ընդ ոտս անկանիմ* (Եզնիկ, 106), *ընդ գիրկս մտանել* (Բուզ., 215), *ընդ բիրս տալ* (Թրակ.), *ընդ երեսս անկանիմ* (ՆՀԲ) և այլն: Անհրաժեշտության դեպքում դրանք հանդես են գալիս նաև եզակի թվով. *ընդ բիր* հարկանել (Զաք., Բ, 8), *ընդ ոտն* հարկանել (Եփր.) և այլն:

Հարադրի գործառույթով *ԸՆԴ* նախդրի հետ գործածվում են նաև մի շարք բայանուններ և վերացական գոյականներ. *ընդ փորձ* անցանել (Ոսկ.), *ընդ խաբս* լինիմ, *ընդ խաղ* արկանել (ՆՀԲ), *ընդ քուն* անցանել (ՆՀԲ), *ընդ օրենս* անցանել (Եղիշէ, 22), *ընդ ամօթ* հարկանել (Վեցօր.), *ընդ բանս* ածել (Գործ., Ժ, 29), *ընդ գործ* մտանել (Բ Օրեն., ԻԱ, 30) և այլն: Դրանց մի մասն աչքի է ընկնում տարբեր հարադրյալների հետ կապակցելիության հնարավորությամբ. (*ընդ*) *թափ անցանել* (Ագաթ., 326)// *անցուցանել* (ՆՀԲ)// *հանել* (Բուգ., 98)// *հասուցանել* (Փարպ., 152), *ընդ թիւ(ս)* *արկանել* (ՆՀԲ)// *մտանել* (Ծննդ., ԺԳ, 16)// *անցանել*// *անցուցանել*, *ընդ միտ(ս)* *մտանել* (Եղիշէ, 90)// *հարկանել* (Եզնիկ, 255)// *ածել* (Ագաթ., 2)// *տանիմ* (Եզնիկ, 60) և այլն:

Հարադրի բաղադրիչ կարող են դառնալ նաև թանձրացական գոյականների և անձնանիշ դերանունների հայցականները. *ընդ քիրտն մտանել*// *հարկանել* (ՆՀԲ), *ընդ արիւն գալ* (Ոսկ.), *ընդ աղբ գալ* (Սաղմ., ԶԳ, 11), *ընդ գիծի(ս)* *մտանել* (Ագաթ., 30, Բուգ., 45), *ընդ լուծ մտանել* (ՆՀԲ), *ընդ ցից*// *խաշ*// *սուր հանել* (Խոբ., 300, Փարպ., 69), *ընդ կին մտանել* (Երեմ., Ը, 6) // *անցանել* (ՆՀԲ), *ընդ անձն անկանիմ* (Եզնիկ, 69), *ընդ մանկտին հանել* (ՆՀԲ), *ընդ աղեղն մտանել* (Դ Թագ., ԺԴ, 16), *ընդ ունջ տանել* (Բուգ., 143) և այլն:

Նշված հարադիրների մի մասը, կապակցվելով տարբեր սեռերի բայական բաղադրիչների հետ, ձևավորում է ներգործական-կրավորական կամ ներգործական-չեզոք քերականական հականշություն: Հմմտ. *ընդ սուր հանել* «թրատել» (Ա Մակ., Ը, 48) և *ընդ սուր ելանել* «թրատվել» (Փարպ., 56), *ընդ հուր անցանել* (Թիւ., ԼԱ, 23) և *ընդ հուր անցուցանել* (Դ Թագ., ԺԵ, 17), *ընդ կրուկն դառնալ* (Փարպ., 42) և *ընդ կրուկն դարձուցանել* (Փարպ., 74), *ընդ միմեանս անկանիմ* (Եզնիկ, 76) և *ընդ միմեանս արկանել* (Եղիշէ, 23) և այլն:

Հայցական հոլովով ձևավորվող հարադիրների հետ չպետք է շփոթել *ԸՆԴ* նախդրի հետ կիրառված մակբայներով կապակցությունները, որոնք աչքի են ընկնում կապակցելիության ակտիվությամբ: Ասվածը պատ-

ճառաբանվում է նրանով, որ այս կապակցությունների միջոցով արտահայտվում են տեղի պարագայի տարբեր իմաստներ, իսկ տեղի պարագաները, ինչպես հայտնի է, գրեթե պարտադիր են գրաբարյան նախադասությունների մեջ:

Մակբայ-հարադիր ունեցող բարդությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ միևնույն հարադրի հետ կարող են բայական բարդություն կազմել մի քանի տարբեր բայական բաղադրիչներ. *ընդ առաջ* ելանել (Խոր., 170) // *երթալ* (Բուզ., 93) // *խաղալ* գնալ (Բուզ., 127) // *լինիմ* (Խոր., 224) // *յդել* (Եղիշե, 44), *ընդդէմ երթալ* (Բուզ., 165) // *դառնալ* (Եղիշե, 189) // *դնել* (Եղիշե, 13) // *դիպիմ* (Խոր., 184) // *գալ* (Բուզ., 123) // *կալ* (Խոր., 288), *ընդ վայր թողուլ* (Ագաթ., 51) // *հաջել* (Եղիշե, 185) // *հարկանել* (ՆՀԲ) // *աղաղակել* (Թուրք, 200) // *ածել* և այլն: Նշված իրողությունը պայմանավորված է նրանով, որ թե՛ տվյալ մակբայ-հարադիրները և թե՛ դրանց բայական բաղադրիչները գրաբարի ակտիվ բառապաշարի շերտից են:

Հազվադեպ է, երբ հարադրի գործառույթ ունեն որոշ ածականների հայցականներ. *ընդ երկարս* առնել (Եփր.), *ընդ ընտիրս* հանել (ՆՀԲ), *ընդ հակառակս* ելանել (Եղիշե, 197), *ընդ հուս* լինիմ (ՆՀԲ) և այլն:

Մի շարք հարադիրների կազմության մեջ *ԸՆԴ* նախդիրը ծառայում է որպես բաղադրիչների կապակցման բառային միջոց, որի արդյունքում առկա են կրկնավոր⁹⁴ և հարադրավոր բարդություններ. *այր ընդ այր* անկանիմ (Ես., Գ, 5), *ցիր ընդ ցիր* լինիմ (Խոր., 303), *հուս ընդ հուս* գալ (Բ Մակ., Բ, 18), *գիրկ ընդ խառն* լինիմ (ՆՀԲ), *խեղդ ընդ անձն* արկանել (Եզնիկ, 116), *այլ ընդ այլոյ* լինիմ (Ոսկ.) և այլն:

ը) «*ԸՆԴ-գործիական հոլովածե*» մասնակաղապարով, որտեղ հարադրի հետ կապակցվում են և՛ չեզոք, և՛ ներգործական սեռի բայեր՝ հիմնականում ձևավորելով դարձվածային միավորներ. *ընդ ապաշխարութեամբ արկանել* (Եզնիկ, 288); *ընդ հարկաւ դնել* (Դատ., Ա, 28) // *առնել* (Խոր., 103) // *մտանել* (Խոր., 139), *արկանել* (Խոր., 216), *ընդ ակամբ հայիմ* (Խոր., 306, Ա Թագ., ԺԸ, 9), *ընդ տեսլեամբ* (ական) *անկանիմ* (Եղիշե, 30), *ընդ գրով արկանել* (Եղիշե, 27), *ընդ քարիւ խթիմ* (Վեցօր.), *ընդ թուով*

մութանել, ընդ թուով մտանել (Ղևտ., ԻԷ, 32), ընդ մահուամբ անկանիմ (Եզնիկ, 73) և այլն:

Այս մասնակադապարով ձևավորված մի շարք հարադրավոր բայեր «ԸՆԴ–հայցական հոլովածև» մասնակադապարով ձևավորվածների հետ համանիշ են: Հմմտ. ընդ լուծ մտանել (Կոչ.) և ընդ լծով մտանել (Գաղատ., Ե, 1), ընդ թիւ արկանել (ՆՀԲ) և ընդ թուով արկանել (ՆՀԲ), ընդ քուն անցանել (ՆՀԲ) և ընդ քնով անկանիմ (ՆՀԲ) և այլն:

Նշված մասնակադապարով արտահայտվող մի շարք բարդություններ քերականական հականիշներ են. ընդ գրով անկանիմ (Անյ.) և ընդ գրով արկանել (Եղիշէ, 27), ընդ բանիւ առնել (ՆՀԲ) և ընդ բանիւ լինիմ (ՆՀԲ) և այլն: Նկատելի է, որ հականշությունը ձևավորվում է տարբեր սեռերի (ներգործական և չեզոք) բայական բաղադրիչների միջոցով:

թ) «ԱՌ–հայցական հոլովածև» մասնակադապարով, որ կարող է հարադրվել չեզոք կամ ներգործական սեռի բայերի հետ: Հմմտ. մի կողմից՝ առ ոտն հարկանել (Փարպ., 172), մյուս կողմից՝ առ կին մտանել (Ծննդ., Դ, 17):

«ԱՌ–հայցական հոլովածև» մասնակադապարի կապվող բառաձևերը մարմնի մաս կամ վերացական առարկա անվանող գոյականներ են, հազվադեպ՝ դերանուններ և այլ բառեր, որոնք, բայական բաղադրիչների հետ հարադրվելով, ձեռք են բերում դարձվածային արժեք, ինչպես՝ առ ոտն կոխեմ «արհամարհել» (Բուզ., 217), առ ձեռն ունիմ// կալ(մ)ուլ «տիրել» (Խոբ., 281), առ աչս հայիմ «աչառել» (Ոսկ.), առ լոյս ածել «ծնանիմ» (ՆՀԲ), առ իրեարս կալ(մ)ուլ (Ածաբ.) և այլն:

Կապակցելիության ակտիվությամբ աչքի է ընկնում առ ոտն հարադիրը՝ դրվելով արկանել, հարկանիմ, կոխել, կոտորել բայական բաղադրիչների հետ. առ ոտն կոխեմ (Մատթ., Է, 6), առ ոտն արկանել (Ել., Դ, 25), առ ոտն հարկանել (Եբր., Ժ, 29) և այլն:

Մի շարք դեպքերում ԱՌ նախդիրը ոչ թե մասնակցում է հարադրի կազմությանը, այլ *Բ(յ)* նախադրի հետ միասին քերականական նոր հարաբերություն է հաղորդում այս կամ այն հարադրավոր բարդությանը,

ինչպես՝ *առ ի ծանօթս* առնել (Ագաթ., 178), *առ ի յուշ* առնել (Ագաթ., 234), *առ ի զօրավիզն* լինել (Խոր., 135) և այլն:

Ունիմ//կալ(ն)ուլ պակասավոր բայերի հետ հարադրվում են «ԱՌ–հոգնակի հայցական հոլովածն» մասնակադապարով արտահայտված հարադիրներ. *առ արդարս* ունիմ (Սիր., Ե, 5), *առ հարս* ունիմ (Եղիշէ, 196), *առ սուտս* ունիմ//կալայ (Խոր., 346): Սրանց հետ պարտադիր պահանջվում են նաև որոշյալ առմամբ արտահայտված հայցականներ: Օրինակ՝ Եւ ոչ *առ լուս կալեալ...զնա* (Բուգ., 106): *Ջայնպիսին առ պատուականս ունիջիք* (Փիլիպ., Բ, 29): *Ջիս ունիմ առ որ չեմ* (ՆՀԲ) և այլն:

Ունիմ//կալ(ն)ուլ բայերին վերագրվող հատկանիշներով է օժտված նաև *համարիմ* բայը, սոսկ այն տարբերությամբ, որ վերջինս հանդես է գալիս միայն *ԱՌ ոչինչ* հարադրի հետ: Օրինակ՝ *Ջլուսաւորացդ զօրութիւն* առ ոչինչ համարիմ (Ագաթ., 87): *Առ ոչինչ համարեալ զբազմութիւն* զօրաց նորա՝ միայն ակնածէին ի Մուրացանէն Արգամայ (Խոր., 171): Եւ զամենայն իսկ *զերկրաւորս առ ոչինչ համարեալ...* (Բուգ., 10) և այլն:

ժ) «ԱՌ–տրական հոլովածն» և «ԱՌ–գործիական հոլովածն» մասնակադապարներով, որոնք առանձնանում են բացառիկ կիրառություններով. *առ աչօք տեսանել* (Նեղոս), *առ աչօք եմ//լինիմ* (Մարկ., 2, 49), *առ ական դիպիմ* (Ագաթ., 217) և այլն:

ժա) «ԸՍՏ–տրական//հայցական//բացառական//գործիական» մասնակադապարներով, որոնք հանդես են գալիս սահմանափակ կիրառություններով և ունեն դարձվածային արժեք. *ըստ անձին առնուլ*–«ըստանձնել» (Եփր.), *ըստ բանի գալ*–«կառավարվել» (Եզնիկ, 224), *ըստ կամաց գալ*–«ենթարկվել» (Եզնիկ, 172), *ըստ ակն անկանիմ*–«աչքից ընկնել» (Բուգ., 14), *ըստ աչս դատել* (Յոհ., Է, 20), *ըստ բան ելանել* (ՆՀԲ), *ըստ սահմանս անցանել* (Եղիշէ, 35), *ըստ աշխարհ հանել*–«տարագրել» (Եւս.), *ըստ ձեռն ելանել* (Եղիշէ, 72), *ըստ ուխտ մտանել* (Եզնիկ, ԺԷ, 15), *ըստ չափ ելանել* (Յովք, ԺԱ, 9) և այլն: Օրինակ՝ Քանգի գիտէ, թէ կէսք *զամ ըստ կամաց* նորա, և կէսք ոչ զան (Եզնիկ, 172): Չէր որ ամենևին, որ իշխեր *ըստ ձեռն* նորա *ելանել* (Եղիշէ, 88): Մինչ զի նայէր թագաւորն և տեսանէր,

զի *ըստ ակն անկանէիմ*, մինչ զի ոչ երևէին թագաւորին նշանքն Մուշեղի (Բուգ., 164) և այլն:

S-S_v, S^f-S_v և P+S^f-S_v մասնակադապարներով ձևավորված հարադրավոր բայերի S_v բաղադրիչը գրաբարում արտահայտվում է մի շարք համադրական բայերի դիմավոր և/կամ անդեմ ձևերով: Հարադրավոր բայերի կազմութեանը մասնակցող համադրական բայերի թիվը գրաբարում անցնում է մեկուկես հարյուրից: Դրանցից են՝ *ածել, ամբառնալ, անկանիմ, անցանել, անցուցանել, առաքել, առնել, առնուլ, ասել, արածել, արկանել, արծակել, աւերել, բառնալ, բարբառել, բեկանել, բերել, բորորել, բռնանալ, գալ, գիտել, գնալ, գոլ, գործել, գրգռել, դառնալ, դատել, դարձուցանել, դիպիմ, դնել, ելանել, երթալ, երեւիմ, զառանցել, զգենուլ, զգեցուցանել, զեղխել, զերծուլ, ըմբռնիմ, ըմպել, ընթանալ, ընկենուլ, ընկրկել, թափել, թողուլ, թքանել, թօթափել, թօթափեցուցանել, ժողովել, իջանել, իջուցանել, լիզել, լինիմ, լնում, լուծանել, խաղալ, խաղացուցանել, խառնել, խզել, խթել, խլել, խմբել, խնդրել, խոնարհել, խոնարհեցուցանել, խորհիմ, խոցել, խօսիմ, ծածկել, կազմել, կաթեցուցանել, կալ, կանխել, կառուցանել, կարդալ, կոչել, կողոպտել, կռել, կտտել, կրել, կրթիմ, կրկնել, կրոնաւորել, կուտել, հալածել, հակել, համակել, համարիմ, հայիմ, հանել, հասանել, հաստատել, հասուցանել, հատանել, հատուցանել, հարկանել, հեծանել, հեղուլ, հրամայել, ձգել, մատնել, մատչիմ, մատուցանել, մերժել, միտել, մղել, մնալ, մտանել, յառել, յարծակիմ, յարուցանել, յղել, յորդորել, յուզել, յորինել, շահել, շքեցուցանել, շրջիմ, ողորքել, ոգորել, պագանել, պահանջել, պահել, պատել, պաշարել, պատառել, պարզել, պարապել, պարտիմ, պարուրել, պատահիմ, պնդել, պրկել, պուղել, սահմանել, սորել, սփռել, վաթել, վառել, վարել, վարկանել, վրիպել, տալ, տանիմ, տարածանել, տեսանել, ցուցանել, ունիմ, ուտել, փախչիմ, փախուցանել, փլուզանել, փոխել, փորել, փչել, քակել, քանդել, քերել, քթթել, քրքրել և*

այլն:

Հարադիրների հետ համեմատած՝ բայական բաղադրիչները անհամեմատ փոքր թիվ են կազմում, և դա բնական է, որովհետև հարադրավոր բայերի բուն իմաստակիր բաղադրիչները ավելի հաճախ ոչ թե բայական բաղադրիչներն են, այլ հարադիրները, որոնք էլ բարդության բուն իմաստակիրը լինելու պատճառով կրում են բարդության հիմնական բառային շեշտը:

Քննությունից պարզվում է, որ բերված բայերի մի մասը չեզոք սեռ է ներկայացնում. *գալ, գնալ, երթալ, դառնալ, դիպիմ, երևիմ, իջանել, մտանել, փախչիմ* և այլն, մի մասն էլ (և դեպ, սրանք մեծ թիվ են կազմում)՝ ներգործական սեռի բայեր են. *ածել, առաքել, առնել, արկանել, դնել, կրկնել, հանել, մատնել* և այլն:

Հատկանշական է, որ հարադրավոր բարդությունների մեջ բայական բաղադրիչի դերով հանդես են գալիս միայն կազմությամբ պարզ և սոսկածանցավոր բայերը: Բացառիկ դեպքերում բայական բաղադրիչի գործառույթ կարող են կատարել նաև պատճառական մի քանի բայեր. *ազուցանել, անցուցանել, դարձուցանել, կացուցանել, հասուցանել* և այլն: Օրինակ՝ Դուք աստեն յիմում տանս *յարուցէք ի վերայ* իմ պատերազմ (Եղիշէ, 84): Չաչսն *ի նմա կառուցանեն* (ՆՀԲ): Ժաման *կացուցես* ի հանդիպումն յուսոյն (ՆՀԲ) և այլն:

Բայական բաղադրիչներն իրարից տարբերվում են գործառական և հարադիրների հետ կապակցելիության տարբեր աստիճաններով:

Այս տեսանկյունից առանձնանում են այնպիսի բայեր, որոնք ակտիվորեն գործածվել են գրական հայերենի պատմության՝ մեզ հայտնի բոլոր շրջաններում. *առնել, լինիմ, ածել, անկանիմ, անցանել, բերել, գալ, դիպիմ, դառնալ, տալ* և այլն, որոնց մասնակցությամբ ձևավորված վերլուծական բայերը լեզվի պատմության բոլոր շրջաններում եղել են ակտիվ բառապաշարի տարրեր⁹⁵: Օրինակ՝ *վնաս առնել* (Եզնիկ, 61), *վնաս այնել*⁹⁶ (ՆՀԲ), *վնաս անել* (Ժխ.), *ակն ածել* (Ա Թագ., ԺԸ, 29), *ածել զաչք*⁹⁷, *աչք ածել*⁹⁸ և այլն:

Մի շարք բայերով հարադիրների հետ բարդություններ են կազմվել միայն գրական լեզվի պատմության այս կամ այն շրջանում: Այդ բայերից են՝ *կրթիմ, կրօնաւորել, շքեցուցանել, քակել* և այլն: Օրինակ՝ Ինքն *զհետ յունական գօրուն կրթէր* (Խոր., 277): Հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ *շքեցուցանել ի բաց* գտանկութիւնն (Եգ-նիկ, 191) և այլն:

Անհամեմատ շատ են լեզվի պատմության այս կամ այն շրջաններում գործածված կամ, այսպես կոչված, ընդհանուր հայերեն⁹⁹ բայերը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ բազմաթիվ հարադրավոր բայեր առ այսօր գործածական են:

Որոշ հարադրյալներ, որոնք համագործածական միավորներ են, կարող են կապակցվել մեկից ավելի հարադիրների հետ:

Դրանց մի մասը կարող է կապակցվել արտահայտության տարբեր պլանների ունեցող հարադիրների հետ: Օրինակ՝ *կալ* բայի դեպքում ունենք *խնամ կալ, յապահովի կալ* (Եգնիկ, 31), *յոտն կալ* (Եղիշէ, 149), *շուրջ կալ* (Փարպ., 30) և այլ կապակցությունները: Այսպես նաև՝ *գալ, գնալ, երթալ, մտանել, անցանել, դառնալ, ելանել, հասանել, ունիմ, դնել, առնել, ածել, լինիմ, անկանիմ, բերել, հարկանել* և այլ բայեր:

Մի շարք բայեր էլ հիմնականում կապակցվում են արտահայտության միևնույն պլանն ունեցող բազմաթիվ հարադիրների հետ: Օրինակ՝ *տալ* բայը՝ հայցական հոլովով և *Ի(յ)* նախդրով կապակցությունների հետ. *գրոյց տալ* (Փարպ., 126), *յուսումն տալ* (Բուզ., 152), *գահ տալ* (Բ Օրեն., Բ, 25), *յայպն կատականաց տալ* (Եղիշէ, 49) և այլն: Այսպես նաև՝ *բառնալ, ամբառնալ, արկանել, առնուլ, գործել, հանել* և այլ բայեր:

Հարադրի գործառույթ կատարող մի շարք բայեր ունեն կապակցելիության սահմանափակ հնարավորություն. կապակցվում են միայն որոշակի հարադիրների հետ. *կրթիմ, արածել, կառուցանել, զգենուլ, կորգել, կրել, վաթել* և այլն: Օրինակ՝ *ի վայր վաթել* (Ագաթ., 107), *փաշաման կրել* (Եգնիկ, 64), *յապուշ դառնալ* (Խոր., 290) և այլն:

Թե՛ կենսունակության և թե՛ կապակցելիության ակտիվության տեսանկյունից զրաբարում առանձնանում են *առնել* և *լինիմ* բայերը, որոնց

հարադրությամբ, մեր հաշվումներով, ձևավորվել են 1200-ից ավելի բարդություններ: Դրանց շարքում բազմաթիվ են միևնույն հարադրով և *առնել* ու *լինիմ* հարադրյալներով ձևավորվածները, որոնք, փաստորեն, միևնույն բաղիմաստի տարբեր սեռերի քերականական կարգերի արտահայտություններ են: Ընդ որում, մի դեպքում՝ նշված տարբերությունն արտահայտվում է ներգործական և կրավորական, մյուս դեպքում՝ ներգործական և չեզոք սեռերի քերականական իմաստների հակադրությամբ: Հմնտ. *յանձն առնել* (Եղիշէ, 128) և *յանձն լինիմ* (Բուգ., 162), *ազդ առնել* (Խոր., 309) և *ազդ լինիմ* (Բուգ., 100), մյուս կողմից՝ *յանդիման առնել* (Ագաթ., 159) և *յանդիման լինիմ* (Եզնիկ, 291) և այլն:

Առնել բայով կամված բարդություններն ավելի քիչ թիվ ունեն (շուրջ 500), քան *լինիմ*-ով բաղադրվածները: Իսկ ընդհանրապես, *առնել* և *լինիմ* բայերով գրաբարում կազմվել են գրեթե նույնքան հարադրավոր բարդություններ, որքան մյուս բայերով՝ միասին վերցված: Ալ.Մարգարյանն իրավամբ նշում է. «...հայերենի հարադրավոր բայերի ավելի քան 80 տոկոսը կազմվում է *առնել*, *լինել*, *տալ*, *գալ*, *դնել*, *առնել*, *ընկնել*, *զրցել*, *դառնալ*, *բերել* բայերով, որոնք հարադրավոր բայեր կերտելու ի-րենց գերակշիռ ու այլ բայերի համեմատությամբ ունեցած ծավալուն հատկությամբ գալիս են հնագույն ժամանակներից և բայակազմական մեծ դեր են խաղացել հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում ընդհանրապես»¹⁰⁰:

Նշվեց, որ հարադրավոր բարդությունների բայական բաղադրիչի դեր կարող են կատարել ներգործական և չեզոք սեռի բայերը (ի դեպ, դրանցից թե՛ կապակցման և թե՛ գործառական տեսանկյուններից գերակշռում են ներգործական սեռի բայերը):

Դառնալով այս կամ այն հարադրավոր բարդության բաղադրիչը, ներգործական և չեզոք սեռի բայերը միշտ չէ, որ նույնությամբ պահպանում են իրենց ներհատուկ սեռի քերականական կարգի արտահայտությունը, որն արդեն վերաբերում է ողջ բարդությանը:

Չեզոք սեռի բայերի մեծ մասը հարադրությունների մեջ հիմնականում նույնությամբ պահպանում է իր սեռի քերականական իմաստը. *յակն անկանիմ, գականք գալ, առ ական դիպիմ, ընդ ականք հայիմ, հուպ գող, գութ անկանիմ, խնդիր լինիմ, ունկնդիր լինիմ, յառաջ կալ* և այլն: Օրինակ՝ Եւնա, *անկեալ զլանջօքն* Յիսուսի, ասէ ցնա (Յովհ., ԺԳ, 25): Ապա ուրեմն հաւանեցան *կալ յաղօթս* ընդ նմա (Բուզ., 227): Նոքօք հանդերձ մարտ եղեալ *կոուեսցութ ընդ անօրէն իշխանին* վասն հայրենի աստուածատուր օրինացն (Եղիշէ, 102): Եւ՝ քարինք, և՛ նետք, և՛ տէգք արծակեալք լինէին, և խոցոտեալ՝ մերքն *յապուշ դառնային* (Խոր., 290) և այլն:

Իսկ նրանց չնչին մասը ձևավորում է կրավորական սեռի հարադրավոր բարդություններ, որոնք գրաքարի բառապաշարի մեջ հանդես են գալիս որպէս բառային ինքնուրույն միավորներ: Կրավորական սեռի հարադրավոր բարդություն կարող են ձևավորել *անկանիմ, դառնալ, ելանել, լինիմ* բայերը, որոնցից իր ակտիվությամբ առանձնանում է *լինիմ*–ը, ինչպէս՝ *յաւեր դառնալ, ի խաբս անկանիմ, մատն լինիմ* և այլն: Օրինակ՝ *Կոխան լինել* ի մարդկանէ (Մատթ., Ե, 13): Տունք բազումք *յաւեր դարձցին* (Ես., Ե, 9) և այլն:

Ինչ վերաբերում է հարադիր բարդության բաղադրիչ անցողական (ներգործական և պատճառական) սեռի բայերին, ապա վերջիններս իրենց հատուկ սեռի քերականական իմաստը նույնությամբ պահպանում են այն դեպքում, եթե բարդություն են կազմում մի հարադրի հետ, որն սկզբնական տարբերակում իրենց սեռի խնդիրը չի եղել: Այսպէս՝ *առնել* ներգործական սեռի բայը, *ուրախ* ածականով արտահայտված հարադրի հետ կապակցվելով, բարդության մեջ նույնությամբ պահպանում է իրեն հատուկ անցողականությունը՝ ներգործվող առարկա պահանջելու (կամ ենթադրելու) գործությունը. Հաւատովք իւրեանց խնդացուցանեն և *ուրախ առնեն զայնոսիկ* (Ագաթ., 7): Այսպէս նաև՝ *յակն առնուլ, ի սուր սուսերի հարկանել, հրով դատել, ի դուրս կորգել, յառաջ բերել, ի ձեռաց թափել, թոյլ առնել, ի վարձու տալ, հրկէզ առնել, ի պահ արկանել* և այլն: Օրինակ՝ *Բարձր արարի* զնա լեզուաւ իմով (Սաղմ., ԿԵ, 17): Սոյնպէս ևս

առաւելագոյն գտերունականն *դնէր առաջի* (Բուգ., 66): Միսն առիծու կորին սնուցեալ՝ *ածէ* (զնա-Գ.Խ.) *ի համբոյր* (Եզնիկ, 69): Իբրեւ զկոյս մի սուրբ՝ *յանդիման կացուցանել* Քրիստոսի (Ագաթ., 217) և այլն:

Այն դեպքում, եթե ներգործական սեռի բայի հարադիրն իր իսկ սեռի խնդիրն է՝ արտահայտված հայցական հոլովով, ապա վերջինս բարդության մեջ կորցնում է իր անցողականության քերականական իմաստը և հարադրի հետ միասին ձեռք բերում չեզոք կամ կրավորական սեռի բային հատուկ քերականական իմաստ: Այսպես՝ *առնել* ներգործական սեռի բայը, կապակցվելով հայցական հոլովով արտահայտված իր իսկ *քշնամանս* սեռի խնդրի հետ, վերջինիս հետ միասին ձեռք է բերում նոր՝ անանցողական սեռի քերականական իմաստ. Կամեցաւ քագաւորն Պարսից Շապուի *քշնամանս առնել* ազգին աշխարհին Հայոց և քագաւորութեանն (Բուգ., 147): Այսպես նաև՝ *ական առնել*, *ական ածել*, *ական առնուլ*, *ական դնել*, *ական տալ*, *ծափս հարկանել*, *պատերազմ հարկանել*, *ճանապարհի հարկանել* և այլն: Օրինակ՝ Ոչ վաղվադակի *թիկունս* ի միմեանց *դարձուցանէին* (Խոր., 82): Հայր մարդպետն *եղ անարգանս* տիկնոջն (Բուգ., 160): Ազատագօրքն նախարարացն Հայոց *գոյժ տային* կայսերն (Բուգ., 47): *Դատ եղից* անդ ընդ ձեզ (Եզնիկ., Ի, 35): *Առէք դեղ* վիրաց դորա (Երեմ., ԾԱ, 8) և այլն:

Հազվադեպ ներգործական սեռի բայերի հարադրումով ձևավորվում են միայն կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող ինքնուրույն բառային միավորներ: Դրանցից է, օրինակ, *զան ըմպել*-ը, որն, ինչպես ցույց է տալիս լեզվական վկայությունը, հանդես է գալիս դարձվածի արժեքով՝ Եթէ որդի ուրուք իցէ, *զան ոչ ըմպիցէ* («չի ծեծվի») (Եզնիկ, 82):

Գրաբարի բայական բառամբերքի քննությունից պարզվում է, որ համադրական բայերը, ըստ սեռի քերականական կարգի դրսևորման, բաժանվում են երկու խմբի՝ չեզոք և ներգործական, որոնցից վերջիններս կրավորաձև խոնարհման ճանապարհով արտահայտում են նաև կրավորական սեռի քերականական իմաստ:

Հարադրավոր բայերի քննությունը ցույց է տալիս նաև, որ վերջին-

ներս համադրական բայերից տարբերվում են նրանով, որ, իբրև սեռի քերականական կարգի ինքնուրույն արտահայտիչ՝ դրանք բաժանվում են ոչ թե երկու, այլ երեք խմբի՝ *ներգործական, կրավորական* և *չեզոք*, որոնցից ներգործական սեռի հարադրավոր բայերը ունակ են հանդես գալու նաև իրենց իսկ հատուկ սեռի քերականական կարգի հականիշ դաշտում. հարկ եղած դեպքում կարող են կրավորաձև խոնարհման ճանապարհով արտահայտել նաև կրավորական սեռի քերականական իմաստ:

1. *Ներգործական սեռի հարադրավոր բայերը* գրաբարում լրացնում են անցողական սեռի բայերի շարքը:

Բառակազմական քննությունից պարզվում է, որ ներգործական սեռի հարադրավոր բայերը գրաբարում ձևավորվում են ներգործական սեռի բայական բաղադրիչների պարտադիր մասնակցությամբ: Այդ բայերից են՝ *ածել, առաքել, առնել, առնուլ, արածել, բառնալ, բերել, դատել, դնել, ընկենուլ, ընկալնուլ, թափել, թողուլ, թքանել, թօթափել, խզել, կործանել, կտրել, կրթել, հալածել, հանել, հատանել, հարկանել, ձգել, մղել, որոշել, ունիմ, պահել, պատառել, պարզել, վարել, տալ, տանիմ* և այլն: Օրինակ՝ Ջանմեղ մարդիկ յինքն *արկանէր* (Եղիշէ, 64): Ջտիւ լուսաւոր *առնիցես* (Ագաթ., 83): *Հանիցէ* զձեզ ի ձեռաց իմոց (Ագաթ., 327): *Հայր ետ* զնա ի մահ (Եզնիկ, 275): *Ջազգն* Կամսարականաց *բառնայր* ի միջոյ (Խոր., 295): *Մի՛ դիցէ* ի մտի զգծտութիւն (Բուզ., 52) և այլն:

Հատկանշական է, որ բերված բայերի մեծ մասը ներկայացնում է գրաբարի ակտիվ շերտը, ինչպես՝ *ածել, առնել, առնուլ, արկանել, բառնալ, բերել* և այլն:

Բայական բաղադրիչի գործառույթ են կատարում ոչ միայն, այսպես կոչված, զուտ ներգործական սեռի բայերը, այլ նաև՝

ա) մի շարք համադրական պատճառականներ. ինչպես՝ *անցուցանել, դարձուցանել, խաղացուցանել, խոնարհեցուցանել, կացուցանել, կորուսանել, մատուցանել* և այլն:

բ) *Տալ* բայի հարադրությամբ ձևավորված մի շարք հարադրավոր բայեր, որոնց միջոցով ևս արտահայտվում են պատճառական, միջնոր-

դավորված գործողության գաղափարներ, ինչպես՝ *Յանձն ետուք առնուլ* գալաշտոնն (Փարպ., 83): *Ծաղր ետուք առնել* անօրինացն /զխ-Գ.Խ./ (Փարպ., 27): Զքեռորդիդ *ի բա՛ց տուր ածել* (Եղիշէ, 198) և այլն:

Ներգործական սեռի հարադրավոր բարդությունների կազմությանը հազվադեպ մասնակցում են *լինիմ, գալ* չեզոք սեռի բայերը¹⁰¹ . մի իրողություն, որի ոչ բոլոր դրսևորումներն են բնորոշ 5-րդ դարի գրաբարին: Օրինակ՝ Թեպետ գուն գործեալ բազումս ջանային *գերեթափ լինել*, ոչ կարային (ՆՀԲ): Նախ *իմա՛ց լեր* գտերունական օրէնսդրութիւնսն (ՆՀԲ): Զոր ամենայն ուրուք *ինքնատես եղեալ* (Կորիւն, 94): *Ի խոստ եկն* զգողութիւն (ՆՀԲ): *Խոստովան լինէր* զհաւատսն (Ազաթ., 465): *Խոստուկ լինիմ* /զմեղս-Գ.Խ./ (ՆՀԲ):

«*Ի գարմացումն* զբոլոր գղերիկոսս եկեղեցւոյն *ածեալ լինէր*» (ՆՀԲ) տիպի կառույցների մեջ ուղիղ խնդրի (*զգղերիկոսս*) առկայությունը պայմանավորված է ոչ թե չեզոք սեռի *լինիմ*, այլ ներգործական սեռի *ածել* բայով: Բերված նախադասության հարադրավոր բայը ոչ թե *ածեալ լինիմ*-ն է, այլ *ի գարմացումն ածել*-ը, որն օրինաչափորեն պահանջում է կրող առարկա: Հմմտ. Զամենայն ոք ի գարմանս ածէ (Խոր., 54):

Ինչ վերաբերում է «*Կամիմ գծեզ անհոգս լինել*» (Ա Կոր., Է, 32): «*Կամիմ գծեզ իմաստունս լինել ի բարիս*» (Հռոմ., ԺԶ, 19) տիպի կառույցներին, ապա հարկ է նշել, որ սրանցում առկա հայցական հոլովածնով արտահայտված անդամները (*անհոգս լինիմ=անհոգանալ, իմաստունըս լինիմ=իմաստնանալ*) ոչ թե ուղիղ խնդիրներ են (*լինիմ* չեզոք բայը չի կարող գործողությունն ուղղակիորեն կրող առարկա պահանջել), այլ *լինիմ* անդեմ բայի հետ կիրառվող փոխակերպված (այսպես կոչված, կողմնակի) ենթականեր կամ ենթակայական բառեր: Այսպես՝ «*Կամիմ գծեզ անհոգս լինել*»-ը նշանակում է «Կամենում եմ ձեր անհոգ լինելը»//«Կամենում եմ, որ դուք անհոգ լինեք»: Նշված տիպի կառույցները գրաբարին խորթ շարահյուսական իրողություններ են՝ հարկադրաբար տեղ գտած կա՛մ բարգմանական գրականության մեջ, կա՛մ էլ, այսպես կոչված, հունաբան դպրոցի հեղինակների գործերում:

Գալով ներգործական սեռի հարադրավոր բայերի հարադրին՝ պետք է նշել, որ թեև այն կազմության տեսանկյունից սահմանափակություն չի ճանաչում¹⁰², այնուամենայնիվ նկատելի է կազմությամբ բառի հարադիրների հաճախադեպությունը, որտեղ վերջին բաղադրիչը սովորաբար մի բայարմատ է և անվանում է հիմնականում ակտիվ գործողության գաղափար. *թևաթափ, թքակոծ, թրածեծ, ծայրակտուր, ծայրակոտոր, ծայրաքաղ, ծնօտաքակ, ծովակուր, կայծակնահար, կառափնաբեկ, կիսախողխող, համբաւակոծ, հարցաքնին, հոտակորոյս, հիմնախիլ, ճիահալած* և այլն: Օրինակ՝ Ճոպան ի փողս եղեալ՝ *խեղդամահ* արարին զնա (Բուգ., 36): *Շերտակոտոր* առնելով զշիրինն (Պիտ.): *Պատուհասակոծ* արարին զդպիրսն (Գ Մակ., Դ, 15): Քուշանաբար հինիս *սմբակակոխ* արարեալ զսահմանս Հայոց (Խոր., 44) և այլն:

Ակտիվ (որոշ դեպքերում նաև ոչ ակտիվ) բառաշերտի մաս կազմող մի շարք բայերի օգնությամբ ձևավորված հարադրավոր բարդություններ ունեն դարձվածային արժեք: Օրինակ՝ Ջորս և փիլիսոփայքն ինչ *յրնչաց քերեն* (Եզնիկ, 229): *Ելոյծ ի կենցաղոյս* զնա (Խոր., 305): Ջոր ի նմին իսկ *մատենի եհար* բազմավեպն (Եւս.) և այլն:

Այսուհանդեձ, անհամեմատ մեծ թիվ են կազմում ոչ դարձվածային արժեք ներկայացնող ներգործական սեռի հարադրավոր բայերը:

2. *Չեզոք սեռի հարադրավոր բայերը*, որոնք գրաբարում բավականին մեծ թիվ են կազմում, լրացնում են անանցողական սեռի բայերի շարքը:

Չեզոք սեռի հարադրավոր բայերը կազմվում են հիմնականում համադրական սեռի բայական բաղադրիչների մասնակցությամբ, որոնցից իր բացարձակ ակտիվությամբ աչքի է ընկնում *լինիմ*-ը: Չեզոք սեռի հարադրավոր բայերի կազմությանը մասնակցում են նաև *կալ, անկանիմ, գալ, հայիմ, դիպիմ, մտանել, ելանել, խաղալ, երթալ* և այլ բայեր: Օրինակ՝ Ո՞վ իցէ ի մարդկանէ, որ ի տազնապել ոգւոյն *զաղաղակ տայցէ* (Ագաթ., 236): Նոքա յարուցեալ *կացին յաղօթս* (Եղիշէ., 150-151): *Ամբաստան լինէին* քսութեամբ զգօրավարէն Մուշեղէ առ թագաւորին (Բուգ., 166): Որչափ դու ինձ ահա *յայց ելեալ*՝ Առաւել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութեան (ՆՀԲ) և

այլն:

Ի տարբերություն ներգործական սեռի հարադրավոր բայերի, որոնց կազմությանը բացառիկ դեպքում են մասնակցում չեզոք սեռի բայական բաղադրիչներ, չեզոք սեռի հարադրավոր բայերի կազմությանը մասնակցում են մի շարք ներգործական սեռի բայեր. *առնել, առնուլ, հատանել, խոցել, տալ, պահել, արկանել, դնել, ունիմ, ածել, զգալ, քափել, կառուցանել, բառնալ, դնել, մատուցանել* և այլն: Օրինակ՝ Որ շուրջ զնովալ *բակ առեալ* ունէր (Բ Մակ., ԺԵ, 13): Եւ աւագակն *աղերս արկանէ* (ՆՀԲ): *Աղօթս արարէք* վասն իմ (Թուղթ, 200): *Եղ անարգանս* տիկնոջն (Բուգ., 160): *Աղաչանս դնէին* տանուտեարքն (Փարպ., 53) և այլն:

Նկատելի է, որ ներգործական բայերով բաղադրված հարադրավոր բարդությունները չեզոք քերականական իմաստ են արտահայտում այն պարզ պատճառով, որ նրանց կազմում առկա ներգործական սեռի բայերի պահանջած կրող առարկան շարահյուսական անկախ միավորից՝ ուղիղ խնդրից, վերածվում է բարդության կախյալ բաղադրիչի՝ հարադրի:

Ներգործական սեռի բայերի մասնակցությամբ ձևավորված չեզոք և ներգործական սեռի հարադրավոր բարդությունների էական տարբերությունն այն է, որ ներգործական սեռի հարադրավոր բարդությունների մեջ ներգործական սեռի բայական բաղադրիչի հետ իբրև բարդության հարադիր՝ հանդես են գալիս ածականներ, նախդրավոր գոյականներ, հոլովածներ և այլն: Նշված բարդությունների մեջ հարադրի գործառույթ չեն կատարում միայն հայցական հոլովածնով արտահայտված բառածներ: Այս հանգամանքն էլ բարդությանը հնարավորություն է ընձեռում ուղիղ խնդիր պահանջելու: Օրինակ՝ *Դիագերծ առնէին զվիրաւորս* (Բ Մակ., Ը, 27):

Բազմաթիվ են միևնույն հարադրով, բայց տարբեր սեռերի (ներգործական և չեզոք) բայերով բաղադրված ներգործական և չեզոք հարադրավոր բարդությունները. *բարի առնել//լինիմ, ի բաց անցուցանել//անցանել, ի բաց դարձուցանել//դառնալ, գերեղարծ առնել//լինիմ* և այլն, որոնցում առավելապես հաճախակի կիրառվում է *առնել//լինիմ* գույգը:

Ինչ վերաբերում է չեզոք սեռի հարադրավոր բայերի հարադիրնե-

քին, ապա սրանք նույնպես կազմության սահմանափակություն չեն ճանաչում: Գրավոր աղբյուրներում կիրառված են թե՛ պարզ (*աշխատ* լինիմ, *աշխար* դնել, *արգել առնել*), թե՛ ածանցավոր (*անմասն* լինիմ, *անտես* լինիմ, *յապուշ* դառնալ), թե՛ բարդ (*անձնապուր* լինիմ, *անց և դարձ* առնել, *աստղահար* լինիմ) և թե՛ նախդրավոր կապակցությամբ (*ընդառաջ* խաղալ, *յաշխարհ* գալ, *յապահովի* կալ) հարադրավոր բայեր, որոնցից առավել հաճախակի գործածվում են նախդրավոր կապակցությամբ և բարդ հարադիրներով բարդությունները:

Հարադրի գործառույթով կիրառվող բառերի մեջ կապակցելիության և գործառական լայն հնարավորությամբ առանձնանում են գրաբարի ակտիվ բառապաշարի շերտից մի քանի բառեր և կապական կապակցություններ. *ակն, ծեռն, ոտն, ի բաց, դէմ* և այլն:

Չեզոք սեռի մի շարք հարադրավոր բարդություններ ունեն դարձվածային արժեք. *յանձին առնել, ընդ աղբ գալ, յաշխարհ գալ, ամփիքերան լինիմ, բան(ս) դնել* և այլն: Օրինակ՝ Չէր ուրուք ընդ մմա *բանս եղեալ* (Եղիշէ, 82): Յերկարագոյն նուագօք զբանիւք անկանէին (Գ Մակ., Ե, 9): Ի բուրաստանի ուրեմն *յանձին արար* (Եւս.) և այլն:

3. Նյութի քննությունից պարզվում է, որ *կրավորական սեռի քերականական իմաստ* արտահայտվում է կազմությամբ ոչ միայն համադրական, այլև հարադրավոր բայերի միջոցով:

Կազմությամբ համադրական բայերը՝ իբրև բառային ինքնուրույն միավորներ, խոսքից դուրս կարող են արտահայտել միայն ներգործական կամ չեզոք սեռի քերականական իմաստ: Դա պատճառաբանվում է նրանով, որ, ի տարբերություն արդի հայերենի, որտեղ կրավորական *վ* ածանցի շնորհիվ կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է թե՛ խոսքից դուրս (անդեմ բայերի միջոցով) և թե՛ խոսքի շղթայում¹⁰³ (դիմավոր բայաձևերի միջոցով), գրաբարի համադրական բայերը խոսքից դուրս կրավորական սեռի իմաստի արտահայտության քերականական միջոցներ չունեն¹⁰⁴: Կրավորական սեռի քերականական իմաստը խոսքի մեջ արտահայտվում է ներգործական սեռի բայերի կրավորաձև

խոնարհման ճանապարհով: Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ համադրական բայերի շարքում կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտությունը կախված է միայն այս կամ այն բայական իմաստը կրող ներգործական սեռի բայերի առկայությունից: Ընդ որում, պետք է նշել, որ գրաբարում համադրական բայերի խոնարհման համակարգում կան կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտության մի քանի պլաններ:

Մի դեպքում կրավորական սեռի քերականական իմաստը ձևավորվում է ներգործական սեռի քերականական իմաստ արտահայտող բառահարաբերական ձևույթներից տարբեր, այլ ձևույթների միջոցով¹⁰⁵, ինչպես՝ *պատմեաց-պատմեցաւ, յիշեցից-յիշեցայց, արկ-արկի՛ր* և այլն, որոնք, համապատասխանաբար, նշանակում են «պատմեց» «պատմվեց», «(կ)հիշեմ//պիտի հիշեմ» «(կ)հիշվեմ//պիտի հիշվեմ», «նետի՛ր» «նետվի՛ր»: Հմմտ. Եւ զգաստացեալ՝ մատեաւ եկաց *պատմեաց* զմեծամեծ տեսիլսն, զոր ինչ ետեսն (Բուգ., 190) և Ապա *պատմեցաւ* թագաւորին Պապայ յաղագս օրերացն, զոր եղ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ (Բուգ., 160): Զոր և տէր և դատաւոր ամենայն երկրի *կոչէր* (Ագաթ., 167) և Որում անուն Վարդան *կոչիւր* (Բուգ., 88) և այլն:

Մյուս դեպքում կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է *Ե* խոնարհիչ ձայնավորը (վերջինս և նրան հաջորդող / ձայնակապը որոշ դիմաթվային ձևերում միասին դառնում են *Է*) *Ի* խոնարհիչ ձայնավորով հերթագայելով, ինչպես՝ *պատմեն-պատմին, յիշեսցեն-յիշեսցին, մի՛ յիշեր-մի՛ յիշիր* և այլն, որոնք, համապատասխանաբար, նշանակում են «պատմում են» «պատմվում են», «(կ)հիշեն//պիտի հիշեն» «(կ)հիշվեն//պիտի հիշվեն», «մի՛ հիշիր» «մի՛ հիշիր»: Հմմտ. Զայս վեպ *պատմեն* մերձաւոր սիրելեաց զանցս եղելոյ աշխատութեան ուղղոյն ճանապարհաց (Ագաթ., 2) և Դառք ի միջի ձերում *պատմին* (Ագաթ., 123) և այլն:

Երրորդ դեպքում ներգործական և կրավորական իմաստները զանազանվում են յուրովի: Բանն այն է, որ գրաբարյան մի շարք բայեր և

քաղմաթիվ բայերի էլ դիմավոր ու անդեն ձևեր օժտված են միաժամանակ արտահայտելու թե՛ ներգործական և թե՛ կրավորական սեռի քերականական իմաստ: Ընդունված է դրանք անվանել հասարակ (ընդհանուր) բայեր: Օրինակ՝ *յիշեալ, գողացայ, ծնանիս* անդեն և դիմավոր բայաձևերը միաժամանակ կարող են արտահայտելու, համապատասխանաբար, «հիշել»//«հիշած» «հիշվել»//«հիշված», «գողացայ» «գողացվեցի», «ծնում»//«սերում ես» «ծնվում»//«սերվում ես» ներգործական և կրավորական իմաստներ: Արդ, քանի որ հասարակ անվանվող բայերն ու բայաձևերը չունեն ներգործական և կրավորական սեռերի քերականական իմաստների արտահայտման առանձին միջոցներ, ուստի քերականական իմաստի կոնկրետացումը կատարվում է միայն խոսքային որոշակի իրադրության մեջ պարտադիր կերպով հիշատակված (կամ ենթադրվող) ուղիղ կամ ներգործող անուղղակի խնդիրներից որևէ մեկի միջոցով: Հմմտ. Յդացաւ ամուսին նորա և *ծնաւ* երկուս *որդիս* երկուորեակս (Բուգ., 10) և *Ի սոցանէ ծնաւ* այր սքանչելի և զարմանալի Ներսէս (Բուգ., 38): Ուղիղ կամ ներգործող անուղղակի խնդիրներից որևէ մեկի բացակայության դեպքում հասարակ բայաձևով արտահայտված գործողության սեռային իմաստը մնում է չտարբերակված, և միայն այդ նախադասությանը նախորդող խոսքի բովանդակության պլանից կարելի է որոշել տվյալ գործողության անցողական կամ անանցողական լինելը: Այսպես՝ *Ասեն. «Մեք ընդ խաղ արարաք»* (Առակ., ԻԶ, 19) նախադասության մեջ միայն նախորդ հատվածից է գիտակցվում, որ ենթական ներգործվում է որևէ առարկայի կողմից:

Պատկերը բոլորովին այլ է կազմությամբ հարադրավոր բայերի դեպքում: Վերջիններս՝ իբրև բառային ինքնուրույն միավորներ, արտահայտում են կա՛մ ներգործական, կա՛մ չեզոք, կա՛մ էլ կրավորական սեռի հարաբերություն: Այսպես՝ *ի մտի դնել, յինքն արկանել* հարադրավոր բայերը ներգործական սեռի իմաստ են արտահայտում, *ամբաստան լինիմ, յայց ելանել* բայերը՝ չեզոք սեռի, *անարգ լինիմ* («անարգվել»), *գան ըմպել* («ծեծվել») բայերը՝ կրավորական սեռի: Օրինակ՝ Չանմեղ մարդիկ *յինքն արկանէր* (Եղիշէ, 64): *Մի՛ դիցէ ի մտի* զգծտութիւն (Բուգ., 52):

Ամբաստան լինէին քսութեամբ զգօրավարէն Մուշեղէ առ քազաւորին (Բուզ., 166): Որչափ դու ինձ ահա *յայց ելեալ*՝ Առաւել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութեան (ՆՀԲ): *Անարգ եղիցին* (հուն. *անարգեսցին*–Գ.Խ.) նոքա որպէս ջուր (Սաղմ., ԾԷ, 8): Քանզի եթէ որդի ուրուք իցէ, *գան ոչ ըմպիցէ* (Եզնիկ, 82) և այլն:

Հարադրավոր բայերի քննութիւնը ցույց է տալիս, որ կրավորական սեռի իմաստի արտահայտության միջոցներն այստեղ ևս միատարր չեն:

Մի դեպքում ներգործական սեռի հարադրավոր բարդությունների՝ սեռի քերականական իմաստը ձևավորող բայական բաղադրիչների փոխարեն միևնույն հարադրի հետ կիրառվում են կրավորական սեռի քերականական իմաստ ձևավորող բայական բաղադրիչներ¹⁰⁶: Լեզվական փաստերը վկայում են, որ եթէ ներգործական սեռի հարադրավոր բայերի բայական բաղադրիչը հիմնականում մի ներգործական (հազվադեպ՝ չեզոք) սեռի բայ է [*բնաջինջ առնել, հալածական առնել* (Ա Մակ., Բ, 47)], ապա կրավորական սեռի հարադրավոր բայերի ձևավորման համար բայական բաղադրիչի գործառույթ են կատարում հիմնականում չեզոք սեռի բայերը¹⁰⁷ [*բնաջինջ լինիմ, հալածական լինիմ* (Բ Մակ., Ե, 8)]: Հմնտ. *Ծաղր առնէր* զբանս (Բուզ., 94) և *Զի ծաղր եղէց* յատենին Քրիստոսի (ՆՀԲ): Հըրամայեաց զնա *խեղդամահ առնել* (Խոր., 272) և Յիւրոց ծառայից *խեղդամահ լիցի* (ՆՀԲ): *Ատելի առնել* զիս (Ծննդ., ԼԴ, 30) և *Լիցի և ատելի* յազգաց (Առակ., ԻԴ, 24): *Աւար հարկանէր* զիրապարակս (Յուդ., Ա, 14) և *Աւար հարան* զարդք և կազմուածք տանց (ՆՀԲ) և այլն:

Հատկանշական է, որ գրաբարում միևնույն հարադրի հետ ներգործական սեռի իմաստն արտահայտելու համար որպէս հարադրյալ գլխավորապէս կիրառվում է *առնել*, իսկ կրավորական սեռի իմաստն արտահայտելու համար՝ *լինիմ* չեզոք սեռի բայը, որն, ինչպէս նշել ենք, ակտիվ դեր է կատարում նաև չեզոք սեռի հարադրավոր բայերի բառակազմության ոլորտում: *Լինիմ* հարադրյալով ձևավորված կրավորական սեռի հարադրավոր բայերից են՝ *ազդ լինիմ, ազդումն լինիմ, անարգ լինիմ, անընկալ լինիմ, ատելի լինիմ, արօրադիր լինիմ, բնաջինջ լինիմ, բրածեծ լինիմ, գանահար*

լինիմ, դատապարտ լինիմ, դեպակուր լինիմ, դսրով լինիմ, ստգիւտ լինիմ, թողլիք լինիմ, թոպամահ լինիմ, ծաղր լինիմ, կարթակոտոր լինիմ, կոխան լինիմ, հալածական լինիմ, հեղձամահ լինիմ, հրձիգ լինիմ, ճռաքաղ լինիմ, միջակտուր լինիմ, մահապարտ լինիմ, մատն լինիմ, նպաստ լինիմ, որդեկոտոր լինիմ, ի պահեստի լինիմ, սուսերահար լինիմ, վաճառիկ լինիմ և այլն: Օրինակ՝ *Ազդ լինէր* յերիցանց՝ հասնել յօգնականութիւն (Կորին., 82): *Անարգ եղիցին* նոքա, որպէս ջուր (Սաղմ., ԾԷ, 8): *Լիցի և ատելի* յազգաց (Առակ., ԻԴ, 24): Ի մտերմացն Շապիոյ *դեղակուր եղեալ*՝ մեռանի (Խոր., 235): Շատ է այնպիսւոյն պատուհասն՝ *ըստգիւտ լինել* ի բազմաց անտի (Ոսկ.): *Թողլիք եղեն* նոքա ի նմանէ (Եփր.): *Ծաղր* յերաստս յոքնագան հաւուցն *եղանիւր* (Պիտ.): Երուսաղէմ *եղիցի կոխան* յազգաց (Ղուկ., ԻԱ, 24): Ոչ իմիք ազդիցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս և *կոխան լինել* ի մարդկանէ (Մատթ., Ե, 13): *Հեղձամահ եղև* (Տիրան-Գ.Խ.) յիւրոց սենեկապետաց ի հրամանէ արքայի ի գաղտնիս (Խոր., 283): *Միջակտուր* յայնպիսի ահաւոր բազկէ *լեալ* (Խոր., 231): *Որդեկոտոր լիցի* ի կանանց (Ա Թագ., ԺԵ, 33)¹⁰⁸: Որոյ ապականեալ գկոյս՝ *տարագիր եղև* յեկեղեցւոյ յիւրմէ հօրէ (Եզնիկ, 297): *Ի պահեստի լինի* ի նմանէ (Խոր., 299): *Վաճառիկ* յեղբարցս *լինիմ* (Պիտ.):

Առնել և լինիմ բայերից բացի՝ որոշ դեպքերում միեւնոյն հարադրի հետ ներգործական և կրավորական սեռերի հարադրավոր բայեր են ձևավորվում նաև *դարձուցանել* ու *դառնալ*, *արկանել* ու *անկանիմ*, *հանել* ու *ելանել* բայերի մասնակցությամբ. *յաւեր դարձուցանել-յաւեր դառնալ*, *ի խաբս արկանել-ի խաբս անկանիմ* և այլն: Հմմտ. Եւ զքաղաքս քո *յաւեր դարձուցից* (Եզեկ., ԻԵ, 4) և Զի եթէ տունք գեղեցիկք իցեն և մեծամեծք իցեն, սակայն *յաւեր դարձցին* (Բուգ., 95): Այսպէս նաև՝ *ի բուռն արկանել-ի բուռն անկանիմ*, *ի խաբս արկանել-ի խաբս անկանիմ*, *ի խաչ հանել-ի խաչ ելանել* և այլն: Նշված բայերով հարադրավոր բարդությունները 5-րդ դարի աղբյուրներում բացառիկ կիրառություններ ունեն:

Ինչ վերաբերում է այս բարդությունների հարադիրներին, ապա դրանք կազմության տեսանկյունից սահմանափակություն չեն ճանաչում. լի-

նում են պարզ (*ազդ, գան, արծակ*), ածանցավոր (*ատելի, անարգ*), բարդ և նախդրավոր կապակցությամբ, որոնցից հատկապես վերջին երկուսն առանձնանում են ակտիվ կիրառությամբ: Դրանցից են՝ *գանահար, դեղակուր, գրամահ, բրածեծ, բոցակէզ, ահաբեկ, ալեկոծ, դատապարտ, ակօսաբեկ, ընդ գրով, ընդ խաղ, ի խաբս* և այլն: Օրինակ՝ ՁԱստուած *ի խաչելեալ*¹⁰⁹ ի մարդկանէ քարոզեն (Եղիշէ, 27): *Ծաղր* յերաստս յոքնագան հաւուցն *եղանիւր* (Պիտ.): *Միջակտուր* յայնպիսի ահաւոր բազկէ *լեալ* (Խոր., 231): *Ի պարտութիւն մատնեցաւ* յերեսաց նոցա (Բուզ., 125) և այլն:

Հարկ է նշել, որ այս խմբի կրավորական սեռի հարադրավոր բայերի մեծ մասի ներգործական տարբերակները վկայված են հին գրավոր աղբյուրներում. *ազդ առնել, արօրադիր առնել, բնաջինջ առնել, բրածեծ առնել, դատապարտ առնել, դսրով առնել, ծաղր առնել, կոխան առնել* և այլն, սակայն, այսուհանդերձ, կրավորական սեռի որոշ հարադրավոր բայերի քերականական հականիշները չեն եղել կամ պարզապես չեն ավանդվել: Դրանցից են՝ *բարեպատիւ լինիմ, գան ըմպել* և այլն:

Կրավորական սեռի իմաստակիր այս բայերը մյուսներից տարբերվում են նրանով, որ գրաբարի բայական համակարգի համար բացառիկ իրողություններ են. դրանք (ի տարբերություն կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող մյուս հարադրավոր ու համադրական բայերի, որոնք ընդամենը ներգործական բայերի կրավորաձև խոնարհման արդյունք են) ինքնուրույն, առանձին կրավորական բայեր են և ոչ թե այս կամ այն ներգործական սեռի բայի կրավորաձև խոնարհման հետևանքով են առաջացել: Ու թեև այս բարդություններն ունեն ներգործական սեռի քերականական հականիշներ¹¹⁰, սակայն վերջիններս այլ բայերի օգնությամբ են ձևավորված: Օրինակ՝ *Անարգ եղիցին* (հուն. *անարգեսցին*—Գ.Խ.) նոքա որպես ջուր (Սաղմ., ԾԷ, 8): *Բարեպատիւ* ի Պարոյրայ *եղեն* (ՆՀԲ): Յարեգականէ *բոցակէզ եղեալ* (ՆՀԲ): *Բրածեծ եղեալ* ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ՝ սուրբ երանելի մանուկն Յուսիկ (Բուզ., 28) և այլն:

Երկրորդ դեպքում կրավորական սեռի տվյալ իմաստակիր միավորը ինքնուրույն բառ չէ: Այստեղ դեպքում կրավորական սեռի իմաստն

արտահայտվում է ներգործական սեռի հարադրավոր բայերի բայական բաղադրիչների կրավորաձև խոնարհման ճանապարհով: Այլ կերպ ասած՝ գրաբարում բազմաթիվ ներգործական սեռի հարադրավոր բայեր խոսքի մեջ հարկ եղած դեպքում կարող են խոնարհվել կա՛մ ներգործաձև, կա՛մ կրավորաձև՝ տվյալ հարադրավոր բարդությանը հաղորդելով, համապատասխանաբար, կա՛մ ներգործական, կա՛մ էլ կրավորական սեռի քերականական իմաստ: Հմնտ. օրինակ՝ Ջրագումս ի սրբոցն ես *բանտարգել առնէի* /հուն. *ի բանտս փակէի*—Գ.Խ./ (Գործ., ԻԶ, 10) և Իբրև *բանտարգել արարեալ* պահեցան ի յարութիւն փրկչին (ՆՀԲ): Վասն ասորիկ *մատնեցի* զնա *ի մահ* (Բուգ., 103) և *մատնեցան ի մահ* (Ագաթ., 295) և այլն:

Ներգործական սեռի հարադրյալների կրավորաձև խոնարհման ճանապարհով կրավորական սեռի իմաստ են արտահայտում այնպիսի հարադրավոր բայեր, ինչպիսիք են՝ *յաւեր մատնիմ, ի բաց վարիմ, ի բաց քանդիմ, ի բերան սրոյ արկանիմ, գերի վարիմ, ի գերութիւն ըմբռնիմ, ի գերութիւն մատնիմ, ի գերութիւն վարիմ, ընդ խաղ արկանիմ, ի խաչ հանիմ, ի խորս խոցիմ, ի ձեռն մատնիմ, ի կալանս ըմբռնիմ, կուր արկանիմ, հիմն արկանիմ, ի մահ մատնիմ, ի պարտութիւն մատնիմ, ի կոր կործանիմ* և այլն: Օրինակ՝ *Ի պարտութիւն մատնեցաւ գունդն Հայոց* (Փարպ., 125) *յերեսաց նոցա* (Բուգ., 125): *Եկեղեցիք մատնին յաւեր* (Փարպ., 51): *Աշխարհս ի բաց քանդի* (Եղիշէ, 63): *Պատերազմեալ՝ ի գերութիւն ըմբռնեցաւ* (Խոր., 103): *Ի գերութիւն վարեցաւ Սեդեկիայ* (Խոր., 360): *Հիմն արկաւ տեղոյդ* (Թուղթ, 196): *Մատնեցան ի մահ* (Ագաթ., 295) և այլն¹¹¹:

Այս շարքում հաճախակի կիրառությամբ առանձնանում են կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող այն հարադրավոր բայաձևերը, որոնք *առնել* և *առնուլ* բայական բաղադրիչներով ձևավորված ներգործականների կրավորաձև խոնարհված տարբերակներն են: Օրինակ՝ *Պահել յանձն արարաւ քեզ* և ոչ դատել զնոսա (Եղիշէ, 145): *Ասեն՝ մեք ընդ խաղ արարաք* (Առակ., ԻԶ, 19): *Հուրկիանոս ի պարթևացն գերի առաւ* (Եւս., Բ, 254) և այլն:

Երրորդ դեպքում կրավորական սեռի իմաստն արտահայտվում է մակայն հարադրավոր բարդությունների միջոցով, որոնց բայական բաղադրիչները, այսպես կոչված, հասարակ բայեր կամ բայաձևեր են: Օրինակ՝ Ոչ եկն *պաշտօն առնուլ*, այլ պաշտել (Մատթ., Ի, 8): Մահ ընկալեալ տանջանօք հանդերձ՝ փոխանակ ընդ դրուատին և *պատիւ գտանելոյ* ի նոցանէ (Ագաթ., 322-323): Զաստուած *ի խաչ ելեալ* ի մարդկանէ քարոզեն (Եղիշէ, 27) և այլն:

Հասարակ բայերով կամ բայաձևերով կազմված հարադրավոր բարդությունների սեռի իմաստը ճշտվում է որոշակի նախադասության մեջ, որտեղ նշված գործընթացում որոշիչ դեր է կատարում կրող կամ ներգործող առարկան: Վերջինիս առկայությունն այս կամ այն կառույցի մեջ նշանակում է, որ տվյալ կառույցի հասարակ բայը կամ բայաձևը հանդես է եկել կրավորական սեռի քերականական իմաստով: Օրինակ՝ *Գերի տարցին ի նոցանէ*:

Նկատենք, որ գրաբարում հասարակ բայերի մասնակցությամբ ձևավորված հարադրավոր բայերի՝ կրավորական սեռի իմաստ արտահայտող կիրառությունները հաճախադեպ չեն: Ասվածն առաջին հերթին պատճառաբանվում է նրանով, որ գրաբարում առավել նախընտրելի են հասարակ բայերով արտահայտված ներգործական, քան թե կրավորական հաղորդակցական կառույցները¹¹²: Ինչ խոսք, այստեղ կարևոր է մակայն, որ հասարակ բայերը գրաբարում մեծ թիվ չեն կազմում, և եղածներից էլ ոչ բոլորը կարող են կատարել հարադրավոր բարդության հարադրյալի գործառույթ:

Հասարակ բայերից հարադրյալի գործառույթ ունեն հատկապես *խորհիմ, խօսիմ, տանիմ* բայերը: Օրինակ՝ *գերի տանիմ, ընդ միտ տանիմ* և այլն:

Բուն հասարակ (deponent) բայերից բացի՝ գրաբարում հարադրավոր բայերի կազմում կրավորական սեռի իմաստ տեսականորեն կարող են արտահայտել մակ ներգործական սեռի գրեթե բոլոր համադրական բայերի այն դիմավոր ու անդեն ձևերը, որոնք մույնպես հասարակ են, այսինքն՝

հնարավորություն ունեն տարբեր կիրառությունների մեջ միևնույն քերականական ձևով արտահայտելու տարբեր սեռերի (ներգործական կամ կրավորական) քերականական հարաբերություններ¹³։ Դրանք են՝

ա) *Ա, Ու և Ի* խոնարհման ներգործական սեռի բայերի անկատար ներկայի բոլոր դիմաթվային ձևերը.

եզ. թիվ	հոգն. թիվ
1. ի բաց թողում	1. ի բաց թողումք
2. ի բաց թողուս	2. ի բաց թողուք
3. ի բաց թողու	3. ի բաց թողուն

բ) ներգործական սեռի բոլոր բայերի անկատար անցյալի բոլոր դիմաթվային ձևերը.

եզ. թիվ	հոգն. թիվ
1. ի բաց թողուի	1. ի բաց թողուաք
2. ի բաց թողուիր	2. ի բաց թողուիք
3. ի բաց թողոյր	3. ի բաց թողուին

գ) *Ու և Ի* խոնարհման ներգործական սեռի բայերի առաջին ապառ-
նիի բոլոր դիմաթվային ձևերը.

եզ. թիվ	հոգն. թիվ
1. ի բաց թողուցում	1. ի բաց թողուցումք
2. ի բաց թողուցուս	2. ի բաց թողուցուք
3. ի բաց թողուցու	3. ի բաց թողուցուն

դ) *Ի* խոնարհման պարզ և ածանցավոր, ինչպես նաև *Ա և Ու* խոնարհման ածանցավոր բայերի ներգործական սեռի անցյալ կատարյալի բոլոր ձևերը.

եզ. թիվ	հոգն. թիվ
1. գերի տարայ	1. գերի տարաք
2. գերի տարար	2. գերի տարայք
3. գերի տարաւ	3. գերի տարան

ե) *Ե* խոնարհման պարզ և ածանցավոր, ինչպես նաև *Ա և Ու* խո-

նարինման պարզ ներգործական սեռի բայերի անցյալ կատարյալի հոգ-
նակի թվի 1-ին դեմքը, ինչպես՝ *ի բաց թողաք*:

զ) *Ի* խոնարհման պարզ և ածանցավոր, ինչպես նաև *Ա* և *Ու* խո-
նարհման ածանցավոր ներգործական սեռի բայերի 2-րդ ապառնիի բոլոր
դիմաթվային ձևերը.

եզ. թիվ	հոգն. թիվ
1. գերի տարայց	1. գերի տարցուք
2. գերի տարցիս	2. գերի տարջիք
3. գերի տարցի	3. գերի տարցին

է) *Ե* խոնարհման պարզ և ածանցավոր, ինչպես նաև *Ա* և *Ու* խոնարի-
ման պարզ ներգործական սեռի բայերի 2-րդ ապառնիի հոգնակի թվի 1-ին
և 2-րդ դիմային ձևերը, ինչպես՝ *ի բաց թողուք, ի բաց թողջիք*:

ը) *Ա, Ու* և *Ի* խոնարհման ներգործական սեռի բայերի արգելական
հրամայականի եզակի և հոգնակի թվերի դիմային ձևերը, ինչպես՝ *մի՛ ի
բաց թողուր, մի՛ ի բաց թողուր*:

թ) ներգործական սեռի բոլոր բայերի հորդորական հրամայականի
եզակի և հոգնակի ձևերը, ինչպես՝ *ի բա՛ց թողջիր, ի բա՛ց թողջիք*:

ժ) ներգործական սեռի բոլոր բայերի վերլուծական ժամանակների
բոլոր դիմաթվային ձևերը: Այդ թվում՝

1. վաղակատար–հարակատար ներկան.

եզ. թիվ	հոգն. թիվ
1. ի բաց թողեալ եմ	1. ի բաց թողեալ ենք
2. ի բաց թողեալ ես	2. ի բաց թողեալ էք
3. ի բաց թողեալ է	3. ի բաց թողեալ են

2. վաղակատար–հարակատար անցյալը.

եզ. թիվ	հոգն. թիվ
1. ի բաց թողեալ էի	1. ի բաց թողեալ էաք
2. ի բաց թողեալ էիր	2. ի բաց թողեալ էիք
3. ի բաց թողեալ էր	3. ի բաց թողեալ էին

3. վաղակատար–հարակատար ապառնին.

եզ. թիվ

1. ի բաց թողեալ իցեն
2. ի բաց թողեալ իցես
3. ի բաց թողեալ իցէ

4. ապակատար ներկան.

եզ. թիվ

1. ի բաց թողւոց են
2. ի բաց թողւոց ես
3. ի բաց թողւոց է

5. ապակատար անցյալը.

եզ. թիվ

1. ի բաց թողւոց էի
2. ի բաց թողւոց էիր
3. ի բաց թողւոց էր

6. ապակատար ապառնին.

եզ. թիվ

1. ի բաց թողւոց իցեն
2. ի բաց թողւոց իցես
3. ի բաց թողւոց իցէ

հոգն. թիվ

1. ի բաց թողեալ իցենք
2. ի բաց թողեալ իցէք
3. ի բաց թողեալ իցեն

հոգն. թիվ

1. ի բաց թողւոց ենք
2. ի բաց թողւոց էք
3. ի բաց թողւոց են

հոգն. թիվ

1. ի բաց թողւոց էաք
2. ի բաց թողւոց էիք
3. ի բաց թողւոց էին

հոգն. թիվ

1. ի բաց թողւոց իցենք
2. ի բաց թողւոց իցէք
3. ի բաց թողւոց իցեն

ժա) ներգործական սեռի բայերի անդեն ձևերը (*ի բաց թողուլ, ի բաց թողեալ, ի բաց թողւոց, ի բաց թողող*):

Ինչպես նկատելի է, հասարակ բայաձևերը գրաբարում ունեն արտահայտության բազմապիսի պլաններ, սակայն, այսուհանդերձ, գրավոր աղբյուրներում բացառիկ կիրառություններով աչքի են ընկնում մասն այս բայաձևերով հարադրված կրավորական բարդությունները:

Բազմաթիվ հարադրավոր բայեր կրկնասեռ են. լինելով բազմիմաստ՝ դրանք տարբեր իմաստների դեպքում հանդես են բերում քերականական սեռի տարբեր արտահայտություններ: Օրինակ՝ *աղօթակից լինիմ* հարավորավոր բայը մի դեպքում՝ հանդես է բերում չեզոք սեռի բայերին հատուկ քերականական իմաստ. *Աղօթակից լինէր մմա* (ՆՀԲ), մյուս դեպքում՝

ներգործական սեռի բայերին հատուկ, ինչպես՝ *Չեզ զնոյն զայս աղօթակից լինիմ* /իմա՝ *աղոթքով խնդրել*–Գ.Խ./ (Ածաբ.): Կրկնասեռ բայերից են նաև՝ *ընծայաբեր լինիմ, յառաջ մատուցանել* և այլն: Հմմտ. *Ընծայաբեր լինէր Աստուծոյ* (ՆՀԲ) և *Վասն ընծայաբեր լինելոյ նոցա զհաց պատարագին*¹⁴ (ՆՀԲ): *Արշաւիր յառաջ մատուցեալ սակաւ խօսել* (Փարպ., 82) և *Նոցա յառաջ մատուցեալ զԱրշաւիր* (Փարպ., 82):

Այս կամ այն բայը կրկնասեռություն կարող է հանդես բերել ոչ միայն բազմիմաստության, այլև ուրիշ հանգամանքներով պայմանավորված: Այսպես՝ *խաչ առնել* բայը կրկնասեռ է գրաբարի զարգացման տարածամանակյա կտրվածքում: Հմմտ. *Վասն մեր մեղս խաչ արար զնա* (Եփր.) և *Խաչ առնել ձեռամբ ընդ ամենայն անձն իւր* (ՆՀԲ) նախադասությունները, որոնցից մեկը 5-րդ դ. վկայություն է, մյուսը՝ ուշ շրջանի:

Բովանդակության պլանում բառային մակարդակի բոլոր միավորները մենիմաստ են կամ բազմիմաստ: Հարադրավոր բայերը ևս այս տեսանկյունից բացառություն չեն կազմում. կան թե՛ մենիմաստ և թե՛ բազմիմաստ բարդություններ, սրանցից առաջիններն անհամեմատ մեծ թիվ են կազմում:

1. *Մենիմաստ* հարադրավոր բարդություններ են՝ *յաւեր դառնալ, դաշինս կռել, ասպատակ դնել, գերի զնալ, դէտ արծակել, դէտ ակն ամբառնալ, հոչակ հարկանել, գոյժ արկանել, գիրկս արկանել, խունկ արկանել, սուգ առնուլ, անհետ առնել, անձնատուր լինիմ, բրածեծ լինիմ, ձերբակալ առնել, փոյթ առնել, ընդ քուն անցանել, ի քնին մտանել, յաղօթս կալ, յարտասուս դառնալ* և այլն:

Մենիմաստ բայերի շարքում պայմանականորեն տեղ ենք տալիս նաև բացառիկ կիրառություն ունեցող հարադրավոր բայերին: Պատճառն այն է, որ միակ կիրառությունը հնարավորություն չի տալիս բազմիմաստություն որոնել այդ բայերի բովանդակության պլանում: Դրանցից են՝ *ի գուճս կալ, բակ ունիմ, աղերս մատուցանել, ամբոյս ածել, աւել ածել, եղջիր ածել, դուլ տալ, նախանձուկս արկանել, զնոց առնուլ, աղաղակ առնել, աչափոր առնել, անգէտս լինիմ, ալեկոծ լինիմ, բանագնաց լինիմ, լուծանեն ի*

կենցաղոյս և այլն:

2. *Բազմիմաստ* հարադրավոր բարդությունների մի մասն այդպիսին է դիտվում գրաբարի զարգացման համաժամանակյա (այս դեպքում՝ 5-րդ դ.), մյուս մասը՝ տարածամանակյա կտրվածքում: Բազմիմաստ հարադրավոր բայերից են՝ *ակն ածել* «պատկառել», «խորշել», «զգուշանալ», «ամաչել», «հոգ տանել», *ունկն դնել* «ունկնդրել», «լսել», «անսալ», «հնազանդվել», *ձեռն դնել* «ձեռնադրել», «ստորագրել», *ձեռն արկանել* «բռնել», «ձեռքը գցել», «ձեռնարկել», «սկսել» և այլն:

Ըստ ձևաիմաստային փոխհարաբերության (համապատասխանություն կամ անհամապատասխանություն)՝ հարադրավոր բայը լինում է *դարձվածային*¹¹⁵ կամ *ոչ դարձվածային*¹¹⁶:

Մ.Աբեղյանն այս կապակցությամբ նշում է, որ բայական հարադրությունների մեջ «պետք է դնել և այնպիսի դարձվածները, որոնց շարահյուսական կապակցությունը թեպետ հասկանալի է, բայց բայն ու հարադիրը միասին, իմաստի փոփոխությամբ, ստանում են մի նոր, ընդհանուր նշանակություն»¹¹⁷: Մ.Աբեղյանն առաջինն է նկատում, թե այդպիսի «բայերի հարադիրը հոդ չի առնում, ինչպես՝ *վրեժ առնել, վրեժ խնդրել, երես տալ, երես առնել, ծափ տալ, ծայն տալ*: Այսպիսի կապակցությունները, երբ հարադիրը հոդ է առնում, դառնում են դարձյալ սովորական շարահյուսական կապակցություններ, ինչպես՝ *Նա վրեժ առավ թշնամիներից-Նա իր վրեժն առավ թշնամիներից*»¹¹⁸:

Ալ.Մարգարյանն իրավացիորեն նկատում է, որ ոչ դարձվածային հարադրավոր բայերի մեջ «հարադիրը կամ բայական բաղադրիչն է իր նշանակությունը մուծում հարադրավոր բայի ընդհանուր նշանակության մեջ»¹¹⁹, մինչդեռ դարձվածային հարադրավորների բաղադրիչներից «....ո՛չ մեկը և ո՛չ մյուսը իրենց բուն նշանակությունից ոչինչ չեն փոխանցում այն ընդհանուր նշանակությանը, որ արտահայտում են նրանք միասին վերցրած»¹²⁰:

«Դարձված(ք)ային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց

բաղադրիչները միասին մի ընդհանուր իմաստ են արտահայտում, իսկ ոչ դարձվա(ծ)քային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց ընդհանուր նշանակությունը իր մեջ է առնում հարադրի և բայական բաղադրիչի իմաստները և նրանց միակցությունը կազմում»¹²¹ :

Ոչ դարձվածայինների համեմատությամբ դարձվածային հարադրավոր բայերը չափազանց սակավ են: Ըստ բաղադրիչների քանակի՝ դարձվածային հարադրավոր բայերը ևս, ինչպես ոչ դարձվածայինները, լինում են երկբաղադրիչ՝ գերազանցապես արտահայտվելով $S_{\text{noun}} - S_v$ և $S_{\text{noun}}^f - S_v$ մասնակադապարներով, որտեղ S_{noun} և S_{noun}^f բաղադրիչների դերում հանդես են գալիս հիմնականում մարմնի մաս անվանող գոյականներ¹²² : Դրանցից են՝ *ակն, գլուխ, ձեռն//ձեռք, ունկն, ուս* և այլ գոյականներն ու սրանց թեք (հատկապես հայցական) հոլովածները: Օրինակ՝ *ունչս ունիմ* (Եփր.), *ունչս առնել* (Փարպ., 117), *գսիրտս դնեմ* (Բուգ., 139), *ճակատս հարկանել* (Բ Օրեն., ԺԴ, 1), *ձեռն արկանել* (Դուկ., Թ, 62), *ձեռն դնել* (Բ Օրեն., ԺԴ, 9), *ուս հարկանել* (Բ Մակ., ԺԲ, 35), *մատն լինիմ* (ՆՀԲ), *ունկն դնել* (Առակ., Ը, 6), *գլուխ շարժել* (Դ Թագ., ԺԹ, 21), *ակն դնել* (Ել., ԼԴ, 24), *ձեռն տալ* (Ա Մակ., ԺԱ, 50), *ոտն հարկանել* (ՆՀԲ) և այլն:

Ահա և այլ իմաստակիր գոյական-հարադիրներով արտահայտված դարձվածային կապակցություններ՝ *զվրեժ խնդրել* (Բուգ., 143), *ճանապարհ պահել* (Ծննդ., ԺԸ, 19), *ոգի կլանել* (Եզնիկ, 90), *տեղի տալ* (Սիր., Դ, 5), *երկիր պագանել* (Ծննդ., ԺԸ, 2), *դէտ տալ* (Եզեկ., ԼԳ, 7) և այլն: Ա.Մուրվալյանն իրավացիորեն նշում է. «Դարձվածքային մի շարք արտահայտություններ, որոնք գործ են ածվում նաև այսօրվա գրական հայերենում, հաճախ ոճային որոշ երանգավորումների համար, գալիս են հնուց և գրաբարի համեմատությամբ ձևական չնչին փոփոխություն են կրել: Այդպիսիներից են, օրինակ, գրաբ. ի քուն մտանել=աշխ. քուն մտնել «քնել»,...ի պայքար մտանել (կամ՝ մատչել)=աշխ. պայքարի մտնել (կամ՝ ելնել) «պայքարել»,...և նման այլ բազմաթիվ օրինակներ»¹²³ :

Գրաբարի հարադրավոր բայերի ուսումնասիրությունից դժվար չէ եզրակացնել, որ հատկապես այն հարադրավոր բայերն են դարձվածային

արժեք ստանում, որոնց թե՛ հարադիրն է ակտիվ բառապաշարի տարր, թե՛ բայական բաղադրիչը¹²⁴ :

Հարադրավոր բայերը գրաբարի բայի մի կարևոր շերտն են կազմում: Դրանք աչքի են ընկնում ոչ միայն իրենց պատկանելի թվով, ակտիվ գործածությամբ, այլև այն տեսանկյունից, որ միմյանց հետ (երբեմն էլ՝ կազմությամբ համադրական բայերի հետ) կազմում են ձևախմաստային հարաբերությունները մանրամասնորեն մի բարդ ու հետաքրքիր ցանց:

Հարադրավոր բայերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք, ինչպես ձևախմաստային ամբողջություն ներկայացնող լեզվական բոլոր միավորները, կարող են իրենց նմանների (նաև՝ կազմությամբ այլ բայերի) հետ հանդես գալ ձևախմաստային տարբեր կարգի հարաբերությունների մեջ՝ դրանց հետ կազմելով համանիշ, հոմանիշ, համանուն և հականիշ զույգեր: Այս առումով նշենք հետևյալը.

1. Գրաբարի մի շարք վերլուծական բայեր այլ բայական հարաբերությունների հետ *համանշային* խումբ են կազմում՝ հանդես բերելով արտահայտության բազմաթիվ դրսևորումներ: Դրանցից են՝

ա) միևնույն հարադրի հետ համանիշ կամ հոմանիշ բայական բաղադրիչներով հարադրված բարդություններ. *գթևս առնել//գործել, գերի երթալ//գնալ, քար արկանել//ծգել, դարման տալ//մատուցանել, զգոյշ լինիմ//կալ, զրոյց ածել//բերել, յանդիման լինիմ//կալ, ծաղր լինիմ//կալ* և այլն:

բ) Միևնույն հարադրի նախդրավոր և աննախդիր տարբերակների հետ միևնույն բայով հարադրված բարդություններ. *անծանօթս//յանծանօթս լինիմ ուշ//յուշ դնել, քափ//ընդ քափ անցանել, գար//ի գար հայիմ, նախանծ//ի նախանծ բերել, մօտ//ի մօտ կալ, առաջի//զառաջի դնել, պահ//ի պահ արկանել, պահ//ի պահ ունիմ, սուր//ի սուր ածել, աւար//յաւար(ի) ածել, զլուխ//ի զլուխ լինիմ, յայտ//ի յայտ գալ* և այլն:

Բերված բառազույգերը շերտաբանական դասակարգման տեսան-

կյունից ներկայացնում են գրաբարի տարբեր շրջանների բառաշերտերը: Դիտարկումներից պարզվում է, որ աննախդիր տարբերակները հիմնականում ուշ շրջանի վկայություններ են: Բանն այն է, որ միջին հայերենում նախդիրների դերը դառնում է անկարևոր այն աստիճան, որ նախդիրների օգնությամբ արտահայտված քերականական իմաստներն սկսում են արտահայտվել նաև կա՛մ առանց տվյալ նախդիրների, կա՛մ դրանց փոխարինելու եկած այլ կապերի օգնությամբ, մի հանգամանք, որի հետևանքով վաղ աշխարհաբարում արդեն նախդիրները դուրս են մնում կիրառությունից¹²⁵:

Ի դեպ, միևնույն հարադրի աննախդիր և նախդրավոր ձևերով բաղադրված բազմաթիվ հարադրավոր բարդություններ ոչ միայն համանշանին դաշտ չեն կազմում, այլև արտահայտում են իրարից տարբեր բառային և քերականական իմաստներ. *ծեռն դնել* և *ի ծեռն դնել*, *խաչ հանել* և *ի խաչ հանել* և այլն: Հմմտ. *Ընդդէմ մեր խօսս է արարեալ* (Ոսկ.) և *Ձխուլս և զհամերս ի խօսս առնէր* (ՆՀԲ): *ՁՏէրն ի խաչ հանէին* (Ագաթ., 363) և *Խաչ ի յերեսն հանել* (ՆՀԲ): *Ընդ ոտն հարին զպատիւ* (Բուզ., 37) և *Ոտն հարկանէ ի վերայ ախտից արդարոյն* (Իսիւք.) և այլն:

զ) Միևնույն հարադրի հետ տարբեր բայերով բաղադրված հարադրավոր բարդություններ. *պատասխանի առնել//տալ*, *(յ)ուխտ առնել//դրնել*, *ասպատակ դնել//սփռել*, *յայտ առնել//ածել*, *վկայութիւն դնել//տալ*, *ծիչ բառնալ//առնուլ*, *դարման առնել//տանիմ*, *կոծ առնել//դնել*, *պատիւ առնել//տալ*, *զոզի հանել//արձակել*, *գոյժ արկանել//տալ*, *հոգ առնել//տանիմ*, *ամօթ զգենուլ//կրել*, *փող հարկանել//հնչել*, *ծունր դնել//կրկնել* և այլն:

դ) Միևնույն հարադրի նախդրավոր և աննախդիր տարբերակների հետ տարբեր բայերով բաղադրված հարադրավոր բարդություններ. *ծունր կրկնել//ի ծունր իջանել*, *դարան նստիմ//ի դարան մտանել* և այլն:

ե) Միևնույն նախդրավոր հարադրով և տարբեր համանիշ բայերով բաղադրված բարդություններ. *ի գլուխ ածել//բերել*, *ընդդէմ գնալ//երթալ*, *յանձըն//զանձամբ առնուլ*, *ի շուրջ ձգել//արկանել*, *ի համար ածել//բերել* և այլն:

գ) Տարբեր նախդրավոր հարադիրներով և միևնույն բայով բաղադրված բարդություններ. *ընդ երեսս//յերեսս անկանիմ, ընդ սուր//ի սուր հանել, ընդ ոտն//յոտն կալ, ընդ ոտս//առ ոտս անկանիմ, ընդ քնով//զքնով անկանիմ, ըստ հրաման//զհրամանաւ անցանել* և այլն:

է) Համանիշ հարադրավոր բայեր, որոնցից մեկի հարադիրը, առանձին վերցված, մի հարադրական (հոդակապով կամ անհոդակապ) բարդություն է՝ բաղադրված այն հիմնական ձևությամբով, որոնց պարտադիր մասնակցությամբ ձևավորվում են մյուս հարադրավոր բարդության հարադիրն ու բայական բաղադրիչը. *ժամ դնել//ժամադիր լինիմ, խնամ կալ//խնամակալ լինիմ, պարզև տալ//պարզևատու լինիմ, ուխտ դնել//ուխտադիր լինիմ, ոխ ունիմ//ոխակալ¹²⁶ լինիմ, ունկն դնել//ունկնդիր լինիմ, ձեռն տալ//ձեռնատու լինիմ, ժոյժ կալ//ժուժկալ լինիմ, այց ելանել//այցելու լինիմ, օրէնս դնել//օրէնսդիր¹²⁷ լինիմ* և այլն:

Հարադրավոր բարդությունների սույն միջոցը գրաբարի համար թերևս ամենատիպականներից մեկն է:

ը) Բարդություններ, որոնցից մեկը կազմված է «*հարադիր+բայական բաղադրիչ*» կադապարով, իսկ մյուսը՝ «*հարադիր+սեռականով հավելադրություն+բայական բաղադրիչ*». *համար տալ//թիւ համարոյ տալ, մարտ տալ//մարտ պատերազմի տալ, ձայն բառնալ//ձայն աղաղակի բառնալ, մարտ դնել//մարտ պատերազմի դնել* և այլն:

թ) Բարդություններ, որոնցից մեկի հարադիրը միևնույն բառի՝ ուղիղ, իսկ մյուսը քերականական ձևերից մեկն է. *հաճ//հաճոյ լինիմ, համար//համարով տալ, դիր //դիրագոյն լինիմ* և այլն:

ժ) Բարդություններ, որտեղ գույգերից մեկը կազմությամբ հարադրավոր բայ է, մյուսը՝ համադրական, և որոնցից առաջինի հարադիրն ու երկրորդի բայարմատը համանուններ են. *ապստամբ լինիմ//ապստամբիմ, անպատիվ առնել//անպատուել, խելամուտ լինիմ//խելամտիմ, գուշակ լինիմ//գուշակել, խնայ առնել//խնայել, հրկէզ առնել//հրկիզել, կրօնաւոր լինիմ//կրօնաւորիմ* և այլն:

ժա) Բարդություններ, որտեղ գույգերից մեկը հարադրավոր բայ է,

մյուսը՝ համադրական, սակայն երկուսն էլ բաղադրված են միևնույն համանիշ և համարմատ ձևությների անմիջական մասնակցությամբ. *ձեռն դրնել//ձեռնադրել, ձեռն արկանել//ձեռնարկել, բուռն հարկանել//բռնահարել, թափ անցանել//թափանցել* և այլն:

2. Գրաբարի մի շարք վերլուծական բայեր *հոմանշային* դաշտ են կազմում այլ վերլուծական բարդությունների կամ էլ կազմությամբ համադրական այլ բայերի հետ՝ հանդես բերելով արտահայտության զանազան պլաններ, որոնցից են՝

ա) հոմանիշ աննախդիր հարադիրների և միևնույն բայի կապակցությամբ ձևավորված բարդություններ. *գուն//ջան գործել, ձեռնամուխ//ձեռնհաս լինիմ, այսպն//ծաղր առնել, նախանձուկս//նախանձ արկանել, լռիկ//լուռ կալ, ոսոխ//թշնամի դնել, արատ//բիծ դնել, խաղ//խաղալիկ առնել, մօտ//մերձ լինիմ, դատ//դատաստան առնել, աշխար//կոծ դնել, ընդդեմ//ընդհակառակս ելանել, բարոք//բարի առնել* և այլն:

բ) Հոմանիշ աննախդիր հարադիրների և տարբեր բայերի հարադրումով ձևավորված բարդություններ. *շուք դնել//պատիւ առնել, սկիզբ դնել//հաւ առնել, զօր հարուցանել//զուգազ հանել, ընթրիս առնել//ճաշ գործել, ծանակ առնել//ծաղր դնել, խնամ կալ//դարման տանել, շփոթ առնել//աղմուկ գրգռել* և այլն:

գ) Միևնույն աննախդիր հարադրի և տարբեր բայական բաղադրիչների կապակցությամբ ձևավորված բարդություններ. *բակ առնուլ//դնել, ժամ դնել//տալ, պատուէր դնել//տալ, բան առնել//կապել* և այլն:

դ) Միևնույն նախդրավոր հարադրի և տարբեր բայական բաղադրիչների հարադրումով ձևավորված բարդություններ. *յինքն թափել//կորզել, յողն առնուլ//անկանիմ, ի թիւ արկանել//բերել, ի գործ առնել//առնուլ, յարտաքս վազել//ընթանալ, զհետ պնդել//մտանել, ի բաց քակել//հատանել*:

ե) Հոմանիշ նախդրավոր հարադիրների և տարբեր բայական բաղադրիչների հարադրությամբ ձևավորված բարդություններ. *ի ճանապարհ ելանել//յուղի անկանիմ, ընդ թիւ անցուցանել//զհամար բերել, յեզր ե-*

լանել//ի գլուխ հասանել, ի լրումն գալ//ի կատարելանել և այլն:

գ) Աննախդիր հարադրավոր բարդությամբ (կամ պարզ) բայով ձևավորված, ինչպես՝ *թիկունս դարձուցանել//փախչիմ, ժոյժ ունել//հանդուրժել, դարան մտանել//թաքչիմ, բան ելանել//հոչակիմ, գօտեկոխ լինիմ//մարտնչիմ, բանս արկանել//գրպարտել* և այլն:

է) Նախդրավոր հարադիր բարդությամբ և համադրական (կամ պարզ) բայով ձևավորված, ինչպես՝ *ընդ քիրտն մտանել//աշխատիմ, ըստ սահման անցանել//յանցանել, ի գղջումն դառնալ//ցավել, գրանիւք առնել//պարապել, առ ոտն հարկանել//արհամարհել, գահի հարկանել//երկուցանել, ընդ ընտիրս հանել//ջոկել* և այլն:

ը) Հաճախ հոմանշային շարքեր են կազմում ոչ թե երկու, այլ երեք և ավելի հարադրավոր բայեր, ինչպես՝ *ի խնդիր գալ//ի խնդիր շրջիմ//ի խնդիր անկանիմ, դարման տանել//խնամ տանել//հոգ տանել, աղաղակ դնել//ծայն բառնալ//զճշի հարկանել* և այլն:

թ) Աննախդիր հարադրավոր բարդությամբ և համադրական (կամ պարզ) բայով ձևավորված. *թիկունս դարձուցանել//փախչիմ, ժոյժ ունել//հանդուրժել, դարան մտանել//թաքչիմ, բան ելանել//հոչակիմ, գօտեկոխ լինիմ//մարտնչիմ, բանս արկանել//գրպարտել* և այլն:

ժ) Նախդրավոր հարադիր բարդությամբ և համադրական (կամ պարզ) բայով ձևավորված. *ընդ քիրտն մտանել//աշխատիմ, ըստ սահման անցանել//յանցանել, ի գղջումն դառնալ//ցավել, գրանիւք առնել//պարապել, առ ոտն հարկանել//արհամարհել, գահի հարկանել//երկուցանել, ընդ ընտիրս հանել//ջոկել* և այլն:

ժա) Հաճախ հոմանշային շարքեր են կազմում ոչ թե երկու, այլ երեք և ավելի հարադրավոր բայեր. *ի խնդիր գալ//ի խնդիր շրջիմ//ի խընդիր անկանիմ, դարման տանիմ//խնամ տանիմ//հոգ առնել, աղաղակ դրնել//ծայն բառնալ//զճշի հարկանել* և այլն:

3. Բազմաթիվ հարադրավոր բայեր *հականշային* դաշտ են կազմում հարադրավոր բայերի կամ էլ կազմությամբ համադրական (պարզ կամ բարդ) այլ բայերի հետ՝ հանդես բերելով արտահայտության մի շարք

պլաններ, որոնցից են՝

ա) կազմությամբ պարզ կամ ածանցավոր հականիշ հարադիրների և միևնույն բայի հարադրությամբ ձևավորված բարդություններ, որտեղ հականշությունն արտահայտվում է ածանցմամբ. *հաճ//տհաճ լինիմ, երևելի//աներևոյթ լինիմ, գիտակ//անգէտ լինիմ, տեղեակ//անտեղեակ լինիմ, յայտ//անյայտ առնել* և այլն:

Այս շարքում առավել ակտիվ կիրառություն ունեն չ ժխտական մասնիկի օգնությամբ ձևավորված հարադրավոր բարդություններ, որտեղ չ-ն հավելվում է կա՛մ հարադրին, կա՛մ բայական բաղադրիչին. *ունկնդիր//չունկնդիր լինիմ, ի սպիտակ չիցէ դարձեալ//դարձեալ իցէ, լսելոց//չլուելոյն առնել* և այլն:

բ) Կազմությամբ պարզ կամ ածանցավոր հականիշ հարադիրների և տարբեր բայերի հարադրությամբ ձևավորված բարդություններ. *գոյժ առնել//աւետիս տալ, յայտ առնել//պահ արկանել, կանայս առնել//արանց լինիմ* և այլն:

գ) Կազմությամբ ածանցավոր հականիշ հարադիրների և միևնույն կամ տարբեր բայերի հարադրությամբ ձևավորված բարդություններ, որտեղ հականշությունն արտահայտվում է հարադիրների բառիմաստով: Օրինակ՝ *դժուար//դիր լինիմ, մօտ//հեռի լինիմ, թոյլ//արգել առնել* և այլն:

դ) Կապական կապակցություններով և քերականական ձևերով արտահայտված հարադիրների և միևնույն կամ տարբեր բայերի հարադրումով ձևավորված բարդությունները, որտեղ իբրև հարադիր հանդես է գալիս միևնույն բառը. *ի մտի դնել//ի մտաց հանել, ի միտ գալ//ի մտաց անկանիմ, ի բաց կալ//ընդ հուպ լինիմ, ի ներքս ածել//ի դուրս հանել, ըստ ակն անկանիմ//յակն արկանել, յառաջ ածել//զհետ բերել, ի վեր առնուլ//ի վար առնուլ, յարթուն լինիմ//ի քուն լինիմ, ի վախճան գալ//ի ծնունդ գալ* և այլն:

ե) Միևնույն բառի քերականական ձևերով արտահայտված հարադիրների և տարբեր բայերի հարադրումով ձևավորված բարդություններ. *զարև հատանել//յարևէ արկանել, կեանս առնել//ի կենաց արկանել, ա-*

րև տալ//գարև հատանել, արև տալ//յարևէ արկանել և այլն:

զ) Նախդրավոր և աննախդիր հարադիրների և միևնույն կամ տարբեր բայերի հարադրումով ձևավորված բարդություններ. *յադերս մատուցանել//հրաման տալ, յոտն կալ//ծունր իջանել, ի հարց առնել//պատասխանի առնել* և այլն:

է) Կազմությամբ նախդրավոր, պարզ կամ ածանցավոր միևնույն հարադրի և հականիշ բայերի հարադրությամբ ձևավորված բարդություններ. *ի բաց գալ//ի բաց գնալ, ի բաց տանել//ի բաց բերել, զկնի գալ//զկնի գնալ, թիկունս տալ//ի թիկունս դարձուցանել, գութ արկանենմ//գութ անկանիմ, հրաման առնուլ//հրաման տալ, փոխ առնուլ//փոխ տալ, կնութեան առնուլ//կնութեան տալ* և այլն:

ը) Կազմությամբ բարդ հականիշ հարադիրների և միևնույն բայի հարադրությամբ ձևավորված բարդություններ. *ուխտադիր լինիմ//ուխտագանց լինիմ, պարտական լինիմ//պարտապան լինիմ, բարեխօս լինիմ//չարախօս լինիմ, ուշաբեր լինիմ//ուշագնաց լինիմ, կողաքակ լինիմ//կողակից լինիմ* և այլն:

թ) Հարադրավոր և պարզ բայերով ձևավորված հականիշներ. *անէծս տալ//օրհնել, անարգանս դնել//գովել, յաւեր դարձուցանել//շինել* և այլն:

ժ) Առանձին խումբ են կազմում հարադրավոր բայերով արտահայտվող քերականական հականիշները, որոնք սեռի քերականական կարգի հակադիր դրսևորումներ են: Քերականական հականշությունը կարող է արտահայտվել՝

ա) միևնույն աննախդիր կամ նախդրավոր հարադրով ձևավորված բարդություններով, որոնցում բայական բաղադրիչ են դառնում համարմատ բայերի ներգործական և չեզոք սեռի տարբերակները. *յանդիման կալ//յանդիման կացուցանել, ի հող իջանել//ի հող իջուցանել, ի փախուստ դառնալ//ի փախուստ դարձուցանել, թափ անցանել//թափ անցուցանել, ունայն դառնալ//ունայն դարձուցանել, թիկունս դառնալ//թիկունս դարձուցանել* և այլն:

բ) Միևնույն աննախդիր կամ նախդրավոր հարադրով ձևավորված

բարդություններով, որոնցում բայական բաղադրիչներ են դառնում չեզոք և ներգործական սեռի տարարմատ բայեր: Սրանց շարքում ակտիվությամբ աչքի են ընկնում *առնել-ը* և *լինիմ-ը*. *խելամուտ առնել//խելամուտ լինիմ, բարձր առնել//բարձր լինիմ, ի բաց առնել//ի բաց լինիմ, բարի առնել//բարի լինիմ, ի հարկի դնել//ի հարկի կալ, ունայն առնել//ունայն լինիմ, գանահար առնել//գանահար լինիմ, անհոգ առնել//անհոգ լինիմ, թիկունս առնել//թիկունս լինիմ, անկարգ առնել//անկարգ լինիմ, ի բուռն արկանել//ի բուռն անկանիմ արգել առնել//արգել լինիմ, ի խաչ հանել//ի խաչ ելանել, աշխատ առնել//աշխատ լինիմ, յոտս արկանել//յոտս անկանիմ, զգուշագոյն առնել//զգուշագոյն լինիմ, կարթակոտոր առնել//կարթակոտոր լինիմ, խորշակահար առնել//խորշակահար լինիմ* և այլն:

γ) Միևնույն աննախդիր կամ նախդրավոր հարադրով ձևավորված բարդություններով, որոնցում բայական բաղադրիչներ են դառնում միևնույն ներգործական բայի ներգործածև և կրավորածև խոնարհված տարբերակները. *ի գերութիւն մատնեաց//ի գերութիւն, մատնեցաւ, թոյլ տամ//թոյլ տուեալ լինիմ, ընդ վայր հարկանել//ընդ վայր հարկանիմ, գերի վարել//գերի վարիմ, ի բերան սրոյ արկանել//ի բերան սրոյ արկանիմ, վնաս գործել//վնաս գործիմ, ի խաչ հանել//ի խաչ հանիմ, յերկիր կործանել//յերկիր կործանիմ* և այլն:

4. Գրավոր աղբյուրներում վկայված են նաև մի շարք հարադրավոր բայեր, որոնք համարմատ պարզ բայերի հետ հանդես են բերում գրության համանունություն. այն տարբերությամբ միայն, որ մեկն ունի բաղադրիչների հարադիր, մյուսը՝ համադիր գրելածև¹²⁸. *սովոր եմ//սովորեմ, ակն ունիմ//ակնունիմ, ակն ածել//ակնածել, վկայ եմ//վկայեմ* և այլն:

Որոշ հարադրավոր բայեր էլ կազմությամբ համադրական բայերի հետ դառնում են հարանուններ. *դարան գործել//դարանագործել, ակն առնել//ակնառել, ժամ դնել//ժամադրել, ունկն դնել//ունկնդրել, ծունր դնել//ծնրադրել* և այլն:

Երկբաղադրիչ հարադրավոր բայերից բացի՝ գրաբարում կան նաև եռանդամ և քառանդամ բարդություններ: Դրանք հիմնականում երկբա-

դադրիչ բայերի հենքի վրա ծավալված կայուն կապակցություններ են, որոնք դարձվածային արժեք են ներկայացնում. *յանդիման ցուցանել//յայտ յանդիման ցուցանել, ուշ դնել//ուշ ի կուրծս դնել, յանձին ունիմ//պէտ (հոգ, փոյթ) յանձին ունիմ, ի բաց դնել//զոգի ի բաց դնել, ի վերայ դնել//երկիւղ մահու ի վերայ դնել, ի ներքս ընկենուլ//բան ի ներքս ընկենուլ, ի վեր պրկել//ի վեր պրկել յօնս, ի վեր ամբառնալ//դէտակն ի վեր ամբառնալ, գուլամբ արկանել//ոտն գուլամբ արկանել, ճարակ տալ//հրոյ ճարակ տալ և այլն:*

Իսկ մի շարք հարադրություններ էլ բազմաբաղադրիչ են ի սկզբ-բանե. *յայլ լեզու կրթիմ, յայլ ձայն շրջիմ, կործան յերկիր վարիմ, թագ կապել անձին, բան ի բերան դնել, գինի գայ գականբ, ի չափ ունիմ գանձն, ընդունել ի սուրբ աւագան, պտուղ աչաց կարել, զպէտ հոգւոց վճարել, գիտել զչափ անձին, շահել գկէանս անձին, յոտն ի մատն յառնել և այլն:*

Որոշ բազմաբաղադրիչ հարադրավոր բայերի մեջ հարադիրները հոմանիշներ կամ հականիշներ են, մյուսների մեջ՝ նույն բառի ուղիղ և/կամ թեք (կամ էլ նախդրավոր) ձևեր. *այր զարամբ ելանել, աղ և հաց ուտել, գութ և խնամ ունիմ, այլ ընդ այլոց լինիմ, ցիր ընդ ցիր լինիմ, անց և դարձ առնել, ծալ ի ծալ առնուլ, թև ի թև հարկանել, ծափ գծափի հարկանել, դուլ և պատուէր տալ, զահ և գերկիւղ տալ և այլն:*

Հարկ է նշել, որ 1.-4. կետերի տակ դիտարկված հարադրավոր բայերն առաջացման աստիճանի, գործառական հաճախականության, ոճական տեսանկյուններից միատարր չեն: Անկախ նշված հանգամանքներից՝ տրվյալ դեպքում սոսկ կարևորել ենք այդ բայերի՝ գրաբար աղբյուրներում առկայության փաստը:

Նշված գույգերի մի մասի երկու բաղադրիչն էլ կիրառվում են 5-րդ դարի գործերում. մյուս մասի բաղադրիչներից մեկը (կամ երկուսն էլ) տարբեր դարերի վկայություններ են և 5-րդ դարի տեսանկյունից համարվում են կա՛մ ոչ գրական (ժողովրդախոսակցական), կա՛մ ոչ հաճախ կիրառվող:

Գրաբարում հարադրավոր բայերը¹²⁹ բավականին մեծ թիվ են կազ-

մում՝ աչքի ընկնելով և՛ արտահայտության ու բովանդակության պլանների բազմազանությամբ, և՛ գործածության մեծ հաճախականությամբ:

Երբեմն հարադրավոր բայերի միջոցով արտահայտվում են բառային իմաստներ, որոնք գրաբարում չունեն համանիշ համադրական համարժեքներ. ասել է թե՛ գրաբարյան բազմաթիվ հարադրություններ առաջացել են այս կամ այն փոփոխվող հատկանիշի իմաստն արտահայտելու անհրաժեշտությունից, ինչպես՝ *գաղտագողօնք լինիմ, շուք դնեմ* և այլն:

Հարադրավոր բարդությունների մի մասին գուգահեռ՝ լեզվի պատմության հետագա շրջաններում սկսում են ստեղծվել համարմատ համանիշ բայեր, որ նշան է, թե բազմաթիվ պարզ բայեր սերում են հարադրավորներից՝ բայական բաղադրիչի փոխարեն ստանալով բայակերտ ածանց: Օրինակ՝ *պատասխանի առնել*//*պատասխանի տալ*—ի դիմաց՝ *պատասխանել, ի դարանի առնել*—ի դիմաց՝ *դարանել, գոյժ առնել*//*արկանել*//*տալ*—ի դիմաց՝ *գուժալ* կամ *գուժել* և այլն:

Կան բայական բազմաթիվ իմաստներ, որոնք արտահայտվում են մեկից ավելի հարադրավոր բարդությունների միջոցով: Դրանք բառային համանիշներ են, ինչպես՝ *ելանել ի մարմնոյ* (Բ Կոր., Ե., 8), *յաշհարիէ ելանել* (Ա Կոր., Ե., 10), *յուծանել ի կենցաղոյս* (Խոր., 285), *ի կենաց անկանիմ* (Ոսկ.), *վճարել զկենցաղս* (Խոր., 327), *վճարել զկեանս* (Խոր., 68), *փոխիմ յաշխարիէս* (Բուզ., 223), *պակասել ի կենաց* (Եզնիկ, 117), *փչել զոգի* (Խոր., 36), *աւանդել ոգի* (Ա Պետր., Դ, 19): Սրանք բոլորն ունեն միևնույն «մահանալ-մեռնել» իմաստը:

Որոշ հարադրավոր բայեր հետագայում վերածվում են համադրական բարդությունների՝ արտահայտության պլանում կրելով մասնակի փոփոխություններ, ինչպես՝ *թափ անցանել-թափանցել, շուրջ գալ-շրջագայել, յանձն առնուլ-յանձնառնել* և այլն:

Գոյություն ունեն մի շարք համադրական բարդություններ, որոնք առաջացել են գրաբարի վերլուծական բայերի բաղադրիչների պարզագույն կցումից՝ հոդակապով կամ առանց հոդակապի, ինչպես՝ *դատ վարել-դատավարել, գերի վարել-գերեվարել, ակն ածել-ակնածել, դարան գոր-*

ծել-դարանագործել, ակն ունիմ-ակնունիմ, սուր ածել//սրածել, ակն առնել//ակնառել, կէտ դնել-կէտադրել և այլն:

Գրաբարում կային որոշ պակասավոր բայեր, որոնց դիմաց լեզվի զարգացման հենց նույն շրջանում գուգահեռաբար ստեղծվում են դրանց հարադրավոր համանիշները. *երանել*-ի դիմաց՝ *երանի տալ*, *չիք*-ի դիմաց՝ *ի չիք դառնալ* և այլն:

Կազմությամբ համադրական մի շարք բայերի դիմաց ստեղծվում են համանիշ և համարմատ վերլուծական բայեր, ինչպես՝ *կոծեմ-կոծ դնիմ, յողնիմ-յողն կալ, պահել-ի պահ տալ* և այլն:

Լեզվի զարգացման հետագա շրջանում բայական բազմաթիվ հարադրություններ դուրս են եկել գործածությունից, սակայն դրանց իմաստներն սկսել են արտահայտվել համանիշ բայական հարադրությունների միջոցով, ինչպես՝ *գան ըմպել-ծեծ ուտել, ունկն դնել-ականջ դնել//անել, բազմական արկանել-սեղան գցել* և այլն: Ասվածն ինքնին նշանակում է, որ ազգային լեզվամտածողությունը դարերով հիմնականում մնում է անփոփոխ, և միայն, ըստ անհրաժեշտության, դրա արտահայտության կաղապարներն են փոփոխվում: Այս կապակցությամբ Վ.Առաքելյանն իրավացիորեն նկատում է. «Մեզ հասնելու ճանապարհին դրանք (դարձվածներն ու բառակապակցությունները-Գ.Խ.) պետք է բեռնաթափվեին հիշյալ բերականական զգեստավորումից: Կորցնելով իրենց հոլովման, խոնարհման ձևերը, շարահյուսորեն վերադասավորվելով, գրկվելով նախդիրներից, բայերի խոնարհիչները փոխելով՝ հիշյալ դարձվածները և բառակապակցությունները հիմնովին փոփոխվում, նոր ձև ու կերպարանք էին ստանում: Փաստորեն գրաբարից ոչինչ չէր մնում»¹³⁰:

Գրաբարյան մի շարք հարադրություններ հայոց լեզվի զարգացման համաժամանակյա կտրվածքում դիտվում են բառային մեռած միավորներ, թեև իմաստային տեսանկյունից վերծանելի են, ինչպես՝ *ճակատ հարկանել, ժոյժ կալ, ի վէզ գալ, ի ճահ ելանել* և այլն:

Հարադրությունների մի փոքր մասն էլ առ այսօր պահպանում է ձև-վախմաստային անադարտությունը, ինչպես՝ *գանց առնել, ունկնդիր լինել*,

խոյս տալ և այլն: Պատճառն այն է, որ մման կարգի բարդությունների բաղադրիչներն իմաստային տեսանկյունից այսօր էլ պարզ ու հասկանալի են, մինչդեռ վերը նշված *ի վեզ գալ* և այլ բարդություններ դուրս են եկել գործառական ոլորտից, քանի որ դրանց բաղադրիչներից գոնե մեկի իմաստն արդեն չի ընկալվել:

Հատկանշական է, որ մի շարք հարադրավոր բարդություններ գրաբարյան բառագանձ են ներմուծվել Աստվածաշնչից և թարգմանական այլ գործերից: Օրինակ՝ *Խեղդ արկ* և մեռալ (Բ Թագ., ԺԷ, 23): Ջամենայն ինչ վասն նորին իսկ *ի վաճառաշահ արկանէ* (Ոսկ.): Բանիք զքեզ *ի պատրանս արկանիցէ* (Առակ., Ե, 5) և այլն:

Բ. ԳՐԱԲԱՐԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ

Ըստ սեռի քերականական կարգի՝ հարադրավոր բարդությունները բաժանվում են երեք խմբի.

Բ.1. *ներգործական սեռի հարադրավոր բայեր,*

Բ.2. *չեզոք սեռի հարադրավոր բայեր,*

Բ.3. *կրավորական սեռի հարադրավոր բայեր:*

Նշված բայախմբերն իրարից տարբերվում են մաս բառային իմաստով և խոսքի մեջ հանդես բերած արժութային առանձնահատկություններով: Ներգործական սեռի բայերի միջոցով, որպես կանոն, ձևավորվում են պարզ ընդարձակ նախադասություններ. այդ բայերը, ենթակայից բացի, պարտադիր կերպով պահանջում են մաս ենթակայի կողմից ներգործվող առարկա: Պարզ ընդարձակ նախադասություններ են ձևավորվում մաս կրավորական սեռի բայերի կիրառումով, սակայն այս դեպքում պարտադիր կերպով պահանջվում է ենթակայի վրա ներգործող առարկա: Ինչ վերաբերում է չեզոք սեռի բայերին, ապա սրանց միայն մի մասի միջոցով կարող է ձևավորվել պարզ ընդարձակ նախադասություն [այստեղ պարտադիր կերպով պահանջվող առարկան ենթակայի գործողությունը կրում է անուղղակիորեն, ինչպես՝ *Պատսպարան լինէր տկարաց* (Ա. Թեսաղ., Ե, 14)]: Չեզոք բայերի մյուս մասը պարտադիր կերպով կարող է կապա-

կցվել միայն ենթակայի հետ՝ ձևավորելով համառոտ նախադասություն: Օրինակ՝ *Քանզի ի բաց մնաց դուռն* (Բուզ., 42): Անշուշտ, նշված տիպի բայերի կիրառումով կարելի է կազմել ընդարձակ նախադասություններ ևս, սակայն այս դեպքում երկրորդական անդամի առկայությունը ոչ թե պարտադիր է, այլ պայմանավորված է տվյալ խոսքային իրադրությամբ: Օրինակ՝ Սաստկագոյն հալածանք բուռն ի վերայ եղեալ (Խոր., 72): Ներգործական, կրավորական և չեզոք հարադրավոր բայերից շատերի կապակցելիության հնարավորությունները սրանով չեն սահմանափակվում. կախված բառիմաստից՝ այդ բայերը կարող են ունենալ արժույթի այլ արտահայտություններ ևս, որոնց ուսումնասիրությանն էլ նվիրված է հետագա շարադրանքը:

Բ.1. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ

Բ.1.1. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ԵՆԹԱԿԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ենթակաառության տեսանկյունից գրաբարի ներգործական սերի հարադրավոր բայերը սահմանափակություն չունեն. դրանք բոլորը, անկախ այն բանից՝ խնդրառության տեսանկյունից միարժույթ են, թե երկարժույթ, իբրև կանոն, կարող են պահանջել կամ ենթադրել ենթակա՝ վերջինիս հետ կապակցվելով դեմքի և թվի համաձայնության եղանակով: Օրինակ՝ Եւ գունդն ոչ ժամանեաց ձեռն տալ ի միջոց աշխարհին (Եղիշէ, 79): Դուք ևս ի ձեռն առջիք զմեզ (Եղիշէ, 72): Զոր Վարազդատ շնորհ առնէր¹³¹ իւրում դայեկին (Բուզ., 202) և այլն:

Դիմավոր հարադրավոր բայերի հետ ենթական սովորաբար արտահայտվում է ուղղական հոլովի եզակի կամ հոգնակի թվով: Օրինակ՝ *Սոքա* այրացաւեր առնէին առ հասարակ գերկիրն Պարսից (Բուզ., 116): *Թագաւորն* յանձին ունէր առնել զայս (Բուզ., 198): Եղիցի յաւուր յայնմիկ՝ յաւելցէ *Տէր*՝ ցուցանել զձեռն իւր, նախանձելիս առնել զմնացորդս ժողովրդեան իւրոյ (Ես., ԺԱ, 11):

Ներգործական սեռի հարադրավոր բայերով ձևավորված նախադասությունների ենթական կարող է լինել նաև բաղադրյալ՝ արտահայտված «*ուղղական հոլովածև+բացառական հոլովածև*» մասնակադասարով. Չոր և *ոչ մի որ ի նոցանէ* պէտ յանձին կալաւ մատենագրել (Խոր., 10): *Ոչ որ ի նոցանէ* յաշունն կամ ի գարունն փոխ առ յընկերէն (Ագաթ., 331):

Այսպիսի կառույցների ենթական բացակայում է միայն նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու դեպքում: Օրինակ՝ Միշտ աշխատ ունիմք (*մեք.*–Գ.Խ.) գտերն Արեաց և գԱրիս (Փարպ., 83): Հանցուք (*մեք.*–Գ.Խ.) զնա յաչաց իւրոցն խաբեցելոց (Եզնիկ, 241): Չամենայն կուռս նորա արարից (*ես*–Գ.Խ.) յապականութիւն (Միք., Ա, 7): (*Մերուծան*–Գ.Խ.) զիւր դէտսն առաջի արկեալ՝ յերամականայն արշաւէր (Բուգ., 213): (*Դուք*–Գ.Խ.) դիք առաջի զանուն քաջութեան (Եղիշէ, 201): Վասն այսորիկ (*ես*–Գ.Խ.) մատնեցի զնա ի մահ (Բուգ., 103): (*Լիւսիաս*–Գ.Խ.) ի նեղ մեծ զամուրն հասուցանէր (Բ. Մակ., ԺԱ, 5):

Գրաբարի հարադրավոր բայերը ենթակաառության տեսանկյունից սահմանափակություն են ճանաչում միայն՝ կախված իրենց և ենթակայի դասային անհամապատասխանությունից: Այսպես՝ *ալէկոծ առնել* հարադրավոր բայը թեև կարող է ենթակա պահանջել, բայց ոչ բոլոր դիմային դրսևորումներով, քանի որ նշված բայի միջոցով արտահայտված գործողությունը կարելի է ստորոգումով վերագրել միայն 3-րդ դեմքով արտահայտված ենթակային¹³² (կամ ենթականերին), որն անձնանիշ չէ: Ինչպես՝ Բոճութիւնք հողմոյն ալէկոծս առնիցեն զեզերսն (Վեցօր.):

Լեզվական փաստերը վկայում են, որ ներգործական սեռի հարադրավոր բայերից քչերն են դիմասահմանափակ. բանն այն է, որ հարադրավոր բայերի մեծագույն մասի միջոցով արտահայտվում է այնպիսի գործողության գաղափար, որն ստորոգումով կարելի է վերագրել առաջին հերթին անձի (կամ անձերի), մի հանգամանք, որով էլ բացառվում է այդ բայերի դիմասահմանափակությունը: Սա բնավ էլ պատահականություն չէ. բանն այն է, որ հարադրավոր բայերի մեծագույն մասի բայական բաղադրիչները դասական հայերենի ակտիվ բառապաշարի տարրերն են

և անվանում են մարդկանց ու վերջիններիս հետ առնչվող այլոց գործողություններ, իսկ անվանական բաղադրիչների մեծագույն մասն անվանում է կա՛մ անձի մարմնի մաս, կա՛մ անձին վերաբերող առարկա: Այդ իսկ պատճառով ներգործական սեռի հարադրավոր բայերը հիմնականում կապակցվում են անձնանիշ ենթակաների հետ: Վերջիններս արտահայտվում են անձ անվանող գոյականներով, դերանուններով կամ էլ փոխանվանաբար գործածված այն բառերով, որոնք անձ են մատնանշում: Օրինակ՝ *Այր* բառերար յերաշխի առնե՛զմերձաւորն (Սիր., ԻԹ, 19): Եկ *դու* համա՛ր կալ՝ որչափ են ազգք Հոռոմոց (Կոչ.): *Մեք* ի մտի եղաք խաղալ գնալ յաշխարհն արևելից (Եղիշէ, 10): *Ո՞* նախանձ արար զձեզ (Գաղ., Գ, 1) և այլն:

Անձնանիշ ենթակաառությանը աչքի են ընկնում հատկապես երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը, քանի որ անձերին է հատուկ այս կամ այն առարկան (սեռի խնդիր) որևէ կերպ մեկ այլ առարկայի հետ (բնության խնդիր) հարաբերելը, մի հատկանիշ, որից հիմնականում գուրկ են իրանիշ առարկաներով արտահայտված ենթակաները: Օրինակ՝ Զխորհուրդն մմա ի վեր հանէր (Եզնիկ, 139): Եւ (Շապուհ) մմա յանձն արարեալ զՀայս (Խոր., 277) և այլն:

Անշուշտ, հարադրավոր բայերի՝ դասային տեսանկյունից ենթակաառությունը սրանով չի սահմանափակվում: Մի շարք հարադրավոր բայեր կապակցվում են փոխաբերաբար գործածված ենթակաների հետ, որոնք տվյալ դեպքում անձնավորված են: Օրինակ՝ *Արդարութիւն* Տեառն ուրախ առնէր զսիրտս (Բուզ., 73): *Պատերազմ* զմեզ շուրջ պաշարէ (Խոր., 360): *Փոյքքն* յառաքինութիւն արմատախիլ առնեն զամենայն (ՆՀԲ): *Ախտք* հրաժեշտ տուեալ զհիւանդսն (Ոսկ.) և այլն¹³³:

Տեսականորեն ենթակա չեն կարող պահանջել նաև այն դիմավոր հարադրավոր բայաձևերը, որոնք կիրառվել են որպես անորոշ-դիմավոր կամ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների միակ գերադաս անդամներ: Բանն այն է, որ նշված միակազմ նախադասությունների արտահայտության պլանում ենթական բացակայում է, իսկ բովանդակության պլանիում այն չի ենթադրվում: Օրինակ՝ *Գիտակ արարին* զթագաւորն

վասն սրբոյն Գրիգորի (Ագաթ., 449): Որ չեն մտաւարժ, բազում անգամ զծառայ այր առաջի նորա *գան հարկանեն* (Եզնիկ, 82): *Մի՛տ դիր* ընթերցուածոց մխի-թարութեան վարդապետութեան. *մի՛ անփոյթ առնէր* շնորհացդ, որ ի քեզ են (Ագաթ., 468) և այլն:

Նշված անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր բայական մի-ակազմ նախադասությունների գերադաս անդամները ենթակաառության տեսանկյունից սրժութագուրկ հարադրավոր բարդություններ են միայն իրավիճակային առումով՝ միայն տվյալ կիրառության մեջ, տվյալ տեսակի կառույցներում: Ասվածն ինքնին վկայում է, որ անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ կառույցներում գերադաս անդամի գործառույթ կարող են կատարել ոչ միայն ընդգծված բայերը, այլև ուրիշ շատ հարադրավոր բարդություններ: Օրինակ՝ Եւ օր ըստ օրէ *քերէին* իբրև զգէշ *ընկենուին* ի մեծ հրապարակին, *ժողէին* և *այպանէին* և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին (Եղիշէ, 139):

Ինչ վերաբերում է գրաբարի միադիմի հարադրավոր բայերին, ապա սրանք հարադրավոր բայերից առանձին, անկախ շարք չեն կազմում, այլ այդ բայերի գործառական դրսևորումներն են: Միադիմի հարադրավոր բարդությունները գրաբարում նույնքան ակտիվ կիրառություն ունեն, որքան դիմավորները, սակայն ուղղական հոլովով արտահայտված ենթակայի փոխա-րենն այս բայերի հետ կապակցվում են սեռական հոլովով արտահայտված փոխակերպված ենթականեր, որոնք ավանդաբար անվանվում են կողմնա-կի: Օրինակ՝ Եւ *Պապայ* յաղերս անկեալ, զի մի մեռցի (Խոր., 907): ...որ կարի խիստ զայրացեալ են մեզ յաղագս աստուածասպան քահանայից Հայոց, որ ոչ արժանի էին մահու և *ձեր* անփոյթ արարեալ՝ կան կենդանի մինչև ցայսօր (Փարպ., 87): *Նորա* յանձին կալեալ ընդ իւր ձեռն տալ իւրով բանի (Բուզ., 221): Եւ *մեր* զայս ջան յանձին կալեալ անկեալ ի վաճառականութիւն բանից (Ագաթ., 6): Յանձն առեալ *Անակայ*՝ սպանանէ զԽոսրով (Խոր., 203): Առաջի արկեալ *նոցա* զնշանագիրս (Կորիւն, 60): *Նոցա* յառաջ մատուցեալ զԱրշաւիր (Փարպ., 82)¹³⁴:

Եթե զրաբարում ենթակա են առնում ներգործական սեռի բոլոր հարադրավոր բայերը, ապա, դրան հակառակ, հիշյալ բայերի մեծագույն մասը ստորոգառության տեսանկյունից արժութագուրկ է:

Լեզվական այս փաստն ինքնին նշանակում է, որ ներգործական սեռի հարադրավոր բայերի համար ստորոգառությունը արժույթի հիմնական դրսևորումներից չէ:

Միարժույթ կամ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերից ստորոգառու են այնպիսիք, որոնք գործություն ունեն իր անվանող սեռի խնդրի փոխարեն պահանջելու մի անորոշ դերբայ¹³⁵: Օրինակ՝ «*Ի մտի իւրում ունէր զպայման*» (Եզնիկ, 235) նախադասության ներգործական սեռի հարադրավոր բայը մեկ այլ կիրառության մեջ սեռի խնդրի փոխարեն կարող է պահանջել անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի. Ունէի ի մտի *կեցուցանել* զքեզ (Ազաթ., 30):

Հարկ է նշել, որ *ստորոգառու* ներգործական սեռի հարադրավոր բայերն այդպիսիք են դառնում եղանակավորիչ բայի գործառույթով կիրառվելիս, երբ նախադասության մեջ կորցնում են իրենց բուն բայիմաստը, շարահյուսական հիմնական գործառույթն ու գործառական անկախությունը: Նշված պայմանների առկայության դեպքում հիշյալ բայերը դադարում են իրենց իսկ բայիմաստով արտահայտված հատկանիշը ենթակային ստորոգելուց և ստանձնում են էական կամ վերացական բայերին հատուկ շարահյուսական դեր. պահանջում են անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի և վերջինիս արտահայտած հատկանիշն ստորոգում ենթակային: Օրինակ՝ Ոչ զմեզ օրէնս *գրել* և *տալ բերել* առ ձեզ *ի դէպ համարեցաք* (Փարպ., 46):

Սրանք էական բայերից տարբերվում են նրանով, որ ոչ թե սոսկ ստորոգողի (հանգույց) քերականական դեր են կատարում, այլ միաժամանակ իրենց բայիմաստով երանգավորում են ենթակային ստորոգվող բուն հատկանիշը¹³⁶: Այսպես՝ «*Նորա յանձին կալեալ ընդ իւր ձեռն տալ*

իորով քանի» (Բուգ., 221) նախադասության *յանձին կալեալ* բայածերը հանդես է եկել ոչ թե իր բուն բառիմաստով և անկախ կիրառությամբ¹³⁷, այլ ստանձնել է վերացական բայի քերականական դեր (ծառայում է որպես բաղադրյալ ստորոգյալի հանգույց):

Լեզվական փաստերի քննությունից պարզվում է, որ գրաբարում ստորոգառու կարող են դառնալ խնդրառությամբ թե՛ միարժույթ, թե՛ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը¹³⁸:

Խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը ստորոգառու են դառնում խնդրառական արժույթից զրկվելու դեպքում: Օրինակ՝ խնդրառությամբ միարժույթ *ի մտի դնել* բայը [*Ձի՞նչ եղեր ի մտի* (Ագաթ., 61)] ստորոգառու է դառնում միայն այն դեպքում, եթե զրկվում է սեռի խնդիր առնելու գործությունից՝ վերջինիս փոխարեն պահանջելով ստորոգելի. *Ի մտի եղեալ էր շրջեցուցանել* զպայծառութիւնն (Կորին., 30):

Խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերից կարող են ստորոգառու դառնալ *յանձն առնուլ, պէտ յանձին ունիմ/կալայ, ջան յանձին ունիմ/կալայ, բան տալ* («խոստանալ»), *գործ առնել* («փութալ», «ջանալ»), *գործ դնել* («ջանալ»), *ի դէպ համարիմ, իրաւունս համարիմ, խորհուրդ ունիմ/կալայ, խորհուրդ արկանել, խորհուրդ ի մէջ առնուլ, ի միտ(ս) արկանել, ի մտի դնել, ի մտի ունիմ/կալայ, սիրտ դնել, սկիզբն ունիմ/կալայ* և այլ բայեր: Օրինակ՝ Այլ *ի դէպ համարիմ* ընդ նոսին յիշել և գտեր Աբրահամ զեպիսկոպոսն (Թուղթ, 202): Թագաւորն *յանձին ունէր առնել* զայս (Բուգ., 198): Ադուես *գործ առնէր* ի նմանէ *հանել* զպանիր (ՆՀԲ): *Սկիզբն կալայ խօսել* ընդ քեզ (Նար., 10): *Խորհուրդ կալայ դառնալ* ընդ Մակեդոնիա (Գործ., Ի, 3): Քանզի *իրաւունս համարիմ զարթուցանել* զքեզ յիշատակօք (Բ Պետր., Ա, 13): Ջոր և ոչ մի ոք ի նոցանէ *պէտ յանձին կալաւ մատենագրել* (Խոր., 10): Արդ, *ջան յանձին կալեալ մտանել* ի պատմագիր մատենիցս խորութիւն (Ագաթ., 9): Արշակ *եղ սիրտ* խոնարհութեամբ հրովարտակս *առաքել* առ Շապուի արքայ Պարսից (Բուգ., 139): *Խորհուրդ ի մէջ առնոյր* թագաւորն ընդ ամենեքին *փութալ*,

Ժառանգաւոր լինել (Ագաթ., 413) և այլն:

Խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը ստորոգառու են դառնում սեռի խնդիր (կամ վերջինիս փոփոխակը՝ վերաբերության խնդիր) պահանջելու գորությունից զրկվելու դեպքում: Այսպես՝ «*Եւ դու մի՛ գանց առնիցես և մի զմիով բանիւ, զոր ետու քեզ հրաման*» (Յուդ., Բ, 6) նախադասության¹³⁹ մեջ *հրաման տալ* բայը խնդրառությամբ երկարժույթ է. պահանջում է մի սեռի (*զոր*) և մի բնության (*քեզ*) խնդիր, մինչդեռ «*Որոց իւրն հրաման տուեալ էր մտանել ի մարդիկ*» (Եզնիկ, 150) նախադասության մեջ նույն բայն արդեն խնդրառությամբ միարժույթ է. պահանջել է միայն բնության խնդիրը (*որոց*), բայց և արծուրավորվել է նաև ստորոգառությամբ (*մտանել*):

Խնդրառությամբ երկարժույթ ստորոգառու ներգործական սեռի հարադրավոր բայերից են՝ *հրաման տալ*, *հրաման առնել*, *պատուէր տալ*¹⁴⁰, *հնարս տալ*, *հարկ առնել*, *համարձակութիւն տալ*, *իրաւունս տալ*, *իշխանութիւն տալ*, *գորութիւն տալ*, *թելադիր լինիմ*, *շնորհ տալ*, *խոստովան լինիմ*, *ուխտ դնել* և այլն: Օրինակ՝ *Հրաման տայր քարակոշկոճ առնել զնա* (Բուզ., 128): Եթէ ոչ *ուխտ պայմանի դնիցեն* թողուլ զթլփատութիւնն (Խոր., 119): *Չտայ թոյլ* զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ և ասպատակել յԱսորիս (Խոր., 132): Դուլ և *պատուէր ետ* նոցա երթալ միւս անգամ ի Բաբիլոն (Եւս.): *Համարձակութիւն տայ* նմա վարսակալ ածել մարգարտեայ (Խոր., 44): Վտանգ *հարկ առնէ* Ածդահակայ պատահել պատերազմաւ հայկազինն ոչ փոքր ինչ ամբոխի (Խոր., 81): *Տացէ հնարս* նահատակաց առաքինանալ (Յճխ.): *Պատուէր տացես* ոմանց չլինել յօտարուսմունս (Ա Տիմ., Ա, 3): *Պատուէր հրամանի տայր* պատրաստական լինել (Եղիշէ, 80): Որոց իւրն *հրաման տուեալ էր* մտանել ի մարդիկ (Եզնիկ, 150): *Ետ հրաման* քերել զկողս նորա երկաթի քերչօք (Ագաթ., 65): *Թո՛յլ տուք* ինձ ողբալ ընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց (Փարպ., 28): *Չտայր թոյլ* ական հատանել (Ղուկ., ԺԲ, 39): *Ոչ ետ թոյլ* և ոչ միում ի նոցանէ պաշտել զնա (Եզնիկ, 246): Ահա *ետու* ձեզ *իշխանութիւն* կոխել զօծս և զկարիճս (Ղուկ., Ժ, 19): *Տուեալ քեզ իշխանութիւն* պատուիասել և խոշտանգել (Ա

Եզր., Ը, 27) և այլն:

Ստորոգառու ներգործական սեռի հարադրավոր բայերի պահանջած ստորոգելին, որը պարտադիր կերպով արտահայտվում է որևէ անորոշ դերբայով, իբրև բառ, կազմությամբ կարող է լինել թե՛ պարզ, թե՛ բարդ: Հմմտ. Ջոր ի մտի եղին *պահել*, դիւրաւ պահիցեն (Եզնիկ, 287), Ի մտի եղի ձեզ *ծառայութիւն առնել* (Փարս., 137) և Մեք ի մտի եղաք *խաղալ գնալ* յաշխարհն արևելից (Եղիշէ, 10):

Ստորոգելի շարահյուսական գործառույթ կատարող անորոշ դերբայը ներգործական սեռի ստորոգառու հարադրավոր բայերի հետ հանդես է գալիս ուղիղ ձևով և անորոշ առմամբ, հակառակ դեպքում կատարում է ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ և դիտվում խնդրառական արժույթի արտահայտությոն. *Թոյլ ետ գնալ* մարդկան ըստ կամաց իւրեանց (Ագաթ., 122): Հրաման ետ թագաւորն *ածել* զնոսա (Դան., Ա, 18) և այլն, սակայն կան կառույցներ, որտեղ անորոշ դերբայը տրական հոլովով է արտահայտված. Եւ ետ նմա գօրութիւն *ունելոյ*¹⁴¹ զամենայն (Իմաստ., Ժ, 2):

Բ.1.3. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ի տարբերություն չեզոք սեռի հարադրավոր բայերի, որոնք չեն կարող պահանջել և/կամ ենթադրել սեռի խնդիր լրացում, իսկ բնության խնդիր առնելու տեսանկյունից կարող են լինել նաև արժութագուրկ, ներգործական սեռի բոլոր հարադրավոր բայերը խնդրառությամբ առնվազը միարժույթ են (պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են ենթակայի գործողությունն անմիջականորեն իր վրա կրող մի խնդիր, որը հանդես է գալիս սեռի քերականական կարգի պահանջով):

Ընդամին, բազմաթիվ ներգործական սեռի հարադրավոր բայեր, սեռի խնդրից բացի, գորություն ունեն պահանջելու կամ ենթադրելու ևս մեկ կամ (որ հազվադեպ է պատահում և հենց այդ պատճառով գրաբարի համար տիպական չէ) երկու բնության խնդիր՝ պայմանավորված այդ բայերի բառիմաստով: Օրինակ՝ Բագում արանց *դիակունս* կործան յերկիր վարէին

(Փարպ., 125): Արարից *զքեզ համր* (Ագաթ., 47): *Զնիգակն* յինքն հանէր *յարքայէն* (Բուգ., 204): Վաղ ազդ առնէին *մարգարէիւն* (Եզնիկ, 105) *մմա զիրսն* (Բուգ., 116) և այլն:

Ըստ խնդրառական արժույթի՝ ներգործական սեռի հարադրավոր բայերը լինում են՝ ա) *միարժույթ*, բ) *երկարժույթ* և գ) *եռարժույթ*¹⁴²:

Այս կամ այն հարադրավոր բայի՝ խնդրառության տեսանկյունից միարժույթ, երկարժույթ կամ եռարժույթ լինելը կախված է մի շարք հանգամանքներից:

Այսպես՝ կան բայեր, որոնք անկախ կիրառության դեպքում խնդրառությամբ երկարժույթ են, մինչդեռ, լինելով բարդության բաղադրիչ, դառնում են միարժույթ, քանի որ դրանց արժույթի երկրորդ դրսևորումն արդեն արտահայտված է լինում ոչ թե որպես ինքնուրույն շարահյուսական միավոր, այլ որպես հենց այդ բայի հարադրի կախյալ բաղադրիչ: Օրինակ՝ «*աշխարհագոյժ առնել զերախտիս*» (Ոսկ.) կապակցության *աշխարհագոյժ առնել*-ը չի կարող պահանջել կամ ենթադրել տրականով արտահայտված խնդիր, քանի որ այդ խնդրի քերականական իմաստն արտահայտվել է *աշխարհագոյժ* բառի առաջին բաղադրիչի միջոցով:

Բազմաթիվ հարադրավոր բայեր էլ խնդրառությամբ երկարժույթ չեն այն պատճառով, որ արժույթի երկրորդ դրսևորումը հանդես է գալիս ոչ թե որպես անկախ կիրառությամբ խնդիր, այլ արդեն որպես հարադրավոր բարդության հարադիր, որն ունի կախյալ կիրառություն: Օրինակ՝ *տալ* բայը խնդրառությամբ երկարժույթ է, սակայն հետևյալ կիրառության մեջ նրա արժույթներից (*լեզուի*) մեկը կորցրել է իր անկախ կիրառությունը՝ վերածվելով հարադրի՝ *Մի՛ տար լեզուի* քում գամենայն խորհուրդս (Մծբն.) և այլն: Այս նույն ճանապարհով Զմիտս նորա *յինքն յանգուցանել* (Բուգ., 92): Զամովսական սպառնացումն *յարդիւնս ածէ* (Խոսր., Ոսկ.): Զբազումս *յուղղութիւն ածէ* (Խոսր., 340): Քա՛ւ լիցի ինձ *տալ ի մոռացումն*, զոր ասէն (Փարպ., 51) և այլ հարադրավոր բայերի՝ խնդրառությամբ երկարժույթ բայական բաղադրիչը, տրականով կամ կապական կապակցությամբ արտահայտված բնության խնդրի հետ հարադրվելով, դարձել է մի նոր բայ,

որն արդեն խնդրառությանը միարժույթ է. գորություն ունի պահանջելու միայն մեկ (տվյալ դեպքում՝ սեռի) խնդիր:

Այս նույն ձևով էլ մի շարք երկարժույթ ներգործական սեռի բայեր, իրենց պահանջած բացառական հոլովով բնության խնդիրների հետ միասին մեկ հարադրավոր բայի վերածվելով, ձեռք են բերում միարժույթ ներգործական սեռի բայի հատկություն, որը կարող է պահանջել կամ ենթադրել միայն մեկ սեռի խնդիր: Օրինակ՝ *Ոչ հանեն (զմեզ-Գ.Խ.) յերեսաց* Աստուծոյ (Եզնիկ, 286), *գոմն յընչից և յարևէ արկանել* (Եզնիկ, 162), *ի կենաց արկանել զնա* (Եւս.), *բառնալ զնոսա ի կենաց* (Փարպ., 88), *հանել զնա յայսց կենաց* (Ագաթ., 32), *լուծանել ի կենցաղոյս զնա* (Խոր., 305), *յարևէ ևս արկանէ զնոսա* (Եզնիկ, 144), *հանիցէ զձեզ ի ձեռաց* (Ագաթ., 327) և այլն:

Բացառական հոլովով բնության խնդիր առնելու գորությունը կորցրել են նաև այն երկարժույթ ներգործական սեռի բայերը, որոնց՝ կազմությանը բարդ հարադրի բաղադրիչների միջև ենթադրվում է *բացառական հոլովով խնդիր-բայ գերադաս անդամ* շարահյուսական հարաբերություն. *դիագերծ* առնել զվիրաւորս (Բ Մակ., Ը, 27), *սովաբեկ* առնել զքեզ (Բ Օրեն., Ը, 3), *սովամահ* առնել զանձն (Առակ., Ժ, 3), *վաստակաբեկ* առնել զթագաւորն (Ագաթ., 104) և այլն¹⁴³:

Ի դեպ, *ի ծառայութիւն արկանել* և այս տիպի հարադրավոր բայերի բայական բաղադրիչները նախապես եղել են եռարժույթ և միայն հարադրի հետ համաձուլումից հետո են դարձել երկարժույթ. Դուք անձամբ *զանձինս* այլում ի ծառայութիւն արկանէիք (Եղիշէ, 56):

Բ.1.3.1. ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՐԺՈՒՅԹ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԵՐ

Միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը գրաբարում պարտադիր կերպով ենթադրում [Ի չքմեղս լինելով՝ չլուելոյն առնէր /*զասացեալն*-Գ.Խ./ (Բուզ., 184)] կամ պահանջում են մեկ սեռի խնդիր, որը սովորաբար արտահայտվում է հայցական հոլովաձևով: Օրինակ՝ *Ջոր* և *ոչ նոքա*

յայտնի կարեն առնել (Ագաթ., 228): Որ *սափոր* ջրոյ յուս ունիցի (Մակ., ԺԳ, 13): Մի՛ արասցէ ապախտ *գրանս* իւր (Թիւ., Լ, 3): *Ջի՞նչ* եղեր ի մտի (Ագաթ., 61): Ահաբեկ արարեալ *գմարդիկն* (Ագաթ., 74): Առ ի յամօթ առնելոյ *գվատացեալսն* (Եզնիկ, 58) և այլն:

Այս բարդութիւնների պահանջած սեռի խնդիրը կարող է արտահայտված լինել նաև «*հայցական հոլովով բառածն-բացառական հոլովով բառածն*» մասնակադապարով, որտեղ բաղադրիչները ցույց են տալիս, համապատասխանաբար, մասի և ամբողջի հարաբերություն: Օրինակ՝ *Ջբագումս ի նոցանէ* գլխով պատուհաս առնէր Մուշեղ (Բուգ., 117): Եւ զայնպիսի այլ և զայլ ականաւոր և քաջ *արս ի* պարսիկ *մարդկանէ* հանին ընդ սուր (Փարպ., 159): *Ջիւրաքանչիւր ոք ի մտելոցն* տոհմորոշ առնեն (Նիւս.): Յերկիր արկանէր *արս ի մանկանցն* Վաղարշակայ (Խոր., 107): Ընդ համար առնել *գմեծամեծս* և *գփոքունս ի տրոց* (Ռսկ.): Բուռն հարկանիցէ *գմի ի յոստոց* ծառոյն (ՆՀԲ) և այլն:

Սեռի խնդրի իմաստ է արտահայտում նաև բացառական հոլովածնով արտահայտված անդամը՝ միայնակ: Այս դեպքում ամբողջի քերականական իմաստն ունի բառային արտահայտություն, իսկ մասնականության քերականական իմաստը ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանից: Օրինակ՝ *Յորդոց* քոց առնիցեն կուրտ (Ռսկ.):

Ներգործական սեռի հարադրավոր բայերի պահանջած սեռի խնդիրն արտահայտվում է նաև սեռական հոլովով հավելադրությամբ՝ «*հայցական հոլովով բառածն-սեռական հոլովով բառածն*» մասնակադապարով, որտեղ ընդգրկված բառածները հոմանիշ կամ համանիշ զույգեր են. *Աղմուկ շփոթի* ի մէջ արկանէին (Խոր., 32): *Պատուհաս տանջանաց* ի վերայ եղաք (Ագաթ., 87) և այլն:

Հարկ է նշել, որ որոշ կառույցների մեջ սեռի խնդիրն արտահայտվում է նաև *անձն* բառի գործիական և հայցական հոլովածների հարադրությամբ: Օրինակ՝ Ինքեանք քարշեցին ի վերայ իւրեանց զաւերածն և *անձամբ զանձինս* արարին քարընկէց (ՆՀԲ): *Անձամբ զանձինս* արարէք ժառանգ գեհենին (Եղիշէ, 55) և այլն:

Գրավոր աղբյուրներում վկայված ենք գտնում մաս սեռի խնդրի դրսևորման բացառիկ դեպքեր, այն է՝ կառույցներ, որոնք արտահայտված են *«բացառական հոլովածն–ՄԻՆՉԵՒ նախդիր–Ց նախդիր+հայցական հոլովածն»* մասնակադապարով: Ահավասիկ՝ Եւ որ ինչ էր ի քաղաքին, *յառնէ մինչև ցկին և յերիտասարդէ մինչև ցծեր և յարջառոյ մինչև ցոչխար և ցէշ արկին ի բերան սրոյ* (Յես., 2, 21):

5-րդ դարի գրավոր աղբյուրներում միարժույթ հարադրավոր բայերի պահանջով առկա են սեռի խնդիրներ՝ արտահայտված ոչ թե բառաձևով, այլ մի ամբողջ երկրորդական նախադասությամբ. Ոչ ամելով զմտաւ, *թէ խաբէութեամբ դիւաց երկրպագին պատկերք* (Խոր., 272): Քաւ լիցի ինձ տալ ի մոռացումն, զոր ասեն. *«Որ սիրէ զկին և զորդիս առաւել քան զիս, չէ ինձ արժանի»* (Փարպ., 51): Մի՛ զմտաւ ամիցէք, *թէ զինչ խօսիցիք* (Մարկ., ԺԳ, 11): Բայց որդին եցոյց և յայտնի արար, *թէ «Որ ետես զիս, ետես զՀայր իմ»* (Ագաթ., 191): Պատճառս ի վերայ եղեալ, *իբր թէ չարակնեաց զուրախանալն արքայի* (Խոր., 284): Մեծամեծս կոտորելով, *թէ ուխտաւոր ենք* (Եզնիկ, 289) և այլն:

Միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը սեռի խնդրին զուգահեռ չեն կարող պահանջել կամ ենթադրել որևէ այլ խնդիր կամ խնդիրներ (հակառակ դեպքում այդ բայերը կդիտվեն երկարժույթ կամ եռարժույթ): Սակայն բացառված չէ, որ մի շարք ներգործական սեռի միարժույթ հարադրավոր բայեր սեռի խնդրի փոխարեն պահանջեն վերջինիս փոփոխակը, որն արդեն այլ բան չէ, եթե ոչ բնության խնդիր՝ արտահայտված նախդրավոր կապակցությամբ: Այդպիսիք են, օրինակ, մտածական բայերը. Յորժամ զմտաւ ամէր Տիգրան *յաղագս քեոն* /հմմտ. ըզրոյր–Գ.Խ./ (Խոր., 81): Պետրոս զմտաւ ամէր *վասն տեսլեանն* /հմմտ. զտեսիլն–Գ.Խ./ (Գործ., Ժ, 19): Քանզի և զմտաւ ամել *զմմանէ* /հմմտ. զմա–Գ.Խ./ կատարեալ իմաստութիւն է (Իմաստ., 2, 16) և այլն:

Ներգործական սեռի միարժույթ հարադրավոր բայերը բառիմաստային, կապակցելիության հնարավորությունների և այլ տեսանկյուններից միատարր չեն:

Մի շարք միարժույթ բարդություններ, սեռի խնդրից բացի, կարող են պահանջել նաև մի բնության խնդիր՝ արտահայտված գործիական հոլովով: Օրինակ՝ *սովորվմ* և *ախտիւմ* լիզաջինջ առնել զազգս (Եւս.): Յանդիման բերել *լեզուաւ* զծածուկս (Խոր., 91): Անհանգիստ առնել զմեզ *պատերազմաւ* (Փարս., 18): Յանհոգ առնել *բանիւք* զՊապ (Բուզ., 171): Աշխատ կալաւ զմեզ սակաւ *արամբ* (Փարս., 158): *Իրօքն* խելամուտ առնէր զքեզ (Դան., Թ, 22): Հարկանել զքեզ *մահուամբ* (Ել., Թ, 15): Ուրախ առնէին (զնոսա-Գ.Խ.) *ռոճկօք* (Եղիշէ, 104) – *զուսանօք* (Բուզ., 174): *Բանիւք* զքեզ ի պատրանս արկանել (Առակ., Ե, 5): Սրտակաթ արարեր զմեզ միով *ակամբ* քով (Երզ., Դ, 9): Իւրեանց *պաշտօնէիւք* ի փախուստ դարձոյց (Ազաթ., 457): Ի փորձ արկանել զնա *խրատու* իւրով (Սիր., Դ, 29): Ինքեանք իւրեանց *մետիւք* զաչս թշնամեացն բուռն դէպ կալեալ (Բ Մակ., Ժ, 30): Ափիբերա՛ն արա զնոսա *հրամանօքն* Քրիստոսի (Ոսկ.,) և այլն:

Պետք է նշել, սակայն, որ գործիականով բնության խնդիր պահանջելը նշված հարադրավոր բայերի էական հատկանիշներից մեկը չէ: Փաստերը վկայում են, որ գործիականով խնդիր կարող են պահանջել նաև գրեթե բոլոր մյուս միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը, սակայն այդ խնդիրները ոչ թե մշտապես ենթադրվում են՝ պայմանավորված տվյալ բայերի բովանդակության պլանով, այլ կիրառվում են ըստ խոսքային իրադրության մեջ առաջացած անհրաժեշտության: Հենց այս հանգամանքն էլ ցույց է տալիս, որ գործիական հոլովով խնդիրները հիշյալ բայերի համար պարտադիր չեն և արժույթի տեսանկյունից կարևորություն չունեն:

Գործիական հոլովով բնության խնդիր չեն պահանջում այն միարժույթ հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ինքնին մի բարդություն է, որի բաղադրիչների միջև առկա է «գործիական հոլովով խնդիր-բայ գերադաս անդամ» շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ *ապտակալից* առնել (Ոսկ.), *ապտակակոծ* առնել (Ոսկ.), *հարցաքնին* առնել (Բուզ., 48), *ձաղակոծ* առնել (Ոսկ.), *ծիահալած* առնել (Բուզ., 127), *նիզակակուր* առնել (Աղեքս.), *ցնորակոծ* առնել (Կոչ.), *քարակոշկոծ* առնել (Բուզ., 128), *կարթակոտոր* առնել (Ծննդ., ԽԹ, 6), *հրակէզ* առնել (Եղիշէ, 66), *մետալից*

առնել (Ողբ., Գ, 8), *քարալից* առնել (Ողբ., Գ, 16), *ալեկոծ* առնել (Վեցօր.), *մտայոյգ* առնել (Դան., Բ, 29), *լաստակոտոր* առնել (Վեցօր.), *լարաբաժին* առնել (Ա Մակ., Գ, 36), *շերտակոտոր* առնել (Պիտ.), *ջերմակիծ* առնել (Ագաթ., 228) և այլն:

Այսուհանդերձ, նման կարգի որոշ հարադրավոր բայեր կարող են պահանջել գործիական հոլովաձևով արտահայտված բնության խնդիր ևս. սա այն դեպքում, երբ հարադրով արտահայտված միջոցի խնդրի գաղափարը մղվում է երկրորդ պլան: Օրինակ՝ *Սպարափակ* առնել *երիզացօքը* (ՆՀԲ-ում՝ երիզացուվքն-Գ.Խ.) գտեղի կոռույն (Փարպ., 150):

Նույն կարգի հարադրավոր բայերը գործիականով խնդիր կարող են պահանջել նաև, եթե վերջինս փոխանվանաբար է գործածվել. Ինքեանք զինքեանս նետաձիգ առնէին միշտ *բանիւք* իւրեանց (Ոսկ.): Սակայն այս խնդիրները նույնպես պարտադիր չեն, և սրանց առկայությունը չի փոխում հարադրավոր բայերի արժութային գորությունը¹⁴⁴:

Որոշ հարադրավոր բայերի գործիականով արտահայտված բնության խնդիրը խոսքում բացակայում է ոչ թե նախապես նշված լինելու պատճառով, այլ քանի որ այն խոսքից դուրս անգամ միարժեք կերպով ենթադրվում է տվյալ բայի բովանդակության պլանից: Օրինակ՝ *Կիսախողխող առնել* բայի համար գործիականով խնդիր է ենթադրվում *սրով* բառաձևը, ուստի վերջինս իմաստային տեսանկյունից դառնում է անկարևոր և, հետևաբար, չի հիշատակվում. *Կիսախողխող* զքարշողսն *առնէին* (Խոր., 296): Այդպիսի բայերից են նաև՝ *կոխան արկանել*, *բուռն հարկանել* և այլն: Օրինակ՝ *կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք* (Եզնիկ, 58): Բուռն հարկանիցեն զդրօշակ (Ագաթ., 230) և այլն:

Անշուշտ, նշված և այս տիպի բայերը խնդրառությամբ ոչ թե միարժույթ են, այլ երկարժույթ: Այս փաստի օգտին են խոսում այն նախադասությունները, որոնցում ենթադրվող միջոցի գործիականն ունի բառային արտահայտություն և ճշգրտում է գործողության կատարման միջոցը: Օրինակ՝ Արարեալ *սուսերաւ* կիսակտուր զգլուխ նորա (Խոր., 307): Կես դիմաց նորա ի վայր բերէր *սուսերաւ* (Խոր., 172): Երգէին նմա բուռն

հարկանել գործաբար¹⁴⁵ վիճաց *ճեռօք* (Խոր., 115) և այլն:

Գործիականով բնության խնդիր չեն կարող պահանջել կամ ենթադրել մաս գործիական հոլովով արտահայտված հարադիր ունեցող բարդությունները. Ջփայտակերտն *հրով դատել* (Գ Մակ., Ե, 23): Որ կարող իցել *դնել գրով* բանս դիմադարձութեան (Բուզ., 85):

Միշտ չէ, սակայն, որ խնդրառության միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի հետ կիրառվում է որևէ բնության խնդիր, թեկուզ այն տվյալ բայերի համար արժույթի տեսանկյունից կարևորություն չներկայացնի: Մի շարք միարժույթ հարադիր բայեր գրաբար աղբյուրներում չունեն ու չեն ենթադրում բնության խնդիր, այլ հանդես են գալիս միայն սեռի խնդրի հետ կապակցված: Այդ բայերից են՝ *աւար առնուլ, յաւարի առնուլ, յաղերս խոնարհեցուցանել, ի բանի առնել, ի բաց թողուլ, ի գլուխ հանել* և այլն: Օրինակ՝ *Աւար առեալ գերկիր* (Խոր., 203): *Յաւարի գամենայն երկիրն* առեալ (Խոր., 234): *Կատարեաց ի գլուխ եհան գայս ամենայն* (Բուզ., 50): *Ի բաց թողէք պղծութեան պաշտամունսդ* (Ագաթ., 121): *Ջհայրն խոնարհեցուցանէ յաղերս* (Սեբեր.) և այլն:

Որոշ ներգործական սեռի միարժույթ հարադրավոր բայեր պահանջում են միջնորդական կառավարմամբ բնության խնդիրներ, որոնք չեն բխում այդ բայերի բովանդակության պլանից, ուստի և պարտադիր կառավարման, այսինքն՝ արժույթի արտահայտություններ չեն: Օրինակ՝ *Բազմապատիկ արասցէ զքեզ քան զհարս* (Բ Օրեն., Լ, 5): *Զմոգպետն ընդ նոսա ի համար արկանել* (Եղիշէ, 78): *Զայս վասն հաւատոցն* ծայրաքաղ արարեալ (Խոր., 158) և այլն:

Գրաբարի միարժույթ ներգործական սեռի մի շարք հարադրավոր բայեր (ընդգծված են) ունեն դարձվածային արժեք: Օրինակ՝ *Զանմեղ մարդիկ յինքն արկանէր* (Եղիշէ, 64): Ոչ ինչ *առ յուս կալեալ* մեծարեաց զնա (Բուզ., 106): *Հանել* զնա յայսց կենաց (Ագաթ., 32): *Բարձրէ* զնոսա *ի կենաց* (Փարպ., 88): *Հնժան հարկանել* զքանանացիսն (ՆՀԲ): *Յայ յու և հայ հաչ* զվարանեալն *առնիցենք* (Ոսկ.): *Յայ կարդալ* զնա (Ոսկ.): *Մի՛ հարցուք* զդա *յոգի* (Ծննդ., ԼԷ, 21): *Ունչս ունել* զդա (Եփր.): Իշխեցին

յընչաց քերել զՄովսէս (Ագաթ., 288): *Ի սուր արկեր զնոսա* (Ողբ., Բ, 21): Զաջ արս *հանին ընդ սուր* (Փարպ., 159): Մերք ի սա *տայ ձեռն*, մերք ի նա (Եզնիկ, 256): *Տու ի* զնա լեզուի քում (Մծբն.): Զամենայն քաղաքն *ի բունն արկաներ* (Ա Մակ., Ե, 28): *Ի բունն առնուլ* զնոսա (Խոր., 134)¹⁴⁶: Սրբեալ զվեմսն *հրով* (Բ Մակ., Ժ, 3): *Հանիցեն* զձեզ *ի ձեռաց* իմոց (Ագաթ., 327): *Ընդ ոտն հարին* զպատիւ (Բուզ., 37): Զանայ *զքռամբ արկանել* զՈնիա (Բ Մակ., Դ, 34): *Ընդ ոտն հարին* զպատիւ (Բուզ., 37): Զուխտ Տեառն *առ ոտն կոխիցեն* (Բուզ., 217): Զերդումն *առ ոտն հարեալ* (Փարպ., 133): *Առեալ զմարմինս իմ յատամունս* իմ (Յովբ, ԺԳ, 14): Հմմտ. նաև *ի բիծ տանիմ* («արատավորել») (Ոսկ.): Որոց *զոգիս ի բաց եղեալ* (Խոր., 172) և այլն:

Բ.1.3.2. ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՄԲ ԵՐԿԱՐԺՈՒՅԹ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը զրաբարում մեծ թիվ չեն կազմում: Դրանք, իբրև կանոն, զորություն ունեն պահանջելու մի սեռի և մի բնության խնդիր:

Հատկանշական է, որ սեռի խնդիր պահանջելու տեսանկյունից խնդրառությամբ երկարժույթ հարադրավոր բայերը միատարր են. չհաշված մեկ-երկու բացառություն՝ դրանք ենթադրում են հայցական հոլովածևով արտահայտված ուղիղ խնդիր: Օրինակ՝ *Ձորս* հնազանդ իւր արարեալ Հայկ (Խոր., 33): *Ձնիզակն* յինքն հաներ յարքայէն (Բուզ., 204): Արժանի առնել *զմեզ* յաւիտենական պատույն (Փարպ., 100): Զտառապանօք *կեանս* նորա մատն արար բազմաց (Սիր., ԻԹ, 35): Յանդիման արար նոցա Մովսէս *զեղիագար* (Թիւ., ԼԲ, 28): Իշխէր ի համար ածել *զինքն* անհամեմատին (Սեբեր.): *Զսատանայ* կոխան տայր հաւատացելոց իւրոց (Ագաթ., 224) և այլն:

Խնդրառությամբ երկարժույթ բայերի սեռի խնդիրը, հայցական հոլովից բացի, կարող է արտահայտվել նաև մի երկրորդական նախադասությամբ: Օրինակ՝ Եւ տայր պատգամ, *թէ*, որ ինչ եղևն, *այն ահա թողեալ լիցի* (Բուզ., 108): Յուշ առնելով (թագաւորին, մեծամեծացն և ամենեցուն—

Գ.Խ.), *զի և նոցա Տէր զոյ յերկինս* (Բուգ., 65): Որով յայտ արար, *եթէ ոչ հակառակ օրինացն ուսուցանէր* (Եզնիկ, 278): Յայտ արարեալ նոցա, *թե ոչ սակաւիկ ինչ կասեցուցեալ գերեզմանին զաստուածագործ զօրութիւնն* (Ագաթ., 245): Եւ խելամուտ արարից զքեզ, *զոր պարտ իցէ խօսել* (Ել., Դ, 12) և այլն:

Երբեմն սեռի խնդիրն արտահայտվում է բաղադրյալ կապակցությամբ՝ «*ԱՆՉՆ բառի եզակի գործիական հոլովածն–ԱՆՉՆ բառի հոգնակի հայցական հոլովածն*» մասնակադապարով. Դուք *անձամբ զանձինս* այլում ի ծառայութիւն արկանէիք (Եղիշէ, 56):

Բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով որոշ կառույցների սեռի խնդիրը կարող է բառային արտահայտություն չունենալ: Օրինակ՝ *Չսուրբ հաւատ ուխտին մերոյ մատնեալ՝ ծաղր ետուր առնել անօրինացն* (Փարպ., 27): *Ի բաց բառնալ (զԱրտաշէս–Գ.Խ.) ի թագաւորութենէ այտի* (Փարպ., 20) և այլն:

Ներգործական սեռի երկարժույթ որոշ բայեր էլ (*յայտ առնել, հարցումն առնել, ծանուցումն առնել* և այլն) անմիջական կառավարմամբ կապակցվող սեռի խնդրի փոխարեն գոյություն ունեն պահանջելու միջնորդական կառավարմամբ կապակցվող բնության խնդիր, որը կարող է արտահայտվել այնպիսի կապական կապակցություններով, ինչպիսիք են՝ «*Չ+բացառական հոլովով կապվող բառածն*», «*ՎԱՄՆ–սեռական հոլովով կապվող բառածն*», «*ՍԱԿՍ–սեռական հոլովով կապվող բառածն*» և այլն: Հմմտ. *Չոր Տէրն իսկ յայտ արար* (Եզնիկ, 179) և Այնու *զօղոյս* յայտ առնէ (Եզնիկ, 90) և այլն:

Ինչ վերաբերում է երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի բնության խնդիրներին, ապա վերջիններիս բովանդակության, հետևաբար նաև արտահայտության պլաններում նկատելի է անմիջականություն: Պատճառն այն է, որ եթե երկարժույթ բայերն ըստ սեռի ներկայացնում են միևնույն՝ ներգործական դաշտը, ապա իբրև բառ՝ հանդես են բերում իմաստային զանազան դրսևորումներ: Այսպես՝ թեև *յանձն առնել* և *ի բաց հանել* հարադրավոր բայերը երկուսն էլ ներգործական սեռի են և

խնդրառությամբ էլ՝ երկար-ժույթ, սակայն, կախված բառիմաստից, դրանցից մեկը պահանջում է տրա-կանով արտահայտված բնության խնդիր, մյուսը՝ բացառականով: Հմմտ. Ջիրս *մմա* յանձն առնէր (Փարպ., 73) և Թագա-տուն Արշակ գտուսերն ի բաց հանէր *ի մմանէ* (Բուգ., 59):

Խնդրառու գերադաս անդամի հետ բնության խնդիրները կապա-կցվում են երկու եղանակով՝ ա) անմիջական կառավարմամբ և բ) միջ-նորդական կառավարմամբ:

Անմիջական կառավարմամբ կապակցվող բնության խնդիրները կա-րող են արտահայտվել տրական, բացառական և գործիական հոլովնե-րով¹⁴⁷: Օրինակ՝ Ընդէ՞ր եդեր զիս *քեզ* ոսոխ (ՆՀԲ): Ջբանս հաւատարիմ առնէր *մմա* (Բուգ., 108): Ի բաց դարձուցանել գնոսա *յիրացն* (Փարպ., 22, 113): Չորոմնն քաղահան *ի ցորենոյն* արարեալ (Բուգ., 96): Յամենայն *մարմնոցն* փուշն ի բաց թափել (Բուգ., 228): Երգէին նմա բուռն հարկանել գործաքար վիմաց *ձեռօք* (Խոր., 115) և այլն:

Միջնորդական կառավարմամբ կապակցվող բնության խնդիրներն արտահայտվում են կապական կապակցություններով: Օրինակ՝ Ժաման առնել զնա *յօրհնութիւն* (Սաղմ., Ի, 4) և այլն:

Երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի պահանջած բնության խնդիրը կարող է արտահայտվել նաև այլ միջոցներով, որոնք 5-րդ դարի գրաբարի համար առանձնապես տիպական չեն: Դրանցից է, օ-րինակ, *բնության խնդիր-բացառական հոլովով բաղադրիչ* կապակցու-թյունը, որտեղ բաղադրիչների միջև առկա է մասի և ամբողջի հարաբերու-թյուն: Օրինակ՝ Ոչ ետ թոյլ և *ոչ միում ի նոցանէ* պաշտել զնա (Եզնիկ, 246) և այլն:

Յանձն առնել, տեղեակ առնել, գոյժ առնել, լսելի առնել և այլ հա-րադրավոր բայեր անմիջական կառավարմամբ բնության խնդիրների փո-խարեն կարող են պահանջել միջնորդական կառավարմամբ բնության խնդիրներ, որոնք նախորդների հետ հոմանշային են: Հմմտ. *Այսմ ամե-նայնի* զնոսա տեղեակ առնէր (Եղիշէ, 86) և Տեղեակ ևս առնէր զնա *վասն խրամատութեան* պահակին Հոնաց (Եղիշէ, 142) և այլն:

Որոշ կառույցների մեջ բնության խնդրի փոխարեն կիրառված է վերջինիս հետ քերականական նշանակությամբ առնչվող պարագա: Հմմտ. *Նմա* յանձն առնել զՀայս (Խոր., 277) և *Ի ծեռս*¹⁴⁸ քո յանձն առնեմ զհոգի իմ (Կորին., 88): Գոյժ արկանել *մմա* զիրոյ առնն տարապարտ կորուստն (Բուզ., 100) և Գոյժ արկանել *յեզիպտոս* (Երեմ., ԽԶ, 14): Լսելի արար *մեզ* զայն (Դատ., ԺԶ, 24) և Արքն երկոքեան գոյժ աղաղակի լսելի առնեին *յականջս* հայրապետին (Փարպ., 125) և այլն:

Այս կերպ բնության խնդրի փոխարեն պարտադիր կերպով տեղի պարագա են պահանջում կամ ենթադրում նաև բացառական հոլովով բնության խնդիր պահանջող մի շարք բայեր. *յինքն արկանել*, *ի բաց որոշել* և այլն: Օրինակ՝ Որոշեցին ի բաց զամենայն խառնեալսն *յհսրայել* (Նեեմի., ԺԳ, 3): Կամի *այսրէն* յինքն արկանել զնա (Ագաթ., 148):

Փաստերը վկայում են, որ բնության խնդիրը ևս, ինչպես սեռի խընդիրը, միշտ չէ, որ բառային արտահայտություն ունի: Խոսքային որոշ իրադրությունների մեջ նշված խնդիրը երբեմն բացակայում է հասկանալի լինելու, անկարևորության կամ այլ պատճառով¹⁴⁹: Օրինակ՝ *Գոյժ առնել* զանհնարին կործանումն (Բուզ., 17): Պատմեցէ՛ք յագգս և *յու՛րաքէք*, թէ «Առաւ Բաբելոն, յամօք եղև Բել» (Երեմ., Ծ, 2): Ուր և մեծ կայսրն Կոստանդիանոս մտեալ *յոստովան լինէր* զհաւատն և օրհնութեամբ պսակեալ ի ժողովոյն... (Ագաթ., 465): Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւնս զանձն աշակերտելոց դնել. մանաւանդ *յուշ առնելով* զտէրունականն (Կորին., 82): *Ի բաց թօթափել* այսուհետև զամենայն չարութիւն (Ա Պետր., Բ, 1): Որով *ի բաց թօթափեալ* զաղտեղութիւն (Յովբ, Ա, 21): Ջերևումն *յայտ առնէ* մարգարէն (Փարպ., 34): Յաղագս *յինքն առնելոյ* զերկիրն Հայոց (Բուզ., 201): Ջերկիւղն *ի բաց մերժեցին* (Եղիշէ, 161) և այլն:

Ըստ տարբեր արտահայտության պլանների ունեցող բնության խընդիր պահանջելու գործության՝ խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը բաժանվում են մի քանի խմբի.

1. բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, որպես արժույթի պարտադիր

եզր, պահանջում կամ ենթադրում են մակ մի բնության խնդիր՝ արտահայտված տրական հոլովով. *յայպն տալ, յանձն առնուլ*¹⁵⁰, *յանձն առնել, անուն դնել, ապաստան առնել, ապաւեն առնել, յառակ առնել, առաջի առնել, արժանի/ս/ առնել, արմատակից առնել, բան տալ, գիտաց առնել, գիտուն առնել, գոյժ արկանել, գոյժ առնել, ի գործ ածել, ի դէմս բերել, դէտ տալ, երևելի առնել, թելադիր լինիմ, թոյլ տալ, թօշակ առնել, լու առնել, խելամուտ առնել, խոստովան լինիմ, խորհուրդ առնել, ծաղր առնել, ծանօթս առնել, ի ծառայութիւն արկանել, ի կնութիւն առնուլ*¹⁵¹, *կոխան տալ, համակամ առնել, ի համար ածել, հաւասար առնել, հաւատարիմ առնել, հնազանդ առնել, մատն առնել, յանդիման առնել, յանօր տալ, յաշտ առնել, շնորհս առնել, շնորհաւ տալ, ոսոխ դնել, պատգամ տալ, պատիւ տալ, պատուէր տալ, ի վայր տալ, ի վարձու տալ, ի վերայ դնել, ի վեր հանել, տեղեակ առնել, տեսիլ առնել և այլն: Օրինակ՝ Մի տար *գեկեղեցի* քո յայպն կատականաց անօրէն *իշխանիս* (Եղիշէ, 49): *Չմնացեալսն* յանձն առնել *շնորհացն* Աստուծոյ (Կորին, 92): Դնէր *մմա* անուն *Որմիզդ* (Եզնիկ, 123): *Ջրեզ* ապաւեն *իմձ* արարի (Սաղմ., ԴԽԳ, 2): Հրամայէ առաջի առնել *մմա գղիւանն* արքունի (Խոր., 30): *Ընծայից* արժանի առնէր *գնոսա* (Եղիշէ, 83): Գիտուն արար *զձեզ պատուիրանացն* արարչութեան (Ազաթ., 429): Առնիցեն *զիս* գլխապարտ *թագաւորին* (Դան., Ա, 10): Գոյժ արկանել *զայս ազգաց* (Երեմ., Դ, 16): Չխոսանացեալ *միտսն* ի գործ ածել *բարւոյ* (Յճխ.): Դէտ ետու *զքեզ տանդ* (Եզեկ., ԼԳ, 7): Խելամուտ առնեմ¹⁵² *զքեզ* ուղիղ *շաղաց* (Առակ., Դ, 11): *Չհանճար* արա *քեզ* ծանօթ (Առակ., Ե, 4): Յանձն առնել *գնոսա Հոգւոյն* Սրբոյ (Եղիշէ, 156): Տալ պատիւ *զայս իմձ* (Փարպ., 115): *Չանձինս* ի վերայ դնել *սիրոյ* թագաւորին (Եղիշէ, 163): Յանդիման կացուցանեմ *Տեառնդ զբանս* (Թուղթ, 198): Հաւասար առնէր *զանձն Աստուծոյ* (Յովհ., Է, 18): *Չբանս* հաւատարիմ առնէր *մմա* (Բուգ., 108):*

2. Բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, պահանջում կամ ենթադրում են մի բնության խնդիր՝ արտահայտված բացառական հոլովով: Այդ բայերից են՝ *ազատ առնել, ամրածածուկ առնել, անարատ առնել, անմարդի*

կացուցանել, անքակ առնել, արմատակից առնել, բարձր առնել, ի բաց առնել, ի բաց առնուլ, ի բաց դարձուցանել, ի բաց զերծուլ, ի բաց ընկենուլ, ի բաց թափել, ի բաց թողուլ, ի բաց թօթափել, ի բաց կալ, ի բաց հանել, ի բաց ձգել, ի բաց մաքրել, ի բաց մերժել, ի բաց մերկանալ, ի բաց որոշել, ի բաց ունիմ//կալայ, ի բաց պարզել, ի բաց պարսպել, ի բաց վարել, ի բաց քերել, բուռն հարկանել, դողումն կալնուլ, ի դուրս կորզել, յերաշխի առնուլ, յերկրայս առնել, թափուր կացուցանել, թոյլ առնել, յինքն հանել, յինքն յափշտակել, յինքն արկանել, յինքն առնուլ, յինքն ունիմ, խոտան առնել, ծաղկաժողով առնել, ծաղկաքաղ առնել, կին ածել, հաւ առնել, հեռի առնել, յետակորոյս առնել, յուսահատ առնել, պահ ունիմ, սուրբ առնել, փոխ առնուլ, քաղահան առնել, քաղ հանել և այլն: Օրինակ՝ Յայնցանէ բարձր արարեր *զիս* (Սաղմ., ԺԷ, 49): Ազատ առնել *զնա ի կասկածանաց* (Եզնիկ, 137): Ամ-բաժածուկ *ի յարձակմանց զպտուղսն* առնելով (Պիտ.): Անարատ արար *զիս ի հալածչաց* (Երեմ., ԺԱ, 15): Քաղաքն անմարդի կացուցանել (Բ Մակ., Թ, 14) խմենայն *բնակչաց* իւրոց (Բուզ., 146): Ի բաց արարէք *ի ձէնջ զԱստուածս* (Յեսու, ԻԴ, 14): *Ձեպիսկոպոսութիւնդ* ի բաց առնում *ի քէն* (Փարպ., 114): *Ձհանդերծիկն* ի բաց զերծուին *ի նմանէ* (Ագաթ., 107): Ի բաց ընկեցէք *յանձանց* ձերոց *զցամաքեալ* զօսացեալն (Ագաթ., 261): Ի բաց հանել *զերկաթսն ի ձեռաց* (Փարպ., 91): *Ձգօրսն* Յունաց յերկրայս արար *յուխտէն* (Եղիշէ, 93): Խոտան արարեր *զիս ի քոց ծառայից* (Իմաստ., Թ, 4): Յետակորոյս առնել *զնա ի մարդկանէ* (Եւս.): *Ձգիրս* ծաղկաքաղ առնել *ի հայոց մնացորդաց* յարևելից *գրոց* (Մաշտ.): Ի *զաղտնեաց* իմոց սուրբ արա *զիս*, Տէր (Սաղմ., ԺԸ, 13) և այլն:

3. Բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են նաև մի բնության խնդիր՝ արտահայտված *գործիական* հոլովածով: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գործիական հոլովածնով պարտադիր բնության խնդիր պահանջող երկարժույթ հարադրավոր բայերը նկատելիորեն սակավաթիվ են. *բուռն հարկանել, ի մէջ փակել, լի առնել, կիսախողխող առնել, կոխան արկանել* և այլն: Օրինակ՝ *Ձօրօքն* զնա ի մէջ փակէր (Եղիշէ, 118): Լցին զգօրսն խոովութեամբ

և լի արարին *ահիւ* և *գողութեամբ* (Գ Մակ., 2, 15) և այլն:

4. Բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են նաև մի բնության խնդիր, որն արտահայտվում է կապական կապակցություններով, այդ թվում՝

ա) «ԱՌ–սեռական հոլովով կապվող բառածև». Մօտ ունեք *առ իւր զհմաստունս* (Փարպ., 161):

բ) «ԱՌ–տրական հոլովով կապվող բառածև». Նկուն արար Աստուած իմ *առ ձեզ* (Բ Կոր., ԺԲ, 21):

գ) «ԱՌ–հայցական հոլովով կապվող բառածև». Զամենայն մարդ պատրաստական *առ բանն* Աստծոյ առնէր (Բուգ., 65):

ե) «ԸՆԴ–տրական հոլովով կապվող բառածև». Ուխտ *զայս* դնէր ընդ ամենայն մարդոյ (Ագաթ., 448):

զ) «ԸՆԴ–հայցական հոլովով կապվող բառածև». Ստեաց Արշակ ամենայն ուխտին, *գորեղ ընդ նախարարսն* (Խոր., 294): *Ընդ վարդապետս* օրինացն *բանս* ի կիր արկեալ էր (Ագաթ., 202) և այլն:

է) «ԸՆԴԴԷՄ–սեռական հոլովով կապվող բառածև». Եզր կալաւ *ընդդէմ զգաստին նենգութիւն* պազշոտութեան (Նիւս.):

ը) «Ի(յ)–(+հայցական հոլովով կապվող բառածև». ՅԱստուած ապաստան առնէին *զկեանս* առնն հաւատացելոյ (Եղիշէ, 156): Աշխատ արարի *քեզ ի ծախս* (Ես., ԽԳ, 23): Ժաման առնել *զանձն* իւր *ի վաստակս* (Մծբն.):

թ) «ՎԱՄՆ–սեռական հոլովով կապվող բառածև». Տեղեակ ևս առնէր *զնա վասն խրամատութեան* պահակին Հոնաց (Եղիշէ, 142): Գիտակ արարին *զթագաւորն վասն սրբոյն* (Ագաթ., 449) և այլն:

Բ.1.4. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ՊԱՐԱԳԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի որոշ հարադրավոր բայեր, սեռի խնդրից բացի, աչքի են ընկնում պարտադիր պարագաառությամբ. պահանջում կամ ենթադրում են տեղի պարագա, որն առավել

ամբողջական է դարձնում այդ բայերի միջոցով արտահայտված գործողության ոլորտը. Գահավեժ առնել զնոսա *ի ծայրից* բարձրաւանդակին (ԲՄնաց., ԻԵ, 12): Շկօթակ առնել զնոսա յանդարձ *օտարութիւն* (Եղիշէ, 49): *Ի միջոյ ժանեաց* զիմն ի դուրս կորզեցից (Սաղմ., ԿԷ, 23):

Անշուշտ, այս դեպքում խոսքը չի վերաբերում հետևյալ հարադրավոր բայերին, որոնց տեղի պարագաառությունը պարտադիր չէ, քանի որ այն անմիջապես չի բխում այդ բայերի բովանդակության պլանից: Օրինակ՝ *Ի կենաց արկանել* զնա *յեզիպտոս* (Եւս.): *Յամօթ առնիցէ* զքեզ *ի բազմամբոխի* (Սիր., ԽԲ, 11): *Զծառայ այր առաջի նորա զան հարկանեն* (Եզնիկ., 82): *Դիաքաւալ կացուցանել* զամբոխն *ընդ երեսս դաշտին* (Խոր., 200): *Մտայոյզ առնել* զքեզ *յանկողնի* քում (Դան., Բ, 29): *Սրոյ ճարակ* զամենեսեան *տալ ընդ երեսս դաշտին* (Եղիշէ, 76):

Հարկ է նկատել, որ պարտադիր պարագաառությամբ աչքի ընկնող հարադրավոր բայերի պահանջած տեղի պարագայի իմաստը կարող է արտահայտվել տեղանիշ գոյականների թեք հոլովաձևերով կամ էլ վերջիններիս մասնակցությամբ ձևավորված նախդրավոր կապակցություններով¹⁵³: Նշված միջոցներով արտահայտվում են սկզբնակետի, անցման, վերջնակետի կամ քում տեղի պարագայի քերականական նրբիմաստներ: Օրինակ՝ Գետավեժ առնելին զնոսա *ի Տափերական կամրջացն* (Ագաթ., 23), Զմնացեալն փախստեայս առնելին *յերկիրն* Պարսից (Բուզ., 129): Դարահոս առնել զդի *ի խորխորատ* (Ոսկ.): Բնաջինջ առնել զյեղուզակսն *ի լեռնէն* (Խոր., 130), անհետ առնիջիք զխմոր *ի տանց* (Ել., ԺԲ, 13): Զկեսն առաջի իրեանց փախստական առնելին (Բուզ., 128) *մինչև ի կողմանս* Պարսից (Բուզ., 123): Հալածական առնել *յաշխարհէն* Աղուանից (Եղիշէ, 74) *մինչև ի սահմանս* Յունաց (Ագաթ., 24): Հալածական զնոսա *ընդ մեջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի* արկանել (Խոր., 45) և այլն:

Պարագաառական արժույթը միշտ չէ, որ բառային արտահայտություն ունի: Ասվածը վերաբերում է այն կառույցներին, որոնցում տեղի պարագայի քերականական իմաստը կա՛մ ակնհայտ է, քանի որ հանդես է եկել հարադրի տեսքով, կա՛մ էլ ոչ կարևոր, ինչպես՝ Ի պահ առնուլ զնա (Եփր.):

Ի պահ տալ զմեռեալն (ՆՀԲ): Ի վայր վաթեցին զաղիս նորա (Ագաթ., 107):
Զնոսա ի բաց արձակեաց (Փարպ., 84) և այլն:

Կան տեղի պարագաառու երկարժույթ հարադրավոր բայեր, որոնց
պահանջած կամ ենթադրած տեղի պարագաների իմաստներն իրարից
տարբեր են: Օրինակ՝ Եւ պինդ ունիցին զտախտակն յօղոց նորա *մինչև
ցօղս* վակասին ի նիւթոյ կապուտակէ (Ել., ԻԸ, 28) և այլն:

Կան մի շարք պարագաառու համադրական բայեր, որոնք արդեն 5-
րդ դ. իրենց իսկ պահանջած պարագայի հետ միասին ձեռք են բերել մեկ
բառային արժեք՝ վերածվելով հարադրավոր բայերի: Սրանք զորություն
ունեն պահանջելու մեկ այլ տեղի պարագա, որը սովորաբար տվյալ բար-
դության հարադրից տարբերվում է արտահայտության և/կամ բովանդակույթ-
յան պլաններով (նկատի ունենք տեղի պարագայի նրբիմաստները, տա-
րածության ընդգրկման չափերը և այլն): Այդ բայերից են (ընդգծվում են)՝
արտաքս ընկենուլ (զոմն-Գ.Խ.) ի սենեկէն (Խոր., 195), զգագանամիտս ի
միջոյ *ի բաց հալածել* (Բուզ., 241), զախտածէտսն ի միջոյ *ի բաց կորու-
սանել* (Ագաթ., 149, 279), զբարձակիցսն ի բազմականացն *ի բաց պուղել*
(Խոր., 195), *ի նեղ արկանել* զբաղաքն ի ծովէ և ի ցամաքէ կուսէ (Ա Մակ.,
ԺԵ, 14), ի վերուստ *ի վայր իջուցանել* զամրականսն (Խոր., 314), ի կառացն
ի վայր կործանել զնոսա (Ագաթ., 113), զմեռելութիւն *ի վայր կործանել*
յաթոռոյն (Խոր., 362), *ի բանտի դնել* ի Կաւկաս (Խոր., 184), Եւ անդ *ընդ
սայլի ցից հանեալ* (զնա-Գ.Խ.)՝ սատակեցին (Խոր., 300), *ի դուրս տարցեն*
զնա յԱրշակաւանէ (Բուզ., 91), *արկանել* զմեզ *յուղի* առ քեզ¹⁵⁴ (Փարպ.,
91), զկտակարանն յաշխարհէս Հայոց *ի բաց տանիք* (Փարպ., 161) և այլն:

Հարկ է նշել, սակայն, որ ասվածը բնութագրական է ոչ բոլոր հարա-
դրավոր բայերին, որոնց հարադիրն ինքնին մի տեղանիշ բառածէ է կամ
նախդրավոր կապակցություն: Օրինակ՝ *յառաջ ածել* զիս (Բուզ., 142), *յա-
ռաջ կոչել* զիշխանս (Փարպ., 84), *զիւր չարախօսութիւնն* յառաջ վարել
(Բուզ., 99), որդիս *առաջի կացուցանել* (Սիր., ԻԳ, 23), զքեռորդիդ *ի բաց
ածել* (Եղիշէ, 198), զգարշացեալն *ի բաց անցուցանել* (Ագաթ., 279), զգունդ
կոչել ի բաց (Խոր., 276), զլաւս *յետս տանիմ* (Փարպ., 138), *թողուլ ի ներքս*

զնոսա (Փարպ., 165), տիկ *ունիցի ըստ անձին* (Ոսկ.), *բառնալ* զմի մի *ըստ անձին* (Փարպ., 141), զգօրսն *առաջի արկանել* (Խոր., 107), առակ *առաջի* իսկ *դնել* (Ագաթ., 187), *յառաջ մատուցանել* զբանս (Խոր., 34), զհայրենի տերութիւնն *ի բաց կողոպտեցան* (Եղիշէ, 164), *ի բաց կտրել* զսրունս (Խոր., 158), զՄերութանայ զգլուխն *ի բաց հատանել* (Բուզ., 214), զջուրսն *ի բաց մղել* (Ագաթ., 275), *ի բաց տալ* զինչսն (Խոր., 180), երթիցուք *քաղեսցուք* զայն *ի բաց* (Մատթ., ԺԳ, 28), զվռամական կրակն *ի ներքս դնել* (Եղիշէ, 70) և այլն:

Ինչ վերաբերում է գրաբարի միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի պարագաառության այլ դրսևորումներին, ապա նկատելի է, որ դրանք, սովորաբար, պարտադիր չեն և անմիջականորեն չեն բխում այս կամ այն բայի իմաստային պլանից, հետևաբար այդ բայերի համար արժույթի տեսանկյունից կարևորություն չեն ներկայացնում: Օրինակ՝ *Ջնոսա այսօր ձերբակալս առնենք* (Փարպ., 158): *Ջնախարարեանն բանսարկութեամբ* արկ ընդ միմեանս (Եղիշէ, 23): *Սովամահ առնել զանձն ըստ հրամանին* (Բուզ., 77): *Ջգաւառս սրով դատի յանխնայ* (Խոր., 263): *Ի ժամուն* յայնմիկ առ անձն ունէր զբարկութիւն (Խոր., 281): Ի ներքս արկանել զքրիստոնէութիւն *կեղծաւորութեամբ* (Եղիշէ, 15): Պատուհաս ի վերայ ածեալ *վասն յանդգնութեան* (Եզնիկ, 37): Ախտահալած *բժշկութեամբ* մերձաւորս արարեալ (Ագաթ., 361): *Ջգիշերն սաղմոսիւք* ի գլուխ տանէին (Եղիշէ, 156): *Յանկարծակի յեղակարծում ժամու* զբաղաքն ի բուն առնոյր (Ա Մակ., Ե, 28): Իշխէի զվատացեալսն *զլխով* պատիժ առնել (Փարպ., 137) և այլն: *Ջօրահատոյց առնէր* Շապուի զգօրս իւր *ի վերայ աշխարհին* Հայոց և *ի վերայ գորացն* Յունաց (Բուզ., 161):

Առավել հետաքրքրական փաստեր է ընձեռում ներգործական սեռի հարադրավոր բայերի՝ պարագաառության տեսանկյունից դրսևորվող սահմանափակության ուսումնասիրությունը:

Լեզվական փաստերը վկայում են, որ հարադրավոր բազմաթիվ բայեր սահմանափակություն ունեն ոչ միայն տեղի պարագաառության տեսանկյունից: Հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ դեպքերին:

Ընդերկար առնել զանօրէնութիւնս (Սաղմ., ՃԻԸ, 3), *քաջեփ առնել* զայս (Աղեքս.) բառակապակցութիւնների հարադրավոր բայերը չեն կարող չափի պարագաառու լինել, քանի որ տվյալ պարագայական իմաստն արդեն իսկ արտահայտված է նշված հարադրավոր բայերի հարադիրների բովանդակության պլանում:

Չափի պարագաառության տեսանկյունից սահմանափակություն ունեն գլխադրական *բնաջինջ առնել* (Խոր., 130), գորս *բնաբարձ առնել* (Խոր., 340), *կիսակտուր առնել* զգլուխ (Խոր., 307), *կիսախողխող* առնել զքարշողսն (Խոր., 296), *կարեվէր խոցել* (Պիտ.), *կրկնարօր* և *երեքկնարօր առնել* զբանն (Սեբեր.) և այլ հարադրավոր բայեր, քանի որ սրանց հարադիրը միաժամանակ չափի պարագայի իմաստակիր է:

Չարամահ առնել զնա (Ագաթ., 111), *մեծամեծս կոտորել* (Եզնիկ, 289), *մանրակրկիտ առնել* (Կորիւն, 98), *դիւրընկալ առնել* զբանն (Ոսկ.), *հալածական առնել* զնոսա (Խոր., 45) և այլ հարադրավոր բայեր սահմանափակություն ունեն ձևի պարագաառության տեսանկյունից, քանզի սրանց հարադիրների բաղադրիչներից մեկը ձևի պարագայական իմաստ է արտահայտում:

Ինչպես հարադրավոր բայերի պահանջած սեռի կամ բնության խնդիրը, այնպես էլ այս կամ այն պարագայական իմաստը կարող է արտահայտվել ոչ միայն բառաձևով կամ կապական կապակցությամբ, այլ նաև երկրորդական նախադասությամբ. ՉՊոմպէոս ի քանի առնէր, *զի նովաւ դառնայցէ յԱսորիս* (Եւս.):

Ինչ վերաբերում է գրաբարի՝ խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերին, ապա վերջիններս գուրկ են պարագաառական արժույթից: Ասվածը կարելի է պատճառաբանել մի քանի տեսանկյուններից. մի դեպքում՝ այս բայերի պարագաառությանը խոչընդոտում է իրենց իսկ բայիմաստը, որի պահանջով որևէ պարագա չի ենթադրվում, մյուս դեպքում՝ կազմությունը, որտեղ ենթադրվող պարագան արդեն իսկ տվյալ բարդության անքակտելի բաղադրիչն է՝ տարբալուծված վերջինիս կազմության մեջ և այլն:

Առաջին դեպքում խոսքը վերաբերում է *սուրբ առնել, տեղեակ առնել, խելամուտ առնել, հնազանդ առնել, ազգատ առնել* և այսպիսի մյուս բայերին, որոնց հարադիրը անկախ կամ կախյալ գործածվող մի անուն է. *ժամ, ժաման, անուն, անարատ, անմարդի, պարտ* և այլն: Երկրորդ դեպքում խոսքը վերաբերում է այն բայերին, որոնք, սեռի խնդրից բացի, բնության խնդիր պահանջելու դեպքում խնդրառությանը դառնում են երկարժույթ և զրկվում պարագաառության հնարավորությունից. ի բաց մերժել *զանձն ի միաբանութենէ*, մօտ ունէր *առ իւր զիմաստունս* և այլն: Հակառակ դեպքում նշված բարդությունները դառնում են պարտադիր պարագաառու միարժույթ բայեր և զրկվում խնդրառությանը երկարժույթ լինելուց: Հմմտ. Առնու *ի նոցանէ* ի բաց *զիշխանութիւնն* (Խոր., 128) և Ի բաց առին *զնա ի դրաց* (Ագաթ., 103):

Գալով խնդրառությանը երկարժույթ ներգործական սեռի բայերի պարագաառական մյուս դրսևորումներին՝ պետք է նշել, որ դրանք արժույթի տեսանկյունից կարևորություն չեն ներկայացնում, քանի որ պարտադիր չեն. անմիջականորեն չեն բխում տվյալ հարադրավոր բայի բովանդակության պլանից, այլ կիրառվում են՝ պայմանավորված խոսքային իրադրությանը:

Երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը խոսքային տարբեր իրավիճակներում գործություն ունեն պահանջելու տարբեր պարագաներ, որոնք արտահայտված են լինում՝ հոլովածևով, նախդրավոր կապակցությամբ կամ երկրորդական նախադասությամբ [Յանօթ ետ քեզ գայն, *զի այնու առաքինանայցես* (Ոսկ.)], որոնցից վերջինը մեր կողմից հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել:

Հոլովածներից պարագաների արտահայտման միջոց է ծառայում գործիականը: Օրինակ՝ Սկսան *կարգաւ* յայտ առնել, թէ... (Եղիշէ, 134): Ի գործ ածել զխորհուրդն *զգուշութեամբ* (Ոսկ.): *Մինչև ի ծագս* երկրի լի առնել զքարոգութիւն բանին (Ագաթ., 359): *Յայն սակս* չառնի արժանի յարութեան (Եզնիկ, 291) և այլն:

Նախդրավոր կապակցություններով արտահայտված պարագաների ա-

ռումով պետք է նշել, որ վերջիններիս արտահայտման միջոց են ծառայում «*Զ+ հայցական հոլովով արտահայտված կապվող բառածև*», «*Յ+ հայցական հոլովով արտահայտված կապվող բառածև*», «*ՍԱԿՍ-սեռական հոլովով արտահայտված կապվող բառածև*», «*ԱՌԱՆՅ-սեռական հոլովով արտահայտված կապվող բառածև*» և նման կապակցությունները: Օրինակ՝ Մանուելն նախ *առանց հրամանի* յինքն յափշտակեաց զգօրավարութեանն զսպարապետութիւնն (Բուզ., 202): Կերպարանակից զմեր բնութեանս ինքեան առնէ *ըստ շնորհի* (Մամբրէ): Առ սակաւ մի աշխատ առնել զՊարսիկս (Փարպ., 119): *Է՞ր սակս* զմեզ աշխատ առնես (Խոր., 89): Որում *ցայժմ* պաշտօնեայք այն քէշի երիցս յամի զոհս մատուցանեն (Եզնիկ, 140): Յայժմ ես *վասն քո* յաշտ առնէի, *յայսմ հետէ* դու վասն իմ առնիցես (Եզնիկ, 129): Զրուան *զհազար ամ* յաշտ արար (Եզնիկ, 113) և այլն:

Բ.1.5. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՋԱԾ ՍԵՌԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը տարբեր դասային պատկանելության սեռի խնդիրների հետ հանդես են բերում կապակցման տարբեր հնարավորություններ: Այս դեպքում կարևոր է ոչ միայն այն հանգամանքը, թե որ դասին է պատկանում այս կամ այն սեռի խնդիրը ներկայացնող առարկան, այլև այն, թե ինչ առանձնահատկություններ ունի այս կամ այն հարադրավոր բայը բառիմաստի տեսանկյունից:

Նշված միավորների դասային խմբերի փոխհարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի դեպքում՝ առաջին պլան է մղվում բայական բաղադրիչը, որի արտահայտած գործողությունը կարող է վերաբերել առանձին դաս կամ տարբեր դասեր ներկայացնող խնդիրների, իսկ մյուս դեպքում՝ առաջին պլան է մղվում հարադրավոր բայի հարադիրը, որի միակ կամ մի քանի բաղադրիչների միջոցով արտահայտած իմաստը կարող է վերաբերել կա՛մ առանձին դաս, կա՛մ էլ տարբեր դասեր ներկայացնող սեռի խնդիրների: Օրինակ՝ «*Ի չքմեղս առեալ զնա՝ ածէր ի հայակողմն*

ի հողն հարեալ յատակն» (Բուգ., 142) նախադասության մեջ *զնա* անձնանիշ խնդրի առկայությունը պայմանավորված է *ի չքմեղս* հարադրի իմաստային դաշտով, որը կարող է իր վրա կրել միայն անձ անվանող սեռի խնդիրը, մինչդեռ «*Ջտեղիսն ի քաց ատերէր»* (Բուգ., 192) նախադասության իր անվանող *գտեղիսն* սեռի խնդրի առկայությունը պայմանավորված է *ատերել* բաղադրիչի բառիմաստով, որից կարող է ներգործվել ոչ թե անձ, այլ թանձրացական առարկա անվանող սեռի խնդիրը:

Ըստ պահանջվող կամ ենթադրվող սեռի խնդրի դասային պատկանելության՝ խնդրառության տեսանկյունից միարժույթ ներգործական հարադրավոր բայերը բաժանվում են մի քանի խմբի.

1. անձնանիշ սեռի խնդիրներ են պահանջում կամ ենթադրում հետևյալ կարգի (դրանք ընդգծված են) բարդությունները՝ զբազումս *ազգատ առնել* (Բուգ., 109), *ահարեկ արար* զօրս (Եղիշէ, 7), *ած յաղերս* զԱստուած (Սեբեր.), *յամօթ առնել* զայնոսիկ (Ագաթ., 69), *այպնկատակ առնել* զիս (Ոսկ.), զազգդ քո *անգաւակ ոչ* ևս *արասցես* (Եզեկ., ԼԶ, 14), *անհաւատարիմ առնել* զմարդ (Նիս.), զամենայն զօրս *անմի արարեալ* (Բուգ., 126), *անունդ առնել* զտոհմսն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց (Բուգ., 10), *անպատիւ առնել* զաղքատն (Սիր., Ժ, 26), *աշխատ կալաւ* զմեզ (Փարպ., 158), *յապուշ կործանել//յապուշ առնել//յապուշ արկանել* զնոսա (Վեցօր.), *յանհոգս* առնել զՊապ (Խոր., 171), *յառաջ կոչեաց* զՄերութանն (Բուգ., 214), *ատելի առնել* զիս (Ծննդ., ԼԴ, 30), *զբանիք առնել* զաշակերտսն (Մամբրէ), *ի բանս ելու առնել* զբազաւորն (Կիրդ.), *բարեյոյս առնել* զորդիս քո (Իմաստ., ԺԲ, 19), ոչ զծերս *դսրով առնել* (Ոսկ.), *յերաշխի առնել* զմերձաւորն (Սիր., ԻԹ, 19), *ի զգուշի առնել* զմեզ (Կոչ.), *քշնամի առնել* զբազաւորն (Բուգ. 197), զամենայն ոք *ի զարմանս ածել* (Խոր., 54), *իմաստունս առնել* զծերս (Սաղմ., ԳԴ, 22), զնա *ի խաչ հանել* (Եզնիկ, 72), *խեղդամահ առնել* զնա (Բուգ., 36), *ի խոստ ածել* զերեց (Մաղաթ.), *կարեվէր առնել* զբազումս (Փարպ., 56), զամենայն մանր մանկտիսն *ներքինի* հրամայէ *առնել* (Բուգ., 150) և այլն:

Միայն անձնանիշ սեռի խնդիր պահանջող կամ ենթադրող միար-

ծույթ հարադրավոր բայերը սեռի խնդրի դիմային արտահայտության տեսանկյունից սահմանափակություն չեն ճանաչում: Դրանք կարող են պահանջել թե՛ առաջին, թե՛ երկրորդ և թե՛ երրորդ դեմքերի եզակի և հոգնակի թվերով արտահայտված սեռի խնդիրներ. պատուհասակոծ առնել *գղպիրս* (Գ Մակ., Դ, 15), առ սուտս ունիմ *զժեզ* (Խոր., 346), ի վարձու կալայ *զքեզ* (Ծննդ., Լ, 16), վտարանդի առնել *զՏիրան* (Խոր., 185), ծաղր առնել *զիս* (Թուղթ, 197) և այլն:

Հարկ է նկատել, որ դասային տեսանկյունից անձնանիշ առարկաների հետ կապակցվող հարադրավոր բայերը մյուս բայախմբերի նկատմամբ թվային գերակշռություն ունեն: Ասվածը պայմանավորված է 5-րդ դ. մեզ հասած գրավոր աղբյուրների մեջ արժարժված պատմական և հոգևոր թեմաներով, որտեղ առավելապես շոշափվում է մարդը՝ իր ներքին ու արտաքին աշխարհներով:

Միայն անձնանիշ սեռի խնդիր պահանջող հարադրավոր բայերը, անկախ այն քանից՝ ուղիղ, թե փոխաբերական իմաստով են գործածվում, սեռի խնդրի դիմային արտահայտության տեսանկյունից միշտ մնում են, այսպես կոչված, անդիմասահմանափակ, մինչդեռ միայն իրանիշ սեռի խնդիր պահանջող հարադրավոր բայերն ուղիղ իմաստով գործածվելու դեպքում սեռի խնդրի դիմային արտահայտության տեսակետից դիմասահմանափակ են և միայն փոխաբերական իմաստով գործածվելու դեպքում են դառնում անդիմասահմանափակ:

Անձնանիշ սեռի խնդրառու մի քանի հարադրավոր բայեր մյուսներից առանձնանում են նրանով, որ այս դեպքում արտահայտված գործողությունն անմիջականորեն իր վրա կրողի դերում կարող է հանդես գալ մի-այն արական սեռի անձնանիշ բառերի հայցականը: Այդ բայերից են՝ *ազգատ առնել*, *ործակոտոր առնել*, *ներքինի առնել* և այլն: Օրինակ՝ *Ջրագումս ազգատ արարեալ* անճիտեաց (Բուզ., 109): *Ջրդեաշխն Գուգարաց կալեալ* գլխատեր և *զազգն ործակոտոր առնէր* (Բուզ., 177): *Չամենայն մանր մանկտիսն ներքինիս* հրամայէր առնել (Բուզ., 150):

Ընդ որում, եթե *ազգատ առնել* և *ործակոտոր առնել* բայերի միջո-

ցով արտահայտված գործողությունների համար պարտադիր կերպով պահանջվում կամ ենթադրվում է հոգնակի թիվ կամ հավաքական իմաստ արտահայտող հայցականը, ապա *ներքինի առնել* հարադրավոր բայի արտահայտած գործողությունը կարող է իր վրա կրել նաև անձնանիշ բառերի եզակի թվի հայցականը:

2. Իրանիշ սեռի խնդիր պահանջող միարժույթ ներգործական հարադրավոր բայերը ևս փոքր թիվ չեն կազմում: Այդ բայերից են՝ *ալեկոծ առնիցեն* զեզերս (Վեցօր.), զգիրսդ *յակն արկանիցէք* (Բ Մակ., 2, 12), *այրացավեր առնել* զերկիրն (Բուզ., 116), *յայրեաց և յաւար դարձուցանէին* (Բուզ., 46), *առնել* տիեզերս *անապատ* (Ես., ԺԳ, 9), զօրէնս *յանձին կալջիք* (Եղիշէ, 17), զտեսչութիւն *անփոյթ առնէր* (Բուզ., 33), զայն *յանօթ առեալ էր* (Դ Թագ., 2, 5), *ապախտ արարեր* զվաստակսն (Ագաթ., 31), *յարդիւնս ած* զնկատեալն (Ոսկ.), *արտաշէկ արարեալ* (զշամփուր-Գ. Խ.) (Խոր., 305), *արարից* զԲաբելովն *աւերակ* (Ես., ԺԳ, 22), զայդ *բարիոք առնէք* (Եղիշէ, 171), *ի բաց շքեցուցանէ* զտամկութիւնն (Եզնիկ, 191), զտեղիս *ի բաց քակենք* (Բուզ., 97), զոր *ընդ բերան ածիցէ* (Եզնիկ, 178), ճառս *եղին ի գիրս* (Փարպ., 5), *ի գիր արկանել* և զվարս (Կորիւն, 34), զհրամանն *ի գլուխ տարայք* (Եղիշէ, 181), զամենայն *ընդ գրով արկանել* (Եղիշէ, 27), *ի գործ բերել* զհրամայեալսն (Կորիւն, 62), *կրկնարօր և երեքկնարօր առնել* զբանն (Սեբեր.), *թափ անցանել* պարիսպս երկաթիս (Բ Մակ., ԺԱ, 9), *լարաբաժին առնել* զերկիր (Ա Մակ., Գ, 36), զտիւ *լուսաւոր առնիցես* (Ագաթ., 83), *ի լոյս ածել* զծածուկն (Ոսկ.), *խակակիք առնել* զայգի (Մծբն.), *խորշաքաղ առնել* զպարեգօտսն (Ոսկ.), *արկին ի խորովս* (Բուզ., 79), *խրամակարկատ առնել* զնա (Ա Մակ., Թ, 62), *ածել ի կատարումն* զխնդիր (Խոր. 6), կարծիս *ի մտի դնիցեն* (Բ Մակ., 2, 24), *հաստահիմն առնել* (Ա Պետր., Ե, 10), զոր *առ ձեռն դնիցեն* (Եզնիկ, 25), *հրձիգ առնէին* զտեղիս (Եղիշէ, 126), *մանրակրկիտ առնել* զկարևորագոյնս (Կորիւն, 98), զոր *ի մատենի եհար* (Ես.) – *ի մատենի տալ* (Ես.), խորհուրդ *ի մէջ բերել* (Խոր., 80), *մի՛ դիցէ ի մտի* զգժտութիւն (Բուզ., 52), *ի մտի ունէր* զպայման (Եզնիկ, 235), *ածից յայտ* զգիտութիւն (Իմաստ., 2, 24),

յայտնի առնել զամենայն (Բուգ., 70), յանդիման բերէր զծածուկս (Խոր., 91), շերտակոտոր առնել զշիրիմն (Պիտ.), շուրջ պարունակել զկղզի (Խոր., 344), ուղղածուծ առնել զպարտութիւն (Թիւ., ԽԴ, 8), զգործս ուղիղ արա (Սաղմ., 26, 17), պտղաքաղ առնել (Բ Օրէն., ԻԴ, 21), ի վայր դնել զգագանամտութիւն (Բուգ., 21), ի վայր վաթեցին զաղիս (Ագաթ., 107), ի վեր առնալ սուսերն զաջս (Փարպ., 150), ի վեր ունի զամենայն (Ագաթ., 179), զնեղութիւն ի վերայ ածել (Եղիշէ, 45):

Հատկանշական է, որ իրանիշ սեռի խնդիրների մի մասը վերացական առարկա է անվանում, մյուս մասը՝ թանձրացական:

Իրանիշ սեռի խնդիր պահանջող կամ ենթադրող միարժույթ հարադրավոր բայերը սեռի խնդրի դեմքի արտահայտության տեսանկյունից դիմաստահմանափակ են. կարող են պահանջել կամ ենթադրել միայն երրորդ դեմքի եզակի կամ հոգնակի թվով արտահայտված սեռի խնդիր: Օրինակ՝ Ապահարկ արասցէ *զՀրէաստան* (Ա Մակ., ԺԱ, 28): Բազում *զանձըս* յաւարի տանէին (Բ Մակ., Ը, 30): *Չայն* ի բաց պատանեալ (Բուգ., 59): *Չայս տեղիս* ի բաց քակեմք (Բուգ., 97) և այլն:

Ինչպես նշեցինք, այս կարգի բայերը կարող են անդիմաստահմանափակ լինել միայն փոխաբերական իմաստով գործածվելու դեպքում (եթե դրանց արտահայտած գործողությունը վերագրվի անձնանիշ առարկայի), ինչպես՝ Արարից ապառաժ *զքեզ* (Եզեկ., ԻԶ, 14) և այլն:

3. Տարբեր դասային պատկանելության սեռի խնդիրներ կարող են պահանջել ներգործական սեռի միարժույթ այնպիսի հարադրավոր բայեր¹⁵⁵, ինչպիսիք են՝ *ըստ անձին բառնալ*, *ըստ անձին առնուլ*, *աւար հարկանել*, *անտես առնել*, *յառաջ վարել*, *առաջի արկանել*, *առաջի դնել*, *յառաջ մատուցանել*, *յարեան առնել*, *արտաքս ունիմ*, *արտաքս ընկենուլ*, *յապականութիւն առնել*, *ի բուռն արկանել*, *ի բուռն առնուլ*, *դարահոս առնել*, *ընդ թուով արկանել*, *կուրտ առնել*, *ի համար ունիմ*, *ընդ հարկաւ դնել*, *ի ձեռն առնուլ*, *ի ձեռաց հանել*, *ի մէջ առնուլ*, *ի միջոյ բառնալ*, *խլել ի միջոյ*, *ի միտ առնուլ*, *ի շուրջ ածել*, *առ ոչինչ համարիմ*, *առ ոտն կոխել*, *առ ոտն հարկանիմ*, *ընդ ունջ տանիմ*, *սմբակակոխ առնել*, *սուտ առնել*, *ի*

վայր կործանել, փառաւոր առնել, զքարի հարկանել և այլն: Այս բայերի մի մասը գորություն ունեն պահանջելու թե՛ անձնանիշ և թե՛ իրանիշ սեռի խնդիր անվանող առարկաներ: Հմմտ. Բարձեալ *ի մէնջ զմի մի* ըստ անձին՝ տարաւ հեռի ի տեղեացն (Փարպ., 141) և *Սանդուխս* ըստ անձին բարձեալ (ՆՀԲ): *Ձգանձսն* աւար հարկանէին (Ագաթ., 408) և Աւար հարկանէր զամենայն *որդիսն* Հռամասեայ և Իսմայելի (Յուդ., Բ, 13): *Ձժամանակն* անտես արարեալ (Ագաթ., 360) և Անտես առնիցես *զմայր քո* (Տովբ., Դ, 3): Որով *գիր չարախօսութիւնն* յառաջ վարել կարասցէ (Բուգ., 99) և Յառաջ վարէ *զհնքն* (Խոր., 36): *Ջիւր արուեստն* առաջի արկեալ (Կորիւն, 62) և *Ձգօրսն* առաջի արկեալ (Խոր., 107): Եղի *զՏէր* առաջի իմ (Բուգ., 72) և Դիք առաջի *զանուն* քաջութեան (Եղիշէ, 115, 201): Եւ յառաջ մատուցեալ *զքանս* իւր՝ ասէ (Խոր., 34) և Նոցա յառաջ մատուցեալ *զԱրշալիր* (Փարպ., 82): Ի բուն առնոյր *զնոսա* (Խոր., 134) և Յեղակարծում ժամու *զքաղաքն* ի բուն առնոյր (Ա Մակ., Ե, 28): Ծաղր առնէր *զքանսն* (Բուգ., 94) և Ծաղր առնեն և *զձեզ* (Փարպ., 138): Դուք ևս ի ձեռն առջիք *զմեզ* (Եղիշէ, 72) և Ի ձեռն առնոյր *զկշտամբութիւն* (Բուգ., 33): *ՁԱրարիչն* առնու ի միտ (Բուգ., 30) և Ոչ ի միտ առնուս *զմեծամեծս* (Ագաթ., 386): Առ ոչինչ համարէր *զսէր* և *զահ* թագաւորին (Բուգ., 27) և Առ ոչինչ համարեալ *զքազմութիւն* զօրաց նորա (Խոր., 170): Փառաւոր արա *զանուն քո* (Բուգ., 165) և Փառաւոր արա *զորդի քո* (Ագաթ., 211) և այլն:

Տարբեր դասային պատկանելության սեռի խնդիր պահանջող մի շարք բայեր գորություն ունեն կապակցվելու թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ սեռի խնդիրների հետ, ըստ որում վերջինը նույնպես անվանում է շնչավոր առարկա: Այսպիսի հարադրավոր բայերից են՝ *գետամոյն առնել* (Եղիշէ, 77), *գետավեժ առնել* (Փարպ., 66), *գետընկէց առնէ* զքեզ (Եփր.), *ունիցիս ի գիրկս* մանուկ (Դ Թագ., Դ, 16), *հեղձամղձուկ առնել* (Փարպ., 66), *ի բաց հալածել* զնոսա (Բուգ., 192), *զազանակուր առնել* զբազումս (Աղեքս.), *ի բաց ածցեն* զնոսա (Խոր., 278), *կուրտ առնել* (Ոսկ.), փախստական արար *զմեզ* (Ագաթ., 405) և այլն:

5-րդ դարի գրավոր աղբյուրներում կան բազմաթիվ հարադրավոր

բայեր, որոնք կիրառված են ոչ միայն ուղիղ, այլ նաև փոխաբերական իմաստով, որոնցից վերջինս կարող է վերաբերել նախադասության, մի դեպքում՝ սուբյեկտին, մյուս դեպքում՝ օբյեկտին, երրորդ դեպքում՝ թե՛ սուբյեկտին և թե՛ օբյեկտին: Սա պատճառ է դառնում, որ հարադրավոր որոշ բայեր անձնանիշ ենթակայի կամ սեռի խնդրի փոխարեն պահանջեն իրանիշ ենթակա կամ սեռի խնդիր (կամ էլ ընդհակառակը): Այսպես՝ «Արդարութիւն Տեառն ուրախ առնէր սիրտս» (Բուգ., 73) նախադասության թե՛ ենթական է փոխաբերաբար գործածվել և թե՛ սեռի խնդիրը: «Ջրագում գաւառս գերի վարեցին» (Խոր., 214) նախադասության մեջ փոխաբերական իմաստ է վերագրվել սեռի խնդրին, որը տվյալ դեպքում իրանիշ առարկա է, սակայն գործածվել է իբրև անձնանիշ առարկա և այլն: Ահավասիկ փոխաբերական իմաստով գործված հարադրավոր բայերով այլ կառույցներ ևս. Ջդառնութիւն պիտանի արարեր (ՆՀԲ): Ջբանս սուրբս պիղծ առնել (Ամովս., Ե, 10): Ի նեղ արկանել զբաղաքն (Ա Մակ., ԺԵ, 14): Լիւսիաս ի նեղ մեծ զամուրն հասուցանէր (Բ Մակ., ԺԱ, 5): Ի ձեռն տալով նոցա քրմութիւն (Խոր., 116): Չաշխարհն ի հարկի կացուցին (Յճխ.): Ջբանսն զանալից առնես (Սեբեր.): Ապառաժ առնեն զքեզ (Եզեկ., ԻԶ, 14): Չմարմնաւոր աչաց տեսութիւն լուսաւոր առնէ (ՆՀԲ): Պղծութիւն զայր ժանտագործ աղտեղի առնէ (Առակ., ԻԴ, 9): Ես ոչ կարեմ զձեր մեղսդ ընդ անձամբ բառնալ (Բուգ., 59): Փոյթքն յառաքինութիւն արմատախիլ առնեն զամենայն (Ոսկ.): Ոյք զանպատեհսն արորադիր առնեն (Յովբ., Դ, 8): Աշխարհս ի բաց քանդէ (Եղիշէ, 63): Չանայր հիմն ի վեր առնել զօրէնս (Ագաթ., 10): Ի ժամուն յայնմիկ առ ձեռն ունէր զբարկութիւն (Խոր., 281): Ագահութիւն ի ներքս յառնել (Եղիշէ, 181): Չարմատս կենացն տակակոտոր առնէին (Ոսկ.): Ընդ կրուկն անդրէն զեփրատականն դարձոյց յորձանս (ՆՀԲ, Փարպ., 74): Ի ներքս արկանել զքրիստոնէութիւն (Եղիշէ, 15): Չամբարշտութիւն արտաքս սահմանել (Խոր., 365): Կրկնարօր և երեքկնարօր առնել զբանն (Սեբեր.):

Անկախ այն բանից՝ խնդրառությամբ միարժույթ հարադրավոր բայը ուղիղ իմաստով է կիրառվել, թե փոխաբերական, բոլոր դեպքերում այն

չի օժտվում արժույթի նոր դրսևորումներով և մնում է միարժույթ. պարզապես փոխաբերական իմաստով կիրառվելու դեպքում ձեռք է բերում տարբեր դասային պատկանելության սեռի խնդիրներ պահանջելու հատկություն:

Ինչ վերաբերում է ուղիղ և դարձվածային իմաստներով կիրառվող հարադրավոր բայերին, ապա նրանք դարձվածային իմաստի դեպքում կարող են ձեռք բերել արժութային այլ օժտվածություն: Այսպես՝ *ի վեր հանել* բայը ուղիղ իմաստով խնդրառությանը միարժույթ է, մինչդեռ դարձվածային իմաստով՝ երկարժույթ: Հմմտ. Յետ բժշկութեանն հրաման տայ. «Մի՛ ունեք *ի վեր հանել*» /«ասել»-Գ.Խ./ (Ոսկ.): Չգեալ հանեն զնա ի վեր և տեսին, զի....(Ագաթ., 116) և այլն:

Խնդրառությանը երկարժույթ ներգործական սեռի բայերն ըստ պահանջած սեռի և բնության խնդիրների դասային պատկանելության բաժանվում են մի քանի խմբի.

1. Բայեր, որոնց թե՛ սեռի խնդիրն է իրանիշ, թե՛ բնության խնդիրը. *քաղահան առնել* (Բուզ., 96), զաչս *ի բաց պարսպել* ի ճառագայթից (Առորս.) և այլն:

2. Բայեր, որոնք հնարավորություն ունեն պահանջելու տարբեր դասանիշ սեռի և բնության խնդիրներ. *հեռի առնել*, *ի բաց մաքրել*, *հաւասար առնել*, *ի համար ածել*, *անուն դնել* և այլն: Օրինակ՝ Առնու ի նոցանէ ի բաց զիշխանութիւն զօրուն (Խոր., 128): Ի բաց առին զնա ի դրաց անտի (Ագաթ., 103) և այլն:

3. Բայեր, որոնց սեռի խնդիրը պարտադիր կերպով անձնանիշ է, մինչդեռ բնության խնդիրը՝ իրանիշ. *ազատ առնել*, *արժանի առնել*, *յերկբայս առնել* և այլն: Օրինակ՝ Չգօրսն Յունաց *յերկբայս արար* յուխտէն (Եղիշէ, 93): *Ազատ առնել* զնա ի կասկածանաց (Եզնիկ, 137): *Արժանի արարեր* զմեզ արբանեկութեան (Ագաթ., 105) և այլն:

4. Բայեր, որոնց սեռի խնդիրն իրանիշ է, մինչդեռ բնության խնդիրը՝ անձնանիշ. *աղօթակից լինիմ*⁵⁶, *բան տալ*, *լսելի առնել*, *գիտաց առնել*, *գիտուն առնել* և այլն: Օրինակ՝ *Թափուր կացուցանել* զերկիր ի բնակչաց (Բուզ., 146): Չթագաւորութիւնն ի Սանդարապալլայ *լինքն ա-*

ոնալ (հմմտ. *յինքն յափշտակեալ*—Գ.Խ.)՝ տիրէ Ասորեստանի (Խոր., 65): Չոր Վարազդատ *շնորհ առնէր* իւրում դայեկին (Բուզ., 202): Եւ *տայր պատգամ*, թէ որ ինչ եղեն, ահա թողեալ լիցի վնաս (Բուզ., 108): Ձխոր-հուրդն նմա *ի վեր հանէր* (Եզնիկ, 139) և այլն: Անձնանիշ բնության խնդիր պահանջող մի շարք բայեր ուղիղ խնդրի փոխարեն պահանջում են անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի: Այդ բայերից են՝ *թոյլ տալ*, *պատուէր տալ*, *համարձակութիւն տալ* և այլն: Օրինակ՝ *Մի՛ տայք թոյլ նոցա* զեղջերաց սեղանոյն բոլոն *հարկանել* (Փարպ., 180): Դու և պատուէր տայ *նոցա երթալ* միւս անգամ ի Բաբելոն (Եւս.): Համարձակութիւն տայ *նմա* վարսակալ *ածել* (Խոր., 44) և այլն:

5. Բայեր, որոնց պահանջած թե՛ սեռի խնդիրն է անձնանիշ, թե՛ բնության խնդիրը. *զլխապարտ առնել*, *համակամ առնել*, *ծանօթ առնել* և այլն: Օրինակ՝ Չգօրսն *համակամս* իւր *արարեալ* (Խոր., 273): *Ապաւէն առնել* իւրեանց զբնակիչս (Խոր., 228): Չորս *հնազանդ* իւր *արարեալ* Հայկ (Խոր., 33): Առ ի *ծանօթս առնելոյ* զնոսա Աստուծոյ (Ագաթ., 153): Չքեզ *առից* ինձ *կնութեան* (Բուզ., 103): *Առնիցես* զիս *զլխապարտ* թագաւորին (Դան., Ա, 10) և այլն:

Նկատելի է, որ վերջին երկու խմբի բայերը, մյուսների հետ համեմատած, ավելի մեծ թիվ են կազմում:

Ներգործական սեռի երկարժույթ հարադրավոր բայերի մի մասը ևս գրավոր աղբյուրներում կիրառվել է փոխաբերական իմաստով: Օրինակ՝ Լի առնել զգաւառն ողջունիս (Կորիւն, 60): Չուրացութեան ևեթ անունն *ի բաց ընկեսցուք* ի մէնջ (Փարպ., 57): *Ծաղկածողով առնել* զմաքուր խորհուրդս ի նմանէ (Նիւս.): *Յուսահատ առնել* զնա յողորմութենէ Աստուծոյ (Ոսկ.): Չամենայն մարդիկ *անքակ արասցէ* յանմահութենէ (Ագաթ., 192): Չաւազակութիւն *ի բաց քեցել* յինքեանց (Խոր., 109): Չժանգ սնոտիագործ պաշտամանն *ի բաց քերէր* (Կորիւն, 62): Դիւրաւ զլսելիսդ *ի վայր տայք* այլոց (Աղեքս.): Որում նա զիւր լեզուն *գործի եղ* (Իսիւք.): Չանձինս ի խօլ խրատուէ *ի բաց կալայք* (Փարպ., 98): Թէպէտ և բռնութիւնն զփեսայն *ի բաց վարեաց* (Խոր., 359) և այլն:

Փոխաբերական կիրառվող երկարժույթ հարադրավոր բայերն արժույթի տեսանկյունից փոփոխության չեն ենթարկվում. պարզապես լրացուցիչ հնարավորություն են ստանում կապակցվելու դասանիշ այլ գոյականների ու փոխանվանաբար գործածված բառերի հետ: Հմմտ. Առ ի *ծանօթս առնելոյ* զնոսա Աստուծոյ (Ագաթ., 153) և Ջհանճար *արա՛քեզ ծանօթ* (Առակ., 4): Յանօրէնութենէ *անարատ ոչ արարեր* զիս (Յովք, Ժ, 14): Լուսին ջանայ յիւրմէ զխոնաւութիւնն *ի բաց պարզել* (Եզնիկ, 186): Հեռի *արարի* ի մէնջ զանօրէնութիւն (Սաղմ., ԺԲ, 12):

Բ.2. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ

Բ.2.1. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ԵՆԹԱԿԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Չեզոք սեռի հարադրավոր բայերի հիմնական մասը պահանջում է ենթակա, որն արտահայտվում է՝

1. *գոյականով*, ինչպես՝ Աստ ի մէջ անցեալ *քոյր* նոցա Աստղիկ (Խոր., 24): Անդէն ընդ առաջ ելեալ նոցա Մերութան (Բուզ., 215): *Թագաւորն* Յունաց առնէր գերեղարձ գերութեան արքային Պարսից (Բուզ., 50): Դարձաւ նոցա *Տէր* ի թշնամութիւն (Ես., ԿԳ, 10): Հաճոյ թուեցաւ *բանն* մարգապանին (Փարսլ., 121) և այլն:

2. *Առարկա անվանող դերանունով*, ինչպես՝ *Մեք* հպատակ լինիմք (Փարսլ., 138): *Ոչ ոք* ումեք անկողնարկ լինէր (Եղիշէ, 200): *Մեք* ոչ կարեմք լինել դիմակալ մմա (Ա Մակ., Ե, 40): *Ինքն* ոչ հետամուտ լինի մմա (Խոր., 130): Ոչ առցես *դու* յանձն (Ագաթ., 39) և այլն:

3. *Այլ բառերով*, ինչպես՝ *Երկոքեան* ի ձիոյն յերկիր անկանէին (Բուզ., 214): *Սպանողք* յորժամ ի պատիժս մտանեն (Եզնիկ, 36):

4. *բաղադրյալ մասնակադապարներով*. դրանցից են՝

ա) «*ուղղական հոլովով արտահայտված բառ-բացառական հոլովով արտահայտված բառածև*», ինչպես՝ *Ոմանք ի լեռնախոյզ աւազակաց* ի մէջ անցեալ ուրախութեամբ վերտէին (Փարսլ., 111): Մի *ոմն*

ի քաջ *զօ-բականէն* Հայոց թշնամանս դնէր անօրինին (Եղիշէ, 122) և այլն:

բ) «(1-ին կամ 2-րդ դեմքի անձնական դերանվան ուղղական հոլովածն)–*Ինձէն, Մեզէն//Մեզոնն, Զեզէն//Զեզոնն կամ Չեզէն//Չեզոնն անկանոն բառածն-(իսկ)*» և այլն, ինչպես՝ Ոչ ահա *ձեզէն իսկ* արժան էր անդէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց (Եղիշէ, 27): Քանզի և *մեզէն իսկ* ականատես եղաք այնմ դիւանի (Խոր., 120): *Մեզէն* եղեալ ականատեսք նորա մեծութեանն (Ագաթ., 365)¹⁵⁷ : *Դուք ձեզէն իսկ...* (Եղիշէ, 133) և այլն:

գ) *Բաղադրյալ այլ կապակցություններով*, ինչպես՝ *Բնակիչք* գաւառին և *ինքեանք* կային ի հարկի ծառայութեան (Բուզ., 178): Հասեալք *ամենքեան նոքա* ի դուռն՝ յանդիման եղեն նախ մեծամեծացն դրան (Փարս., 480): *Ինքնին թագաւորն* Հայոց Պապ կամեցաւ ի ճակատ ելանել (Բուզ., 1612) և այլն:

5. *Երկրորդական նախադասությամբ*, ինչպես՝ *Որ խրատէ զչարս*, առնէ անձին իւրում անարգանս (Առակ., Թ, 7): Կամ եղև քեզ, *զի և ինձ պարզև հրաման տացես* (Բուզ., 161): Յայտ եղև, *թէ հայրն յայլ ապաստանէր* (Եզնիկ, 137): Յայտ եղև, *եթէ յամենայն վնասս նոցա խառըն էք դուք* (Եղիշէ, 185): Քաւ լիցի ինձ, *եթէ ընկղմեցից* (Բ Թագ., Ի, 20):

Հարադրավոր բայերի անցյալ դերբայական ձևերի և վերջիններիս միադիմի կազմությունների հետ սովորաբար հանդես են գալիս սեռական հոլովով արտահայտված, այսպես կոչված, փոխակերպված ենթականեր, ինչպես՝ *Նոցա* սակաւ մի խոյս եղեալ ի ձէնջ (Փարս., 167): Մինչև *դիւի* խեղդ ընդ անձն արկեալ նմա՝ (Եւս.): Որում իրազգած լեալ *արքային* Երուանդայ (Խոր., 163): Եւ *Արշակայոյ* ի հակառակս մտեալ՝ դօղեր (Խոր., 296): *Իմ* աղ և հաց կերեալ է յաշխարհի ձերում (Ոսկ.)¹⁵⁸:

Սեռականով արտահայտված առաջին և երկրորդ դեմքի ենթականական բառերի հետ կարող են գործածվել նաև *ինձէն, մեզէն, քեզէն, ձեզէն* բառածները՝ այսպիսով դառնալով բաղադրյալ ենթակայի մաս և ենթակայի իմաստին ավելացնելով սաստկական երանգ: Օրինակ՝ Չի սուտ չեն մեր սպասաւորքն, *մեր մեզէն* իսկ հասեալ է ի վերայ ստու-գութեան սոցա

(Եղիշէ, 181):

Չեզոք սեռի հարադրավոր բայերի պահանջած ենթական մախա-
դասության բովանդակության պլանում ենթադրվելու դեպքում կարող է
գեղչվել: Ենթակայի գեղչումը տեղի է ունենում այն դեպքում, երբ այն պետք
է արտահայտվեր առաջին կամ երկրորդ դեմքի դերանունով կամ էլ պետք
է չհիշատակվեր՝ մախապես նշված, հետևաբար՝ հասկանալի լինելու
պատճառով: Օրինակ՝ Անդորր արարեր սրտի իմոյ (Սաղմ., 32): Ապտակս
մմա դնենք (Ոսկ.): Խնդիր արասցես ի Գեղարքունի, ի գաւառին Սիւնեաց
(Խոր., 120): Անթիւ բազմութեան ի մենջ կոտորած առնէին (Փարպ., 158):
Հանէր ընդ սուր գտեարս գաւառին (Բուզ., 179): Չեռն ետու մոցա՝ հանել
գնոսա (Եզեկ., Ի, 6):

Չեզոք սեռի հարադրավոր բայերը ենթակաառու չեն այն դեպքում,
եթե կիրառվում են որպէս անորոշ-դիմավոր կամ ընդհանրական-դիմավոր
միակազմ մախադասությունների գերադաս անդամ՝ արտահայտված հիմ-
նականում եզակի թվի երկրորդ, հոգնակի թվի երկրորդ կամ հոգնակի թվի
երրորդ դեմքով. *Չերբակալ արարեալ զբդեաշխն Աղծնեաց, առ մմին կո-
տորեցին զկանայս* (Բուզ., 178): *Հանին մմա կռուփս ի գլուխն* (Ագաթ.,
63): *Իսկ եթէ փրկանք անկանիցին ի վերայ մորա, տացէ փրկանս ընդ
անծին իւրում, ըստ ամենայնի որչափ ինչ արկանիցեն մմա գին* (Ել., ԻԱ,
30) և այլն:

Հարկ է նշել, սակայն, որ դիմավոր միակազմ մախադասությունների
մեջ գլխավոր անդամի գործառույթով հանդես եկող բայաձևերը ենթակա
չեն կարող առնել ոչ թե ընդհանրապես, այլ միայն տվյալ կիրառության
մեջ՝ պայմանավորված այդ մախադասության կառուցվածքով և բովան-
դակությամբ: Իրականում նշված տիպի միակազմ մախադասությունների
մեջ գործածվող գերադաս անդամները, հիշյալ կիրառություններից դուրս,
դիմավոր ձևով պահանջում կամ ենթադրում են ենթակա: Հմմտ. Յորոց
վերայ սուր եղեալ կոտորեցին (դահճապետն դահճօքն հանդերձ-Գ.Խ.)
իբրև երեսուն և երկու ոգիս (Ագաթ., 107): Այսպէս ընդ միմեանս բանակոի
լինէին /մորա-Գ.Խ./ (Ոսկ.) և այլն:

Ենթակաառու չեն նաև չեզոք սեռի մի շարք հարադրավոր բայեր, որոնք բնութագրվում են միադիմիությամբ: Ընդ որում, այդ բայերի միադիմիությունը պայմանավորված չէ դրանց՝ այս կամ այն կառուցվածքի մեջ ստանձնած դերով. միադիմիությունը այդ բայերի բնական քերականական կարգավիճակն է: Այլ կերպ ասած՝ թե՛ խոսքից դուրս և թե՛ խոսքի մեջ տվյալ բայերը դիմասահմանափակ են. արտահայտվում են միայն եզակի թվի երրորդ դիմային ձևով: Միադիմի հարադրավոր բայերից են՝ *գիտուն լինի, դէպ լինի, հարկ լինի, քաւ լիցի*¹⁵⁹, *շատ լինի, յայտ լինի, դիւր լինի, դիւրագոյն լինի, քեթև լինի* և այլն: Ենթակաառությամբ արծուքագուրկ այս բայերն ըստ կիրառության բաժանվում են երկու խմբի.

1. Առանձին խումբ են կազմում ենթակաառությամբ արծուքագուրկ այն բայերը, որոնց հետ պարտադիր կերպով կիրառվում է տրական հոլովաձևով արտահայտված բնության խնդիր (այն, բնականաբար, գերադաս անդամի հետ կապակցվում է անմիջական կառավարման եղանակով) և անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի, որը գերադաս անդամի հետ կապակցվում է առդրության եղանակով: Այլ կերպ ասած՝ այս խմբի միադիմի բայաձևերը երկարժույթ են. պահանջում են մի խնդիր և մի ստորոգելի. Բայց *մեզ հարկ եղև մխել ի խնդիր* ճառիցս (Եզնիկ, 22)¹⁶⁰: *Կամ եղև ինձ զհետ երթալ* (Ղուկ., Ա, 3): *Քաւ լիցի ինձ տալ ի մոռացումն*, գորասեն (Փարպ., 51) և այլն:

Նկատենք, որ եթե այսպիսի միադիմի միակազմ նախադասությունների մեջ անորոշ դերբայով արտահայտված ստորոգելիի առկայությունը պարտադիր պայման է, ապա նույն բանը չենք կարող ասել դրանց տրականով արտահայտված բնության խնդիրների մասին¹⁶¹, որոնք տվյալ նախադասությունների բովանդակության պլանում ենթադրվելու դեպքում արտահայտության պլանում հանդես չեն գալիս, ինչպես՝ Որ ինչ յաղագս Արայի, շատի լիցի (*ինձ*–Գ.Խ.) յիշատակել (Խոր., 200) և այլն:

Ինչ վերաբերում է բայական միադիմի կառույցների մեջ հանդես եկող ստորոգելիներին¹⁶² (Պարտ էր նմա *հպատակ լինել* տերանց (Եղիշե, 41, 184): Բարոք է անդրեն *դարձընթաց լինել* արշաւանին (Կոչ.): Արեաց գնդին

պատեհ է *դիպան ելանել* զօրացն Յունաց (Բուզ., 197) և այլն), որոնք արտահայտված են չեզոք սեռի հարադրավոր բայերի անորոշ դերբայներով, ապա սրանք ենթակաառության տեսանկյունից արժութագուրկ չեն. այլ կառույցների մեջ նշված բայերը կարող են կիրառվել որպես երկկազմ նախադասության ստորոգյալ, ինչպես՝ Եւ մեք աղօթից և պաշտաման և բանին *հպատակ լիցուք* (Գործ., 2, 4) և այլն:

2. Ենթակաառության տեսանկյունից արժութագուրկ չեզոք սեռի հարադրավոր բայերի երկրորդ խումբն առանձնանում է նրանով, որ ոչ թե երկարժույթ է, այլ միարժույթ. պահանջում կամ ենթադրում է միայն տրական հոլովածևով արտահայտված մի բնության խնդիր: Այդ բայերից են՝ *բարի լինի, դիւր լինի, դիւրագոյն լինի, փոյթ լինի* և այլն: Օրինակ՝ Երգեսցէ քնարան, և դիւր լիցի *քեզ*, և հանգուցէ զքեզ այսն (Ա Թագ., ԺԶ, 16): Դիւրագոյն լիցի *երկրին* Սողոմացոց և Գոմորացոց յաւուրն դատատանի, քան քաղաքին այնմիկ (Մատթ., Ժ. 15): Եւ *ձեզ* փոյթ մի՛ լիցի (Փարպ., 133): Խնդրեցից քեզ հանգիստ, զի բարի լիցի *քեզ* (Հռութ, Գ, 1)¹⁶³ և այլն:

Իբրև կանոն, միադիմի հարադրավոր բայերի հետ խոսքի մեջ պարտադիր կերպով գործածվում է բնության խնդիր՝ արտահայտված անձնանիշ գոյականի կամ դերանվան տրական հոլովով, որը փաստորեն փոխակերպված ենթակա է:

Ինչ վերաբերում է *Քեզ լիցի թողութիւն* (Ազաթ., 304): *Հաճոյ թուեցաւ քանն մարգպանին* (Փարպ., 121): *Լաւ լինել զնդին չէ հնար* (Փարպ., 134): *Մոռացօնք եղեն նմա գալուստ որդւոյն Աստուծոյ* (Եղիշէ, 91): *Զի և ոչ գիշերի պատեհ լինէր մեզ այսմ* (Եւս.) տիպի կառույցներին, ապա սրանք երկկազմ նախադասություններ են:

Ենթակաառությամբ արժութագուրկ չեզոք սեռի մի շարք հարադրավոր բայեր արժութագուրկ են ընդհանրապես՝ թե՛ կոչականառության, թե՛ պարագաառության և թե՛ ստորոգառության տեսանկյուններից: Այդ բայերից են՝ *այգ լինի, անձրև լինի, արև տայ, ի հասարակ գիշերի լինի* և այլն, որոնք աչքի են ընկնում բացառիկ կիրառություններով. Իբրև *այգ եղև*,

և ահա Լիա էր (Ծննդ., ԻԹ, 25): Եւ *եղև ի հասարակ գիշերի* (Ել., ԺԶ, 29): Յորժամ *անձրև լեալ իցէ, և արև տայցէ* (Եզնիկ, 219): Եւ զի ընդ երկիր նոյն օդ խառն է, յորժամ *անձրև լեալ իցէ, և արև տայցէ*, ի գոլորշոյն, որ ի սրտէ երկրին ի վեր ցոլանայ, յայտ յանդիման երևի (Եզնիկ, 219): Եւ իբրև *երեկոյ եղև*¹⁶⁴, քանզի ուրբաք էր որ ի շաբաթն մտանէր....(Մարկ., ԺԵ, 42) և այլն¹⁶⁵: Ինչպես վկայում են բերված գրավոր փաստերը, ենթակաառությամբ արժութագուրկ հարադրավոր այս բայերն, այսպես կոչված, օդերևութանիշ են:

Թարգմանական գրականության մեջ հանդիպում են չեզոք սեռի հարադրավոր բայերով բազմաթիվ կառույցներ, որոնք ավելի շատ դարձվածային արժեք են ներկայացնում՝ միաժամանակ ցույց տալով տվյալ ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունները: Օրինակ՝ *Կամէր առաւօտն ի գիշերոյն մերկանալ* (Ա Մակ., Ե, 30): *Իբրև այգն զառաւօտն մերկացաւ* (Ազաթ., 28): *Յորժամ մերկասցի առաւօտն* (Յուդ., ԺԴ, 2): *Օրն խոնարհեցաւ յոյժ* (Դատ., ԺԹ, 11) և այլն: Անշուշտ, այս կառույցները երկկազմ են:

Բ.2.2. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ՍՏՈՐՈԳԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Չեզոք սեռի հարադրավոր բայերն, անկախ այն բանից, թե արժութային ինչ առանձնահատկությամբ են աչքի ընկնում, նախադասության մեջ հանդես են գալիս պարզ ստորոգյալի շարահյուսական գործառույթով: Օրինակ՝ Քան զամենայն ուսուցիչս իմ *իմաստուն եղէ* (Սաղմ., ԴԺԸ, 99): *Խրախոյս բառնային* զօրքն (Բուգ., 168): *Փայտ ընկենուին և վիճակ արկանէին*, թէ որ լեզու որում դասու հասցէ յաշակերտութիւն (Եղիշէ, 51): Ամենայն ուրեք մոլորութիւնն *ընդ անձին մտանէ* (Ոսկ.): Ի նեղութեան ինձ *անդորր արարեր* (Սաղմ., Գ, 2): *Դարձան ի փախուստ* անհնարին հարուածովք (Բուգ., 201) և այլն:

Սակայն չեզոք սեռի հարադրավոր բայերի շարքում առանձնանում

են այնպիսիք, որոնք նախադասության մեջ կատարում են ոչ թե պարզ ստորոգյալի շարահյուսական գործառույթ, այլ հանդես են գալիս բայական բաղադրյալ ստորոգյալի կազմում՝ դառնալով նրա բաղադրիչներից մեկը (հանգույց), որը բնականաբար կարող է առնել ստորոգելի:

Ստորոգառու հարադրավոր բայերից են՝ *ակն ածել, անհնար լինի, աշխատ լինիմ, աւելորդ լինի, ի դէպ ելանել* և այլն: Օրինակ՝ *Բան ի գործ արարին ասել* զիս (Երեմ., ԺԸ, 22): Մինչ *դէպ եղև* նմա *անկանել* օր մի յաւուրց (Բ Մակ., Թ, 7): *Մի՛ոք իշխան լիցի* յանդիման *պաշտել* զԱստուած (Եղիշէ, 85): *Կամ եղև* աշխարհին զայս տեղիս *պատուել* (Բուզ., 32): *Կարող գոլով* անկարութեամբ զամենայն *կացուցանել* (Խոր., 87) և այլն:

Ստորոգառու չեզոք սեռի հարադրավոր բոլոր բայերի համար արժույթի տեսանկյունից միակ միօրինակությունն այն է, որ նրանք առնում են անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի: Մնացած դեպքերում այդ բայերը հանդես են բերում մի շարք ձևախմաստային անմիօրինակություններ:

Այսպես՝ մի խումբ ստորոգառու հարադրավոր բայեր դիմաստահմանափակ են. դրանք հանդես են գալիս միայն եզակի թվի երրորդ դեմքով (իրականում թվարկվելիք վերլուծական բայերը միջակա դիրք են զրավում դիմավոր և անդեմ բայերի միջև. արտահայտության պլանում դրանք դիմավոր բայաձևեր են, մինչդեռ բովանդակության պլանում հնարավորություն չունեն երրորդ դիմային իմաստ արտահայտելու) և ստորոգելիի հետ միասին կիրառվում են միայն բայական միակազմ նախադասությունների մեջ: Այդ բայերից են՝ *անհնար լինի, ի դէպ թուի, դէպ լինի, հարկ լինի, ճար լինի, մարթ լինի, յայտ լինի, շատ լինի, քաւ լիցի* և այլն: Օրինակ՝ *Անհնար լիցի* նմա զբահանայապետութիւնն *ունել* (Խոր., 134): Զայս *աւելորդ եղև* մեզ *երկրորդել* (Խոր., 48): *Դէպ եղև* ինձ *տեսանել* (Ազաթ., 87): *Կամ եղև* ինձ կարգաւ *գրել* քեզ (Ազաթ., 247): Վասն երդմանցն *հարկ եղև* քահանայի մի *իջանել* առ նոսա (Եղիշէ, 126): Ողջ միայն *ապրել ճար լիցի* (ՆՀԲ)¹⁶⁶: *Մարթ լիցի* զնոսա և ի դէմ մագդեզանց *սաղապեցուցանել* (Խոր., 330): *Յայտ լիցի* ընդ հնազանդութեամբ *լինել*

Հոովմայեցոց (Խոր., 200): *Քաւ լիցի քեզ առնել* զայն բան (Ծննդ., ԺԸ, 25):

Նշված խմբի բայերով ձևավորված միակազմ նախադասությունների մեջ, իբրև կանոն, առկա է կամ բովանդակության պլանում ենթադրվում է տրականով արտահայտված բնության խնդիր, որն անուղղակիորեն անվանում է ստորոգելիով արտահայտված գործողությունը բուն կատարողին: Օրինակ՝ *Քաւ լիցի ինձ* տալի մոռացումն, գորաստն (Փարպ., 51): *Դէպ եղև տեսանել ինձ* յաղանդոյ ուսման նոցա օրիորդ մի կոյս (Ագաթ., 27): Որ ինչ յաղագս Արայի, շատ լիցի (*ինձ-Գ.Խ.*) յիշատակել (Խոր., 50): Բայց *մեզ* հարկ եղև մխել ի խնդիր ճառիցս (Եզնիկ, 22) և այլն:

Չեզոք սեռի ստորոգառու հարադրավոր բայերի շարքում առանձնանում են այնպիսի բարդությունները, որոնք, լինելով անդիմասահմանափակ, կիրառվում են երկկազմ նախադասությունների մեջ և, պարզ ստորոգյալի շարահյուսական գործառույթ կատարելուց բացի, որոշ կիրառություններում հանդես են բերում բաղադրյալ ստորոգյալի հանգույցի գործառույթ: Այս դեպքում թվարկվելիք բայերը գրկվում են ինքնուրույն շարահյուսական միավոր լինելու հնարավորությունից և սոսկ եղանակավորում անորոշ դերբայով արտահայտված գործողությունը¹⁶⁷: Այդ բայերից են՝ *ակն ածել, աշխատ լինիմ, բան ի գործ առնել, իղձք լինիմ, ի դէպ ելանել, իշխան լինիմ, իշխանութիւն ունիմ, կազմ կալ, կարող գոլ, ձեռն արկանել, ձեռներեց լինիմ, ձեռնհաս լինիմ, ուշ դնել, պէտս ունիմ, քան դնել* և այլն:

Այս շարքի հարադրավոր բայերի պահանջած ստորոգելին նույնպես արտահայտվում է անորոշ դերբայով: Օրինակ՝ Որ ակն ածէր անօրինաց *յանդիմանել*¹⁶⁸, չէ բարութ (Առակ., ԻԸ, 21): Այնպես զի ըստ իւրեանց անկողինս մաքնացն *մի* ուրեք աշխատ լիցին *ելանել* (Բուգ., 65): Բան ի գործ արարին *ունել* զիս (Երեմ., ԺԸ, 22): Իղձք լինէին զհրամանն *կատարել* (Եղիշէ, 51): Իշխան լիցիս *հատանել* առանձին դահեկան (Ա Մակ., ԺԵ, 6): Ունէր իշխանութիւն զհանդէսն *տեսանել* (Եզնիկ, 76): Արկ ձեռն *չարչարել* զոմանս (Գործ., ԺԲ, 1): Ապա կազմ լիցի *տալ ճակատս* պատերազմի ի մէջ իւրեանց (Բուգ., 139): Անկար գոլով *ձիավարել* (Խոր., 271): Չեռներեց լինէր *քբանել, անարգել* զպաշտօնս նոցա (Բ Մակ., Ը,

19): Բանիցս անգամ ձեռնհաս եղև *սպանանել* զՇապուհ (Բուզ., 199): Ուշ եղին *խոնարհեցուցանել* զիս յերկիր (Սաղմ., ԺԶ, 11): Մեծ և բազում ջան եղեալ *թողուլ* այնոցիկ զկարգս զրուցաց յիշատակել (Ագաթ., 6) և այլն:

Ընդգծված բայերից շատերի համար անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի առնելն արժույթի միակ դրսևորումը չէ. դրանք ստորոգելիի փոխարեն այլ կիրառությունների մեջ կարող են հանդես գալ առանց լրացման կամ պահանջել ուրիշ լրացում՝ արտահայտված որևէ հոլովածևով, կապական կապակցությամբ կամ էլ դրանց շարահյուսական հոմանիշով՝ երկրորդական նախադասությամբ. *Յոր* ոչ եղեր ինչ աշխատ (Յովն., Դ, 10): Ի դեպ իսկ ելանէ բան մարգարեին *ի վերայ նոցա* (Եղիշէ, 8): Կազմ կայցեն *գործոյն* (Բուզ., 199): Որ ձեռներեց լինի տարապարտուց, առանց պատժի ոչ լիցի (Առակ., ԺԱ, 21): *Յայլ* ինչ չեղէ ձեռնհաս (Փարպ., 125): Ես անդէն ի նմին ուշ եղեալ փութով *ընթերցուածոց* աստուածեղէն գրոց (Ագաթ., 459) և այլն:

Կան որոշ բայեր, որոնք պահանջում են ստորոգելի՝ արտահայտված, մի դեպքում՝ բացարձակ անորոշով, մյուս դեպքում՝ որևէ հոլովածևով կամ կապական կապակցությամբ: Հմմտ. Ոչ եղաք բաւական *յիշել* զբովանդակն ի կարգի (Փարպ., 105) և Ոչ լինէին բաւական *ի վճարել* անսխալ ուղղակի (Փարպ., 16): Եւ ուսջի՛ք զնոսա և զգո՛յշ լիջիք *առնել* զնոսա (Բ Օրէն., Ե, 1) և Զգո՛յշ լերուք *առնելոյ*՝ որպէս պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո (Բ Օրէն., Ե, 32): Իշխանութիւն ունէր *փոխանակել* զնա ընդ այլում տեառն (Եղիշէ, 163) և *Մառնելոյ* ի մարդ չունի իշխանութիւն (Եզնիկ, 87) և այլն: Նշված շարահյուսական գույգերը ուրվագծում են այն ճանապարհը, որով շրջանառության մեջ է մտել բացարձակ անորոշով արտահայտված ստորոգելին, որը, մեր պատկերացմամբ, գործառության մեջ է դրվել ներգործական բայ+անորոշ դերբայ կապակցության համաբանությամբ:

Ստորոգառու չեզոք սեռի հարադրավոր բայերի շարքում առանձնացում են երկու խումբ.

1. *դարձվածային բարդություններ*, որոնք անհամեմատ սահմանափակ թիվ են կազմում. *ձեռն ի գործ առնել*, *ձեռն արկանել*, *ակն ածել*, *ի*

սիրտ անկանիմ և այլն: Օրինակ՝ *Անկաւ ի սիրտ* նորա շրջել գեղբարքք իւրովք (Գործ., Է, 23): *Արկ ձեռն* չարչարել զոմանս (Գործ., ԺԲ, 1): Սկիզբն արարեալ *բան ի գործ արասցուք* վարդապետել ձեզ (Ագաթ., 133): Եւ *ձեռն ի գործ արա* պատերազմել (Փարպ., 130) և այլն:

2. Ոչ դարձվածային բարդություններ, ինչպիսիք են հետևյալ նախադասությունների ընդգծված հարադրավոր բարդությունները՝ *Դէպ եղել* նոցա գալ մտանել ի նեղագոյն տեղի մի (Ագաթ., 27): Որոց ոչ *լիցի բաւական* տանել (Եզնիկ, 79) և այլն:

Բ.2.3. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Խնդրառական արժույթի տեսանկյունից չեզոք սեռի հարադրավոր բայերն աչքի են ընկնում անմիօրինակությամբ՝ բաժանվելով երկու խմբի.

Ա. *խնդրառությամբ արժուրագուրկ չեզոք սեռի բայեր*,

Բ. *խնդրառու չեզոք սեռի հարադրավոր բայեր*:

Հարկ է նշել, որ ներգործական սեռի բայերով բաղադրված չեզոք սեռի հարադրավոր բայերը և սրանց պահանջած կամ ենթադրած բնության խնդիրը, որն արտահայտվում է տրական հոլովով, ներգործական սեռի համանիշ համադրական բայերի և սրանց պահանջած կամ ենթադրած սեռի խնդիրների հետ կազմում են քերականական համանշություն: Հմմտ. *թշնամանս առնել* (չեզոք) *նմա* (տրականով բնության խնդիր) և *թշնամանել* (ներգործական) *զնա* (հայցականով սեռի խնդիր): Այսպես նաև՝ *պարսաւել զնա* և *պարսաւանս դնել ինձ* (Նիւս.): *Քաջալերել զտիկին* և *տային քաջալերս տիկնոջն* (Բուզ., 145) և այլն:

Խնդրառու չեզոք սեռի բայերի՝ իրարից ունեցած տարբերությունն այն է, որ նրանց մի մասը խնդրառությամբ միարժույթ է, իսկ մյուս մասը՝ երկարժույթ: Հմմտ. խնդրառությամբ միարժույթ և երկարժույթ հետևյալ բայերը՝ *Նմա* միայն *սպաս տարցին* (Ագաթ., 407): *Աղօթս մատուցաք մեք Տեառն* (Բ Մակ., Ա, 3) *վասն մեռելոցն* (Բուզ., ԺԲ, 44) և *Եւ մի՛ բողոք*

հարկանիցէ գրէն առ Տէր (ՆՀԲ): Մոռացումն եկն *մեզ յաղագս Սենեքերիմայ* (Խոր., 70):

Ըստ մեր հաշվումների՝ խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը գրաբարի բառապաշարում անհամեմատ մեծ թիվ են կազմում (շուրջ 600 բայ), քան խնդրառությամբ երկարժույթ բայերը (շուրջ 100 բայ):

Բ.2.3.1. ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՐԺՈՒԹԱԶՈՒՐԿ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Այս կամ այն չեզոք սեռի հարադրավոր բայը խնդրառությամբ արժութագուրկ կարող է լինել՝ պայմանավորված մի քանի հանգամանքներով, որոնցից հատկապես առանձնանում են հետևյալները.

1. տվյալ բայի հարադիր կազմող ձևայինների միջև եղած շարահյուսական հարաբերությունը: Այսպես՝ *աստուածամարտ լինիմ* հարադրավոր բայի հարադրի բաղադրիչների միջև առկա է *հանգման խնդիր-գերադաս անդամ* ստորադասական հարաբերություն, որտեղ *աստուած* բաղադրիչի առկայությունը բացառում է, որ տվյալ հարադիր բայը կարողանա պահանջել բնության կամ սեռի խնդիր (վերջինիս շարահյուսական իմաստն արտահայտված է տվյալ բայի բաղադրիչներից մեկի՝ հարադրի կազմության մեջ): Օրինակ՝ Եւ ոչ գովողք կարենք լինել այնմիկ, որ աստուածամարտն լինիցի (Եղիշէ, 15): Նշված պատճառով սեռի կամ բնության խնդիր առնելու հնարավորությունից զրկված, այսինքն՝ արժութագուրկ են նաև *գազանակուր լինիմ, բորոտակեր լինիմ, ծայրակտուր լինիմ, թևակից լինիմ, ծովակուր լիցի, կաթնաջամբ լինիմ, կապակոտոր լինիմ, մարդապուր լինիմ* և այլ բայեր: Օրինակ՝ *Բորոտակեր եղեալ*՝ մաշին (Ագաթ., 260): Ապա *թևակից եղեալ* արման՝ վերանայր յերկինս (Կոչ.): Նաև՝ *ծովակուր լիցի* (Ոսկ.): Վասակ *կապակոտոր լինէր*, չմնայր հաւանութեան (Բուզ., 111) և այլն:

2. Հարադրավոր բայերը խնդրառությամբ արժութագուրկ կարող են լինել նաև՝ կախված բայական բաղադրիչի քերականական սեռից: Այսպես՝

անձնընտիր առնել, անհետ առնել, ապախտ առնել, աւերակ առնել, բազմապատիկ առնել, գունդ առնել, ընդերկար առնել և բազմաթիվ այլ հարադրավոր բայեր ներգործական սեռի են՝ կախված առնել բայական բաղադրիչի ներգործական սեռից: Բերված հարադրավոր բայերը խնդրառու են: Մինչդեռ նշված հարադիրների և լինիմ բայի հարադրությամբ ձևավորված բարդությունները հիմնականում գուրկ են խնդրառական արժույթից: Օրինակ՝ Անհետ եղեն *ոսկերք նոցա* (Ագաթ., 424): Եթե այս *ապախտ լիցի*, յումմէ՞ գերկորդն ընկալայց (Առ որս.): Ձի կեցջիք և *բազմապատիկք լինիցիք* (Բ Օրեն., Ը, 1): *Ընդերկար եղև* պանդխտութիւն իմ (Սաղմ., ԴԺԹ, 5): *Ջրահետ լեալ* մոլորեցան (Յճխ.) և այլն:

Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի բայերի հարադիրների ուսումնասիրությունը ցույց է տալից, որ դրանք կարող են արտահայտվել տարբեր կարգի բառերով.

1. *գերազանցապես վերացական առարկա անվանող գոյականներով*, ինչպես՝ *յաճումն գալ, անիրաւութիւն առնել, յապականութիւն դառնալ, ընդ ապաշխարութեամբ մտանել, ասպատակ կապել, յարբունս հասանել, ընդ գործ մտանել, դատ խնդրել, դիակապուտ դառնալ, ի գարգացումն գալ, ի գգաստութիւն գալ, ի գղջումն գալ, ի գղջումն դառնալ, լոյս առնուլ, ի լրումն գալ, ի խիթի լինիմ, ի խնդիր անկանիմ, ի խոյզ և քնին արկանիմ, խոյզ առնուլ, ի խոյզ անկանիմ, ծափ հարկանել, ի ծնունդ գալ, ի ծփանի կալ, ի կալանս կալ, ի կապանս կալ, կառաչ բառնալ, կերպս ի կերպս լինիմ, ի հասակ հասանել, ի հաւանութիւն գալ, հետի լինիմ, ի հիացման լինիմ, ի հնարս մտանել, հոտ հարկանել, ի մահ անկանիմ, ի մեղս դառնալ, մեղ գործել, մտօք յափշտակիմ, ի մոռացումն անկանիմ, յակճիռս կալ, յաղթութիւն տանիմ, ի յարութիւն գալ, ջան տանիմ, ի վերջ հասանել, ի փորձութիւն մտանել, ի քուն մտանել, ի քնոյն լինիմ, ի քուն լինիմ, ի քուն անցանել, գօղս կլանել* և այլն: Օրինակ՝ *Գան յաճումն* ամուսնութեամբ (Եզնիկ, 14): Ընդ այլ դիմեալ՝ *ասպատակ կապէին* (Բուզ., 121): Որոյ *յարբունս հասեալ* մանկանն՝ զհետ ընթանայ միայնաւորի ուրումն (Խոր., 220): Աոցէ գերինջ մի յարջառոց, որ *ընդ գործ չիցէ մտեալ*

(Բ Օրեն., ԻԱ, 30): *Ի գուճս իջեալ*՝ աղաչելին (Յուդ., Դ, 10): Իսկ քազաւորն *ի գուճս հարեալ* (Բուզ., 96): *Գռռի տուեալ* դիմեցին ի մահ (Եղիշէ, 61)¹⁶⁹: Եւ զայն տառապեալս, որ քեպէտ առաջի խախտեաց *դատ վարէին*, իրաւ գտանելին (Բ Մակ., Դ, 47): *Դիակապուտ դառնային* զօրքն Հայոց (Եղիշէ, 77): Եւ զի *չեկն ի զղջումն* յանգուցեալն, յիրաւի կրեաց պատիժ զմահ (Եզնիկ, 74): Եւ կայր, *ի զղջումն դառնայր* (Բուզ., 142): *Ի խիթի լինելով* Աժդահակայ՝ զդիպուածն տեսանէ երագով (Խոր., 74): Եւ *ի խոյզ և ի խնդիր անկանէր* (Բուզ., 48): Հանապազ ի խոովութեան և *ի ծփանի կան* (Վեցօր.): *Կայր ի կալանս* (Երեմ., ԼԲ, 2): Եթէ *ի կապանս* ոք *կայցէ* (Եղիշէ, 85): *Կառաչ բարձեալ* լային ի տանն Աստուծոյ (Փարպ., 56): Յնորիւք *կերպս ի կերպրս լինելով* դիւածն՝ հաւանեցուցանելին մեհեանս շինել (Ագաթ., 33): Իսկ *ի հասակ հասեալ* որդւոց նորա (Խոր., 55): *Ի հաւանութիւն եկեալ*՝ արարին ամս սակաւս խաղաղութիւն (Խոր., 270): Յանհնարին *հնարս մտանիցես* (Ոսկ.): Եթէ *ի մտաց* ինչ *ասիցենք*՝ մի՛ հաւատար (Սեբեր.): Եւ ամենայն բազմութիւն հրապարակին անձնագեղեացն Պարսից *յակճիոս կալով* սականջնել (Խոր., 351): *Ի վերջ հասեալ է* քազաւորութիւնն Հայոց (Խոր., 316): Նորա *ի քուն կային* խաղաղիկ (Եղիշէ, 148): Իսկ նոցա *ի քուն ոչ մտեալ* (Եղիշէ, 50): Խոնջեալ դուք *ի քուն լեալ էիք* (Ագաթ., 382) և այլն:

Այստեղ վերացական առարկա անվանող հարադիրներով ձևավորված բայական բարդությունների մեծ մասը, այսպես կոչված, ձայնարկու բայեր են. *զաղաղակ հարկանել, աղաղակ դնել, աղաղակ տալ, աղմուկ առնել, աղմուկ արկանել, զաղմկաւ լինիմ, յաղօթս անկանիմ, յաղօթս մտանել, գոյժ (ի բերան) առնուլ, երգ (ի բերան) առնուլ, բանս դնել, վիճախնդիր լինիմ, ողբովք անկանիմ, ձայն առնուլ, ձայն առնել, ձայն բառնալ, զճիչ հարկանիմ, ճիչ առնուլ, ճիչ հանել* և այլն: Օրինակ՝ Իսկ նորա *զաղաղակ հարկանէին* և ասէին (Բուզ., 138): *Զաղաղակ հարեալ* յԱնահտական մենեանն անկանէին (Ագաթ., 405): *Գոյժ* ի բերան *առեալ*՝ ասէին (Եղիշէ, 50): *Երգս առեալ* բարբառեցան (Ագաթ., 99): Որ և *աղաղակ* իսկ *եղեալ*՝ ասէր (Ագաթ., 211): Մի ոմն մանկագոյն ի նախարարացն Հայոց ընդդէմ *բանս եղ* և ասէ (Եղիշէ, 13):

Նկատելի է նաև, որ նշված բայերը խոսքի մեջ հիմնականում նախորդում կամ հաջորդում են ասացական բայերին: Վերջին հանգամանքը մի նպաստավոր պայման է դարձել, որպեսզի այդ բայերի մի մասը հետագայում ձեռք բերի ասացական բայի արժեք՝ ըստ այդմ դառնալով կրկնասեռ:

2. *Թանձրացական առարկա անվանող գոյականներով*, ինչպես՝ *յաճիւն վախճանել, ամբոխ առնել, այրեծի առնել, արանց լինիմ, արտասուս արկանել, արտասուս իջուցանել, գերեսս դնել, եղջեր առնել, զօր առնել, զօր հատանել, զճանապարհ(աւ) գնալ, ի ճանապարհ ելանել, զճակատ հարկանել, ի մահիծս անկանիմ, միս ածել, յողն երթալ, յողն կալ, յողն անկանիմ, ողն առնուլ, տեղատարափ լինիմ, ընդ քարիւ խրթիմ, զօծիս արկանել* և այլն: Օրինակ՝ Ամենայն հրոյ կերակուր լինէր և *յաճիւն վախճանէր* (Ոսկ.): *Ամբոխ արարեալ*՝ խոռվեցին զքաղաքն (Գործ., ԺԷ, 5): *Այրեծի առնէր* (Ա Մակ., Դ, 28): Ո՛չ կանայս առնեն և *ո՛չ արանց լինին* (Ղուկ., Ի, 35): Զդիւահարս յորժամ տեսանեմք, *արտասուս արկանենք* (Ոսկ., Փարպ., 26): Որ խոցէ զակն, *իջուցէ արտասուս* (Սիր., ԻԲ, 24): *Եղ երեսս* իւր ի փախչել (Եփր.): Տայր նմա *առնել զեղջեր* (Ազաթ., 214): *Զօր արարեալ* սպարապետն Մանուէլ (Բուզ., 157): *Զօր հատանէր, այրեծի առնէր* (Ա Մակ., Դ, 28): Գուժկան հասանէր *զճակատ հարեալ* (Եղիշէ, 76): Յիշեաց, զոր լուսն վասն Տրդատայ, եթէ *ի ճանապարհ ելեալ*, կամելով յորս գնալ (Խոր., 232): *Անկաւ ի մահիծս* իւր և հիւանդացաւ (Բ Մակ., Ա, 6): Մին *միս ածէ* և միւսն հալէ (Կիրդ.): Մերք յորանջել, *յողն երթալ* (Վեցօր.): *Յողն կալով* բարձրապարանոց երևալ ի վերայ երախտաւորաց իւրեանց (Գ Մակ., Գ, 12): Ոչ պակաս ժամանակս տային *ողն առնուլ* /հուն. շունչ առնուլ-Գ.Խ./ (Ոսկ.): Դու *յողն անկանիս* և ոչ դողաս (Ոսկ.): Թշնամին *տեղատարափ լինի* սպառնալեօք (Ոսկ.): Երենոս *խթի ընդ քարիւն* և մածնու կայ ի նմա (Վեցօր.): Զի՞ անկեալ կաս՝ *զօծիս արկեալ* (Եփր.) և այլն:

3. *Ածականներով*, ինչպես՝ *աներևոյթ լինիմ, անզօր լինիմ, անժոյժ լինիմ, անկորուստ լինիմ, ապախտ լինիմ, յապահովի կալ, ապիրատ լինիմ, յաւեր լինիմ, բազմապատիկ լինիմ, բարձրնտիր լինիմ, բարձրաթոյչ*

լինիմ, ետեղափոխ լինիմ, գենընկեց լինիմ, ժամավաճառ լինիմ, ժամապահ լինիմ, լուռ կամ, լուսազգեսաց լինիմ, ի խոնարհ լինիմ, ի խոնարհ ձգեմ, խորհրդազգած լինիմ, ծակամուտ լինիմ, ի ծանծաղ ելանել, կուրտ գոլ, յայլակերպս լինիմ, յիմար կալ, շէն լինիմ, փառաւոր լինիմ և այլն: Օրինակ՝ Նշանն աներևոյթ լինէր (Ազաթ., 434): Եւ ընտիրք անգօր եղիցին (Ես., Խ, 30): Մի անժոյժ եղեալ՝ արարածք կիզիցին (Ազաթ., 277): Ձի անկորուստ լիցի արդարութիւնն (Ազաթ., 219): Յապահովի և յանհոգութեան կայր (Եզնիկ, 31): Վասն իշխանացն ոչ խոստովանէին, զի մի ապիրատք եղիցին (Ոսկ.): Քաղաքք նոցա եղիցին աւերակք (Երեմ., ԽԹ, 13): Եղեն յաւեր և յանապատ (Երեմ., ԽԴ, 6): Ձիարդ բարձրնտիր լինէին (Ղուկ., ԺԴ, 7): Բարձրաքոչիս եղեալ (Եղիշէ, 5): Ոչ լերինք ետեղափոխ լինէին (Ազաթ., 139): Ձենընկեց լինելով ի ձեռն եկին (Խոր., 308): Ճշմարիտ գիտեմ, եթէ ժամանակավաճառ լինիմք (Դան., Բ, 8): Սատանայ անսայ և ժամապահ լինի (Մծբն.): Նա լուռ և եթ կայր (Մարկ., ԺԴ, 61, Բուզ., 74): Լուսազգեսաց լինէին (Յայտ., ԻԱ, 24): Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ (Սաղմ., ԼԵ, 7): Ոչ ի խոնարհ ձգել (Եզնիկ, 192): Ծակամուտ լեռնակեցիկ եղեալ (Խոր., 30): Սակաւ ինչ ի ծանծաղ ելանիցեն (Ոսկ.): Ձի յայլակերպս լեալ էր, զի զիւր նշանսն ունէր (Բուզ., 214): Ձիարդ շէն լինել մար-թասցէ (Բուզ., 198): Անունն Քրիստոսի փառաւոր լիցի ընդ ամենայն տեղիս (Ազաթ., 390) և այլն:

4. Անկախ գործածությունից զուրկ բարդություններով, ինչպես՝ անձնընտիր լինիմ, անձրևախափան լինիմ, անձրևակուր լինիմ, բարձառու լինիմ, գետամոյն լինիմ, գետնատրտունջ լինիմ, գրահետ լինիմ, գօրահատոյց լինիմ, գօրընտիր լինիմ, ընդերկար լինիմ, թև ի թև հարկանել, թխազգեստ լինիմ, ի թուխս նստիմ, իշխանափոխ լինիմ, լերդահմայ լինիմ, խանակիր լինիմ, ծակախիթ լինիմ, ծանրացասում լինիմ, կաշառագնաց լինիմ, հրամանաբեկ լինիմ, ի յայտ գալ, յառատամիտ լինիմ, նիզակընկեց լինիմ, քաջարշաւ լինիմ և այլն: Օրինակ՝ Մարդիկ ամբոցին անձնընտիրք լեալք (Եղիշէ, 89): Անձրևակուր և անձրևախափան հրամայէր լինել Եղիայի (Մաշտ.): Ոչ միայն բարձառու լինել, այլ

ոմանց աստ և ոմանց անդ թագաւորել (Եւս.): Եթէ *ոչ լինէին* տղայքն *գետամոյն* (Ոսկ.): Եւ բազումք *գետասոյգ եղեալ* կորնչէին (Փարս., 66): Անդ ոչ ձմեռն տեսանի և ոչ հասանիցէ *դեղնատերև լինել* (Ոսկ.): *Ջրահետ եղեալ՝* մոլորեցան ի չար անդր (Յճխ.): *Ջորահատոյց լինէր*, գայր պաշարէր (Ա Մակ., Թ, 63): Դարձաւ Յովնաթան, *զօրքնտիր լինէր*, զծերակոյտն ի խորհուրդ կոչէր (Ա Մակ., ԺԲ, 35): Խորանօքս *թև ի թև հարեալ* (Ոսկ.): Որպէս թէ արգելուցու զինքն և *թխազգեստ լինիցի* (Բրս.): Յորժամ ի ձուս և *ի թուխս նստիցի* (Վեցօր.): Միշտ *իշխանափոխք լեալ են* և տիրատեացք (Փարս., 23): Հարցումն հարցանել ի դրօշելոց, *լերդահմայ լինել* (Եզեկ., ԻԱ, 24): *Խանակիր լինել* հացարարին երևութացաւ ի ձեռն երագոյ (Նիւս.): Ի խժդան և *յոխորտի կայցեն* (Սեբեր.): Եւ նա *խօթապատճառս լինէր* և ոչ կարէր ի տեղոյն խաղալ (Բուզ., 87): Սորամուտ *ծակախիթ եղեալ* (Կորին., 80): *Ծանրացասումն եղև* յոյժ (Թիւ., ԺԶ, 15): *Ի պատգամս անկանէին, կաշառագնաց լինէին* (Բ Մակ., Ժ, 20): Ի վերայ տանեացն աստուածահար եղեալ՝ *հրամանաբեկ լինէր* (Կոչ.): Եւ զուարճացաւ ժողովուրդն յաղագս *յառաջամիտ լինելոյն* իշխանաց, վասն զի լի սրտի եղեն յառաջամիտք Տեառն (Ա Մնաց., ԻԹ, 6): Փախստեայ *նիզակընկէց եղեալ՝* թիկունս ի թշնամիս դարձուցանել (Եւագր.): Շապիոյ ոչ համարձակեալ ի թաքուն *քաջարշաւ լինել* (Խոր., 330): Երկրաբիր կենդանւոյն¹⁷⁰ է *գետնատրտունջ լինել* (Ոսկ.) և այլն:

Ինչպէս ցույց են տալիս գրավոր փաստերը, անկախ գործածութիւնից զուրկ բարդ հարադիրներով ձևավորված բայական բարդութիւնները հիմնականում գրաբարի բառապաշար են թափանցել հունա-ասորական գրականության թարգմանության ճանապարհով:

5. *Մակբայներով*, ինչպէս՝ *առաջի անկանիմ, արտաքոյ ընկենուլ, ի բաց մնալ, ի դուրս գալ, թաւալզլոր խաղալ, ի միջի լինիմ, առ յապայն լինիմ, ի վայր փլուզանել, փոյթ ընդ փոյթ լինիմ* և այլն: Օրինակ՝ *Առաջի անկաւ* կիճն (Դ Թագ., Ը, 5): *Արտաքոյ ընկեցեալ* կային մարմինք նորա (Ագաթ., 117): Քանզի *ի բաց մնաց* դուռն (Բուզ., 42): Եկեալ *անցցէ ի բաց* կարաւանն արքունի (Փարս., 102): *Եկն ի դուրս* և հարցանէր (Եղիշէ, 148):

Ի դուրս գնացին (Բուզ., 41): Որով կեալ կարէք և *ի միջի լինել* (Փարպ., 147): Այլ կայ ընտրութիւն *ի միջի* (Եզնիկ, 93): Վերուստ *ի վայր փնուգեալ* հոսեաց (Ագաթ., 294): Ոչ *փոյթ ընդ փոյթ լեալ* էանց ծագումն կամ սակաւուց տեսանելի (Խոր., 357) և այլն:

6. *Դերանուններով* և այլ կարգի բառերով. *Այլ ընդ այլոյ լինի* իմաստ ամենայն (Փարպ., 161): Սիրեաց զլերինս և զամայութիւն և զհնազանդութեամբ մտաց *յինքեան կալ*, որպէս զի խօսեսցի ընդ Աստուծոյ անգրադապէս (Խոր., 242): Որպէս թէ զկէսն իւր *յինքեան ունիցի* (Եզնիկ, 226): Պատառումն քարին և *յիրեարս գալ* և ընդունել զմարմին Առաքելոյ (Խոր., 157) և այլն:

Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի բայերի մի զգալի մասն ունի դարձվածային արժեք: Այս հանգամանքը խոսում է ժողովրդախոսակցական ոլորտին հատուկ լեզվական տարրերի՝ դեռևս 5-րդ դարի գրական աղբյուրներում անկաշկանդ գործածության օգտին:

Ըստ կազմության՝ խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի հարադրավոր բայերը լինում են երկու տեսակ.

1. *Երկբաղադրիչ*, որոնք համեմատաբար մեծ թիվ են կազմում, և որոնց հարադիրը կարող է արտահայտված լինել հոլովածևով կամ էլ կապական կապակցությամբ. *յաչաց վրիպել, ալօս կոտորել, գաղեղն լնուլ, աղարտ վարել, զհողմ արածել, զմիմեամբք գալ, զմտօք անկանիմ, ի միտքս գալ, ի միտս հասանել, ի միտս պնդիմ, ի միտս լինիմ, ընդ միտս հարկանիմ, ի մտաց անկանիմ, ի մտաց ելանել, զնոքօք անկանիմ, ի նեղ անկանիմ, ի նեղ մտանել, ոգի կլանել, յոգւոց հանել, յոտս անկանիմ, ի վերայ հասանել, ընդ քիրտն մտանել, ընդ ուրումն անկանիմ, զքնով անկանիմ, ի քուն երթալ* և այլն: Օրինակ՝ Որ մահուամբ *յաչացն վրիպեցաւ* (Եզնիկ, 39): Ոչ գերկիր գործէր և ոչ *ալօս կոտորէր* (Ոսկ.): Ջքադաքն կործանեցին և *աղարտ վարեցին* (Դաւթ., Թ, 45): Եւ *ի միտս եկեալ* նախարարացն Հայոց՝ ժողովեցան առ մեծ Վրթանէս (Խոր., 260): *Ի միտս հասեալ* որդւոց նորա՝ յիշեցուցանեն նմա զայս (Խոր., 55): Նոքա ևս առաւել *ի նոյն միտս պնդեցան* (Եղիշէ, 183): *Ի մտաց անկանի* մարդ (Եզնիկ, 180):

Եւ լեալ ի միտս՝ խորհել ասէ (Գործ., ԺԲ, 12): Զի այնպիսի ոք կին և ի մտէ իմն սովոր է ելանել (Ոսկ.): Որ ի միտսն անկեալ է (Եզնիկ, 208): Ոչ միայն ձեռքն չգննի, այլ և ոչ ընդ միտս ուրուք հարկանի (Եղիշէ, 30): Աւելիոս, ի պատերազմի ուրեմն արուարձանեացն ի նեղ մտեալ, անկանէր առ բլրով (Եւս.): Յորժամ տազնապեալ ոք յունեթէ իցէ, ասէ. «Չետ ոգի կլանել» (Եզնիկ, 90)¹⁷¹: Հառաչելով յոգւոց եհան (Եղիշէ, 17): Պարտ էր անկանել ի յոտսդ (Թուրք, 198): Իբրև գծիս ընդ քիրտն մտեալ ի խխնջել իւրում (Երեմ., Ը, 6): Եւ ընդ քեռն անկանէր (Եզնիկ, 138): Ապա մի զքնով անկանիցիմք (Ա Թեսաղ., Ե, 6): Որպէս ոչ ի քուն երթայ պահապանն Իսրայելի (Սաղմ., ԸԻ, 4):

2. Եռաբաղադրիչ, որոնք գրաբար աղբյուրներում աչքի են ընկնում քվային սահմանափակությամբ. ունել գլուխ բազմականին, դնել գլուխ ի կշիռս, բան ի գետին անկանիմ, ի բռին ունել զհոգի, ի բռին դնել զհոգին, ընդ բիբ ական ընդհարկանիմ, ձեռն յոգի հարկանիմ, ձեռն յանձին հարկանիմ, հող ի գլուխ լինիմ, յոտս և ի ձեռս անկանիմ և այլն: Օրինակ՝ Այլ Շմաւոն եղբարքքն հանդերձ եղ զգլուխ իւր ի կշիռս և ետ զանձս իւր ի ճգնութիւն մարտի պատերազմի (Ա Մակ., ԺԴ, 29): Որ մերձենայ ի ձեզ, որպէս որ ընդհարկանիցի ընդ բիբ ական իւրոյ (Զաք., Բ, 8): Կալեալ ի բռին զհոգի իմ՝ ի բաց մերժեցի զերկիւղ թագաւորաց (Փարպ., 185): Եւ ամենայն մեծամեծքն ձեռն յանձին հարկանէին (Բուզ., 113): Հող ի գլուխ լերուք ի վերայ կատաղութեանց ձերոց (Միք., Ա, 10): Հրամայեցին նմա ունել զգլուխ բազմականին (Եղիշէ, 153): Յոտն ի մատն յառնեն, յակճիռս կայցեն լսել (Ոսկ.): Նստաւ ոտն զոտամբ արկեալ (Բուզ., 74) և այլն:

Խնդրառությամբ արժութագուրկ դարձվածային արժեք ներկայացնող վերլուծական բայերի ուսումնասիրությունը բերում է մի շարք հետևությունների.

Նշված բայերի կազմության մեջ առնել և լինիմ բայերը նկատելիորեն պասիվ դեր ունեն: Դրան հակառակ՝ ակտիվ են այլ բայեր, որոնք ոչ դարձվածային բարդությունների կազմության մեջ ունեն բացառիկ կիրառություն:

Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի հարադրավոր բարդությունների կազմությամբ մասնակցում են ոչ միայն չեզոք սեռի բայեր, ինչպիսիք են՝ *անկանիմ, անցանել, ընթանալ, գալ, գնալ, դիպիմ, ելանել, ընկալնում, իջանել, խաղալ, կալ, հայիմ, հասանել, մտանել, յառնել, նստիմ, փախչիմ* և այլն: Օրինակ՝ Մի՝ ևս յաւելցես դու *անկանել յակն* իմ (Եփր.): Եւ որ *յակն գայիմ*, տանէր առ ինքն (Բուգ., 159): *Առ ական դիպեցան* (Ագաթ., 217): *Այր գարամբ ելանէին* տիրել աշխարհս (Խոր., 87): Ամենայն ուրեք մոլորութիւնն *ընդ անձին մտանէ* և ակամայ լինի ջատագով ճշմարտութեանն (Ոսկ.): Ժամանակ է այս նահատակելոյ, *ընդ արին գալոյ* (Ոսկ.): Իբրև Սելեկիոս *փոխեցաւ յաշխարհէ* (Բ Մակ., Դ, 7): Արի կա՛ց և *զանձամբ քով լեր* /«զգաստանալ»/ (Աղեքս.): *Չկայր երբեք յակաստանի* (Եզնիկ, 63): Դուստր առն *լիցի առն* այլազգոյ (Ղևտ., ԺԹ, 2): Լուռ եկաց մինչ *ի գլուխ չոգաւ* փուրսիշ ամբաստանութեանն (Եղիշէ, 136): Ի գինոջ գեղեալ առաջի Շապիոյ՝ *զհետ կնոջ կրթէր* (Խոր., 331): Ոչ արժանաւորեցաւ մեծատունն ընդ աղքատին *ի գիր անկանել* (Կիրոյ.): Առ ահի յիմարութեան *ընդ իւրեանց զէնս ելանէին* (Բ Մակ., ԺԲ, 22): Ապա և քո զաւակ *ընդ թիւ մտցէ* (Ծննդ., ԺԳ, 16): Մի՞թէ *ի կաքաւս իջանիցես*, պար անցանիցես (Ոսկ.): *Ընդ կրուկն դարձաւ քաջն* Տերենտիանոս (Խոր., 307): Ունել իւրաքանչիւր իշխանութիւնս և համարձակ ևս *գալ ի հրապարակ* (Եղիշէ, 130): Ոչ ինքն դրդեաց զնոսա *անկանել ընդ միմեանս* (Եղիշէ, 76) և այլն:

Նշված հարադրավոր բարդությունների կազմությամբ մասնակցում են նաև մի շարք ներգործական սեռի բայեր. *ածել, արկանել, արբել, բառնալ, գտանիմ, դնել, զգալ, թափել, լնուլ, խոցել, կալնուլ, կոտորել, կլանել, հանել, հաստատել, հատանել, մերկանալ, ունիմ, պնդել, պարգել, վարել, վրիպել* և այլն: Օրինակ՝ Ուր գողք *ական հատանեն* (Մատթ., Լ, 42): *Սաւուդաբար արար* ընդ անձին իւում (Խոր., 301): Լուացեալ գերեսս իւր՝ ել, *պնդեաց զանձն* և ասէ (Ծննդ., ԽԳ, 31): Հեղիողորոս իբրև *անձին զգաց* /«ուշքի գալ»/ (Բ Մակ., Գ, 35): Հարկեցաւ *զանձն ի մահ դնել* (Եղիշէ, 197): Եւ *արկեալ զանձն ի ջանս*՝ պէս-պէս փորձիք տաժանէր (Խոր., 317): Ջի ինքն անձամբ *զանձն* իւր *կալաւ* (Բուգ., 75): Եւ թագաւորն յայսմ

օրինակի *գրանս* իւր *մերկանայր* (Գ Մակ., 2, 19): *Արկ բան* ի բերան նորա (Թիւ., ԻԶ, 10): *Փան արբ* երկու աշօքն իւրովք (Ոսկ.): Որպէս հօօր, զի *թափէ զգինի* /«սքափվել»/ (Սաղմ., ՀԷ, 65): Յորժամ *դուրս գտի* իրացս (Բուգ., 171): Եւ սկսաւ *եղջերւ ածել* անօրէնութեամբ (Եղիշէ, 6): *Կականս պաղատանաց արկանէր* առաջի նորա (Մաշտ.): *Կական երարժ* ի ձայն մեծ (Բ Թագ., ԺԹ, 4): Թշնամիք նորա *հող կերիցեն* (Սաղմ., ՀԱ, 9): Որ *արածէ զորկորստութիւն*, անարգէ զհայր իւր (Առակ., ԻԸ, 7) և այլն:

Չեզոք սեռի դարձվածային հարադրավոր բարդությունների մեջ ներգործական սեռի բայերի ակտիվությունը պատահական չէ: Բանն այն է, որ դարձվածային միավորների մեջ ներգործական սեռի բայերը հիմնականում կորցնում են ոչ միայն բուն բառիմաստը, այլ նաև սեռի քերականական կարգի պատկանելությունը՝ ըստ այդմ հարադրի հետ միասին արտահայտելով մեկ այլ, այն է՝ իրենց բուն իմաստի հետ անմիջականորեն չկապվող (կամ մասամբ կապվող) բառային իմաստ:

Թեև նշեցինք, որ չեզոք սեռի դարձվածային հարադրավոր բայերը գրաբար աղբյուրներում մեծ թիվ են կազմում, սակայն նկատենք, որ հարադրի գործառնությով հանդես են գալիս հիմնականում գրաբարի ակտիվ բառապաշարի շերտ կազմող մի քանի գոյականներ և այլ բառեր: Դրանցից են՝ *աթոռ, ակն, այր, անձն, սար, աշք, աշխարհ, բան, բերան, բուռն, զինի, զին, երեսք, թիւ, ժամ, լեզու, կին, հողի, ձեռն, միմեանս, միտք, ոգի, ոտն, սիրտ, քուն* և այլն: Անշուշտ, դրանք տարբեր բարդությունների մեջ հանդես են գալիս քերականական տարբեր ձևերով՝ նպաստելով այս կամ այն բայիմաստի արտահայտմանը: Օրինակ՝ Նայեր թագաւորն և տեսանէր, զի *ըստ ակն անկանէին*, մինչ զի ոչ երևէին նշանքս Մուշեղի (Բուգ., 164): *Գինի եկն զականք* նորա (Բուգ., 103): Ընտրեցի ես *ընդ աղբ գալ* ի տան Աստուծոյ, քան զքնակեալ ի յարկս մեղաւորաց (Սաղմ., ՁԳ, 11): Եւ ժողովեցան ցրուեալք երկրին, եկին *անկան այր յայր* (Բուգ., 211): Անձամբ զանձինս *վճիռ* մահու *ընկալաք* (Բ Կոր., Ա, 9): Ջուրքն *դարձան զանձամբք* /«շրջվել», «շրջան կատարել»/ (Եփր.): Սա ինքն *անցեալ էր զաւուրքք* բազմօք (Ղուկ., Ա, 18): Յայն *բան եկին* աշակերտք նորա (Յովհ.,

Դ, 27): Սաստկագոյն հալածանօք *բուռն ի վերայ եղեալ՝* զփախստեայսն տանէր (Բ Մակ., ԺԲ, 23): *Ընդ գինիս մտին* (Ագաթ., 30): Արձանս հրամայէր կանգնել և *զիր հաստատել* (Գ Մակ., Բ, 14): *Ի գլուխն ելանէ* հրամանն (Փարպ., 35): Ոչ մի ինչ իրք կամ գործք Հայոց *երթեալ էին ի գլուխ* (Փարպ., 58): *Երեսս առեալ՝* կամի զբանն յայտնագոյն (Ոսկ.): Պակասեալն ոչ կարասցէ *ի քիւ անկանել* (Ժող., Ա, 15): *Ժամէ ի ժամ առնելով* /«հապաղել», «երկարածգել»/ զժամանակ ապաշխարութեան կորուսանէր (Մանդ.): Անշունչ արարածք *ի լեզուս գայցեն* (Յճխ.): *Մի՛ զբազում բանիւք անկանիր* (Յովբ, ԺԱ, 3): Զի մի երևեսցի ի մէջ անմտացն, իբրև *զբանիւք իմ եկեալ* /«հակասել»/ (Ոսկ.): Ոչ կարծիք լրտեսի *անկանէին ի սիրտս* նորա (Եղիշէ, 142): Բանք սաղմոսին ձայնիւք միշտ *ընդ բերանս գայցեն* (Ոսկ.): Նոյ ըմպէր գինի և *անկանէր ի բուռն քնոյ* (Ոսկ.): Ստանայցես զայն քեզ և *ածիցես* զայն *զգլխով քով* և զմօրուօք (Եզեկ., Ե, 1): Առնն միտք *յինքն եկին* (Գ Մակ., Բ, 12) և այլն¹⁷²:

Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի դարձվածային մի շարք բայեր իրար հետ կազմում են ձևախմաստային խմբեր՝

ա) *հոմանիշներ*, ինչպես՝ *Աւուրս* բազումս *հանէին* անդ (Գործ., ՀԵ, 14) և Այլ թէ բազում *աւուրս արարեալ* ի Կեսարիայ (Խոր., 221): *Ի բանս* անմիտ մարդկան *եկեալ* թագաւորն Վարազդատ և զգօրավարն Հայոց զՄուշեղ սպանանէր (Բուգ., 154) և *Ի նոցա բանս ելեալ* թագաւորն, ոչ կամէր անսալ (Եղիշէ, 73): Քն հերձուածողացն գուպարք *ի բերանս եղեալ* կարկեցան (Բրս.) և Ի խօսելն իմում՝ առաւել *ափիբերան լինիցին* (Իմաստ., Ը, 12) և այլն:

բ) *համանիշներ*, ինչպես՝ Եւ յետ սորա *փոխեցաւ* ևս *յաշխարհէ* մեծ քահանայապետն Վրթանէս (Բուգ., 25): Եւ *յանցանել յաշխարհէ* թագաւորին Խոսրովու (Բուգ., 25): *Ելանել ըստ աշխարհ* (ՆՀԲ): Եւ *փշէ զհոգին* (Խոր., 36): Եւ ի բուրաստանի ուրեմն *անձին արար* (Եւս.) և *Մաւուղաբար արար ընդ անձին իւրում* (Խոր., 301): Ուր գողք *ական հատանեն* (Մատթ., Զ, 19): *Եհատ անկիւն* գողն (Ոսկ.) և *Խրամ հատեալ* յափշտակեաց (Եղիշէ, 91): *Մու՛տ ընդ աղեղնդ* ձեռօք քովք (Դ Թագ., ԺԳ, 16) և Իսկ նա, *ընդ*

գիրկս մտեալ, հարկանէր զայրն նետիւ (Բուգ., 215):

զ) *հականիշներ*, ինչպէս՝ Առ ի լուսաւոր առնել զամենայն մարդ, որ *զալոց է յաշխարհ* (Ագաթ., 363) և Եւ *յանցանելն յաշխարհէ* թագաւորին Խոսրովու Տիրան՝ որդի Խոսրովու ա՛ն զթագաւորութիւնն Հայոց մեծաց (Բուգ., 25): Եւ սատակեսցի ամենայն անդրանիկ յերկրիդ Եգիպտացոց, յանդրանկէ անտի փարաւոնի, որ *նստի յաթոռն* նորա (Եւ., ԺԱ, 5) և Եւ *անկաւ* Հեղի *յաթոռոյն* (Ա Թագ., Դ, 18) և այլն:

Խնդրառոթյամբ արժութագուրկ չեզոք սեռի հարադրավոր բայերը հարկ եղած դեպքում կարող են գործածվել ոչ միայն ուղիղ, այլ նաև փոխաբերական իմաստով: Վերջին դեպքում այդ բայերի արժութային հնարավորությունները չեն փոփոխվում: Օրինակ՝ Չոր տեսեալ զօրացն Ալեքսանդրի՝ *ճախր առեալ* ճեմէին (Աղեքս.): *Ի խորս* մտաց ձերոց հատէք ալօսս (Ոսկ.): Որով *պնդեալ զմէջս* մտաց ձերոց (Ոսկ.) և այլն:

Չեզոք սեռի հարադրավոր բայերի մի մասը մյուսներից առանձնացնում է նրանով, որ պարտադիր կերպով ունի կամ ենթադրում է ոչ թե բայական անդամի լրացում, այլ սեռական հոլովով արտահայտված մի բառածև, որը խոսքահատվածում կիրառված տվյալ հարադրավոր բայի արտահայտած իմաստի ամբողջացմանը նպաստող անհրաժեշտ միջոցն է: Այսպէս՝ սեռական հոլովով պարտադիր բաղադրիչ են պահանջում հետևյալ բայերը՝ *զհետ մտանել, զհետ կրթիմ, զհետ դնել, զհետ լինիմ, զհետ պնդիմ, զկնի ելանել, զկնի լինիմ, զկնի մտանել, ձեռն (ի ձեռս) անկանիմ, զլանջօքն անկանիմ, զառաջս ունիմ, յաչաց ելանել, զդէմ ունիմ, ընդ միտ մտանել, ի ձեռն զալ, յակն անկանիմ, զհրամանաւ անցանել, ըստ հրամանաւ անցանել, զմիտս քրքրել, ձեռն զօձեօքն արկանել, բան(ս) ի բերան դնել, հնարս խնդրել* և այլն: Ընդ որում, նկատելի է, որ դրանց մի մասն ունի դարձվածային արժեք, իսկ մյուս մասը՝ ոչ: Օրինակ՝ Պատրաստութեամբ զհետ կրթէին *Վարազայ* (Բուգ., 46): *Չորոց* զհետ եղեալ՝ զոմանս սպանանէին (Փարպ., 128): *Չոյր* զհետ ելեալ ես, արքա՛յդ Իսրայէլի (Ա Թագ., ԻԴ, 15): Այնուհետև հնարս խնդրէր առն կնոջն *կորստեան* (Բուգ., 99): *Չհետ* ունելով *քաջածիոյն* ի դժուարս քարանց (Խոր., 266): Մտեալ ես զկնի *ծառայի* քո (Ա Թագ., ԻԶ,

18): Եւ պնդեցաւ զկնի *նոցա* զիշերի (Ծննդ., ԺԴ, 15): Տայր հրաման զիետ լինել *Տիրիքայ* (Բուզ., 104): Ձիետ մտանելով *գօրացն* Պարսից հանեն առ եզերք սահմանացն Ատրպատականի (Խոր., 211): Սովոր էր անցանել ըստ հրամանաւ *թագաւորին* (Եղիշէ, 171): Ի ձեռս *մեր* անկեալ (Ագաթ., 119): Անկեալ զլանջօքն *Յիսուսի* (Յովհ., ԺԳ, 25): Շմաւոն զառաջս ունէր *նորա* (Ա Մակ., ԺԳ, 20): Եւ *թագաւորիդ* մեծի յաչաց ելանեմ (ՆՀԲ): Կարասցուք զայսպիսի *քաջորերոյ* ունել զդէմ սակաւացեալքս (Փարպ., 153): Պնդեցարուք ստեպ զիետ *նոցա* (Յեսու, Բ, 5): Կամէր ընդ միտ մտանել *ապօրինին* (Եղիշէ, 90): Եւ ոչ *պահապանացս* յակն անկեալ յարուցեալն (Եղիշէ, 87): Խօսել սկսանէր ընդ մմա զբանս ի բերան եղեալ *Անդոկայն* չարագործի (Բուզ., 114):

Սեռական հոլովով արտահայտված անդամը հազվադեպ կարող է բացակայել: Սա այն դեպքում, եթե տվյալ անդամը ենթադրվում է խոսքի բովանդակության պլանից, ինչպես՝ *Գունդ-գունդ հատանէին, զկնի լինէին* (Ագաթ., 22): *Ջենընկէց լինելով ի ձեռն եկին* (Խոր., 308): *Չեռն զօծեօքն արկանէր* (Ա Մակ., Բ, 14) և այլն:

Խնդրառությանը արժութագուրկ չեզոք սեռի հարադրավոր բայերը գրաբարի հարադրավոր բայերի մի զգալի մասն են կազմում (դրանց թիվը, մեր հաշվումներով, հասնում է շուրջ 500-ի):

Բ.2.3.2. ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՐԺՈՒՅԹ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Խնդրառությանը միարժույթ հարադրավոր բայերի խնդիրը հանդես է գալիս արտահայտության տարբեր պլաններով:

1. Խնդրառությանը միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի գրեթե կեսը կարող է պահանջել կամ ենթադրել *տրական հոլովով* արտահայտված բնության խնդիր: Այդ բայերից են՝ *այց առնել, յայց ելանել, անարգանս առնել//դնել, անդորր առնել, անկողնարկ լինիմ*¹⁷³, *անդարձ լինիմ, ապաւեն լինիմ, ապտակ ածել//դնել//մատուցանել, ընդ առաջ գալ//գնալ//ելանել//երթալ//լինիմ, առաջի կալ*¹⁷⁴, *արգել առնել, արգոյ լինիմ,*

բազմական արկանել, բաշխումն առնել, բաւական գտանիմ, բժշկութիւն
առնել, բուռն առնել//լինիմ, գամագիտ լինիմ, գերեղարձ առնել, գերեկից
լինիմ, գին դնել, գիտուն լինիմ, դուլ և դադար առնել, դարման առնել,
դատապարտ առնել, դէմ յանդիման լինիմ, /ի/ գլուխ լինիմ, դարման
տանիմ, ի դէմս գալ, դէմ յանդիման գալ, դիմադարձ լինիմ, դիմակայ//
դիմակաց լինիմ, ի դիմի հարկանիմ, դիպան ելանել, առ դիպան
պատահիմ, դիւրահաւան լինիմ, երկին պագանել, երախտիս առնել,
երդմնի լինիմ, զգոյշ կալ, յերկմիտ լինիմ, զօրավիգն լինիմ, ընդդէմ կալ//
լինիմ//երթալ, ընդդիմակաց լինիմ, ընթացակից լինիմ, թագադիր լինիմ,
թշնամանս դնել¹⁷⁵, ի թշնամութիւն դառնալ, թողութիւն լինիմ, թուակից
լինիմ, ժամ առնել, ժառանգ լինիմ, ժառանգորդ լինիմ, ժառանգակից
լինիմ, ժառանգաւոր լինիմ, իրազգած լինիմ, խաղակատակ լինիմ,
խաղակից լինիմ, խարդաւանակ լինիմ, խեղդ/ընդ անձն/ արկանել//լինիմ/
/առնել, խիլ արկանել, խնամ կալ, խնամ տանիմ, խնամակալ լինիմ,
խրախոյս տալ, խնդիր առնել, ի խնդիր ելանել, ի խոստման կալ,
խոստմունս առնել, խօթակից լինիմ, զծառայութիւն հարկանել, ի
ծառայութեան կալ//անկանիմ, ծառայութիւն առնել, ծունր կրկնել, կաշառ
խթել, կարեկից լինիմ, կենակից լինիմ, կեր լինիմ, կերակուր լինիմ,
կերպարանակից լինիմ, ի կիրթ ձգել, կուր լինիմ, կուր արկանել, կցորդ
լինիմ, ընդ հակառակս լինիմ, հանգիստ առնել, հանդէպ լինիմ, հանդէս
առնել, ի հարկի կալ, հետաքնին լինիմ, հիմունս դնել, հիւանդակից լինիմ,
հմուտ լինիմ, հնազանդ լինիմ//կալ, ի հնազանդութիւն գալ, հոգ (յանձին)
տանիմ//ունիմ, հոգաբարձ լինիմ, հովանի առնել//լինիմ, հորդան տալ,
հպատակ կալ, հրամանագանց լինիմ, ձայն արկանել, ձայնակից լինիմ,
ձեռնկալու լինիմ, ձեռնպահ լինիմ, ճարակ լինիմ, ճշմարտակից լինիմ,
մեղ առնել, մեղ դնել, միաբան լինիմ, միաբանութիւն առնել, միամիտ
լինիմ, մխիթար լինիմ//տալ, /ի/ յայտ գալ, /ի/ յանկ ելանել, յանդիման
երևիմ//լինիմ//կալ, յափշտակութիւն առնել, նախանձ արկանել,
նախանձուկս արկանել, նախանձախնդիր լինիմ, շարժակից լինիմ,
շնորհս արկանել, շնորհս ունիմ, շնորհակալ լինիմ, ոխս պահել, ողջոյն

առնել//տալ, ոսոխ լինիմ, ուխտաւոր լինիմ, ունկնդիր լինիմ, ունչ առնել,
 ուշ առնուլ//առնել, յուշ լինիմ, պաշտօն առնել, չափ դնել, պահակից
 լինիմ, ի պաշտօն դառնալ//մտանել, պաշտօն հարկանել//մատուցանել//
 տանիմ, պատասխանի առնել, պատիւ առնել//տալ, պատուակից լինիմ,
 պատրաստ կալ, ջանակից լինիմ, ջատագով մտանել, սատարս տալ,
 սեղանակից լինիմ, սուտակասպաս լինիմ, սուսերաւ ածել, ի սպասու կալ,
 սպաս տանիմ//ուցել, սպասաւոր լինիմ, վախճան առնել, վտանգակից
 լինիմ, վարձս արկանել, տեղեակ լինիմ, ի փորձ մտանել, ընդ փորձ
 անցուցանել և այլն: Օրինակ՝ *Իրազգաց եղեալ խորհրդոյ* (Փարպ., 57):
Պատսպարան լինիմ տկարաց (Ա Թեսաղ., Ե, 14): *Պատճառս տալ նմա*
(Ոսկ.): Ջինջ լինել Արեաց (Եզեկ., ԻԱ, 10): Սոյն Յոհան խաղակատակ
լինէր նոցա (Բուգ., 228): Նոցա իսկ *մեռելոցն խիլ արկանէին* աւագակքն
(Եւս.): Խնամ տանել իւրում *իշխանութեանն* (Եղիշէ, 38): *Խնդիր առնել*
մարմնոց դիականցն (Տովբ., Ա, 21): *Ծառայութիւն առնել ձեզ* (Փարպ.,
 168): *Դնէր հիմունս եկեղեցեաց* (Ագաթ., 433): *Հպատակ կալ արքային*
(Բուգ., 216): Ե՛կ, հրեշտա՛կ, սպասաւոր լեր ահագին *խորհրդոյ* ծածկելոյ
(Ոսկ.): Ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի (Խոր., 192):
Վտանգակից լինի առաքինութեան Յիսուսի (Ոսկ.): Չմտաւ ածել *այց լինել*
մեղացն քողութեան (Բ Մակ., ԺԲ, 46): *Եդ անարգանս տիկնոջն* (Բուգ.,
 160): *Անդորր արարեր սրտի* իմոյ (Սաղմ., ԴԺԸ, 32): *Որում ոչ ոք կարէ*
կալ առաջի (Փարպ., 136): Նաև *մնացելոյն* կարենք *լինել գամագիտ*
(Փարպ., 122): Ինքեանք յարտասուս հարեալ տղային (Փարպ., 56): *Ի դէմս*
գայ ինձ ախտն (Առ որս.): *Դիմադարձ լինէր հրէիցն* (Եսթ., Թ, 1):
Դիւրահաւա՛ն լեր ճաշակողաց (Եղիշէ, 37, ՆՀԲ): Մի ոմն ի քաջ
 զօրականէն Հայոց *թշնամանս դնէր անօրինին* (Եղիշէ, 122): Յետ այսորիկ
 ժամադիր *միմեանց լինէին* (Բուգ., 203): Այրեաց ե՛ւ որբոց, ե՛ւ չքաւորաց
 հանգիստ և *դարման առնէր* (Բուգ., 65) և այլն:

Այս շարքի բայերից առանձնանում են այնպիսիք, որոնք ունեն
 դարձվածային արժեք. *ակն դնել, թէկն ածել* («օգնել»), *թիկունք լինիմ,*
թիկունս տալ, երկիր պագանել, գիետ բերել, միտ/ս/ դնել, ունկն մա-

տուցանել, ունկն դնել, յունկան դնել («հնազանդվել»), ունչս առնել («ծաղրել»), ակն տալ¹⁷⁶, ընդ ակն խոցել («վիրավորել»), ի վերայ հասանել, ձեռն տալ և այլն: Օրինակ՝ Որ ինձ ակն եղ, գայրն իմ ետ սպանանել (Բուզ., 103): Եւ ոչ երբեք ետ ձեռս պատերազմողացն (Ոսկ.): Յանձն եղեալք սուրբ Հոգւոյն (Եղիշէ, 11): Որ ապստամբին քէկն ածէ (Սեբեր.): Հաւանեցուցանելին գնոսա քիկունս լինել իւրեանց (Բուզ., 144): Թիկունս տալ նահատակին (Եփր.): Յաղագս որոյ զհետ բերէ ասացելոցս (Բրս.): Որում եթէ քաջ միտ դնես (Եղիշէ, 32): Իմոց բանից մատո՛ղ գունկն քո (Առակ., Դ, 20): Ունկն դնէին յեղյեղուկ լեզուի նորա (Եղիշէ, 84): Թէպէտ և իմանայցէ, չդնէ յունկան (Առակ., ԻԹ, 19): Ունչս առնէր ամենեցուն (Փարպ., 74): Տու՛ք ակն բանդարգելոց (Եղիշէ, Յես.): Եպագ երկին արեգական և կրակի (Բուզ., 119): Զի իւր ակն եղեալ էր տէրութեան նորա (Ա Մակ., ԺԱ, 11): Որում յանկարծօրէն ի վերայ հասեալ¹⁷⁷ Արամ՝ յառաջ քան զծագել արեգական սատակեաց զբազմութիւն ամբոխիցն (Խոր., 44) և այլն¹⁷⁸:

Որոշ հարադրավոր բայերի՝ տրականով արտահայտված բնության խնդիրը բացակայում է՝ տվյալ նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով: Օրինակ՝ Իւր տոհմայինքն ի քիկունս հասցեն (Խոր., 202): Իսկ Տիրան, հարեալ սպասաւորութիւն, անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս ընդ Եփրատ (Խոր., 271): Հանդերձ միաբանութեամբ զօրացն հետահաս եղեալ՝ կոտորեաց զամենայն ցեղ (Խոր., 209): Եւ խեղդ ընդ անձն արկեալ՝ ձգեն գնոսա ի խորխորատ (Եզնիկ, 116) և այլն:

Տրականից բացի՝ որոշ բայեր միաժամանակ պահանջում են նաև գործիական հոլովաձևով կամ կապական կապակցությամբ արտահայտված բնության խնդիր ևս, որը, սակայն, այդ բայերի համար պարտադիր և ուժեղ կառավարման արտահայտություն չէ: Օրինակ՝ Ահ ինչ արկանել ձեզ քղթովքս (Բ Կոր., Ժ, 9)¹⁷⁹: Ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ (Եղիշէ, 142): Բազում գաղտագողօնք լինէին անձին ի ձեռն Լիւսիմաքեայ (Բ Մակ., Դ, 39): Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ (Խոր., 45): Վահան ոչ տայր դուլ առնուլ զօրօք իւրովք Պարսկաց ի դակշին (Փարպ., 148): Պաշտօնատուր լինիմ դիցն (Ազաթ., 30) նուիրօք և զօհիր (Նիս.):

Այնու նմա վնաս ինչ գործել կարիցէ (Եզնիկ, 48): Սակաւ *արամբբ* վնաս արար (Փարպ., 159): Հովանի եղև Յակոբեան տոհմին (Իմաստ., Ե, 17) *աջով* իւրով (Յովն., Դ, 6)¹⁸⁰: *Երկայնամտութեամբ* յաղթուկ լինիմ փորձութեանցն (Բրս.)¹⁸¹: Ինքն *ընդ մեզ* (Ա Թագ., Լ, 22) ոչ հետամուտ լինի նմա (Խոր., 230) և այլն:

Տրականով բնության խնդիր պահանջող որոշ միարժույթ հարադրավոր բայեր միաժամանակ կարող են պահանջել նաև այլ բնության խնդիրներ, որոնք նույնպես այդ բայերի երկրորդ խնդրառական արժույթի դրսևորումները չեն, այլ, ավելի շուտ, պատահական կապակցություններ՝ պայմանավորված տվյալ խոսքային իրադրությամբ: Օրինակ՝ *Ընդ իս* իւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեսցիք (Եղիշէ, 45): Զի մի *ընդ քո* այլ ումեք երկիր պագանիցեմք (Կոչ.) և այլն:

Տրականով բնության խնդիր պահանջող հարադրավոր բարդությունների բաղադրիչները բազմաթիվ դեպքերում իրարից տարանջատվում են նշված բնության խնդրով, երբեմն էլ՝ այլ անդամներով ևս: Սակայն պետք է նշել, որ բարդության բաղադրիչների՝ նշված անդամներով տարանջատումը տեղի է ունենում միևնույն շարույթի սահմաններում: Օրինակ՝ Փախստականքն Մովսրու *եղիցին* ձեզ *ապաւեն* յերեսաց հալածչի (Ես., ԺԶ, 4): *Հանէին* նմա *ասպատակս* (Յովն., ԺԹ, 3): *Դիւրընկալ* խողացն *լինիցի* (Կիրդ.): *Զրաւ* հարսանեացն *լինէր* (Ոսկ.): *Ընդդէմ* Հեփթաղի *երթալ* (Փարպ., 155): *Դարձաւ* նոցա Տէր *ի թշնամութիւն* (Ես., ԿԳ, 10): Այլ եթէ *շնորհակալ* և մերոցս տքնութեանց և ջանից *լինիցիս* (Խոր., 22): Եւ *արարին* նամակին *պատասխանի* (Եղիշէ, 27) և այլն:

Տրականով արտահայտված բնության խնդիրը շարադասությամբ կարող է լինել և՛ նախադաս, և՛ վերջադաս: Հմմտ. *Նմա* ընդառաջ լինի ոմն Պակարոս անուն (Խոր., 133) և ընդ առաջ լինէր *նմա* իշխանն Գարդմանից (Կորիւն, 72): Շնորհ ունիմք *Աստուծոյ* (Խոր., 334) և՛ *Որոց* ատրուշանն շնորհ չունէր (Փարպ., 170): Ոչ կամէր առնել *բանիցն* պատասխանի (Բուգ., 101) և՛ Առնէ պատասխանի *Արգարու* (Խոր., 148):

Տրական հոլովաձևով արտահայտված բնության խնդիրը պահանջ-

վում է, մի դեպքում՝ հարադրավոր բայերի հարադրի, մյուս դեպքում՝ հարադրավոր բարդության բայական բաղադրիչի, իսկ երրորդ դեպքում՝ ողջ բարդության կողմից:

Հարադրով պայմանավորված՝ տրականով բնության խնդիր է պահանջվում այն դեպքում, երբ՝

ա) հարադիրը մի բայանուն է, որն ինքնին կարող է պահանջել տրականով բնության խնդիր, ինչպես՝ *Յայց* ելանել մեզ (Ղուկ., Ա, 68): Կամեցան *գօրավիզն* լինել Շապիոյ (Բուգ., 110)¹⁸²: Ամենեցուն իրաքանչիւր գործոց ընդելս և *ծանօթս* կացուցանէր (Ագաթ., 77): *Խոստմունս* առնէ նախարարացն (Խոր., 211): *Ծանօթ* Աստուծոյ լեալ (Խոր., 163): Միայն *ծարաւի* լեր սիրոյն (Ագաթ., 9): *Երդմնի* լինել նոցա (Ա Մակ., Է, 15): Պոռնկութիւնն քո *յամօթ* լիցի քեզ (Ես., ԽԷ, 10)¹⁸³: Լինիմ գտեալ *հաճոյ* Աստուծոյ (Փարպ., 190): *Հաճոյ* լինիմ սմին (Բուգ., 1): *Նպաստաւոր* լինիմ որում (Եւագր.): *Ողջոյն* առնել միմեանց (Ել., ԺԷ, 7): Եւ տային միմեանց *ողջոյն* (Բուգ., 85): Գործոց *սատար* լեալ էին (Բուգ., 206): *Հակառակ* կալ աջոյ քո (ՆՀԲ): *Հրաման* ետ արքայ Խոսրով ընդ առաջ նոցա խաղալ հասանել (Բուգ., 17)¹⁸⁴: *Պաշտօն* առնէին թագաւորին (Ոսկ.) և այլն:

բ) Հարադիրը մի բարդ բառ է, որի բաղադրիչներից մեկը (սովորաբար վերջինը) տրական հոլովաձևով արտահայտված բնության խնդիր պահանջող բայանուն է կամ բայարմատ: Վերջիններից առավել հաճախադեպ են *-կից*¹⁸⁵, *-բախ*, *-տար*, *-տու*, *-փոխ* և այլ արմատներով բաղադրված հարադիրներով բայերը. *որում* ընդդիմակացն լինիմ (Աթ.), աջակից լինիմ, առաքինակից լինիմ *նոցա* (Առ որս.), արժանահատ լինիմ *ձեզ* (Ոսկ.), *արօտակից* լե՛ր գառանցն (Կոչ.), բանակակից լինիմ *հրեշտակաց* (Եղիշէ, 18), բարեհաճոյ լինիմ *Աստուծոյ* (Աթ.), գերեկից լինիմ *նոցին* (Ոսկ.), գործակից լինիմ *մշակացն* (Բուգ., 63), երդակից լինիմ *բազմութեան* (Եղիշէ, 196), եղակից լինիմ *չարի* (Թրակ.), գգուշակից լինիմ *իրաց* (Ոսկ.), գուարթակից եղեն *երկնաւորացն* (Ագաթ., 24), գուարճակից լինիմ *տեսութեանդ* (Պիտ.), գերեկից *իւր* լեալ Բարսամայի ուրումն (Խոր., 126), ընծայատար լիցին մեծի *հարսանեացն* (Ագաթ., 80), լուսատու լինիմ

(Ծննդ., Ա, 17), այլալակից լինիմ (ՆՀԲ), խորհրդակից լինիմ *կամաց* (Յճխ.), խրախճանակից լինիմ *ձեզ* (ՆՀԲ), խրատտու՝ լեր *կենաց* (Փարպ., 99), խօթակից լինիմ *մարմնոյն* (Նիւս.), ձայնատու լինիմ *թշնամեացն* (Առակ., Ը, 1), ձեռնտու լինել *այնոցիկ* (Ագաթ., 265), մխիթարակից լինիմ *Աստուծոյ* (Մամբ.), ուրախակից լինել *այնոցիկ* (Ագաթ., 265), չարչարակից լինիմ *սրբոցն* (Եղիշէ, 132), պահակափոխ եղև յարութիւն *մահուն* (Կոչ.), պարզատու լինի իւրոցն *արժանեացն* (Ագաթ., 290), ստեղծակից լինիմ *բարեացն* (Բրս.), վերահասու եղաք *գրելոցս* առ ի քէն (Խոր., 335), փոխահատոյց լինիմ իւրաքանչիւրոց *սիրոյ* (Պիտ.) և այլն:

գ) Տրական հոլովաձևով արտահայտված բնության խնդիրը բայական բաղադրիչի կողմից է պահանջվում այն դեպքում, երբ տվյալ բայն իր անկախ կիրառության դեպքում ևս կարող է պահանջել նույնպիսի խընդիր: Բնական է, որ այս դեպքում բայական բաղադրիչի գործառույթ կարող են կատարել *մատնել, մատուցանել, տալ, տանիմ* և նմանատիպ այլ բայեր: Օրինակ՝ Ոչ տայր դադար *թագաւորին* Պարսից (Եղիշէ, 94): Դարման տանել *անձանց* (Ագաթ., 261): Երկրպագութիւն մատուցանել (Եզնիկ, 11): Որում գոհս մատուցանել (Եզնիկ, 140): Այլ ոչ երբեք ետ ձեռս *պատերազմողացն* (Ոսկ.): Մխիթար տալ *աշակերտացն* (Բ Տիմ., Ա, 4): Մխիթար մատուցանել *մտացն* լինելոցն (Եղիշէ, 142): Պատրանս մատուցանել *նմա* (Խոր., 80): Տու՛ր պարապ *անձին* քում (Կոչ.): *Անձին* իւրում միայն պարծանս տայցէ (Գաղատ., Զ, 4): Տեղի տալ *խաւարին* (Եզնիկ, 15): Ետ փառս *Աստուծոյ* (Փարպ., 108): Եւ ոչ *անօրինաց* մատնել ի ծաղր և յայպանումն (Խոր., 347): *Թշնամեաց* զգեցուցից զամօթ (Սաղմ., Ա, 18)¹⁸⁶: Տու՛ք ձայն բարբառոյ *նուազածաց* (Դատ., Ե, 11) և այլն:

դ) Առանձին շարք են կազմում այն բայերը, որոնք տրական հոլովով արտահայտված բնության խնդիր են պահանջում՝ ողջ բարդության բառիմաստով պայմանավորված: Այս դերով առանձնանում են հիմնականում դարձվածային արժեք ունեցող հարադրավոր բայերը: Ակն եղ *նոցա* հայեցուածովք (Եզեկ., ԻԳ, 16): Եղիցի գլուխ *քնակչացս* (Դան., Ժ, 18): Ահ արկանել *սրբոցն* (Եղիշէ, 82): Կրօնիւք *հրեշտակաց* զբահետ վարել

(Կողոս., Բ, 18): *Այրեաց* և *որքոց* դարման առնէր (Ագաթ., 20) և այլն:

Պետք է նկատել, որ տրականով արտահայտված ոչ բոլոր բնության խնդիրներն են պարտադիր և ուժեղ կառավարման դրսևորում: Այսպես՝ *դարան գործել*-ը խնդրատական արժույթից զուրկ է (անշուշտ, խոսքը չի վերաբերում խնդրատությանն ընդհանրապես), սակայն կարող է ստանալ ոչ պարտադիր խնդիր, որի առկայությունը պայմանավորված է ոչ թե նշված բայի բառիմաստով, այլ տվյալ խոսքային իրադրությամբ [Դարան գործից է *մմա* (Բ Օրեն., ԺԹ, 11)]: Հմմտ. նաև՝ *Դարանակալ լինիմ մմա* (Դատ., ԺԶ, 2), *որսոյ* (Սիր., ԻԵ, 11), *ի դրունս* (Յովբ, ԼԱ, 9), *ի ծործորս* (Ես., Ը, 14) և այլն:

2. Խնդրատությամբ միարժույթ մի շարք չեզոք սեռի հաբադրավոր բայեր պահանջում կամ ենթադրում են *բացառական հոլովով* արտահայտված բնության խնդիր¹⁸⁷. *ազատամիտ լինիմ, անբաժան լինիմ, անթաքուստ լինիմ, անթիւ լինիմ, անծանօթ լինիմ, անհոգ լինիմ*¹⁸⁸, *անձնատուր լինիմ, անձնապուր լինիմ, անմասն լինիմ, յապուշ դառնալ, ապստամբ լինիմ, ապտակ առնուլ, արագագերծ լինիմ, աւոլոց լինիմ* («դուրս ելնել»), *ի բաց փախչիմ, ի բաց գալ//դառնալ//երթալ//լինիմ//կալ*¹⁸⁹, *բացագնաց լինիմ, գերի ելանել, դիրազերծ լինիմ, երկիւղուկս արկանել, երկպառակ լինիմ, գահի հարկանիմ, գանխուլ լինիմ, գանց լինիմ, ընդհատ երևիմ, ընչաթափ լինիմ, թափուր լինիմ//մնալ, թերաթափ լինիմ, լուռ լինիմ, ի լսելիս հասանել, խոյս տալ//լինիմ, ծաղկագերծ լինիմ, կապուտ թափել, կասկած ունիմ, կողաքակ լինիմ, ընդ կրուկն դառնալ, համարս պահանջել, հանդարտ լինիմ, հեղձամղձուկ լինիմ, հետակորոյս լինիմ, հրաժեշտ լինիմ//առնուլ, ձեռնթափ լինիմ, զմտօք զանցանել, յառաջաբան լինիմ, զաղտագնաց լինիմ, յետս դառնալ//ընկրկել//կալ, յուսահատ լինիմ, նկուն լինիմ, շնորհս գտանել, ոգի առնուլ, զոգի թափել, ողջոյն առնուլ, ուս արկանել, չիք լինիմ, պատիժ պահանջել, ի վերայ հասանել, վշտամբեր լինիմ, վրէժ(ս) առնուլ, փաթերակ առնուլ* («աչքի գալ»), *ի փախուստ դառնալ, փախստական լինիմ, փախստեայ գնալ, ի քնին գալ* և այլն: Օրինակ՝ Ի բաց կացցեն խյնալիս վրիպական *օրինաց* (Եղիշէ, 48): Ելթայք *յիճէն* ի բաց (Փարպ., 92): Յանօրէն *ձեռաց* անտի ապտակ առեալ համբերէր

(Կոչ.): Ատեայր և առողջ ելանէր *ի քարոզութենէ* ճշմարտութեան (ՆՀԲ): *Ի նմանէ* միայն մի գերի ելցեն (Եղիշէ, 98): Հրաժեշտ լինիմ *ի յերանութեանց* (Յճխ.): *Ի բանից* խորհրդի յառաջաբան լինել մի յօժարեսցիս (Եւագր.): Վշտամբերք լեալ իցեն *ի սովորութեանցն* (Եղիշէ, 200): Պատուհաս *ի Տեառնէ* ի վերայ հասա-նէր (Ագաթ., 113) և այլն:

Նման բարոյությունների՝ բացառականով բնության խնդիր առնելը պայմանավորված է սրանց բաղադրիչների իմաստային առանձնահատկություններով: Նշենք դրանցից մեկ-երկուսը:

Մի դեպքում բացառական հոլովով բնության խնդիրը պահանջվում կամ ենթադրվում է հարադրի իմաստով պայմանավորված, որը կազմությանը կարող է լինել պարզ, ածանցավոր կամ բարդ: Օրինակ՝ *անհոգ* լինիմ յեկելոցդ (Փարպ., 64), *ի բաց լինիցիս* (Ել., ԻԳ, 7), *ի բաց* երթալ, *ի բաց* կացին ի հարկելոյ Հոովմայեցոց (Խոր., 189), *անթաքուստ* լիցին ի վրէժխնդրութենէն (Ագաթ., 281), *անծանօթ* եղեն ի նմանէ (Ագաթ., 234), յերեսաց Տեառնէ *ի բաց* կացաք (Փարպ., 168), *երկիւղուկս* արկանել ի քէն (Բուգ., 142), *գանխուլ* լինիմ ի բազմաց (Խոր.), *ընդհատ* երևիմ յայնցանէ (Բուգ., 5), *թափուր* լինիմ ի մարդկանէս (Եղիշէ, 68), *կասկած* ունելով յորդոցն Սանատրկոյ (Խոր., 162), *հրաժեշտ* առնուլ ի թագաւորէն (Եփր.), *փախստական* լինէր¹⁹⁰ Արշակ ի Շապիոյ (Բուգ., 52), յարարչէն *ի բաց* լինելով (Եղիշէ, 37):

Ընդ որում, եթե հարադիրն ինքը կազմությանը բարդ է, ապա բացառականով խնդիրն արտահայտվում կամ ենթադրվում է այդ բարոյության հիմնական ձևայիններից որևէ մեկի պահանջով: Նկատենք, որ տրվյալ ձևային բարոյության մեջ ունեցած շարադասությունը խնդրառության համար էական դեր չի կատարում (այն կարող է գրավել կա՛մ նախադաս դիրք, կա՛մ վերջադաս). դիւրա *գերծ* լինիմ ի բռնադատութենէ (Պիտ.), *ազատամիտ* լինիմ յատելութենէ (Եւագր.), ուստի և դիւրա *պուրք*, արագա *գերծք* լինիցին (Ոսկ.), յերեսաց հալածչացն *բացազնաց* լինէին (Ոսկ.), ի դոյզն շարժմանէ ծաղկա *գերծ* լինիմ (Պիտ.), կողա *բակ* լիցի ի նմանէ (Բուգ., 106), ձեռն *թափ* եղեն ի գօրացն Հայոց (Եղիշէ, 73), յուսա *հատ* եղեց ի ճշմարիտ

կենաց (Ագաթ., 128):

Մյուս դեպքում բացառական հոլովով բնության խնդիրը հանդես է գալիս (կամ ենթադրվում է) հարադրավոր բարդության բայական բաղադրիչի պահանջով: Օրինակ՝ Ի նմանե միայն մի գերի *ելցեն* (Եղիշէ, 98): *Թափէր* կապուտ ի նոցանէ (Ագաթ., 72): *Առնուլ* ողջոյն ի սրբոյն եպիսկոպոսապետէն (Բուգ., 97): Որպէս թշնամիք ի թշնամեաց վրէժ *առնուցուն* (Խոր., 33) և այլն:

Երրորդ դեպքում բացառական հոլովով բնության խնդիր առնելու կամ ենթադրելու գործընթացում ունեն մի շարք բարդությունների թե՛ հարադիրները և թե՛ բայական բաղադրիչները, ինչպէս՝ *Ի բաց փախեան* ի նմանէ (Եղիշէ, 64):

Որոշ հարադրավոր բայեր, բացառական հոլով արտահայտված բնության խնդրից բացի, ստանում են նաև պարագա (կամ պարագաներ), որոնք արժույթի արտահայտության միջոցներ չեն: Դրանց առկայությունն անմիջականորեն չի բխում տվյալ բայերի բովանդակային պլանից, այլ պայմանավորված է տեղեկատվական անհրաժեշտությամբ: Օրինակ՝ *Մինչև յաւիտեան* անբաժան լիցի նա ի մէնջ (Բուգ., 112): Խոյս ետ ի նոցանէ *վասն ամբոխին* (Յոհ., Ե, 13): *Ըստ դատաստանաց* նոցա առից վրէժ ի նոցանէ (Եզեկ., Է, 27): *Իբրև գապստամբ* յետս կացեալ թիւրեցաւ յԱստուծոյ (Եզեկ., 53) և այլն:

Մի շարք կառույցներում բացառականով բնության խնդիրը չի հիշատակվում, այլ ենթադրվում է այդ կառույցների բովանդակության պլանում: Օրինակ՝ *Մեր պահապանք... վատասրտեալ ի բաց եկին* (Խոր., 276): *Չօրս ի բաց դարձաւ* (Խոր., 273): *Չհարդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին* (Եղիշէ, 170): *Չահի հարեալ Ադամայ՝ ըսկսաւ գանձն մեկնել ի հիւղեայն* (245): *Ոչ գանց եղեալ մոռացաւ մեզ* (Նիս.)¹⁹¹: *Ինքն յանձանօրս լինէր* (Ա Թագ., Գ, 7) և այլն:

Փոքր թիվ են կազմում բացառականով արտահայտված խնդրառու այն բայերը, որոնք ունեն դարձվածային արժեք: Օրինակ՝ *Դարձջի՛ք ընդ կրուկն* ի նմանէ (Բ Թագ., ԺԱ, 15)¹⁹²: *Համարս պահանջէին* ի մէնջ (Թուղթ, 197): Իսկ պահապանքն յահագին ապշութենէ քնրութեանն սակաւիկ մի *ոգի*

առեալ¹⁹³ (Փարս., 130): *Թափես զոգի* յանձնէ իմնէ (Յովք, Է, 8): Ի Թրակայ գնդէն *զուս արկանէր* (Բ Մակ., ԺԲ, 35) և այլն:

Ուղիղ իմաստից բացի՝ այս շարքի որոշ բայեր կիրառվում են փոխաբերական իմաստով: Օրինակ՝ *Ի բաց դարձնայր ի խրատուէ* (Խոր., 68): *Ի բաց լինել ի պաշտամանց* (Ագաթ., 129): *Յետս դառնալ յուխտէ* (Փարս., 2): *Նեղեաց զնոսա՝ ի հայրենի օրինացն յետս կալ* (Եղիշէ, 82): *Ի պահուց և յաղօրից փախստական գնան* (Եզնիկ, 85) և այլն:

Բացառականով բնության խնդիրը շարադասությամբ սովորաբար կա՛մ նախադաս դիրք է գրավում, կա՛մ վերջադաս, սակայն հազվադեպ նրանով տարանջատվում են հարադրավոր բարդության բաղադրիչները: Հմնտ. *Թափուր ի հոգւոյն* մնացեալս ... (Խոր., 363): Թերաթափ լինի գինին *ի գլխոյն* (Մանդ.) և *Յանարժանից* ձեռնթափ լինի (ՆՀԲ):

3. Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բազմաթիվ բայերի պահանջած բնության խնդիր լրացումներն արտահայտվում են կապական կապակցություններով, այդ թվում՝

ա) «ԸՆԴ–տրական հոլովով կապվող բառածև», որ պահանջում են *դաշն կռել, դաշինս կռել, դաշնաւոր լինիմ, ի կամաց երթալ, երկայնաբան լինիմ, ընդելակից լինիմ, ընթերակից լինիմ, խնդալից լինիմ, մատչիմ ի խօսս, ի հակառակութիւն գալ, համական լինիմ, ճակատ տալ, զճակատ մղել, ի նախանձ մտանել, ոսոխ մտանել, յուխտ մտանել, վարձս առնուլ* և այլ հարադրավոր բայեր: Օրինակ՝ *Դաշինս կռէր ընդ մմա* (Ագաթ., 462): Որք *ի կամաց երթային ընդ մմա* և ոչ բռնութեամբ (Մաշտ.): *Երկայնաբան լինել ընդ ձեզ* (Եղիշէ, 170): Առաւել *դաշն կռէր ընդ մմա* (Ագաթ., 462): *Դաշնաւոր լինել ընդ քեզ* (Խոր., 228): Ասա՛ ինձ, ո՛վ Յովհաննէս, *ո՞ւր ընդ Զրիստոսի ընդելակից եղեր* (Եփր.): *Ընթերակից լինիմ ընդ առն* (Բրս.): *Խնդալից եղեալ ընդ կնոջն* Շապիոյ (Փարս., 152): *Մատչէր ի խօսս ընդ Աբրահամու* (Եզնիկ, 47): *Ի հակառակութիւն գալ ընդ քեզ* (Իմաստ., ԺԲ, 12): *Համական եղև ընդ մօր իւրոյ* (Սեբեր.): *Ետ ճակատ ընդ Պարսից արքային* (Խոր., 218): *Ի նախանձ մտանել ընդ կնոջ իւրում* (Թիւ., Ե, 30): Մի՛ մտանէր *ոսոխ ընդ ծառայից քոց* (Սաղմ., ԴԽԲ,

2): *Եմուտ ընդ մմա յուխտ* հաստատութեան (Եղիշէ, 73): *Վարձս առնուլ ընդ կամակատարութեանն* (Եզնիկ, 44): Այնպէս բարձ-լացաւ, մինչ զի *ընդ մմին* Աստուծոյ *վերամբարձագնաց լինել* (Նիւս.):

բ) «ԸՆԴ–հայացական հոլովով կապվող բառածև», որ պահանջում են *ադ առնուլ* («հաց կտրել»), *ադ և հաց ուտել*, *բանակոխի լինիմ*, *դժկամակից լինիմ*, *դժուրահաճ լինիմ*, *դաշինս առնել*, *թշնամութեամբ կալ*, *իմաստասիրակից լինիմ*, *խառնուրդ լինիմ*, *խորհուրդ դնել*, *մարտակից լինիմ*, *մախանձ դնել*, *ուղեկից լինիմ*, *պատերազմ առնել*, *սէր արկանել*, *սուսեր ածել*, *վկայ լինիմ* և այլ հարադրավոր բայեր¹⁹⁴: Օրինակ՝ *Դժկամակից լինել ընդ այս* (ՆՀԲ): *Դիւրահաճ լինիմ ընդ տնօրէնութիւնսն* (Բրս.): *Մի՛ բանակոխի լինել ընդ միմեանս* (Բ Տիմ., Բ, 14, Վրք.): Աւագակք յորժամ *ընդ միմեանս ադ առնուցուն*, մոռանան զբարսն (Ոսկ.): *Դաշինս առնել ընդ հարսն* (Իմաստ., ԺԲ, 21): *Թշնամութեամբ կայր ընդ կողմն* Իսրայէլի (Ա Մակ., Է, 26): *Իմաստասիրակից լինիմ ընդ խոշորսն* (Առ որս.): *Եղեն խառնուրդք* երկոցունց գնդացն *ընդ միմեանս* (Բուգ., 201): *Խորհուրդ եղեալ ընդ միմեանս*՝ սպանանել զՎրթանէս (Բուգ., 7): *Մարտակից լինին ընդ անհաւատսն* (Բրս.): *Նախանձ դնել ընդ միայնակեացս* Եգիպտոսի (Աթ.): *Ընդ որս և մեք ուղեկից լինիմք* (Փարպ., 81): Սկսաւ *սէր արկանել ընդ նոսա* (Եղիշէ, 195): *Սուսեր ածեալ ընդ մէջ իւր* (Բուգ., 27): Աստուած *լիցի վկայ ընդ իս և ընդ քեզ* (ՆՀԲ) և այլն:

Նկատելի է, որ *ընդ* մախդրի հետ կապակցվող բառածևի գործառույթ կարող են կատարել հիմնականում եզակի տրական և հոգնակի հայցական հոլովածները:

գ) «Ի(յ)–(+)եզակի թվի տրականով կապվող բառածև», որ պահանջում են *ամօթ ունիմ*, *զակն պահել*, *երկայնակեաց լինիմ*, *դառնաճաշակ լինիմ*, *խամ գտանիմ*, *ծաղր կալ*, *մեծաջան լինիմ*, *շահափաճառ լինիմ*, *քաջալեր լինիմ* և այլ բայեր: Օրինակ՝ *Զի ի մմա պահելով զակն* (Խոր., 257): *Ամօթ յանձին ունէին* (Ոսկ.): *Ծաղր կալ* (Ծննդ., ԼԸ, 23) *լիւրեանց ճարտարութեան* (Ոսկ.): Ոչ աշխատիմք *շահափաճառ եղեալք ի բարի* յայսմ *փաճառման* (Ոսկ.) և այլն:

Հարկ է նշել, որ *Ի(յ)* նախդրի հետ կապվող բառաձևի գործառնությունը հանդես եկող եզակի թվի տրականը գրաբարում ավելի հաճախ արտահայտում է պարագայական, քան թե խնդրային իմաստ:

դ) «*Ի(յ)*-(+) *հայցական հոլովով կապվող բայաձև*», որ պահանջում են *ընդ ակամբ հայիմ, ակնարկի առնել, այրընտիր լինիմ, գուն դնել, գրուահ լինիմ* («հանցավոր լինել»), *ընկողմնակից լինիմ, իմաստուն լինիմ, թևակոխ լինիմ, խղճմիտ լինիմ* («տատամսել»), *ընդ խաբս գալ, խրախ լինիմ, ուրախ լինիմ, ծաղկաքաղ երթալ, ձեռնամուխ լինիմ, պիտանի լինիմ, մօտ հասանել, մօտ գալ, նետաթափ լինիմ, յուշ գալ, վստահ լինիմ, տես առնել, տուրս առնել, քաջայոյս լինիմ* և այլ բայեր: Օրինակ՝ *Ընդ ակամբ հայեր ի նա* (Խոր., 306): *Ակնարկի առնեին յիս* (Սաղմ., ԼԳ, 19): *Այրընտիր լինիցին յառաքինութիւնսն* (Եզնիկ, 289): *Ի վաստակս գուն եղեալ մարտնչիցին* (Վեցօր.): *Գրուահ եղեն նորքա յիրս արքունի* (Եղիշէ, 184): *Կամիմ զքեզ իմաստուն լինել ի բարիս* (Հոռվմ., ԺԶ, 18): *Խղճմիտ լինիմ յուխտս քո* (Սիր., Ե, 9): *Այլ չգիտեմ, զիարդ վայրապար ընդ խաբս եկի խոյսպիսի բանս* (Ոսկ.): *Խրախ լինիմ ի հաւատս* (Գ Մակ., Ե, 1): *Ուրախ լերութ ի Քրիստոս* (Եղիշէ, 154): *Ձեռնամուխ եղեն ի գործ պատերազմին* (Եղիշէ, 105): *Պիտանի եղի ի սպանումն* (Եզեկ., ԻԱ, 15): *Մօտ հասանէ ի նա* (Եզնիկ, 201)¹⁹⁵: *Եթէ մօտ ոչ գային ի նա* (Եզնիկ, 68): *Նետաթափ լինեին ի թշնամիսն* (Կիրիլ.): *Հայելովն Տեառն Պետրոս յուշ գայ ի հաւուն ձայնն* (Ոսկ.): *Վստահ եղեալ խմենիմաստ մարգպանն* (Թուղթ, 186): *Իսկ ինքն գտեղի առեալ՝ առնէր տես ի բանակն Մանուէլի* (Բուզ., 212): *Տուրս առնել յաղքատս* (Խոր., 345)¹⁹⁶: *Քաջայոյս եղեալ յառաջնորդն* (Նեղոս): *Եւ ել բանս այս յեղբայրս* (Յոհ., ԻԱ, 28): *Առ ի գար հայելոյ իւր յուղիղ յարարածսն* (Եզնիկ, 27): *Թևակոխ*¹⁹⁷ *լինիմ աստուածատուր հրամանացն ի հանգամանս* (Ագաթ., 454) և այլն:

Այս դեպքում եզակի թվի հայցականով արտահայտված կապվող բառաձևերը հիմնականում անձնանիշ գոյականներ և դերանուններ են:

ե) «*Ձ+բացառական հոլովով կապվող բառաձև*», որ հիմնականում պահանջում են ասացական, «զգացական և հոգեկան վիճակ արտահայտող»¹⁹⁸

հարադրավոր մի շարք բայեր. *անկարգ առնել, քանիս անցանել, դատաստան տալ, դժգոհ լինիմ, գիտակ լինիմ, խօսս արկանել, կապ արկանել, ի կարի առնել, մատնութիւն առնել, նախանձաբեկ լինիմ* և այլն: Օրինակ՝ Հրամայիցի¹⁹⁸ *զՏեառնէ անկարգս ինչ առնել* (Յովք, ԼԴ, 12): *Տալ դատաստան գանձանց և զժողովրդոյ կորստեան* (Փարպ., 34): *Դժգոհ լինիմ զհարց և զեղբարց* (Եւագր.): *Գիտակ եղեալ զշարէն* (Կոչ.): Եկեալ *խօսս արկանէր* գեղեցիկ գամենայն *գանձին քաջութենէ* (Բ Մակ., ԺԵ, 12): Մաժան *մատնութիւն զեղբարցն առնէր* (Խոր., 185): *Ջորմէ* պարտ էր մեզ հրաշափառագունիս *անցանել քանիս* (Խոր., 356):

զ) «*Չ+ գործիական հոլովով կապվող բառածև*», որ պահանջում են *ելենել(ս) առնել, թև արկանել, հիռ գալ, շուրջ պատել, պախուցս դնել, պատ առնուլ* և այլ բայեր: Օրինակ՝ Ժողովուրդ *զժողովրդեամբ ելենելս առնիցէ* (Ծննդ., ԻԵ, 23)¹⁹⁹: *Թև արկանէին զընչիւքն* իւրեանց (Եւագր.): *Ջնովիմք իսկ հիռ գայցեն շրջանակաւն* (Նիւս.): Գային *շուրջ պատէին զնովաւ* (Բուգ., 185)²⁰⁰: *Ջորով պատ առեալ* Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ (Խոր., 165):

Բերված մի քանի նախադասությունների մեջ *շուրջ պատել, պատ առ-նուլ* և այլ բայեր պահանջում են պարագայական խնդիր. սա այն դեպքում, եթե տվյալ բայերի պահանջած լրացման կապվող բառածևը տեղանիշ գոյական է կամ այլ բառ:

է) «*Առ-տրական հոլովով կապվող բառածև*», որ պահանջում են *վճիռ մատուցանել, մօտ կալ* և այլ հարադրավոր բայեր. *Առ* իւրաքանչիւր *քանիցն* դէպ և դէպ զվճիռ *դատաստանին մատուցանել* (Կոչ.): Այլ յամեն ես *առ ձեզ մօտ կալով* (Եղիշէ, 186) և այլն:

ը) «*Առ-հայցական հոլովով կապվող բառածև*», որ պահանջող հարադրավոր բայերից են *յաղօթս կալ, ամօթով լինիմ, դէմ դնել, երասանակազանց լինիմ, թղթամատոյց լինիմ, խնդրուածս առնել, ոխակալ լինիմ, ծայն արծակել, յափսիթերս երթալ, ողջոյն լինիմ, օրէնս դնել, պարապ բերել* և այլն: Օրինակ՝ *Կայր յաղօթս առ Տէր* (Բուգ., 11): Եւ Յակոբու *դէմ եղեալ առ արքայ* (Խոր., 246): *Երասանակազանցք լինիմք*

առ ծառայութիւնն (Բրս.): Աղօթիւք խնդրուածս առնէին առ Աստուած (Եղիշէ, 81): Ոխակալ լինիմ առ զրկումն (Եւագր.): Չայն սաստիկ բարբառոյ²⁰¹ արձակեաց առ այրն Աստուծոյ (Փարպ., 130)²⁰²: Առ ձեզ դարձցի ողջոյն (Փարպ., 76): Առ նահատակսն դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտէնից (Բուգ., 24): Առ աշակերտեալսն բերել պարապ (Պիտ.): Զի մի լիցի ամօթով առ բնաւորական սէրն (ՆՀԲ) և այլն:

բ) «ՎԱՄՆ–սեռական հոլովով կապվող բառածև», որ պահանջում են ակնարկութիւն առնել, կանխել յաղօթս, դժոխերասանակ լինիմ, դատաստան առնել, թելադրութիւն առնել, հաւահարց լինիմ, խորհուրդ առնել, խորհուրդ դնել, խնդակից լինիմ, տրտունջ առնել, ի կասկածանս անկանիմ, կարիս առնել, հրապարակ առնել, վիճումն դնել, նախանձ առնուլ, պաղատան(ս) մատուցանել, փոյթ դնել, քէն պահել, քննութիւն առնել և այլ հարադրավոր բայեր: Օրինակ՝ Եւ վասն առ ի Յունաց զուցաբանսն զակնարկութիւն միոյ պիտոյիցս առնելոյ բաւական է այսչափ (Խոր., 9): Կանխենք մեք յաղօթս մեր վասն ձեր (Ոսկ.): Զայս արար Մաժան՝ քէն պահելով վասն Սմբատայ (Խոր., 185): Խորհուրդ առնոյր վասն ճանապարհացն (Ագաթ., 459): Եւ բազում վիճումն ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանից (Բուգ., 87) և այլն:

ժ) «Ի ՎԵՐԱՅ–սեռական հոլովով կապվող բառածև», որ պահանջում են ահարկու լինիմ, գերկիւղ ածել, կասկածահար լինիմ, ոխաթափ լինիմ, զողբս հարկանել, զձեռն հաստատել, գերեսս հաստատել, ձեռն դնել, ձեռս ամբառնալ, ճիչ բառնալ, ի մեղս լինիմ, նախատինս դնել, սուգ ունիմ և այլ հարադրավոր բայեր: Օրինակ՝ Ինքնին ահարկու լինի ի վերայ այնոցիկ (Ագաթ., 290): Զերկիւղ ածել ի վերայ նոցա (Սիր., Դ, 19): Խօսս դնէին ի վերայ զրոց սրբոց (Եւս.): Ի վերայ ճառեցելոց բանիցն կասկածահար լինէր (Աղեքս.): Ծափ զծափի հարկանէին ի վերայ նորա (Յովբ, ԻԷ, 23): Զձեռն հաստատել ի վերայ գետոյն (Ա Մնաց., ԺԸ, 3): Ի վերայ մարդոցն գերեսս հաստատել (Եզեկ., ԺԴ, 8): Զողբս հարկանել (Ոսկ.) // ճիչ բառնալ ի վերայ Մովսէսի (Երեմ., ԽԸ, 31): Սուգ ունէր Աամուէլ ի վերայ Սաուդայ (Ա Թագ., ԺԵ, 35): Եղից նախատինս ի վերայ

ամենայն *Իսրայելի* (Ա Թագ., ԺԱ, 2): *Համբարձ ձեռն իւր ի վերայ Դաւթի* (Բ Թագ., Ի, 21): *Ջերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո* (Բուգ., 226): *Եւ ածցեն ի վերայ քո ամբոխ* (Եզեկ., ԾԶ, 40): Ապա *գորածողով լինէր ի վերայ նորա* Տիտանեան Բէլ (Խոր., 34): *Ջորախաղաց լինիմ ի վերայ խուժադուժ ազգաց* (Ադեքս.) և այլն, որոնցից վերջին մի քանի նախադասութիւնների մէջ նշված մասնակաղապարով արտահայտված լրացումների բովանդակության պլանում առկա է ուղղության կամ վերջնակետի պարագայի քերականական իմաստ²⁰³:

Ժա) *Կապական այլ կապակցություններով*, որ գրաբար աղբյուրներում պատահական կիրառություն ունեն: Օրինակ՝ *Ջհետ* այսպիսի սնուտի *աշխատութեան ի կիրք անկեալ* ընթանային մեծաւ փութով (Վեցօր.): *Մատուցից առաջի քո* ադերս (Երեմ., ԺԲ, 1): Կամեցաւ *պայքար առնել ի մէջ հաւատացելոցն* և ի մէջ արիանոսաց (Բուգ., 51): Որպէս կամեցաւ *յանդիմանութիւն առնել* կայսրն *ի մէջ* ճշմարտութեան *հաւատացելոց* (Բուգ., 81)²⁰⁴: *Խրախոյս բառնային զկնի նորա* (Դատ., Զ, 34): *Ընդդէմ մեր խօսս է արարեալ* (Ոսկ.) և այլն:

Այս շարքի հարադրավոր բայերի մի մասը նույնպէս խոսքի մէջ հանդես է բերում դարձվածային արժեք: *Դրանցից են՝ աղ առնուլ, աղ և հաց ուտել, ընդ ակամբ հայիմ, զակն պահել, ձեռն դնել, ծափ զծափի հարկանել* («զարմանալ»), *ձեռն հաստատել* («ձեռնարկել»), *զերեսս հաստատել* («որոշել գնալ») և այլն: Օրինակ՝ Աւագակք, յոժամ *ընդ միմեանս աղ առնուցուն*, մոռանան զբարսն (Ոսկ.): *Ընդ ակամբ հայէր ի նա* (Խոր., 306): *Ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանէաք ընդ բնաւն* (Խոր., 257): *Ջերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո* (Բուգ., 226): *Ծափ զծափի հարկանէին ի վերայ նորա* (Յովբ, ԻԷ, 23): *Ջերեսս հաստատեցին ի վերայ նոցա* (Եզեկ., ԺԵ, 7) և այլն:

Խնդրառությամբ միաբժույթ չեզոք սեռի մի խումբ բայերի հետ խնդիր լրացումները հանդես են գալիս կապակցման տարբեր եղանակներով:

Կան բայեր, որոնց հետ խնդիր լրացումը կապակցվում է կա՛մ անմիջական, կա՛մ էլ միջնորդական կառավարման եղանակով:

1. Առանձին խումբ են կազմում այս շարքի այն հարադրավոր բայերը, որոնց հետ գրաբար լեզվի զարգացման համաժամանակյա կտրվածքում կապակցվող խնդիրն արտահայտվում է, մի դեպքում՝ տրական հոլովով, մյուս դեպքում՝ կապական կապակցությամբ: Այդ բայերից են *այց առնել*²⁰⁵, *այցելութիւն առնել*²⁰⁶, *աշխար դնել*, *աշխարանս դնել*, *կոծ դնել*, *գիրկս արկանել*, *գօտի ածել*, *դէտ ակն ունիմ*, *թաղակից լինիմ*, *թշնամի լինիմ*, *իրազեկ լինիմ*, *լսելի լինիմ*, *խաղաղութիւն առնել*. *խելամուտ լինիմ*, *խից արկանել*, *ծանօթս տալ*, *(ի) ծունր իջանել*, *կազմ լինիմ*, *կամակից լինիմ*, *կիցս ընկենուլ*, *կուսակից լինիմ*, *հաճոյ լինիմ*, *համար առնել*, *հաւատարիմ լինիմ*, *հոգ տանիմ*, *ձայն ածել*, *ձայն առնել*, *ձայն տալ*, *(ի) ձեռն արկանել*, *ձեռն ձգել*, *ճանապարհ առնել*, *մերձ լինիմ*, *մտայոյզ լինիմ*, *յանդիման լինիմ*, *շուք առնել*, *շուք(ս) դնել*, *ոխս ունիմ*, *ողորմուկս արկանել*, *գունկն խոնարհել*, *ուշ ունիմ*, *պատուէր դնել*, *պատրաստ լինիմ*, *պատրաստական լինիմ*, *սիրով հարկանիմ*, *ի սպասու կալ*, *փոյթ առնել*, *փոյթ ունիմ*, *քինախնդիր լինիմ* և այլն: Հմմտ. Հաշուէին գնոսա լինել անգէտս հրամանի թագաւորին (Փարս., 94) և Մի՛ անգէտ լինիր ի փոքունս (Սիր., Ե, 18): *Աշխարանս դնել մեռելոյն*²⁰⁷ (Բուգ., 193) և *Աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն* (Բուգ., 102): *Թաղակից լեալ էր ընդ սմին*²⁰⁸ (Բուգ., 60) և՝ *Թաղակից լինիմ Զրիստոսի* (Կոչ.): *Թշնամի լինիմ թշնամեաց քոց* (Ել., ԻԳ, 22) և *Թշնամի լինիմ ընդ ձեզ* (Թիւ., ԻԵ, 18): Բանք նորա *աղքատին ոչ լինին լսելի* (Ժող., Թ, 16) և Վաղվաղակի *լսելի լինէր յականջս* (Փարս., 174) – *ի միջի մերում* (Փարս., 90) – *թայս ոմանս* (Փարս., 119): *Իրացն եղելոց խելամուտ լինէր*²⁰⁹ (Ագաթ., 402): *Խելամուտ եղև ի մէջ բարոյ և չարի* (Գ Թագ., Գ, 9) և Աստուած *առ լաւութեանցն խելամուտ լինելոյ...* (Եզնիկ, 42): *Խից արկանել ի վերայ դրանց* նորա (Եզեկ., ԻԱ, 32) և *Խից արկանել ջուրց* բազմաց (Եզեկ., ԼԱ, 15): *Ժամանակի խնայ առնել* բարուք է (Փիլ.) և *Ի վերայ տգիտութեանց* իմոց մի արասցեն խնայ (Սիր., ԻԳ, 1): *Խունկս արկանել Աստուծոյ* (Դ Թագ., ԻԲ, 17) և *Խունկս արկանէին առաջին Տեառն* (Գ Թագ., Բ, 35): *Խօսնակից լինէր ի մէջ թագաւորացն* երկոցունց (Բուգ., 171) և *Խօսնակից լինիմ քեզ*

(Առակ., Զ, 22): Հանդերձան *դէտ ակն ունել ճանապարհացն* (Ագաթ., 415) և Ուշ եղեալ *դէտ ակն կալաւ ի վերայ բանիցդ* (Կոչ.): *Չայն ետուն միմեանց* (Ա Մակ., ԺԱ, 47) և *Չայն ետ ի ճակատն* Իսրայէլի (Ա Թագ., ԺԷ, 8) և այլն:

Այս խմբի բայերի մի մասն ունի դարձվածային արժեք. *ակն տալ, բիծ դնել, (ի) գլուխ կալ, երկիր պագանել, խելս խառնել* («հնարել») և այլն: Օրինակ՝ *Ո՞ կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյ* (Կորին, 30) և *Ի ցանկալիսն բիծ դիցէ* (Սիր., ԺԱ, 35): *Եկ կա՛ց մեզ գլուխ և առաջնորդ*²¹⁰ (Փարպ., 36) և *Ի մէջ գնդին* կայցէ ի գլուխ (Փարպ., 170): *Երկիր պագանել կրակի և ջրոյ և արեգական* (Բուգ., 136) և *Երկիր պագցեն առաջի քո ամենեքեան* (Ագաթ., 59):

2. Մի շարք բայերի պահանջած բնության խնդիրը կարող է արտահայտված լինել որևէ հոլովածևով (ընդ որում՝ տրական կամ բացառական) կամ նախդրավոր կապակցությամբ. *ապաստան լինիմ, ժուժկալ լինիմ, լուռ լինիմ, հակառակ կալ, վրէժ հատուցանել* և այլն: Օրինակ՝ *Նմա լուռ ոչ լինի Կոստանդիանոս* (Խոր., 237): Լուռ լինէր թագաւորն Պարսից *ի թշնամութենէ* (Բուգ., 115):

Հատկանշական է, որ միևնույն բայի կողմից պահանջված բնության խնդիրները, որոնցից մեկն արտահայտված է տրական հոլովածևով, իսկ մյուսը՝ կապական կապակցությամբ, միմյանց նկատմամբ գտնվում են իմաստային հարաբերության մեջ՝ հիմնականում դառնալով հոմանիշներ կամ հականիշներ:

3. Մի խումբ չեզոք սեռի միարժույթ հարադրավոր բայերի հետ կապակցված բնության խնդիրը կարող է արտահայտված լինել կա՛մ բացառական հոլովով, կա՛մ կապական կապակցությամբ. *աներկիւղ լինիմ, ապաստան լինիմ, արտաքսելանել, զանց առնել, թիկունս դարձուցանել*²¹¹, *ժոյժ ունիմ, շնորհաւ գտանել, պատկառ կալ* և այլն²¹²: Հմմտ. *Զիա՞րդ աներկիւղ լինիցի առ ձեզ* (Ա Կոր., ԺԶ, 10) և *Աներկիւղ լինիմ ի մահաբեր նետից* սատանայի (Նեղոս): *Դարձուցին յիս թիկունս* (Ագաթ., 172): Որք *թիկունս դարձուցին առ Տէր* (Բուգ., 36) և *Իշխեցին ի բուն յիւրեանց Տեառնէն թիկունս դարձուցանել* (Ագաթ., 317): Շնորհս գտանել *ի Տեառնէ*

(Ագաթ., 138): Նոր եգիտ շնորհս *առաջի Տեանն* (Ծննդ., 2, 8) և Շնոհս գտանել *յաչս քո* (Բ Թագ., ԺԳ, 24): Ելեալ արտաքս *ի միաբանութենէս* (Եղիշէ, 156) և *Ըստ քո կամսդ* արտաքս կարէ ելանել (Եղիշէ, 84): Ապաստան եղև *յաշխատութենէ* Իսրայելի (Դատ., Ժ, 16) և Նոքա *ի լեզէոն* Հոռոմոց ապաստան լինէին (Բուգ., 169): Իբրև *յապարահէ* զանց առնելոյ պատճառաւ (Բուգ., 200): *Չայլով* ևս զանց առնէ (Կորիւն, 26) և *Չանց առնել առ մոքօք* (Մարկ., 2, 48) և այլն:

4. Կան հարադրավոր բայեր, որոնց պահանջած խնդիր-լրացումը թեև միշտ կապակցվում է անմիջական կառավարման եղանակով, սակայն տարբեր կիրառություններում հանդես է գալիս տարբեր արտահայտչամիջոցներով (տվյալ դեպքում՝ տարբեր հոլովածներով): Այս խմբին են դասվում *յանհաւատս լինիմ, կոխան լինիմ, գերիվերոյ լինիմ, երես(ս) առնել, ժոյժ ունիմ, հեռի լինիմ, պարապ առնուլ, պարապումն առնուլ* և այլ հարադրավոր բայեր, որոնք պահանջում են կա՛մ տրական, կա՛մ բացառական հալվածակով արտահայտված բնության խնդիր, թեև այդ հոլովածները քերականական հականիշների արտահայտության միջոցներ են²¹³: Օրինակ՝ Անհաւատք եղեն *ի մմանէ* (Բրս.) և Թէ *այսմ* անհաւատ լիցիս (Յճխ.): Գերիվերոյ լինիցին *ախոյանին* (Եզնիկ, 57) և *Ի զանգիտելոյ* և *ի պատկառանաց* գերիվերոյ լինել (Ոսկ.): *Ինձ* երես(ս) արա (Ոսկ.) և *Յայլոց* պատկառի և առնիցէ երեսս (Ոսկ.): Պարապ առեալ Շապիոյ *ի պատերազմացն* (Խոր., 285)²¹⁴ և Պարապ առեալ *խորհրդոց* Շապիոյ՝ նիւթ չարիս (Խոր., 112): Ոչ ունիցի ժոյժ *ի մայելոյ*²¹⁵ (Ոսկ.) և Առն *մեղսրտի* ո՞վ ունիցի ժոյժ (Առակ., ԺԸ, 14): Յայսմ *բանէ* սկիզբն արարեալ Թադէի (Խոր., 152) և Սկիզբն առնել *գործոյ* (Փարպ., 17): Երուսաղէմ եղիցի *կոխան յազգաց* (Ղուկ., ԻԱ, 24) և Կոխան եղեալ *զազանաց* (Եղիշէ, 48):

5. Կան բայեր, որոնք տարբեր կիրառությունների մեջ կարող են պահպանել միջնորդական կառավարման եղանակով կապակցվող, սակայն արտահայտության տարբեր պլաններ ունեցող խնդիր լրացումներ. *ակնկառոյց լինիմ, զահ և գերկիւղ տալ, աշխատ լինիմ, աչս արծակել, գութ արկանել, խնամ ունիմ, գուն գործել, գօտեկոխի լինիմ, դժկամակ լինիմ,*

դատաստան առնել, երաշխաւոր լինիմ, երկայնամիտ լինիմ, զանց առնել, զգաստ լինիմ, ընթրիս առնել, թշնամութեամբ լինիմ, լուր առնել, կաթոգի լինիմ, հուպ գալ, հուպ երթալ, հուպ լինիմ, հուր հարկանել, հրապարակախօս լինիմ, ծիարշաւ առնել, մարտ /պատերազմի/ տալ, պատերազմ տալ, ծիարծակ լինիմ, մտաբերիկ լինիմ, մօտ երթալ, մօտ լինիմ, նախանձ բերել, նետածիգ լինիմ, պատգամ յղել, պարծանս ունիմ, սուգ առնուլ, վիճակ արկանել, վիճիռ հատանել, ի վսէր գալ («հանդըզնել», «ոգորել»), տրտունջ առնել և այլն²¹⁶ : Օրինակ՝ Մտաբերիկ լինիմ խայն իրն (Պիտառ.) և յորում (Եփր.): Կաթոգի լինիմ զգօրավարէն (Բուզ., 132), զկնի իմ (Բ Թագ., ԺԵ, 30) և ի սէր քո (Երզ., Ե, 8): Վասն կենդանի յուսոյն գուն գործեալ (Եզնիկ, 240) և Ի վերայ դրանն գուն գործեցին (Բ Մակ., ԺԲ, 11) և այլն:

Հարկ է նկատել, որ կապական կապակցություններով ձևավորվում են բացառապես բնության, բայց ոչ սեռի խնդիրներ: Վերջիններիս մի մասը միմյանց նկատմամբ գտնվում է իմաստային այս կամ այն հարաբերության մեջ: Այսպես՝ միևնույն հարադրավոր բայի պահանջով հանդես եկող «*Զ+բացառական հոլովով արտահայտված կապվող բառածև*» և «*ՎԱՄՆ-սեռական հոլովով արտահայտված կապվող բառածև*» մասնակաղապարներով արտահայտված բնության խնդիրները քերականական համանիշներ են: Հմմտ. Չգաստ եղև Յուդա վասն խակութեան վնասին (Բ Մակ., ԺԲ, 4) և Չգաստ լինէր Նաբուկոդոնոսորայ զօրն վախճանէ (Եւս.):

Կապական կապակցություններով արտահայտված բնության խնդիրները միևնույն բայ-գերադաս անդամի հետ հարաբերության մեջ հիմնականում ձևավորում են համանշային կամ հոմանշային դաշտեր, իսկ հազվադեպ էլ արտահայտում են քերականական իմաստի տեսանկյունից իրար հետ չառնչվող շարահյուսական հարաբերություններ:

Կապական կապակցությամբ արտահայտված բնության խնդիրների՝ միմյանց հետ համանշային կամ հոմանշային դաշտեր կազմելու գործընթացի մեջ կարևոր դերը ոչ թե կապվող բառածևերինն է, այլ կապերինը: Բանն այն է, որ միմյանց հետ համանիշ կամ հոմանիշ կապերի անմիջական

մասնակցությամբ են ձևավորվում համանիշ կամ հոմանիշ բնու-թյան խնդիրներ:

Այսպես՝ իմաստային պլանում համանիշ բնության խնդիրներ են ձևավորվում *առ//ի, ի վերայ//առ, ընդ//առ, գկնի//գհետ, գ//վասն, վասն//ի վերայ, յաղագս//ի վերայ* և այլ կապական զույգեր: Հմմտ. *Որչափ երկայնամիտ լինիմ ես ի վերայ ձեր* (Եղիշէ, 170) և *Երկայնամիտ եղև առ մոսա* (Ղուկ., ԺԸ, 7): *Վիճակ արկանել վասն ժառանգութեան* (Նէեմի, Ժ, 34) և *Վիճակ արկանել ի վերայ պատմութեան իմոյ* (Սաղմ., ԻԱ, 19)²¹⁷: *Յաղագս որոց վճիռ հատաներ* (ՆՀԲ) և *Հատաւ վճիռ մահու ի վերայ մորա* (Եղիշէ, 18): *Ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած* (Հոովմ., Դ, 2) և *Ունիմք այսուհետև պարծանս ի Զրիստոս* (Հոովմ., ԺԵ, 17): *Իրազեկ լինիմ զքէն* (Գործ., ԻԱ, 24) և *Իրազեկ լինիմ վասն քո* (Գործ., ԻԱ, 21): *Վասն խաշանց իմոց դնեմ զանձն իմ* (Ագաթ., 238) և *Ի վերայ խաշանց քոց եղեր զանձն քո* (Ագաթ., 55) և այլն:

Թշնամութեամբ լինիմ, նախանձ բերել, պատերազմ տալ և այլ բայերի պահանջով *ԸՆԴ* նախդրի հետ հանդես եկող կապվող բառաձևն արտահայտվում է եզակի տրական կամ հոգնակի հայցական հոլովաձևով: Օրինակ՝ *Տայր պատերազմ ընդ Արշակայ* (Բուգ., 125) և *Տային ընդ միմեանս* պատերազմ (Բուգ., 208): *Նախանձ բերելով ընդ ծերունայն Արգամայ*՝ հրապուրեաց զհայր իւր (Խոր., 180) և *Ընդ ընկերս* ցանկ նախանձ բերէ (Ոսկ.):

Բացառություն է կազմում *ես* դերանունը, որը եզակի թվում *ընդ* նախդրի հետ կապակցվում է ոչ թե տրական, այլ հայցական հոլովով: Օրինակ՝ *Եղև Սաւուղ թշնամութեամբ ընդ Դաւթի* (ԱԹագ., ԺԸ, 29) և *Էին ընդ իս* թշնամեութեամբ (Սաղմ., Գ, 8): Ի դեպ, *իս* մաքաձևը բացառություն է կազմում նաև *ի(յ)* նախդրի հետ կապակցվելիս

Ընդ որում, քերականական համանշտություն է արտահայտվում նույնիսկ բացառիկ միջոցներով, ինչպիսիք են «*Ձ+բացառական հոլովով կապվող բառաձև*» և «*Ձ+գործիական հոլովով կապվող բառաձև*» մասնակաղապարներով արտահայտված բնության խնդիրները՝ *հուր հարկանել* բայի

պահանջով: Հմմտ. Ձի յանկարծակի հուր հարեալ *զնովալ* (Առակ., ԻԹ, 1) և Արք անօրէնք հուր հարին *զքաղաքէ* (Առակ., ԻԹ, 8):

Մի շարք նախդիրների մասնակցությամբ ձևավորվում են հոմանիշ բնության խնդիրներ. *ի//զկնի*, *առ//վասն*, *յաղագս//ի*, *զհետ//ի* և այլն: Հմմտ. *Յաղագս որոյ* աշխատն եղեն (Փարպ., 74) և *Յոր* ոչ եղեր ինչ աշխատ (Յովն., Դ, 10): Արկանէր գութ *առաջի ուրացելոյն* Վասակայ (Եղիշէ, 126) և Արկից *զծեօք* գութ (Երեմ., ԽԲ, 19): *Չկնի նաւաւարացն* և *փախստէիցն* նետածիգ լինէր (Փարպ., 66) և Նետիւք իւրովք նետածիգ լիցի *ի թշնամիս* (Թիւ., Ի, 8): Սուգ առնուս *ի վերայ Սաւուդայ* (Թիւ., ԺԴ, 39) և Սուգ առին քահանայքն *վասն այսորիկ* (Փարպ., 26, 56)²¹⁸:

Որոշ բայերի՝ տարբեր արտահայտչամիջոցներով բնության խնդիրներ առնելը պայմանավորված է դրանց բազմիմաստությամբ²¹⁹: Օրինակ՝ *դեղ առնուլ*–ը նշանակում է «*թունավորել*» [Դեղս առ *անծամբ իւրով* և մեռաւ (Բ Մակ., Ժ, 13)], «*դարմանել*» [Առէ՛ք *դեղ վիրաց* դորա (Երեմ., Ա, 8)]: *Ժոյժ ունիմ*–ը «*զսպել*» իմաստով առնում է բացառական հոլովով բնության խնդիր [Ոչ ունիցի *ժոյժ ի նայելոյ* (Ոսկ.)], իսկ «*համբերել*» իմաստով՝ տրականով բնության խնդիր [Առն նեղսրտի ո՞վ ունիցի *ժոյժ* (Առակ., ԺԸ, 14)]:

Հարկ է նշել, որ մի շարք բայեր տարբեր կապական կապակցություններով բնության խնդիր են պահանջում գրաբարի զարգացման տարածամանակյա կտրվածքներում: Հմմտ. Արժան էր ձեզ ունել գութ *ընդ նոսա* (Բուգ., 35) և Գութ *առ Աստուած* ունել (Խոսր.): Գօտեկոի լինիմ *ընդ Աստուծոյ* (Ոսկ.) և Գօտեկոի լինիմ *դէմ հզօրիդ* (ՆՀԲ): Ընդէ՞ր դժկամ լինիմ *վասն բանիս* այսորիկ (Բ Թագ., ԺԹ, 42) և Դժկամ լինիմ *ընդ այս* (Լաստ.): *Յոր* ակնակառոյց լեալ քաջացն Հայոց (Խոր., 218) և Ակնակառոյց *առ Աստուած* լեալք (Դրասխ.): *Չհետ եղջերուաց* ձիարծակ եղեալ (Փարպ., 10) և Հեծեալ յերիվարն՝ ձիարծակ լինի *զկնի* (ՆՀԲ)²²⁰ և այլն:

Մի շարք հարադրավոր բայեր տարբեր տիպի կառույցներում և տարբեր կիրառությունների մեջ արժեքավորվում են ոչ նույն կերպ: Խոսքը վերաբերում է *ընդ առաջ զալ//զնալ//ելանել* հարադրություններին: Դրանք

մի դեպքում խնդրառությանը միարժույթ բայեր են. պահանջում են տրական հոլովով արտահայտված բնության խնդիր. Ինքնին Տէրն կառաց և երիվարաց *ընդ առաջ եկեալ ձեզ* (Եղիշէ, 108): *Ընդ առաջ ելանէր նմա* թագաւորն (Ագաթ., 427): *Ընդ առաջ գնաց նմա* (Խոր., 223): *Ընդ առաջ ելանէր նմա* իշխանն Գողթան (Կորիւն, 40) և այլն: Մյուս դեպքում դադարում են հարադրավոր բայ լինելուց, քանի որ *ընդ առաջ*–ը ձեռք է բերում ոչ թե մակբային, այլ կապական բառին հատուկ քերականական դեր՝ ենթադրելով սեռական հոլովով արտահայտված կապվող բառածն: Օրինակ՝ Ապա ելանէր Վասակ ընդ առաջ *նորա* (Բուզ., 124): *Ընդ առաջ նորա* ելին զօրք այնր կողմանն (Խոր., 170)²²¹:

Խնդրառությանը միարժույթ մի խումբ չեզոք սեռի հարադրավոր բայեր կարող են պահանջել ոչ թէ այս կամ այն հոլովածեղով, այլ երկ-յորդական նախադասությանը արտահայտված բնության խնդիր, որը նույն-պես կարող է դիտվել որժույթի արտահայտություն, սակայն՝ բալո՛ նա-խադասությունների մեջ. Եմուտ խորհուրդ ի նոսա, *թէ ո՞ւրդեօք մեծ իցէ ի նոցանէ* (Ղուկ., Թ, 46): Փայտ ընկենուին և վիճակ արկանէին, *թէ որ լեզու որում դասու հասցէ յաշակերտութիւն* (Եղիշէ, 51): Ի կասկածի լինիմ, *զի մի արդեօք պայմանին ստիցէ* (Խոր., 239): Խորհուրդ ընդ իս բերելով, *զի երդումն խնդրեսցուք ի Հերովդէէ թագաւորէ Հրէաստանի* (Խոր., 140): Քանզի հասեալ էր ի վերայ, *եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն* (Եղիշէ, 135): Ճշմարտիւ ի վերայ հասաք, *եթէ գտրն...* (Խոր., 276) և այլն:

Բ.2.3.3. ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՄԲ ԵՐԿԱՐԺՈՒՅԹ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ

ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Խնդրառությանը երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը գրա-բարում աչքի են ընկնում սահմանափակ թվով (ի դեպ, դրանք փոքրաթիվ են նաև արդի հայերենում):

Չեզոք սեռի երկարժույթ հարադրավոր բայերը, որպես կանոն, պար-տադիր կերպով պահանջում են երկու խնդիր, որոնք երկուսն էլ անվանում են գործողությունն անուղղակիորեն կրող առարկաներ (բնության խնդիր-

ներ): Սա ինքնին նշանակում է, որ տեսականորեն խնդրառությամբ երկար-
ժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի լրացում կարող են դառնալ բոլոր
խնդիրները՝ բացառությամբ ուղիղ և ներգործող անուղղակի խնդիրների:

Երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը խնդրառության տես-
անկյունից միատարր չեն:

1. Առանձին խումբ են կազմում այն հարադրավոր բայերը, որոնց
պահանջած բնության խնդիրներից մեկն արտահայտվում է որևէ հոլո-
վաճևով, մյուսը՝ կապական կապակցությամբ: Այդ բայերից են՝ *աւետիս*
տալ, *աւետիս առնուլ*, *արժանի լինիմ*, *գիտութիւն լինիմ*, *գոյժ լինիմ*, *գոյժ*
տալ, *գուշակ լինիմ*, *դատ դնել*, *դարձ առնել*, *դժպիի լինիմ*, *երանի տալ*,
երդումն տալ, *գրոյց տալ*, *թողութիւն տալ*, *թոյլ լինիմ*, *ժամ դնել*, *ժամադիր*
առնել, *լու(ր) լինիմ*, *ի խրատ մտանել*, *հրաման տալ*, *մեղադիր լինիմ*, *ի*
մոռացումն գալ, *յօժարամիտ լինիմ*, *գողորմութիւն առնել*, *պատասխանի*
առնել, *վկայութիւն տալ*, *վրէժ լուծանել*, *վրէժ խնդրել*, *վրէժ հատուցանել*,
վրէժ պահանջել, *վրէժխնդրութիւն խնդրել*, *հրաման առնուլ* և այլն:

Հարկ է նկատել, որ նշված բայերի շարքում մեծ թիվ են կազմում
այնպիսիները, որոնց հետ հանդես են գալիս, մի կողմից՝ տրական հոլո-
վաճևով արտահայտված և անմիջական կառավարման եղանակով կապա-
կցվող, մյուս կողմից՝ կապական կապակցությամբ արտահայտված և միջ-
նորդական կառավարման եղանակով կապակցվող բնության խնդիրներ²²²: Այդ
բայերից են՝ *գուշակ լինիմ*, *դատ դնել*, *երանի տալ*, *երդումն տալ* և այլն:
Օրինակ՝ Ապա լինէր գուշակ *Մուշեղի* Ուոնայր արքայ Ադուանից (Բուգ.,
168) *վասն նորա* (Բ Մակ., Ը, 12): Դատ դներ *մմա վասն մահուն* իւրոց
(Եզնիկ, 248)²²³: Յոյնք երանի ետուն *վասն նորա աշխարհին* Հայոց (Եղիշէ,
191): Այլ այժմ իմ է երդումն տուեալ *քեզ խանահ դիսն* (Եղիշէ, 158)²²⁴: Ձի
թոյլ լիցի *ձեզ վասն ձերոց իրաց* (Բ Մակ., ԺԱ, 28): Ժամադիր արարեալ
միմեանց վասն իրաց պատերազմին (Բուգ., 111): Ի մոռացումն եկն *մեզ*
յաղագս Սենեքերիմայ (Խոր., 70): Յօժարամիտ եղէ *քեզ յայսմ ամենայնի*
(Ա Մնաց., ԻԹ, 14): Դժպիի («անհաճոյ») լինի *մեզ* արդարն *ի կենցաղումս*
(Իմաստ., Բ, 12, ՆՀԲ) և այլն:

Որոշ նախադասությունների մեջ, պայմանավորված տվյալ խոսքային իրադրությամբ, բացակայում է տրական կամ բացառական հոլովով ենթադրվող բնության խնդիրը: Օրինակ՝ *Տալ գրոյց գայնպիսի չար աղետից* (Փարպ., 154): *Տայր հրաման և վասն այլ քահանայից սրբոց* (Փարպ., 88): *Հրաման տայ ի վերայ ձեր* (Փարպ., 104): *Յաղագս տրոց ողորմութեան ի խրատ մտանէ* (Ոսկ.) և այլն:

Մի շարք բայեր տրականով արտահայտված բնության խնդրի փոխարեն զուգահեռաբար պահանջում են կապական կապակցությամբ արտահայտված խնդիր²²⁵: Հմմտ. Ապա լու եղև *նմա* (Ա Մակ., 2, 1), լուր լիցի խմենայն *հեթանոսս* (Նէեմ., 2, 6) և լու եղև *առ դատաւորն* (Մատթ., ԻԸ, 14):

Այսպիսի մի խումբ բայերի պահանջով անմիջական կառավարմամբ կապակցվող բնության խնդիրն արտահայտվում է բացառական հոլովով. *զողորմութիւն առնել, վրէժ խնդրել, վրէժ հատուցանել, վրէժս պահանջել, հրաման առնուի*²²⁶ և այլն: Օրինակ՝ *Յընչից քոց ոչ առնիցես ողորմութիւն* (Տովբ., Գ, 7) *ընդ օծելոյ* նորա (Սաղմ., ԺԷ, 51)²²⁷: Վրէժս հատուցանել *ընդ մահուանն* Յովհաննու Մկրտչին (Խոր., 147) *ի Տեառնէ* (Թիւ., ԼԱ, 3): Առ նա եկեալ վրէժս *յԱրտաշրէ* պահանջեսցեն (Խոր., 209) *յաղագս յանցանաց* (Խոր., 128): Եւ խնդրեցից զվրէժխնդրութիւն իմ *փոխանակ* երկուց *աչաց* իմոց (Նաւում, Ա, 9) *յայլազգեաց* աստի (Դատ., ԺԶ, 28) և այլն:

Բերված բայերի՝ կապական կապակցությամբ արտահայտված բնության խնդրի փոխարեն որոշ կառույցներում կիրառվում են երկրորդական նախադասություններ. Ապա առ հրաման ի նմանէ, *զի չև է հնար գտանել մարթել ճանապարհս* (Բուգ., 44): Ապա լու եղև նմա, *եթէ է քաղաք* (Ա Մակ., 2, 1) և այլն:

2. Առանձին խումբ են կազմում այն հարադրավոր բայերը, որոնց պահանջած երկու բնության խնդիրներն արտահայտված են իրարից տարբեր կապական կապակցություններով: Այդ բայերից են՝ *աղաղակ առնել, աղաղակ բառնալ, աղաչանս դնել, աղօթս առնել, աղօթս մատուցանել, ամբաստան լինիմ, բարեխօս լինիմ, բողոք արկանել, բողոք կարդալ,*

բողոք հարկանել, դատախազ լինիմ, իրաւ տալ («դատել»), հաշ-տութիւն առնել, հռչակ հարկանել, մարտ առնել, մարտ դնել, յուրաստ լինիմ, նախանձ պահել, չարախօս լինիմ, չարախօս կալ, պայման առ-նել, պատերազմ տալ, սակ արկանել, վկայութիւն դնել և այլն²²⁸ :

Այս շարքի հարադրավոր բայերի պահանջած երկու բնության խնդիրներն էլ կապակցվում են միջնորդական կառավարման եղանակով՝ արտահայտված հետևյալ մասնակադապարներով՝ «ԱՌ–հայցական հոլովով կապվող բառածև», «ՎԱՍՆ–սեռական հոլովով կապվող բառածև», «Ի ՎԵՐԱՅ–սեռական հոլովով կապվող բառածև», «Ի(յ)–(+)հայցական հոլովով կապվող բառածև», «Ձ+բացառական հոլովով կապվող բառածև», «ԸՆԴ–սեռական հոլովով կապվող բառածև», «ՓՈԽԱՆԱԿ–սեռական հոլովով կապվող բառածև», «ԸՆԴ–հայցական հոլովով կապվող բառածև» և այլն, որոնք մեծով մասամբ միմյանց հետ կազմում են հոմանշության կամ համանշության շարքեր: Օրինակ՝ Աղաղակ առնել/ /աղաղակ բառ-նալ առ Շմաւոն (Ա Մակ., ԺԳ, 9) վասն նոցա (Ես., Ե, 30)²²⁹ : Եւ ինքն առնէր աղօթս առ Տէր (Բուգ., 20) վասն իմ (Թուրք, 200): Աղօթս մա-տուցաք²³⁰ մեք առաջի Տեառն (Ա Եզր., Ը, 5)²³¹ : Ամբաստան լինէին զնր-մանէ առ Պերոզ//առաջի Պերոզի (Փարսկ., 113 և 117): Բարեխօս լերուք առ Տէր վասն քաւութեան (ՆՀԲ): Բողոք արկանել//կարդալ// հարկանել զքէն առ Տէր (ՆՀԲ): Յառաջագոյ դատախազ լինէին զնմանէ առաջի ար-քային (Եղիշէ, 134): Տու՛ր իրաւ («դատի՛ր») յանձն քո յայսմ (Մծբն.): Յդեաց զկնի նոցա՝ յաղթութիւն առնել²³² ի վերայ ամենայն իրաւանցն (ՆՀԲ): Հռչակ հարկանել զմէնջ ի Զրիստոս²³³ (Մարկ., Ա, 45): Յուրաստ եղէց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ (Եղիշէ, 55): Նախանձ պահելով ընդ եղբօրն վասն աղջկայ միոջ հարճի (Խոր., 286): Դարձեալ անդրէն առ քազաւորն չարախօս լինի զնմանէ (Ա Մակ., Է, 25): Չարախօս կալ զի-նէն առ Տէր (Սաղմ., ԴԺ, 20): Պատերազմ տալ ընդ Բաղական (Ծննդ., ԺԴ, 2) վասն ձեր (Բ Օրէն., Ի, 4): Ոչ դահեկանի միոջ սակարկէր ընդ իս (Մատթ., Ի, 13): Չորոց ես դնեմ վկայութիւն ընդ ձեզ այսօր (Բ Օրէն., ԼԲ, 46) և այլն:

3. Խնդրառությամբ երկարժույթ հարադրավոր բայերի շարքում առանձնանում են նաև այնպիսիները, որոնց պահանջած երկու բնության խնդիրներն արտահայտվում են իրարից տարբեր հոլովածներով: Այդ բայերից են՝ *արժանի լինիմ, դատ առնել, դարձ լինիմ, դառ լինիմ, դուլ տալ, քեթև լինիմ, քողութիւն առնել, քոշակատար լինիմ, իրաւունս առնել, պատկառ կալ* և այլն:

Խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի այս խմբի հարադրավոր բայերի պահանջած երկու բնության խնդիրները կապակցվում են անմիջական կառավարման եղանակով: Ընդ որում, այդ խնդիրներից մեկն արտահայտվում է տրական, իսկ մյուսը՝ բացառական հոլովածներով: Դրանցից թե՛ մեկը և թե՛ մյուսը տարբեր նախադասությունների մեջ հանդես են բերում քերականական տարբեր իմաստներ: Այսպես՝ բացառական հոլովածներով արտահայտված բնության խնդիրը շարահյուսական մակարդակում կիրառվում է, մի դեպքում՝ որպես ներգործող, մյուս դեպքում՝ որպես անջատման անուղղակի խնդիր: Այս նույն ձևով տրական հոլովով արտահայտված բնության խնդիրը կիրառվում է, մի դեպքում՝ որպես հանգման անուղղակի խնդիր, մյուս դեպքում՝ որպես շահի և այլն: Օրինակ՝ Մեծաց պարգևաց արժանի լինիմ *յԱրեաց* (Փարպ., 41)²³⁴: Դա՛տ արա ինձ *յուխտէ* իմմէ (Ղուկ., ԺԲ, 3): Ի *Տեառնէ* եղիցի դարձ (Ես., ԾԱ, 40) ամենայն գերութեանն (Բուզ., 123): Եղև նմա դառ *ի Հրէիցն* (Գործ., Ի, 16): Մի՛ տար դուլ ական քում *յարտասուաց* (Ողբ., Բ, 18): Նմա քեթև լիցի *յաշխատութենէ* (Ոսկ.): Թողութիւն արասցէ նոցա *ի կապանացն* իւրեանց (Եղիշէ, 195): Լինէր նոցա քոշակատար *ի հաւա-տացելոց* աշխարհին (Փարպ., 27): Իրաւունս առնել ինձ *ի հալածչաց* իմոց (Բ Թագ., ԺԸ, 19): Հառ առնելով առաջիկայից իմոց բանից *ի սի-րելոյն* իմմէ (Խոր., 23): *Յայնմանէ* պատկառ կայցէ անձին (Ոսկ.) և այլն:

Բ.2.4. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ՊԱՐԱԳԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ²³⁵

Չեզոք սեռի հարադրավոր բարդությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարում պարագաառական արժույթով ավելի հա-

ճախ բնութագրվում են այն բայերը, որոնք խնդրառությամբ արժութագուրկ են:

Արձանագրված փաստը պատահական չէ. բանն այն է, որ այդ բայերից շատերի միջոցով անվանվում է ընթացք, շարժում: Վերջինս այդ բարդությունների կազմում արտահայտվում է հարադրյալի գործառույթ կատարող համադրական բայերի (*մտանել, ելանել, գալ, գնալ, խաղալ, երթալ, դառնալ* և այլն) կամ էլ հարադրի (*ի փախուստ, հրեշտակագնաց, դեսպանագնաց, գահավեժ, երթեկ* և այլն) միջոցով: Ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական բայերով արտահայտված գործողության կատարման համար խոսքային իրադրության մեջ կարևորվում է ոչ միայն ժամանակը, որի ընթացքում կատարվում է այդ գործողությունը, այլ նաև տեղը, որն արտահայտվում է առանձին բառով: Գրաբարի՝ խնդրառությամբ արժութագուրկ հարադրավոր բայերի շարքում առանձնանում են այնպիսիք, որոնք աչքի են ընկնում պարտադիր պարագաառությամբ. սա ինքնին նշանակում է, թե պարագաառությունն այս շարքի հարադրավոր բայերի համար արժույթի դրսևորում է: Նկատենք, որ ստորև դիտարկվող բայերը պարտադիր կերպով պահանջում են տեղի պարագա. Ասպատակ սփռել *զկողմամբ Ասորեստանի* (Ագաթ., 19): *Ընդ* ամենայն *երկիրն* ասպատակ սփռեալ (Բուզ., 146): Փախստական երթայր *առաջի գնդի* զօրավարին Հայոց Վահանայ (Փարս., 130): Վասն որոյ դիրամուտ եղև *յաշխարհս* Շապուհ (Խոր., 330): Մխիրն հարեալ *ի ծով*, ճախր առեալ՝ զմարգարիտն խնդրիցէ (Ոսկ.): Խառնամուխ եղեն *յամենայն տեղիս* (Եղիշէ, 127): Մշակն շուրջ գալով *զթաղի* միով (Փարս., 149): Որ *շուրջ գնովաւ* բակ առեալ ունէր (Բ Մակ., ԺԵ, 13): Պատեալ կային *շուրջ զինել* (Ագաթ., 119) և այլն:

Լեզվական փաստերը վկայում են, որ ո՛չ չեզոք սեռի պարագաառու հարադրավոր բայերն են հանդես բերում իմաստային միատարրություն, ո՛չ էլ վերջիններիս պահանջած տեղի պարագաները:

Որոշ հարադրավոր բայեր, այսպես կոչված, բուն տեղի պարագաառու են, ինչպես՝ *բանակ հարկանիմ, գետնատարած լինիմ, դարան մտանել, դարանամուտ լինիմ, երթեկս առնել, երեկօքս առնուլ, ի թաքստեան լինիմ, թևամուխ լինիմ, խառնամուխ լինիմ, կուռ կալ, կռուան գտանիմ,*

կոռուան գոլ, հուր հարկանիմ, դակիշ ածեալ ի ներքս ընթանալ, ի ներքս կալ, ի ներքս մտանել, շուրջ առնուլ, տապաստ անկանիմ, գտեղի առնուլ²³⁶, ցիր ընդ ցիր լինիմ, փախստեայ անկանիմ, օքեան առնել և այլն: Բերված բայերի պահանջած բուն տեղի պարագաները կարող են արտահայտվել տարբեր մասնակալապարներով, այդ թվում՝

1. «Ի(յ)-(+)*եզակի թվի տրականով* (կամ *հոգնակի հայցականով*) *արտահայտված կապվող բառածև*» կապական կապակցությամբ, որն, ինչ-պես հայտնի է, բուն տեղի պարագայական իմաստի արտահայտման հիմ-նական միջոցն է և գրաբար աղբյուրներում այնքան հաճախակի կիրառություն ունի, որ գրեթե բոլոր քերականները նշված կապակցությունն առանձնացրել են որպես ինքնուրույն հոլոված: Օրինակ՝ Հալածիչք մեր *յանապատի* ի դարան մտեալ՝ պաշարեցին զմեզ (Ողբ., Դ, 19): Դարանամուտ լինեին *յանդաստանին* (Դատ., Թ, 32): Ի մեծի *հրապարակին* գերթեկս առեալ շրջեր (Բուզ., 97): Եւ այնպես երեկօքս առեալ *ի լերինն* աւուրս բազումս (Ազաթ., 160): Որով քեամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր *հանգամանս* (Կորին., 36): Եւ ցաջմէ ջուրց հոսանա *ց ի բարձրաւանդակում* կուռ կալով ի տեղուջ (Խոր., 35): Չգտանիցին *ի մեզ* կոռուանք (Ոսկ.): Հուր հարկանէին *ի բանակի* (Ա Մակ., Դ, 20): Եւ դակիշ ածեալ յամուր *տեղուջ* միոջ (Բուզ., 134): Շուրջ առնուլ *ի մահիճս* զամենայն զիշերն իբրև զմեռեալսն (Ոսկ.): Տապաստ անկցին *ի հրապարակս* քաղաքին իւրեանց (Յուդ., Է, 9): Փախստեայ անկալ *յամուրս* իւրոյ աշխարհին (Եղիշէ, 80): Եւ *ի պոռնկանոցս* օքեանս առնեին (Երեմ., Ե, 7): Միջամուխ եղեալ *յԱսորեստան* լսէ զբօթ մահուանն Արտաւանայ (Խոր., 207) և այլն:

2. *Այլ կապական կապակցություններով*, որոնք գրաբարի աղբյուրներում ունեն բացառիկ կիրառություններ: Օրինակ՝ *Ի վերայ երկրի* զետնատարածք լինեին (Փարպ., 110): Խաղային, *ի մէջ ճակատուցն* ցիր ընդ ցիր լինեին (Խոր., 303): Քերովբէքն հովանի ունեին *ի վերայ տապանակի* ուխտին Տեառն (Ել., ԻԵ, 20): Ասպատակ սփռեր *ընդ* ամենայն *աշխարհ* Ամտիոքոս (Ա Մակ., Ա, 20) և այլն:

Ի ներքս հարադրով ձևավորված բարդությունների պահանջած բուն տեղի պարագան մի տեսակ մասնավորող նրբերանգ ունի. Եկն եմուտ գորավարն Պարսից ի ներքս *ի գեղն* Դալարիս (Բուգ., 45): Հառաչումն *յիս* ի ներքս ընթանայ (Խոր., 362): Եւ աւագ Պարսիկ որերոյ ի ներքս կալ *յատենին* հրամայէր (Փարպ., 165) և այլն²³⁷:

Արտաքս ելանել (հարադիրն ինքը տեղանիշ է) հարադրավոր բայը պահանջում է *արտաքս*-ի գաղափարը մասնավորող տեղի պարագա՝ չափի պարագայի քերականական ներբերանգով՝ Ելին արտաքս *քան զկապանն* ճորայ (Խոր., 270):

Չեզոք սեռի հարադրավոր բայերի պահանջած կամ ենթադրած բուն տեղի պարագան միշտ չէ, որ բառային արտահայտություն ունի: Օրինակ՝ *ծունր դնել* հարադրավոր բայը պարտադիր կերպով ենթադրում է բուն տեղի պարագա (Վասն այսորիկ ծունր դնէր *առ Հայր* (Եփես., Գ, 14): Ծունր եղ *առ ծովեզերին* (Գործ., ԻԱ, 5): Ծունր եղ *ի վերայ երկրին* (Բուգ., 20) և այլն), որը, սակայն, այս կամ այն խոսքային հատվածի բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով հաճախ բացակայում է. *Եւ ի դնել նոցա երիցս անգամ ծունր* (Բուգ., 10)²³⁸ և այլն: Այսպես գործողության կատարման բուն տեղի պարագա են ենթադրում (սակայն արտահայտության պլանում չունեն) *բանակ հարկանիմ, երեկօքս առնուլ, գտեղի առնուլ, նաւաբեկ լինիմ* և այլ բայեր, որոնց կողմից պահանջվող տեղի պարագան բառային արտահայտություն չունի՝ հարակից որևէ նախադասության կազմում նախապես հիշատակված լինելու կամ էլ չհիշատակվելով անգամ հասկանալի լինելու պատճառով: Օրինակ՝ *Եւ դեռ քնդ փոքր ծորակ* մի անցանել կամէին, *քնդ ջուր* մի սակաւ, գտեղի առին սպիտակ ջորիք կառացն (Ագաթ., 423): Իբրև գայն ասէր, պնդէին վաղվադակի ի կողմն Մովղիիմ քաղաքի զօրօքն հանդերձ: *Բանակ հարկանէր* (Բ Մակ., ԺԳ, 14): Եւ յետ այսորիկ ելանէր նա ի տեղիս մեհենացն...: Աւուրս քսան *երեկօքս առնէր* (Ագաթ., 425): Անկաւ կործան ի վերայ երեսաց իւրոց (Ոսկ.): Հետևի *նաւաբեկ լինել* (Նիս.): Յետ այսորիկ *գտեղի ունէր* արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն (Բուգ., 112): Սա ի *թաքստեան լեալ* (Խոր., 14): *Ճակատ յարդարէր* (Բ Մակ.,

ԺԵ, 20) և այլն:

Չեզոք սեռի հարադրավոր բայերի մի խումբ պահանջում է, այսպես կոչված, պարառական տեղի պարագա: Իբրև պարագաառու բայեր՝ դրանք միարժույթ են և առանձնանում են իրենց սահմանափակ թվով, որ նշանակում է, թե ոչ բոլոր հարադրավոր բայերին է հատուկ պարառական տեղի պարագա պահանջելը ²³⁹: Այդ բայերից են՝ *բակ առնուլ, բակ ունիմ, շուրջ գալ, շուրջ կալ, շուրջ պատել, շրջան առնուլ, պատ առնուլ, ցանկ ածել* և այլն: Օրինակ՝ Շուրջ արկանել *գայն գոտիք* (Առակ., ԻԹ, 6): Շուրջ պատել *հաղբս գոտիք* (ՆՀԲ):

Պարառական տեղի պարագաներն արտահայտվում են գրաբարի քերականներից շատերի կողմից իբրև առանձին հոլոված և համարվող պարառական հոլովով: Սա իրականում այլ բան չէ, եթե ոչ «*Ձ նախդիր+գործիական հոլովով արտահայտվող կապվող բառածև*» մասնակաղապարով արտահայտված կապական կապակցություն, որին երբեմն հարադրվում է *շուրջ* կապը՝ մի տեսակ թարմացնելով *Ձ* նախդրով ձևավորված, բայց հենց 5-րդ դարում մթազնվող պարառական իմաստը: Ընդ որում, *շուրջ* նախադրությունը մի դեպքում՝ հանդես է գալիս «*Ձ+գործիականով*» արտահայտված կապակցության հարադրությամբ, մյուս դեպքում այն հարադրվում է բայական բաղադրիչին: Օրինակ՝ Բակ առեալ ծրանայ *շուրջ գնովալ* (Եզնիկ, 186–187): Լոյսն *շուրջ գնովալ* բակ ունէր (Եզնիկ, Ա, 27): Որ *շուրջ* գայր *գաղբատաւն* (Ագաթ., 111): Կային *շուրջ գծնօտիք* սկուտեղն բազմութիւնք տղայոց արուաց (Փարպ., 30): Մէզ և մառախուղ սրահակածն *շուրջ զլերամբն* պատեալ (Ագաթ., 159): Գային *շուրջ* պատէին *գնովալ* (Բուզ., 185): Իւղն օծութեան շրջան առեալ ի մէջ գետոյն *շուրջ գմարդկաւն* (Ագաթ., 434): *Ձորով* պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ (Խոր., 165): *Շուրջ գնովալ* ցանկ ածել (Մատթ., ԺԲ, 1): *Շուրջ* գային *զքաղաքաւն* (Յես., Զ, 11) և այլն:

Վերջնակետի տեղի պարագա են պահանջում *ասպատակ առնել, ասպատակ տալ, ասպատակ դնել, ասպատակ սփռել, արշաւանս դնել, բանագնաց լինիմ, գերի երթալ, դեսպան առնել, դռոհ տալ, խառնամուխ*

լինիմ, ծոց առնուլ, յուզախնդիր լինիմ, ի ճանապարհ անկանիմ, փախըստական գնալ, փախստական երթալ, ի փախուստ կալ և այլ բայեր: Օրինակ՝ *Յայնկոյս* գետոյն մեծի փախստեայք լինել ճեպէին (Փարպ., 66): Փախստական լինել *ի կողմանս* Մարաց (Կորիւն, 40): Կամէին ասպատակ առնել *յերկիրն* Հայոց (Բուզ., 130): Ասպատակ ևս *ի Յոյն* արարին (Խոր., 185): Ասպատակ տալ *ի հեթանոսս* (Ա Մակ., Գ, 25): Սկսանէր ասպատակ դնել *ի կողմնանս* Պարսից (Ագաթ., 16): Անտի ասպատակ դնէին *ի քաղաք* մի (Բ Մակ., ԺԲ, 20): Արշաւանս դնեն յուրաքանչիւր *գաւառս* (Ագաթ., 2): Զանխուլ փութացաւ հասուցանել չարիս՝ բանագնաց *ի թշնամիսն* ելով (Պիտ.): Դեսպան արարին *ի Վիրս* (Փարպ., 156): Դռոհ տալ *յանապատն* (Ոսկ.): Ծոց առնուին *յաջակողմն* Հերակլեան արծանացն (Արիստ.): Ինքեանք գնացին փախստական *ի Հայս* (Ես., ԼԵ, 38): Երթիջի՛ր գերի *ի Բաբելոն* (Երեմ., Ի, 6):

Վերջնակետի տեղի պարագայական իմաստն արտահայտվում է այլ կապակցություններով ևս: Ընդ որում, միևնույն բայը տարբեր կիրառությունների մեջ կարող է պահանջել տարբեր արտահայտության պլաններ ունեցող ուղղության կամ վերջնակետի տեղի պարագաներ: Հմմտ. Հոնն այն ձիարշաւ արարեալ *ի վերայ Մուշեղայ* որպէս գթոչուն (Մաշտ.) և Ձիարշաւ առնէին յերամս կաքաւուց (ՆՀԲ):

Վերջնակետի տեղի պարագան գրաբարում արտահայտվում է նաև «*Առնախդիր-հայցական հոլովածեով կապվող բառածև*» մասնակադապարով, որ պահանջում են ընթացք, գնացք անվանող մի շարք բայեր, ինչպիսիք են՝ *դեսպանագնաց լինիմ, թափ մտանել, հրեշտակագնաց լինիմ, յափսիթերս երթալ, յափսիթերս խաղալ, փախստական դառնալ, փախստական լինիմ* և այլն: Դրանց կա՛մ հարադրի միջոցով է անվանվում ընթացք, գնացք և այլն, կա՛մ էլ բայական բաղադրիչի: Օրինակ՝ Սա դեսպանա-գնաց լեալ էր *առ Վարազշապուհ* (Բուզ., 141): Թափ մտին բոլորեքեան *առ իշխանն* Սիւնեաց Վասակ (Փարպ., 61): Հրեշտակագնաց լինիմ *առ Հոովմայեցիս* (Ես.): Փախստական դառնայր *առ եղբայրն* իւր (Ես.): Ահաւասիկ մեք անցանեմք *առ արսն* և յափսիթերս երթիցուք *առ*

ճոսա (Ա Թագ., ԺԷ, 8) և այլն:

Նկատելի է, որ այս դեպքում վերջնակետի (կամ ուղղության) տեղի պարագա ձևավորող կապվող բառաձևերն անձնանիշ գոյականների ու դերանունների հայցական հոլովաձևեր են, մինչդեռ «*Ի(յ) նախդիր-հայցական հոլովով արտահայտված կապվող բառաձև*» մասնակադապարի բաղադրիչ են դառնում տեղանիշ գոյականների հայցականները: Հմմտ. Բազմութեանն յաղթեալ՝ փախստական լինի Միերդատ *ի կողմանս* Պոնտոսի (Խոր., 130) և Փախստական լինի Կաղմոս *առ Հայկ* (Խոր., 34):

Միշտ չէ, որ պարտադիր կերպով ենթադրվող և պահանջվող տեղի պարագայական խնդիրները բառային արտահայտություն ունեն: Տարբեր նախադասությունների մեջ բառային արտահայտություն են ստանում միայն տեղեկատվական տեսանկյունից կարևորները: Այդ է պատճառը, որ պարագաառու բայերը տարբեր կիրառության մեջ պահանջում են տարբեր պարագաներ (մի դեպքում՝ սկզբնակետի, մյուս դեպքում՝ վերջնակետի կամ անցման և այլն)²⁴⁰: Այդ բայերից են՝ *արտաքս հոսել, ի բաց իջանել, նաւագնաց լինիմ, չու առնել, փախստական լինիմ, գերեղարձ լինիմ* և այլն: Օրինակ՝ Չու արարեալ յԱյրարատեան *գաւառէն* (Բուգ., 426): Չու արարեալ ամենայն բազմութիւնն հայոց *ի տեղիս*²⁴¹ հովոց (Փարպ., 60): Փախստական լինէր Արշակ *ի Շապհոյ* (Բուգ., 52): Նաւագնաց լինէին *ընդ ծով ի հեռաւոր աշխարհս* (ՆՀԲ): Սկսաւ զարիւնն գունդ-գունդ *ի ներքուստ ընդ բերանն* արտաքս հոսել իբրև գերկուս ժամս²⁴² (Բուգ., 185): Ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ ի բաց իջեալ թափեալ էր *ընդ քիթս* նորա (Բուգ., 160): Գերեղարձ լիցի մեզ *անդրէն ի* հայրենի *երկիրն* մեր (Եղիշէ, 189): Ըստ Գեղն *աւան ի դուրս* ելանէր *ընդ կողմն* արևմտից (Բուգ., 213): Ի դուրս ելեալ *ի սրահն* արքունի (Եղիշէ, 20): Վիմօք դարահոս լինիցիս (Եփր.): *Հի՞մ* դարահոս լինիս (Մանդ.) և այլն:

Նկատելի է, որ հարադրավոր բայերի մի մասը տեղի պարագաառությանը եռարժույթ է: Բանն այն է, որ վերջնակետի տեղի պարագա պահանջող բայերի արտահայտած գործողության իմաստն առավել ամբողջական է դառնում, եթե նշվում են նաև սկզբնակետի և անցման տեղի պա-

րագաները, և, ընդհակառակը, սկզբնականի տեղի պարագայի առկայության դեպքում ենթադրվում են մակ անցման ու վերջնականի տեղի պարագաներ: Օրինակ՝ Փախստական լինի *ի Ջրադաշտէ...ի Հայս* (Խոր., 55):

Պետք է նշել, որ գրաբարում (և ոչ միայն գրաբարում) ընդունված չէ միևնույն նախադասության մեջ սկզբնականի, անցման և վերջնականի տեղի պարագաների միաժամանակ գործածությունը: Այս կամ այն նախադասության մեջ այդ պարագաները գործածվում են ըստ անհրաժեշտության: Դրանով կարելի է բացատրել, որ՝

1. պարագաառությամբ եռարժույթ մի շարք բայեր պահանջում են մի-այն սկզբնականի տեղի պարագա: Այդ բայերից են՝ *արշաւանս առնել*, *արտասահման լինիմ*, *ի բաց ելանել*, *գերի գնալ* և այլն: Օրինակ՝ Յադագս արշաւանս առնելոյ *ի Պաղեստինէ* (Խոր., 94): Յաշխարհէն *ի բաց կամէր գնալ* (Եղիշէ, 199): Գնացեալ *ի բաց ի տեղւոջէն* (Փարս., 101): Գահավէժ լինի *ի ծայրից* բարձրաւանդակին (Բ Մնաց., ԻԵ, 12): Որ էր գերի եկեալ *յերուսաղեմէ* (Եսթ., ԻԹ, 6):

2. Պարագաառությամբ եռարժույթ որոշ բայեր գրավոր աղբյուրներում ունեն կամ ենթադրում են միայն վերջնականի տեղի պարագա²⁴³, որը գլխավորապես արտահայտվում է «Ի(յ)–(+)*եզակի* (կամ *հոգնակի*) *հայցական հոլովով կապվող բառածև*» մասնակադասարով արտահայտվող կապական կապակցությամբ:

Այս խմբի որոշ բայեր երբեմն կիրառվում են առանց ենթադրվող պարագայի: Օրինակ՝ *Նախ բանագնաց եղեն* (Ա Մակ., Բ, 33): *Ապա աւուրս երկուս ասպատակ արարեալ* (Ազաթ., 90): *Ասպատակ տուեալ առնուին զամենայն Ատրպայական երկիրն* (Բուզ., 123) և այլն: Բերված նախադասությունների մեջ տեղի պարագայական իմաստը բառային արտահայտություն չունի այն պարզ պատճառով, քանի որ ենթադրվում է տվյալ նախադասությունների բովանդակության պլանից: Մինչդեռ *Բեկցի կամ մեոցի կամ գերի գնացէ* (Ել., ԻԲ, 14): *Եւ ամենայն հոմանիք քո ի գերութիւն գնացեն* (Երեմ., ԻԲ, 22): *Ձի ի գերութիւն երթիցեն* (Եզեկ., ԺԲ, 11): *Ձի զօրաւորք նոցա հարան, ի փախուստ կացին* (Երեմ., ԽԶ, 5) և այլ

նախադասությունների մեջ ենթադրվող տեղի պարագաները կարող են հիշատակված չլինել խոսքի հեղինակին անհայտ լինելու պատճառով կամ ոճական նկատառումով:

Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի բազմաթիվ հարադրավոր բայերի պահանջով հանդես եկող մի շարք խնդիր և/կամ պարագա լրացումներ այդ բայերի արժույթի դրսևորումները չեն, քանի որ անմիջականորեն կախված չեն տվյալ բայերի բառիմաստից, ուստի արժույթի արտահայտություններ չեն: Դրանք կարևոր են միայն տվյալ խոսքային իրադրության մեջ: Ոչ պարտադիր խնդրառությամբ և պարագաանությամբ բնութագրվող բայերից են *ամօթ կրել, ամօթով կալ, ախաբեկ լինիմ, անբան լինիմ, յապաշխարութիւն դառնալ, յապիրատութիւն մտանել, ապաշաւ լինիմ, յապուշ հարկանիմ, յառաջ խաղալ, արթուն կալ, ի բայոց մտանել, բռնակալ լինիմ*: Օրինակ՝ Կրեցեն գամօթ *առ ժամայն* (Սաղմ., ԼԹ, 16) *յաղագս անձին* (Սիր., Գ, 23): Կացցեն ամօթով *յաւուրն* այցելութեան (Ագաթ., 67): *Ըստ ցանկութեան* ախաբեկ լինէր (Երեմ., Բ, 24): Անբան ևս եղեալ *յառաջ քան զմեռանելն* իսկ (Ագաթ., 236): *Բանիք* յապաշխարութիւն դառնայր (Բուգ., 143): Եւ ինքն այնուհետև *յայնմ հետե* յապաշխարութիւն մտցէ (Բուգ., 182): *Ջինն հազար ամն* զեղջ և ապաշաւ լինիցի (Եզնիկ, 127): *Ամենայնիւ* յապուշ ենք հարեալք (Ոսկ.): Եւ տայր հրաման յառաջ խաղալ *հանդերձ նոքօք* (Եղիշէ, 117): *Վասն այսորիկ* (Գործ., Խ, 31) *մի ժամ* արթուն կալ (Մատթ., ԻԶ, 40): *Յառաջագոյն քան զձմեռն* ի բայոց մտանելով (Եզնիկ., 175): Ամողիոս *զԽԲ ամս* բռնակալ լինէր (Եւս.): Գազանաբար գետնախշտիք լինէին *զինն ամ և զվեց ամիս* (Եղիշէ, 194): Մտից առ նա և ընթրիս արարից *առ նա և նա ընդ իս* (Յայտ., Գ, 20): *Վասն* Աստուծոյ *երկիւղին* ժուժկալ կացցեն անշարժ (Ոսկ.): Խառնագնաց լեալ *ի մանկութենէ* իմնէ (Բուգ., 226): *Ընդ ժամանակս* ի խաւար դառնայ (Եզնիկ, 15): *Վասն կանանց* իւրեանց անկան ի ծառայութիւն (Ա Եզր., Դ, 20): *Մորթազերծ մահուամբ* պակասեցաւ ի կենաց (Եզնիկ, 117): Կիսամեռ լինէր *ի վերայ տանեացն մինչև յառաւօտն* (Եղիշէ, 146): *Վասն* դոյզն *յանցմանն* անկանէր ընդ մահուամբ (Եզնիկ, 73): Մահապարտ գտան *ըստ գործոց*

խրեանց (Եղիշէ, 184): Մի՛ շատախօսք լինիք *իբրև զպերճախօսս* (Մատթ., 2, 7): Շուայտասէր լինէր *իբրև զարջ* (Ոսկ.): Ողբովք և արտասուօք անկեալ *ժողովրդեամբ հանդերձ* (Բ Մակ., ԺԱ, 6): Անկցի ողորմ իմ *առաջիքոյ* (Երեմ., ԼԷ, 19): Ուրախ լինէին *ընդ նմա* (Բուգ., 65) *ի Զրիստոս* (Եղիշէ, 154): Որք տայցեն վրէժս *ի սատակումն* յաւիտենից (Բ Թեսաղ., Ա, 9) *ի հրապարակս* (Սիր., ԻԳ, 30): *Ընդ Արիանոսաց օրէնս* անցանէր արիւնհեղութեամբ (Եղիշէ, 22): *Մինչև շուրջ զդովաւ* բրեցից և արկից աղբ (Դուկ., ԺԳ, 8): Եւ շահս արարին *առաջի որթագլխոյն* (Մծբն.): Պախուցս եղ *շուրջ զցոկով* նոցա (Յովբ, Լ, 1): Քարոզ կարդային *ի բանակին* (Բուգ., 138): Ոչ երբեք կայան առեալ *հակառակութեամբ* (Եղիշէ, 34) և այլն²⁴⁴:

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի պարագաառական արժույթի շուրջ կատարված դիտարկումները վկայում են, որ, ի տարբերություն խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի հարադրավոր բայերի, որոնց մեծ մասն աչքի են ընկնում պարտադիր պարագաառությամբ, խնդրառությամբ միարժույթ բացառիկ բայեր կան, որոնք խնդրառությամբ զուգահեռ օժտված են նաև պարագաառական արժույթով:

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի հարադրավոր որոշ բայեր տրական հոլովաձևով արտահայտված բնության խնդրին զուգահեռ գո-րություն ունեն պահանջելու առնվազն մեկ տեղի պարագա: Այդ բայերից են՝ *գերեղարձ առնել, դարձ լինիմ, մասնամուտ առնել* և այլն, որոնց խընդ-րառության և պարագաառության արժույթները միշտ չէ, որ դրսևորվում են շարահյուսական միևնույն կառույցի մեջ: Օրինակ՝ Թագաւորն Յունաց գե-րեղարձ առնէր գերութեան արքային Պարսից (Բուգ., 50) ի հայրենի երկիրն (Եղիշէ, 117): Մասնամուտ առնել օտարի յիւր *աշխարհն* (Եզնիկ, 255): Դարանակալ լինիմ նմա (Դատ., ԺԶ, 2) *առ դրունս* (Յովբ, ԼԱ, 3) և այլն:

Տրական հոլովով խնդրառու որոշ բայեր միաժամանակ կարող են ստանալ տեղի կամ այլ պարագաներ, որոնք, սակայն, նրանց համար պարագաառական արժույթի դրսևորումներ չեն: Օրինակ՝ *Էր՞ վասն* այլոց յերկմիտ լինիմ (Ոսկ.): Խարդաւանակ լեալ նմին *ի տաճարին* վիշապաց (Խոր., 84): *Ի նեղութեան* ինձ անդորր արարեր (Սաղմ., Գ, 2): Ընդ առաջ

գնաց նմա մեծաւ *պատարագաւ* (Խոր., 223): Լուսատու լինիմ նոցա *ի գնալն* (Ել., ԺԴ, 21) *յերկիր* (Ծննդ., Ա, 17): *Ի լերինս* գաստուածեղէն կրօնիցն զծառայութիւն հարկանէին (Կորին, 84): Արար նոցա հարսանիս *աւուրս չորեքտասան* (Տովբ., Ը, 22): Հետամուտ լինել նոցա *մինչև ի մահ* (Եւս.): Հովանի առնել նոցա *ի տուէ* (Սաղմ., ԾԴ, 39): *Բարկութեամբ* ոխս պահէին ինձ (Սաղմ., ԺԴ, 4): Ողջոյն առնել միմեանց (Ել., ԺԸ, 7) *խաղաղութեամբ* (Ա Մակ., Է, 33) *ի ճանապարհի* (Ղուկ., Ժ, 4): *Փոխանակ սիրոյ* չարահատոյցն եղև նմա (Պիտ.): Պատրանս մատուցանել նմա *մեղմով* (Խոր., 80): Ինձ *երկիրդի* սպաս ունին (Փարպ., 117): *Յօրէ, յորմէ* կացեր հակառակ (Արդ., 11): Խնամ կալ բանջարոյ *ի դաշտի* (Բուգ., 89): Առնիցեն պաշտօն *յանդիման նորա* (Բուգ., 170) և այլն:

Տրական հոլովով արտահայտված մի շարք բնության խնդիրներ տեղանիշ են, ուստի միաժամանակ արտահայտում են տեղային այս կամ այն նրբիմաստ: Օրինակ՝ Աշխարհագիր առնել ամենայն երկրին Հայոց / լանճնայն *երկիրս* Հայոց / (Եղիշէ, 22): Ասպատակ արծակէր գաւառաց / *ի գաւառքս* / (Եղիշէ, 22) և այլն:

Խնդրառությամբ միարժույթ մի շարք չեզոք սեռի բայերի հարադիրների միջոցով անվանվում է գործողության կատարման ուղղություն. *ընդ առաջ երթալ, ընդ առաջ լինիմ, դարձընթաց լինիմ* և այլն: Նշված տիպի հարադրավոր բարդությունները ևս տրականով բնության խնդրի հետ միաժամանակ պահանջում են գործողության կատարման տեղի պարագա կամ պարագաներ: Օրինակ՝ Ապա Դատաբէն երթայր ընդ առաջ զօրացն Պարսից մինչև *ի լեառնն* (Բուգ., 62): Ընդ առաջ լինել Տեառն *ի վերայ օդոց* (Ագաթ., 309) և այլն:

Սրանցից բացի՝ պարագաառական արժույթով բնութագրվում են նաև խնդրառությամբ միարժույթ այնպիսի հարադրավոր բայեր, որոնք տվյալ պարագան պահանջում են ոչ թե բնության խնդրին գուգահեռ, այլ բնության խնդրի փոխարեն: Այսպես՝ գրաբարում «ԱՌ—հայցական հոլովով կապվող բառածև», «Ի(յ)-(+)եզակի թվի տրականով կապվող բառածև», «Ի(յ)-(+)հայցական հոլովով կապվող բառածև», «Զ+գործիական հոլովով

կապվող բառածև» և այլ մասնակաղապարներով արտահայտվում են ոչ միայն խնդրային, այլ նաև պարագայական իմաստներ: Վերջին դեպքում կապվող բառածևի շարահյուսական դերով կիրառվում են տեղանիշ կամ պարագայական այլ նշանակությամբ բառեր: Այդ է պատճառը, որ մի շարք չեզոք սեռի բայեր հանդես են բերում արժույթային երկվություն՝ պահանջելով միջնորդական կառավարման եղանակով կապակցվող կա՛մ բնության խնդիր, կա՛մ պարագա: Բնականաբար, դրանք խոսքի մեջ կարող են բնութագրվել մի դեպքում՝ որպես խնդրառությամբ, մյուս դեպքում՝ որպես պարագաառությամբ միարժույթ բայեր: Հմմտ. մի կողմից՝ Պատգամ յդեր *առ կինն* մեռելոյն (Բուզ., 103): Լուր առնելով *առ որդին* իւր Պապ (Խոր., 299): Պատգամ յդեր *առ մարգարան* աշխարհին (Եղիշէ, 132): Հրապարակախօս լինիմ *առ հրէայսն* (Ոսկ.), մյուս կողմից՝ Պատգամ *ի ներքս* յդէին (Եղիշէ, 50): Լու արարից *յՌաքովք* (Երեմ., ԽԹ, 2): Հրապարակախօս լինիմ *ի մէջ ազգաց* (Առակ., Լ, 31):

Նշված բայերի շարքն են դասվում նաև (*ի*) *մօտ երթալ, մօտ լինիմ, հուպ լինիմ, հուպ գալ, հուպ երթալ* հարադրավոր բարդությունները, որոնք նախորդներից տարբերվում են իրենց կազմության առանձնահատկությամբ (սրանց հարադիրը նույնպես տեղանիշ բառ է) և պահանջած լրացումների արտահայտության պլանների անմիօրինակությամբ: Անկախ այն բանից, թե որ կապով են ձևավորված, պարագա լրացումների կապվող բառածևերը պարտադիր կերպով տեղանիշ են: Հմմտ. մի կողմից՝ Եթէ մօտ երթամք *ի նա* (Եղիշէ, 176): Ի մօտ իսկ երթալ *առ նոսա* (Փարպ., 173): *Ի գործ* ոսկեհատի մօտ երթալ (Փարպ., 117): Հուպ կամ մօտ լինել *ի նա* (Բուզ., 115): Ոչ է պարտ ձեզ հուպ լինել *առ նոսա* (Ազաթ., 394)²⁴⁵: Հուպ լինիմ *ի վիրաւորն* (Բ Օրէն., ԻԱ, 6): *Ի նա* հուպ գայցէ (Եզնիկ, 69): Եւ ամենեւին հուպ ոչ ոք իշխէ երթալ *առ նոսա* (Եղիշէ, 184) և այլն, մյուս կողմից՝ *Ի դուրսն* հուպ երթալ (Բուզ., 42): Եկին մօտ ելեն *ի գետն* Եփրատ (Ազաթ., 423)²⁴⁶: Մօտ երթալ *ի դուրս* բանտին (Փարպ., 73)²⁴⁷ և այլն:

Կապական կապակցությամբ արտահայտված խնդրառու չեզոք սեռի միարժույթ հարադրավոր բայերը նույնպես, բնության խնդրից բացի,

կարող են պահանջել պարագա կամ այլ խնդիր, որը տվյալ բայերի արժույթի դրսևորման տեսանկյունից կարևորություն չի ներկայացնում: Օրինակ՝ Իմ աղ և հաց կերեալ է *յաշխարհի* ձերում (Եղիշէ, 170): Դաշինս կռեցի ընդ մահու (Ես., ԻԸ, 15) և ոչ իմով *հոգւով* (Ես., Լ, 1): Երկայնաբան լինել ընդ ձեզ *պայքարաւ* (Եղիշէ, 170): *Սիրով* Աստուծոյ յուխտ մտեալ է (Եղիշէ, 82) ընդ նմա (Եղիշէ, 73): Եւ ընդ ակամբ հայեր Սաւուդ *յօրէ յայնմանէ* և *առ յապա* (Ա Թագ., ԺԸ, 9): *Ակնարկի առնէին յիս աչօք* (Սաղմ., ԼԴ, 19)²⁴⁸: *Մեծաւ քինու նախանձաբեկ լինելով* (Ագաթ., 16): Վասակ *քան* զամենայն *գօրսն* ելեկս առնէր (Բուգ., 111): Վասն *այտորիկ* կայր յաղօթս առ Տէր յերկար (Բուգ., 11, 189): Վասն մեծ մարդասիրութեանն Տեառն երասանակազանցք լինիմք առ ծառայութիւնն (Բրս.): *Աղօթիւք* խնդրուածս առնէին առ Աստուած (Եղիշէ, 81): Եւ կանխեալ յաղօթս և ի խնդրուածս *զգայզ* և *զցերեկ* (Ա Տիմ., Ե, 5): Ծափ զծափի հարեալ մեծաւ *զղջմամբ* (Բուգ., 103): *Մինչև յե՞րբ* սուգ ունիցի (Երեմ., ԺԲ, 4): Մեծաւ *աղաղակաւ* ճիշ բառնային (Բուգ., 215): Յաղօթս կային *ի սիրտս իւրեանց* (Եղիշէ, 151): Խրախոյս բառնային իւրեանց *բարբառովն* (Ա Մակ., Ե, 33): Այցելու լիցի *քեզ ի բարիս* (Յուդ., ԺԳ, 25): Ընդ որս ի վսէր եկեալ (Պիտ.) *վասն ազահութեան* (Պիտ.): Ի վերուստ ի պարսպացն նետածիգս լինէին (Բ Թագ., ԺԱ, 20) *ի ծառայս քո* (Բ Թագ., ԺԱ, 24): Ի կապոյտ *ղաշտին* (Փարպ., 10) *զհետ եղջերուաց* ձիարձակ լինել (Ագաթ., 10): *Յօրէ* յայսմանէ տալ զահ և զերկիւղ առաջի ամենայն ազգաց (Բ Օրեն., Բ, 25): Զի մի ի ժամանակի մարտին *խամք* և անկիրթք *զտցուք* (Բրս.) և այլն:

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերից մի քանիսը բացառական հոլովով բնության խնդրի փոխարեն կամ նրան զուգահեռ հնարավորություն ունեն պահանջելու առնվազն մեկ պարագայական խնդիր: Այդ բայերից են՝ *խոյս տալ*, *փախստական լինիմ*, *ի փախուստ դառնալ*, *զաղտագողօնք լինիմ* և այլն: Հատկանշական է, որ ենթադրվող տեղի պարագան միշտ չէ, որ կիրառվում է հիշյալ բնության խնդրի հետ միաժամանակ: Օրինակ՝ Խոյս ետ ի նոցանէ *զկողմամբք Կաւկասու* (Խոր., 288) // *ընդ ճանապարհ* անապատին (Դատ., Ի, 42) // յանապատ *տեղիս*

(Ղուկ., Ե, 16):

Թեև այս շարքի որոշ հարադրավոր բարդություններ գործություն ունեն տարբեր կիրառությունների մեջ պահանջելու տարբեր քերականական իմաստ արտահայտող պարագաներ, սակայն վերջիններս չեն բխում այդ բայերի բառիմաստից, ուստի և պարագաառական արժույթի դրսևորումներ չեն դիտվում: Օրինակ՝ Լուռ լինիմ *յեկեղեցւոջն* (Ա Կոր., Ա, 28): *Ի սկզբանէ* լուռ լինիմ (Ես., ԽԲ, 14): *Վասն որոյ* լուռ լինիմ (Յովբ, ԺԲ, 6) և այլն: Եվ ընդհակառակը, մի շարք հարադրություններ էլ թեև տարբեր կիրառությունների մեջ պահանջում են միևնույն տիպի պարագաներ, սակայն նշված փաստը ևս չի նպաստում այդ բայերի պարագաառական արժույթի կայացմանը: Օրինակ՝ Չունէին ժոյժ և *առ վայր մի* (Փարպ., 92): *Չտասն օր* ժոյժ ունիմ (Ոսկ.) և այլն:

Խնդրառությամբ երկարժույթ բայերը ևս կարող են հարկ եղած դեպքում պահանջել նաև պարագաներ, որոնք, սակայն, տվյալ բայերի համար պարտադիր չեն, ուստի և արժույթի տեսանկյունից դիտվում են անկարևոր: Օրինակ՝ Չորոց վկայութիւն դնեմ ձեզ *յաւուր* յայսմիկ (Ագաթ., 362): *Վասն նախանձու* (Ա Մակ., Բ, 58) խնդրել զվրէժս թշնամանաց դստերն իւրոյ (Փարպ., 39) *ի ձեռն քո* (Ղևտ., ԺԹ, 18): Աղաղակ արասցեն *յաւուր* յայնմիկ (Ես., Ե, 30): Աղաղակ բարձ *թայնկոյս ծովուն* (Երեմ., ԻԲ, 20): *Ի նմին լերին* աղօթս առնէր (Կորին., 82): Աղօթս մատուցանել *մինչև ցերեկոյն* (Խոր., 166): Ամբաստան լինէին *քսութեամբ* (Բուզ., 166): Մարտ դնել *նոքօք հանդերձ* (Եղիշէ, 108) *շուրջ զբերդաւն* (Եղիշէ, 122): Դա՛տ արա ինձ, Տէ՛ր, *ըստ արդարութեան քո, ըստ անօրէնութեան* իմոյ, որ յիս (ՆՀԲ) և այլն:

Բ.2.5. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՋԱԾ ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Ինչպես նշել ենք, չեզոք սեռի բայերը ներգործականներից և կրավորականներից տարբերվում են նրանով, որ պահանջում են ոչ թե սեռի,

այլ բնության խնդիր կամ խնդիրներ (վերջին հանգամանքը կախված է տվյալ բայի խնդրառությանը միարժույթ կամ երկարժույթ լինելուց): Այս տեսանկյունից բացառություն չեն կազմում նաև չեզոք սեռի հարադրավոր բայերը, որոնց պահանջով հանդես եկող բնության խնդիրներն ըստ քերականական իմաստի գրաբարում լինում են մի քանի տեսակ (հանգման, անջատման, միջոցի, սահմանափակման և այլն): Շարահյուսական կապակցության կամ նախադասության մեջ այս կամ այն բնության խնդրի առկայությունն ուղղակիորեն պայմանավորված է բայ-գերադաս անդամի ընդհանուր բառիմաստով: Այսպես՝ *ի բաց լինիմ* հարադրավոր բայը, իր բառիմաստով պայմանավորված, ենթադրում է անջատման իմաստ արտահայտող բնության խնդիր [*ի բաց լինել ի պաշտամանց* (Ագաթ., 129)], *հակառակ կալ* բայը՝ հանգման իմաստ արտահայտող բնության խնդիր [*Հա-կառակ կալ աջոյ* (ՆՀԲ)] և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոսքի մեջ իմաստային որեւիէ դաս ներկայացնող բնության խնդրի առկայությունը կարող է պայմանավորված լինել մի դեպքում՝ հարադրավոր բարդության հարադրի բառային իմաստով, մյուս դեպքում՝ բայական բաղադրիչի, երրորդ դեպքում՝ միաժամանակ և՛ հարադրի, և՛ բայական բաղադրիչի, իսկ չորրորդ դեպքում՝ ողջ բարդության ընդհանուր բառիմաստով:

Այսպես՝ *հնազանդ* և *խաղակից* բառերն ածականներ են՝ ինքնին օժտված տրական հոլովով արտահայտված բնության խնդիր պահանջելու գործությամբ: Նշված հատկանիշը տվյալ բառերը պահպանում են նաև իբրև բարդության հարադիր կիրառվելիս: Այնպես որ, *հնազանդ լինիմ*, *խաղակից լինիմ* և նմանատիպ վերլուծական բայերի (*ապաւեն լինիմ*, *ողջոյն առնել*, *տեղեակ լինիմ*, *պատրաստ կալ*, *հպատակ կալ*, *ճայնակից լինիմ* և այլն) տրականով խնդրառությունը պայմանավորված է հարադիրներով: Ինչ վերաբերում է դրանց բայական բաղադրիչներին, ապա վերջիններս այստեղ ունեն սոսկ այնպիսի գործառույթ, ինչպիսին ունեն բայակազմական ձևայինները (հմմտ. *ողջոյն առնել* և *ողջունել*): Կայուն հատկանիշ արտահայտող բառերին հարադրվելով՝ բայական բաղադրիչները նրանց հետ միասին արտահայտում են մեկ փոփոխվող հատկանիշի

գաղափար:

Տալ բայը խնդրառությամբ երկարժույթ է. պահանջում է մի սեռի և մի բնության խնդիր, որոնցից վերջինն արտահայտվում է տրական հոլովածևով: *Պատիւ տալ* հարադրավոր բարդության մեջ *տալ* հարադրյալը կորցրել է սեռի խնդիր պահանջելու գործությունը (սեռի խնդիրը տվյալ դեպքում վերածվել է բարդության բաղադրիչի)՝ պահպանելով միայն տրականով բնության խնդիր պահանջելու գործությունը: Հետևաբար, *պատիւ տալ* և համանման հարադրավոր բարդությունների տրականով (կամ այլ հոլովածևով) բնության խնդիր պահանջելը պայմանավորված է *տալ* հարադրյալի բառիմաստով:

Մի շարք հարադրավոր բարդություններ ստանում են այնպիսի բնության խնդիր, ինչպիսին, իբրև առանձին բառ, տվյալ բարդության թե՛ հարադիրը կարող է պահանջել և թե՛ բայական բաղադրիչը: Այսպես՝ *ողջոյն տալ* բարդության և՛ *ողջոյն* հարադիրը, և՛ *տալ* հարադրյալը առանձին-առանձին գործածվելու դեպքում ևս կարող են պահանջել տրականով արտահայտված բնության խնդիր: Օրինակ՝ Թագաւորի *Դարեհի* ողջոյն (Ա Եզր., 2, 7) և Որ ինչ արժան իցէ, տաց *ծեզ* (Մատթ., Ի, 4): Նույն կերպ են բնութագրվում նաև *ի բաց փախչիմ* և այլ հարադրավոր բայեր:

Եվ վերջապես, *ջինջ լինել*, *խնդիր առնել*, *վախճան առնել*, *ոխս պահել*, *շնորհ ունիմ* և նման տիպի հարադրավոր բարդությունների բաղադրիչներից ոչ մեկը գործություն չունի անկախ գործածվելու դեպքում պահանջել կամ ենթադրել որևէ բնության խնդիր: Այդպիսի հնարավորություն նրանք ձեռք են բերում միայն միասնաբար (իբրև մեկ բառ) հանդես գալու դեպքում: Նշված երևույթը հատկապես ակնառու է դարձվածային հարադրավոր բարդությունների մեջ, քանի որ վերջիններիս բաղադրիչները միասնաբար ձեռք են բերում բոլորովին նոր իմաստ: Օրինակ՝ Վնասակար ծառայք չիշխեն յերեսս անկանել /«երևալ»/ *թագաւորաց* (ՆՀԲ): Եւ ոչ ողորանացն իսկ երեսս ինչ արար /«ուշադրություն դարձնել»/ (Եղիշէ, 159): Որ *ինձ* ակն եդ /«աչք դնել»/ զայրն իմ ետ սպանանել (Բուզ., 132) և այլն:

Հարկ է նշել, որ բնության խնդիրներն իրարից տարբերվում են ոչ

միայն քերականական իմաստով, այլև ներկայացնում են իմաստային տարբեր դասեր: Վերջին տեսանկյունից գրաբարում առանձնանում են անձնանիշ, իրանիշ, շնչավոր (այս դեպքում ոչ անձնանիշ) առարկա անվանող բնության խնդիրներ:

Ըստ բնության խնդիրների դասային պատկանելության՝ գրաբարում տարբեր հարադրավոր բայեր հանդես են բերում կապակցման տարբեր հնարավորություններ:

1. Միայն անձնանիշ բնության խնդիր կարող են պահանջել խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի հետևյալ հարադրավոր բայերը. *անարգանս դնել, անկողնարկ լինիմ, ապտակ դնել, ապտակ մատուցանել, ընդառաջ ելանել, ընդառաջ գնալ, ընդառաջ լինիմ, բազմական արկանել, գերեղարձ առնել, գերեկից լինիմ, դատապարտ առնել, երախտիս առնել, գորավիզն լինիմ, թագադիր լինիմ, թէկն ածել, թշնամանս դնել, ի թըշնամութիւն դառնալ, ժամ դնել, ժամադիր լինիմ, խաղակատակ լինիմ, խաղակից լինիմ, խարդաւանակ լինիմ, խրախոյս տալ, խոստմունս առնել, ծառայութիւն հարկանել, կաշառ խթել, կենակից լինիմ, ի հարկի կալ, հնազանդ լինիմ, հրաժեշտ լինիմ, հրաժեշտ առնուլ, մեղ դնել, միամիտ լինիմ, մխիթար տալ, շնորհակալ լինիմ, ողջոյն առնուլ, ողջոյն տալ, պատիւ առնել, սեղանակից լինիմ, սուտակասպաս լինիմ, սպասաւոր լի-նիմ* և այլն: Օրինակ՝ Նաև *մնացելոյն* կարենք լինել գամագիտ (Փարսլ., 122): Յանձն եղեալք սուրբ *Հոգւոյն* (Եղիշէ, 11): Որ *ապստամբին* թէկն ածէ (Սեբեր.): Ձեռնտու լինել *այնոցիկ* (Ագաթ., 265): Եւ տային *միմեանց* ողջոյն (Բուգ., 85): Պատուհաս *ի Տեառնէ* ի վերայ հասանէր (Ագաթ., 113): Ոչ կամեցան հրաժեշտ առնուլ *ի թագաւորէն* (Եփր.) և այլն:

Միայն անձնանիշ բնության խնդիր պահանջող միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը, անկախ այն բանից՝ իրենց ուղիղ, թե որևէ երկրորդական իմաստով են գործածված, խնդիր առնելու գործընթացում հանդես են բերում անդիմաստահմանափակություն՝ ըստ անհրաժեշտության պահանջելով առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքով արտահայտված բնության խնդիր: Օրինակ՝ *Ի դէմս գայ* ինձ *ախտն* (Առ որս.): *Ծառայու-*

թիւն առնել ձեզ (Փարպ., 168): Սոյն *Յոհան խաղակատակ լինէր* նոցա (Բուզ., 228) և այլն:

Դեմքի քերականական կարգից զուրկ անձնանիշ գոյականների, դերանունների և փոխանվանաբար գործածված բառերի հետ այս խմբի հարադրավոր բայերը կապակցվում են երրորդ դեմքով. Մի ոմն ի քաջ զօրականէն Հայոց թշնամանս դնէր *անօրինին* (Եղիշէ, 122): Ահ արկանէին *զմիմեամբք* (Խոր., 111): Ետ ողջոյն *Եղիսաբեթի* (Դուկ., Ա, 40) և այլն:

Գրաբար աղբյուրներում անձնանիշ բնության խնդիր պահանջող միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի թվային և գործառական ակնհայտ գերազանցությունն առաջին հերթին պայմանավորված է այդ աղբյուրներում արծարծված թեմատիկայով (պատմական, եկեղեցական և այլն), որտեղ գործողությունները հիմնականում վերաբերում են իրական կամ մտացածին անձանց: Օրինակ՝ Հաւանեցուցանէին զնոսա թիկունս լինել *իւրեանց* (Բուզ., 144): Եդ անարգանս *տիկնոջն* (Բուզ., 160): Բանակոխի լինիմ *հրեշտակաց* (Եղիշէ, 18): Զուարթակից եղեն *երկնաւորաց* (Ագաթ., 24): Պաշտօնատար լինիմ *ղիցն* (Ագաթ., 30) և այլն:

Կասկած չկա, որ քերականական, մաթեմատիկական և այլ աշխատություններում նշված հարադրավոր բայերն արդեն կունենան բացառիկ կիրառություններ: Նկատելի է, որ անձնանիշ բնության խնդիրների մեծ մասն արտահայտվում է տրական հոլովով: Վերջինս չպետք է շփոթել խընդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի հարադրավոր բայերի միադիմի կամ անդեն ձևերի պահանջած փոխակերպված ենթակաների հետ, որոնք նույնպես արտահայտվում են տրական հոլովով: Օրինակ՝ Մինչև լիցի *քեզ* դարձ անդրէն յերկիր (Եզնիկ, 72): Եւ *մեզ* լինել անդարձ ընդ նոսա (Փարպ., 105):

Անձնանիշ բնության խնդիր պահանջող չեզոք սեռի հարադրավոր բայերի հետ փոխաբերական իմաստով խնդրի գործառույթ կարող են կատարել նաև այլ դասային պատկանելության առարկաներ: Օրինակ՝ *Խնամ տանել* իւրում *իշխանութեանն* (Եղիշէ, 38): Ե՛կ, հրեշտա՛կ, *սպասավո՛ր լեր* ահագին *խորհրդոյ* ծածկելոյ մահուն (Կոչ.): Երկայնամտութեամբ *յաղթուկ լինիմ փորձութեանցն* (Բրս.) և այլն:

2. Իրանիշ բնության խնդիրների մի մասն անվանում է քանձրացական, իսկ մյուս մասը՝ վերացական առարկա: Այդ բայերից են՝ *բաշխումըն առնել*, *գիտուն լինիմ*, *թեակոխ լինիմ*, *իմաստուն լինիմ*, *իրագգաց լինիմ*, *խելամուտ լինիմ*, *խից արկանել*, *խնամ տանիմ*, *խնամ կալ*, *հիմունըս դնել*, *հմուտ լինիմ*, *ձեռնամուխ լինիմ*, *պատ առնուլ*, *պատրաստ կալ*, *պիտանի լինիմ*, *ի վերայ հասանել*, *վերահասու լինիմ*, *տեղեակ լինիմ* և այլն: Օրինակ՝ Կամիմ զբեզ իմաստուն լինել *ի բարիս* (Հոովմ., ԶԺ, 18): Ձեռնամուխ եղեն *ի գործ* պատերազմի (Եղիշէ, 105): Թեակոխ լինիմ *ի հանգամանս* (Ագաթ., 454): *Զորով* պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ (Խոր., 165): *Իրացն* եղելոց խելամուտ լինէր (Ագաթ., 402): Խից արկանել *ջորց* բազմաց նորա (Եզեկ., ԻԱ, 15) և այլն:

Ինչպես վկայում են գրավոր փաստերը, չեզոք սեռի հարադրավոր բայերի հետ կիրառվող բնության խնդիրներն աչքի են ընկնում դիմասահմանափակությամբ²⁴⁹. նրանք չեն կարող արտահայտվել առաջին կամ երկրորդ դեմքով:

3. Միայն շնչավոր առարկա անվանող (ոչ անձնանիշ) բնության խընդիր պահանջող կամ ենթադրող միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերից գրաբար աղբյուրներում հիշատակվում է *արօտակից լինիմ*-ը՝ *Արօտակի՛ց լեր գառանցն* (Կոչ.):

Միայն իրանիշ բնության խնդիր պահանջող միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի նման այս տիպի բարդությունները նույնպես գուրկ են առաջին կամ երկրորդ դեմքով արտահայտված բնության խնդիր պահանջելու հնարավորությունից և աչքի են ընկնում բացառիկ կիրառություններով:

Շնչավոր առարկա անվանող բնության խնդիրների արտահայտության հիմնական միջոցը գոյականներն են, երկրորդաբար՝ այլ բառեր, որոնք թեև գուրկ են դեմքի քերականական կարգից, սակայն սրանց պայմանականորեն վերագրվում է երրորդ դեմքի քերականական հատկանիշ:

4. Տարբեր դասային պատկանելության բնության խնդիրներ պահանջող (բազմադաս) միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի մի մասը

տեսականորեն հնարավորություն ունի կապակցվելու անձնանիշ և իրանիշ բնության խնդիրների, մյուս մասը՝ անձնանիշ, իրանիշ և շնչավոր առարկա անվանող բնության խնդիրների հետ:

Տարբեր դասային պատկանելության բնության խնդիրներ պահանջող միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերից են՝ *ահ արկանել, այց առնել, յայց ելանել, այցելու լինիմ, անդորդ առնել, բանիւ անցանել, ի բաց գնալ, ի բաց կալ, ի բաց լինիմ, դարման տանիմ, յետս կալ, երկիւղ արկանել, երկիր պագանել, զգոյշ լինիմ, զգոյշ կալ, թափուր լինիմ, խնամ կալ, խնամ տանիմ, խնդիր առնել, ի խնդիր ելանել, հակառակ կալ, հուպ լինիմ, ի մօտ երթալ, մօտ լինիմ, պատասխանի առնել, սատար լինիմ, սուգ առնուլ, վախճան առնուլ, ունկն դնել, ունկնդիր լինիմ, ի փորձ մտանել* և այլն: Հմմտ. Ոչ կամէր առնել *բանիցն* պատասխանի (Բուգ., 101): Եւ արարին *մամակին* պատասխանի (Եղիշէ, 27) և Առնէ պատասխանի *Աբգարու* (Խոր., 148): Ձի մի ընդ քո այլ *ումեք* երկիր պագանիցեմք (Կոչ.) և *Պատկերիդ* ոսկւոյ, զոր կանգնեցեր, երկիր պագանեմք (Դան., Գ, 4): Հակառակ կային *գործոց* մերոց (Իմաստ., Բ, 12) և Եկաց հակառակ *եղբօր* իւրում (Բ Օրէն., ԺԲ, 18): Ձգոյշ եղերուք *ի* սուտ *մարգարէիցն* (Մատթ., Է, 15): Ձգոյշ եղերուք *ի շանց* անտի (Փիլ., Գ, 2) և Տեսէ՛ք և զգոյշ լերուք խմենայն *ազահութենէ* (Դուկ, ԺԲ, 15): Ունկնդիր եղև Յակոբ *հօր և մօր* իւրում (Ծննդ., ՀԸ, 7) և Ունկնդիր եղև Աբրամ *ձայնի* Սարայի (Ծննդ., ԺԶ, 2): Սուգ առնուս ի վերայ *Սաւուդայ* (Թիւ., ԺԴ, 39) և Սուգ առին քահանայքն *վասն այսորիկ* (Փարպ., 26, 56): Այց արա *այգւոյս* այսմիկ (Սաղմ., ՀԹ, 15): Այց արար ամենայն *հեթանոսաց* (Սաղմ., ԾԸ, 6): Այց արասցէ *մեղաց* նոցա (Երեմ., ԺԳ, 10) և Այց արա *այգւոյս* այսմիկ: Եւ դարման տար *սմա* (Սաղմ., ՀԹ, 15-16): Գրաստ քո իցէ պիտանի, խնամ տար *մմա* (Սիր., Է, 24)²⁵⁰ և Խնամ տանել իւրում *իշխանութեանն* (Եղիշէ, 18):

Ի տարբերություն խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի, որոնք պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են մի սեռի և մի բնության խնդիր, խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը պահանջում կամ ենթադրում են երկու (ընդ

որում՝ իրարից տարբեր) բնության խնդիրներ: Հմմտ. Դատ առնել *մմա վասըն մահուն* խրոց (Եզնիկ, 248) և *Ձիրսն մմա* յանձն առնել (Փարս., 73):

1. Ուսումնասիրված գրավոր փաստերը վկայում են, որ խնդրառության երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի մեծագույն մասի պահանջած բնության խնդիրներից մեկն անձնանիչ է: Այդ բայերից են՝ *ազդումն առնել*, *աղաղակ առնել*, *աղաղակ բառնալ*, *աղաչանս դնել*, *աղօթս առնել*, *աղօթս մատուցանել*, *ամբաստան լինիմ*, *աւետիս առնուլ*, *աւետիս տալ*, *բարեխօս լինիմ*, *բողոք արկանել*, *բողոք բառնալ*, *գոյժ լինիմ*, *գուշակ լինիմ*, *դատ դնել*, *դժպիի լինիմ*, *երանի տալ*, *գրոյց տալ*, *թեթև լինիմ*, *թողութիւն տալ*, *թոյլ լինիմ*, *ժամ դնել*, *ժամադիր առնել*, *իրաւունս առնել*, *լու լինիմ*, *լուր լինիմ*, *ի խրատ մտանել*, *հրաման առնուլ*, *հրաման տալ*, *մարտ առնել*, *մարտ դնել*, *մեղադիր լինիմ*, *ի մոռացումն գալ*, *յօժարամիտ լինիմ*, *յուրաստ լինիմ*, *վկայութիւն տալ*, *վրէժ լուծել*, *վրէժ խնդրել*, *վրէժ պահանջել* և այլն: Օրինակ՝ Ժամ դիր *ինձ* առ ե՞րբ արարից աղօթս վասն քո (Ել., Ը, 9): Գոյժ ետ *Յովհաննու*... (Ա Մակ., ԺԶ, 21): Դատ եղից անդ *ձեզ* (Եզեկ., Ի, 33): Ժամադիր լինէին *միմեանց* (Բ Մակ., ԺԴ, 21): Զի տացէ *մմա* ժամ.... (Դան., Բ, 16): Երդմնի եղև *նոցա* (Ա Մակ., Է, 15): Որ ետ աւետիս *հօր* իմոյ (Երեմ., Խ, 15): Աղօթս մատուցաք մեք *Տեառն* (Բ Մակ., Ա, 8) և այլն:

Անձնանիչ բնության խնդրի փոխարեն փոխաբերական իմաստով կարող է գործածվել իմաստային այլ դաս ներկայացնող առարկա, որից, սակայն, տվյալ բայի ո՛չ խնդրառական արժույթի դրսևորումն է փոխվում, ո՛չ էլ տվյալ խնդրի արտահայտության պլանը: Հմմտ. Յառաջ քան զվախճան մի՛ տար երանի *մարդոյ* (Սիր., ԺԱ, 30) և Երանի ետուն վասն նորա *աշխարհին* Հայոց (Եղիշէ, 191):

2. Անձնանիչ բնության խնդիր պահանջող մի շարք հարադրավոր բայերի հետ երկրորդ բնության խնդրի գործառնությով հանդես են գալիս իրանիչ (վերացական կամ թանձրացական) առարկաներ: Այդ բայերից են՝ *արժանի լինիմ*, *երդումն տալ*, *երդմնի առնել*, *դատ առնել*, *թեթև լինիմ*, *թողութիւն տալ*, *ժամ դնել*, *ժամադիր առնել*, *լու(ր) լինիմ*, *հրաման տալ*,

մեղադիր լինիմ և այլն: Օրինակ՝ Թողութիւն արասցէ նոցա *ի կապանացն* իւրեանց (Եղիշէ, 195): Դատ արա ինձ *յուխտէ* իմմէ (Ղուկ., ԺԲ, 3): Մեծաց *պարզեաց* արժանի լինիմ յԱրեաց (Փարպ., 41) և այլն:

3. Անձնանիշ բնության խնդիր առնող մի խումբ հարադրավոր բայեր իբրև խնդրառական արժույթի երկրորդ եզր պահանջում են նույնպես անձնանիշ առարկա: Այդ բայերից են՝ *ամբաստան լինիմ, դաւ առնել, իրաւունս առնել, չարախօս լինիմ, բարեխօս լինիմ* և այլն. Եղև նմա դաւ *ի Հրէիցն* (Գործ., Ի, 16): Իրաւունս առնել ինձ *ի հալածչաց* (Բ Թագ., ԺԸ, 19):

Անձնանիշ բնության խնդիր առնող մի խումբ հարադրավոր բայերի պահանջած երկրորդ բնության խնդիրը (վերջինս հիմնականում արտահայտվում է կապական կապակցությամբ, ուստի այս դեպքում նկատի ունենք կապվող բառաձևի դասային պատկանելությունը), կարող է արտահայտվել իմաստային տարբեր դասեր (անձնանիշ, իրանիշ կամ շնչավոր առարկա) ներկայացնող առարկաներով: Այդ բայերից են՝ *աղաղակ առնել, աղաղակ բառնալ, աղօթս առնել, աղօթս մատուցանել, աւետիս առնուլ, աւետիս տալ, գոյժ լինիմ, գոյժ տալ, դրոյց տալ, վկայութիւն դնել, վրէժ խնդրել, վրէժ պահանջել, վրէժ լուծել* և այլն: Օրինակ՝ Վասն *մեռելոյն* աղօթս մատուցանել (Բ Մակ., ԺԲ, 44) Տեառն (Բ Մակ., Ա, 8): Ի կալ նորա յաղօթս առ քեզ *վասն կենաց* իւրոց (Եսթ.):

4. Խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի շարքում առանձնանում են նաև այնպիսիք, որոնց պահանջած բնության խնդիրներից մեկն իրանիշ առարկայով է արտահայտված, իսկ մյուսը կարող է արտահայտված լինել իմաստային տարբեր դասեր ներկայացնող առարկաներով: Այդ բայերից են՝ *հաւ առնել, սկիզբն առնել* և այլն: Օրինակ՝ Հաւ առնելով առաջիկայից իմոց *բանից ի սիրելոյն* (հմմտ. *ի պատերազմէ-Գ.Խ.*) իմմէ (Խոր., 23):

Բ.3. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ

Գրաբարի հարադրավոր բայերի կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտության տեսանկյունից բավականին հետաքրքիր

պատկեր են ներկայացնում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաքարում կրավորական սեռի իմաստն արտահայտվում է բառային-քերականական տարբեր միջոցներով: Դրանք են՝

1. ինքնուրույն հարադրավոր բարդությունները, որոնք հիմնականում ձևավորվում են *լինիմ* չեզոք սեռի բայի հարադրումով, ինչպես՝ *հալածական լինիմ, դատապարտ լինիմ* և այլն: Այս խմբի բայերը քերականորեն հակադրվում են հիմնականում *առնել* բայով ձևավորված և ներգործական սեռի քերականական իմաստակիր հարադրավոր բայերին: Հմմտ. *ազդ լինիմ-ազդ առնել, բրածեծ լինիմ-բրածեծ առնել* և այլն: Իբրև կրավորական սեռի իմաստակիր՝ այս խմբի հարադրավոր բայերը գրաքարի բառապաշարում բացառիկ են. ի հակադրություն համադրական բոլոր և վերլուծական մյուս բայերի՝ սրանք կրավորական սեռի իմաստ են արտահայտում թե՛ դիմավոր և թե՛ անդեմ ձևերի միջոցով: Հարադրավոր այս բայերը մյուսներից առանձնանում են նաև նրանով, որ կիրառվում են միայն կրավորական կապակցությունների ու նախադասությունների մեջ:

Թեև հարադրավոր բայերի այս խումբը մեծ թիվ չի կազմում, այնուամենայնիվ գրաքարում կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտման ամենատարածված միջոցն է:

2. Կրավորական սեռի քերականական իմաստ է արտահայտվում նաև ներգործական սեռի հարադրավոր բայերի միջոցով: Վերջիններս տվյալ դեպքում ձևավորվում են բոլորովին նոր (ներգործական սեռի քերականական իմաստ արտահայտող ձևությոներից տարբեր)՝ կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող բառահարաբերական ձևվորներով, ինչպես՝ *հարցեն // հարցին, ետու // տուայ* և այլն:

3. Կրավորական սեռի քերականական իմաստ են արտահայտում նաև այն հարադրավոր բայերը, որոնց բայական բաղադրիչն արտահայտվում է կա՛մ հասարակ բայով, կա՛մ էլ այլ բայերի հասարակ դիմաթվային ձևերով: Հարկ է նշել, որ այս շարքի կրավորական սեռի արտահայտչամիջոցները չափազանց սակավաթիվ են, քանի որ գրաքարում ոչ բոլոր հասարակ բայերն ու մյուս բայերի հասարակ ժամանակաձևերն են մասնակցում

հարադրավոր բայերի կազմությամբ:

Թեև գրաբարում կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտության միջոցները ներգործականներից տարբեր են, սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրավորական սեռի բայերն արժույթի տեսանկյունից հավասարագոր են ներգործական սեռի հարադրավոր բայերին. միայն թե ներգործական սեռի հարադրավոր բայերի արժութային միավորներն այստեղ ձեռք են բերում շարահյուսական նոր գործառույթներ:

Որպես կանոն, այս շարքի բայերի հետ պարտադիր կերպով կիրառվում է ենթակայի վրա անուղղակի կերպով ներգործող առարկա, ինչպես՝ *գերի տարայց ի նոցանէ*: Հակառակ դեպքում մնանատիպ կառույցների մեջ հանդես է գալիս գործողությունն անմիջականորեն իր վրա կրող առարկա, ինչպես՝ *գերի տարայց գնոսա*:

Կրավորական սեռի բոլոր հարադրավոր բայերը ենթակաառու են: Օրինակ՝ Պոմպեի *թէատրոնն* հրձիգ եղև (Եւս.): Ի ձեր սակս *Միովն* իբրև զագարակ արօրադիր լիցի (Միք., Գ, 12): Յորոց *ինքն* նպաստ եղև (Ոսկ.): *Գողն* ի բուռն անկեալ՝ չլինիցի՞ մահապարտ (Եզնիկ, 268) և այլն:

Եթե նկատի առնենք, որ կրավորական սեռի հարադրավոր բայերի պահանջած կամ ենթադրած ենթական ներգործական սեռի հարադրավոր բայերով ձևավորված կառույցների մեջ պարտադիր կերպով կատարում է ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ [հմմտ. *Որդեկոտոր արար ըզկանայս* և *Կանայք որդեկոտոր եղեն*: *Այլ պարսիկք զիս ի խաբս այլ ոչ արկցեն* և *Այլ ես ի պարսկաց ի խաբս այլ ոչ անկայց* (Բուզ., 209) կառույցները], ապա դժվար չէ նկատել, որ կրավորական սեռի հարադրավոր բայերը ենթակաառությամբ արժութագուրկ կարող են լինել լոկ այն դեպքում, եթե դրանց քերականական հականիշները՝ ներգործական սեռի հարադրավոր բայերը, արժութագուրկ լինեն սեռի խնդրառության տեսանկյունից. մի հանգամանք, որը տեսականորեն բացառվում է:

Ինչ վերաբերում է «*Լիցի և ատելի յագգաց*» (Առակ., ԻԴ, 24): «*Ի պահեստի լինի ի մմանէ*» (Խոր., 299) տիպի կառույցներին, ապա դրանցում ենթակաների բացակայությունը զուտ ոճական հնարանք է և հիմք

չի տալիս նշելու, թե դրանց կրավորական սեռի հարադրավոր բայ-ստորոգյալները ենթակաառությանը արժույթագուրկ են, քանի որ խոսքային այլ իրավիճակներում այդ բայերի ենթականերն արտահայտության պլանում կարելի է վերականգնել:

Տեսականորեն ստորոգառու ներգործական սեռի հարադրավոր բայերի կրավորական ձևերը ևս օժտված են ստորոգառական արժույթով: Հմմտ. Հրաման ետ նմա գայսչափ գանձս *հանել բերել* (Բ Մակ., Գ, 7) և Եւ էր հրաման տուեալ նմա *սատակել* զաստուածս երկրին (Յուդ., Գ, 12): Թե՛ ներգործական և թե՛ կրավորական սեռերի հարադրավոր բայերը պահանջում են հիմնականում անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի: Ներգործական և կրավորական սեռերի ստորոգառու հարադրավոր բայերի տարբերությունն այն է, որ առաջինները ստորոգելի կարող են առնել և՛ անդեմ, և՛ բոլոր դիմավոր ձևերով կիրառվելով: Օրինակ՝ *հրաման տալ պատասխանի առնել* (Ա Մակ., ԺԲ, 18), *եռու հրաման լինել* նմա *առաջնորդ* (Գ Թագ., Ա, 35), *հրաման տացես կորուսանել* զնա (Եսթ., Գ, 9), *հրաման ետ հրովարտակ առնել* (Ա Մակ., ԺԱ, 57), *հրաման տուաք արձակել* զդոսա (Գ Մակ., Է, 5) և այլն: Մինչդեռ կրավորական սեռի հարադրավոր բայերն ստորոգառու են դառնում միայն եզակի թվի 3-րդ դիմային ձևով խոնարհված: Օրինակ՝ Քանզի *հրաման տուեալ էր...անուանել* զնա... (Եսթ., Թ, 4): Այլ կերպ ասած՝ կրավորական սեռի հարադրավոր բայերը ստորոգառու կարող են դառնալ միակազմ նախադասությունների մեջ:

Գրաբարում ստորոգառության արժույթով կարող են առանձնանալ *թոյլ տալ, յանձն առնել, հրաման տալ, անուն դնել* և այլ հարադրավոր բայերի կրավորական ձևերը: Հարկ է նշել, սակայն, որ նշված բայերը առավել հաճախ ներգործական սեռի քերականական իմաստի դեպքում են աչքի ընկնում ստորոգառական արժույթով: Այս հանգամանքն առաջին հերթին պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանի լեզվամտածողությանը: Համեմատության համար նշենք, որ Աստվածաշնչում *հրաման տալ* հարադրավոր բայն անորոշ դերբայի հետ ունի հարյուրից ավելի կիրառության դեպքեր, որոնցից միայն վերը բերված երկուսն են արտահայտում

կրավորական սեռի քերականական իմաստ:

Խնդրառության տեսանկյունից կրավորական սեռի արժութագուրկ հարադրավոր բայերը տեսականորեն միարժույթ են կամ երկարժույթ (ճիշտ այնպես, ինչպես սրանց՝ ըստ սեռի քերականական կարգի հականիշները՝ ներգործական սեռի հարադրավոր բայերը): Եվ ինչպես խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերն են թվով և գործածությամբ գերազանցում խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերին, այնպես էլ խնդրառությամբ միարժույթ կրավորականները՝ երկարժույթ կրավորականներին:

Խնդրառությամբ միարժույթ կրավորական և ներգործական սեռի հարադրավոր բայերի տարբերությունն այն է, որ եթե ներգործական սեռի հարադրավոր բայերը պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են գործողությունն անմիջականորեն կրող սեռի խնդիր, ապա կրավորական սեռի հարադրավոր բայերը պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են գործողությունն անուղղակիորեն կատարող սեռի խնդիր²⁵¹: Վերջինս շարահյուսական բնագավառում կատարում է ներգործող խնդրի գործառույթ՝ գերազանցապես արտահայտվելով բացառական հոլովով. Ձի մի ի պաշտօն / ղեռահաւատ բարբարոսացս առցի *ազգաց* (Խոր., 224): *Ի մտերմացն* Շապիոյ ղեղակուր եղեալ՝ մեռանի (Խոր., 235): Շատ է այնպիսւոյն պատուհասն ըստգիտ լինել *ի բազմաց* անտի (Ոսկ.) և այլն:

Հազվադեպ է, երբ ներգործող սեռի խնդիրը կարող է արտահայտվել նաև կապական կապակցությամբ, որտեղ սեռականով արտահայտված կապվող բառածևի հետ հանդես են գալիս *յերեսաց* կապական բառն ու *առաջի* կապը: Օրինակ՝ Ի պարտութիւն մատենցաւ գունդն Հայոց (Փալա., 125) *յերեսաց նոցա* (Բուզ., 125): Ի պարտութիւն մատենացաւ *առաջի* Մանուէլեան *զնդին* (Բուզ., 204):

Ընդ որում, հիշյալ խնդիրը շատ հաճախ գեղչվում է՝ ենթատեքստից հասկանալի, հեղինակի համար անկարևոր կամ անհայտ լինելու պատճառով (հակառակ դեպքում սովորաբար գործածվում են սրանց ներգործական տարբերակները, որտեղ գործողություն կատարողը մղվում է ա-

ռաջին պլան²⁵²): Օրինակ՝ Տունք բազումք, սակայն, յաւեր դարձցին (Ես., Ե 9): Յետ սուսերահար լինելոյ Խոսրովու (Խոր., 214): *Գողն ի բուռն անկեալ՝ չլինիցի մահապարտ* (Եզնիկ, 268): *Առ իւր արարեալսն եկեալ՝ անընկալ եղև* (Ագաթ., 178): *Բնաջինջ լինել այսօր յԻսրայելե²⁵³ տեղի միոյ* (Դատ., ԻԱ, 3): *Բրածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ սուրբ՝ կիսամահ ընկեցեալ լինէր* (Բուգ., 28): *Թուք յերեսս ընկալաւ և՛ բամբասեցաւ, և՛ դրսով եղև* (Ոսկ.): *Չկնի թոպամահ լինելոյ երանելոյն Յուսկան* (Բուգ., 28)²⁵⁴: *Հալածական լեալ դեքն՝ անկանէին ի կողմանս Մարաց* (Խոր., 317): *Հալածական եղաք²⁵⁵ և ոչ գտաք հանգիստ* (Ողբ., Ե, 5) և այլն:

Խնդրառությամբ միարժույթ բայերի դիմավոր ձևերով արտահայտված այս կարգի նախադասությունները ներգործականի փոխակերպելիս արդյունքում ստանում ենք անորոշ-դիմավոր բայական միակազմ նախադասություններ: Հմնտ. *Մեհեան կապիտովլին հրձիգ եղև ի Հոռվմ* (Ես., Բ, 272) և *Չմեհեան կապիտովլին հրձիգ արարին ի Հոռվմ*:

Ինչ վերաբերում է խնդրառությամբ երկարժույթ կրավորական սեռի հարադրավոր բայերին, ապա սրանք ևս խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի քերականական հականիշներն են: Օրինակ՝ *Իսկ անմիտք ցանկացողք թշնամանաց դատապարտք եղեն յանդիմանութեանց* (Առակ., Ա, 22) նախադասության *դատապարտ լինիմ*-ը, *դատապարտ առնել*-ի բնույթով պայմանավորված, պահանջում է մի սեռի խնդիր՝ արտահայտված բացառական հոլովով (բերված նախադասության մեջ այն բացակայում է) և մի բնության խնդիր՝ արտահայտված տրական հոլովով (*յանդիմանութեանց*):

Բովանդակության պլանում անկարևոր կամ անհայտ լինելու պատճառով սեռի խնդիրը բացակայում է նաև այս խմբի բայերով ձևավորված նախադասությունների արտահայտության պլանում: Օրինակ՝ *Ազդ եղև ուրացելոյն Վասակայ քաջութին գնդին Վարդանայ* (Եղիշէ, 80):

Կրավորական կառույցների ենթակայի և սեռի խնդրի մասին Ա.Արքահամյանն իրավացիորեն նշում է, որ «...եթե առաջինը գտնվում է ուշադրության կենտրոնում, ապա վերջինը այդ տեսակետից զիջում է նր-

րան և հաճախ էլ նրա վրա ուշադրություն չի դարձվում, հատկապես մատնացույց չի արվում, թե որն է գործողության իրական տերը»²⁵⁶ :

Նմանատիպ կառույցները ևս ներգործականի փոխակերպելիս ստացվում են անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ, ինչպես՝ *Ազդ արարին Վասակայ քաջութին գնդին Վարդանայ*:

Կրավորական սեռի հարադրավոր բայերից պարտադիր պարագաառությամբ առանձնանում են այնպիսիք, որոնք սերվել են պարագաառական արժույթով բնութագրվող ներգործական սեռի հարադրավոր բայերից: Օրինակ՝ *Որոյ ապականեալ զկոյս՝ տարագիր եղև յեկեղեցւոյ յիրմէ հօրէ* (Եզնիկ, 297) և այլն: Այլ կերպ ասած՝ տեսականորեն պարագաառական արժույթով կարող են բնութագրվել *ի քաց մերժիմ* (ի միաբանութենէ), *արտաքս ընկենում* (ի սենեկէն), *ի վայր կործանիմ* (ի կամրջաց), *ի քաց առնում* (ի դրաց) և այլ ներգործական բայեր:

Գալով Մի՝ *ընդ խաղ արկցի* առ նոսա հոգւոյն Աստուծոյ ազդումն (Գործ., Բ, 13): Ի ձեր սակս Սիովն իբրև զագարակ *արօրադիր լիցի* (Միք., Գ, 12): *Հեղձամահ եղև* յիրոց սենեկապետաց ի հրամանէ արքայի ի գաղտնիս (Խոր., 283) և այլ նախադասությունների մեջ հանդիպող տեղի, ժամանակի, հիմունքի, ձևի և այլ պարագաներին, պետք է նշել, որ սրանց առկայությունն անմիջականորեն չի բխում ընդգծված բայերի բովանդակության պլանից. դրանք խոսքի մեջ կիրառվում են ըստ տվյալ նախադասության իմաստային ամբողջությունն ապահովելու անհրաժեշտության:

Կրավորական սեռի հարադրավոր բայերով արտահայտված նախադասությունները 5-րդ դարի հայ պատմիչների նախասիրած հաղորդակցական միավորները չեն: Ասվածի մասին են վկայում գրավոր աղբյուրներում նշված տիպի կառույցների գրեթե բացառիկ կիրառությունները²⁵⁷, որոնցով երբեմն-երբեմն ընդմիջվում է ներգործական կառույցների միապադադ առատությունը, և բնագրի լեզուն հաղորդակցական միավորների կառուցվածքային տեսանկյունից դառնում է անմիօրինակ:

**ԳՐԱԲԱՐԻ ՉՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՆՐԱՆՅ ԱՐԺՈՒՅԹԸ**

Ա. ԳՐԱԲԱՐԻ ՉՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չուգաբայական հարադրությունների կապակցությամբ Մ.Աբեղյանը գրում է. «Միացած մի ընդհանուր նշանակություն են ստանում հաճախ երկու բայի հարադրությունները: Այս դեպքում էլ երկու կից բայերն առնվում են իբրև մեկ բայ, և գրության ժամանակ երկուսի մեջ ստորակետ դնելն ավելորդ է, օրինակ՝ *պոկվել ընկնել, մեռնել պրծնել,թռչել գալ, թռչել գնալ,....(թռավ եկավ, թռան գնացին), գալ հասնել, գնալ հասնել*»²⁵⁸: Չուգադրական բայերը՝ որպես բարդության առանձին ձև, առանձնացրել է Անտուան Մեյեն ևս՝ նկատելով. «Հայերենի (իմա՝ գրաբար լեզվի-Գ.Խ.) բայերի ամենաբնորոշ կիրառությունը բայական երկու դիմավոր ձևերի խմբավորումն է, որոնք արտասանվում են ընդհանուր ձևով ու գրեթե որպես մեկ բայ և որոնք կազմում են մի տեսակ փոքրիկ միասնություն»²⁵⁹:

Վերլուծական մյուս բայերից զուգադրական բայերի հիմնական տարբերությունն այն է, որ վերջիններիս բոլոր բաղադրիչները (սովորաբար երկու, հազվադեպ՝ երեք կամ չորս) բայով են արտահայտված: Օրինակ՝ Անկեալ կայր *առաջի գահոյից* (Եսթ., ԺԲ, 8): *Ելին լցին ծածկեցին* զամենայն երկիրն Հայոց (Բուզ., 14): Եւ այլս արձակեաց յԵրուսաղէմ, զի *աճապարեսցեն հասցեն առցեն* զլեառն տաճարին (Ա Մակ., ԺԶ, 20) և այլն:

Լեզվական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր բայերի հարադրումով կարելի է կազմել զուգադրական բայեր: Այս կապակցությամբ Ալ.Մարգարյանը տեղին է նկատել, թե զուգադրական բարդություններ են կազմվում «...այնպիսի բայերի հարադրությամբ, որոնց ցույց տված գործողությունները իրապես կապված են կամ կարող են կապվել իրար հետ՝ առնվելով իբրև մի ամբողջություն»²⁶⁰: Այլ կերպ

ասած՝ զուգաբայական բարդության անդամները «...պետք է իմաստային (մերձավոր՝ հոմանիշային, պատճառահետևանքային, հաջորդականության, հետևողության, մասնավորման, կոնկրետացման, գործողությամբ հարաբերակցվող ևն) առնչության մեջ լինեն»²⁶¹ :

Ուսումնասիրությունից պարզվում է նաև, որ զուգաբայ կազմող բայական բաղադրիչները (կամ բաղադրիչներից մեկը) լեզվի՝ տվյալ շրջանի բառապաշարի գործուն շերտի բայերից են: Նշված հանգամանքն ապացուցում է, որ զուգադրական բայերը գրաբար աղբյուրներին են անցել հայոց լեզվի ժողովրդախոսակցական ոլորտից (ի դեպ, այս կապն առկա է նաև ժամանակակից հայերենի գրական և ժողովրդախոսակցական ոլորտների զուգաբայերի միջև):

Հարադրավոր բայերի հետ համեմատած՝ գրաբարում զուգաբայություններն ու վերջիններիս կիրառության դեպքերը բավականին սահմանափակ են: Ասվածի պատճառը միայն այն չէ, որ զուգաբայերը հատկապես բանավոր խոսքի բառագանձին հատուկ միավորներ են, ուստի և չէին կարող լայն կիրառություն գտնել գրավոր աղբյուրներում: Զուգաբայական բարդությունների գործառական և թվային սահմանափակությունը պայմանավորված է նաև այն բանով, որ դրանք առավելապես ձևավորվում են ոճական նկատառումով, որը նշանակում է, թե երբեք էլ պարտադիր ու կայուն չէ բայական բաղադրիչների զուգադրումն իբրև մեկ բառային միավոր: Այս տեսանկյունից զուգաբայերը ներկայացնում են մի տեսակ ազատ կապակցության ձև, որտեղ, սակայն, իրար հետ կարող են զուգադրվել ոչ թե պատահական, այլ իմաստային որևէ դաշտով առնչվող միավորներ՝ պայմանավորված տվյալ խոսքային իրադրությամբ: Զուգադրական բայերին հակառակ՝ հարադրավոր բայերը կուռ կառույցներ են. վերջիններիս բաղադրիչների կիրառությունը պարտադիր է բոլոր դեպքերում՝ անկախ տվյալ խոսքային իրադրությունից:

Թեև զուգաբայությունները համարվում են մեկ բառային միավոր, այնուամենայնիվ դրանցում փաստացիորեն անվանվում են մեկից ավելի գործողություններ, որոնցից տվյալ խոսքային իրադրության համար մեկը՝

շարադասությամբ վերջադասն է կարևորը, հիմնականը, մինչդեռ նախադաս մեկ կամ երկու բաղադրիչները պարզապես ոճավորում են գործողությունը՝ մանրամասնելով այն: Օրինակ՝ «*Ապա այրն... երթեալ մտանէր ի մէջ ընդանեաց իւրոց*» (Բուգ., 180) նախադասության *երթեալ մտանէր* գուգաբայի հիմնական իմաստակիր միավորը *մտանէր*-ն է. պատահական չէ, որ *ի մէջ ընդանեաց* բայական անդամի լրացումը կառավարվել է ոչ-թե *երթեալ*, այլ *մտանէր* բաղադրիչի պահանջով: *Երթեալ* բաղադրիչի միջոցով արտահայտված գործողությունն այս դեպքում սուկ ոճավորման նպատակ է հետապնդում և տրամաբանորեն կարող էր ենթադրվել նաև չկիրառվելու դեպքում:

Խոսքից դուրս գուգադրական բայերի բաղադրիչները սովորաբար մտածվում և արտաբերվում են մեկը մյուսից անընդմեջ (*երթեալ մտանել, գալ անցանել, մոռանալով մոռանալ, թող առից* և այլն): Սակայն խոսքի մեջ գուգաբայ կազմող բաղադրիչները կարող են ընդմիջվել տվյալ խոսքի համար անհրաժեշտ այլ բառով կամ բառերով: Վերջիններն խոսքի շղթայում չեն խաթարում գուգաբայ կազմող բաղադրիչների միջոցով անվանվող գործողությունների անընդհատությունը: Փաստորեն, բայական մյուս հարադրությունների պես գուգաբայական հարադրությունների բաղադրիչները ևս միմյանցից կարող են տարանջատվել այնքան, քանի դեռ գտնվում են միևնույն շարույթի սահմաններում: Տարբեր շարույթների կազմում գտնվող բայաձևերը միմյանց հետ չեն կարող գուգաբայական հարադրություններ կազմել: Օրինակ՝ *Երթեալք* երկուքին եղբարքն *մտանէին* յեպիսկոպոսանոցն (Բուգ., 41): *Թող* ես այդր *բազմեցայց* (Բուգ., 143): Արդ, *եկ* գոյգ հասարակ այսմ նշանի *ուշ դիցուք* (Բուգ., 214): *Արիք* ի Դուռն *եկայք* (Եղիշէ, 27):

Գրաբարում գուգադրական բայերն ունեն արտահայտության պլանի բազմազանություն: Դրանց ընդհանուր կաղապարն է $S_v^{(n)}-S_v^{(n)}$: Այստեղ $S_v^{(n)}$ բաղադրիչով նկատի ունենք դիմավոր, իսկ $S_v^{(n)}$ բաղադրիչով՝ անդեմ բայաձևերը: Զուգադրվող հարադիր բարդության բաղադրիչ միավորների

միջև դրվում է – նշան: Եթե բաղադրիչ միավորն ինքն էլ մի հարադրական բարդություն է, ապա վերջինիս բաղադրիչները հարադրվում են + նշանով: Նշված կադապարն իր հերթին հանդես է գալիս մի քանի մասնակադապարներով, որոնք արտահայտվում են՝

1. *տարբեր բայերի միևնույն անդեմ կամ դիմավոր բայաձևերով*, այդ թվում՝

ա) *անդեմ բայերով*, մասնավորապես՝ անորոշ և անցյալ դերբայներով: Հմմտ. *գալ օգնել* (Դուկ., Ե, 7), *անկանել գործել* (Ել., ԼԵ, 33), *երթալ կալ* (Թիւ., ԻԲ, 26), *բառնալ բերել* (Գործ., ԻԱ, 35), *տանել ընկենուլ* (Բուգ., 75), *անկանել հասանել* (Բուգ., 48), *կալ մնալ* (Եղիշէ, 39), *փութալ հասանել* (Ագաթ., 413) և *մնացեալ յուսացեալ* (Ա Տիմ., Ե, 5), *անկեալ տարածեալ* (Բ Մակ., Ժ, 4), *կալեալ կապեալ* (Բուգ., 45), *առեալ բերեալ* (Ագաթ., 251), *կազմեալ պատրաստեալ* (Բուգ., 203), *կուտեալ դիզեալ* (Բուգ., 32) և այլն:

Հարկ է նշել, որ զուգաբայեր են կազմում նաև անցյալ դերբայների հոլովված ձևերը, ինչպես՝ Ապա ժողով լինէր նախարարացն և իշխանացն ամենայն աշխարհաժողովք բազմութեանն *եկելոց կուտելոցն* (Բուգ., 46):

բ) *դիմավոր* (թե՛ համադրական և թե՛ վերլուծական) *ժամանակաձևերով*, որոնցից վերջիններս աչքի են ընկնում հազվադեպ գործառությանը: Օրինակ՝ *դարձաւ գնաց* (Թիւ., ԻԴ, 25), *երթ ա՛ծ* (Ծննդ., ԻԷ, 13), *առէր ընկեցէ՛ք* (Յովն., Ա, 12), *հասին կալան* (Յուդ., Դ, 4), *եկն տարածեցաւ* (Բուգ., 14), *գային ժողովէին* (Եղիշէ, 78), *երթայր հասանէր* (Ագաթ., 408), *տանի տայ* (Դուկ., ԺԳ, 15), *գայ ունի* (Խոր., 103), *առնոյր տանէր* (Յուդ., ԺԲ, 9), *հասանէին գտանէին* (Բուգ., 48), *յարեաւ եկն* (Մարկ., Ժ, 50), *եկին բերին* (Ագաթ., 115), *երթիցէ հանգիցէ* (Բուգ., 108), *երթիցեն վճարիցեն* (Բուգ., 86), *ելցէ անկցէ* (Բ Թագ., ԻԲ, 20), *ածցեն կացուցեն* (Բուգ., 33), *բեր մատո՛ւ* (Ծննդ., ԻԷ, 4), *եկ կա՛ց* (Բուգ., 36), *հասեալ մածեալ էին* (Բուգ., 121), *կազմեալ պատրաստեալ էին* (Բուգ., 168), *թմբրեալ ծանրացեալ իցէ* (Ագաթ., 221), *եկեալ հասեալ է* (Ագաթ., 18), *եկեալ դողեալ էին* (Ագաթ., 88), *փայլեալ պայծառացեալ էր* (Ագաթ., 391), *երթեալ հասեալ էին* (Բուգ.,

47) և այլն:

Ի տարբերություն անդեն բայաձևերով արտահայտված գուգադրական բայերի՝ դիմավոր բայաձևերով արտահայտված գուգաբայությունները առավել հաճախակի են գործառնվում:

Իբրև կանոն, վերլուծական ժամանակաձևերով բաղադրված գուգաբայերի առաջին բաղադրիչի օժանդակ բայը զեղչվում է:

Եթե ոճական նկատառումով օժանդակ բայը հանդես է գալիս նախադաս կիրառությամբ, ապա այս դեպքում զեղչվում է երկրորդ բաղադրիչի օժանդակ բայը, ինչպես՝ *Ջոր մեղացն էր մաշեալ հնացուցեալ* (Ագաթ., 206):

Անշուշտ, ոճական հնարանք է նաև միևնույն բայի կրկնությամբ կազմված գուգադրական բայերի կիրառությունը, ինչպես՝ *գարմացեալ գարմացեալ եմ* (Ագաթ., 66): Հարկ է նշել, որ այս կարգի բաղադրությունները գրաբար աղբյուրներում չափազանց հազվադեպ են և հետապնդում են արտահայտվող գործողության գաղափարի սաստկացման նպատակ:

Ավելի հաճախ $S_v^{(0)}$ - $S_v^{(0)}$ մասնակադապարն արտահայտվում է կա՛մ երկու ներգործական, կա՛մ էլ երկու չեզոք բայերի գուգադրումով, որոնցով արտահայտվում են, համապատասխանաբար, չեցոք և ներգործական իմաստներ: Հարկ եղած դեպքում ներգործական սեռի գուգաբայական հարադրավոր բայերը դառնում են կրավորական սեռի քերականական իմաստի դրսևորման միջոց. այս դեպքում տվյալ գուգաբայի երկու բաղադրիչներն էլ հանդես են գալիս կրավորաձև խոնարհված: Վերջիններս գրավոր աղբյուրներում հազվադեպ են կիրառվում: Օրինակ՝ *լուծալ լքալ* (Ա Մակ., Թ, 8), *քակեցան լուծան* (Բուգ., 42), *կազմեցան պատրաստեցան* (Բուգ., 48), *կազմեցան յօրինեցան* (Բուգ., 56), *ժողովեցան կազմեցան* (Բուգ., 46), *պրկեալ կապեալ* (Ագաթ., 39) և այլն:

Նշված մասնակադապարով արտահայտված գուգադրական բայերի բաղադրիչների շարադասությունը կախված է այն հանգամանքից, թե այդ բաղադրիչներով արտահայտված գործողություններից ո՛ր մեկն է տրամաբանորեն հաջորդելու մյուսին, տվյալ խոսքային իրադրության համար ո՛ր մեկն

է կարևոր: Այս տեսանկյունից պատահական չէ, որ հաճախ միևնույն բայով արտահայտված բաղադրիչը մի դեպքում կիրառվում է նախադաս, մեկ այլ դեպքում՝ վերջադաս: Հմմտ. *առին* գնացին (Բուզ., 38) և հասցեն *անցեն* (Ա Մակ., ԺԶ, 30), *հասին* կուտեցան (Բուզ., 23) և եկին *հասին* (Բուզ., 86), *ել* գնաց (Եղիշէ, 123) և եկն *ել* (Եղիշէ, 137), *կացոյց կանգնեաց* (Ա Մակ., ԺԱ, 27) և *կանգնեաց կացոյց* (Եզեկ., Բ, 2), *բերէին* տային (Բուզ., 51) և եկին *բերին* (Բուզ., 207):

Նշեցինք, որ գրաբարում զուգադրական բայեր հազվադեպ կարող են կազմվել նաև երեք կամ չորս բայերի հարադրումով²⁶²: Դրանք հիմնականում արտահայտվում են $S_v^{(n)}-S_v^{(n)}(-S_v^{(n)}-S_v^{(n)})$ մասնակադապարով, որտեղ բոլոր բաղադրիչներն արտահայտվում են միևնույն անդեմ կամ դիմավոր ձևով: Օրինակ՝ *եկին հասին պատեցին* (Ա Մակ., Ե, 44), *դիմեաց խաղաց գնաց* (Ա Մակ., Ա, 18), *լուծաւ լքաւ անկաւ* (Ա Մակ., Թ, 6), *խաղայր գնայր երթայր իջանէր* (Բուզ., 15), *նլին լցին ծածկեցին* (Բուզ., 14), *հասանէին հարկանէին սատակէին* (Բուզ., 15), *յարիցէ գնացէ երթիցէ յանդիման լիցի* (Բուզ., 139) և այլն: Բերված և մնանատիպ զուգաբայերի բովանդակության պլանում գործողությունների հերթագայության աշխուժությունն ավելի քան ակնհայտ է: Մեր կողմից, սակայն, զուգաբայեր են դիտվում ոչ բոլոր կառույցների երեք և ավելի դիմավոր բայերը, մանավանդ որ գրավոր աղբյուրների մեջ դրանց բաղադրիչները՝ որպես առանձին նախադասությունների ստորոգյալներ, հաճախ վկայված են նաև տրոհված տարբերակով: Օրինակ՝ *լուծան, լքան, ընդարմացան* (Բ Մակ., Գ, 24) և այլն:

Զուգադրական բայերով արտահայտված գործողությունների դիմամիզմն առավել ցայտուն է դրսևորվում հատկապես այն դեպքում, եթե բարդության բաղադրիչներից մեկն արտահայտված է հարադրավոր բայով, ինչպես՝ *երթ խոյս տուր* (Ա Թագ., ԺԵ, 6), *խթեաց ազդ արար* (Գ Մակ., Ե, 8), *ելանէր տայր պատերազմ* (Բուզ., 23) և այլն:

Ենթակային վերագրվող հատկանիշի դիմամիզմն ակնհայտ է հատկապես այն կառույցներում, որոնցում կիրառվում են բազմաբաղադրիչ զուգադրական բայեր: Օրինակ՝ *խաղայր գնայր երթայր իջանէր* ի դաշտն

Այրարատեան գաւառին (Բուգ., 15): *Խաղաց եկն էջ* յաջմէ աթոռոյ անտի (Բուգ., 68) և այլն:

2. Հրամայական եղանակի բայաձևով և որևէ դիմավոր բայով, որտեղ վերջին բաղադրիչի հրամայական եղանակի բայաձև լինելը պարտադիր չէ²⁶³: Օրինակ՝ *Արի էջ* ի Կելիա (Ա Թագ., ԻԳ, 4): *Թող հանից* ըզշիղդ յականէ (Ղուկ., Զ, 42): *Եկ հաւանեա՛ց* բանից աչագեղոյ դստերս Ալանաց (Խոր., 178): *Եկայք արասցուք* մարդ (Ագաթ., 144) և այլն:

Ինչպես զուգադրական բայերի բոլոր տեսակները, այս խմբի զուգաբայերը նույնպես գրական լեզվին են անցել ժողովրդախոսակցական շերտից²⁶⁴ և պատումին հաղորդում են կենդանի խոսքին հատուկ երանգ: Ասվածն ակնառու է հատկապես այն դեպքում, եթե հրամայական եղանակի բայաձևի հետ կիրառվողն ինքն էլ մի զուգադրական կամ հարադրավոր բայ է: Օրինակ՝ *Եկ տաց խրատ* (Գ Թագ., Ա, 12): *Արիք կամք յաղօթս* (Բուգ., 226): Արդ *եկ* գոյգ հասարակ այսմ նշանի *ուշ դիցուք* (Բուգ., 214): *Եկայք ծայն բարձցուք* (Ա Մակ., Թ, 46) և այլն:

Նշված մասնակադապարով զուգադրական բայերի արտահայտության պլանում հրամայական եղանակի բայաձևը պարտադիր կերպով գրավում է նախադաս դիրք և հանդես է գալիս ոչ թե իր բուն բառային ու քերականական իմաստներով, այլ սոսկ եղանակավորում է իրեն հաջորդող բաղադրիչով արտահայտված գործողությունը: Հմմտ. *Թո՛ղ մեզ այսօր և վաղիւն պատասխանի արասցուք քեզ* (Բուգ., 141) և *Զփառանձեմ՝ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան* (Բուգ., 103) նախադասությունները, որոնցից առաջինում *թո՛ղ* բայաձևն արտահայտվել է իր բառային և քերականական բուն իմաստներով²⁶⁵, իսկ երկրորդում ընդամենը եղանակավորում է բուն գործողության կատարումը:

Որոշ զուգադրական բայեր խոսքի մեջ կարող են ընդմիջվել տվյալ խոսքի բաղադրիչ այլ անդամներով: Օրինակ՝ *Արիք* ի Դուռն *եկա՛յք* (Եղիշէ, 27): *Թող* ես այդր *բազմեցայց* (Բուգ., 143) և այլն:

Հարկ է նկատել, որ այս մասնակադապարի առաջին բաղադրիչի գործառույթով սովորաբար հանդես են գալիս գրաբարի ակտիվ բառա-

պաշարի մի քանի բայերի եզակի և հոգնակի թվերի բուն կամ հորդորական հրամայական ժամանակաձևերը: Այդ բայերից են՝ *ածել*, *առնուլ բերել*, *գալ*, *երթալ*, *թողուլ*, *յառնել* և այլն: Ընդ որում, նշված բայերի հրամայականների և դրանց հաջորդող բայական բաղադրիչների դիմային և թվային համաձայնությունը պատահական է և ոչ թե պարտադիր: Այնպես որ, այսպիսի զուգադրական բայեր կարող են կազմվել ոչ միայն միևնույն դիմաթվային ձևեր ունեցող բայաձևերի հարադրումով, ինչպես՝ *արիք գնասցուք* (Մարկ., ԺԴ, 42), *եկայք ծածկեսցուք* (Դատ., Թ, 15), *երթայք դարձարուք* (Դ Թագ., Ա, 6), *առ արա՛* (Բուգ., 141), *եկ թագաւորեա՛* (Դատ., Թ, 10), *արի ե՛կ* (Փարպ., 163), *արի ե՛րթ* (Դ Թագ., Ա, 3), *առ գնա՛* (Յայտ., Գ, 18) և այլն, այլ նաև միևնույն կամ տարբեր թվային և տարբեր դիմային ձևվեր ունեցող բայաձևերի հարադրումով, ինչպես *թող գրեմ* (Եղիշէ, 59), *թող անցցուք* (Դատ., ԺԲ, 5), *թող անիծանէ* (Բ Թագ., ԺԶ, 10), *արիք կամք* (Բուգ., 226), *արի գնասցուք* (Բուգ., 87), *եկ տեսցուք* (Բուգ., 139), *եկայք ամփոփեսցուք* (Ագաթ., 373), *եկ երթիցուք* (Ա Թագ., Թ, 10), *եկայք փութասցուք* (Փարպ., 154), *եկ տարայց* (Թիւ., ԻԳ, 27), *արիք երթիցուք* (Մատթ., ԻԶ, 46), *եկայք դիտեսցուք* (Դ Թագ., Է, 4):

3. *Անդեմ բայով և որևէ այլ բայի դիմափոր ձևով*, որտեղ անդեմ բային զուգադրվում է վերջինիս հետ տվյալ խոսքային իրադրության մեջ իմաստով առնչվող (տրամաբանորեն հաջորդող, հոմանիշ կամ համանիշ) դիմափոր բայաձև²⁶⁶: Նշված խմբի զուգաբայական հարադրություններն արտահայտվում են՝

3.1. «*անցյալ դերբայ-դիմափոր բայաձև*» մասնակադապարով: Օրինակ՝ *դիմեալ երթայք* (Բ Օրեն., Ի, 3), *առեալ ածէ* (Մատթ., Դ, 5), *անկեալ թաւալէին* (Ա Մակ., Թ, 17), *բարձեալ տանէին* (Սաղմ., ՃԻԵ, 6)²⁶⁷, *յարուցեալ գան* (Եղիշէ, 110), *խաղացեալ գայ* (Փարպ., 128), *ընդգրկեալ բերէին* (Ա-գաթ., 317), *պնդեալ յամառէին* (Բուգ., 74), *յաղթեալ վանէր* (Փարպ., 153) և այլն:

Այս մասնակադապարի վերջին բաղադրիչը չի կարող արտահայտվել անցյալ դերբայով բաղադրված վերլուծական ժամանակաձևով, քանի որ այդ

դեպքում արդյունքում ձևավորվում է ոչ թե $S_v-S_v^{(0)}$, այլ $S_v^{(0)}-S_v^{(0)}$ մասնակադապար, որի առաջին բաղադրիչի օժանդակ բայը հասկանալի լինելու պատճառով զեղչված է: Այսպես՝ *դարձեալ եկեալ եմ* (Բուգ., 87), *եկեալ հասեալ եմ* (Ա Մակ., Գ, 4), *անկեալ կործանեալ էր* (Ա Մակ., Թ, 1) զուգադրական բայերի առաջին բաղադրիչներն արտահայտված են ոչ թե անցյալ դերբայներով, այլ վաղակատար–հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևերով, որոնց օժանդակ բայերը զեղչված են:

Զուգաբայեր չեն նաև անցյալ դերբայի և էական բայերի (*եմ, լինիմ, գոմ*) ու դրանց փոփոխականների (*գտանել, դնել, կամ* և այլն) հարադրումով ձևավորված կապակցությունները, որոնք, բացառությամբ *եմ* բայի օժանդակությամբ ձևավորվածների, շարահյուսական մակարդակում դիտվում են բաղադրյալ ստորոգյալներ. *յուսացեալ եմ* (Ագաթ., 310), *անկեալ կայ* (Դատ., Գ, 25), *յեցեալ լիցի* (Սիր., ԺԵ, 4), *քառեալ լինիմ* (Յեսու, Բ, 17), *մոռացեալ լինիմ* (Սաղմ., ԴԻԵ, 6)²⁶⁸, *ծանուցեալ լինիմ* (Մատթ., Ժ, 26), *կայ հրաժարեալ* (Դուկ., ԺԴ, 18), *կայ անկեալ մեռեալ* (Դատ., Գ, 25), *ծաղկեալ իցէ* (Երգ., Է, 14), *չեմ լեալ* (Բուգ., 169), *դարձեալ իցեն* (Բուգ., 93), *անկեալ դնէր* (Բուգ., 68), *անկեալ գտանիմ* (Բ Մակ., ԺԵ, 28)²⁶⁹ և այլն:

Բնականաբար, զուգադրական բայեր չեն նաև անցյալ դերբայի և *եմ* բայի *է, էր, իցէ* միադիմի ձևերի կապակցությամբ արտահայտված ստորոգյալները, որոնց հետ սովորաբար հանդես են գալիս սեռական հոլովաձևով արտահայտվող փոխակերպված ենթականեր. Չոր *հանեալ էր* ի նոցանէ Տիգրանայ (Խոր., 169): Չոր ինչ *գտեալ էր* Երուանդայ (Խոր., 171): *Քո* իսկ *է ծնեալ* զմեզ (Ագաթ., 172): Համակ գերկիրս Հայոց *դոցա է կերեալ* (Բուգ., 199): Իբրև թէ *իւր չիցէ գործեալ* (Բուգ., 184) և այլն:

Նշված մասնակադապարը գրաբարում գործածվում է ոչ միայն չեզոք և ներգործական, այլ նաև կրավորական կառույցներ ձևավորելիս: Առաջին երկուսի մեջ չեզոք կամ ներգործական սեռի անցյալ դերբայի հետ զուգադրվում են, համապատասխանաբար, չեզոք կամ ներգործական սեռի բայերի դիմավոր ձևեր: Հմմտ. Սակայն ևս առաւել ստիպով եկեալ *հասանէիմ* գունդն Պարսից ի գաւառն Արտազ (Փարս., 69): Իսկ սոցա գիտա-

ցեալ՝ ձգեալ *հանիծ* գնա ի վեր (Ագաթ., 116) և այլն: Բերված նախադասութ-
յունների մեջ անցյալ դերբայը և դիմավոր բայաձևն արտահայտում են
միևնույն սեռի քերականական իմաստ, որը, սակայն, պարտադիր պայման
չէ: Բազմաթիվ դեպքերում չեզոք սեռի անցյալ դերբայների հետ զուգադր-
վում են ներգործական սեռի դիմավոր բայաձևեր՝ արդյունքում ձևավորելով
ներգործական սեռի զուգաբայեր [*Երբեալ առին* զջուրն (Ագաթ., 273)] և
ընդհակառակը [*Չմին ի կողմանս Յունաց առեալ փախչէին* (Ագաթ., 24)]՝
ձևավորելով, այսպես կոչված, ոչ մա-քուր՝ խառը տիպի համադրություններ:

Ինչ վերաբերում է կրավորական կառույցներին, ապա դրանցում ե-
թե զուգաբայերի բաղադրիչներից մեկը (սովորաբար առաջինը) արտա-
հայտված է անցյալ դերբայով, ապա կրավորաձև է խոնարհվում միայն
դիմավոր բայով արտահայտված բաղադրիչը (անցյալ դերբայով արտա-
հայտված բաղադրիչը, հասարակ լինելով, տվյալ կիրառության մեջ դեպքում
արտահայտում է կրավորական սեռի քերականական իմաստ): Օրինակ՝
Պատմեալ հռչակեցաւ բան երևմանս այսորիկ (Փարպ., 70): Դադարեալ
Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտին, որ *անուանեալ կոչի* յանուն
Արայի Այրարատ (Խոր., 50): Եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա
մինչև ի լեառն, որ *անուանեալ կոչի* Առեւծ (Բուզ., 62): Ձի մի գերեալ *քան-
դեսցի* աշխարիս (Բուզ., 23): Ձի այսպէս յայտնեալ *բարբառեցաւ* (Բուզ.,
37) և այլն: Փաստորեն, կրավորական կառույցների մեջ սեռի քերականա-
կան իմաստ է արտահայտում ոչ միայն դիմավոր բայաձևը, այլ նաև անցյալ
դերբայը:

Այս մասնակադապարի մեջ անցյալ դերբայը մշտապես նախորդում
է դիմավոր բայով արտահայտված բաղադրիչին՝ վերջինիս հետ կազմելով կա՛մ
հոմանշային (հազվադեպ՝ համանշային) զույգ, կա՛մ մեկը մյուսին
տրամաբանորեն հաջորդող գործողությունների կիպ շղթա. *յադրեալ վաներ*
(Փարպ., 153), *պնդեալ յամառէին* (Բուզ., 74), *բաժանեալ պատառեցաւ*
(Փարպ., 1) և այլն: Ասվածն ինքնին նշանակում է, որ դիմավոր բայա-
ձևերին նախորդող ոչ բոլոր անցյալ դերբայներն են տվյալ դիմավոր
բայաձևերի հետ զուգաբայեր կազմում: Այսպես՝ «Եւ ի մեռանելն Սա-

նատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցուցին զնա՝ առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր» (Խոր., 162) նախադասութեան ընդգծված բայաձևերը զուգադրական բայ չեն կազմել, քանի որ դրանցից ամեն մեկը արտասանական շղթայի մեջ հանդես է գալիս որպէս շարահյուսական ինքնուրույն միավոր՝ պահպանելով իր բառային շեշտը:

«Անցյալ դերբայ-դիմավոր բայաձև» մասնակադապարով զուգաբայերի առաջին բաղադրիչը սովորաբար ընթացք անվանող բայերից (*անցանել, գալ, գնալ, դառնալ, դիմել, երթալ* և այլն) մեկի անցյալ դերբայական ձևն է: Այս շարքը լրացնում են նաև գրաբարի բառապաշարի գործուն շերտի որոշ բայերի (*առնուլ, բառնալ, բերել, տանիմ* և այլն) անցյալ դերբայները: Օրինակ՝ *եկեալ երկրպագեաց* (Մատթ., Բ, 8), *անցեալ եկին* (Մատթ., ԺԴ, 39), *գնացեալ հասաք* (Գործ., ԻԸ, 13), *պնդեալ գայր* (Դատ., Դ, 22), *գնացեալ երթաս* (Ծննդ., ԼԱ, 30), *դիմեալ գայ* (Ես., ԻԷ, 11), *բերեալ կարդաց* (Բ Եզր., Դ, 23), *առեալ ածէին* (Ա Մակ., Թ, 37), *վարեալ բերէր* (Բ Մակ., Դ, 25), *բարձեալ ունէին* (Յեսու, Դ, 18), *եկեալ հասանիցէ* (Բուզ., 96), *առեալ գնացին* (Փարպ., 153), *բարձեալ բերէր* (Ագաթ., 422), *առեալ տապալէին* (Եղիշէ, 69) և այլն:

«Անցյալ դերբայ-դիմավոր բայաձև» մասնակադապարի զուգաբայերի անցյալ դերբայով արտահայտված բաղադրիչը մի շարք դեպքերում թվի քերականական կարգով համաձայնում է հոգնակի թվով արտահայտված ենթակայի հետ: Օրինակ՝ Որք *երթեալք յանդիման եղեն* թագաւորին Թէոդոսի (Փարպ., 73-74): Իսկ *պինդք* և մարտիրոսութեան *տենչողքն* ևս առաւել *պնդեալք զօրանային* (Փարպ., 68): Եւ այնուհետև ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ *արժակեալք շրջէին պատկերագործք նմանահանք ճշգրտագործք* (Ագաթ., 72) և այլն: Սակայն համաձայնութեան այս օրենքը ոչ բոլոր հեղինակների կողմից և ոչ միշտ է կիրառվում: Բազմաթիվ դեպքերում հոգնակի ենթակայի հետ հանդես եկող անցյալ դերբայները հոգնակերտ մասնիկ չունեն: Օրինակ՝ *ճեպեալ ընթանային զօրքն* Հայոց զհետ երանելոյն Վարդանայ սպարապետին Հայոց (Փարպ., 68): *Եկեալ հասեալ էին* ի թիկունս օգնականութեան *նիզակակիցք* գործոյն պատերազ-

մի (Ագաթ., 17): Եւ ինքեանք *զմացեալք երթային* (Բուգ., 147): Որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց (Բուգ., 41) և այլն:

Նկատելի է, որ անցյալ դերբայի գործառնությունը հաճախակի կիրառվող բայերը հարկ եղած դեպքում կիրառվում են նաև դիմավոր բաղադրիչի գործառնությամբ: Հմմտ. *երթեալ* կատարեր (Բուգ., 7) և յարուցեալ *երթիցէ* (Բուգ., 82), *եկեալ հասին* (Բ Մակ., Գ, 19) և *հասեալ եկին* (Թիւ., ԺԳ, 27) և այլն:

Չուգադրական բայերի այս խմբի մեջ կան նաև այնպիսիք, որոնց կա՛մ առաջին բաղադրիչն է մի առանձին բարդություն, կա՛մ երկրորդը, կա՛մ էլ երկու բաղադրիչները միաժամանակ: Օրինակ՝ *զհետ մտեալ երթայր* (Դատ., Դ, 16), *ելեալ տացես պատերազմ* (Ել., ԺԷ, 9), *չու արարեալ զնայ* (Խոր., 33), *երթեալ յանդիման լինէր* (Բուգ., 13), *թողեալ ի բաց զնասցէ* (Խոր., 171), *գտեղի առեալ կային* (Եղիշէ, 118), *չու արարեալ զնաց* (Բուգ., 48), *ոչ ընդդէմ մարթացեալ դառնալ* (Ագաթ., 6)²⁷⁰, *գերի առեալ տանէին* (Եղիշէ, 128), *սկիզբն արարեալ պատմեաց* (Փարպ., 1), *յուղի անկեալ երթային* (Բուգ., 82), *չու արարեալ յուղի անկանէին* (Ագաթ., 21) և այլն:

Դէմ դնել, ճեմ(ս) առնուլ, չու առնել հարադրավոր բայերը գրեթե միշտ հանդես են գալիս որպէս չուգաբայական հարադրությունների առաջին բաղադրիչ, որոնց սովորաբար հաջորդում է ընթացք, որևէ ուղղությամբ շարժում անվանող բայ: Օրինակ՝ *Դէմ եղեալ զնացին* առ Շապուհ (Խոր., 286)²⁷¹: *Դէմ եղեալ զնաց* փախստեայ ի ծերոյ երկիւղէ յերկիրն Յունաց (Փարպ., 83): *Դէմ եղեալ զնաց* փախստեայ (Բուգ., 83): Ի մեծ սրահի անդ *ճեմ առեալ շրջէր* (Գ Մակ., Ե, 12): Ընդ հրապարակս *ճեմ առեալ շողայցեմ* (Ոսկ.): Կամեցեալ *չու առնել զնալ* ի դուռնն և ինքն՝ նենգաւոր իշխանն Սիւնեաց (Փարպ., 85): *Դէմ եղին մտանել* յերկիրս (Երեմ., ԽԳ, 12) և այլն:

Նշված մասնակադապարով չուգադրական բայերին բնորոշ է նաև այն, որ դրանց բաղադրիչները խոսքի շղթայում սովորաբար չեն ընդմիջվում այլ միավորներով: Հակառակ դեպքում, չիաշված բացառիկ կիրառություններ, դրանք կարող են դադարել չուգաբայեր լինելուց:

3.2. «Անորոշ դերբայ-դիմավոր բայաձև» մասնակադապարով: Օրինակ՝ Եւ մեծն պաշտօն յամս յաւուրս սորա *աճել բազմացաւ* (Բուգ., 6):

Ըստ բովանդակության պլանի՝ այս մասնակադապարով արտահայտվող գուգաբայերը համանիշ են հատկապես անցյալ դերբայով ու դիմավոր բայաձևով և անորոշ դերբայի գործիականով ու դիմավոր բայաձևով հարադրված գուգաբայական հարադրություններին: Հմնտ. *աճել բազմացաւ, աճեալ բազմացաւ* և *աճելով բազմացաւ*:

Անորոշ դերբայով և դիմավոր բայաձևով հարադրված գուգաբայությունները գրաբարի գրավոր աղբյուրներում հանդիպում են միայն հայ պատմիչների (ընդ որում՝ ոչ բոլորի) գործերում: Կարծում ենք, որ նշված տիպի գուգաբայական հարադրությունների մեջ գործ ունենք բացարձակ անորոշ դերբայ քերականական իրողության հետ:

4. *Միևնույն բայի թեք և/կամ ուղիղ ձևերով*, որտեղ գուգադրվող բայական բաղադրիչներն արտահայտվում են *միևնույն բայի՝*

4.1. «Անորոշ դերբայ-դիմավոր բայաձև» կապակցությամբ, ինչպես՝ *ունել ունի* (Եբր., Բ, 1), *լինել լինիցին* (ՆՀԲ), *գրել գրեցաւ* (Բուգ., 5) և այլն, որոնք գրաբարի գրավոր աղբյուրներում հազվադեպ կիրառություն ունեն:

Հատկանշական է, որ այս ենթախմբի գուգադրական բայերից մեկի երկյուրդ բաղադրիչն ինքնին հարադրավոր բարդություն է՝ *ըմպել ըմպէ գան* (Եղիշէ, 36): *Ունել ունէր* պարծանս, այլ ոչ առ Աստուած (Հռովմ., Դ, 2) և այլն:

Նշված կարգի բարդությունների մեջ անորոշ դերբայը կիրառվում է նախադաս՝ դիմավոր բաղադրիչով արտահայտված գործողությանը հաղորդելով սաստկական իմաստ²⁷²: Օրինակ՝ *Ասել ասեն* և ձայնս իմն ի գերեզմանաց անտի հնչեալ առ ոմանս (Ոսկ., Բար., 333):

Այս մասնակադապարով արտահայտված կապակցությունների մեջ *տալ* բայի անդեմ և դիմավոր ձևերով գուգադրական բարդություններ չեն ձևավորվում (հակառակ դեպքում արդյունքում ունենում ենք պատճառական հարադրավոր բայեր): Հմնտ. *Տալ ետու* կնիք և տանն Ստեփանեաց (Ա Կոր., Ա, 16) և Միւն կճեայ *կանգել տայր* Եդեսիայ ի վերնատունս ապարանից իւրոց (Խոր., 159):

4.2. «Անորոշ դերբայի գործիական հոլովածն-դիմավոր (կամ անդեմ) բայածն» կապակցությամբ. *դառնալով դառնայցեն* (Յեսու., ԻԴ, 12), *երթալով երթայր* (Ա Թագ., Գ, 21), *յուզելով յուզեաց* (Յովել, Ա, 7), *կացուցանելով կացուսցեն* (Բ Օրեն., ԺԷ, 15), *կելով կեցցես* (Դ Թագ., Ը, 10) և այլն:

Անորոշ դերբայի գործիականով արտահայտված բաղադրիչը շարահատությամբ սովորաբար գրավում է նախադաս դիրք և միայն բացառիկ դեպքերում է վերջադաս կիրառվում: Հմմտ. *լալով ելաց* (Ես., Լ, 19), *ելանելով ելցուք* (Թիւ., ԺԳ, 31) և *ելաց լալով* (Ա Թագ., Ա, 10), *իջցէ իջանելով* (Ա Թագ., ԻԳ, 20) և այլն:

Ինչ վերաբերում է նշված մասնակադապարի դիմավոր բաղադրիչին, ապա այն կարող է արտահայտվել բայի թե՛ համադրական, թե՛ վերլուծական ժամանակածևով. *ուտելով կերեալ էր* (Ա Թագ., ԺԴ, 30), *ծածկելով ծածկեալ իցէ* (ՆՀԲ), *կելով կեցցէ* (ՆՀԲ), *երկնչելով երկեալ* (Բուգ., 32), իսկ հազվադեպ՝ նաև անդեմ բայածներով, ինչպես՝ *իմանալով իմանալ* (Առակ., ԻԳ, 1) և այլն:

Այս մասնակադապարով արտահայտվող գուգադրական բայերի երկրորդ բաղադրիչն ինքը կարող է մի հարադրավոր բայ լինել. *տալով տացես փոխ* (Բ Օրեն., ԺԷ, 8), *տալով տայր պարգես* (Մննդ., ԽԷ, 22):

Նկատելի է, որ անորոշ դերբայի գործիական հոլովածով արտահայտված բաղադրիչները նույն գործողությունն անվանող հաջորդ բաղադրիչների հետ միասին դառնում են գործողության կատարման շարունակականության, սաստկականության գաղափարի ոճական արտահայտչամիջոց²⁷³: Այդ բանին, անշուշտ, նպաստում է այն հանգամանքը, որ բարդության երկու բաղադրիչներն էլ միևնույն բայի անդեմ ու դիմավոր ձևերն են: Օրինակ՝ Եթե տացէ այր զամենայն զկեանս իւր ընդ սիրոյ, *անգոսնելով անգոսնեսցեն* զնա (Երգ., Ը, 7): *Երթալով երթային* և լային, ոյք բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց (Սաղմ., ՃԻԵ, 6): *Տալով տացէ* Տեր ի ձեռս արքայի (Գ Թագ., ԻԲ, 6): Եւ մի մոռասցին զգործս Աստուծոյ, և զպատուիրանս նորա *խնդրելով խնդրեսցեն* (Ագաթ., 471): *Երկնչելով*

երկեալ թագաւորն Պարսից Շապուհ ի միտս իւր (Բուգ., 106) և այլն:

Ջուգաղրական բայերի այս ենթախմբի հետ բովանդակության պլանում առնչվում են այն բայական բառակապակցությունները, որոնց ստորադաս անդամն արտահայտվում է՝

ա) *գերադաս անդամ բային համարմատ գոյականի գործիական հոլովածնով*, ինչպես՝ *Եւ տաց հուր յԵգիպտոս, և խոռվութեամբ խոռվեսցի Սային* (Եզեկ., 1, 16):

բ) «*Ի(յ) նախդիր-(+)գերադաս անդամ բային համարմատ գոյականի հայցական հոլովածն*» կապական կապակցությամբ, ինչպես՝ *Եւ տապացան մարդիկ ի տապ մեծ* (Յայտ., ԺԶ, 9):

գ) «*Ձ նախդիր+գերադաս անդամ բային համարմատ գոյականի հայցական հոլովածն*» կապական կապակցությամբ. *Ամաչեցէ՞ք զամօք մեծ, ոյք յուսացեալդ էք ի դրօշեալս* (Ես., ԽԲ, 17): Պետք է նկատել, որ այս կապակցության մեջ *Ձ* նախդիրը առկայացման ցուցիչի դեր չի կատարում. չեզոք սեռի բայերի պահանջով հանդես եկած հայցական հոլովածնին այն հաղորդում է գործիական հոլովածնին հատուկ քերականական իմաստ:

4.3. «*Անցյալ դերբայ-դիմավոր բայածն*» կապակցությամբ, որտեղ անցյալ դերբայը պարտադիր կերպով գրավում է նախադաս դիրք՝ կատարելով նույն գործառույթը, որը կատարում է անորոշ դերբայի գործիական հոլովածնով արտահայտված բաղադրիչը նախորդ ենթախմբի բարդությունների մեջ: Օրինակ՝ *դարձեալ դարձայ* (Գաղատ., Ա, 17)²⁷⁴, *երթեալ երթիցէ* (Բ Մակ., Դ, 19) և այլն: Նկատենք, որ միևնույն բայի «*անցյալ դերբայ-դիմավոր բայածն*» և «*անորոշ դերբայի գործիական հոլովածն-դիմավոր բայածն*» մասնակադապարներով արտահայտվող զուգադրական բայերը բառային համանիշներ են (հմմտ. *երթեալ երթիցէ* և *երթալով երթիցէ*): Դրանցից առաջինը գրաբար աղբյուրներում չափազանց սակավադեպ է և հանդիպում է գերազանցապես թարգմանական գրականության մեջ:

4.4. «*Անդեմ (կամ դիմավոր) բայածն-նախդրավոր անդեմ (կամ դիմավոր) բայածն*» կապակցությամբ, որտեղ երկրորդ բաղադրիչի միջոցով

առաջին բաղադրիչի արտահայտած գործողությանը հաղորդվում է շարունակական, սաստկական երանգ: Օրինակ՝ *Անցէ՛ք զանցէ՛ք ապաքէն* (Գ Մակ., 2, 17): *Անցոյց զանցոյց զամենեքումքք* (Եւս.) և այլն:

Նկատելի է, որ այս ենթախմբի զուգադրական բայերը ևս հազվադեպ են կիրառվում՝ հետապնդելով խոսքի ոճավորման նպատակ:

Լեզվական փաստերը վկայում են, որ թե՛ S_v - S_v , թե՛ $S_v^{(0)}$ - $S_v^{(0)}$ մասնակաղապարներով արտահայտված զուգադրական բայերի բաղադրիչներից գոնե մեկը սովորաբար գրաբարի բառագանձի գործուն շերտի բայերից է, որն անվանում է ընթացք, որևէ ուղղությամբ շարժում և այլն²⁷⁵: Այդ բայերն են՝ *գալ*, *գնալ*, *դառնալ*, *դիմել*, *ելանել*, *երթալ*, *ընթանալ* և այլն: Օրինակ՝ *դառնալ* առնուլ (Բ Օրեն., ԻԴ, 4), *գալ* հասանել (Ծննդ., ԻԱ, 13), *երթալ* կռուել (Ա Թագ., ԺԷ, 33), *դարձիք* ե՛կ (Փարպ., 134), *եկն* թափեցաւ (Բուզ., 21), *եկն* էանց (Բուզ., 14), *չոզան* յաղթեցին (Բուզ., 19), *գնացին* տարան (Բուզ., 51), *երթայց* դարձայց (Ագաթ., 217), *ելանէր* նստէր (Բուզ., 162), *դարձաւ* կալաւ (Բուզ., 19), *խաղայր* գնայր (Եղիշէ, 141), *գայր* մտանէր (Փարպ., 176), *գային* անկանէին (Փարպ., 167), *արշաւել* աւերել (Բուզ., 18), *փախտաւ* անկաւ (Բուզ., 18), *գնային* շրջէին (Ագաթ., 426), *եկ հաւանեա՛ց* (Խոր., 178), *թող բազմեցայց* (Բուզ., 143) և այլն:

Զուգաբայական հարադրությունների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք հիմնականում քերականորեն համասեռ բայերի զուգադրումներ են՝ կազմված երկու (հազվադեպ՝ երեք կամ չորս) ներգործական, կամ չեզոք սեռի բայերով: Հմնտ. Եւ *ածեալ կացուցին* զնոսա առաջի թագաւորին (Փարպ., 82): Ապա յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զօրաց *ածել կուտել* զպառականն (Ագաթ., 113): ԶԱրիստաբուղոս կապեալ՝ *առեալ* ընդ իւր *տանէր* (Եւս., Բ, 250) և Կամեցեալ *չու առնել գնալ* ի դուռնն և ինքն նենգաւոր իշխանն Սիւնեաց (Փարպ., 75): Եւ թէ զիարդ *անկան փշրեցան* ունայնութեան պաշտամունքն (Ագաթ., 13): Յայնմ ժամանակի *հանդերձեալ կազմեցաւ* Պարթևն եղբարքքն իւրով հանդերձ (Ագաթ., 20) և այլն:

Զուգաբայական հարադրությունների բաղադրիչների քերականական սեռը տարբեր է այն դեպքում, եթե դրանց միջոցով արտահայտվում է

ոչ թե համանիշ կամ հոմանիշ, այլ մեկը մյուսին հաջորդող, մեկից մյուսը հետևող գործողություններ: Օրինակ՝ Առաքել Երանելի սպարապետն Հայոց Վարդան սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անունն էր Առանձար, իբրև երեք հարիւր հեծելով՝ *երթալ լրտեսել* զբազմաթիւն զօրացն Պարսից (Փարս., 69): Որ *եկեալ միաբանեաց* զզօրս Պարսից (Ազաթ., 15): Եթէ հնար իցէ... *զալ բերել* մեզ զպսակս արքայութեան (Փարս., 69) և այլն:

Տարբեր սեռի զուգաբայական հարադրություններ են ձևավորում մի չեզոք ու մի ներգործական և մի չեզոք ու մի կրավորական բայեր: Վերջին տիպի զուգադրումով ձևավորված հարադրությունները գրավոր աղբյուրներում հազվադեպ են: Օրինակ՝ Ի ձեռն սրբոց քոց մարգարեից, զոր ի քէն առաքեցեր *զալ ծնանել* ի կուսէն սրբոյ (Ազաթ., 45):

Տարբեր սեռի բայերով զուգադրված բարդությունների մեջ չեզոք սեռի բայով արտահայտված բաղադրիչը սովորաբար գրավում է նախադաս դիրք և հիմնականում արտահայտվում է ընթացք անվանող *զալ*, *երթալ* չեզոք սեռի բայերի դիմավոր կամ անդեմ ձևերով: Հազվադեպ են այն բարդությունները, որոնցում չեզոք սեռի բաղադրիչները կիրառվում են ներգործական սեռի բաղադրիչներից հետո՝ Չմին ի կողմանս Յունաց *առեալ* փախչէին (Ազաթ., 24)²⁷⁶: Օրինակ՝ *Եկայք* շինեցարութ աներկիւղութեամբ (Փարս., 73): Նա *եկեալ* ուսուցէ դեղ ցավոցդ բժշկութեան (Ազաթ., 114): Եւ բազում ուրախութեամբ *զալ* կատարել առ հասարակ ամենեցուն զօրէնս արքայական փեսային՝ ըստ օրինացն թագաւորաց (Ա-զաթ., 80): Ապա *կաց* պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատգա-մըս թագաւորին Գթաց (Ազաթ., 28) և այլն:

Գրաբարում սովորական համարվող «*չեզոք սեռի բայ-ներգործական սեռի բայ*» (և ոչ թե հակառակ) շարադասությամբ կառուցված զուգաբայական հարադրությունների առատությունը կարելի է պատճառաբանել գրաբարի՝ նախադասություն կազմող անդամների իմաստային և շարադասական առանձնահատկություններով: Նախ՝ նշված տեսակի բարդությունների մեջ ներգործական սեռի բայերով արտահայտված բաղադրիչները տվյալ նախադասությունների հիմնական իմաստն արտահայտող տարրերն են,

մինչդեռ դրանց նախորդող չեզոք բայերով արտահայտված բաղադրիչներով ընդամենն անվանվում է ընթացք, ուղղություն, որին պետք է հետևի ներգործական բայով արտահայտված բուն գործողությունը: Երկրորդ՝ չեզոք սեռի բայով արտահայտված բաղադրիչը տվյալ նախադասության բովանդակության պլանում մի տեսակ հավելյալ, ոչ կարևոր իմաստ է կրում և հաճախ չունի իրենից հետո ենթադրվող որևէ լրացում, որը խանգարեր զուգադիր բարդության կայացմանը: Մինչդեռ ներգործական սեռի բայով արտահայտված բաղադրիչի համար այս տեսանկյունից դժվարություն կա, քանի որ ուղիղ խնդիրը գրաբարում սովորաբար հաջորդում է ներգործական սեռի լրացյալ բային: Եթե զուգաբայական բարդության մեջ ներգործական բայը նախորդում է չեզոք բային, ապա խախտվում է ներգործական բայի պահանջած սեռի խնդրի շարադասությունը, քանի որ այն տեղաշարժվում է զուգաբայից առաջ: Բանն այն է, որ եթե սեռի խնդիրը հաջորդի ներգործական սեռի բային, ապա արդյունքում կստացվի ոչ թե զուգաբայություն, այլ երկու տարբեր, իրարից անկախ գործողություններ: Դիտարկված երկու դեպքերն էլ գրաբար աղբյուրներում բացառիկ կիրառություններ ունեն, որոնք առաջին հերթին պայմանավորված են տվյալ ժամանակաշրջանի լեզվամտածողությամբ: Վերջին հանգամանքն էլ հենց պատճառ է դարձել, որ գրաբարում «*չեզոք սեռի բայ-ներգործական սեռի բայ*» կապակցությունը տարբեր սեռի բաղադրիչներ ունեցող զուգաբայական բարդությունների արտահայտության բուն միջոց դիտվի: Օրինակ՝ *Եկն եգիտ* անդ զօրրս բազումս Պարսից (Ագաթ., 29): Նման կարգի շեղում է դիտվում երկու դեպքում՝

ա) երբ ներգործական սեռի բայով արտահայտված գործողությունը, պայմանավորված տվյալ խոսքային իրադրությամբ, տրամաբանորեն պետք է նախորդի չեզոք սեռի բայով արտահայտված գործողությանը, ինչն ակնառու է հետևյալ նախադասության մեջ՝ Ջմին ի կողմանս Պարսից և զմին ի կողմանս Յունաց *առեալ փախչէին* (Ագաթ., 24):

բ) Երբ նախադաս ներգործական սեռի բայի ուղիղ խնդիրը նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով չի հիշատակվում. ինչպես՝ Բազում անգամ ի բանտս և ի կապանս տանջա-

նօք նեղէր զնա՝ *թողուլ ի բաց լինել* նմա յերկրպագութենէն Քրիստոսի (Ագաթ., 25-26):

Սեռի քերականական կարգի տեսանկյունից միևնույն կամ տարբեր բաղադրիչներով ձևավորված բարդությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարի զուգաբայական հարադրությունները լինում են երեք տեսակ՝ ներգործական, չեզոք և կրավորական:

Եթե զուգաբայական հարադրություններ են ձևավորվում սեռի քերականական կարգով միատիպ բայեր, ապա հոմանիշ կամ հականիշ լինելու դեպքում դրանք բնութագրվում են իրենց երկուսին էլ հատուկ սեռով: Այսպես՝ *ածել հասուցանել, կապել կախել, համարիմ կշռել, մեկնել հանել, նշաւակեալ խայտառակել, զգացուցեալ տալ գիտել, յանձն արարեալ նուիրել* զուգաբայերը ներգործական սեռի են: Օրինակ՝ *Ձի խլեսցեն քրեսցեն* իշխանքն (Ագաթ., 75): Եւ *ածեալ կացուցին* զնոսա առաջի թագաւորին (Փարս., 82): Լուծին զնա ի չարաչար կապանացն և *ածին կացուցին* առաջի նորա (Ագաթ., 39) և այլն: Մինչդեռ *սփռիմ տարածիմ, երթալ զնալ, եկեալ հասանել, գալ յարել, զնալ պատահել* (պատահիմ), *ճեպեալ ընթանալ, ելեալ երթալ* բարդությունները չեզոք սեռի բայեր են: Օրինակ՝ *Եկեալ հասանէր* առ նոսա նենգաւոր Վասակ Սիւնեաց տէր (Եղիշէ, 76):

Եթե զուգաբայական հարադրություն է ձևավորվում սեռի քերականական կարգով տարբեր (չեզոք և ներգործական կամ չեզոք և կրավորական) բայերով, ապա բարդությունը ձեռք է բերում ներգործական կամ կրավորական սեռի քերականական իմաստ: Այսպես՝ *Հայեցեալ տեսանէին* ըստ օրինի կարգման նկատելոյ զգունդսն Պարսից (Փարս., 65): Նա *եկեալ ուսուցէ* ձեզ դեղ ցաւոցդ բժշկութեան (Ագաթ., 114): *Ելին լցին ծածկեցին* զամենայն երկիրն Հայոց (Բուզ., 14) կառույցների մեջ ընդգծված բարդությունները հանդես են բերում ներգործական սեռի բայի առանձնահատկություն:

Ինչպես նշել ենք, զուգադրական բայեր կազմող բաղադրիչները ոչ թե պատահական, այլ միմյանց հետ իմաստով առնչվող միավորներ են, որոնց զուգադրումը պայմանավորված է տվյալ խոսքային իրադրությամբ: Այդ է պատճառը, որ զուգադրական բայերի բաղադրիչները միմյանց հետ գտնվում

ենն ձևախմաստային հարաբերության մեջ: Դրանք՝

ա) կա՛մ *համանիշ* են²⁷⁷, ինչպես՝ *կատարեացի գլուխ եհան* (Բուզ., 50), *անուանեալ կոչեն* (Փարս., 1), *երթայցեն գնայցեն* (Ազաթ., 218) և այլն,

բ) կա՛մ *հոմանիշ*, ինչպես՝ *գումարեաց ժողովեաց* (Բուզ., 14), *սըփ-
ռեցան տարածեցան* (Բուզ., 14), *յորդեալ բղխեն* (Փարս., 4), *քակտեալ
քայքայեսցէ* (Բուզ., 24) և այլն,

գ) կա՛մ *հականիշ*, ինչպես՝ *գնացին եկին* (Բուզ., 26), *բարձի թողի*
(Սաղմ., 2, 13) և այլն,

դ) կա՛մ էլ անվանում են իրար հաջորդող հարակից գործողություն-
ներ, ինչպես՝ *մատուցեալ սփոփէր* (Բուզ., 23), *հարեալ սատակէր* (Բուզ., 41),
գայ անցանէ (Խոր., 162), *աճապարէր կուտէր* (Բուզ., 117) և այլն:

Առանձնացված ձևախմաստային խմբերից գրաբարում բաղադրիչ-
ների բազմազանությամբ և գործառական ակտիվությամբ աչքի են ընկնում
այն զուգադրական բայերը, որոնց բաղադրիչներն անվանում են հոմանիշ
կամ հարակից գործողություններ:

Ձևախմաստային զույգեր են կազմում նաև զուգադրական բայերը:
Գրավոր աղբյուրներում առանձնանում են՝

ա) թե՛ *համանիշ*, ինչպես՝ *գայր բերէր* (Բուզ., 20) և *եկին ածին* (Բուզ.,
61), *արի գնա՛* (Յովն., Գ, 2) և *արի ե՛րթ* (Դ Թագ., Ա, 3), *խաղայր գնայր*
(Եղիշէ, 128) և *խաղայր երթայր* (Ազաթ., 408) և այլն, որոնք նկատելիորեն
սակավադեպ են,

բ) թե՛ *հականիշ*, ինչպես՝ *գայր հասանէր* (Բուզ., 135) և *գնայր
հասանէր* (Բուզ., 203), *երթալ տանիմ* (Բուզ., 147) և *գալ բերել* (Բուզ., 20),
արի ե՛կ (Երզ., Բ, 10) և *արի գնա՛* (Յովն., Գ, 2), *արիք եկայք* (Եղիշէ, 27) և
արիք երթիցուք (Մատթ., ԻԶ, 46) և այլն, որտեղ իմաստային հակադիր
եզրեր են դառնում մի դեպքում՝ տարբեր զուգաբայերի առաջին բաղադրիչ-
ները, մյուս դեպքում՝ երկրորդները, իսկ երրորդ դեպքում՝ և՛ առաջին, և՛
երկրորդ բաղադրիչները,

գ) թե՛ *հոմանիշ զույգերը*, ինչպես՝ *քակեցան լուծան* (Բուզ., 42),
բաժանեալ պատանեցաւ (Փարս., 1) և *քակտեալ քայքայեսցէ* (Բուզ., 24),

կարգել կազմել (Բուգ., 129) և *կազմել պատրաստել* (Բուգ., 111), *խաղալ հասանել* (Բուգ., 17) և *գալ հասանել* (Բուգ., 134), *այսպանեալ պարսաւեսցես* (Խոր., 257) և *արհամարհեալ այսպանէին* (Բուգ., 41) և այլն: Ձևախմաստային խմբերից վերջիններս գուգաբայական հարադրությունների արտահայտության առավել բնորոշ միջոցներն են:

Բ. ՁՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ

Թեև գուգաբայական հարադրությունների արժույթային դասակարգումը գերազանցապես պայմանավորված է գուգաբայ կազմող ոչ թե առաջին, այլ երկրորդ բաղադրիչի բառիմաստով ու քերականական սեռով, այնուամենայնիվ այդ դասակարգումը վերաբերում է ողջ բարդությանը, քանի որ վերջինս հանդես է գալիս որպես բառային մեկ միավոր:

Բ.1. ՁՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՆԹԱԿԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ենթակաառության արժույթով աչքի են ընկնում բոլոր գուգաբայական բարդությունները (անկախ սեռի քերականական կարգի պատկանելությունից)՝ գոյականով, դերանունով կամ փոխանվանաբար գործածված այլ բառով արտահայտված ենթակայի հետ կապակցվելով դեմքի և թվի քերականական կարգերի համաձայնության եղանակով²⁷⁸: Օրինակ՝ Իսկ ի յաւոր ուրբաթու մեծի տօնին Պենդէկոստէին *դիմեալ հասանէին* մերձ ի նոյն տեղիս *գօրքն* Հայոց (Փարս., 69): Յորում *Վրթանէս երթեալ շրջեր* առանձինն սակաւութ (Բուգ., 7): Իսկ իբրև *եկին հասին աւորք* ջերոտ հարաւահողմ գարուն դրանցն բանալոյ (Ագաթ., 21): Ապա թէ ոք չյայտնեսցէ գայնպիսին կամ թագուցէ, և գտցի, *այսպիսին* ընդ մահապարտս համարեալ լիցի և ի հրապարակ արքունի *եկեալ մեռցի* (Ագաթ., 77) և այլն:

Նշենք, որ ենթական կազմությամբ կարող է լինել ոչ միայն պարզ, այլ նաև բաղադրյալ (երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, բազմաբաղադրիչ). եւ *ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր* ի ծմերոց յԱյրարատ գաւառ (Ագաթ., 71): Չորս ելեալ *իւր իսկ ինքնին Վրթանէս մատուցեալ հարցանէր*

ցնոսա, եթէ դուք ո՞րք էք (Բուգ., 8): Յօժարեցան *ոմանք ի ժողովրդենէ* անտի *երթալ յանդիման լինել* թագաւորին (Ա Մակ., Ա, 14): Քանզի իբրեւ *եկին հասին հրամանք հրովարտակացն* ի մեծ թագաւորէն (Ագաթ., 90):

Դերբայական դարձվածների (կամ, ինչպես վերջերս գտնում է Է. Մկրտչյանը, դերբայական նախադասությունների²⁷⁹) կազմում առկա զուգաբայական բարդությունները հնարավորություն ունեն կապակցվելու սեռական հոլովով արտահայտված փոխակերպված (կողմնակի) ենթակաների հետ: Օրինակ՝ *Եկեալ հասեալ Պոմպէի՝ Հռովմայեցոց զօրավարին* յերուսաղէմ՝ պաշարէր և ի սրբութիւնս մտանել ժտէր (Եւս., Բ, 250): Իսկ *իմ անցեալ սահեալ շրջեալ* ի վերայ ալեացն (Ագաթ., 14) և այլն:

Վերը նշված տիպի շարահյուսական միավորների մեջ անորոշ դերբայով արտահայտված զուգաբայական բարդության հետ կարող է կապակցվել տրական հոլովով արտահայտված փոխակերպված ենթակա, ինչպես՝ *Թողուլ ի բաց լինել նմա* յերկրպագութենէն Զրիստոսի (Ագաթ., 25):

Տրականով արտահայտված փոխակերպված ենթակա են պահանջում նաև բայական միադիմի միակազմ նախադասությունների մեջ գործածված զուգաբայական հարադրությունները Օրինակ՝ *Դէպ եղև նոցա զալ մտանել* ի նեղագոյն տեղի մի (Ագաթ., 27) և այլն:

Զուգաբայական հարադրությամբ արտահայտված ստորոգյալը ենթակա չի առնում այն դեպքում, եթե վերջինս որպես ենթակա կամ նախադասության այլ անդամ նախապես տեղ է գտել տվյալ կառույցին նախորդած նախադասության արտահայտության պլանում: Օրինակ՝ Լսէին, թէ զօր բազում *խաղացեալ զայ ի Պարսից, եկեալ հասեալ են ի սահմանս Հերայ* (Փարպ., 128): Բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, ... *ե՛րբ գնալ յերկիրն Եննաց* (Բուգ., 203): Իբրև ետես թագաւորն զայրն, զի *դիմեալ եկեալ էր առ նա* ամենայն ընտանեօքն հանդերձ (Ագաթ., 21): Յիշեա՛, որդեա՛կ իմ, *զի թողէր լքէր զմեծապատիւ, շքեղաշուք, ոսկիակոտ զաթոռն քո հայրենի* (Ագաթ., 92) և այլն:

Զուգաբայական հարադրությունները ենթակաառու չեն միայն այն դեպքում, երբ կիրառվում են բայական միակազմ նախադասությունների

մեջ: Օրինակ՝ Եւ յարեմուտս կոյս յողարկել ի լեառնն, որ *անուանեալ կարդային Դիւցքնկէց* (Խոր., 24): Ապա թափել Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխարհին և զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, *հանեալ թաղեցին յամուր ի գելոն*, որ Ալծքն անուանին (Բուզ., 122): Կայ դէմ յանդիման լերինն մեծի, *որում Յուլն անուանեալ կարդան* (Բուզ., 33): Եւ առաքեաց Շմաւոն, բարձ անտի զոսկերսն Յովնաթանու, և *բերին թաղեցին զնա ի Մովղիիմ* (Ա Մակ., ԺԳ, 25):

Անկասկած, նշված տեսակի միակազմ նախադասությունների զուգաբայական հարադրություններով արտահայտված ստորոգյալները ենթակառույթամբ արժութագուրկ չեն. նրանք այլ նախադասությունների մեջ կարող են ենթակա ստանալ: Օրինակ՝ Ամենայն *մարդիկ* երկրին Հայոց *անուանեալ կոչէին* սմա վարդապետ (Բուզ., 230):

Զուգաբայական հարադրությունների կողմից պահանջվող կամ ենթադրվող ենթակաների դասային պատկանելության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք գրեթե բոլորն արտահայտվում են անձնանիշ գոյականների ու դերանունների միջոցով (ընդ որում՝ հարկ եղած դեպքում կարող են զեղչվել): Օրինակ՝ Արդ *երթեալ սնեալ* և ուսեալ Տրդատէս առ կոմսի ումեք Լիկիանէս անուն կոչեցելոյ (Ագաթ., 24): Ի մեծ սրահի անդ *ճեմ առեալ շրջէր* (Գ Մակ., Ե, 12): *Դէմ եղեալ զնացին* առ Շապուի (Խոր., 286): *Նա եկեալ ուսուցէ* ձեզ դեղ ցաւոցդ բժշկութեան (Ագաթ., 114): Բայց որպէս *հոգացեալ խնամ տարէք* ձեզ (Փարպ., 58):

Զուգաբայական հարադրությունների ենթադրած ենթակաների անձնանիշ լինելը պայմանավորված է նրանով, որ սովորաբար զուգադրություն կազմող բայերից գոնե մեկի միջոցով արտահայտվում է անձերին վերաբերող գործողություն, ինչպես՝ *հայեցեալ տեսանել, գալ հասանել, երթալ յանդիման լինել, չու արարեալ զնալ* և այլն:

Բ.2. ԶՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՐՈԳՅԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Զուգաբայական բարդությունների անխտիր բոլոր դիմավոր ձևերը խոսքի մեջ կատարում են ստորոգյալի շարահյուսական գործառույթ²⁸⁰:

Օրինակ՝ *Գայր մտանէր* ի խորանն արքունի մեծաւ շքեղութեամբ (Փարպ., 82): *Եկեալ յանդիման եղև* քազաւորին Խոսրովու յնուտի գաւառի՝ ի Խաղ-խաղ քաղաքի՝ ի ձմերոցս արքայութեան Հայոց (Ազաթ., 21): *Խաղաց գնաց* Կենդերոս, եկն եհաս ի կողմանսն Յամնեայ (Ա Մակ., ԺԵ, 40): Եւ *դարձաւ շինեաց* զբարձունսն, զոր կործանեաց Եզեկիա՝ հայր նորա (Դ Թագ., ԻԱ, 3) և այլն:

Հայտնի է, որ ստորոգառական արժույթը հատուկ է միայն բայի դիմավոր ձևերին, քանի որ ստորոգման քերականական ակտ կարող է տեղի ունենալ միայն այս կամ այն ժամանակահատվածում: Ասվածն, անշուշտ, չի նշանակում, թե բոլոր բայերի դիմավոր ձևերը ստորոգառու են:

Մասնավորապես գրաբարի զուգաբայական հարադրությունների դիմավոր ձևերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից ստորոգառությամբ օժտված են ընդամենը մեկ-երկուսը: Դրանցից են՝ *անուանեալ կոչել*, *կալ մնալ* բայերի դիմավոր ձևերը: Օրինակ՝ *Անուանեալ կոչին* հրեայքն *բարեկամք* Հոովմայեցոց (Ա Մակ., ԺԴ, 40): Իսկ նահապետ ազգին Սկկունեաց ամբանայր յամբոցին, որ *անուանեալ կոչի Ողական* (Խոր., 228): Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ *անուանեալ կոչէր Ջաղայ* (Կորիւն, 62): Նմանեալ Որդւոյն Աստուծոյ՝ *կայ մնայ քահանայ* մշտնջենաւոր (Եբր., Է, 3): *Կացին մնացին* (ծառայք-Գ.Խ) *ամաչեցեալք* (Դատ., Գ, 25) և այլն:

Բերված նախադասությունների մեջ զուգաբայական բարդությունները կիրառվել են որպես վերացական բայեր և ունեն բաղադրյալ ստորոգյալի հանգույցի գործառույթ: Մինչդեռ հարկ է նշել, որ նշված բայերը՝ որպես բառեր, լիիմաստ են և խոսքի մեջ կարող են հանդես գալ նաև պարզ ստորոգյալի շարահյուսական գործառույթով: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ ստորոգառությունն այդ բայերի արժույթի ոչ թե բուն առանձնահատկությունն է, այլ օժանդակ հնարավորություններից մեկը

Բ.3. ԶՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարի զուգաբայական հարադրությունների խնդրառական ար-

ժույթն առավել հանգամանալից ուսումնասիրելու համար նպատակահարմար է դա անել ըստ այդ բայերի քերականական սեռի պատկանելության, քանի որ, կախված սեռի քերականական կարգի արտահայտությունից, տարբեր սեռի զուգաբայական բարդությունները խնդրառական արժույթի տեսանկյունից հանդես են բերում տարբեր օրինաչափություններ:

Բ.3.1. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

Ներգործական սեռի զուգաբայական բարդություններ գրաբարում առաջանում են երկու ճանապարհով՝

ա) երկու ներգործական բայերի զուգադրումով. Իսկ սոցա գիտացեալ՝ *ձգեալ հանին* զնա ի վեր (Ագաթ., 116): *Առեալ ի գործ արկանէր* զթշուառացուցիչ գաւազանն (Կորիւն, 68): Եւ *յարուցանէր կանգնէր* զհայրն իւր (Տովբ., ԺԱ, 9): *Հարկանէր վանէր* զազգսն երկոսեան (Բուզ., 9): Իբրև *ուղղեաց և նորոգեաց զամենայն* եկեղեցիս (Բուզ., 12) և այլն:

բ) Չեզոք և ներգործական սեռի բայերի զուգադրումով. Իսկ նա *ընթացեալ ժողովէր* զմարմինս նոցա (Ագաթ., 117): Արձակեաց զնա մի յիշխանաց իւրոց՝ *երթալ ձերբակալ առնել* զնա (Ա Մակ., ԺԴ, 2): Եւ այլս արձակեաց յԵրուսաղէմ, զի *աճապարեսցեն հասցեն առցեն* զլեառն տաճարին (Ա Մակ., ԺԶ, 20): *Երթալ նորոգեաց* անդ զեկեղեցին *կարգօք* (Բուզ., 10):

Անկախ այն հանգամանքից, թե ներգործական սեռի զուգաբայական բարդություններն արժույթի ուրիշ ինչ դրսևորումներ ունեն, դրանք պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են մի սեռի խնդիր, ու-րը կարող է արտահայտված լինել՝

ա) *հայցական հոլովածևով*⁸¹, որը, փաստորեն, գրաբարի սեռի խընդ-րի արտահայտության հիմնական միջոցն է. *Չնշան* թագին *ցրուեալ կո-ղոպտեալ* (Ագաթ., 104): Որ *եկեալ միաբանեաց զգօրսն* Պարսից (Ագաթ., 15): Որ *եկեալ պատեալ պաշարեալ պահէին* զսուրբ *քաղաքն* (Բ Մակ., Ա, 12): ԶԱրիստաբուղոս կապեալ՝ *առեալ* ընդ իւր *տանէր* (Եւս.) և այլն:

բ) «Հայցական հոլովածն-սեռականով հավելադրություն» կապակցությամբ՝ Եկին բերին *կարս պարանաց՝* երկայն և ստուար (Ագաթ., 115):

գ) «Բացառական հոլովածն-հայցական հոլովածն» կապակցությամբ՝ Բայց միայն երկուս *մանկունս* փոքրկունս *յորդոցն* Պարթևին պրծեալ ոմն ապրեցուցանէր (Ագաթ., 23): Եւ *գալլսն ի նոցանէ* դաշտացն և անտառախիտ մայրեացն ցրուեալս վատնէին (Փարս., 66): Արդ եկայք առաքեցուք *ի մէնջ երկուս* (Բուգ., 86) և այլն:

դ) Բացառական հոլովածնով, որն այլ կերպ կոչվում է մասնական ուղիղ խնդիր. Գտեալ անդ գօրականս պարսիկս բազում, *յորոց* սուր ի վերայ եղեալ կոտորէին (Փարս., 66): Յաւուրս ժամանակացն այնոցիկ ելին տարան *յորդոցն* Իսրայէլի արք անօրէնք (Ա Մակ., Ա, 12):

ե) Որոշ բայերի հետ՝ «Չ+բացառական հոլովածն» մասնակադապարով, որը նույնպես մասնական ուղիղ խնդրի արտահայտչամիջոց է, ինչպես՝ Եւ մատուցեալ թագաւորն և նախարարքն՝ բուռն հարեալ ունէին *գոտից* սրբոյն Գրիգորի (Ագաթ., 116):

զ) Մի պարզ կամ բարդ նախադասությամբ, որ սովորաբար հանդես է գալիս որպէս ուղղակի խոսք: Օրինակ՝ Եւ եմուտ պատմեաց հօրն. «Ահաւասիկ գտի ընկեր, որ գայ ընդ իս» (Տովբ., Ե, 10):

է) Երկրորդական նախադասությամբ. Եւ հայեցեալ տեսանէր Վարդան հանդերձ ընկերակցօքն իւրովք, *զի արարեալ փախստականս և նոցա* (Փարս., 66): Բայց ըստ ծանր խոհականութեանն իւրոց հայեցեալ նկատէր, *թէ... չհաւանեալ ապստամբել իշխանն Սիւնեաց Վասակ* (Փարս., 60):

Ըստ խնդրառական արժույթի՝ ներգործական սեռի գուգաբայական հարադրությունները բաժանվում են երկու խմբի:

1. Միարժույթ ներգործական սեռի բարդություններ, որոնք պարտադիր կերպով ենթադրում կամ պահանջում են միայն մեկ (ընդ որում՝ սեռի) խնդիր: Դրանցից են՝ *գալ սերել, եկեալ գտանիմ, ելանել ծածկել, հայեցեալ տեսանել, երթալ լրտեսել, գալ հարկանել, հարկանել վանել, պարուրեալ ծրափակել, նշառակեալ խայտառակել, դնել պատրաստել, խըլել բրել, աւերել քանդել, աւար առեալ աւերել, խնդրել գտանիմ, յաճա-*

խեալ բազմացուցանել, պահել զգնուշացուցանել, պատրել հաճել, թողուլ լքել, առաքուր հարեալ սատակել, կոխեալ սատակել, հպարտացուցեալ ամբարիաւաճեցուցանել, հանել փողոտել, գալ միաբանել, գալ պատել պաշարել, ելանել տանել, հարկանելով հարկանել, ելանել խնդրել, երթալ ձերբակալ առնել, յարուցանել կանգնել և այլն: Օրինակ՝ *Ձնորոգումն յարութեան յանձին բարձեալ բերէ* (Ագաթ., 53): Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց (Բուգ., 14): *Հայեցեալ տեսանէին զգունդսն Պարսից* (Փարպ., 65): *Երթալ լրտեսել զբազմութիւն զօրաց Պարսից* (Փարպ., 69): *Յորժամ նշաւակեալ խայտառակեաց զնա Հազկերտ* (Փարպ., 76): *Ապա թե ոչ եկեսցուք հարցուք վանեսցուք զերկիրն* (Ա Մակ., ԺԵ, 31): *Աւար առեալ աւերէին զամենայն երկիր սահմանացն* (Ագաթ., 19): *Գնաց նա եհար սատակեաց զգօրսն Դեմետրեայ* (Ա Մակ., ԺԴ, 11): *Աղաչէր զամենեսեան հնարս ինչ մարթել խնդրել գտանել* (Ագաթ., 19): *Հարկանելով եհար զթշնամիս իւր* (Ա Մակ., ԺԴ, 26): *Ձնոյն յաճախեալ բազմացուցանէր* (Ագաթ., 103): *Եթէ ոք հնարեսցէ պատրել հաճել զմիտս աղջկանն* (Ագաթ., 110): *Յիշեա՛, որդեա՛կ իմ, զի թողեր լքեր զմեծապատիւ շքեղաշուք ոսկիակոտ զաթռոն քո հայրենի* (Ագաթ., 92): *Տայր հրաման հանել փողոտել զմանկունսն* (Բուգ., 40-41): *Բազումք զբազումս կոխեալ սատակէին* (Ագաթ., 97): Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն *աւերէր քանդէր զերկիրն* Պարսից թագաւորութեանն (Ագաթ., 71): Եւ *զբազումս առաքուր հարեալ սատակէին* (Ագաթ., 97): Եւ տիրեալ *հաստատեալ ունի զգաւառս և զքաղաքս* (Ա Մակ., ԺԴ, 17): Իբրև *հայեցաւ ետես զգօրսն*, թէ դանդաղեցան անցանել ընդ հեղեղատն (Ա Մակ., ԺԶ, 6) և այլն:

2. *Երկարժույթ ներգործական սեռի բարդություններ*, որոնք պարտադիր կերպով ենթադրում կամ պահանջում են երկու խնդիր, որոնցից մեկը սեռի խնդիր է, իսկ մյուսը՝ բնության: Դրանցից առաջինի առկայությունը պայմանավորված է զուգաբայի սեռի քերականական կարգով, իսկ երկրորդինը՝ բառիմաստով: Օրինակ՝ «*Մինչ զի և զկանայս անգամ յարանց կենդանւոյն մեկնեալ հեռացուցանեն*» (Ագաթ., 87) նախադասության *զկա-*

նայս խնդիրը պահանջվում է՝ բայ-ստորոգյալի սեռի քերականական կարգով պայմանավորված, իսկ *յարանց* բնության խնդիրը՝ բայիմաստով:

Երկարժույթ զուգաբայական բարդությունները, սեռի խնդրից բացի, պահանջում են բնության խնդիր՝ արտահայտված՝

ա) *տրական հոլովով*: Այդ շարքի երկարժույթ բայերից են՝ *գրել ցուցանել, գալ ուսուցանել, կալ պատմել, յանձն առնել նուիրել* և այլն: Օրինակ՝ *Գրեալ եցոյց* նոցա Վասակ զիր խաբէութեանն կամս (Փարպ., 64): *Նա եկեալ ուսուցէ* ձեզ դեղ ցավոցդ բժշկութեան (Ագաթ., 114): Ապա *կաց պատմեաց* թագաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին Գրթաց (Ագաթ., 28): Սակայն ոչ ինչ *զգացուցեալ տային զիտել* նմա (Փարպ., 77): Եւ զանձինս ի պահպանութիւն ամենահնար աջոյն *յանձն արարեալ նուիրէին* (Փարպ., 67) և այլն:

Հարկ է նշել, որ պարտադիր կերպով ենթադրվող այս կարգի բնության խնդիրները միշտ չէ, որ տեղ են գտնում նախադասությունների արտահայտության պլանում, ինչպես՝ *Եւ կաց պատմեաց զերեկորին զգործրս քաջութեան նորա* (Ագաթ., 28): *Իսկ նա հանեալ մատուցանէր զլեզուն* (Ագաթ., 106) և այլն:

բ) *Բացառական հոլովով*: Այդպիսի զուգաբայերից են՝ *պրծեալ ապրեցուցանել, մեկնեալ հեռացուցանել, մեկնել հանել, հանել մերժել* և այլն: Օրինակ՝ Եվ զամենայն եպիսկոպոս *մեկնեաց եհան յիրաքանչիւր ժողովրդոց* (Բուզ., 77): Անդ ոմն *պրծեալ ապրեցուցանէր* հինէ անտի *յորդոնցն* Խոսրովու թագաւորին Հայոց մանկիկ մի փոքրիկ (Ագաթ., 23-24): *Հանին մերժեցին* ի ցասմանն իւրեանց ի մեծ տերութենէն (Ագաթ., 77)²⁸²: Մինչ զի և զկանայս անգամ *յարանց* կենդանւոյն *մեկնեալ հեռացուցանեն* (Ագաթ., 87):

գ) *Գործիական հոլովով*, ինչպես՝ *Հանդերձեցին լցին համբարօք զբերդս* (Ա Մակ., Ա, 36):

Այսպիսի կառույցների արտահայտության պլանում ևս ենթադրվող բնության խնդիրը կարող է բացակայել. *Եթե որ հնարեսցէ պատրել հաճել զմիտս աղջկանն* (Ագաթ., 110):

դ) *Կապական կապակցությամբ*, ինչպես՝ *Հաստատելով հաստատեաց* զմեզ *ընդ իւր* ի բարեկամս և ի թիկունս (Ա Մակ., ԺԴ, 26): Եւ զտղայս պահպանեալ սնուցանէ և ի տեղիս իւրաքանչիւր և *յիշխանութիւն ածեալ հասուցանէ* (Փարպ., 67): Իսկ թագաւորն հայարտացուցեալ ամբարհաւաճեցուցանէր որոգայթաղիւր թշնամին՝ ի *զրգոել յարուցանել* հալածանս ի *վերայ եկեղեցեաց* Աստուծոյ (Ագաթ., 80):

ե) *Երկրորդական նախադասությամբ*, ինչպես՝ Մատուցեալ հարցանէր ցնոսա, *եթէ դուք ո՞չք էք* (Բուզ., 8):

Երկարժույթ զուգաբայերի մեջ առանձնանում է *համարիմ կշռեմ*–ը, որը պահանջում է ոչ թե մի սեռի և մի բնության խնդիր, այլ կրկնակ սեռի խնդիրներ, որոնցից մեկն արտահայտված է հայցական հոլովով (բուն ուղիղ խնդիր), իսկ մյուսը (երկրորդական ուղիղ խնդիր)՝ կապական կապակցությամբ՝ Համարեցաւ կշռեաց *զմա* ի միտս իւր *իբրև զլեառն* մի բարձր (Բուզ., 204):

Գրաբար աղբյուրներում երկարժույթ ներգործական սեռի զուգաբայական բարդությունները հաճախակի կիրառություն չունեն²⁸³:

Բ.3.2. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԶՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

Գրաբարում չեզոք սեռի զուգաբայական հարադրություններ առաջանում են «*չեզոք սեռի բայ–չեզոք սեռի բայ*» կաղապարով, որը 5-րդ դ. զուգաբայական բարդության առավել տարածված արտահայտության միջոցներից է: Կարծում ենք՝ նշված փաստի պատճառն այն է, որ զուգաբայական հարադրությունների մեջ ակնհայտ է չեզոք սեռի բայերի գործոնը. բանն այն է, որ դրանք նաև ներգործական սեռի զուգաբայերի մի առանձին խմբի կազմության պարտադիր բաղադրիչներն են:

Սովորաբար, չեզոք սեռի զուգաբայական բարդություններ են ձևավորվում կա՛մ երկու հոմանիշ (կամ համանիշ) չեզոք բայերի հարադրությամբ (*չու առնել զալ, երթալ զնալ, եկայք երթիցուք, անկանիմ կործանիմ* և այլն), կա՛մ էլ իրար հարակից երկու տարբեր գործողությո՛ւն

յուններ անվանող չեզոք սեռի բայերի գուգադրումով (*գալ ի վերայ հասանել, երթալ յանդիման լինիմ, խաղալ գնալ, ելանել մարտնչիմ, գալ իջանել, գալ մտանել, գալ բանակել, ելանել տանիմ, երթալ ուխտ դնել* և այլն):

Ըստ խնդրառական արժույթի՝ չեզոք սեռի գուգաբայական հարադրությունները բաժանվում են երկու խմբի՝

1. *խնդրառու չեզոք սեռի գուգադրական բայեր*, որոնք լինում են միարժույթ և երկարժույթ՝ պարտադիր կերպով պահանջելով, համապատասխանաբար, մեկ կամ երկու բնության խնդիր: Օրինակ՝ *Ելէ՛ք մարտերուք ի վերայ ազգիդ* մերոյ (Ա Մակ., ԺԶ, 3): Յօժարեցին ոմանք ի ժողովրդենէ անտի *երթալ յանդիման լինել թագաւորին* (Ա Մակ., Ա, 14):

Գրաբար աղբյուրներում վկայված խնդրառու չեզոք սեռի բայերը հիմնականում *միարժույթ են*²⁸⁴. դրանք պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են իրենց բառիմաստի առանձնահատկությամբ պայմանավորված խնդիր:

Խնդրառությամբ միարժույթ գուգաբայերը իմաստային տեսանկյունից միատարր չեն (հմմտ. *երթալ յանդիման լինել, թողուլ ի բաց կալ, գալ տալ մարտ*), ուստի միատարր չեն նաև դրանց պահանջած բնության խնդիրները: Առանձնանում են՝

ա) *միարժույթ գուգաբայեր, որոնք պահանջում են տրական հոլովով արտահայտված բնության խնդիր*: Դրանցից են՝ *երթալ յանդիման լինիմ, գնալ պատահիմ, հոգացեալ խնամ տանիմ, ժուժալ տոկալ* և այլն²⁸⁵, որոնց առնվազն վերջին բաղադրիչն ինքնին *տրական հոլովով* արտահայտված խնդրառու բայ է, իսկ առաջինը կա՛մ ընթացք է անվանում, կա՛մ էլ իրեն հաջորդող բայի հոմանիշն է (կամ համանիշը): Օրինակ՝ *Եկեալ յանդիման եղև թագաւորին* Խոսրովու (Ագաթ., 21): *Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին* (Կորին, 62)²⁸⁶: Ստիպէր գտէր Մամիկոնէից իշխանն Սիւնաց Վարդան *գնալ պատահել նոցա* գնդաւ (Փարպ., 63): Բայց որպէս *հոգացեալ խնամ տարէք ձեզ* (Փարպ., 58): *Եկն դիպեցաւ սմա* օտար պատանի մի (Բուզ., 226) և այլն:

բ) Միարժույթ զուգաբայեր, որոնք պահանջում կամ ենթադրում են բացառական հոլովով արտահայտված բնության խնդիր: Դրանցից են՝ յետըս կացեալ ապստամբել, թողուլ ի բաց լինել, ուրացեալ հրաժարիմ և այլն: Օրինակ՝ Եւ յետս կացեալ ապստամբեաց ի միաբանութենէ ճշմարտութեանն (Փարպ., 66-67): Նեղէր զնա թողուլ ի բաց լինել նմա յերկրպագութենէն Զրիստոսի (Ագաթ., 25-26): Այլ յայսմ ամենայնէ ուրացեալ հրաժարէր (Բուգ., 9):

գ) Միարժույթ զուգաբայեր, որոնք պահանջում կամ ենթադրում են կապական կապակցությամբ արտահայտված բնության խնդիր: Այս խմբի բնության խնդիրները գրավոր աղբյուրներում գործառական հաճախականությամբ նկատելիորեն զիջում են կապական կապակցությամբ արտահայտված պարագաներին: Օրինակ՝ Դուք մեղմով երթայք և ուշադրեալ հայեցարուք ի մեզ (Փարպ., 129): Զի եկեսցէ տացէ մարտ պատերազմի ընդ Տրիփոնայ (Ա Մակ., ԺԴ, 1): Իսկ իբրև գայն ամենայն չարիս ետես թագաւորն Պարսից, որ եկին հասին ի վերայ նորա (Ագաթ., 19): Այր մի օտարական և անաշխարհիկ՝ եկիր յարեցար ի մեզ (Ագաթ., 76): Ոչ զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրաց կարգին (Բուգ., 5) և այլն:

2. Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի զուգադրական բայեր, որոնք գրավոր աղբյուրներում բաժանվում են երկու խմբի՝

ա) զուգաբայեր, որոնք ոչ միայն խնդրառությամբ են արժութագուրկ, այլ նաև պարագաառությամբ:

Խնդրառությամբ արժութագուրկ այս խմբի զուգաբայական հարադրություններից են՝ ի վեզ եկեալ յամառել, պնդեալ զօրանալ, ուրախացեալ ցնծալ, եռալ զեռալ և այլն: Օրինակ՝ Ուրախացեալ ցնծայր ամենայն խոհարան խողացն (Փարպ., 90): Իսկ մարտիրոսութեան տենչողքն ևս առաւել պնդեալք զօրանային (Փարպ., 68): Յայնմ ժամանակի հանդերձաւ կազմեցաւ Պարթևն եղբարբն իւրով հանդերձ (Ագաթ., 20): Եւ շատ ի վեզ եկեալ յամառէր այրն (Բուգ., 226) և այլն:

Նկատելի է, որ խնդրառությամբ արժութագուրկ զուգաբայերի այս շարքը հիմնականում համալրվում է ներգործական սեռի բայերի կրա-

վորածն խոնարհված բայաձևերով, որոնք տվյալ դեպքում չեզոք սեռի բայերի քերականական արժեք ունեն. դրանք իրենց տվյալ կիրառության մեջ չունեն և չեն կարող պահանջել ներգործող անուղղակի խնդիր: Փաստորեն, արժույթի տեսանկյունից այս բայերին հատուկ է միայն ենթակաառությունը:

բ) *Չուգաբայեր, որոնք ի տարբերություն նախորդ խմբի բայերի, խնդրառությանը արժութագուրկ լինելով, պարտադիր կերպով պահանջում են պարագայական խնդիր* (տե՛ս անմիջապես հաջորդ՝ Բ.4. ենթագլուխը):

Բ.4. ՉՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԱԳԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարում առանձնանում են ներգործական և չեզոք այնպիսի չուգաբայական բարդություններ, որոնք աչքի են ընկնում պարտադիր պարագաառությամբ: Հարկ է նշել, որ այդ բայերի պահանջած (կամ դրանց բովանդակության պլանում ենթադրվող) պարտադիր պարագաները, իբրև կանոն, արտահայտում են գործողության կատարման տեղի քերականական իմաստ: Կախված բայ-գերադաս անդամի բառիմաստային առանձնահատկությունից՝ պահանջվող տեղի պարագան արտահայտվում է տարբեր միջոցներով և հանդես բերում տեղի պարագայի տարբեր նրբ-իմաստներ: Այսպես՝ «*Եւ անդէն անկան կործանեցան շուրջ զԱնանեայ տաճարաւն*» (Բ Մակ., Ա, 13) նախադասության չուգաբայի (*անկան կործանեցան*) պահանջով տեղի պարագան (*շուրջ զտաճարաւն*) գործածվել է կապական կապակցությամբ և արտահայտում է պարառական իմաստ, իսկ «*Խաղաց գնաց նա յերկրէն Քետիմացոց*» (Ա Մակ., Ա, 1) նախադասության չուգաբայի (*խաղաց գնաց*) պահանջով տեղի պարագան (*յերկրէն*) արտահայտվել է բացառական հոլովաձևով և ունի սկզբնակետի տեղի պարագայի քերականական իմաստ:

Պարտադիր պարագաառությամբ բնութագրվող ներգործական սեռի չուգաբայական հարադրությունները գրավոր աղբյուրներում մեծ թիվ չեն

կազմում: Հարկ է նշել, որ գուգադրության բաղադրիչ կազմող բայերի սեռի քերականական կարգն այս դեպքում որևէ դեր չի կատարում, քանի որ պարագաառությունը պայմանավորված է բայերի ոչ թե սեռով, այլ բառիմաստով:

Պարագաառությունը մի դեպքում՝ պայմանավորված է տվյալ գուգաբայական հարադրության բաղադրիչներից միայն մեկով, իսկ մյուս դեպքում՝ բոլոր բաղադրիչներով: Գրաբարում պարտադիր պարագաառությամբ աչքի են ընկնում *կալեալ ածել, ածել կացուցանել, առեալ կապել, հանել նստուցանել, բարձեալ տանիմ, հանեալ կախել, խաղացուցեալ տանիմ, հանեալ թաղել, ածել մուծանել, կապել կախել, ածեալ հասուցանել, ածել արկանել, բերել ընթեռնուլ, գալ ածել* և այլ ներգործական սեռի գուգաբայություններ: Օրինակ՝ Եւ գասպագէն նորին զհւր գառնագէնն *առեալ կապեալ ի թիկունս* (Ագաթ., 109): *Ածին կացուցին* զնոսա *առաջի թագաւորին* (Փարպ., 82)²⁸⁷: Վասն այսորիկ *բարձեալ տանիմք* զոսկերս թագաւորացն Հայոց *յաշխարհն* մեր (Բուգ., 122): *Հանեալ թաղեցին* յամուր *ի գելդն*, որ Աղծքն անուանին (Բուգ., 122): Չոր պարսիկքն *խաղացուցեալ տանէին* ի գերութիւն *յաշխարհն* Պարսից (Բուգ., 122): *Հանեալ կախեցին* զնա պարսիկք *գրարծր աշտարակացն* (Բուգ., 225): Եւ *հանէր նստուցանէր* զնա *յերկրորդ աթոռ* թագաւորութեանն (Ագաթ., 21): *Ածին մուծին* զնա մինչև *յապարանս* թագաւորին (Ագաթ., 98): *Կապեցին կախեցին* զմանուկն Գրիգորիս *գագույ* ձիոյն (Բուգ., 13): Մինչև *ածեալ հասուցանէին ի դուռն* զսուրբ քահանայսն Աստուծոյ (Փարպ., 77): Եւ հալածեաց զնա Անտիոքոս և *ած արկ* զնա *ի Դովրա* ծովեզերայց (Ա Մակ., ԺԵ, 11): *Բերին ընթերցան* հրովարտակս *առաջի ժողովրդոցն* (Ա Մակ., ԺԴ, 19): Եկն *ած կալաւ* զԴեմետր *առաջի Արշակայ* (Ա Մակ., ԺԴ, 3): Մինչև *ածէր արկանէր* զնոսա *ի կողմանս* Կեղրոնայ (Ա Մակ., ԺԶ, 9): *Հոսէր ընկենոյր* բարդս-բարդս *ի մէջ զօրացն* մինչև ի լիութիւն բաւականի (Ագաթ., 27): Ի կողմանս-կողմանս *յուզախնդիրք ելեալ քննէին* (Ագաթ., 90) և այլն:

Մի շարք ներգործական բարդությունների ենթադրած պարտադիր տեղի պարագան որոշ կիրառությունների մեջ ոճական նկատառումներով կարող է բացակայել²⁸⁸, ինչպես՝ Եւ *կալեալ ածէին* և զԲատն (Բուգ., 205)²⁸⁹:

Մեն մի բռնաքար առ այր հրամայէին, զի *բերցեն ընկեսցեն* շեղջ կուտել (Բուգ., 14): Ապա յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զօրաց *ածել կուտել* զպառականն (Ագաթ., 113): *Մատեան արկին* ի խորովս (Բուգ., 79): *Շուրջ պարուրեալ* զնահատակաց զմարմինս *ծրափակէր* (Փարպ., 102) և այլն:

Նշված բայերի պարագաառական այլ դրսևորումներն արժույթի տեսանկյունից չեն կարևորվում: Օրինակ՝ *Զոր եղեր պատրաստեցեր յօր* կատարման խոստմանց քոց (Ագաթ., 54): *Յայնմ ժամանակի* եկեալ գտանէին ի քաղաքին *Հոովմայեցոց* արգելավանս մի կուսանոց (Ագաթ., 78-79): Այդ պարագաները կարող են պահանջվել բոլոր բայերի կողմից, բայց դրանց առկայությունն անմիջականորեն չի բխում բայ-գերադաս անդամի բառիմաստից, այլ պայամանավորված է տվյալ խոսքային իրադրությամբ, այսինքն՝ պարտադիր և ուժեղ կառավարման արտահայտություն չէ:

Պարտադիր պարագաառությամբ աչքի են ընկնում նաև մի շարք չեզոք սեռի զուգաբայական հարադրություններ: *Դրանցից են՝ հասեալ գալ, չու առնել գնալ, յարուցեալ գնալ իջանել, գալ հասնել, դիմեալ իջանել, խաղալ գնալ, գալ մտանել, գալ իջանել, գալ մեռանել, երթալ կորնչիմ, երթալ հասանել, դիմեալ հասանել, ելեալ երթալ, հասանել գալ, եկեալ հասանել, գալ ի վերայ հասանել, երթալ շրջել, անկանիմ քաւալիմ, գալ յանդիման լինիմ, գալ ի ծունր իջանել, պատեալ ծովանալ, գալ բանակել, անցանել գալ, գալ ագանել, սահել շրջել, չուեալ անցանել, դիմել գալ, իջեալ նստել, գալ ժողովել* և այլն:

Նշված բայերն, ըստ պահանջած տեղի պարագայի արտահայտության պլանի, բաժանվում են երկու խմբի.

1. *զուգաբայեր, որոնց պարտադիր կերպով պահանջած տեղի պարագան արտահայտվում է բացառական հոլովածևով*. Լսէին, թե զօր բազում խաղացեալ գայ ի Պարսից (Փարպ., 128): Յետ այսորիկ խաղաց գրնաց Տրիփոն ի քաղաքէն Պտղոմայեցոց (Ա Մակ., ԺԳ, 12): Խաղաց գրնաց նա *յերկրէն* Քետիմացոց (Ա Մակ., Ա, 1) և այլն:

Նկատենք, որ բերված պարագաները բացառապես արտահայտվում

են բացառական հոլովածով:

2. *զուգաբայեր, որոնց պարտադիր կերպով պահանջած տեղի պարագան արտահայտվում է որևէ կապական կապակցությամբ*, այդ թվում հետևյալ մասնակադապարներով՝

ա) «*Ի(յ)–(+)*եզակի թվի տրական հոլովով կապվող բառածև», որով սովորաբար արտահայտվում են բուն կամ դադարման, երբեմն էլ վերջնակետի պարագայական իմաստներ. Սուրբ վկայքն այնոքիկ եկեալ դողեալ էին յարքայական *կայանին* (Ագաթ., 88): Յորում Վրթանէս երթեալ շրջեր առանձինն սակաւութ (Բուզ., 7): Եկեալ հարսանէ ի Հայաստան աշխարհին ի վեցերորդ ամի Վռամշապիոյ արքայի (Կորիւն, 50)¹⁷ և այլն:

բ) «*Ի(յ)–(+)*եզակի թվի հայցական հոլովով կապվող բառածև», որով սովորաբար արտահայտվում է ուղղության կամ վերջնակետի պարագայական իմաստ: Օրինակ՝ Անդէն ի մմին գիշերի եկին հասին վաղվադակի *ի տեղի* անդր իշխանք թագաւորին (Ագաթ., 106): Արդ եկն եհաս Երեմիա մարգարէ *ի տեղի* անդր (Բ Մակ., Բ, 5): Երբ գնա՝ *յերկիրն* ճենաց (Բուզ., 203): Դարձեալ անցեալ եկեալ լինէր *յաշխարհն* իւր (Ագաթ., 16): Կամեցեալ չու առնել գնալ *ի դուռնն* և ինքն նենգաւոր իշխանն Սիւնեաց (Փարպ., 75): Երթալ կորնչել յօտար *երկիր* (Փարպ., 83): Չայնու ժամանակաւ²⁹⁰ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին *ի մայրն* եկեղեցեացն Հայոց (Բուզ., 7): Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ի ծմերոց յԱյրարատ *գաւառ* (Ագաթ., 71): Գայր մտանէր *ի խորանն* արքունի մեծաւ շքեղութեամբ (Փարպ., 82): Եւ եկին ագան այն օր *ի Մովսիսին* (Ա Մակ., ԺԶ, 5): Իբրև եկն եմուտ *ի խորան* անդր (Ագաթ., 30) և այլն:

գ) «*Ի(յ)–(+)*հոգնակի թվի հայցական հոլովով կապվող բառածև», որով, ի տարբերություն նախորդ մասնակադապարի, արտահայտվում է նաև բուն տեղի պարագայական իմաստ: Հմմտ. մի կողմից՝ Եկեալ հասեալ են *ի սահմանս* Հերայ (Փարպ., 128): Գային հասանէին *ի ժամադիր կողմանս* (Կորիւն, 68): Խաղաց գնաց թագաւորն *ի կողմանս* Հայոց (Ագաթ., 29): Գիտեմ, թէ հասեալ գայ *ի մեզ* Վասակ (Փարպ., 76): Յարուցեալ գնայր

իջանէր *ի կողմանս* Վրաց (Կորին, 62): Առեալ երանելոյն զհաւատացեալս իւր՝ դիմեալ իջանէր խնկարգ և խնդարման *տեղիս* Գողթան (Կորին, 40): Եւ *ի հրապարակս* արքունի եկեալ մեռցի (Ագաթ., 77): Իսկ ի յաւուր ուրբաթու¹⁷ մեծի տօնին Պենդէկոստէին դիմեալ հասանէին մերձ *ի նոյն տեղիս* զօրքն Հայոց (Փարպ., 69): Ելեալ երթայր *ի կողմանս* Հայոց (Ագաթ., 21): Խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապիոյ և երթեալ հասանէր *ի կողմանս* Արամի (Կորին, 48) և այլն, իսկ մյուս կողմից՝ Եկն ենուտ թագաւորն Տրդատ *ի ներքս* (Ագաթ., 99): Այնուհետև եկեալ մտանէին *ի հնձանայարկս* այգեստանոյն (Ագաթ., 85) և այլն:

Նշված տեղի պարագաները երբեմն հանդես են գալիս իրենց լրացման՝ մասնավորող պարագայական բացահայտչի հետ զուգորդված: Օրինակ՝ Եկին իջին յԱյրարատ *գաւառ՝ ի Վաղարշապատ քաղաք* (Ագաթ., 22): Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց մեծաց խաղացին եկին հասին *յեկեղեաց գաւառ՝ ի գեղոն* Երիզայ (Ագաթ., 30): Եկն բնակեցաւ նա *ի մեծ Ծոփս՝ յանապատին՝ ի վերայ գետոյն* (Բուգ., 186): Եկեալ յանդիման եղև թագաւորին Խոսրովու *յուտի գաւառի՝ ի Խաղխաղ քաղաքի՝ ի ձմերոցս* արքայութեանն Հայոց (Ագաթ., 21) և այլն:

դ) «ԱՌԱՋԻ-սեռական հոլովով կապվող բառաձև», որով արտահայտվում է բուն տեղի պարագայական իմաստ. Ամենայն մարդիկն անկեալ թաւալէին *առաջի նորա* (Ագաթ., 126): Եւ ի վաղիւ անդր եկեալ ի ծունր իջեալ *առաջի սրբոյն* Գրիգորի (Ագաթ., 118) և այլն:

ե) «(ՇՈՒՐՁ)-Ձ+ գործիական հոլովով կապվող բառաձև», որով արտահայտվում է պարառական իմաստ: Այսպիսի տեղի պարագա կարող են պահանջել սահմանափակ թվով զուգաբայական հարադրություններ. *պատեալ ծովանալ, սփռիմ տարածիմ, խաղալ գնալ ասպատակ սփռել, ելանել շրջել* և այլն: Օրինակ՝ Չօրաժողով լինէր, խաղայր գնայր ասպատակ սփռէր *զկողմամբք* Հայաստան աշխարհին (Ագաթ., 24): Ապա դարձեալ ելանէր շրջէր *գտեղեօք* կարգելովք (Կորին, 64): Սփռեցան տարածեցան *զսահմանօք* (Բուգ., 14): Ի մէջ առեալ *շուրջ գնդօք* պատեալ ծովանային (Փարպ., 72): Եւ անդէն անկան կործանեցան *շուրջ զԱնանեայ* տաճարաւն

(Բ Մակ., Ա, 13): Անտիոքոս եկն բանակեցաւ շուրջ զԴովրաւ երկոտասան հազարաւ (Ա Մակ., ԺԵ, 13) և այլն:

զ) «ԱՌ--հայցական հոլովով կապվող բառածն», որով, կախված զուգաբայ-գերադաս անդամի բառիմաստից, արտահայտվում է կա՛մ ուղղության (վերջնակետի), կա՛մ բուն տեղի պարագայի իմաստ: Օրինակ՝ Իբրև ետես թագաւորն զայրն, զի դիմեալ եկեալ էր *առ նա* ամենայն ընտանեօքն հանդերձ (Ագաթ., 21): Եկեալ հասանէր *առ նոսա* նենգաւոր Վասակ՝ Սիւնեաց տէր (Փարպ., 76): Յայնմ ժամանակի զայր հասանէր դեսպան *առ* Տրդատ *արքայ* Հայոց մեծաց (Ագաթ., 86): Իջին բանակեցան *առ ափն* գետոյն, զոր Գայլն կոչեն (Ագաթ., 30): Եկին ժողովեցան *առ նոսա* և՛ Մատաթի, և՛ որդիքն (Ա Մակ., Բ, 16) և այլն:

է) *Այլ կապակցություններով*, որոնցում գերադաս անդամի հետ տեղանիշ կապվող բառածնի քերականական իմաստը կարգավորում են այնպիսի նախդիրներ, ինչպիսիք են՝ *ի մէջ, ի միջի, ի վերայ, զհետ, ընդ* և այլն: Օրինակ՝ Իսկ իմ անցեալ, սահեալ շրջեալ *ի վերայ ալեացն* (Ագաթ., 14): Եւ իջեալ նստէր *ի վերայ գետնոյ* (Ագաթ., 110): Ճեպեալ ընթանային զօրքն Հայոց *զհետ երանելոյն* Վարդանայ սպարապետին Հայոց (Փարպ., 68): Երթեալ հասանէր *ի մէջ նոցա* երանելին Աղբիանոս (Բուգ., 9): Ի վաղիւ չուեալք անցանէին *ընդ գետն* մեծ (Փարպ., 66): Եւ *ի միջի նորա* ածեալ դակիշ բանակէին (Փարպ., 69): Իբրև գնոսա ընդ նոսա *ի մէջ նոցա* երթեալ բնակէր (Ագաթ., 113): Եւ այնուհետև *ընդ* ամենայն *կողմանս* պետութեան իւրոյ արձակեալք շրջէին պատկերագործք (Ագաթ., 78) և այլն:

Մի շարք զուգաբայական հարադրություններ (օր.՝ *անկեալ դնիմ*) գրաբարի զարգացման համաժամանակյա կտրվածքում տարբեր կիրառությունների մեջ կապակցվում են արտահայտության տարբեր պլաններ ունեցող բուն տեղի պարագաների հետ: Վերջիններս արտահայտվում են *ի, ընդ, առ* նախդիրների մասնակցությամբ: Հմմտ. Անկեալ դնիմ *ի դաշտի* (Բ Օրեն., ԻԱ, 1), *ընդ որով* (Յուդ., ԺԳ, 19), *ի սիրտ* ծովու (Առակ., ԻԳ, 34) և *առ դրան* նորա (Ղուկ., ԺԶ, 20):

Պարագաառու զուգաբայական հարադրությունները մի շարք կիրա-

ռությունների մեջ ոճական, իմաստային և կամ այլ նկատառումով զըրկվում են պարագա առնելու հնարավորությունից: Օրինակ՝ *Իսկ իբրև եկին հասին աուրք ջերոտ հարաւահողմ գարուն դրանցն բանալոյ* (Ագաթ., 21): *Ձի գետն երասխ յարուցեալ գայր լի դարիւ-դարիւ* (Ագաթ., 23): *Եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի* (Ագաթ., 17): *Յետ ոչ բազում ժամանակաց Աստուծոյ հարուածովք անկեալ սատակէր* (Եւս.): *Եւ թէ զհարդ անկան փշրեցան ունայնութեան պաշտամունքն* (Ագաթ., 13) և այլն:

Բ.5. ՁՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՋԱԾ ՍԵՌԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Ձուգաբայական հարադրությունների պահանջած սեռի և բնության խնդիրների դասային պատկանելության քննությունը երևան է հանում հետևյալ օրինաչափությունը. զուգադրություն կազմող բայերը պահպանում են այն նույն բնավորությունը, որով բնութագրվում են անկախ, միայնակ կիրառվելու դեպքում: Ասվածը հիմնականում վերաբերում է զուգաբայության կա՛մ վերջին բաղադրիչին, քանի որ կապակցման գործընթացում կարևոր են նրա իմաստային և քերականական առանձնահատկությունները, կա՛մ բոլոր բաղադրիչներին, եթե նրանք ունեն կապակցման միևնույն հնարավորությունը: Այսպես՝ եթե *տեսանել* բայն առանձին կարող է պահանջել տարբեր դասանիշ առարկաներ անվանող սեռի խնդիրներ, ապա միևնույն բանը՝ նա կարող է անել նաև զուգաբայական բարդության երկրորդ բաղադրիչը լինելու դեպքում: Եթե *սատակել* բայը կարող է պահանջել միայն անձնանիշ կամ շնչավոր առարկա անվանող սեռի խնդիր²⁹¹, ապա նույն բնավորությունը հանդես է բերում նաև իբրև զուգաբայական բարդության բաղադրիչ կիրառվելիս: Հմտ. Այսպես *սատակեցին գտիկինն* Փառանձեմ (Բուգ., 147): Տային հրաման ի բերդեանն, զի սովամահ *սատակեցեն զամենեսեան* (Բուգ., 51): Ոչ ևս եղիցի ջրհեղեղ՝ *ի սատակել զամենայն մարմին* (Շննդ., Թ, 13): *Սատակեցեն զանասունս*

ծեր (Ղևտ., ԻԶ, 22) և *Եւ հարկանէր սատակէր զԱպականն* Վսեմական հանդերձ՝ զօրօքն (Բուգ., 127): Ապա *զնոսա հարկանէին սատակէին* զօրքն Հայոց (Բուգ., 54): *Հարեալ սատակէր* զերկոսեան *գեղբարսն* միանգամայն ի բազմականին անդ (Բուգ., 41):

Այն դեպքում, եթե զուգադրության երկու բաղադրիչներն էլ (կամ դրանցից վերջինը) միայնակ կիրառվելիս զորություն ունեն պահանջելու իրանիշ (վերացական կամ քանձրացական առարկա անվանող) սեռի խընդիր, ապա այդ հատկությունը պահպանում են մաև բարդության մեջ: Օրինակ՝ *Երթալ կատարէր* անդ զպատարագն (Բուգ., 7): Եւ առնուին աւերէին զտունն արքունի (Բուգ., 9): *Հասեալ պատէին* զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն (Բուգ., 7): *Շինեաց նորոգեաց* զամենայն եկեղեցիս (Բուգ., 12)

Քանի որ նպատակ ունենք առաջիկայում զբաղվել համադրական բայերի արժույթի և դասային պատկանելության հարցերով, այդ իսկ պատճառով զուգաբայական հարադրությունների տեսակներն ըստ դասային պատկանելության առանձին ուսումնասիրության նյութ չենք դարձրել:

ԳԼՈՒԽ III
ԳՐԱԲԱՐԻ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ
ԲԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ԱՐԺՈՒՅԹԸ

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Գրաբարում միջնորդավորված գործողության գաղափարն արտահայտվում է «երկու ձևով՝ ա) ածանցմամբ, բ) վերլուծական եղանակով»²⁹² : Հմմտ. *ազդեցուցանել, զգեցուցանել, կենդանացուցանել, շողացուցանել* և *տամ բերել, տամ անցանել, տալ բաշխել, տալ խօսել*։ Նկատելի է, որ վերլուծական եղանակով միջնորդավորված գործողության իմաստն արտահայտվում է «բայի անորոշ դերբայի և *տալ* բայի հարադրությամբ, օրինակ՝ *տալ ածել, տալ սպանանել, տալ գործել* (=անել տալ) և այլն»²⁹³ :

Գրաբարում պատճառական հարադրավոր բարդություններ են ձևավորվում նաև *առնել* բայի դիմավոր կամ անդեմ ձևերի և որևէ բայի անորոշ դերբայի²⁹⁴ հարադրման ճանապարհով²⁹⁵ : Օրինակ՝ Ե՛լ ի ճանապարհս և ի ցանգս և *արա՛ մտանել*, զի լցցի տունս իմ (Դուկ., ԺԴ, 23)։ Սակայն *առնել* բայով հարադրված պատճառականները գրաբարի գրավոր աղբյուրներում նկատելիորեն փոքր թիվ են կազմում²⁹⁶, ուստի նպատակահարմար չէ դրանք առանձին ուսումնասիրության նյութ դարձնել²⁹⁷ :

Սուկ կառուցվածքի տեսանկյունից պատճառական հարադրավոր բայերը մեխանիկորեն կարելի է համարել զուգաբայական հարադրություններ։ Սակայն նկատի առնելով մի շարք լեզվական փաստեր՝ մենք ևս պատճառական հարադրավոր բայերը համարում ենք բայական հարադրության առանձին տեսակ²⁹⁸ : Բանն այն է, որ՝

1. ի տարբերություն զուգաբայական հարադրությունների, որոնք կարող են բաղադրվել երկու, երեք կամ չորս միավորներից, պատճառական հարադրավոր բարդությունները պարտադիր կերպով երկբաղադրիչ են։

2. Չուգաբայական հարադրություններ են ձևավորվում ելակետային վիճակում քերականորեն համագոր բաղադրիչներով, մինչդեռ պատճառական հարադրավորների բաղադրիչների միջև նախապես եղել է ստո-

բաղասական հարաբերություն:

3. Չուգաբայական հարադրությունների բաղադրիչները կա՛մ համակատար գործողություններ են անվանում, կա՛մ մեկը մյուսին հաջորդող, մինչդեռ պատճառական հարադրավորների բաղադրիչների միջև բացառվում է հաջորդական գործողությունների կապը:

4. Չուգաբայական հարադրությունների բաղադրիչներն իմաստային սերտ առնչությամբ աչքի ընկնող բառային միավորներ են (դրանք կազմ-վում են համանիշ, հոմանիշ, հականիշ կամ մեկը մյուսին հաջորդող երկու կամ ավելի բայերի հարադրումով), մինչդեռ պատճառական հարադրավորների բաղադրիչների միջև իմաստային որևէ առնչություն չկա:

5. Չուգաբայական հարադրությունների մեջ կատարվում է երկու գործողությունների համադրում՝ իբրև մեկ ընդհանուր գործողություն, մինչդեռ պատճառական հարադրավոր բայերի միջոցով անվանվում է միջնորդավորված, մեկ ուրիշ առարկայով պատճառաբանված գործողություն (բաղադրիչներից մեկի միջոցով անվանվում է մյուսի քերականորեն փոփոխված իմաստը):

6. Չուգաբայությունների կազմում պարտադիր կերպով կարևորվում և նույնությամբ պահպանվում է բաղադրիչներից մեկի բայիմաստն ու քերականական հատկանիշները, մինչդեռ պատճառական բարդությունների մեջ երկու բաղադրիչների իմաստներն էլ կարևոր են: Ասվածն ինքնին նշանակում է, որ չուգաբայական հարադրությունների միջոցով արտահայտված գործողության գաղափարը խոսքի մեջ կարելի է անվանել նաև բաղադրիչ բայերից մեկով (սովորաբար՝ շարադասորեն վերջինով), մինչդեռ պատճառական հարադրության որևէ բաղադրիչով հնարավոր չէ անվանել ողջ բարդության միջոցով արտահայտված քերականական գաղափարը՝ առանց այն խաթարելու:

7. Չուգաբայական հարադրությունները ոչ թե բնությամբ են բարդ բառեր, այլ միայն դրությամբ: Այս կամ այն գործողությունն անվանելու համար չուգաբայության կիրառումը ոչ թե պարտադիր է, այլ պատահական՝ կախված առաջին հերթին խոսքի հեղինակից: Այլ կերպ ասած՝ չու-

գաբայական հարադրությունների կիրառությունը ավելի շատ ոճական հնարանք է, մինչդեռ պատճառական հարադրավորումներին՝ որոշակի քերականական իմաստի արտահայտման անհրաժեշտություն:

8. Զուգաբայական հարադրությունների բաղադրիչների տեղերը փոխելուց կարող է փոխվել նաև բարդության իմաստային քերականական կողմը, հետևաբար նաև կապակցելիության հնարավորությունը, մինչդեռ պատճառականների բաղադրիչների տեղերը փոխելուց բարդությունը նշված կարգի փոփոխությունների չի ենթարկվում:

Պատճառական հարադրավոր բարդություններն արտահայտվում են $S_v^{(0)}-S_v$ կադապարով, որտեղ $S_v^{(0)}$ բաղադրիչի գործառնությով հանդես են գալիս *տալ* բայի դիմավոր կամ անդեմ ձևեր, իսկ S_v բաղադրիչի գործառնությով՝ անորոշ դերբայներ: Օրինակ՝ Եւ *եստու* կազմ *բերել* զամենայն փայտ ողջակիզացն յիրաքանչիւր ժամանակս (Նէեմի, ԺԳ, 31): Եւ զուղխըս փափկութեան քոյ *եստուր ըմպել* (Ագաթ., 59): Ամենայն ազգաց *եստուն վերանալ* առհասարակ յարքայութիւնն (Ագաթ., 347) և այլն:

Ալ.Մարգարյանը գերազանցապես տեղ է տվել հարադրավոր պատճառական բայերի կազմության պարտադիր բաղադրիչներից մեկի՝ *տալ* բայի իմաստային-գործառնական փոփոխություններին²⁹⁹: Նա նշում է, որ «հայերենի երկարատև զարգացման ընթացքում»³⁰⁰ այդ փոփոխությունները տվել են նոր որակ, որի արդյունքում *տալ* բայի դիմավոր կամ անդեմ ձևերի և անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչի հարադրումով ձևավորված կապակցությունները դարձել են «գործողության պատճառականություն արտահայտող վերլուծական բայական-բառույթային միավորներ»³⁰¹: Պատճառական հարադրավոր բայերի առաջացման գործընթացի մեջ Ալ.Մարգարյանը կարևորում է *տալ* բայի դերը՝ նշելով. «Պետք է ենթադրել, որ անորոշի հետ նախադաս գործածվելով՝ *տալ* բայը բավական երկար ժամանակ հանդես է եկել իր բուն բայական նշանակությամբ և երկար ժամանակի ընթացքում միայն աստիճանաբար զրկվելով դրանից՝ ձեռք է բերել մի նոր իմաստ՝ դառնալով անորոշի գործողության պատճառականություն հաղորդող բաղադրիչ»³⁰²:

5-րդ դ. գրավոր աղբյուրներում վկայված որոշ փաստերի ուսումնասիրությունը հնարավորություն են ընձեռում ցույց տալու այն ուղին, որով ընթացել է *տալ* բայով հարադրված պատճառականների առաջացումը:

Մեր պատկերացմամբ, *տալ* բայի հարադրությամբ պատճառականներ են առաջացել՝ պայմանավորված *տալ հրաման* (կամ *հրաման տալ*) հարադրական բայի արտահայտության պլանում կատարված փոփոխությամբ³⁰³:

Գրաբարում *տալ հրաման* հարադրական բայն աչքի է ընկնում գործառական մեծ հաճախականությամբ³⁰⁴ և սովորաբար պահանջում է մի անորոշ դերբայ (օրինակ՝ *տամ հրաման ածել*): Սակայն արդեն 5-րդ դարում կան շարահյուսական բազմաթիվ կառույցներ, որոնցում թեև *հրաման տալ* բարդության հարադիրը բացակայում է, սակայն որոշակիորեն ենթադրվում է այդ կառույցների բովանդակության պլանում³⁰⁵: Հմմտ. *Հրաման ետ* թագաւորն *ածել* գնոսա (Դան., Ա., 18): Որոց իւրն *հրաման տուեալ էր մտանել* ի մարդիկ (Եզնիկ, 150): Եւ եպիսկոպոսացն *հրաման տայր ունել* զիւրաքանչիւր իշխանութիւնս (Եղիշէ, 130): *Հրաման տուեալ* Նիխորոյ զամենայն արս *ի ներքս թողուլ* (Փարպ., 165): *Ետ հրաման քերել* զկողս նորա երկաթի քերչօք (Ագաթ., 65) և *Ես (հրաման-Գ.Խ.) տաց ածել* քեզ ուլ այծեաց ի խաշանց իմոց (Ծննդ., ԼԸ, 17): *Ետու (հրաման-Գ.Խ.)* գնա *ընկենուլ* ի խոր վիրապն (Ագաթ., 78): Շապուի կապէ զոտս Արշակայ շղթայիւք եւ *տայ (հրաման-Գ.Խ.) տանել* յերկիրն Խուժաստանի՝ յԱնուշ կոչեցեալ բերդն (Խոր., 300): Եւ (*հրաման-Գ.Խ.*) *ետ* թագաւորն Պարսից *տանել* ի ձեռն Սուրենայ թագ եւ պատմունան (Բուզ., 207): Հատկանշական է, որ համեմատվող երկու եզրերում բերված նախա-դասությունների բովանդակության պլանում գիտակցվում է գործողության կատարման հրաման, պահանջ, պարտադրանք³⁰⁶, սակայն առաջինների մեջ դրանք ունեն մեկ բառային արտահայտություն, մինչդեռ երկրորդների մեջ բացակայում են՝ դրանով իսկ նպաստելով նոր՝ *տալ-անորոշ դերբայ* կապակցությամբ ձևավորված բարդության առաջացմանը:

Տալ հրաման հարադրավոր բայից բացի, մեր կարծիքով, *տալ* բայով հարադրված պատճառականների առաջացման սկզբնակետերից մեկն էլ

թոյլ տալ (կամ *տալ թոյլ*) հարադրավոր բայն է, որը նույնպես աչքի է ընկնում թե՛ հաճախակի գործածությամբ և թե՛ անորոշ դերբայի հետ կապակցություն ձևավորելու գործությամբ³⁰⁷։ Օրինակ՝ *Եւ մի՛ տայք նոցա թոյլ մտանել* ի քաղաքս իւրեանց (Յեսու, Ժ, 19)։ *Չտայր թոյլ ական հատանել* (Ղուկ., ԺԲ, 39)։ *Ոչ ումեք ինչ թոյլ տայր* Մուշեղ գօրավարն Հայոց *անարգել* ինչ զնոսա (Բուգ., 159)։ *Թոյլ ետ գնալ* մարդկան ըստ կամաց իւրեանց (Ագաթ., 122)։ *Թոյլ տուք* ինձ *ողբալ* ընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց (Փարպ., 28) և այլն։

Այս դեպքում *տալ* բայի հարադրությամբ պատճառականներ են առաջանում *թոյլ* հարադրի գեղչման հետևանքով, որի իմաստը նախադասության մեջ ենթադրվում է նաև առանց բառային արտահայտության։ Օրինակ՝ Նա սաստէր ի նոսա և *ոչ տայր* (*թոյլ*-Գ.Խ.) *խօսել* նոցա (Եզնիկ, 180)։ *Չտային* (*թոյլ*-Գ.Խ.) պարսիկ վերակացուքն յոյն ումեք *ուսանել* դպրութիւն յիւրեանց մասին (Խոր., 329)։ *Ոչ տամ* (*թոյլ*-Գ.Խ.) *համբուրել* քրիստոնէից գկապանս նորա (Փարպ., 115) և այլ նախադասությունների մեջ ևս ձևավորվում է *տալ-անորոշ դերբայ* կապակցություն, որի բովանդակության պլանում գիտակցվում է գործողության կատարման թույլտվություն, հնարավորության ընձեռում և այլն։

Փաստորեն, *տալ* բայը, զրկվելով իր հարադրի (*հրաման, թոյլ*), սկսում է արտահայտել նաև վերջինիս իմաստը՝ իրեն հաջորդող անորոշ դերբայի հետ ձևավորելով մի նոր բարդություն, որն անվանում է միջնորդավորված գործողության գաղափար։ Այլ կերպ ասած՝ *տալ* բայը ծանրաբեռնվում է ևս մեկ՝ իր իսկ հարադրի (*հրաման, թոյլ*) բառիմաստով, որի կրողը հաղորդակցման շղթայում հասկանալի լինելու պատճառով այլևս չի կիրառվում³⁰⁸։

5-րդ դ. պատճառական հարադրավորների *տալ* բաղադրիչն առավել հաճախ նախադաս կիրառություն ունի³⁰⁹։ Օրինակ՝ *Ոչ տամ* նոցա գիտել և ոչ տեսանել (Նէեմի, Դ, 11) և այլն։ Սակայն հենց նույն ժամանակահատվածում հատկապես ժողովրդախոսակցական լեզվին տուրք տվող պատմիչների երկերում, երբեմն էլ թարգմանական գրականության մեջ

վկայված են «*տալ-անորոշ դերբայ*» կապակցության *տալ* բաղադրիչի վերջադաս կիրառության բազմաթիվ դեպքեր, որոնց բովանդակության պլանում «*հրաման*», «*թոյր*», «*գորութիւն*» և սրանց հարակից այլ իմաստներն արդեն այլևս չեն գիտակցվում: Օրինակ՝ Չոսկերսն ի գերեզմանէն *հանել տալին* և ի գետ *արկանել* (Թուրք, 202): Իսկ ամպն երկոցուն գերկոսին *մատնուակել տալ* (Ագաթ., 278): Չոր ինչ արժանն է, *շնորհել տամ* ձեզ (Փարպ., 147): *Խնայել տալ* քեզ յամենայն (Իմաստ., ԺԲ, 16) և այլն:

Հետագա դարերում *տալ* բայի դիմավոր ձևերի վերջադաս կիրառությունը կայունացել և այդպես էլ ժառանգվել է արդի հայերենին: Օրինակ՝ Հա՛մ *ծեծել տվիր*, հա՛մ ըշտրափդ առ...³¹⁰: *Երագել է տալիս* մութը, իսկ երագել մենք չենք ուզում³¹¹ և այլն:

Անկասկած, *տալ* բայով պատճառական հարադրավոր բարդությունների առաջացման գործընթացն սկսվել է այն կապակցությունների մեջ, որոնցում «*տալ-անորոշ դերբայ*» կապակցության բաղադրիչները ընդմիջված չէին նախադասության այլ անդամներով:

Ու թեև գրավոր վկայությունների մեջ հարադրավոր պատճառականների բաղադրիչները երբեմն տարանջատվել էին տվյալ խոսքը կազմող այլ անդամներով, սակայն այդ տարանջատումը կատարվում էր միևնույն շարույթի սահմաններում, որտեղ չէր խաթարվում միջնորդավորված գործողության գաղափարը: Օրինակ՝ Այլ ժանաւարս *տայր* նոցա *կազմել* ամենեցուն (Բուզ., 159): *Տաղ* ձեզ *տեսանել* զաշխարհն Հայոց և զնոտանիս ձեր (Փարպ., 90) և այլն: Հակառակ դեպքում *տալ* բայը և *անորոշ դերբայ*ը հանդես են բերում ոչ թե բարդության բաղադրիչների, այլ շարահյուսական առանձին միավորների գործառույթ: Այսպես՝ «*Ձի ես արժանի եղեց պահել զաւանդութիւն լուսաւորութեան հաւատոցս, զոր ետուր ինձ՝ ճանաչել զքեզ*» (Ղևտ., Ժ, 17) նախադասության *ճանաչել*-ը ոչ թե բարդության բաղադրիչ է, այլ *քեզ*-ի հետ կազմել է դերբայական դարձված և կատարում է նպատակի պարագայի շարահյուսական գործառույթ:

$S_v^{(n)}$ - S_v կադապարով արտահայտվող պատճառական հարադրավոր բարդությունների $S_v^{(n)}$ բաղադրիչի արտահայտության պլանն է կայուն, իսկ բովանդակության պլանը՝ փոփոխվող (միշտ արտահայտվում է *տալ* բայի դիմավոր կամ անդեմ ձևերով), մինչդեռ S_v բաղադրիչի բովանդակության պլանն է կայուն, իսկ արտահայտության պլանը՝ փոփոխվող (միշտ արտահայտվում է տարբեր բայերի անորոշ դերբայով): Օրինակ՝ *տայ բերել* (Խոր., 122), *տայր առնել* (Ագաթ., 219), *ետ բերել* (Ա Մակ., Ժ, 15), *տացե տեսանել* (Ագաթ., 103), *տայցե չարչարել* (Եզնիկ, 125), *մի՛ տար հանգիստ առնուլ* (Փարպ., 149): Սկսաւ բաշխել մոգս ի տունս նախարարացն.... և բռնաբար կնքաւոր մարդկանն *տալ ուտել* միս յագածոյ (Եղիշէ, 64): Վասն *ոչ տալ*³¹² մեզ բազմաց *ծաղրել* (Խոր., 56): Բայց սակայն *արձակել տալ* ոչ կարացին (Բուզ., 75): Այսպես նաև՝ *տալ ուտել* (Դուկ., Ը, 56), *տուայտել տալ* (Սիր., Դ, 1), *տալ խօսել* (Ագաթ., 224) և այլն:

Նկատենք, որ $S_v^{(n)}$ - S_v կադապարով արտահայտվող վերլուծական բայերի դիմավոր կամ անդեմ լինելը ուղղակիորեն կախված է *տալ* բայով արտահայտված բաղադրիչի դիմավոր կամ անդեմ լինելուց:

$S_v^{(n)}$ - S_v կադապարով արտահայտվող հարադրությունների մեջ հանդես են գալիս *տալ* բայի և՛ դրական, և՛ ժխտական խոնարհված ձևեր. *ոչ ետ դառնալ* (Ա Թագ., ԺԸ, 2), *չետ յիշել* (Բուզ., 227), *ոչ տան ձեռն արկանել* (Եղիշէ, 62), *չտայ լինել* (Եզնիկ, 20), *ետ ածել* (Ագաթ., 452), *տայ սպանանել* (Խոր., 286), *տայր մորթել* (Բուզ., 157), *չտացե ուշաբերել* (Եզնիկ, 74), *չետ ոգի առնուլ* (Եզնիկ, 90) և այլն:

Պատճառական հարադրավոր բայերի մեջ *տալ* բայը հարադրվում է կազմությամբ ոչ միայն պարզ, այլ նաև հարադրավոր բայերի անորոշ դերբայների հետ: Ընդ որում, մի դեպքում՝ հարադրավոր բարդությունը հաջորդում է *տալ* բայի դիմավոր ձևերին, մյուս դեպքում՝ նրա բաղադրիչները տարանջատվում են *տալ* բայի դիմավոր ձևով: Հմնտ. *տային ի միտ առնուլ* (Ա Եզր., Թ, 49), *տայ ոյժ առնել* (Բ Օրեն., Ը, 18), *ոչ ինչ տամ վնաս առնել* (Եղիշէ, 75), *չետ մօտ երթալ* (Փարպ., 117), *ոչ տայր դուլ*

առնել (Փարպ., 148), *չեստ ոգի կլանել* (Եզնիկ, 90) և *ծաղր ետուք առնել* (Փարպ., 27), *երկիր ետ պագանել* (Եղիշե, 85), *յանձն ետուք առնուլ* (Փարպ., 83) և այլն:

Տալ բայի հարադրությամբ նույնիսկ գուգաբայեր են կիրառվում, ինչպես՝ *Եւ ոչ որ տայր ժամանել յառնել* Վարդանայ (Բուզ., 109): *Ետ ածել ունել* զնա առ ի դուրս սենեկին (Ազաթ., 100) և այլն:

Պատճառական կառույցներում *տալ* բայի դիմավոր ձևերի հետ որոշ դեպքերում հարադրվում են արդեն իսկ համադրական եղանակով ձևավորված պատճառական բայերի անորոշ դերբայներ. *տամ խաղացուցանել* (Եղիշե, 44), *տամ անցուցանել* (Եղիշե, 48), *տայր երեւեցուցանել* (Փարպ., 133), *տայ կորուսանել* (Փարպ., 155), *տային հասուցանել* (Փարպ., 104) և այլն: Նկատելի է, որ այս կարգի կապակցությունների մեջ³¹³ ոչ միայն պատճառական գործողության իմաստն է ցայտուն, այլև սրանց շարահյուսական կապակցելիության հնարավորությունն է մեծ:

Պատճառական բայերով արտահայտված բարդ համադասական կառույցների մեջ սովորաբար *տալ* բայն անորոշ դերբայի հետ հարադրվում է նախադաս նախադասության կազմում, վերջադաս նախադասության (կամ նախադասությունների) մեջ այն գեղչվում է: Օրինակ՝ *Եւ զբազում տեսարս տայր մորթել և լնուլ խոտով և կանգնել ի վերայ պարսպացն* (Բուզ., 157): *Զոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել* (Փարպ., 202): *Դու գերկոսեանն զայդ ի քում անձին լիով ետուր տեսանել* ամենայն Արեաց աշխարհի և *ճանաչել* (Փարպ., 165): *Տացէ տեսանել* զնա աչաց իմոց և *ուրախանալ* (Փարպ., 120): Ո՞ւր *տայր* ինձ *գրել* զբանս իմ և *հանել* զնոսա ի մատեան յաւիտեան (Յովբ, ԺԹ, 23):

Ըստ *տալ* բայի հետ հարադրվող անորոշ դերբայների սեռային պատկանելության՝ պատճառական բայերը բաժանվում են երկու խմբի՝

1. *չեզոք սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականներ*, որոնցում *տալ* բայի հետ հարադրվում են *անցանել*, *ապրել* (այստեղ՝ «փրկվել»), *բարբառել*, *բարձրանալ*, *բնակիմ*, *գալ*, *գնալ*, *դադարել*, *դլալ*, *դողալ*, *դուլ առնուլ*, *ելանել*, *երելիմ*, *գորանալ*, *ժամանել*, *իջանել*,

լինիմ, խնայել, կալ, կեալ, հանգիստ առնուլ, հանգչիմ, ձեռն արկանել, մեռանիմ, մօտ երթալ, մօտիմ, յառնել, նստիմ, շնալ, շրջիմ, ուշաբերիմ, պատերազմիմ, երկիր պագանել և այլ բայեր: Օրինակ՝ տամ կորնչել (Փարպ., 114), տամ ժամանել (Բուզ., 109), տացել լիճել (Բ Օրեն., Ե, 29), տամ կալ (Թուղթ, 92), տային ելանել (Եզնիկ, 218), տայ վերանալ (Եզնիկ, 192), տամ գնալ (Փարպ., 143), տայ մեռանել (Փարպ., 100), տամ կեալ (Փարպ., 99) և այլն:

Մեր հաշվումներով՝ գրաբարում «տալ-չեզոք սեռի անորոշ դերբայ» կապակցությամբ արտահայտված պատճառականները ներգործական սեռի բայերով ձևավորվածներին զիջում են թե՛ բաղադրիչ անորոշ դերբայների թվային (շուրջ 4 տասնյակ), թե՛ դրանցով ձևավորված պատճառականների՝ գրավոր աղբյուրների մեջ գործառական տեսանկյունից:

Չեզոք սեռի անորոշ դերբայների հարադրությամբ ձևավորված պատճառականների մեծ մասն աչքի է ընկնում բացառիկ կիրառությամբ, և միայն մի քանիսն ունեն երկուսից ավելի կիրառության դեպքեր:

2. Ներգործական սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականներ, որոնցում տալ բայի հետ հարադրվում են այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ ածել, անուանել, առնել, առնուլ, ասել, ատել, արգելուլ, արկանել, արձակել, բանալ, ի բաց ածել, բերել, գիտել, գործել, գտանել, գրել, գերծանել, ընթեռնուլ, ընկենուլ, ըմպել, քարզմանել, ժառանգել, լսել, խորհիմ, խօսիմ, ծաղրել, կազմել, կախել, կանգնել, կապել, կատարել, կոչել, կոտորել, հանել, հեղուլ, ճանաչել, մերժել, ի միտ առնուլ, մորթել, յիշել, նեղել, նկարել, նորոգել, շինել, ունիմ, ուտել, չարչարել, պահել, պաշտել, պնդել, սաղմոսել, սերել, սպանանել, տանիմ, տեսանել, քարշել և այլն: Օրինակ՝ տաց տանել (Գործ., ԻԵ, 21), ետուր իմանալ (Նէեմի, Թ, 2), տան ըմպել (Ազաթ., 296), տայ ածել (Խոր., 44):

Հարկ է նշել, որ տալ բայի հարադրությամբ հիմնականում կիրառվում են ներգործական սեռի այնպիսի բայերի անորոշ դերբայները, որոնցից – ուցան – ձևությամբ ածանցյալ պատճառականներ չեն սերվում: Այդ բայերից են՝ ածել, բերել, կազմել, կոտորել, հանել, դնել, սպանանել,

տանհիմ և այլն:

Ներգործական սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականները թե՛ բաղադրիչ անորոշ դերբայների թվային և թե՛ վերջիններով ձևավորված պատճառականների՝ գրավոր աղբյուրների մեջ գործական տեսանկյունից լրիվ հակառակ պատկեր են ներկայացնում: Այս հանգամանքը վկայում է «*տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ*» կապակցությամբ արտահայտված պատճառական բայերի՝ գրաբարին առավել հարազատ լինելու մասին: Ասվածի օգտին է խոսում և այն փաստը, որ *տալ* բայի հետ ավելի հաճախ հարադրվում են ակտիվ բառապաշարի մի շարք ներգործականներ, ինչպես՝ *ածել, ասել, բերել, գիտել, ըմպել, ուտել, տանհիմ, տեսանել* և այլն:

Թեև 5-րդ դարում «*տալ-չեզոք սեռի անորոշ դերբայ*» կապակցությամբ ձևավորված բարդությունները *տալ* բաղադրիչի շնորհիվ արդեն ձեռք են բերել միջնորդավորված գործողության գաղափար, սակայն դեռևս չեն անվանում անցողական սեռի գործողություն³¹⁴: Բանն այն է, որ *տալ* բայն ինքը խնդրառությամբ երկարժույթ է. այն կարող է պահանջել մի սեռի և մի բնության խնդիր: Օրինակ՝ Ոչ տամ *գփառս* իմ *այլում* (Եղիշե, 109): *Ջգունդն* առաջին տայր *ի ձեռն իշխանին* Արծրունեաց (Եղիշե, 116) և այլն: Այն դեպքում, երբ *տալ* բայի սեռի խնդիրն արտահայտված է ոչ թե առարկա անվանող որևէ բառով, այլ գործողություն անվանող անորոշ դերբայով, տեղի է ունենում *տալ* բայի դիմավոր կամ անդեմ ձևի և անորոշ դերբայի հարադրում, որտեղ *տալ* բայն իր իսկ պահանջած սեռի խնդրի՝ անորոշ դերբայի հետ դառնում է բառային մեկ ամբողջություն³¹⁵: Եթե *տալ* բայի հետ բառային ամբողջություն է կազմում չեզոք սեռի բայի անորոշ դերբայը, ապա ողջ բարդությանը վերագրվում է չեզոք սեռի քերականական կարգ, իսկ եթե *տալ* բայի հետ հարադրվում է ներգործական սեռի բայի անորոշ դերբայ, ապա արդյունքում առաջանում է ներգործական սեռի հարադրավոր պատճառական բարդություն: Թե՛ չեզոք, թե՛ ներգործական սեռի պատճառական հարադրավոր բայերը մյուս վերլուծական բայերից տարբերվում են, նախ՝ կազմության առանձնահատկությամբ, և ապա՝ նրա-

նով, որ արտահայտում են միջնորդավորված գործողության գաղափար:

Պատճառական հարադրավոր բայերի շարքում առանձնանում են ձևախմաստային առնչություն ունեցող զույգեր: Այս դեպքում կարևոր դեր են խաղում *տալ* բայի հետ հանդես եկող անորոշ դերբայների արտահայտության և բովանդակության պլանները: Ըստ ձևախմաստային փոխհարաբերության՝ պատճառական հարադրավոր բայերի շարքում հանդիպում են՝

ա) *համանիշներ*, ինչպես՝ *տամ մօտել* (Փարս., 170) և *տամ մօտերթալ* (Փարս., 117); *տամ ածել* (Փարս., 164) և *տամ քերել* (Բուգ., 139); *տամ կեալ* (Փարս., 99) և *տամ ապրել* (Բուգ., 107) և այլն:

Միաժամանակ նկատելի է, որ մի շարք պատճառական հարադրություններին զուգահեռ գրաբարում կիրառվում են դրանց համանիշ համադրական ձևերը: Նշված կարգի համանիշ զույգերը հանդիպում են կա՛մ տարբեր ժամանակաշրջանների հեղինակների, կա՛մ միևնույն ժամանակաշրջանի տարբեր հեղինակների, կա՛մ էլ որևէ հեղինակի միևնույն կամ տարբեր գործերում: Հմնտ. *տամ ապրել* (Բուգ., 107) և *ապրեցուցանել* (Բուգ., 183), *տամ ժամանել* (Բուգ., 109) և *ժամանեցուցանել* (Բուգ., 79), *տամ բարբառել* (5-րդ դար) և *բարբառեցուցանել* (10-րդ դար), *տամ հանգչել* (Թուղթ, 197) և *հանգուցանել* (Փարս., 94) և այլն:

բ) *հոմանիշներ*, ինչպես՝ *տամ բարբառել* (Փարս., 163/ և *տամ խօսել* (Թուղթ, 189); *տամ հանգչել* (Փարս., 85) և *տամ դուլ առնուլ* (Փարս., 148); *տամ կոտորել* (Ագաթ., 172), *տամ սպանանել* (Բուգ., 199) և *տամ մորթել* (Բուգ., 157) և այլն,

գ) *հականիշներ*, ինչպես՝ *տամ տանել* (Եղիշէ, 122) և *տամ քերել* (Բուգ., 139), *տամ կեալ* (Փարս., 99) և *տամ մեռանել* (Փարս., 180), *տամ հանգչել* (Թուղթ, 197) և *տամ պարապել* (Փարս., 129) և այլն:

Ինչպես գրաբարի մյուս վերլուծական բայերն են «պատմողական ոճին հատուկ» բառային միջոցներ, այնպես էլ պատճառական հարադրավոր բայերը: Ա.Մեյեն տեղին է նկատում, որ նշված տիպի բարդություններին «հաճախ դիմում են դասական հայերենի ամենաբնորոշ ներ-

կայացուցիչները...., հետևաբար Եզնիկի պես հեղինակը ավելի քիչ առիթ ունի» այդպիսի բարդություններ գործածելու, քան որևէ պատմագիր³¹⁶ :

Բ. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ

Բ.1. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ԵՆԹԱԿԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Թե՛ չեզոք և թե՛ ներգործական սեռի անորոշ դերբայներով հարադրված պատճառականները ենթակաառու են: Ասվածը միաժամանակ նշանակում է, որ նախադասության մեջ այդ բայերը կարող են կատարել պարզ ստորոգյալի³¹⁷ շարահյուսական գործառույթ՝ համաձայնության եղանակով կապակցվելով ենթակայի հետ³¹⁸: Օրինակ՝ *Նիխոր տայր ասել ցվահան* (Փարպ., 164): Եւ *տուաք մեք ածել* առ ձեզ զԳրիգորիոս (Ագաթ., 417) և այլն: Սակայն որոշ դեպքերում ենթական բառային արտահայտություն չունի, այլ լոկ ենթադրվում է տվյալ կառույցի բովանդակության պլանից: Սովորաբար ենթական զեղչվում է առաջին կամ երկրորդ դեմքով արտահայտված կամ էլ նախորդ խոսքային հատվածում նշված լինելու դեպքում: Օրինակ՝ Այլ (*դուք*–Գ.Խ.) *մի՛ տայք մեռանել* (Փարպ., 180): Ոչ միում մարդոյ (*ես*–Գ.Խ.) *ոչ տամ ապրել* (Բուզ., 107): Որպես *ինքն* կամի, *տայ բարբառել* նոցա (Փարպ., 163): *Թագաւորն* կնքէ և *տայ բերել* առ քեզ (Փարպ., 166) և այլն:

Պատճառական հարադրավոր բայերի պահանջած ենթական կազմության տեսանկյունից սահմանափակություն չի ճանաչում. կարող է լինել և՛ պարզ, և՛ բաղադրյալ: Հմմտ. *Ո՞ տացէ ինձ լսել*, եթէ ձեռն Տեառն չէր զարիւրեցուցեալ (Յովք, ԼԸ, 1) և *Ոք ի թշնամեաց* կապէր առ վտանգի և նովիմք տայր կալ (Փարպ., 92):

Պատճառական բայերի դիմավոր ձևերի հետ կապակցվող կամ ենթադրվող ենթականերն, ըստ դասային պատկանելության, հիմնականում անձնանիչ կամ անձնավորված բառեր են (գոյականներ և դերանուններ): Օրինակ՝ Անդ տայր նմա առնել զեղջիւրն օծութեան (Ագաթ., 214): *Սատանայ* ատել տայ զկարգն (Եզնիկ., 309): *Նա* ետ բերել աղ (Բուզ., 139):

Տուաք մեք քեզ գիտել (Բ Եզր., Դ. 16) և այլն:

Նշված փաստը պայմանավորված է նրանով, որ այս դեպքում արտահայտվում է միջնորդավորված, մեկի պատճառով կատարվող (կատարված կամ կատարելի) գործողություն, որի հեղինակը, նախաձեռնողը կամ միջնորդը առաջին հերթին կարող է անձ անվանող ենթական լինել: Այդ է պատճառը, որ այս կարգի վերլուծական բայերով արտահայտված կառույցներում թանձրացական կամ վերացական առարկա անվանող ենթակաները չափազանց հազվադեպ են: Ահավասիկ՝ *Իրաւունքն* ոչ ետուն կեալ (Գործ., ԻԸ, 4): *Տիրելոք* քո ամենեցուն խնայել տայ քեզ յամենայն (Իմաստ., ԺԲ, 16):

Բ.2. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ՍՏՈՐՈԳԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Տեսականորեն պատճառական հարադրավորներից ստորոգառությանը կարող են բնութագրվել «*տալ-էական բայի անորոշ դերբայ*» մասնակադապարով արտահայտված բարդությունները: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ էական բայերից (*եմ, լինիմ*) *տալ* բայի հարադրությանը ստորոգառու պատճառական է ձևավորում միայն *լինիմ* բայի անորոշ դերբայը. *Չտայ լինել հայր* որդւոց այնմ (Եզնիկ, 20): *Չետուն լինել* նմա արժանի թողութեան (Փարպ., 140): Դու ետուր խոտաճարակ լինել խիստ և անօրէն թագաւորին բաբելացւոց (Ագաթ., 98): *Եմ* բայը ստորոգառու չի կարող դառնալ, քանի որ չունի անորոշ դերբայ (պակասավոր է):

Բ.3. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Խնդրառական արժույթի տեսանկյունից հարադրավոր պատճառական բայերը միատարր չեն: Պատճառն այն է, որ դրանք միատարր չեն նաև իմաստային և քերականական տեսանկյուններից:

1. Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «*տալ-չեզոք սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով ձևավորված պատճառականների

միջոցով արտահայտվում է չեզոք սեռի քերականական իմաստ: Օրինակ՝ Ոչ *ես* մնա *դառնալ* ի տուն հօր իւրոյ (ԱԹագ., ԺԸ, 21): Բացառվում է, որ նշված մասնակադապարով արտահայտված պատճառականները խընդրառությամբ արժութագուրկ լինեն: Դրանց հիմնական մասը խնդրառությամբ միարժույթ է, սակայն հանդիպում են նաև մի շարք երկարժույթ բարդություններ: Այս կապակցությամբ նկատելի են հետևյալ օրինաչափությունները.

ա) եթե *տալ* բայի հետ հարադրված չեզոք սեռի անորոշ դերբայը խընդրառությամբ արժութագուրկ է, ապա ձևավորված բարդությունը խնդրառությամբ միարժույթ է, քանի որ այս դեպքում պահպանվում է միայն *տալ* բայի բնության խնդրառական արժույթը: Խնդրառությամբ միարժույթ բայերից են՝ *տամ գօրանալ*, *տամ հանգչել*, *տամ տուայտել*, *տամ բարբառել*, *տամ մեռանել*, *տամ յառնել*, *տամ դողալ*, *տամ շրջել*, *տամ բնակիլ*, *տամ գնալ*, *տամ գալ*, *տամ դադարել*, *տամ դլալ*, *տամ կեալ*, *տամ կալ* և այլն: Օրինակ՝ Դու ետուր խոտաճարակ լինել խիստ և անօրէն *թագաւորիմ* բաբելացոց (Ագաթ., 98): Իւր իսկ վատ գործքն չտան *դմա* կեալ (Փարպ., 99):

բ) Եթե *տալ* բայի հետ հարադրված չեզոք սեռի անորոշ դերբայը խընդրառությամբ միարժույթ է, ապա տվյալ պատճառական բարդությունը խնդրառությամբ երկարժույթ է. *տամ խնայել*, *տամ մօտ երթալ*, *տամ պատերազմել*, *տամ ձեռն արկանել*, *տամ մօտել*, *տամ երկիր պագանել* և այլն: Օրինակ՝ Տիրելդ քո ամենեցուն խնայել տայ *քեզ յամենայն* (Իմաստ., ԺԲ, 16): Նա տայ *մմա* շնալ (*ընդ օտարի*) (Մատթ., Ե, 32): Դոքա *մեզ* ոչ տան ձեռն արկանել /*յեկեղեցիսդ*/ (Եղիշէ, 62): Չտայցէ ուշաբերել նաև *ապաշխարութեան* (Եզնիկ, 74) և այլն³¹⁹:

Ինչ վերաբերում է նշված մասնակադապարի անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչի պահանջած ստորադաս անդամին, ապա այն առանց բացառության բնության խնդիի է և արտահայտվում է կա՛մ նախդրավոր կապակցությամբ, կա՛մ որևէ հոլովածևով: Օրինակ՝ Ոմանց ալկամայ երկիր ետ պագանել *արեգական* (Եղիշէ, 85): *Ինձ ի գործ* ոսկեհատին չետ ինչ մօտ երթալ (Փարպ., 117) և այլն:

2. «*Տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով ձևավորված պատճառական բարդությունները ոչ միայն միջնորդավորված գործողություն են անվանում, այլ նաև անցողական սեռի բայեր են:

Ի տարբերություն խնդրառությանը առնվազը միարժույթ «*տալ-չեզոք սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով ձևավորված պատճառականների՝ «*տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով ձևավորված պատճառական բարդությունները խնդրառությանը առնվազն երկարժույթ են: Բանն այն է, որ խնդրառությանը երկարժույթ *տալ* բայը թեև պահպանում է միայն բնության խնդիր առնելու հատկությունը (քանի որ *տալ* բայի հետ իր իսկ սեռի խնդիրը դառնում է մի բայական բարդություն), սակայն ներգործական սեռի անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչի շնորհիվ տվյալ բարդությունն ըստ խնդրառության դառնում է առնվազն երկարժույթ: *Տալ* բաղադրիչը պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում է միայն բնության խնդիր, իսկ ներգործական սեռի անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչը՝ առնվազը մի սեռի խնդիր: Օրինակ՝ Տալ գիտել *նոցա* զիր ամենայն Արեաց ուժով ի վերայ Աթթադին *զղիմեցումն* (Փարպ., 146): Ետուր *մեզ* գտանել *շնորհս* (Ա Եզր., Ը, 81): *Չանէծս* ետ *մեզ* ժառանգել (Բուզ., 103): Եւ *զայն* ետ *ձեզ* ուտել (Ղևտ., Ժ, 17) և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «*տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով արտահայտված բարդությունները խնդրառությանը լինում են երկարժույթ կամ եռարժույթ³²⁰:

«*Տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով ձևավորված պատճառական բայերի մեծ մասը խնդրառությանը երկարժույթ է. ենթադրում կամ պահանջում է մի բնության և մի սեռի խնդիր: Այդ բայերից են՝ *տամ ատել*, *տամ բանալ*, *տամ գիտել*, *տամ գտանել*, *տամ ըմպել*, *տամ ընթեռնուլ*, *տամ իշխել*, *տամ լնուլ*, *տամ կազմել*, *տամ կոտորել*, *տամ կորուսանել*, *տամ մորթել*, *տամ նեղել*, *տամ նկարել*, *տամ նորոգել*, *տամ շինել*, *տամ պահել*, *տամ սաղմոսել*, *տամ սպանանել*, *տամ տեսանել*, *տամ ունել*, *տամ ուտել*, *տամ քարշել* և այլն: Օրինակ՝ Սատանայ ատել տայ

զկարգն (Եզնիկ, 309): Ջիա՞րդ գրարիոք *արարածսն* իւր տայցէ չարչարել (Եզնիկ, 125): Ետ բանալ *զնամակն* (Փարպ., 46): Հարկաւորութեամբ յանձն ետուր առնուլ *զպաշտօնն* (Փարպ., 88): Սրով Հեփթաղին տայ կորուսանել *զԱրիս* (Փարպ., 155) և այլն:

Խնդրառությամբ եռարժույթ պատճառական բարդությունները պարտադիր կերպով ենթադրում կամ պահանջում են մի սեռի և երկու բնության խնդիր: Այդ բայերից են՝ *տամ ածել, տամ առնել, տամ առնուլ, տամ ասել, տամ արկանել, տամ բերել, տամ ի բաց ածել, տամ զերծանել, տամ քարգմանել, տամ հասուցանել, տամ մերժել, տամ տանել* և այլն: Օրինակ՝ Ետ տանել *մմա քուղթ* աղաչանաց (Խոր., 149): Ոչ տայ *մմա* Աստուած առնել *ինձ չար* (Ծննդ., ԼԱ, 7): Ջոր յառաջնումն բանսարկութեամբ ետուն մերժել *զնա* Հայր *Շապիոյ արքային ի թագաւորութենէ* Հայոց (Փարպ., 18): Տայր ասել *զթագաւորն* Յազկերտ (Փարպ., 107): Գուցէ այլ ևս մեծ *անարգանս զթագաւորէն* տացէ ասել (*ումեք*–Գ.Խ.) յատենին (Եղիշէ, 177): Ջոր ետ (*ումեք*–Գ.Խ.) քարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց *ի հայ լեզու* (Խոր., 120): Վաղվաղակի տայր տանել *ցԿամսարականն* տէրն Շիրակայ Ներսէհն *զԲազէ* զԱտրքայական Շապուհ (Փարպ., 164): Նկատելի է, որ եռարժույթ պատճառական բայերի անորոշ դերբայով արտահայտված բնության խնդիրն արտահայտվում է տրական կամ բացառական հոլովածնով կամ էլ կապական կապակցությամբ:

Ներգործական սեռի բայերով հարադրված պատճառական բարդությունների մի մասն արտահայտվում է «*տալ–համադրական պատճառական բայի անորոշ դերբայ*» մասնակադապարով³²¹, որտեղ *տալ* բայի հետ հարադրվում են թե՛ սկզբնատիպ չեզոք և թե՛ սկզբնատիպ ներգործական համադրական պատճառական բայեր: Դրանցից են՝ *անցուցանել, երևեցուցանել, խաղացուցանել, կորուսանել, հասուցանել, ուսուցանել* և այլն: Նշված մասնակադապարով արտահայտված պատճառական հարադրավորների խնդրառական արժույթը բնութագրվում է նույն հատկանիշներով, որոնք բնորոշ են «*տալ–ներգործական սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով ձևավորված պատճառական բարդություններին: Այսպես՝ խնդրառությամբ

երկարժույթ *ուսուցանել* բայով ձևավորված հարադրությունը խնդրառությանմբ եռարժույթ է. «*Ձարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն*» (Խոր., 327): Նշենք, որ բերված նախադասության բնության խնդիրներից մեկը բառային արտահայտություն չունի, քանի որ տվյալ խոսքային իրադրության մեջ գործողությունը վերագրվել է անորոշ անձի:

Խնդրառությամբ երկարժույթ և եռարժույթ պատճառական բարդությունների պահանջած սեռի խնդրի արտահայտության հիմնական միջոցը հայցական հոլովն է³²²: Օրինակ՝ Տիրիթն *գեղբայր* իւր ետ կորուսանել (Բուգ., 103): Տու՛ր *գհաշիւն* գերծանել *ի նմանէ* (Ղուկ., ԺԲ, 58):

Պատճառական հարադրավորների՝ ներգործական սեռի անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչը կարող է հայցականի փոխարեն պահանջել բացառականով արտահայտված կրող առարկա. վերջինիս բովանդակության պլանում առկա է գործողությունն իր վրա կրելու ոչ թե ամբողջականության, այլ մասնականության գաղափար: Օրինակ՝ Տաց նրմա ուտել *ի փայտէն* կենաց (Յայտ., Բ, 7): Տաց նմա ուտել *ի մանանայէն* (Յայտ., Բ, 17): Եւ երանելի կաթողիկոսն Հայոց Յոհան տայր սաղմոսել *ի սաղմոսէն* քսաներորդէ իններորդէ (Փարպ., 126):

Եռարժույթ պատճառական հարադրավորներից մի քանիսը կարող են պահանջել կրկնակի ուղիղ խնդիր: Օրինակ՝ Էջ Աստուածորդին՝ տալ անուանել *գայրն* իւր *այր* առաջին (Ագաթ., 217):

Գրաբարի ակտիվ բառապաշարի ներգործական սեռի մի շարք բայերի սեռի խնդիրն առավել քան միարժեքորեն ենթադրվելու պատճառով խոսքի մեջ հաճախ բառային արտահայտություն չունի: Այդ բայերից են՝ *ուտել*, *ըմպել*, *լսել*, *խօսիմ* և այլն: Նշված բայերի սեռի խնդիրը խոսքի մեջ կարող է բացակայել նաև այն դեպքում, երբ դրանք կիրառվում են որպես պատճառական բարդության բաղադրիչ: Օրինակ՝ Քաղցեայ, և *եւտուր* ինձ *ուտել* (Մատթ., ԻԵ, 42): Հերձ գվէմն յանապատին և *եւտ ըմպել*³²³ նոցա, որպէս ի խորոյ մեծէ (Սաղմ., ԻԷ, 15): Ծառայ, որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս *տան լսել* նմա (Եզնիկ, 61): Նա սաստէր ի նոսա և *ոչ տայր*

խօսել նոցա (Եզնիկ, 180): Տայր ընդ Սովսիսի խօսել /զինչպէտս/ (Փարպ., 189, Եզնիկ, 94):

Պատճառական հարադրությունների պահանջած սեռի խնդիրը խոսքային որոշ հատվածներում չի կիրառվում մաև նախապես հիշատակված լինելու դեպքում: Օրինակ՝ Ամ յամէ քօշակ առնէին և *տային տանել*³²⁴ նոցա ի մխիթարութիւն (Եղիշէ, 202): Ընդէ՞ր, արքա՛յ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ /զգիրս – Գ. Խ./ (Եղիշէ, 13) և այլն:

«*Տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարով ձևավորված պատճառականներն այս տեսանկյունից տարբերվում են «*տալ-չեզոք սեռի անորոշ դերբայ*» հարադրումով ձևավորված պատճառականներից: Բանն այն է, որ վերջիններիս պահանջած բնության խնդիրը կա՛մ որոշակիորեն առկա է տվյալ խոսքաշարում, կա՛մ էլ ենթադրվում է տրվյալ նախադասության բովանդակության պլանում:

Թե՛ «*տալ-չեզոք սեռի անորոշ դերբայ*» և թե՛ «*տալ-ներգործական սեռի անորոշ դերբայ*» մասնակադապարներով արտահայտված պատճառական հարադրավոր բայերի *տալ* բաղադրիչի կողմից պարտադիր կերպով պահանջվող կամ ենթադրվող բնության խնդրի արտահայտության բուն միջոցը տրական հոլովածն է: Օրինակ՝ Տացէ *ձեզ* գնոյն խորիել (Հոովմ., ԺԵ, 5): Օրհնէր զԱստուած, որ տայրն խոսել *ամբարապետին* (Փարպ., 96): *Նմին* իսկ ետուն կատարել զաղօթսն (Եղիշէ, 150): Ետ *մմա* շինել տուն զանձու ի գաւթի տան Տեառն (Նէնմի, ԺԳ, 7): Նոյնպէս ետ և *որդոնց* ունել կեանս (Յովհ., Ե, 26): Եւ զայն ետ *ձեզ* ուտել (Գևտ., Ժ, 15): Նոյնպէս և զՎաղինակ տայ *Արշակայ* սպանանել (Խոր., 286): Եւ ամենեկին ոչ տային դլալ և դադարել *նոցա*³²⁵ (Բ Մակ., ԺԷ, 2): Բայց փութա՛ և մի՛ տար *առն* հանգիստ առնուլ (Փարպ., 149): Սկսան խօսել յայն լեզուս, որպէս և Հոգին տայր բարբառել *նոցա* (Ագաթ., 248) և այլն:

Նշված բնության խնդիրը, տրականից բացի, արտահայտվում է նաև՝
ա) «*տրական հոլով-բացառական հոլով*» մասնակադապարով, որը հազվադեպ է կիրառվում: Օրինակ՝ *Միում ի մէնջ* ոչ տային ապրել (Եղիշէ, 61):

բ) *բացառական հոլովով*, որի հետ տրական հոլովով բաղադրիչը

(տվյալ նախադասության բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով) չի կիրառվել: Ահավասիկ՝ Եւ *ի սերմանէ* քումմէ մի՛ տացես ծառայել իշխանի (Ղևտ., ԺԸ, 21):

Կրավորական սեռի հարադրավոր բայերի խնդրառական արժույթի հետ կապված նշեցինք, որ դրանցով ձևավորված կառույցների մեջ բայ-ստորոգյալի կողմից պահանջվող կամ ենթադրվող բնության խնդիրը ոչ կարևոր կամ անհայտ լինելու դեպքում չի հիշատակվում: Օրինակ՝ *Ի գերութիւն վարեցաւ Սեդեկիայ* (Խոր., 360): Հակառակ դեպքում, եթե հայտնի է կամ կարևոր, այն արտահայտվում է որպես կրավորական կառույցի ներգործող անուղղակի խնդիր: Օրինակ՝ *Ի մտերմացն Շապիոյ դեղակուր եղեալ՝ մեռանի* (Խոր., 235): Համանման երևույթ է նկատվում նաև պատճառական հարադրավոր բայերով ձևավորված կառույցների մեջ: Վերջիններիս ուսումնասիրությունից պարզվում է, որ այս դեպքում էլ հաճախ չեն հիշատակվում պատճառական բայ-ստորոգյալների կողմից պահանջվող կամ ենթադրվող բնության խնդիրները: Օրինակ՝ *Ձոր ետ քարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու* (Խոր., 120): *Գուցէ այլ եւս մեծ անարգանս զթագաւորէն տացէ ասել յատենին* (Եղիշէ, 177) և այլն:

Թեև որոշ նախադասությունների մեջ *տալ* բայի պահանջած բնության խնդիրը բառային արտահայտություն չունի, սակայն այն ենթադրվում է այդ նախադասությունների բովանդակության պլանից, և հարկ եղած դեպքում կարելի է վերականգնել: Օրինակ՝ Ապշեցոյց, չետ (*իմծ-Գ.Խ.*) յիշել (Բուզ., 227): Չսոյն և սպարապետին Մանուէլի սոյնպէս ետ տանել (*ի ծենն Սուրենայ-Գ.Խ.*) զթագաւորական պատմունճանն (Բուզ., 207): Այլ մի՛ տայք մեռանել /*ի գատենչին*/ (Փարպ., 180): Բայց եթէ լաւագոյնք ևս և քաջք չերևին, այլ ի խոնարի սակաւ մի և նուազ, չտայի երևել /*նոցա-Գ.Խ.*/ (Փարպ., 137): Եւ կապեալ՝ տայր պահել զգուշութեամբ (Փարպ., 135): Այլ ստիպով հասեալ գունդն Պարսից՝ յիրաքանչիւր ոչ տային պարապել (Փարպ., 129) և այլն:

Խոսքային որոշ հատվածներում տրականով արտահայտվող բնութ-

յան խնդիրը ոչ միայն բառային արտահայտություն չունի, այլև չի ենթադրվում այդ նախադասությունների բովանդակության պլանում ևս, ուստի հնարավոր չէ որոշակիորեն վերականգնել: Այս կարգի նախադասությունների մեջ գործողության պասիվ կատարողները մղվում են երկրորդ պլան, և գործողությունը ենթադրաբար վերագրվում է անորոշ անձի կամ անձանց: Այսպես՝ քեւ «*Մին կճեայ կանգնել տայր յԵդեսիայ*» (Խոր., 159) նախադասության բովանդակության պլանից կարելի է ենթադրել, որ միջնորդավորված գործողության հեղինակները շինարարներ են եղել, այնուամենայնիվ անհնար է ենթադրել, թե որոշակիորեն ու՛մ է հանձնարարվել կատարել «*կանգնել*» գործողությունը: Նշված տիպի նախադասությունների մեջ խոսքի հեղինակը ոճական հնարանք է ստեղծում շրջանցելու կա՛մ իմացած, բայց ոչ կարևոր, կա՛մ չիմացած տեղեկությունը: Օրինակ՝ Եւ կտրեալ գերկոցունց գականջսն՝ ետուն տանել յԱսորեստան (Փարպ., 106): —Ձքոյրդ իմ,— ասէ,— և զքեռորդիդ ի բա՛ց տուր ածել (Եղիշէ, 198): Եւ ստիպով յիրաքանչիր աշխարհ տային հասուցանել վաղվադակի (Փարպ., 104):

Պատահական չէ, որ նշված տիպի նախադասություններին հաճախ հաջորդում են արդեն անորոշ–դիմավոր միակազմ կառույցներ: Օրինակ՝ «*Ետ քարշել չարագոյն քան զառաջինսն. եւ այնչափ սաստիկ քարշեցին, մինչ բազմաց կարծիք եղեն, թէ մեռան*» (Եղիշէ, 186) բարդ կառույցի «*և այնչափ սաստիկ քարշեցին*»-ը անորոշ–դիմավոր միակազմ է, քանի որ դրան նախորդող նախադասության բովանդակությունից հնարավոր չէ ենթադրել, թե ովքեր են կատարել «*քարշել*» գործողությունը:

Հարկ է նշել, որ այս շարքի անորոշ–դիմավոր նախադասությունների մեջ արտահայտված գործողությունը ենթադրաբար կարելի է վերագրել ոչ միայն մեկից ավելի անորոշ անձանց, այլև մույնիսկ մեկ անորոշ անձի: Օրինակ՝ Ետ կապել զնա ձեռս յետս (Ագաթ., 39): Ջոր գանիւ տայր նեղել հանապազօր (Փարպ., 80): Ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղն ճերմական (Բուզ., 159) և այլն:

Որոշ պատճառական կառույցներ կազմության տեսանկյունից ինք-

նատիպ են այնքանով, որ սրանցում միանգամից զեղչված են կամ ընդհանրապես բացակայում են և՛ սեռի, և՛ բնության խնդիրները. Զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, *մինչեւ ետ սպանանել* (Բուգ., 199): Զայս իբրև լուաւ դահճապետն, տրտմեալ բարկացաւ ի վերայ նոցա: *Ետ քարշել չարագոյն քան զառաջինսն* (Եղիշէ, 185-186): Տայր երևեցուցանել լոյսս կրակաց բազմաց և կոճղս ծառոց զինեալս այրանմանս (Փարպ., 133): Որք գլխաւորք քրիստոնէիցն են ի Հայս, *տու՛ր կոչել*, և զան յօժարութեամբ (Եղիշէ, 128): Եւ *տայ տանել* յերկիրն Խուժաստանի՝ յԱնուշն կոչեցեալ բերդն (Խոր., 300):

Բ.4. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ

ՊԱՐԱԳԱՍՌՈՒԹՅՈՒՆԸ

1. Գրաբարում «*տալ-չեզոք սեռի բայի անորոշ դերբայ*» մասնակաղապարով արտահայտված պատճառականներից պարտադիր պարագայառությամբ աչքի են ընկնում հատկապես ընթացք և դադար անվանող անորոշ դերբայների մասնակցությամբ ձևավորված բարդությունները: Դրանց հիմնական մասը գրաբարի ակտիվ բառաշերտից է (*անցանել, գրնալ, ելանել, իջանել, հանգչիմ, մօտիմ, նստիմ, շրջիմ* և այլն) և զորություն ունի պահանջելու կամ ենթադրելու մեկ տեղի պարագա, որը սովորաբար արտահայտվում է կապական կապակցությամբ կամ վերջինիս համանիշ բացառական հոլովով: Օրինակ՝ Ընդէ՞ր բնաւ ծառայից տայք շրջել *յաշխարհի* ձերում (Փարպ., 148): Ընդ որս ոչ ետուր անցանել և Իսրայէլի (Բ Մնաց., Ի, 10): Այլ ոչ որ տայր մօտել *ի դուրս* ատենին (Փարպ., 170): Տաց *մմա* նստել *ընդ իս* յաթոռ իմ (Յայտ., Գ, 21) և այլն:

Նշված կարգի մի շարք պատճառականներ տեսականորեն կարող են պահանջել կամ ենթադրել ոչ թե մեկ, այլ երկու կամ երեք (ելակետի, անցման և վերջնակետի) տեղի պարագա, որոնցից մեկը կամ երկուսը ոչ կարևոր, անորոշ կամ, ընդհակառակը, ակնհայտորեն որոշակի լինելու պատճառով ավելի հաճախ զեղչվում են: Օրինակ՝ Ես աշխարհակորուստ արանց ողջ ոչ տայի գնալ *յաշխարհէս* Հայոց (Փարպ., 143): Տայր հրոյ

իջանել *յերկնից յերկիր* (Յայտ., ԺԳ, 13): Ոչ երբեք տային մմա ելանել *յերկինս* (Եզնիկ, 217) և այլն:

Այս դեպքում մույնպես թե՛ ելակետի, թե՛ անցման և թե՛ վերջնակետի տեղի պարագան բայ-գերադաս անդամի հետ կապակցվում է միջնորդական կառավարման եղանակով:

2. Գրաբարում «*տալ-ներգործական սեռի բայերի անորոշ դերբայ*» մասնակադապարով արտահայտված պատճառականներից պարտադիր պարագաառությամբ առանձնանում են *ածել*, *անցուցանել*, *արկանել*, *բերել*, *ընկենուլ*, *խաղացուցանել*, *մուծանել*, *տանիմ* և այլ բայեր, որոնք մույնպես գրաբարի ակտիվ բառաշերտից են և գրեթե առանց բացառության *տալ* բայի հարադրմամբ բոլոր կիրառությունների մեջ պահանջում կամ ենթադրում են տեղի պարագա: Օրինակ՝ Տու՛ր ածել *առ իս* արս աւագս Արիս (Փարպ., 164): Չոր *յիմ ձեռն* ետ ածել (Բուգ., 43): Ետ ածել ունել զնա *առ ի դուրս* սենեկին (Ագաթ., 100): Չոր ետուն *ի գանձ* Տեառն մուծանել (Յեսու, Զ, 24): Ետ արկանել խառան *ի պարանոց* նորա (Ագաթ., 100): Ետու զնա ընկենուլ *ի խոր վիրապն* (Ագաթ., 78): Տու՛ր տանել *յեօթն յեկեղեցիս* (Յայտ., Ա, 11): Գրեալ զօրէնս մոգութեան՝ տայ բերել *ի Հայս* (Փարպ., 43): Ոչ զմեր օրէնս գրել և տալ բերել *առ ձեզ* ի դէպ և պատշաճ համարեցաք (Փարպ., 46): Եւ ետ ածել զԱրշակ *զառաջև իւրով* (Բուգ., 141): Ութ հարիւր այր ետ ածել *առաջի նորա* (Բուգ., 21): Եւ *գորդիս* տոհմին Մամիկոնէից և Կամսարականաց յամուրս բերդից իշխանութեան ետ անցուցանել (Փարպ., 67) և այլն:

Նկատենք, որ նշված բայերից մի քանիսը (*անցուցանել*, *խաղացուցանել*, *տանիմ* և այլն) ի զորու են միաժամանակ պահանջելու առնվազն երկու տեղի պարագա, որոնք միմյանցից տարբերվում են նրբիմաստներով, սակայն խոսքի բովանդակության պլանում ենթադրվելու կամ ոչ կարևոր լինելու պատճառով միշտ չէ և բոլորը չէ, որ տեղ են գտնում տվյալ խոսքի արտահայտության պլանում: Օրինակ՝ *Ի Սագաստան* տամ անցուցանել *ընդ* անճանապարհ *տեղիս* (Եղիշէ, 48): Իսկ նա վաղվադակի *յարքունուստ* գիր ողորբանաց տայր տանել *առ նոսա* հրամանաւ արքունի (Եղիշէ,

132): Տու՛ր բե՛րել *անտի* հող *ի սահմանացն* Հայոց իբրև բեռինս երկուս (Բուգ., 141) և այլն:

Ներգործական սեռի բայերով հարադրված պատճառականների պահանջած տեղի պարագաները ևս գերադաս անդամի հետ կարող են կապակցվել հիմնականում միջնորդական, հազվադեպ՝ անմիջական³²⁶ կառավարման եղանակով:

Ոչ պարտադիր պարագաառությամբ գրավոր աղբյուրներում կիրառված են *գտանել*, *խօսիմ*, *տեսանել* և բազմաթիվ այլ բայեր, որոնք ևս ստորադաս անդամի հետ կապակցվում են կա՛մ անմիջական, կա՛մ միջնորդական կառավարման եղանակով: Օրինակ՝ Ես միում ունեք գկոի չըտամ տեսանել *յայսմ հետե* (Փարպ., 161): *Առ մոլեգնութեան* քինուն զինչպէտս տային խօսել (Փարպ., 189): Ջնոյն գիր մեծաւ *զգուշութեամբ* տայր տանել *ի* թագաւորանիստ *քաղաքն* կայսեր (Եղիշէ, 93): Երկիցս և երիցս անգամ գանձս սաստիկս ետուն տանել *յաշխարհն* Խայլանդրաց (Եղիշէ, 198): Տու՛ր ինձ գտանել զգթութիւնս *առաջի առնս* այսորիկ (Նէեմի, Ա, 11): Ջեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ՝ *յերկիրն* Պարսից տայր տանել (Խոր., 301):

Բ.5. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՋԱԾ ՍԵՌԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԽՍԲԵՐԸ

Ինչպես նշել ենք, գրավոր փաստերը վկայում են, որ գրաբարի հարադրավոր պատճառական բոլոր բայերի պահանջած ենթակաները դասային տեսանկյունից հիմնականում անձնանիշ են: Պատճառն այն է, որ այս բայերի միջոցով արտահայտվում է մեկին մի գործողություն կատարել տալու բայական իմաստ, իսկ այդպիսի հատկանիշ առավելապես անձերին է բնութագրական:

Ինչ վերաբերում է պատճառական հարադրավոր բայերի պահանջած սեռի և բնության խնդիրներին, ապա դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատճառական հարադրավոր բայերի պահանջով հան-

դես եկող սեռի և բնության խնդիրները դասային տեսանկյունից միատարր չեն: Պատճառն այն է, որ իմաստային տեսանկյունից միատարր չեն նաև սրանց գերադաս անդամները՝ անորոշ դերբայները: Ստացվում է այնպես, որ պատճառական հարադրավոր բայերի սեռի խնդրի դասային պատկանելությունն ուղղակիորեն կախված է *տալ* բայի հետ հարադրված անորոշ դերբայների բառային իմաստից: Այսպես.

ա) *կոչել* («կանչել»), *շնալ*, *պատերազմիմ* և այլ բայեր կարող են պահանջել միայն անձնանիշ առարկա անվանող սեռի խնդիր: Օրինակ՝ Ետ Տեր պատերազմել *որդւոցն* Ամոնայ *ի վերայ Մովսրու* (Բ Մնաց., Ի, 22)³²⁷: Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փղօք և *ըզկին* և *գորդիս* ի Խուժաստան տամ խաղացուցանել (Եղիշէ, 48) և այլն:

բ) Մի շարք պատճառականներ կարող են պահանջել միայն իրանիշ սեռի խնդիր: Այսպես՝ *բանալ*, *գրել*, *ըմպել*, *ընթեռնուլ*, *թարգմանել*, *հեղուլ*, *նորոգել*, *շինել*, *պնդել*, *ուտել* և այլ բայեր կարող են պահանջել միայն թանձրացական առարկա անվանող սեռի խնդիրներ: Օրինակ՝ Յետ վճարելոյ պատերազմին բազում *արիւն* ետ հեղուլ Վասակ (Եղիշէ, 133): Ետ պնդել *գոտս* նորա ի հրապոյրս տկաց (Ագաթ., 65) և այլն:

գ) *Գործել*, *գիտել*, *լսել*, *խօսիմ*, *խօրհիմ*, *ի միտ առնուլ* և այլ բայեր գործություն ունեն պահանջելու միայն վերացական առարկա անվանող սեռի խնդիրներ: Օրինակ՝ Պատիր խաբէութեամբ տան գործել բազում *բարիս* (Եղիշէ, 37): *Ջայս* ևս գիտել ետ մեզ (Եզնիկ, 148): *Ջնոյն համբաւ* և *պատուէր* ստեպ տայր լսել Կամսարականացն (Փարպ., 147) և այլն:

դ) *Ածել*, *առաքել*, *բերել*, *ընկենուլ*, *կախել*, *կորուսանել*, *ճանաչել*, *մերժել*, *չարչարել*, *պահել*, *տանիմ*, *տեսանել*, *ուսուցանել*, *ուտել*, *քարշել* և այլ բայեր գործություն ունեն պահանջելու տարբեր դասանիշ առարկաներ անվանող սեռի խնդիրներ: Հմմտ. Վասակ տայ տանել *գտդայսն* առ թագաւորն (Փարպ., 67) և *Ջսուրք գիրս* օրինաց....ետ տանել առ նա (Փարպ., 83): Տացէ տեսանել ինձ *գաւակ* ի Սառայէ (Տովբ., Ժ, 13) և Ոչ տացես սրբոց քում տեսանել *գապականութիւն* (Բ Մակ., ԺԵ, 10): Ետ կախել *շառաշեղս* աղի ի վերայ ողին նորա (Ագաթ., 39) և Ետ կախել *գնա* գլխիվայր (Ագաթ.,

65): Չամենայն *աւագանին* տայր բերել առ Պապ արքայն (Բուգ., 159) և Յելլաղայ առեալ *պատկերս* զԱրտեմիդեայ՝տայ բերել յաշխարհ մեր (Խոր., 122) և այլն³²⁸ :

Պատճառական հարադրավոր բայերի *տալ* բաղադրիչի պահանջած բնության խնդիրը, որպէս կանոն, անձնանիշ է՝ արտահայտված անձնանիշ գոյականներով կամ դերանուններով, հազվադեպ էլ՝ փոխանվանաբար կիրառված անձնանիշ բառերով: Օրինակ՝ Ոչ միում *մարդոյ* ոչ տամ ապրել (Բուգ., 107): Հոգին տայր բարբառել *նոցա* (Գործ., Բ, 4): Ոչ տայի կորնչել *այնպիսոյն* զանգիւտ կորուստն (Փարպ., 114): Դուք տու՛ք *դոցա* ուտել (Մատթ., ԺԴ, 16): Նա չտայ ինչ *ումեք* գործել կամ օգնել (Փարպ., 117) և այլն: *Տալ* բաղադրիչի պահանջած բնության խնդրի անձնանիշ լինելը պայմանավորված է հարադրավոր բայերի արտահայտած միջնորդավորված գործողությամբ, որի կատարման համար միջնորդ կարող են դառնալ առաջին հերթին անձինք:

Կան բացառություններ, երբ *տալ* բաղադրիչի պահանջած բնության խնդրի քերականական գործառույթով հանդես են գալիս իր անվանող առարկաների տրական հոլովածները: Օրինակ՝ Ո՞ տացէ լինել այնպէս *սրտից* նոցա (Բ Օրէն., Ե, 20): Ոչ ետուն բարձրանալ *եղջերն* (Ա Մակ., Բ, 19) և այլն: Հարկ է նշել, սակայն, որ այսպիսի կառույցները գրաբարին բնորոշ չեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրաբարի վերլուծական բայերի արտահայտության ու բովանդակության պլանների և դրանց վոխհարաբերությունների քննությունը բերում է մի շարք եզրակացությունների:

Վերլուծական բայերը բաժանվում են երեք խմբի՝ հարադրավոր բայեր, գուգաբայական հարադրություններ և պատճառական հարադրավորներ:

Հարադրավոր բայերի հիմնական մասը կառուցվածքով երկբադարիչ է՝ բադադրված հարադրից և հարադրյալից (*ճարակ տալ*), բացառիկ մասը՝ եռաբադարիչ: Վերջիններս բադադրվում են երեք լիմաստ բառերով և հիմնականում ունեն դարձվածային արժեք (*հրոյ ճարակ տալ*): Հարադրավոր բարդությունների կազմում բացառվում է երկու բայերի առկայությունը, հակառակ դեպքում արդյունքում ստացվում են ոչ թե հարադրավոր, այլ գուգաբայական կամ պատճառական հարադրություններ:

Հարադրավոր բարդությունները վերլուծական բայերի մյուս տեսակներից տարբերվում են նրանով, որ բառային ինքնուրույն միավորներ են, մինչդեռ գուգաբայական հարադրությունների մեծագույն մասը և բոլոր հարադրավոր պատճառական բայերն առ այսօր բառարանային միավորներ չեն դիտվում:

Հարադրի գործառույթով հիմնականում հանդես են գալիս անկախ գործածվող բազմաթիվ բառեր՝ և վերջիններիս թեք ձևերը: Դրանցից բացի՝ հարադրի գործառույթ են կատարում նաև կազմությամբ պարզ և բարդ այնպիսի միավորներ, որոնք թեև գրաբարի բառապաշարում դիտվում են անկախ բառեր, սակայն չունեն բառը բնութագրող կարևոր հատկանիշներից մեկը՝ անկախ գործածություն:

Հարադիրների մեծագույն մասը գրաբարում ունի նախադաս կիրառություն, սակայն սահմանափակ թվով հարադրավոր բայերի մեջ՝ ընդհանրապես, իսկ մի շարք բայերի մեջ էլ միայն խոսքի մեջ հարադիրները գրավում են վերջադաս դիրք:

Ըստ մեր հաշվարկների՝ հարադրյալների թիվն անցնում է 150-ից,

սակայն դրանցից գործառական ակտիվությամբ և կապակցելիության մեծ հնարավորություններով առանձնանում են շուրջ երկու տասնյակ բայեր, որոնք գրաբարի բառապաշարի գործուն շերտից են, և որոնց անմիջական մասնակցությամբ ձևավորվում է բայական հարադրությունների մեծագույն մասը:

Հարադրավոր բայերի կազմում հարադրյալի դերով հանդես են գալիս ներգործական կամ չեզոք սեռի բայեր, որոնցում նշված հարադրյալները ոչ բոլոր դեպքերում են նույնությամբ պահպանում իրենց սեռի քերականական իմաստը և այն փոխանցում ողջ բարդությանը:

Հարադրյալների օգնությամբ ձևավորվում են ոչ միայն ներգործական ու չեզոք, այլ նաև կրավորական սեռի բարդություններ:

Չեզոք սեռի հարադրյալները բարդությունների մեջ գերազանցապես պահպանում են իրենց սեռի քերականական իմաստը, սակայն սրանց մասնակցությամբ ձևավորվում են նաև կրավորական սեռի հարադրավոր բայեր:

Ներգործական սեռի հարադրյալների մասնակցությամբ ձևավորվում են ոչ միայն ներգործական, այլև չեզոք սեռի բարդություններ: Վերջիններիս մեծ մասի հարադիրը նախապես եղել է հարադրյալի ուղիղ խնդիրը:

Հարադրավոր բայերի շարքում կրավորական սեռի քերականական իմաստը մի դեպքում՝ արտահայտվում է բառային ինքնություն միավորների միջոցով, երկրորդ դեպքում՝ ներգործական սեռի հարադրավոր բայերի՝ կրավորաձև խոնարհման ճանապարհով, իսկ երրորդ դեպքում (եթե բայը հասարակ է)՝ նախադասության մեջ առկա ներգործող սեռի խնդրի օժանդակությամբ:

Ջուգարայական հարադրությունների հիմնական մասը երկբադարիչ է, սակայն կան նաև եռաբադարիչ հարադրություններ: Վերջիններիս երրորդ եզրը մյուսներին կամ դրանցից գոնե մեկին քերականորեն համագոր մի բայ է, որը համալրում է տվյալ բարդության կազմը՝ հաճախ դառնալով այդ բարդության բուն իմաստակիրը:

Թեև զուգարայական բարդությունները քերականորեն անհամասեռ

են, սակայն բոլոր դեպքերում գուգաբայական հարադրություններ կարող են կազմել բովանդակության պլաններով համանիշ, հոմանիշ, հականիշ կամ էլ այնպիսի բայաձևեր, որոնց միջոցով անվանվում են տրամաբանորեն իրար հաջորդող գործողություններ:

Ձուգադրական բայերի մեծ մասի բաղադրիչներից գոմե մեկը գրաբարի բառապաշարի գործուն շերտից է, անվանում է ընթացք, որևէ ուղղությամբ շարժում և բնութագրվում է չեզոք սեռի քերականական կարգով:

Ձուգաբայերը հիմնականում քերականորեն համասեռ (չեզոք, ներգործական կամ կրավորական) բայերի հարադրությամբ ձևավորված բարդություններ են. մի դեպքում՝ գուգաբայական հարադրություն են կազմում երկու (հազվադեպ՝ ավելի) չեզոք, մյուս դեպքում՝ ներգործական կամ կրավորական բայեր (վերջիններս գրաբար աղբյուրներում ունեն բացառիկ կիրառություններ): Սակայն գրաբարի համար տիպական են նաև *չեզոք սեռի բայ-ներգործական սեռի բայ* շարադասությամբ ձևավորված ներգործական սեռի գուգաբայեր:

Սոսկ կառուցվածքի տեսանկյունից պատճառական հարադրավոր բայերը կարելի է համարել գուգաբայական հարադրություններ, սակայն նկատի առնելով մի շարք լեզվական փաստեր (տես էջ 242-244)՝ մենք ևս պատճառական հարադրավոր բայերը համարում ենք բայական հարադրության առանձին տեսակ:

Պատճառական հարադրավոր բայերն առաջացել են *հրաման տալ, թոյլ տալ* հարադրավոր բայերի և որևէ բայի անորոշ դերբայի՝ միմյանց հետ հաճախակի կիրառության հետևանքով: Արդեն 5-րդ դարում նշված կապակցություններին գուգահեռ կիրառվում են *տալ-անորոշ դերբայ* կապակցություններ, որոնց «*հրաման*» կամ «*թոյլ*» իմաստներն աստիճանաբար մթազնում, ապա բացակայում են: Այդ բանին, անշուշտ, նպաստում է նաև *տալ* բայի՝ դեռևս 5-րդ դարի գրավոր աղբյուրներում հանդիպող վերջադաս կիրառությունը, որը հաջորդ դարերում կայունացել և դարձել է օրինաչափ:

Պատճառական հարադրավոր բայերը կազմությամբ խիստ միօրի-

նակ են. առանց բացառության՝ սրանց բաղադրիչներից մեկն արտահայտվում է *տա/* բայի դիմավոր կամ անդեմ ձևով: Վերջինս կարող է կապակցվել չեզոք, ավելի հաճախ՝ ներգործական սեռի բայերի անորոշ դերբայների հետ, ըստ այդմ էլ ձևավորել, համապատասխանաբար, չեզոք կամ ներգործական սեռի բարդություններ:

Վերլուծական բայերի շարքում անհամեմատ մեծ թիվ են կազմում մենիմաստ բարդությունները: Որպես կանոն, մենիմաստ են բացառիկ կիրառությամբ առանձնացող, այլև այն վերլուծական բայերը, որոնք բոլոր կիրառությունների մեջ կապակցվում են միևնույն դասին պատկանող ենթակաների և/կամ խնդիրների հետ:

Վերլուծական բայերն իրենց նմանների հետ գտնվում են ձևափոխության փոխհարաբերությունների մեջ՝ կազմելով հոմանշային, համանշային, հականշային և համանունային շարքեր:

Չուգարայական հարադրությունները մյուսներից տարբերվում են նրանով, որ ոչ միայն իրենք կարող են կազմել հոմանիշ, համանիշ և հականիշ զույգեր, այլ նաև իրենց՝ թվով երկու կամ երեք բաղադրիչները՝ միմյանց հետ:

Վերլուծական բայերի բաղադրիչները խոսքից դուրս սովորաբար մտածվում և արտաբերվում են մեկը մյուսից անընդմեջ, մինչդեռ խոսքի մեջ կարող են ընդմիջվել այլ բառով (կամ բառերով), որը, սակայն, չի խաթարում նշված բաղադրիչների միջոցով անվանվող գործողությունների գիտակցումն իբրև մեկ բառային ամբողջություն: Վերլուծական բայերի բաղադրիչները միմյանցից կարող են տարանջատվել այնքան, քանի դեռ գտնվում են միևնույն շարույթի սահմաններում: Տարբեր շարույթների կազմում գտնվող բայաձևերը միմյանց հետ չեն կարող կազմել վերլուծական բայեր. դրանք առանձին նախադասությունների ստորոգյալներ են:

Գրաբարի վերլուծական բայերի արժույթի ուսումնասիրությունը բերում է մի շարք հետևությունների:

Ենթակառուցական արժույթը հատուկ է գրաբարի բայական հարադրությունների բոլոր տեսակների միայն դիմավոր ձևերին: Վերջիններս

ենթակայի հետ կապակցվում են համաձայնության եղանակով, որտեղ կարևորվում է կապակցվող գույգի դիմաթվային համապատասխանությունը (ոչ լրիվ կամ մասնակի համաձայնություն):

Ենթակաառու հարադրավոր բայերի և ենթակաների կապակցումը հազվադեպ տեղի է ունենում ոչ թե դիմաթվային քերականական կարգերի համապատասխանությամբ, այլ գրաբարի շարահյուսական ոլորտի համար տիպական մեկ ուրիշ եղանակով՝ բակառությամբ:

Գրաբարի որոշ վերլուծական բայեր ենթակաառական արժույթի տեսանկյունից աչքի են ընկնում մասնակի սահմանափակությամբ. կիրառվում են միայն 3-րդ դեմքով արտահայտված ենթակայի հետ: Այդ բայերը 1-ին և 2-րդ դեմքի ենթակաների հետ հանդես են գալիս միայն փոխաբերական իմաստով:

Ենթակաառությամբ արժութագուրկ են միադիմի հարադրավոր բայերը (*անձրև լինի, արև տայ, կամ եղև, քառ լիցի* և այլն), որոնք բաժանվում են երեք խմբի.

1. մի խումբ միադիմի հարադրավոր բայեր արժութագուրկ են ոչ միայն ենթակաառությամբ, այլև ընդհանրապես: Սրանք հիմնականում օդերևութանիշ բայեր են, ինչպես՝ Յորժամ *անձրև լեալ իցէ*, և *արև տայցէ* (Եզնիկ, 219):

2. Առանձին խումբ են կազմում այն միադիմի բայերը, որոնք, ենթակաառությամբ արժութագուրկ լինելով, աչքի են ընկնում խնդրառությամբ. պահանջում են տրական հոլովով արտահայտված բնության խնդիր, ինչպես՝ Երգեսցէ քնարան, և դիր լիցի *քեզ* (Ա Թագ., ԺԶ, 16):

3. Միադիմի հարադրավոր բայերի երրորդ խումբն աչքի է ընկնում ստորոգառության և խնդրառության արժույթներով. կարող են պահանջել անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի և տրական հոլովով արտահայտված բնության խնդիր, ինչպես՝ Քառ լիցի *ինձ տալ ի մոռացումն*, գորասեն (Փարպ., 51):

Ենթակաառությամբ արժութագուրկ են նաև այն վերլուծական բայերը, որոնք հանդես են գալիս բայական միակազմ նախադասությունների մեջ

(սրանց մեջ ենթական բառային արտահայտություն չունի, և հնարավոր չէ ենթադրել նախորդ խոսքային հատվածից): Սակայն նշված նախադասությունների գերադաս անդամները ենթակաառությամբ արժութագուրկ են ոչ թե ընդհանրապես, այլ միայն տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված: Հմմտ. Կայ դեմ յանդիման լերինն մեծի, *որում Յուլն անուանեալ կարդան* (Բուգ., 33) և *Ամենայն մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա վարդապետ* (Բուգ., 230):

Կոչականառության արժույթով աչքի են ընկնում այն վերլուծական բայերը, որոնք ներկայացնում են անձնանիշ առարկաների հետ կապակցվող բայերի դասը: Նշված բայերը կոչականառության տեսանկյունից հանդես են բերում դիմաստահմանափակություն. կոչական են առնում միայն 2-րդ դեմքով կիրառվելու դեպքում և կոչականի հետ կապակցվում են թվի քերականական կարգի համաձայնությամբ: Ինչ վերաբերում է 1-ին և 3-րդ դեմքի բայական հարադրություններին, ապա, ճիշտ է, սրանցով արտահայտված նախադասությունների մեջ ևս կարող է կիրառվել կոչական, սակայն վերջինիս կապը տվյալ նախադասության, այդ թվում նաև բայ-ստորոգյալի հետ գուտ իմաստային է և ոչ քերականական: 1-ին և 3-րդ դեմքի բայ-ստորոգյալներով ձևավորված նախադասությունների հետ հանդես է գալիս հարակցության եղանակով կապակցված կոչական: Վերջինիս առկայությունը պայմանավորված է միայն տվյալ խոսքային իրադրությամբ: Խոսքից դուրս՝ 1-ին և 3-րդ դեմքի բայ-ստորոգյալները կոչական չեն ենթադրում:

Ստորոգառական արժույթով աչքի են ընկնում գրաբարյան ոչ մեծ թվով վերլուծական բայերի միայն դիմավոր ձևերը: Պատճառն այն է, որ ստորոգառու բայերը ստորոգելիի միջոցով արտահայտված հատկանիշը կարող են ենթակային վերագրել միայն դիմավոր լինելու դեպքում:

Գրաբարի վերլուծական բայերը ստորոգառական արժույթով բնութագրվում են այն դեպքում, երբ նախադասության մեջ կորցնում են իրենց բուն բայիմաստը, պարզ ստորոգյալի շարահյուսական գործառնություն գործառական անկախությունը՝ ձեռք բերելով վերացական կամ եղանակավորիչ բայի հատկություն: Ասվածը միաժամանակ նշանակում է, որ

գրաբարում չկան, այսպես կոչված, գուտ ստորոգառու բայական հարադրություններ: Ստորոգառությունը վերլուծական բայերի արժուրային տարբերակներից մեկն է: Որևէ վերլուծական բայ ստորոգառու է դառնում այն դեպքում, երբ սեռի կամ բնության խնդրի փոխարեն կապակցվում է անորոշ դերբայի հետ՝ եղանակավորելով վերջինիս արտահայտած գործողությունը և այն վերագրելով ենթակային: Հմմտ. *Ձի՞նչ* եղեր ի մտի (Ազաթ., 61) և *Ի* մտի եղեալ էր *շրջեցուցանել* զպայծառութիւնն (Կորիւն, 30):

Ստորոգառու չեզոք սեռի մի շարք հարադրավոր բայեր անորոշ դերբայով արտահայտված ստորոգելիին զուգահեռ պահանջում են անորոշի թեք բառաձևով արտահայտված ստորոգելի՝ այսպիսով ուրվագծելով այն ճանապարհը, որով առաջացել է բացարձակ անորոշ դերբայով արտահայտված ստորոգելին:

Ջուգաբայական հարադրավոր բայերից ստորոգառական արժույթով պոանձնանում են մեկ-երկուսը, որոնք բուն բայիմաստին զուգահեռ կարող են ձեռք բերել նաև վերացական բայի հատկություն: Այստեղ ստորոգելին, ի տարբերություն հարադրավոր բայերի, արտահայտվում է ոչ թե անորոշ դերբայով, այլ առարկա կամ հատկանիշ անվանող այլ բառով:

Ստորոգառու պատճառական հարադրավոր բայերը գրաբարյան աղբյուրներում հազվադեպ են:

Ըստ խնդրառական արժույթի՝ վերլուծական բայերը բաժանվում են երկու խմբի՝ խնդրառու բայեր և խնդրառությամբ արժութագուրկ բայեր:

Որևէ վերլուծական բայ խնդիր է պահանջում բառիմաստի և/կամ սեռի քերականական կարգի գործությամբ՝ ստանալով, համապատասխանաբար, բնության և/կամ սեռի խնդիր: Վերջինս բայի հետ կապակցվում է ուժեղ և պարտադիր կառավարման եղանակով՝ անկախ այն բանից՝ այդ կառավարումն անմիջական է, թե միջնորդական:

Խնդրառական արժույթով օժտված է գրաբարի վերլուծական բայերի մեծագույն մասը, այդ թվում՝ բոլոր ներգործական ու կրավորական բարդությունները և բազմաթիվ չեզոքներ: Սակայն նշված խնդրառու բարդությունները արժույթի արտահայտության, քանակի և այլ տեսանկյուններից

միատարր չեն:

Ներգործական սեռի բայերը խնդրառությամբ առնվազն միարժույթ են. որպես կանոն, ենթադրում կամ պահանջում են մի սեռի խնդիր: Միարժույթ բայերից բացի՝ կան նաև խնդրառությամբ երկարժույթ և եռարժույթ բարդություններ: Դրանցից առաջինները, սեռի խնդրից բացի, պարտադիր կերպով ենթադրում կամ պահանջում են ևս մեկ, իսկ եռարժույթ ներգործականները՝ երկու բնության խնդիր, որոնք ուժեղ և պարտադիր կառավարման արտահայտություններ են: Ըստ մեր հաշվարկների՝ գրաբարում խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի բայերը երկարժույթ և եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի համեմատությամբ ակնհայտորեն մեծ թիվ են կազմում:

Ի տարբերություն ներգործականների՝ ա) չեզոք սեռի վերլուծական բայերը գուրկ են սեռի խնդիր պահանջելու հնարավորությունից, բ) կան նաև խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի բայեր:

Խնդրառու չեզոք սեռի բայերը լինում են միարժույթ կամ երկարժույթ: Դրանք պարտադիր կերպով ենթադրում կամ պահանջում են, համապատասխանաբար, մեկ կամ երկու բնության խնդիր:

Չեզոք սեռի հարադրավոր բայերը խնդրառությամբ արժութագուրկ են լինում՝ կախված տարբեր հանգամանքներից, որտեղ կարևորվում են տվյալ բարդությունը կազմող բաղադրիչների իմաստային-քերականական առանձնահատկությունները (հարադրի սեռը, բառային իմաստը, հարադիր կազմող բաղադրիչների միջև եղած քերականական հարաբերությունը և այլն): Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք բայերի միջոցով առավելապես անվանվում են գոյացման, առաջացման, վախճանի, ընթացքի և այլ բայական իմաստներ, որոնց կատարման համար չի պահանջվում գործողությունն անուղղակիորեն իր վրա կրող առարկա:

Կրավորական սեռի հարադրավոր բայերն ըստ խնդրառության լինում են միարժույթ, երկարժույթ կամ եռարժույթ՝ կախված այն բանից, թե խնդրառական արժույթի բանի դրսևորում ունի տվյալ կրավորական բայի քերականական հականիշը՝ ներգործական սեռի հարադրավոր բայը:

Այսուհանդերձ, ներգործական և կրավորական սեռի բայերի միջև կա էական տարբերություն. եթե կրավորական սեռի հարադրավոր բայերի ենթական պահանջում է ներգործող սեռի խնդիր, ապա ներգործական սեռի հարադրավոր բայերի ենթական՝ ընդհակառակը՝ ներգործվող սեռի խնդիր:

Ձուգաբայական հարադրությունների խնդրառական արժույթը գերազանցապես դրսևորվում է բաղադրիչ բայերից վերջինի միջոցով: Եթե այն չեզոք սեռի բայ է, ապա տվյալ զուգաբայը խնդրառությամբ կարող է լինել արժութագուրկ, միարժույթ կամ երկարժույթ, իսկ եթե ներգործական է՝ միարժույթ, երկարժույթ կամ եռարժույթ:

Պատճառական հարադրավորների խնդրառական արժույթի դրսևվորման մեջ դեր ունի ոչ միայն անորոշ դերբայով արտահայտված բաղադրիչը, այլ նաև *ապա* բայը, որը պարտադիր կերպով ենթադրում կամ պահանջում է մի բնության խնդիր: Այդ է պատճառը, որ նշված վերլուծական բայերը, անկախ սեռի քերականական կարգից և բառիմաստից, խընդրառությամբ առնվազը միարժույթ են: Անորոշ դերբայի խնդրառական արժույթից կախված՝ պատճառական հարադրավորները խնդրառությամբ կարող են լինել նաև երկարժույթ կամ եռարժույթ:

Վերլուծական բայերին հատուկ է նաև պարագաառական արժույթը: Ընդ որում, եթե խնդրառական արժույթը կարող է պայմանավորված լինել բայի կամ բառիմաստով, կամ սեռի քերականական կարգով, ապա պարագաառական արժույթը պայմանավորված է բայի՝ միմիայն բառիմաստով:

Պարագաառական արժույթի դրսևորման միջոց են ծառայում գերազանցապես տեղի պարագայի շարահյուսական գործառույթ կատարող միավորները: Բանն այն է, որ ամեն մի գործողության կատարման համար պարտադիր նախապայմաններ են ժամանակը և տեղը, որոնք բառային արտահայտություն ստանալու դեպքում կդիտվեին պարագաառական արժույթի առանձին դրսևորումներ: Սակայն քանի որ դիմավոր բայն ինքը ներունակ է արտահայտելու ոչ միայն գործողության, այլ նաև վերջինիս կատարման ժամանակի իմաստները, ուստի պարագաառական արժույթի դրսևորում է դիտվում միայն բառային արտահայտություն ունեցող և դիմավոր բայի կողմից

պարտադիր կերպով ենթադրվող ու պահանջվող տեղի պարագան: Առանձին բառով արտահայտված ժամանակի պարագան ճշգրտում, մասնավորում է դիմավոր բայով արտահայտված ընդհանուր ժամանակի գաղափարը: Այդ է պատճառը, որ նախադասության մեջ ժամանակի պարագան պարտադիր կերպով ենթադրվող բաղադրիչ չէ: Առանց ժամանակի պարագայի՝ նախադասության բուն բովանդակության պլանը չի տուժում, ուստի այն արժույթի դրսևորում չէ. մի բան, որ չենք կարող ասել պարտադիր կերպով ենթադրվող տեղի պարագայի մասին:

Արժույթի տեսանկյունից կարևոր են համարվում այն տեղի պարագաները, որոնք բայ-գերադաս անդամի հետ կապակցվում են կառավարման եղանակով՝ արտահայտվելով տեղանիշ գոյականների կա՛մ որևէ հոլովաձևով (անմիջական կառավարում), կա՛մ էլ կապական կապակցությամբ (միջնորդական կառավարում)՝ բայ-գերադաս անդամի պահանջով դրսևորելով սկզբնակետի, անցման, վերջնակետի կամ բուն տեղի պարագայական իմաստ:

Խնդրառությամբ միարժույթ մի շարք ներգործական սեռի բայեր պարագաառությամբ տեսականորեն կարող են լինել եռարժույթ՝ միաժամանակ պահանջելով սկզբնակետի, անցման և վերջնակետի կամ ուղղության տեղի պարագա: Նշված պարագաները միշտ չէ, որ տվյալ խոսքային իրադրության մեջ բառային արտահայտություն ունեն: Ոճական և այլ նկատառումներով այդ պարագաներից հիշատակվում է այն, որի պարունակած տեղեկությունը տվյալ իրադրության մեջ ավելի կարևոր է:

Չեզոք սեռի պարագաառու բայերը գերազանցապես գուրկ են խընդրառական արժույթից, և, ընդհակառակը, խնդրառությամբ բնութագրվող չեզոք սեռի բայերի հիմնական մասը գուրկ է պարագաառական արժույթից: Այնպես որ, խնդրառությամբ միարժույթ բացառիկ բայեր կան, որոնք աչքի են ընկնում նաև պարագաառական արժույթով:

Պարագաառությամբ հիմնականում օժտված են խնդրառությամբ արժութագուրկ հարադրավոր բայերը: Բանն այն է, որ նշված բայերից շատերի կա՛մ հարադրի միջոցով է անվանվում ընթացք, շարժում (ինչպես՝ *ի փախուստ, հրեշտակագնաց, երթևեկ* և այլն), կա՛մ էլ բայական բա-

դադրիչի (ինչպես՝ *գալ, գնալ, դառնալ, երթալ, ելանել, խաղալ, մաանել* և այլն): Ինքնին հասկանալի է, որ ընդգծված բառերով բաղադրված բայերի գործողության տրամաբանական ավարտի համար խոսքային իրադրութ-յան մեջ կարևորվում է նաև այդ գործողության կատարման տեղի քերակա-նական իմաստի արտահայտությունը:

Խնդրառությամբ արժութագուրկ հարադրավոր բայերը պարագա-առությամբ լինում են միարժույթ, երկարժույթ կամ եռարժույթ:

Խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերը պարագաառական արժույթով աչքի չեն ընկնում: Պատճառն այն է, որ այս բայերի կազմությանը շարժում, ընթացք անվանող ո՛չ հարադիրներ են մասնակցում և ո՛չ էլ հարադրյալներ, որոնք կարողանային պարա-գաառության նախապայման ստեղծել:

Տեսականորեն պարագաառական արժույթով բնութագրվում են կը-րավորական սեռի այն հարադրավոր բայերը, որոնց ներգործական տար-բերակները ևս աչքի են ընկնում նշված արժույթով:

Գրաբարում պարագաառական արժույթով աչքի են ընկնում նաև ներ-գործական և չեզոք սեռի մի շարք զուգաբայական հարադրություններ, որոնցից վերջիններիս դերը որոշակիորեն ակտիվ է: Զուգաբայական հա-րադրությունները պարագաառությամբ կարող են լինել արժութագուրկ, մի-արժույթ, երկարժույթ կամ եռարժույթ՝ նայած զուգադրության վերջին բաղադրիչի պարագաառական հնարավորությանը:

Պարգաառությամբ արժութագուրկ, միարժույթ, երկարժույթ կամ եռ-արժույթ կարող են լինել նաև պատճառական հարադրավորները՝ կախված այն բանից, թե պարագաառական ինչ հնարավորություն ունի *տալ* բայի հետ հարադրված համադրական անորոշ դերբայը:

Գրաբարի բայի ենթակառական, խնդրառական և պարագաառա-կան արժույթները խոսքի մեջ միշտ չէ, որ բառային արտահայտություն ունեն: Ոճական, տեղեկատվական կամ այլ տեսանկյունից ոչ կարևոր կամ անհայտ լինելու նկատառումով այս կամ այն արժույթը (հարկ եղած դեպքում՝ արժույթները) խոսքի արտահայտության պլանում տեղ չի գտնում:

Նշված հանգամանքը այս կամ այն բայի արժույթի հարցում դեր չի խաղում: Այս տեսանկյունից բացառություն չեն կազմում մաս վերլուծական բայերի բոլոր տեսակները, որոնցով կազմված մախադասությունների մեջ հաճախ բացակայում է 1-ին կամ 2-րդ դեմքի ենթական, ներգործող խնդիրը, որևէ պարագա և այլն:

Բայի արժույթը դրսևորվում է շարահյուսական ոչ բոլոր կապակցությունների մեջ, այլ միայն մրանցում, որտեղ բայը կատարում է համագորկամ գերադաս միավորի գործառույթ: Ընդ որում, արժույթի արտահայտություն են դիտվում բայի նկատմամբ միայն համագորկամ ստորադաս դիրք գրաված այն միավորները, որոնք խոսքային բոլոր իրավիճակներում պարտադիր կերպով ենթադրվում և պահանջվում են այդ բայերի կողմից՝ կախված վերջիններիս քերականական և/կամ բառիմաստի առանձնահատկություններից:

Արժույթի արտահայտություն են դիտվում մախադասության ենթական, կոչականը, ստորոգելին, սեռի, բնության և տեղի պարագայական խնդիրները: Որևէ բայ չի կարող միաժամանակ ենթադրել և պահանջել մշված բոլոր արժութային միավորները: Կան բայեր էլ, որոնք գորություն չունեն ենթադրելու մշված միավորներից գոնե մեկը (ընդհանրապես արժութագուրկ են): Արժույթի տեսանկյունից առավելություն ունեն խընդրառությամբ կամ պարագաառությամբ եռարժույթ և միաժամանակ անձնանիշ ենթակա ենթադրող բայերի 2-րդ դիմային ձևերը, որոնց համար կարող է արժույթի հինգերորդ եզր ենթադրվել կոչականը:

Գրաբարի վերլուծական բայերի արժույթի ուսումնասիրությունը միաժամանակ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու դասական հայերենի ժամանակաշրջանին հատուկ լեզվամտածողության առանձնահատկությունների մասին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Ակնարկներ հայ գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 61:
- ² Տե՛ս Լ. Եսկեր, Элементы структурального синтаксиса, М., 1959, էջ 250:
- ³ Տե՛ս Դ. Մ. Морозова, Синтаксические свойства глагола и его словообразовательный потенциал, М., 1984, էջ 81-95:
- ⁴ Բայի արժույթին նվիրված բառարանագիրներից են Կարեն վան Դյուրմեն, Կարել վան դեն Էյնդը, Լենն Չոսլերը, Կարին Այծմերը, Ս. Կիրչմեյեր-Ամդերսենը, Բենգտ Ալտենբերգը, Ֆիլիպ Դեվոսը, Ժան Դեգլասը, Լ. Մեյսը, Կ. Էգգերմոնտը և ուրիշներ:
- ⁵ Տե՛ս Յ. Ք. Աթալի, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968:
- ⁶ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 466-488:
- ⁷ Տե՛ս Հ. Ա. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 49-50:
- ⁸ Տե՛ս Ս. Վ. Գոյրուղադյան, հայերենի շարահյուսություն (Պարզ մախադություն), Ե., 1988, էջ 23-26:
- ⁹ Տե՛ս Գ. Աղամյան, Շարահյուսության արժեքայնության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1974, թիվ 1: Ամդերսենը որպես ժամանակակից ֆրանսերենում բայի արժեքայնության մեծացման միջոց, «Բանբեր Ե.ի համալսարանի», Ե., 1975, թիվ 2:
- ¹⁰ Ի դեպ, բայի կապակցման հնարավորություններն ուսումնասիրվում են նաև Վ. Քոսյանի՝ բառակապակցություններին նվիրված աշխատություններում, որոնցում, սակայն, նախ՝ քննության հիմնական նյութը համադրական բայերն են, երկրորդ՝ ուսումնասիրվում են բայի՝ միայն խնդրի և պարագայի հետ կապակցման դրսևորումները, ընդ որում՝ առանց կարևորելու բայ-գերադաս անդամի հետ կապակցվող ստորադաս անդամների քանակը, պարտադիր լինելը, կապակցման եղանակը և այլ հանգամանքներ, որոնք արժույթի ուսումնասիրության դեպքում համարվում են կարևոր պայմաններ:
- ¹¹ Տե՛ս Յ. Ք. Աթալի, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968, էջ 67-77:
- ¹² Տե՛ս Յ. Ք. Աթալի, նշվ. աշխ., էջ 67-77:
- ¹³ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 467:
- ¹⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 467-488:
- ¹⁵ Տե՛ս Հ. Ա. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 50:
- ¹⁶ Տե՛ս Օ. Ս. Ахматова, Г. Б. Михасян, Современные синтаксические теории, 1963, էջ 122:
- ¹⁷ Տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Ակնարկներ հայ գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 81:
- ¹⁸ Խոսքը վերաբերում է առանձին հեղինակների կողմից բազմաթիվ կիրառված, այլև բարգմանական գրականության մեջ տեղ գտած հարադրավոր բայերին, որոնց առկայությունը կարող է պայմանավորված լինել՝ ա) տվյալ հեղինակի լեզվամտածողությամբ, բ) բարգմանվող երկի բովանդակությամբ, գ) բարգմանչի լեզվամտածողությամբ, դ) բարգմանության ժամանակաշրջանով և այլ հանգամանքներով:
- ¹⁹ Ուսումնասիրության աղբյուրների և վերջիններիս համառոտագրությունների ցանկը տե՛ս էջ 296:
- ²⁰ Արժույթ եզրը մեզանում բարգմանվել է նաև արժեքայնություն բառով:
- ²¹ Տե՛ս Յ. Ք. Աթալի, Предмет и основные понятия структурного синтаксиса, Ереван, 1968, էջ 70:
- ²² Տե՛ս Լ. Եսկեր, նշվ. աշխ., էջ 250:
- ²³ Տե՛ս Լ. Եսկեր, նշվ. աշխ., մ.տ.:
- ²⁴ Տե՛ս Լ. Եսկեր, նշվ. աշխ., մ.տ.:
- ²⁵ Տե՛ս Լ. Եսկեր, նշվ. աշխ., էջ 117:
- ²⁶ Այսպիսով, Գ. Ջահուկյանը իրավացիորեն նշում է, որ ստորոգառությունն, «արտահայտվում է անանցողական բայերի դեպքում՝ ստորոգելի, անցողական բայերի դեպքում ստորոգելիական խնդիր ստանալու մեջ» (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 468):
- ²⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 467:
- ²⁸ Տե՛ս Լ. Եսկեր, նշվ. աշխ., էջ 117-118:
- ²⁹ Տե՛ս Դ. Մ. Морозова, Синтаксические свойства глагола и его словообразовательный потенциал, М., 1984, էջ 82:
- ³⁰ Տե՛ս Бсломаткина В. А., Земская Е. А., Милославский Н. Г., Павлов М. В., Современный русский

язык, М., 1981, էջ 210:

¹¹ Դրանցից առաջին երեքը շարահյուսագետների կողմից ենթարկվել են հանգամանալից քննության: Ինչ վերաբերում է ընդհանրական շարահարությանը կամ հարակցությանը, ապա այն՝ որպես կապակցման եղանակ, առանձնացվում է ոչ բոլոր լեզվաբանների կողմից և առ այսօր պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել:

¹² Եզրույթը պայմանականորեն առաջարկել է Ռ.Իշխանյանը, որն այդ կապակցությանը գրում է. «Առդրության ու շարահարության միջին տեղում է կապակցության այն եղանակը, որով նախադասության հետ կապակցվում են եղանակավորողներն ու կոչականները (տե՛ս Ռ.Ա.Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջ 35):

¹³ Եզրույթն առաջարկել է Մ.Ասատրյանը (տե՛ս Մ.Ա.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1987թ., էջ 315):

¹⁴ Նկատի չունենք ժողովրդախոսակցական ոլորտում գործածվող «Յոթ չափի բ. մեկ կտրի բ» տիպի բացառիկ նախադասությունները:

¹⁵ Տե՛ս Պ.Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ.1, էջ 303:

¹⁶ Տե՛ս Պ.Սևակ, նշվ. աշխ., էջ 436:

¹⁷ Համաձայնական կապի լրիվ և ոչ լրիվ (մասնակի) տեսակների մասին նշվում է նաև ռուս լեզվաբանների աշխատություններում: Տե՛ս Боломанкова В.А., Земская Е.А., Милославский И.Г., Панов М.В., Современный русский язык, М., 1981, էջ 387-388. Современный русский язык под ред. Л.Э. Рохиталы, ч.2, М., 1976, էջ 11 և այլն:

¹⁸ Տե՛ս Ա.Ա.Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1975, էջ 60: Հ.Մ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Ե., 1972, էջ 23:

¹⁹ Տե՛ս Ա.Ա.Արրահամյան, նշվ. աշխ., էջ 61:

²⁰ Կան մասնակի դեպքեր, երբ ամականով, քվականով և չթերվող դերանուններով արտահայտված լրացուցիչ լրացյալի հետ կապակցվում է իստաձայնության եղանակով (տե՛ս Մ.Դ.Արրահամյան, Ն.Ա. Պառնասյան, Հ.Ա.Օհանյան, Խ.Գ.Բաղդիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Ե., 1976, էջ 340-359):

²¹ Տե՛ս Վ.Տերյան, Երկերի ժողովածու 3 հատորով, հ.1, Ե., 1960, էջ 11:

²² Տե՛ս Հ.Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ.1, Ե., 1969, էջ 194:

²³ Տե՛ս Վ.Տերյան, նշվ. աշխ., էջ 226:

²⁴ Տե՛ս Հ.Ա.Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 96-97: Ս.Վ. Գյուլբուղադյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 21:

²⁵ Տե՛ս Ս.Վ. Գյուլբուղադյան, նշվ. աշխ., էջ 22:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Հմմտ. Лесант Н.А., Гелтова Н.Г., Жуков В.И., Современный русский литературный язык, М., 1988, էջ 266:

³⁰ Զանի որ կառավարմամբ կապակցություն իրականանում է մաս խոսքից դուրս, որտեղ գերադասանդանի գործառույթ են կատարում անդեմ բայերը, ուստի շարադրանքում տեղ ենք տվել ոչ միայն դիմավոր, այլ նաև անդեմ բայերի մասնակցությամբ ձևավորված լեզվական տվյալներին:

³¹ Կառավարում եզրույթը մեզանում մինչև վերջերս հայտնի էր խնդրառություն, ավելի վաղ՝ վարում եզրույթներով:

³² Տե՛ս Ս.Գ.Արրահամյան, Ն.Ա.Պառնասյան, Հ.Ա.Օհանյան, Խ.Գ.Բաղդիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Ե., 1976, էջ 406:

³³ Անշուշտ, այս դեպքում նկատի է առնվում ոչ թե քերականական, այլ ձևային անկախությունը:

³⁴ Տե՛ս Ս.Գ.Արրահամյան, Ն.Ա.Պառնասյան, Հ.Ա.Օհանյան, Խ.Գ.Բաղդիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Ե., 1976, էջ 406:

³⁵ Տե՛ս Հ.Ա.Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 50:

³⁶ Գ.Բ.Ջահուկյանն իրավագիտրեն գտնում է, որ ստորոգառու «բոլոր բայերը ցույց են տալիս առարկայի և նրա հատկանիշի, առարկայի տարրեր վիճակների, առարկայի և նրա անվանման (որպես առարկայի յուրատեսակ հատկանիշի), առարկայի՝ մի այլ առարկայով փոխարինվելու կամ ներկա-

խագեղու հարաբերություններ, երբեմն էլ առարկայի որպիսության սուբյեկտիվ գնահատումը (*Բվայ, Երևայ* և այլն)» (տե՛ս *Գ.Բ.Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 469):

⁵⁵ Միսնգամայն իրավագի է Է.Բենզենիստը, երբ նշում է *եմ* և *ունեմ* բայերից յուրաքանչյուրի հիմքում ընկած երկու բառերի, երկու գործառնությունների, երկու կառույցների դիալեկտիկական համագոյության մասին (Տե՛ս *Э.Бенвенист, Основы лингвистики*, М., 1974, էջ 203-224):

⁵⁶ Թե՛ն կրկնակի խնդրառության մասին նշվում է, որ դա «շարահյուսական այն երևույթն է, երբ բայի քերականական հատկանիշով և նշանակությամբ կանխորոշվում են մեկից ավելի լրացումներ, այսինքն՝ երբ բայը ըստ սեռի և իմաստի պահանջում է երկու տարբեր խնդիրներ՝ արտահայտված տարբեր հոլովներով» (Տե՛ս *Ս.Գ.Աբրահամյան, Ն.Ա.Պատնասյան, Հ.Ա.Օհանյան, Խ.Գ.Բաղդկյան*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Ե., 1976, էջ 390), սակայն կան դեպքեր, երբ բայի երկու խնդիրներն էլ կանխորոշվում են սեռի քերականական հատկանիշով, ինչպես՝ եւ *զԱրծրունիսդ* գիտեմ *ոչ Արծրունիս*, այլ՝ *արծուի ունիս* (Խոր., 111):

⁵⁷ Նկատի չունենք կրկնասեռ բայերը, որոնք ներգործարար կիրառվելու դեպքում կարող են պահանջել սեռի խնդիր: Հմտ. Երբայր երբալով և լայր (Բ Թագ., ԺԳ, 19) և Ուրբել լայր *գորդիս* իւր (Երեմ., ԼԱ, 15):

⁵⁸ Տե՛ս *Վ.Ա. Բոսյան*, Գրաբարի բառակապակցությունները, Ե., 1980, էջ 30-38, 72-82, 274-276:

⁵⁹ Բացառիկ դեպքերում պարագայական արժույթի արտահայտության միջոց են դառնում այլ պարագաներ եւ: Օրինակ՝ *ժամադիր ատնել* բայի համար ժամանակի պարագան արժույթի տեսանկյունից պարտադիր է [*Արար նոցա ժամադիր յառաջ քան գլարշարունս* (Ոսկ.)]: Սակայն գրաբար գրավոր աղբյուրներում դրանք էական դեր չեն կատարում:

⁶⁰ Տեղի պարագան պարագա է համարվում միայն այն պատճառով, որ նրա արտահայտած առարկան չի մասնակցում ենթակայի գործողությանը, այլ հանդես է գալիս ենթակայի և նրա գործողության տարածական բնութագրման համար (տե՛ս *Գ.Բ.Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 420):

⁶¹ Տե՛ս *Վ.Ա. Բոսյան*, Գրաբարի բառակապակցությունները, Ե., 1980, էջ 31-38, 77-80:

⁶² Տե՛ս *Մ.Արեղյան*, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 410: *Խ.Գ.Բաղդկյան*, Կոչական ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», VII, Ե., 1983, էջ 238: *Դ.Ա.Իշխանյան*, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջ 280-281: *Մ.Է.Ասատրյան*, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1987թ., էջ 314-315: *Ս.Վ.Գյուլբուդաղյան*, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988թ., էջ 21:

⁶³ Տե՛ս *Խ.Գ.Բաղդկյան*, նշվ. աշխ., էջ 239:

⁶⁴ Համաձայնությունը տեղի է ունենում մասնականորեն՝ միայն ըստ թվի քերականական կարգի:

⁶⁵ Տե՛ս *Մ.Արեղյան*, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 410:

⁶⁶ Տե՛ս *Մ.Արեղյան*, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 410:

⁶⁷ Տե՛ս *Հ.Ա.Հարությունյան*, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 50:

⁶⁸ Ավելին, կան բայեր, որոնց կողմից ենթադրվող անդամը միարժեքորեն հասկանալի լինելու պատճառով նախադասության մեջ հազվադեպ է արտահայտվում: Օրինակ՝ Ունկնդիր լերուք *խելեօր* ձեռովք (Եւ., ԾԵ, 3):

⁶⁹ Տե՛ս *Խ. Չպվճալ*, նշվ. աշխ., էջ 250:

⁷⁰ Առաջիկայում կավարտենք նաև գրաբարի համադրական բայերի և վերջիններիս արժույթի մասին ուսումնասիրությունը, որի մի մասը («Գրաբարի համադրական պատճառական բայերը և նրանց արժույթը») ներկայացրել ենք տպագրության:

⁷¹ Հայերենի վերլուծական բայերի ուսումնասիրության պատմությանը չենք անդրադառնում, քանի որ այն լավագույնս ներկայացրել է Ալ.Մարգարյանն իր նշանավոր մենագրության մեջ:

⁷² Տե՛ս *Ա.Ա.Մուրվաչյան*, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 196: *Ա.Ս.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 219: *Գ.Բ.Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 362:

⁷³ Գրաբարի բառապաշարի ուսումնասիրությանն է նվիրված նաև Լ.Ա.Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» աշխատությունը, որտեղ հեղինակը հանգամանորեն ըննության է առնում բացառապես համադրական բաղադրությունների (բարդ և ածանցավոր) արտահայտության կաղապարները՝ սպառնիչ պատասխան տալով աշխատության մեջ առաջադրված հարցերին:

⁷⁴ *Ա.Ս.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:

⁷⁵ Տե՛ս, օրինակ, *Վ.Դ.Առաքելյան, Ա.Հ.Խաչատրյան, Ս.Ա.Էդյան*, Ժամանակակից հայոց լեզու,

h.1, Ե., 1979, էջ 272:

⁷⁸ Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:

⁷⁹ Տե՛ս, օրինակ, Վ.Դ.Առաքելյան, Ա.Հ.Խաչատրյան, Ս.Ա.Էդյան, Ժամանակակից հայոց լեզու, h.1, Ե., 1979, էջ 272: Գ.Բ.Ջահուկյան, Է.Բ.Աղայան, Վ.Դ.Առաքելյան, Վ.Ա.Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 385:

⁸⁰ Տե՛ս Ա.Ա.Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 58:

⁸¹ Տե՛ս Գ.Բ.Ջահուկյանի, Է.Արայանի, Ա.Ա.Հովսեփյանի և այլոց աշխատությունները:

⁸² Ի դեպ, Ալ.Մարգարյանը գտնում է, որ «գրաբարում իբրև հարադրավոր բայերի բայական բաղադրիչ հանդես եկող բայերից շատերը իրենց հարադրի մկատմամբ համեմատաբար ավելի ազատ հարաբերության մեջ են գտնվել և այդ պատճառով ոչ միայն հետո, այլև նրանից առաջ են դրվել» (տե՛ս էջ 213): Այսպես նույն տեղում լեզվաբանը բերում է նաև շտաշոթոյ և թոյլ տալիմ օրինակները, սակայն պետք է նշել, որ տալ բայի նախադաս և վերջադաս կիրառությունները տվյալ դեպքում պայմանավորված են թոյլ տալ բարդության, համապատասխանաբար, միատական և դրական խոնարհումների արտահայտության առանձնահատկությամբ, որոնցից միատականի դեպքում տալ հարադրյալը տեղաշարժվում է հարադրից առաջ՝ կրելով չ, ոչ կամ մի միատական մասնիկներից որևէ մեկը:

⁸³ Ա. Մեյեն իրավացիորեն նշում է, թե բառակազմական այն կաղապարը, որի երկրորդ եզրը բայանուն է, «ամենից արտադրողական տիպն է հայերենում» (տե՛ս Ա.Մեյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 85): Նշված իրողությունն առկա է նաև ժամանակակից հայերենում (տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1993, էջ 94):

⁸⁴ Տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 136:

⁸⁵ Հմմտ. Ի քաջ կաց յինեն, ծառայ չարսգործ (Բուզ., 142):

⁸⁶ Ասվածը չի վերաբերում «2+ հայցական հոլովով կապվող բառածև» կաղապարով արտահայտված այն կապակցություններին, որոնք հանդես են գալիս չեզոք սեռի բայերի պահանջով. (զճանապարհ երթալ և այլն): Տվյալ դեպքում 2 նախդիրը կատարում է ոչ թե որոշիչ հոդի, այլ անցման տեղի պարագայի քերականական իմաստ արտահայտող կապի գործառույթ):

⁸⁷ Արդի հայերենում՝ վազ տալ:

⁸⁸ Միևնույն իրողությունը նկատվում է նաև արդի հայերենում (տե՛ս Ս.Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 176):

⁸⁹ Հմմտ. Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 90:

⁹⁰ Հարկ եղած դեպքում ներգործական սեռի բայերը հարադրության եզր են դառնում կրավորաձև խոնարհմամբ: Հմմտ. բառնայր ի կենաց և բառմիտ ի կենաց (ՆՀԷ), ոյլ 5-յոյ դարի գրաբարի համար սովորական չէ:

⁹¹ Բացառականով հարադիր ունեցող բայությունները գրաբարում սակավադեպ են (տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 21):

⁹² Հմմտ. Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 122:

⁹³ Որևէ բայի արժույթն ամբողջականորեն գնահատելու նպատակով երբեմն համադրել ենք կա մ տարբեր հեղինակների, կա մ միևնույն հեղինակի կողմից տարբեր նախադասություններում կիրառված լեզվական փաստերը:

⁹⁴ Գրաբարում կրկնավոր բարդությամբ արտահայտված հարադիրները չափազանց սակավադեպ են (տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 94):

⁹⁵ Ակտիվ բառապաշարի տարր լինելը նպաստել է, որ այդ բայերից շատերը պահպանեն իրենց առավել հին քերականական ձևերը՝ լեզվի զարգացման համամասնակա կալվածքում պիտվելով անկանոն. առնել, լինիմ, ածել, տալ, դնել և այլն:

⁹⁶ Տե՛ս Ռ.Ս.Ղազարյան, Հ.Մ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, h. Ա, Ե., 1987, էջ 43:

⁹⁷ Տե՛ս Ռ.Ս.Ղազարյան, Հ.Մ.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 21:

⁹⁸ Տե՛ս Ա.Ս.Առաքելյան, Ս.Ա.Դալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 30-31:

⁹⁹ Տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1993, էջ 177:

¹⁰⁰ Տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 83:

¹⁰¹ Ալ.Մարգարյանը նշում է, որ արդի հայերենում ներգործական սեռի հարադրավոր բայերի բաղադրիչ կարող են դառնալ միայն ներգործական սեռի համադրական բայեր (տե՛ս Ա.Ս.Մարգարյան,

Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 176, 183):

¹⁰² Որոշ հարադիրներ ունեն սեռական հոլովով արտահայտված հավելադրություն. տալ *յայպն կատականաց* (եղիշէ, 49), քիւ *համարոյ առնել* (եղիշէ, 120), *յաղերս աղաչանաց* անկա-նիմ (Խոր., 307) և այլն:

¹⁰³ Բացառություն են կազմում շուրջ երկու տասնյակ բայեր, որոնք, կրավորական *վ*-ածանցով ձևավորված լինելով հանդերձ, արտահայտում են չեզոք սեռի քերականական իմաստ: Խոսքը վերաբերում է *սիրահարվել*, *համարձակվել*, *հարձակվել*, *հիասթափվել*, *զբաղվել*, *հուսախաբվել*, *հուսահատվել* և նմանատիպ բայերին, որոնցում կրավորական *վ*-ածանցը հանդես է բերում սոսկաձանցներին հատուկ բնավորություն՝ կատարելով սոսկ բայականական գործընթաց:

¹⁰⁴ Թեև *կշտամբեալ լինիմ*, *ընկալեալ լինիմ* և նման կապակցությունները կրավորական ի-մաստ են արտահայտում, բայց կրկնաբարադրյալ ժամանակաձևերի ելակետեր են. *կշտամբեալ եւ յանդիմանեալ եղեւ ի Ներսիսէ* (Բուգ., 52): *Իբրեւ ոչ ընկալեալ եղեւ* (ՆՀԲ) և այլն:

¹⁰⁵ Կրավորաձև խոնարհման բառահարաբերական ձևույթների միշտ չէ, որ արտահայտում են կրավորական սեռի իմաստ: Օրինակ՝ *Ա և Ու* խոնարհման չեզոք սեռի ածանցավոր բայերը ևս ստանում են կրավորաձև խոնարհման բառահարաբերական ձևույթներ, սակայն չեն կարող արտահայտել կրավորական սեռի իմաստ:

¹⁰⁶ Ա.Մուրվալյանն իրավացիորեն նշում է. «... հարադրյալ բայերի բայական հատկանիշներից մեկն էլ այն է, որ դրանք *նկարագրորեն* (ընգծումը մերն է-Գ.Խ.) արտահայտում են անցողականություն... և անանցողականություն..., փոխարինելով ներգործական, կրավորական կամ չեզոք համարմեր բայերին. *մեղր գցել*—*մեղել* և *մեղն ընկնել*—*մեղվել*, *շուռ տալ*—*շրջել* և *շուռ գալ*—*շրջվել* ... և այլն» (տե՛ս Ա.Ա.Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բառակազմություն, Ե., 1959, էջ 126):

¹⁰⁷ Դ-բարբարում բացատված չէ ներգործական սեռի բայերի հարադրությամբ կրավորական սեռի հարադրավոր բայերի կազմությունը. եթե որդի ուրուք իցէ, *գամ ոչ ըմպիցէ* (Եզնիկ, 82), որտեղ ընդգծված բայն ունի դարձվածային արժեք:

¹⁰⁸ Հմմտ. *Որդեկոտոր արար գկանայս* (Ա Թագ., ԺԵ, 33):

¹⁰⁹ *Ի խաչ ելանել*—ը կրկնասեռ է. գործածվում է մաս. չեզոք սեռի բայի քերականական իմաստով: Օրինակ Երանեղիմ *Նումէ ի խաչ ելեալ* (Խոր., 234): Հմմտ. ժամանակակից հայերենի *կախաղան բարձրացավ*, փոխ.՝ *կախաղան բարձրացվեց*:

¹¹⁰ Անշուշտ, Ա.Մուրվալյանը տեղին է նկատում, թե միշտ չէ, որ նշված բայերով ձևավորված հարադրավոր բարդությունները «... գուցահեռ (ներգործական և կրավորական) ձևեր ունեն» (Ա.Ա.Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 201-202):

¹¹¹ Հմմտ. Ապստամբությունն *ի կոր կործանեսցի* (Նար., 69), որտեղ առկա է ընդգծված բայի փոխաբերական իմաստը:

¹¹² Միանգամայն իրավացի է Ա.Աբրահամյանը՝ նշելով. «Հասարակ բայերն ըստ կիրառության ավելի շատ հանդես են գալիս ներգործական և ավելի քիչ՝ կրավորական նշանակությամբ» (տե՛ս Ա.Ա.Աբրահամյան, Դ-բարբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 97):

¹¹³ Իրականում գրաբարի հարադրավոր բարդությունների կազմում հարադրյալի գործառույթով Ա, Բ և Ի խոնարհման բացառիկ բայեր են հանդես գալիս: Հարադրյալների մեծ մասը և խոնարհման սլարգ և ածանցավոր բայերի շարքից է:

¹¹⁴ Հանդիպում է նաև *ընծայաբեր առնել* ներգործականը: Օրինակ՝ *Ընծայաբերս առնէին նմա երիվարս ընտիրս* (ՆՀԲ) :

¹¹⁵ Հայոց լեզվի դարձվածային հարադրավոր բայերն ուսումնասիրության նյութ է դարձրել Ա.Մուրվալյանը՝ անդրադառնալով դրանց թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պլանների բազմազանությանը (տե՛ս Ա.Ա.Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայականություն, Ե., 1959, էջ 251)

¹¹⁶ Տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 91:

¹¹⁷ Տե՛ս Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 173:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹¹⁹ Տե՛ս Ա.Ս.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 207:

¹²⁰ Տե՛ս նույն տեղում:

¹²¹ Տե՛ս *Ա.Ս.Մարգարյան*, ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 91:

¹²² Միևնույն բանը որդեգրել է նաև արդի հայերենը: Այս մասին տե՛ս *Ա.Ս.Մարգարյան*, ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 91:

¹²³ Այս մասին տե՛ս նաև *Ա.Ա.Մուրվալյան*, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 195:

¹²⁴ Դարձվածային և ոչ դարձվածային միավորների մասին արժեքավոր դիտողություններ ունի Խ. Բաղդկյանը (տե՛ս Խ.Գ.Բաղդկյան, ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 43-89):

¹²⁵ Տե՛ս *Գ.Կ.Խաչատրյան*, Նախդիրների և նախադրությունների առնչակցությունը, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, Ե., 1981, թիվ 6, էջ 54-56:

¹²⁶ Բաղադրվել է *ունիմ* պակասավոր բայի երկրորդ տարարմատ հիմնաձևով:

¹²⁷ Այլ Մարգարյանն իրավացիորեն նկատում է, որ գրաբարում կցական հարադրով բայերը հազվադեպ են (տե՛ս *Ա.Ս.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 94):

¹²⁸ Հ. Պետրոսյանն անաճնացնում է համանուն դարձվածներ՝ միաժամանակ իրավացիորեն նկատելով. «...ինչպես այլուր, այստեղ ևս հաճախ դժվար է լինում բազմիմաստ կիրառությունները զանազանել համանունության դեպքերից...»: Տե՛ս Հ. Չ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 324: Սրանք այլ կերպ կոչվում են համագիր հարանուններ, որոնք նաև համահունչ են:

¹²⁹ Ա.Մուրվալյանն անվանում է «հարադրյալ բայեր» (տե՛ս *Ա.Ա.Մուրվալյան*, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 199):

¹³⁰ Տե՛ս Վ.Դ.Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 81:

¹³¹ Մի շարք դեպքերում նշված հարադրավոր բայերի բաղադրիչները կիրառվել են ոչ թե որպես բարդություն, այլ որպես շարահյուսական անկախ միավորներ. Բայց Փետրոս կամեցեալ Հրէիցն չբմարիս առնել, պատասխանի ետ (Գործ., ԻԼ, 9):

¹³² Նկատի չունենք փոխաբերական կիրառությունները:

¹³³ Թարգմանական գրականության մեջ *հրաժեշտ տալ* բայը հանդես է գալիս նաև տրական հոլովով խնդրառությամբ: Օրինակ՝ Հրաժեշտ տալ *ամենայնի* (Ոսկ.): Ի դեպ, այս հատկությունը կապ-ված է *հրաժեշտ տալ*-ի բազմիմաստության հետ, որը նրան հնարավորություն է տալիս առնելու նաև բացառական հոլովաձևով խնդիր. հրաժեշտ տալ («հրաժարվել») *ի վաշխից*:

¹³⁴ Հմմտ. *Արշալիր յառաջ մատուցեալ. սկսաւ խօսել* (Փարս., 82):

¹³⁵ Ստորոգառու բայերը (որոնք հիմնականում կազմում են եղանակավորիչ, ասացական, մտածական, զգացական իմաստային խմբեր) հսկադրվում են կոնկրետ ֆիզիկական գործողություններ արտահայտող բայերին, որոնք պահանջում են միայն անալիտիկ անվանող խնդիր (տե՛ս Морозова Т.С., Синтаксические свойства глагола и его словообразовательных потенциал, Проблемы структуры лонгистик-1982, М., 1984, էջ 82):

¹³⁶ Տե՛ս Ս.Գ.Աբրահամյան, Վ.Դ.Առաքելյան, Վ.Ա.Քոսյան, Հայոց լեզու, Բ մաս, Գարահյուսություն, Ե., 1975, էջ 157:

¹³⁷ Հմմտ. *Չօրէնս մոգութեան յանձին կալչիք* (Եղիշէ, 17):

¹³⁸ *Միջնորդական*-ի փոխարեն Հ.Հարությունյանն առաջարկում է *ոչ անմիջական* եզրույթը (տե՛ս Հ.Ա.Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 63):

¹³⁹ Հմմտ. *Կիրոս բազաւոր հրաման ետ վասն տան Տեառն* (Բ եզր., 2, 3):

¹⁴⁰ Հմմտ. նաև՝ *հրաման պատասխանի տալ, պատուէր հրամանի տալ* սեռական հոլովով հավելադրությամբ հարադրավոր բայերը:

¹⁴¹ Այլ մոտեցմամբ, նշված բայաձևեր կարելի է համարել նպատակի սրական կամ որոշչային սեռական:

¹⁴² Եռարժույթ ներգործ. սեռի հարադրավոր բայերը գրաբարի բառապաշարի տիպական տարրերից չեն: Զննությունը ցույց է տալիս, որ գրաբարի գրավոր աղբյուրներում վկայված են ընդամենը մի բանի եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայեր: Խնդրառությամբ եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը պարտադիր կերպով պահանջում են մեկ սեռի խնդիր՝ արտահայտված հայցական հոլովով, և երկու բնության խնդիր, որոնցից առաջինը սովորաբար արտահայտվում է տրական կամ բացառական հոլովով, կամ էլ կապական կապակցությամբ: Ինչ վերաբերում է երրորդ բնության խնդրին, ապա այն արտահայտվում է կամ գործիական հոլովով, նաև կապական կապակցությամբ: Եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերից են՝ *պատասխանի տալ, խոստո-*

վան լինիմ, ազդ առնեչ, յուշ առնել, ի բաց պաշտպել և այլն: Օրինակ Ազդ առնելին *նմա* (հմտ. *առ Շապուհ* – Խոր., 302) *մարգարէիւն* (Եզնիկ, 165) *գիրսն* (Բուգ., 116): *Ձինչ* տայցեմք *նմա* պատասխանի (Բուգ., 169) *զանձնէն* (Բուգ., 226): Խոստովան եղել (*նմա*-Նար., 108) *վասն անձին* իւրոյ, *թէ չեմ քրիստոնեայ* (Բուգ., 119): *Չաչս* ի բաց պարսպել *ի ճառագայրիցս* (Նիս.) *միջոցաւ* (Առ որս.) և այլն: Եթե նկատի առնենք, որ ա) գրավոր աղբյուրներում եռարժույթ հարադրավոր բայերի երրորդ խնդիրը բոլոր դեպքերում չէ, որ ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանում, բ) նշված խնդիրը մյուս երկու խնդիրների հետ միաժամանակ 5-րդ դ. հեղինակների կողմից միեմույն կառույցի մեջ գրեթե չի գործածվում, գ) գործիական հոլովով կամ կապական կապակցությամբ նմանատիպ խնդիրներ կարող են պահանջել նաև խնդրառությամբ միարժույթ բայերը, և դ) խնդրառական արժույթի երրորդ եզր համարվող այդ խնդիրները տվյալ դեպքում պարտադիր և ուժեղ խնդրառության դրսեվորում չեն, ապա դժվար չէ եզրակացնել, որ վերը բնութագրված հարադրավոր բայերի եռարժույթ լինելը սխալմանակալն է: Արդի հայերենի բայի խնդրառական արժույթի մասին Ս. Դյուրբադյանը գրում է. «Պարտադիր խնդիր առնելու (ուժեղ խնդրառություն) հատկությամբ բայերը լինում են գրոարժույթ, միարժույթ, երկարժույթ և բազմարժույթ»: Բերված օրինակները, սակայն, վկայում են, որ վերջին բազմարժույթ խմբի մի քանի բայերի պահանջած ոչ բոլոր լրացումներն են խնդիրներ և արժույթի լիարժեք դրսևորում. «*մեքենայից* խնձորը ձեռքով բաժանել երեխաներին» (տես Ս. Վ. Դյուրբադյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 23-26):

¹⁴¹ Սրանց հետ պետք չէ շփոթել այն հարադրավոր բարդությունները, որոնց հարադրի բաղադրիչների միջև առկա է *սկզբնականի տեղի պարագա – բայ գերադաս անդամ* շարահյուսական հարաբերություն. *քարավէժա՛ւ* առնել զամենեսեան (Ոսկ.), *գեաավէժ* առնել զնոսա ի Տափերական կամրջացն (Ազար., 23), *գահավէժ* առնել զնոսա ի ծայրից բարձրավանդակին (Բ Մեաց., ԻԵ, 12), *դարսիտս* առնել զդի (Ոսկ.) և այլն:

¹⁴² Անսովոր է (գրավոր աղբյուրներում, սակայն, վկայված է) *միջոցի խնդիր-բայ գերադաս անդամ* շարահյուսական հարաբերությունն արտահայտող բարդ հարադիր ունեցող հարադրավոր բայերի հետ կիրառել գործիականով բնության խնդիր. եթե վերջինս և բարդ հարադրի անվանական բաղադրիչը համարմատ են. Զարակոծ առնելին զնա *քարամբք* (Բուգ., 18): Նշված հարադրավոր բայերը գործիական հոլովով արտահայտված միայն պարագա կարող են պահանջել (Օրինակ՝ *արուեստիք* ցնորակոծ առնել զնա (Կոչ.), քուշանաբար *հինի* սմբակակոխ առնել զսահմանս Հայոց (Խոր., 44) և այլն:

¹⁴³ *Բուռն հարկանել*-ի համար առավել տիպական է *2+բացառական հոլովածեով կապվող բառածն* կապակցությամբ լրացումը, որը, փաստորեն, ոչ թե բնության խնդիր է, այլ սեռի խնդրի իմաստային տարբերակ՝ մասնական ուղիղ խնդիր: Օրինակ՝ Մատուցեալ բուռն հարկանել *գրագաւորէն* (Բուգ., 101): Չայսպիսոյ մեծէ *իրէ* բուռն հարկանել (Խոր., 11) և այլն: Միաժամանակ պետք է նշել, որ «ձեռնամուխ լինել» իմաստի դեպքում *բուռն հարկանել* բայը հանդես է բերում կրկնասեռություն՝ պահանջելով չեզոք սեռի բայերին հատուկ բնության խնդիր՝ արտահայտված տր. հոլովով: Օրինակ՝ Որոյ և ծախող *իրացն* իսկ բուռն հարեալ էր նորա (Եղիշէ, 88):

¹⁴⁴ Հմտ. *Ջերասանակ ի բուռն առեալ* (Փիլ.). որտեղ *ի բուռն առեալ*-ը գործածված է ուղիղ իմաստով:

¹⁴⁵ Անշուշտ, այս տեսանկյունից բացառություն են կազմում անորոշ դերբայների ուղիղ ձևերով արտահայտված բնության խնդիրները, որոնք գերադաս անդամի թելադրանքով այս կամ այն հոլովածեով արտահայտվելու, կառավարվելու փոխարեն, կապակցվում են առդրության եղանակով: Օրինակ՝ Չայս *կրել* (փոխ. կրելոյ-Գ.Խ.) արժանի արարեր զիս (Ազար., 59):

¹⁴⁶ Նազար Փարպեցին կիրառում է նաև *ի ձեռն* եզակի տարբերակը (էջ 101):

¹⁴⁷ Ի դեպ, նույն բանը նկատվում է նաև արդի հայերենում: Գ. Չախուկյանը խնդրառությամբ երկարժույթ բայերի մասին իրավացիորեն նշում է, որ այդ «բայերի երկրորդ խնդիրը հաճախ համեմատաբար թույլ է լինում և կարող է զանց առնվել»:

¹⁴⁸ Բայս բազմիմաստ է, որի հետևանքով ձեռք է բերել կրկնասեռ բայի հատկություն: Հմտ. *Ձթուպատուրիւն* առ յանձն (Ազար., 207) և Ապս շառնոյր *զայն նմա* յանձն Տերէնտն գորավարն Յու-նաց (Բուգ., 162):

¹⁴⁹ Հմտ. նաև *կնութեան առնուլ* աննախդիր հարադրավոր բայը, որը նույն հեղինակի՝ Բուգանդի կողմից է գործածվել՝ *Ձթեզ* առից *ինձ* կնութեան (Բուգ., 103):

¹⁵² Բայս այլ կիրառության մեջ ունի մաս գործիականով բնության խնդիր՝ *ծանօթ իրօք*, որը սրաբ տաղիր խնդրառության դրսևորում չէ:

¹⁵³ Ասվածը վերբերում է կառավարման եղանակով կապակցված արտահայտչամիջոցներին:

¹⁵⁴ Որոշ դեպքերում տեղի պարագայի իմաստը փոխարինում է հանգման խնդրի իմաստին. Օրի-նակ՝ Մուշեղ բարեխօս առնէր *առ Պապ* գմեմ քահանայապետն Ներսէս (Բուզ., 163): Սոցա առաւել ևս բողոք կալեալ *առ արքայի*, թէ առաւելագոյն մեղ է մեզ (Խոր., 193) և այլն:

¹⁵⁵ Ակադ. Դ. Ջահուկյանն այսպիսի բայերն անվանում է *բազմադաս* (տե՛ս Դ.Բ. Ջահուկյան, Ժա-մանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 464)

¹⁵⁶ *Հինիմ*-ով ներգործական սեռի հարադրավոր բայերի կազմությունը գրաբարում հաստով է բարդ-մանական գրականությանը: Տես նաև՝ *թելադիր լինիմ*: Ի դեպ, Աստվածաշնչյան նախադասություն-ներից մեկն էլ ներկայացնում է ներգործական և կրավորական կառույցների երկակի վիճակ՝ *Դողո-մըն կալցի ի քէն գլերինս* (Ես., 44, 1): Հմմտ. ռուս. *Горы растаяли бы от жгуча Твоего*.

¹⁵⁷ Նշված մասնակադասարի ուղղ. հոլովով արտահայտված ենթական գրաբար աղբյուրներում հազվադեպ է: Այդպիսի կառույցի օրինակ չենք բերում, բամի որ ստորոգյալի գործառնություն սովորա-բար հանդես են գալիս ոչ հարադրավոր բայեր. *Ես ինձէն* աչօք տեսի (Եղիշէ., 62): *Մեր մեզէն* ողջ ենք (Եղիշէ., 142) և այլն: Ընդ որում, կան նաև նշված կարգի բառածներով այլ կապակցություններ ևս, որոնք կատարում են բաղադրյալ ենթականի շարահյուսական գործառնությ. հորիզոնը առեալ *ձեզէն ի ձեզ* խորհեցարուք և տեսէք (Ագաթ., 258) և այլն:

¹⁵⁸ Է. Սկրտչյանը նշված տիպի ընդգծված անդամներն անվանում է բուն ենթականեր [տե՛ս Է. Ա. Սկրտչյան, Պարզ նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում (ս-տեմախոսության սեղմագիր), Ե., 1999, էջ 15-16]:

¹⁵⁹ Տ-րդ դ. գրավոր աղբյուրներում վկայվում է նեմց *լիցի* հարադրյալը.

¹⁶⁰ Հմմտ. *Այժմ գիտուն լիցի քեզ*, տէ՛ր մեր և *թագաւոր, վասն* Հրէիցն (Ա. Եզր., Բ, 18). որտեղ ար-ժույթի երկրորդ եզրը ոչ թե ստորոգելի է, այլ դարձյալ բնության խնդիր՝ արտահայտված կապական կապակցությամբ:

¹⁶¹ Հմմտ. *Թեթեւ ինչ բուիցի ձեզ աշխատութիւն հասուցանել մարդկան* (Ես., Է, 13):

¹⁶² Հմմտ. *Չար եւ դառն է քեզ թողուլն գիս* (Երեմ., Բ, 19) նախադասությունը, որը երկկազմ է. *թողուլն* որոշյալ հոդով գործածված անորոշ դորբայն այստեղ ենթակա է. որ անվանում է ոչ թե գոր-ծողություն, այլ առարկայացված իրողություն:

¹⁶³ Հմմտ. ռուս. *Чтoбы тебе хорошио было*.

¹⁶⁴ Ռ. Իշխանյանը (տե՛ս Ռ. Ա. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջ 304) և ու-րիշներ նշված հարադրության բաղադրիչների միջև նկատում են ենթակա-ստորոգյալ հարաբերություն, սակայն այն համագամանքը, որ սրանց առաջին բաղադրիչը միշտ համոյես է գալիս անվավովս (այս դեպքում՝ անորոշ առմամբ), ինքնին վկայում է սրանց՝ կայուն կապակցություն՝ հարադրավոր բայ լինե-լու օգտին: Վ. Դ. Առաքելյանն այս հարցի կապակցությամբ նշում է. «Երբ դիմավոր բայի և անորոշ դեր-բայի գործողությունը միևնույն ենթականի հետ է առնչվում, անորոշը ստորոգյալի մաս է, իսկ եթե դրանց ենթակաները տարբեր են, անորոշը դառնում է ուղիղ խնդիր: *Ուզում եմ գնալ* և *Արգելում եմ գնալ* նախադասությունների մեջ առաջին *գնալ*-ը ստորոգյալի մաս է, իսկ երկրորդը՝ ուղիղ խնդիր» (Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, Բ մաս, Ե., 1975, էջ 221):

¹⁶⁵ Հմմտ. նաև *Օրն խոնարհեցաւ յոյժ* (Կատ., ԺԹ, 11): *Յորժամ մերկասցի առաւօտն* (Յուդ., ԺԴ, 2) և այլն, որոնք օղերնության հետ կապված իրողություններ են անվանում փոխաբերա-բար:

¹⁶⁶ Հմմտ. *Ապրելոյ ճար լիցի Տիգրանուհեայ* (Խոր., 81), որտեղ անորոշ դերբայի սեռականով արտահայտված անդամը ոչ թե ստորոգելի է, այլ գոյական անդամի լրացում՝ հատկացուցիչ: Հմմտ. նաև՝ *Ապա սկիզբն առնու կենդանանալոյ* (Եզնիկ, 15): *Եղեալ սկիզբն բարգմանելոյ զգիրս* (Կորին, 50) և այլն: Սրան հակառակ՝ կան նաև անորոշ դերբայով արտահայտված կապակցություն-ներ, որտեղ անորոշը ստորոգելի չէ. *Եւ ձեռն ի գործ արա պատերազմել* (Փարպ., 130): *Իշխան Պարսից առնէր սպաս զգաւմ կատարել* (Բուզ., 45): *Կտանել հնարս գերծամել իմ ի խղճս* (Փարպ., 119) և այլն:

¹⁶⁷ Հմմտ. մասն. *պատուէր հրամանի տալ* սեռականով հազվադրությամբ բարդությունը:

¹⁶⁸ Ստորոգելիների մի մասն արտահայտված է բացարձակ անորոշ դերբայով:

¹⁶⁹ *Գոռն սալ*-ը հիմնականում գուգադրվում է ընթացք անվանող բայերի հետ: Հմմտ. նաև՝ *Դոռոհ*

տուեալ անդր ընթանային (Փարս., 46):

¹⁷⁰ Բնութագրական սեռականի բացառիկ կիրառություններից է:

¹⁷¹ Հմմտ. Չեսթոդ անում մի շունչ քաշեն (տե՛ս Հ.Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Ե., 1969, էջ 222):

¹⁷² Բերված դարձվածային հարադրավոր բարդություններից շատերն այսօր էլ գործածական են մեր լեզվի թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում: Հարկ է նշել, որ դրանց մի մասը ժամանակակից հայերենին են անցել պատմականորեն հնչյունափոխված կամ արդի միջոցներով ձևավորված արդիականացված տարբերակներով. *յակն գալ - աչքում գալ, յոգուց հանել - հոգուց հանել, յաշխարհի գալ - աշխարհի գալ, ի գլուխ հանել - գլուխ հանել, ի մեղ անկանիմ - մեղն ընկնել, յոտն եւ ի ձեռն անկանիմ - ոտ ու ձեռ ընկնել, յոտս անկանիմ - ոտքերն ընկնել, զքնով անկանիմ - քնով ընկնել* և այլն: Գրաբարյան դարձվածային միավորների մի մասի իմաստն անցել է ժամանակակից հայերենին:

¹⁷³ Դրանց համար լեզուն կիրառում է նոր արտահայտչամիջոցներ, որ ինքնին նշանակում է, թե լեզվամասնագետությունը անհամեմատ կայուն է, մինչդեռ նրա արտահայտության ձևերը լեզվի պատմության տարբեր շրջաններում ենթակա են փոփոխության: Օրինակ՝ *անկիւն հատանել - տուն, խանութ* և այլն/ *կտրել, զբանիք անկանիմ - խոսքով ընկնել, գան ըմպել - ծեծ ուտել, ի բոին ունել զհոգի - հոգին բոի մեջ պահել, բան ի գետին անկանիմ - խոսքը գետին գցել, ոտն գոտամբ անկանիմ - ոտքը ոտքին գցել, կլանել հոգի - շունչ քաշել, ընդ քեռն անկանիմ - քրոջ հետ ընկնել* և այլն:

Գրաբարյան դարձվածային միավորների մի մասն էլ (հատկապես թարգմանական գրականության միջոցով գրաբարին անցածները) հայերենի զարգացման շրջանում դուրս են մնացել բառապաշարից:

¹⁷⁴ *Անկողին արկանել*-ի հետ տրականի փոխարեն կարող է կապակցել սեռական հոլովով լրացում, որը, սակայն, հիշյալ քայի խնդրատական արժույթի դրսևորումը չէ՝ Արկին անկողինս *Սառուղայ* ի տանիսն (Ա.Թազ., Թ., 25):

¹⁷⁵ Հմմտ. Ջոհնապարհս, որ *կայրն առաջի*, գնալ մարբասցեն (Բուզ., 156), որտեղ ընդգծվածը ոչ թե հարադիր քայ է, այլ ստորոգյալ-պարագա, այսինքն՝ շարահյուսական կապակցություն:

¹⁷⁶ Հմմտ. *Թագաւորին թագակապքն լեալ էին ի բնէ ազգին թագաւորութեան Արշակունոյ* (Բուզ., 216):

¹⁷⁷ Ուշ շրջանի գրավոր աղբյուրներում *ակն տալ* քայի հետ խնդրի կապակցումը տեղի է ունենում նաև միջնորդական կառուցարման եղանակով՝ Որով ակն տուեալ *ի խաշն* (ՆՀԲ):

¹⁷⁸ Հմմտ. Պատուհաս ի Տեառնէ *ի վերայ հասանէր* (Ազաթ., 113), որտեղ ընդգծված բայը հանդես է գալիս այլ իմաստով:

¹⁷⁹ Տրականով արտահայտված բնության խնդիրների մի մասը հանդես է եկել փոխաբերական իմաստով. *Ճարակ լինել անշէջ հրոյն* (Բուզ., 73):

¹⁸⁰ Ի դեպ, *առ արկանել, գամօք զգննուլ, անդորր ատնել* և այլ բայեր իմաստով չեզոք սեռի պատճառականներ են (համապատասխանաբար, «*վախեցնել*», «*ամաչեցնել*», «*խաղաղեցնել*»):

¹⁸¹ Որոշ բայերի գործիականով արտահայտված բնության խնդիրները բովանդակության պլանում հասկանալի լինելու պատճառով թե՛ն հազվադեպ, սակայն, այնուամենայնիվ, հանդիպում են թե՛ հայ պատմիչների գործերում և թե՛ թարգմանական գրականության մեջ: Դրանք *ձեռական* (այս եզրույթով Գ.Ջահուկյանն անվանում է 1-ին և 2-րդ դեմքի ստորոգյալների իմաստային պլանում ենթադրվող և բառային արտահայտություն ունեցող ենթակաները) խնդիրներ են: Օրինակ՝ *Ճափս հարկանել նոցա* (Երեմ., Ե, 31) *ձեռամբ քով* (Եզեկ., ԻԱ, 18):

¹⁸² Հարկ է նկատել, որ *յադրել* բայն ինքն էլ սեռի խնդիրը տրական հոլովաձևով է սլախանջում:

¹⁸³ Հմմտ. *Ջորավիզն օգնականութեան լինի Անդիպատրոսի՝ հօր Հերովդի* (Խոր., 132), որ-տեղ հարադրի հետ կիրառվել է սեռականով հավելադրություն: Տե՛ս նաև՝ Բնաջինջը գաւաղքն և ինքեանք կային *ի հարկի ծառայութեան* (Բուզ., 178) նոցա (Փարս., 106): Այլ *կազմ պատրաստի* կային նմին գործոյ ճակատուն պատերազմի (Բուզ., 127) և այլն:

¹⁸⁴ Հմմտ. *Ամոք քեզ, Մոսի՛, քուք ու նախատինք* (տե՛ս Հ.Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Ե., 1969, էջ 89):

¹⁸⁵ *Ընդ առաջ գալ/գնալ/ելանել* միավորները մի դեպքում՝ խնդրատությամբ միարժույթ հարադրավոր բայեր են, որոնք պահանջում են տրական հոլովով արտահայտված բնության խնդիր [Ինքնին Տէրն կառաց և երիվարաց *ընդ առաջ եկեալ ձեզ* (Եղիշէ, 108): *Ընդ առաջ ելանէր նմա* բազատրն (Ա.զաթ., 427): *Ընդ առաջ գնաց նմա* (Խոր., 223): *Ընդ առաջ ելանէր նմա* իշխանն Դողբան (Կորիւն, 40)

և այլն], մյուս դեպքում՝ բացառվում է դրանց հարադրավոր բայ լինելը, բայց որ *ընդ առաջ*՝ ո՞ր ձեռք է բերում ոչ թե մակբային, այլ կապական բառին հատուկ քերականական դեր՝ ենթադրելով սեռական հո-լովով արտահայտված կապվող բառածն [Ասյու ելունէր Վասակ ընդ առաջ *նորա* (Բուզ., 124): Ընդ առաջ *նորա* ելին զօրք այնր կողմանն (Խոյս., 170)]¹⁹⁴:

¹⁹⁵ *Կից* բաղադրիչով մի շարք հարադրավոր բայերը, տրական հոլովից բացի, կարող են պահանջել նաև նախդրավոր կապակցությամբ բնության խնդիր: Հմմտ. Մահակից լինիմք *Ջրիստոսի* (Եղիշէ, 107) և *ընդ Աբէլի* (Ոսկ.):

¹⁹⁶ Հմմտ. Թշնամիր նոցա գգեցցին զամօր (Ես., Ա, 29), որտեղ բայական բաղադրիչը *գգենուլ*-ն է և ոչ թե *գգեցուցանել*-ը:

¹⁹⁷ Բացառականի քերականական իմաստները գրաբարում արտահայտվում են նաև կապական կապակցությամբ. Օրինակ՝ Խոյս ետ *յերեսաց առն* Իսրայելի ընդ ճանապարհ անապատին (Դ-ատ., Ի, 42): Ի փոխուստ դառնայր *յերեսաց գորավարին* Մանուէլի (Բուզ., 204): Մի շարք դեպքերում էլ բացառականով արտահայտված բնության խնդրին փոխարինում է բացառականով արտահայտված պարագան. Ոչ ատուրք միով յառաջ ժամանեցին խոյս տալ *ի քաղաքէն* (Փարս., 145): Անդէն դէքն չիք *յաչաց* լինին (Ես.) և այլն:

¹⁹⁸ «*Կամիմ գծեզ անհոգս լինել*» տիպի նախադասությունների մեջ *գծեզ* սեռի խնդիրը հանդես է եկել ոչ թե *անհոգս լինել* չեզոք սեռի հարադրավոր բայի, այլ *կամիմ* ներգործական բայի պահանջով: Այսպիսի կառույցներում ուղիղ խնդիրները փոխապեսգրաված ենթակազմեր են: Հմմտ. *Կամիմ, գի դուք անհոգ լինեցիք* (Ա Կոր., Է, 32): Դրանք բարգմանական գրականությունը հատուկ կառույցներ են, որոնցում առկա է քերականական ձևերի պատճենման միջոցով կատարված բարգմանության փորձ:

¹⁹⁹ Բացառականի փոխարեն կիրառվում են նաև բացարձակ անորոշ դերբայներ, որ նշանակում է, թե կապակցումը կատարվել է սողորությամբ և ոչ թե կատարված: Ի բաց կացին *ձեռնտու լինել* քրիստոնեութեանն զօրու օգնականութեամբ (Եղիշէ, 86):

²⁰⁰ Բայս ավելի հաճախ աչքի է ընկնում տեղի պարագաւարտությամբ:

²⁰¹ *Բազումք ի երէիցն ընչաթափ եղեն յընչիցն* (Ոսկ.) կառույցի իմաստային պլանում բացառականով բնության խնդիրն, այսպես կոչված, ձևական է:

²⁰² Հայ պատմիչների երկերում *ընդ կրուկն դառնալ*-ը խնդրառու չէ: Հարկ է նշել նաև, որ *ընդ կրուկն*-ը այլ կիրառության մեջ կատարում է ձևի պարագայի շարահյուսական գործառույթ՝ Յեսո դարձեալ *ընդ կրուկն* («անմիջապես»)՝ *անցանէին* ընդ ջուրն (Փարս., 42):

²⁰³ *Չոգի առնուլ*-ը բազմիմաստ է: Այս համգամանքը պատճառ է դառնում, որ այն որոշ կիրառությունների մեջ հանդես գա որպես խնդրառության տեսանկյունից արժուրագուրկ բայ՝ *Չես ինձ հանգիստ չոգի առնուլ եւ ոչ մի օր* (Ես.):

²⁰⁴ Նշված մի շարք հարադրավոր բայեր պահանջում են փոխադարձ գործողությամբ իրար հետ կապված առարկաներ, որոնք, բնականաբար, արտահայտվում են փոխադարձ դերանուններով:

²⁰⁵ *Էջ եհաս* մօտ ի յատակս երկրիս (Ագաթ., 383) նախադասություն մեջ նշված բայը պահանջում է պարագայական խնդիր: Նույն հատկանիշով բնութագրվում է նաև *մօտ գալ*-ը:

²⁰⁶ *Յադրատս* անդամը տվյալ դեպքում համգամա խնդրի փոփոխակն է, ուստի և ումի պարագայական խնդրի արժեք:

²⁰⁷ ՆՀԲ-ում՝ *թելակուտ լինիմ* (տե՛ս ՆՀԲ, համապատասխան բառահոլովածը):

²⁰⁸ Տե՛ս Ա.Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 239:

²⁰⁹ *Ելենէս առնել* հարադրավոր բայի հետ սովորաբար առնչվում է փոխադարձ, հավաքական կամ հոգնակի գործողության գաղափար: *Կանայք մի գմիով* ելենս առնէին (Փարս., 109): Բազմա-ցան դասը գրչաց ելենս առնելով *գմիմեամբք* (Փարս., 17) և այլն:

²¹⁰ *Շուրջ պատել* բայի համար գործողություն կատարող է ենթադրվում կամ հոգնակի, կամ գանգվածային առարկա անվանող ենթակա. *Մէջ եւ մառախուղ* սրահակաձև շուրջ զլերամբն պատեալ (Ագաթ., 159): Հենց Տ-րդ դարի գրաբար տեղյութներում *շուրջ*-ը հանդես է գալիս ոչ միայն բարդության հարադրի, այլ նաև լրացուցիչ նախդրի գործառույթով՝ հարադրվելով «*Հ+գործիական հոլովով կապվող բառածն*» կապական կապակցության հետ. *Պատեալ կայիմ* (օճք-Գ.Խ.) *շուրջ գինել* (Ագաթ., 124):

²¹¹ Սեռականով հավելալություն է.

³⁰² Հմմտ. *Յայտ յանդիման ծայն արծակեաց առ մեծ հրապարակսն* (Եղիշէ. 12) նախադասութիւն մեջ հեղինակը նկատի ունի հրապարակում հաճաքված մարդկանց:

³⁰³ Նկատելի է, որ *Ի ՎԵՐԱՅ* կապով արտահայտված խնդիրները ոչ բոլոր բայերի համար են արժույթի դրսևորում: Օրինակ՝ Իբրև գըշնամիս շարամսիք եղեն *ի վերայ երախտեացն* (Ագաթ., 322): Տալ զանձն ի մահ *ի վերայ* սուրբ *հաւատոյն* (Փարպ., 64):

³⁰⁴ Հանգման խնդրի քերականական իմաստակիր է:

³⁰⁵ Հարկ է նկատել, որ նշված որոշ գուգաձևեր գրարարի զարգացման տարածամասնակյա կտրրվածքի վկայություններ են. Յերկբայս լինիմ *պատգամաց* (ՆՀԲ) և *վասն այսոցիկ* (Սահմ.): Գիրկս արկանել *գրել* (Առակ., Դ, 8) և *գրոց* (ՆՀԲ) և այլն:

³⁰⁶ Թե՛ *այց առնել*, թե՛ *այցելութիւն առնել* բայերի նախդրավոր խնդիրները կիրառված են բարգմանական գրականության մեջ՝ *Այց արարից ի վերայ մոցս* (Երեմ., ԺԱ, 22): *Արարից այցելութիւն ի վերայ ձեր* (Երեմ., ԻԱ, 14):

³⁰⁷ Հմմտ. *Ջաշխար եւ զկոծ դնել մեռելոց* (Բուգ., 216):

³⁰⁸ Հմմտ. *Հոգի ընդ մարմնոյ ոչ բաղակցի* (Ոսկ.):

³⁰⁹ Հմմտ. *Իրացն եղելոց խելամուտ լինէր* (Կորին., 56):

³¹⁰ Հմմտ. *Եղիցի գլուխ ամենայն բնակչացս* (Դատ., Ժ, 12):

³¹¹ *Թիկունս դարձուցանել*-ը կարող է պահանջել և շնչավոր (ամծ կամ կենդանի), և բանձրացական առարկա անվանող բնության խնդիր: Հմմտ. *Եւ ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց* (Խոր., 270): *Եւ ոչ թիկունս դարձուցանէ յանասնոց* (Առակ., Լ, 30) և *Մի յահագին սրոյ առն մահկանացոի գրիկունս դարձուցուր* (Եղիշէ, 101). որտեղ վերջին կիրառության մեջ առկա է փոխաբերական իմաստ: Ի դեպ, «*Եւ ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց*» կառույցը լավագույնս վկայում է, որ *ոչ մի* ժխտական դերանունն առաջացել է բայի ժխտական խոնարհման ցուցիչի՝ *ոչ*-ի՝ բայի դրական ձևից տարանջատված լինելու հետևանքով: Շարադասական այդ ազատությունը հետագայում պատճառ է դարձել, որ այն դիտվի որպես *ոչ մի* դերանվան բաղադրիչը: Այս բանին նայաստել է *ոչ*-ի շեշտակորույս լինելը, որի հետևանքով էլ այն արեւելահայերենում այլևս չի կարողացել խաղալ մահ գործողություն ժխտողի իր դերը՝ այն զիջելով չ ձևության:

³¹² *Գոռ լինիմ* հարադրավոր բայը պահանջում է բացատրականով, գործիականով և կապական կապակցությամբ խնդիրներ. *Գոռ լինիմ նովաւ* (Ոսկ.), *ի մէնջ* (Փարպ., 176) և *գղմանէ* (Եղիշէ, 182):

³¹³ Անշուշտ, ոչ բոլոր հարադրավոր բայերի պահանջած տրական և բացատրական հոլովներով արտահայտված լրացումներն են բնության խնդիրներ. *Ի տախտակացն* խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն թախծութիւնս (Կորին., 52) և Յայտնի լինէր *գորավարին* (Փարպ., 127):

³¹⁴ Որոշ բայերի՝ տարբեր հոլովաձևերով բնության խնդիրները գրարարի զարգացման տարածամասնակյա կտրվածքի գրավոր վկայություններն են: Օրինակ՝ *Փիլիսոփայութեան շէր ինչ հեռի* (Եւս.) և *Հեռի լինիմ ի քէն* (Նար., 39):

³¹⁵ Նշված խնդիրների փոխադրեն բայս ավելի ուշ պահանջում է մահ բացարձակ անորոշով լրացում՝ *Ոչ կալան ժոյժ մնալ ի նմին* (ՆՀԲ):

³¹⁶ Նշված հարադրավոր բայերից մի բանիս խոսքի մեջ հսկողես են բերում դարձվածային արժեք. *զահ* (և զերկիտ) *տալ*, *ակնակառոյց լինիմ*, *աչս արծակել* և այլն: Օրինակ՝ *Արծակեաց զաչս իւր գինտ հոմանեաց* (Առակ., ԺԷ, 20): *Մի ինչ աչս արծակէր դուր յաւար* (Ա Մակ., Դ, 17): *Ձի ետ զահ իւր յերկիրն* (Եզեկ., ԼԲ, 32): *Յօրէ յայսմանէ սկսի՛ր տալ զահ քո առաջի ամենայն ազգաց* (Բ Օրէմ., Բ, 25) և այլն:

³¹⁷ Հմմտ. *Մահ՝ Արկէ՛ք վիճակ* ընդ իս եւ ընդ Յովնանու (Ա Թագ., ԺԴ, 42), որտեղ ընդգծված բայը պահանջում է քերականական այլ հարաբերություն արտահայտող բնության խնդիր՝ *ընդ* նախդրի կրկնությամբ:

³¹⁸ Հմմտ. փոխաբերաբար՝ *Սուգ առին երկիրն ի վերայ ձեր* (Եղիշէ, 56):

³¹⁹ Մի շարք բայեր բազմիմաստ են գրարարի զարգացման տարածամասնակյա կտրվածքում: Օրինակ՝ *լոտ լինիմ*-ը («*հանդարտվել*»), հետագայում նշանակել է նաև «*չխոսել*», ուստի առաջին դեպքում պահանջում է անջատման, իսկ երկրորդ դեպքում՝ վերաբերության անուղղակի խնդիր:

³²⁰ Կապվող բառաձևը ենթաառարկում հասկանալի լինելու պատճառով չի նշվել:

³²¹ Սեռականի և տրականի քերականական համամուններն լինելու դեպքում հաճախ դժվար է որոշել, թե հետևյալ կառույցներում այդ հոլովաձևերից որն է կիրառվել իբրև լրացում. Որոյ ընդ առաջ ելեալ

յադրող *զնորն* (Փարսկ., 130): Ընդ առաջ եկին *մոցա* մինչև ի գեղն (Փարսկ., 65): Կրկին անգամ ընդդէմ կալ (հմմտ. *Դէժ ընդդէմ կալ միմեանց* (Փարսկ., 134)) Հայոց պատերազմաւ բազաւորին Պարսից (Եղիշէ, 98): Ընդդէմ երրայ *գորացն* Յունաց (Խոր., 127):

²²² Անշուշտ, խնդրատուրյամբ երկարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայեր չեն դիտւում այնպիսիք, որոնց պահանջած երկու բնության խնդիրներից մեկը անմիջականորեն չի բխում տվյալ բարդության բովանդակության պլանից և կրում է պատահական բնույթ (ոչ պարտադիր կառավարում է) պայմանավորված տվյալ խոսքային իրադրությամբ: Օրինակ՝ *Չի մի ընդ քո* այլ ումեք երկիր պսգանիգեսք (Կոչ.): Որդի *ընդ հոր* ի միում յաստուածութեանն խոստովանակից եղեալ (Կիրոյ.): Եւ մեզ յինել անդարձ *ընդ նոսա* (Փարսկ., 105): Ուրախ լերուք (*ընդ նմա*-Բուզ., 65) *ի Զրիստոս* (Եղիշէ, 154): *Ընդ իս* իւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեսչիք (Եղիշէ, 45) նախադասությունների մեջ ընդգծված բնության խնդիրները արժույթի արտահայտություններ չեն: Բնականաբար դրանց գերադասւած անդամ բայերը խնդրատուրյամբ միարժույթ են:

²²³ Բայս հարկ եղած դեպքում կարող է տրական հոլովով արտահայտված խնդրի փոխարեն պահանջել կապական կապակցությամբ բնության խնդիր. 'Դատ դնեմ *ընդ հարս* ձեր (Եզեկ., Ի, 36): 'Դատ դնել անդ *ընդ ձեզ* (Եզեկ., Ի, 35) և այլն:

²²⁴ Հմմտ. Տայր երրումն տրքայն Պարսից տրքային Արշակայ *երդնուլ* յԱնտարան (Բուզ., 107):

²²⁵ Մրանք կարող են դասվել նաև այն բայերի շարքը, որոնց պահանջած երկու բնության խնդիրներն էլ արտահայտված են կապական կապակցություններով:

²²⁶ Բայիս խնդրատական երկրորդ արժույթը երբեմն արտահայտվում է ոչ բե կապական կապակցությամբ, այլ անորոշ դերբայով՝ Ի Տեսնեմ տոին հրաման *սիրել* զմիմեանս (Ագաթ., 342):

²²⁷ Հմմտ. *ի վերայ նորա ընդ իս* (Յեսու, Բ, 14):

²²⁸ Թեև գրավոր աղբյուրներում բացակայում են համապատասխան գրավոր փաստերը, այնուամենայնիվ նշված շարքում պայմանականորեն տեղ է տրվել նաև մի շարք այնպիսի բայերի, որոնց բառիմաստից դժվար չէ ենթադրել, որ դրանք խնդրատուրյամբ երկարժույթ են:

²²⁹ Հմմտ. *Աղօթս առնել ի վերայ կենաց բազաւորին* (Եղիշէ, 28): *Զորմէ աղօթս մատուցանէին* (Եզեկ., 229):

²³⁰ *Աղօթս մատուցանել* հարադրավոր բայը կարող է պահանջել նաև անմիջական կառավարմամբ կապակցվող բնության խնդիր՝ արտահայտված տրական հոլովով. *Աղօթս մատուցար մեք Տեսնեմ* (ԲՄակ., Ա, 8): Հմմտ. *այժոցիկ* (Բուզ., 36) և այլն:

²³¹ Հմմտ. *Աղօթս մատուցանել առ Աստուած* (ԳՄակ., Զ, 13):

²³² Որոշ բայերի խնդրատական արժույթներից մեկն արտահայտված չէ, բայց, ինչ խոսք, ենթադրվում է (այստեղ՝ *ընդ իս եւ ընդ ձեզ*):

²³³ Հմմտ. *Եւ այս հռչակ հարկանէր զնոցանէ* (Բուզ., 88) *ընդ երկիր* ամենայն, որտեղ ընդգծված պարագան բնության խնդիրներից մեկի (*ի Զրիստոս*) իմաստային փոփոխակն է:

²³⁴ *Արժանի լինիմ* չեզոք սեռի բայը այս կիրառության մեջ հանդես է բերել կրավորական սեռի բայի քերականական իմաստ: Ի դեպ, նշված բայը տրականի փոխարեն կարող է պահանջել բացարձակ անորոշ դերբայով արտահայտված ստորադաս անդամ: Օրինակ՝ Ոչ եղար արժանի *հաւասարել* ընդ քաջ նահատակն (Եղիշէ, 167):

²³⁵ Անշուշտ, ոչ բոլոր բայերին է հատուկ տեղի պարագատությունը: 'Իրարարում կան բազմաթիվ բայեր, որոնք չեն կարող պահանջել տեղի պարագա: Դրանք այն բայերն են, որոնց՝ ա) հարադիրը ժամանակին գործածվել է անկախ՝ կատարելով տեղի պարագայի շարահյուսական գործառույթ (օրինակ՝ *ի մէջ գալ, ի մէջ կալ, ի մէջ մատչիմ, ի մէջ մտանել, յերկիր կործանիմ, յերկիր անկանիմ* և այլն) և բ) հարադրի բաղադրիչներից մեկով անվանվում է մյուս բաղադրիչով՝ բայարմատով անվանվող գործողության կատարման տեղը. *Ծովընկէցիկ լինիմ, քաղաքաբնակ լինիմ, դաշտամուխ լինիմ* և այլն: Օրինակ՝ *Յերկիր կործանեցաւ* (Բուզ., 37): *Կարծիր ի մէջ մտանէին*, քէ... (Եզեկ., 56): Իսկ նա, *ի մէջ մատուցեալ*, խօսել սկսաւ (Բուզ., 68): Այա *ի մէջ եկաց*, սկսաւ ստել սակաւ (Բուզ., 59): Որ *ի մէջ գալ* ոչ կարեն (Ագաթ., 261): *Քաղաքաբնակ լինիմ* ('Ոլիտ.): Ընդ առաւօտն կանխեալ *լինէին դաշտամուխ* (ԱՄակ., ԺԶ, 5): Կիսամեռք *յերկիր անկեալ* դնէին (Եղիշէ, 186) և այլն:

²³⁶ Բայս բազմիմաստ է և «համըստվել» իմաստով կարող է առնել գտնել նաև խնդրատուրյամբ միարժույթ չեզոք սեռի հարադրավոր բայերի շարքում՝ Որ առաւել ցանկայ, նա ոչ երբեք կարէ *գտնողի առնուլ* ի ցանկանալոյ (Ոսկ.):

²³¹ Նշված միջոցը այլ բայերի պահանջով արտահայտում է ուղղության կամ վերջնականի տեղի պարագայի քերականական իմաստ: Օրինակ՝ *Ջվահիր տեսնել ի ներքս ի սեննակ* (Փարսյ., 169):

²³² Նշված տիպի կապակցությունների մեծ մասը փոխաբերաբար կիրառվելիս գրկվում է տեղի պարագա ենթադրելու հնարավորությունից:

²³³ Ասվածին հսկառուկ՝ պարսական պարսգա պահանջող բայերը կարող են պահանջել այլ տեղի պարսգա եւ: Օրինակ՝ *Շուրջ կալով ի վերայ* արժարի *սկուտեղմ* (Փարսյ., 35):

²³⁴ Պայմանականորեն այս շարքն ենք դասում նաև *բափանցիկ լինիմ* բայը, որը պահանջում է անցման տեղի պարագա. *Ընչտ քնդ մէջ քիկանցն* բափանցիկ լեալ յերկիր հարստի պարն (Խոր., 36):

²³⁵ *Չու առնել* հարադրավոր բարդությունը ավելի հաճախ պահանջում է սկզբնականի տեղի պարագա: Վերջնականի տեղի պարագա պահանջելիս *չու առնել*-ը ավելի հաճախ գաղղվում է ընթացք անվանող այլ բայերի հետ. *Չու արարեալ երթայր* ի կողմանս Հայոց (Ագար., 21): *Չու արարեալ գնաց* յերկիրն Արարադայ (Խոր., 33): *Չու առնել գնալ* ի դուռն (Փարսյ., 75):

²³⁶ Թեև երեք տեղի պարագաներն էլ առկա են, սակայն ոչ բոլորն են տվյալ բայի հետ կապակցվել կառավարման եղանակով:

²³⁷ Ընթացք անվանող այս բայերի հետ չպետք է շփոթել *ի բաց գոյ, գորածողով առնել, յոտն կալ, քնդ ոտն կալ* և նմանատիպ հարադրավոր բայերը, որոնք պահանջում են միայն ելակետի տեղի պարագա. Յոտն կացին *ի բազմականաց* (Եղիշէ, 115): *Զորածողով արարեալ խմենայն կողմանց* կամեր խաղալ ի վերայ Հեփթաղին (Փարսյ., 115):

²³⁸ *Յարտասուս հարկանիմ* և այն բացառիկ բայերից է, որն աչքի է ընկնում ոչ թե տեղի, այլ պատճառի պարագաառական արժույթով Այս մասին են վկայում մի շարք նախադասություններ, որոնցում հիշատակվում է նշված գործողության կատարման պատճառը: Օրինակ՝ *Առ յոյժ գեղեցկութեանն* բազումք յարտասուս հարան (Բուզ., 59): *Զոր լուեալ* նախարարացքն՝ յարտասուս հարեալ... (Խոր., 354):

²³⁹ Հմմտ. *Հուպ են առ մեզ* (Խոր., 214):

²⁴⁰ Հմմտ. նաև՝ *Մօտ եղեն գոտիք նորա* (Ոսկ.):

²⁴¹ Հմմտ. *Ոչ յաշխարհի մօտ երթայար* (Եղիշէ, 184):

²⁴² Ձևական միջոցի խնդիր է:

²⁴³ Հմմտ. *Գ.Բ.Ջահուկյան*, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 468:

²⁴⁴ Նախադասությունը քաղված է 1929թ. Վիեննայում տպագրված Աստվածաշնչից:

²⁴⁵ Գրքաբար աղբյուրներում վկայված են մի շարք կառույցներ, որոնց բայ-ստորոգյալը թեև կարող է այլ կիրառության մեջ կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտել, սակայն հետևյալ կիրառությունների մեջ դրանք հանդես են բերել ոչ թե կրավորական, այլ չեզոք սեռի բայերի քերականական իմաստ. քանի որ չունեն և չեն ենթադրում իրենց ենթակայի վրա ներգործող աուարկա: Օրինակ՝ *Ամենայն լեռոն ակօսաբեկ լիցի* (Նա., Է, 25): *Յամենայն կողմանց ալեկոծ լինէին միտք նոցա* (Եղիշէ, 203): *Զիա՞րդ մատնեցալ ի ծեռս Վասակայ* (Բուզ., 53): *Այլակերպս եղել առաջի նոցա* (Մարկ., Թ. 1): *Անձամբ յանձն ձեռնամուխ լինել, անձին առնել* հարադրավոր բայերը դարձվածային արժեք ունեն և նույնպես նշում են ենթակայի կողմից իր նկատմամբ կատարված գործողության գաղափար. Պոնտոս Պիդատոս ի պէս-պէս վիրտս մատնեալ՝ *անձամբ յանձն ձեռնամուխ լինէր* (Նա., Բ, 266-268): Ներոն, առ չժուժալ չարաչար գուժին, ի բուրաստանի ուրեմն *անձին արար* (Նա., Բ, 272-274) և այլն:

²⁴⁶ Նշված երևույթի մասին տես *Ա.Ա.Աբրահամյան*, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Ե., 1953, էջ 627, *Ա.Ա.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 194:

²⁴⁷ Ընդգծված բացառականով արտահայտված անդամը ոչ թե սեռի խնդիր է, այլ տեղի պարագա (հմմտ. ռուս. *у Невры*):

²⁴⁸ Թեև այս կառույցի մեջ չի հիշատակվում ներգործող խնդիրը, սակայն իր իսկ պատմության մեկ այլ հատվածից երևում է, որ դրանց մասին Բուզանդն ինքը տեղեկություն ունի:

²⁴⁹ Հմմտ. *Դարձեալ ի քաղաքէ ի քաղաք փոխստեայ լինէր՝ ատելի, հալածական յամենեցունց* (Բ՝ Մակ., Ե, 8):

²⁵⁰ Տես *Ա.Ա.Աբրահամյան*, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Ե., 1953, էջ 627:

²⁵¹ Նույն բանը նկատվում է նաև արդի հայերենում (տես *Ա.Ա.Աբրահամյան*, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Ե., 1953, էջ 616-630, *Ա.Ա.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե.,

1966, էջ 191-192):

¹⁵⁸ Տե՛ս *Մ.Արեղյան*, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 174-175:

¹⁵⁹ Տե՛ս *Ա.Մեյն*, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 383:

¹⁶⁰ Տե՛ս *Ա.Ս.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 325:

¹⁶¹ Տե՛ս *Հ.Զ.Պետրոսյան*, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 369:

¹⁶² Այլ Մարգարյանը նշում է «նույնիսկ հին բայերից հարադրված» գուգարայերի մասին (տե՛ս *Ա.Ս.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 314):

¹⁶³ Ա Մարգարյանն առաջարկում է գուգարական բայերի առանձին տեսակ համարել այն բարդությունները, «որոնց ուղղակի բաղադրիչը, իբրև կոմոն, արտահայտվում է հրամայական, իսկ երկրորդը ըղձական եղանակով» (տե՛ս *Ա.Ս.Մարգարյան*, նշվ. աշխ., էջ 302): Սակայն գրավոր փաստերը վկայում են, որ, ըղձականից բացի, երկրորդ բաղադրիչը կարող է արտահայտված լինել նաև այլ եղանակների բայաձևերով (ինձն. *եկ հավանեա ց, արիք կամք յաղօթս* և այլն), որոնք նույնպես տվյալ դեպքում ըղձական եղանակի բայաձևի քերականական իմաստ են արտահայտում:

¹⁶⁴ Ա.Մեյնն հնարավոր է համարում, որ գուգարայեր կազմելու «սովորույթը մասամբ բարբառային լինի» (տե՛ս *Ա.Մեյն*, նշվ. աշխ., էջ 385):

¹⁶⁵ Ի դեպ, Տ.⁽⁶⁾ Տ.⁽⁶⁾ մասնակաղապարը նույնպես որոշ դեպքերում կարող է բաղադրվել հրամայական եղանակի բայաձևերի գուգարորմով, որտեղ, սակայն, առաջին բաղադրիչը պարտադիր կերպով կիրառվում է իր բուն մշամակությամբ: Օրինակ *արի, կեք* (⁽¹⁾ Թագ., ԺԹ, 7) գուգարայության մեջ *արի* բայաձևով *կեք* հրամայականը չի եղանակավորվում: Այդ է վկայում նաև հաջորդ նախադասությունը, որտեղ նույնպես մշված բայը (*յառժեք*) գործածվել է իր բուն մշամակությամբ՝ *Եւ յաբճաւ, եկեր և արք* (Դ. Թագ., ԺԹ, 8):

¹⁶⁶ Տե՛ս *Չալոխեան Վ., Այսրնևան Ա.*, Քերականություն հայկազնեան լեզուի, Վյեննա, 1885, էջ 433:

¹⁶⁷ Հմմտ. որ *բարձեալն տանէին* (⁽¹⁾ Լուկ., Է, 14), որտեղ *ն* հոդի առկայությունը պայմանավորված է *որ* հարաբերական դերանվան նախադաս կիրառությամբ:

¹⁶⁸ Հմմտ. *մոռացօնք լինիմ* համանիշը:

¹⁶⁹ Վերջին երկուսը *անկեալ կամ*-ի համանիշներն են:

¹⁷⁰ Իմա՝ *ոչ մարբացեալ ընդդէմ դառնալ*:

¹⁷¹ Հմմտ. *Եւ Յակոբու դէմ եղեալ առ արքայ* (Խոր., 246):

¹⁷² Չուգարական բայերի այս ձևը ցույց տալիս պահպանվել է արդի հայերենի ժողովրդասիրտական ոլորտում. *ուսել են ուտում, մի փախչել փախալ, ծեծել ծեծեցին, տանել տարալ* և այլն:

¹⁷³ Վ. Քոսյանը գործիական հոլովաձևի կիրառության այս դեպքը կոչում է «սաստկացման գործիական» (տե՛ս *Վ.Ա.Քոսյան*, Գրաբարի բառակապակցությունները, Ե., 1980, էջ 165):

¹⁷⁴ Այլ կիրառությունների մեջ *դարձեալ* ը համդես է բերում մակբային հատուկ «բնավորություն», *դարձեալ ի նոյն դարձջիք* (Ա. Կոր., Է, 5):

¹⁷⁵ Ա. Մարգարյանը նշում է, որ «շարժում կամ տեղափոխություն անվանող բայերով գուգարական բարդություններ կազմելը աշխարհաբարի ու գրաբարի, այլև միջին հայերենի գուգարական բայերի կազմում դրսևորվող ամենամեծ ու պիտավոր ընդհանրությունն է» (տե՛ս *Ա.Ս.Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 313):

¹⁷⁶ *Առնուլ փախչիմ*-ը այն հազվագյուտ գուգարայերից է, որի կազմում գտնվող բաղադրիչներն առանձին-առանձին կարողացել են պահանջել իրենց հնարավոր լրացումները (*առնուլ*-ը սեռի խնդիր է պահանջել, *փախչիմ*-ը՝ տեղի պարագա):

¹⁷⁷ Նշելով, որ «համանությունը արտահայտվում է բոլոր խոսքի մասերով, գուգարայի բայերի ու հարադրությունների համանիշ ձևերով», Վ. Առաքելյանն իրավացիորեն նկատում է, որ այդ «գարդերը սփռված են թե՛ ինքնուրույն և թե՛ բարգմանական գրականության մեջ» (տե՛ս *Վ.Ռ.Առաքելյան*, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 71):

¹⁷⁸ Գրավոր աղբյուրներում վկայված են նաև բակառության բազմաթիվ փաստեր, որոնք գրաբարի համար օրինաչափ են. Սակայն առուել ստիպով *եկեալ հասամէիմ գումդն* ⁽¹⁾ Խաթից ի գաւստն Արտագ (Փարպ., 69):

¹⁷⁹ Տե՛ս *Է.Ս.Սկրտչյան*, Պարզ մախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում (ատենախոսության սեղմագիր), Ե., 1999, էջ 9-15:

¹⁸⁰ Ինչ վերաբերում է գուգարական հարադրությունների անդեմ ձևերին, ապա շարահյուսական

բնագավառում նրանք կարող են հանդես գալ այն գործառույթներով, որոնք հատուկ են պարզ բայերի անդեմ ձևերին: Անդեմ զուգաբայերը կարող են դառնալ ստորոգելի [*Ստիպէր* զերանելի սպարապետն Հայոց Վարդան՝ գտէր Մամիկոնէից, իշխանն Սիւնեաց Վասակ *զնայ արատաիել* նոցա զնղս (Փարս., 63): Կամեցեալ *չու առնել զնալ* ի դուռնն և ինքնն նենգատր իշխանն Սիւնեաց (Փարս., 75) և այլն], նպատակի պարագաւ [Եւ լուս Ծնաւոն, եթ ժողովեաց Տրիփոն զօրս բագումս՝ *զալ հասանել* ի վերայ երկրին Հոռ աստանի (Ա Մակ., ԺԳ., 1)] և այլն:

²⁸¹ Ենթադրվելու դեպքում սեռի խնդիրը կարող է նաև բառային արտահայտություն չունենալ: Օրինակ՝ Վահանատրքն... կային պահէին (զ՝Խարեզին-Գ.Խ.) քստ հրամանի տուելոյն (Բուզ., 205):

²⁸² Ճիշտ է, քերված մախադասության մեջ բացառականը կատարում է պարագայական գործառույթ, սակայն տվյալ զուգաբայը կարող է դրա փոխարեն պահանջել բնության խնդիր: Այդ մասին են վկայում *մերժել* բայի անկախ կիրառության դեպքերը:

²⁸³ Մի սեռի և մի բնության խնդիր ունեցող ոչ բոլոր զուգաբայական հարադրություններն են խընդրառություններ կերպրծույթ: Այս պարագայում կարևոր է պահանջված բնության խնդրի պարտադիր լինելը: Այսպես՝ « Ընդ որս *կալեալ տանէին* և զսուրբ եպիսկոպոսն » (Փարս., 75) մախադասության ընդգծված զուգաբայը երկարծույթ չէ, քանի որ *ընդ որս* բնության խնդիրը տվյալ զուգաբայի համար պարտադիր չէ, այն անմիջականորեն չի բխում այդ բայի իմաստային դաշտից: Նրա առկայությունը պայմանավորված է տվյալ խոսքային իրադրությամբ:

²⁸⁴ Խնդրառությամբ երկարծույթ չեզոք սեռի զուգադրական բայերը գրաբարում հազվադեպ են. Էւսեփ իբրև *եկին հասին* հրամանք հրովարտականցն *ի մեծ բագաւորէն* Յունաց առ *Տրդատ* արքայն Հայոց Մեծաց (Ագաթ., 90):

²⁸⁵ Թեև «Որ *կայ պահի* յուսացելոց քոց» (Ագաթ., 60) մախադասության ընդգծված զուգաբայը ևս պահանջել է տրականով բնության խնդիր, սակայն վերջինս սլարադիր խնդրառության դրսևորում չէ:

²⁸⁶ Հմմտ. *Որք երբեալք յանդիման եղեն թագաւորին* (Փարս., 73-74):

²⁸⁷ Հմմտ. *Չերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր* (Ագաթ., 29):

²⁸⁸ Այս շարքի բայերից պետք է տարբերել այնպիսիք, որոնք ընդհանրապես չեն կարող տեղի պարագառու լինել: Օրինակ՝ Եւ քարչեալ ի բաց ընկեցին զմարմինն նոցա (Ագաթ., 108):

²⁸⁹ Հմմտ. *Ետ... ածել զնա առ դուրս սենեկին* (Ագաթ., 100):

²⁹⁰ Նշված ժամանակի պարսկաներն արծույթի դրսևորումներ չեն:

²⁹¹ Հաճախ այդ դերում կարող են հանդես գալ փոխաբերաբար գործածված իրանիչ խնդիրներ. Սատկէ Տեր *զքաղաքս* (Ծննդ., ԺԹ, 14): Սատակէլ *զամենայն տիեզերս* (Ես., ԺԳ, 5) և այլն:

²⁹² Տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 179:

²⁹³ Տե՛ս Եշվ. աշխ., էջ 185:

²⁹⁴ Ժամանակակից ֆրանսերենում ևս պատճառականության, հարկադրականության իմաստը կարող է արտահայտվել «առնել (*faire*)+անորոշ դերբայ») կաղապարով (տե՛ս E.A.Re fctovskaja, A.K. Vassilieva, Essai de grammaire francaise, Cours theorique, M., 1973, էջ 229-230):

²⁹⁵ Տե՛ս Վրթ. *Չալիխեան*, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1885, էջ 364, 397: Հմմտ. Ա.Ա.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 436: Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 185-186:

²⁹⁶ Տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 185:

²⁹⁷ Ի դեպ, *առնել* և *տալ* բայերը համանշտություն են հանդես բերում նաև այլ կառույցներում: Հմմտ. *Թոյլ արա ինձ հանգչել* (Յովք, Ժ, 20) և *Թոյլ տուր ինձ մտանել* (Ծննդ., ԼԸ, 16):

²⁹⁸ Այս կապակցությամբ Ալ.Մարգարյանը գրում է. «Հարադրավոր և զուգադրական բայերի համեմատությամբ իրենց ձևաբանական կառուցվածքի տեսակետից ևս պատճառական հարադիր բայերը անհամեմատ պարզ և մինչև իսկ միօրինակ պատկեր են ներկայացնում: Իսկ դա բացատրվում է նրանով, որ պատճառական հարադիր բայերի երկրորդ քաղադրիչը բացառապես արտահայտվում է մի բայով՝ *տալ*-ով, որ հարադրվելով այլևայլ բայերի անորոշին՝ դրա հետ ոչ քիչ թվով պատճառական հարադիր բայեր է կազմում» (տե՛ս Ա.Ա.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 414-415):

²⁹⁹ Տե՛ս Ա.Ա.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 434-440:

³⁰⁰ Տե՛ս Եշվ. աշխ., էջ 139:

³⁰¹ Տե՛ս նույն տեղում:

³⁰² Տե՛ս նշվ. աշխ., էջ 435:

³⁰³ Հատկանշական է նաև, որ մի շարք հարադրությունների մեջ կամ *հրաման* հարադրի հետ գործածվում է սեռականով հավելադրություն [*Հրաման պատուիրանի տալը* ընդ աջո՛ւ կողմնսն՝ գնդին՝ պատրաստ լինել ընդդէմ գորավարին (Եղիշէ, 116)], կամ *հրաման* բառն ինքն է հանդես բերում սեռականով ավելադրությունը [*Պատուէր հրամանի տալը* պատրաստական լինել (Եղիշէ, 80)], կամ էլ հարադրի գործառույթ է կատարում *պատուէր*-ը միայնակ [*Պատուէր տալը* գգոշանուս նոցա (Փարպ., 94): *Պատուէր տալ* գորապետաց իւրոց հնարել ապրեցուցանել զԱրայն (Խոր., 49)]:

³⁰⁴ Բավական է նշել, որ Աստվածաշնչում այն վկայված է ավելի քան 150 անգամ, Բուզանդի երկուն՝ ավելի քան 40 անգամ և այլն:

³⁰⁵ *Տալ* բայով հարադրված պատճառականների բովանդակության պայմանում ենթադրվող «*հրաման*» իմաստի առկայության մասին ակնարկ ունի Ա.Այտընյանը, որը, սակայն, հեղինակը չի բխեցնում գրավոր փաստերից (Տե՛ս *Վրթ. Չալքիւեան, Քերականութիւն հայկական լեզուի, Վենետիկ, 1885, էջ 397*):

³⁰⁶ Հմմտ. նաև *Հրամայէ (հրաման տալ/տայ) ընկենուլ* ի վի՛ս սե՛մ և *ծածկել* (Ագար., 50):

³⁰⁷ Հին անգլերենում ևս պատճառականության իմաստը ձևավորվում էր նմանատիպ միջոցներով, ինչպես *lyfnesse sellan* («բույլ տալ»), *hatan* («հրամայել»), *latian* («բույլատրել», «հրամայել») և այլն (տե՛ս *Бродович О.П., Источники П.А., Конструкции с каузативными глаголами в древнеанглийском языке, §Взаимодействие языковых структур в системе*, вып. 4, Л., 1980, стр. 65-74):

³⁰⁸ Չենք բացառում, որ *տալ* բայով պատճառական հարադրավորները առաջացած լինեն նաև «*գործութիւն տալ-անորոշ դերբայ*», «*իշխանութիւն տալ-անորոշ դերբայ*», «*շնորհ տալ-անորոշ դերբայ*» և այլ կապակցություններից՝ *իշխանութիւն, գործութիւն, շնորհ* և այլ հարադիրների գեղձման հետևանքով, որոնց արտահայտած իմաստները ենթադրվում են նաև դրանց բացակայության դեպքում: Ավագ ծի օգտին են խոսում մի կողմից՝ *Ետ նոցա իշխանութիւն առնել* նշանս (Ագար., 354): *Ետ իշխանութիւն* սրբոցս որդիս Աստուծոյ լինել (Ագար., 299) և այլն, մյուս կողմից՝ Ջի յաղբեաց յաղթող գործութիւնը քն և ետ մեզ (*գործութիւն-Գ.Խ.*), *յաղթել* (Ագար., 106): Եւ ետ ինձ (*գործութիւն-Գ.Խ.*), *համբերել* (Ագար., 120): *Տայ ինձ (շնորհ-Գ.Խ.)* Աստուած տեսանել այնպէս (Փարպ., 167): Աղէ՛, տու ք ինձ (*հնար-Գ.Խ.*) *գիտել*՝ ո՛վ են լերինքն այնոքիկ (Բուզ., 143) և այլ նախադասությունները՝ վկայված 5-րդ, ապա նաև հետագա դարերում:

³⁰⁹ Տե՛ս *Վրթ. Չալքիւեան, Քերականութիւն հայկական լեզուի, Վենետիկ, 1885, էջ 397*:

³¹⁰ Տե՛ս *Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Ե., 1969, էջ 70*:

³¹¹ Տե՛ս *Պարույր Յնակ, Նրկերի ժողովածու 6 հատորով, հ. 2, Ե., 1972, էջ 18*:

³¹² Փոխանակ՝ *ոչ տալոյ*:

³¹³ Արսեն Այտընյանը նման տիպի պատճառական հարադրավոր բայերն առանձնացնում է «*տալ* բայով անցողական» (տե՛ս *Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 92*) բայերից՝ դրանք անվանելով «կրկին անցողական» (տե՛ս նույն տեղում): Նրան հետևելով՝ Ա.Մուրվալյանը և ուրիշներ այդպիսի կազմություն ունեցող պատճառական հարադրավոր բայերն անվանում են «կրկնակի պատճառականներ» (տե՛ս *Ա.Ա.Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1958, էջ 197*):

³¹⁴ Այսուհանդերձ, *տալ* բայով և չեզոք սեռի բայերի անորոշ դերբայներով բաղադրված պատճառականներից 5-րդ դարում առանձնանում են մեկ-երկուսը, որոնք (ամենայն հավանականությամբ, ներգործական սեռի բայերի անորոշ դերբայներով հարադրված պատճառականների համաբանությամբ) ոչ միայն լծաստով են պատճառական, այլ նաև սեռի քերականական կապի վավախություն են կրել. պահանջում են հայցականով արտահայտված սեռի խնդիր: Օրինակ՝ *Օղս ոչ ի վեր տայ վերանալ* և ոգի՛ խոնարհի հակել (Եզնիկ, 192): Եւ հաւատովքն, *գոր ետուր գորանալ* ի մարդիկ (Բուզ., 189):

³¹⁵ Հմմտ. *Ռ.Ա.Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջ 26*:

³¹⁶ Տե՛ս *Ա.Մեյն, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 385*:

³¹⁷ Որպես պարզ ստորոգյալ՝ պատճառական հարադրավոր բայերն առաջինը ճշտորեն արժեքավորել է Ալ.Սարգսյանը (տե՛ս *Ա.Ս.Սարգսյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 461*)՝ հակադրվելով Վ.Առաքելյանի այն կարծիքին, թե նախադասությամ մեջ պատճառական հարադրավոր բայով արտահայտված անդամը ոչ թե պարզ, այլ բայական բաղադրյալ ստորոգյալ է (տե՛ս *Վ.Դ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, 1958, էջ 135*):

³¹⁸ Հարկ եղած դեպքում պատճառական բայերը հանդես են գալիս այլ գործառնություններով ևս. Խելացնորեցուցեալ գնա *առ ի տալ պագանել երկիր* ուրուականաց (Ագաթ., 80): *Վասն ոչ տալ* զմեզ բագմաց *ծաղրել* (Խոր., 35) և այլն: Այս դեպքում *տալ* բաղադրիչը ևս պարտադիր կերպով անդամ բայ է:

³¹⁹ Եթե *տալ* բայի հետ հարադրվեր խնդրառությամբ երկարժույթ անորոշ դերբայ, ապա կձևավորվեր եռարժույթ բարդություն: Այս տիպի պատճառական բայեր գրաբար աղբյուրներում չեն հանդիպում: Պատճառն այն է, որ խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայերն իրենք էլ, նախ՝ գրաբարի բառապաշարում մեծ թիվ չեն կազմում և, երկրորդ՝ աչքի չեն ընկնում գործառնական ակտիվությամբ:

³²⁰ Որոշ պատճառական հարադրավորներ խնդրառությամբ կարող են քստարժույթ դիտվել: Օրինակ՝ Եւ *հորն* իւրում ետ տանել մոյնպէս տասն իշոյ *բեռինս* յամենայն բարութեանցն Եգիպտացոց ի ճանապարհ (Ծննդ., ԽԵ, 23): Ես տաց ամել *քեզ ուլ* այծեաց *ի խաշանց* իմոց (Ծննդ., ԼԸ, 17) նախադասությունների մեջ *ետ տանել* և *տաց ամել* պատճառականները նշված երեք խնդիրներից բացի են: Բացառվում ենք նաև տրականով խնդիր, որը երկու դեպքում էլ բացակայում է, քանի որ միջնորդավորված գործողությունն այստեղ վերագրվել է անորոշ անձանց: Սակայն պետք է նկատել, որ այս բայերի պահանջած բացառականով բնության խնդիրը թույլ կառավարման դրսևորում է:

³²¹ Նշված մասնակադապարով արտահայտված պատճառական հարադրավորների մեջ ուսումնասիրում ենք նաև «*տալ բայ-համադրական պատճառական բայի անորոշ դերբայ*» մասնակադապարով արտահայտված պատճառականների արժույթը:

³²² Որոշ բայեր, որոնց պահանջած սեռի խնդիրը գրաբարում արտահայտվում է տրական և ոչ թե հայցական հոլովով, *տալ* բայի հետ հարադրությամբ մույնպէս պահպանում են տրականով սեռի խնդիր առնելու գործությունը: Այդ բայերից է *իշխել*-ը: Օրինակ՝ Իսկ յերկրորդին լոկ միայն վասն կարօտութեան պիտոյից ետ *իմիք* իշխել և *իմիք* չիշխել (Բուգ., 70-71):

³²³ Հմմտ. *Տան* նմա *արբումն* (Խոր., 247):

³²⁴ Բերված կառույցի մեջ զեղչված է ոչ միայն սեռի խնդիրը, այլ նաև տրականով բնության խնդիրը (*ումեք*): Նոցա-ն այս կառույցի երրորդ խնդիրն է և կատարում է շահի խնդրի գործառնությամբ:

³²⁵ Հմմտ. Վահան ոչ տայր *դուլ առնուլ* զօրօք իւրովք Պարսկաց ի դակշին (Փարպ., 148) և Վահան ոչ տայր *դուլ եւ դադար* զօրավարին Հայոց Վարդանայ (Փարպ., 60): Ոչ տայր *դուլ* անձինն և ոչ զօրացն (Փարպ., 150):

³²⁶ Բացառություն են կազմում բացառականով արտահայտված տեղի պարագաները, սակայն պետք է նկատել, որ բացառականն ինքն էլ մի նախդրավոր կապակցություն է:

³²⁷ Հմմտ. Տէր *ետ պատերազմ* ընդ հակառակորդսն Իսրայէլի (Բ Մնաց., Ի, 29):

³²⁸ Այս շարքի բայերը կարող են գործածվել նաև փոխաբերական իմաստով. այս դեպքում ձեռք են բերում այլ դասային պատկանելության սեռի խնդիր պահանջելու գործություն: Այսպես՝ բանձրացական առարկա անվանող սեռի խնդրի հետ կապվող *բանալ*, *հեղուլ*, *մորոզել* և այլ բայեր պահանջում են վերացական առարկա անվանող սեռի խնդիրներ: Օրինակ՝ Տալ նորոզել *զխաղաղութիւն* (Եսթ., ԺԳ, 2) և այլն:

³²⁹ Ասվածաշնչյան որոշ նախադասություններ հին հունարենի և ռուսերենի հետ համեմատելիս օգտվել ենք հետևյալ գրքերից՝ The old testament in grek according the septuagint. Vol. 1-3. Cambridge, 1887; 1891; 1894. Библия книги священного писания ветхого и нового заветов. М., 1976.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
- Անյ. - Դավիթ Անհաղթ (տարբեր երկերը):
- Աթ. - Աթանաս Աղեքսանդրացի, «Աստուածաբանական ճառք»:
- Ածար. } - Գրիգոր Նազիանզացի (ճառեր և քարոզներ):
Առ որս. }
- Աղեքս. - «Պատմութիւն Աղեքսանդրի»:
- Արիստ. - Արիստոտել:
- Բուզ. - Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
- Բրս. - Բարսեղ Կեսարացի (ճառեր, թղթեր, մեկնություններ):
- Գիրք Աստուծաշունչք հին և նոր կտակարանաց, Վենետիկ, 1860³²⁹:
- Եզնիկ - Եզնիկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826.:
- Եղիշէ - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:
- Եւագր. - Եւագր Պոնտացի:
- Եւս. - Եւսեբիոս Կեսարացի (Պատմութիւն եկեղեցական և Քրոնիկոն):
- Եփր. - Եփրեմ Ասորի (մեկնություններ, ճառեր):
- Իսիւք. - «Մեկնութիւն գրոցն Յորայ յԻսիւքիոսէ երիցուէ Երուսաղեմացոյ»:
- Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
- Կիրղ. - Կիրղեղ Աղեքսանդրացի (ճառեր և մեկնություններ):
- Կոչ. - «Կոչումն ընծայութեան սրբոյն Կիրղի Երուսաղեմացոյ»:
- Կորիւն - Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1957:
- Մամբրէ - Մամբրէ Վերծանող:
- Մանդ. - Հովհան Մանդակունի (ճառեր , քարոզներ, աղոթքներ):
- Մաշտ. - Մաշտոց (ծիսարան):
- Մծբն. - «Սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի ճառք լուսաւորք և հոգեկիցք»:
- Յճխ. - Գրիգոր Լուսավորիչ, «Յաճախապատում ճառք»:
- Նար. - Մատեան ողբերգութեան ս. Գրիգոր Նարեկացի, Բուէնոս - Այրէս, 1948:
- Նեղոս - «Խրատք կամ ճառք սրբոյն Նեղոսի աբբայի»:
- Նիս. - Գրիգոր Նիսացի:
- ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2 , Վենետիկ, 1836-1837:
- Ոսկ. - Յովհան Ոսկերեան:
- Պիտ. - «Գիրք պիտոյից»:
- Սեբեր. - «Սեբերիանոսի եպիսկոպոսի Եմեսացոյ ճառք վարդապետականք և քարոզականք»:
- Վեցոր. - «Գիրք վեցորեից կամ վեցորեայ արարչութեան Բարսղի Կեսարացոյ»:
- Փարպ. } - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան
Թուղթ } Մամիկոնեան, Տփղիս, 1904:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Հայերեն լեզվով

1. Արեղյան Մ., Գրաբարի քերականություն, Ե., 1936:
2. Արեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
3. Աբրահամյան Ա.Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953
4. Աբրահամյան Ա.Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Ե., 1962:
5. Աբրահամյան Ա.Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
6. Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Ե., 1962:
7. Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1975:
8. Աբրահամյան Ս.Գ., Վերդյան Բ.Հ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզվի դասագիրք, Ե., 1965:
9. Աբրահամյան Ս.Գ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզու, 2-րդ մաս, Ե., 1975:
10. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բաղդկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու (Շարահյուսություն), հ.3., Ե., 1976:
11. Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու (Բառ և խոսք), Ե., 1978:
12. Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից հայերենի դերանունները, Ե., 1956:
13. Աթայան Է.Ռ., Լեզվի շարահյուսական մակարդակի նվազագույն միավորը և նրա ձևաբանական արտահայտությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, թիվ 2:
14. Աթայան Է.Ռ., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981:
15. Աղայան Է.Բ., Պատմա-համեմատական մեթոդը լեզվաբանության մեջ, Ե., 1957:
16. Աղայան Է.Բ., Լեզուն իբրև համակարգ և իբրև կառուցվածք, «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ), 1972, թիվ 2:
17. Աղայան Է.Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
18. Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ (Դասագիրք բուհերի համար), Ե., 1987:
19. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, հ.1-2, Ե., 1949-1951:
20. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ.4, գիրք Ա-Բ, Ե., 1959-1961:
21. Այտընեան Ա.Ա., Զննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
22. Առաքելյան Վ.Դ., Հայերենի շարահյուսություն, հ.1-2, Ե., 1958-1964:
23. Առաքելյան Վ.Դ., Ակնարկներ հայ գրական լեզվի պատմության (5-րդ դար), Ե., 1981:
24. Առաքելյան Վ.Դ., Հինգերորդ դարի հայ բարգմանական գրականության լեզուն և ոճը, Ե., 1984:
25. Առաքելյան Վ.Դ., Խաչատրյան Ս.Ա., Էլոյան Ս.Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ.1 (Հնչյունաբանություն և բառագիտություն), Ե., 1979:
26. Ասատրյան Մ.Ե., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Ե., 1959:
27. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանության հարցեր), հ.Գ., Ե., 1976:
28. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու (Շարահյուսություն), Ե., 1987:
29. Ավագյան Վ.Գ., Եղանակիչ բայեր, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1975, թիվ 1:
30. Ավագյան Վ.Գ., Շարահյուսություն (Օժանդակ ձեռնարկ հայոց լեզվի ուսուցիչների համար), Ե., 1983:

31. Ավետիսյան Հ.Մ., Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Ե., 1972:
32. Ավետիսյան Հ.Մ., Ղազարյան Ռ.Ս., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1986:
33. Ավետիսյան Տ.Մ., Ածանցում և խնդրառություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ.4, Ե., 1982:
34. Ավետիսյան Տ.Մ., Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը, «Հայոց լեզվի կառուցվածքը», Ե., 1975:
35. Ավետիսյան Տ.Մ., Գրիգորյան Վ.Մ., Ածանցման և խնդրառության փոխկապվածությունը, «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ), 1975, թիվ 3:
36. Աւետիքեան Գ., Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815:
37. Բագրատունի Ա., Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
38. Բագրատունի Ա., Տարերք հայերեն քերականութեան, Վենետիկ, 1869:
39. Բաղիկյան Խ.Գ., Կոչականը ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», Ե., 1983:
40. Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Ե., 1986:
41. Բարսեղյան Հ.Խ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե., 1953:
42. Բարսեղյան Հ.Խ., Տերմինաբանական ուղեցույց, Ե., 1964:
43. Բեղիրյան Պ.Ս., Դարձվածքները Հ.Թումանյանի գեղարվեստական խոսքում, «Հայոց լեզուն և գրականությունը դարոցում», 1970, թիվ 5-6:
44. Բեղիրյան Պ.Ս., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973:
45. Բրուտյան Գ.Ա., Փոխադասություն և լեզու, Ե., 1972:
46. Բրուտյան Գ.Ա., Տրամաբանության դասընթաց, Ե., 1976:
47. Գալանոս Կղեմես, Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստութիւն շահելոյ, Հռոմ, 1645:
48. Գալստյան Ս.Ա., Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Ե., 1963:
49. Գարեգինյան Գ.Լ., Ժամանակակից հայոց լեզու (Բարդ մախադասություն), Ե., 1984:
50. Գյուլբուդաղյան Ս.Վ., Միակազմ մախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967:
51. Գյուլբուդաղյան Ս.Վ., Ժամանակակից հայերենի շարահյուսություն (Պարզ մախադասություն), Ե., 1988:
52. Դիոնեսիոսի Թրակացոյ Քերականութիւն, Փարիզ, 1824:
53. Եզեկյան Լ.Կ., Բաֆթու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Ե., 1975:
54. Ջեյրունյան Ա., Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը գրաբարում (ատենախոս.), Ե., 1965:
55. Էլոյան Ս.Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989:
56. Թոսունյան Գ.Բ., Գրաբարի մախադարությունները (V-XI դ.դ.), «Լեզվի և ոճի հարցեր», հ.7, Ե., 1983:
57. Իշխանյան Ռ.Ա., Արդի հայերենի շարահյուսություն (Պարզ մախադասություն), Ե., 1986:
58. Խլղաթյան Ֆ.Հ., Ոճաբանական տերմինների բառարան - տեղեկատու, Ե., 1976:
59. Կանայան Խ., Համաձայնությունն ու խնդրառությունն ըստ Եղիշէի (ձեռագիրը՝ 1899), Ե., 1963:
60. Կոստանդնուպոլսեցի Յ.Յ., Չտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674:
61. Համբարձումյան Վ.Գ., Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, «Հայոց լեզվի պատմության հարցեր», Ե., 1981:

62. Համբարձումյան Վ.Գ., Գրաբարի ինքնուսույց, Ե., 1999:
63. Հարությունյան Հ.Ա., Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1970:
64. Հարությունյան Հ.Ա., Բայի սեռը ժամանակակից հայերենի քերականական համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ), 1979, թիվ 1:
65. Հարությունյան Հ.Ա., Ենթակայի և ստորոգյալի կապակցության հարցի շուրջը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, թիվ 7:
66. Հարությունյան Հ.Ա., Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983:
67. Հովհաննիսյան Լ.Շ., Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, «Լեզվի և ոճի հարցեր», հ.3, Ե., 1975:
68. Հովսեփյան Լ.Ս., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987:
69. Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ., Միջին հայերենի բառարան, հ.1, Ե., 1987:
70. Ղազարյան Ս.Ղ., Միջին հայերեն, գիրք 1, Ե., 1960:
71. Ղազարյան Ս.Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981:
72. Ղափանցյան Գր., Ընդհանուր լեզվաբանություն, հ.1., Ե., 1939:
73. Ճշմարիտյան Ժ.Տ., Դերբայական դարձվածը արդի հայերենում, Ե., 1961:
74. Մարգարյան Ա.Ս., Արդի հայերենի կապերը, Ե., 1955:
75. Մարգարյան Ա.Ս., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:
76. Մարգարյան Ա.Ս., Հայերենի բաղիյուսական բարդությունները, Ե., 1986:
77. Մարգարյան Ա.Ս., Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագիտություն), Ե., 1990:
78. Մարգարյան Ա.Ս., Ժամանակակից հայոց լեզու (Բառագիտություն), Ե., 1993:
79. Մալխասյանց Ստ., Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892:
80. Մարտիրյան Ս.Մ., Տրոհվող լրացումները արդի հայերենում, Ե., 1975:
81. Մեյե Ա., Հայերենագիտական հետազոտություններ, Ե., 1978:
82. Մկրտչյան Է.Ս., Ենթակայի արտահայտությունը գրաբարում (5-րդ դար), Ե., 1967:
83. Մկրտչյան Է.Ս., Պարզ նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում (ատեն. սեղմագիր), Ե., 1999:
84. Մկրտչյան Ռ.Խ., Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», հ.4, Ե., 1977:
85. Մուրվալյան Ա.Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955:
86. Մուրվալյան Ա.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., 1959:
87. Ներսիսյան Գ., Գոյականի հետ ալլ խոսքի մասերի համաձայնությունը գրաբարում, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Ե., 1984, թիվ 3-4:
88. Շրյոդեր Յ.Յ., Արամեան լեզուի գանձ, Ամստերդամ, 1711:
89. Չամչեանց Մ., Քերականութիւն հայկազեան լեզուի, Կալկաթա, 1830:
90. Չալըխեան Վ., Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1848:
91. Չալըխեան Վ., Այտընեան Ա., Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885:
92. Պալասանեան Ստ., Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, հ.2, Համաձայնութիւն, Թիֆլիս, 1868:
93. Պալասանեան Ստ., Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874:
94. Պառնասյան Ն.Ա., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970:

95. Պառնասյան Ն.Ա., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ մախադասություններում, Ե., 1976:
96. Պառնասյան Ն.Ա., Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Ե., 1979:
97. Պառնասյան Ն.Ա., Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Ե., 1986:
98. Պետրոսյան Հ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարազյուլյան Թ.Ա., Լեզվաբանական բառարան, Ե., 1975:
99. Պետրոսյան Հ.Զ., Հայերենագիտական բառարան, Ե., 1976:
100. Պետրոսյան Հ.Զ., Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Ե., 1976:
101. Ջահուկյան Գ.Բ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5-15-րդ դ.դ.), Ե., 1954:
102. Ջահուկյան Գ.Բ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959:
103. Ջահուկյան Գ.Բ., Լեզվաբանության պատմություն, Ե., հ. 1-2, 1960-1962:
104. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:
105. Ջահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
106. Ջահուկյան Գ.Բ., Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:
107. Ջահուկյան Գ.Բ., Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Ե., 1980:
108. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն (Նախագրային ժամանակաշրջան), Ե., 1987:
109. Ջուղայեցի Սիմեոն, Գիրք, որ կոչի քերականութիւն, Կ.Պոլիս, 1725:
110. Սարգսյան Ա.Ե., Գրաբարի տիպաբանական բնութագիրը (թեկն. ատենախոս.), Ե., 1970:
111. Սիմոնյան Ն.Ս., Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1979:
112. Սուքիասյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, Բառագիտություն, Բառակազմություն), Ե., 1999:
113. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ա.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
114. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955:
115. Վանցեան Գր., Պատմական քերականութիւն արեւելահայ լեզուի, Թիֆլիս, 1906:
116. Վերդյան Բ.Հ., Բարդ ստորադասական մախադասություն, Ե., 1970:
117. Տէր Յարութիւնեան Մ., Քերականութիւն համառօտ պարզութեամբ յաշխարհաբառ լեզուէ ի գրաբառն հետգիտէտէ յառաջացեալ, Կոստանդնուպոլիս, 1808:
118. Ուռուտյան Ռ.Լ., Ժամանակակից հայերենի բայական բառակապակցությունների ձևային նկարագրություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ.9, Ե., 1984:
119. Զյուրբչյան Ա.Ն., Անվանական բաղադրյալ ստորոգյալը և նրա խնդիր ու պարագալրացումները, Ե., 1975:
120. Զոսյան Վ.Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., 1975:
121. Զոսյան Վ.Ա., Գրաբարի բառակապակցությունները, Ե., 1980:
122. Զոսյան Վ.Ա., Միջին հայերենի բառակապակցությունները, Ե., 1984:
123. Զոսյան Վ.Ա., Արևմտահայերենի բառակապակցությունները, Ե., 1986:
124. Զոսյան Վ.Ա., Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Ե., 1990:

1.1.1-ուսերեն լեզվով

1. Аветисян Т.М., Конструкция "модальный глагол+инфинитив" в современном армянском языке, "Структурный анализ текста", Ереван 1979.
2. Адмони В.Г., Исторический синтаксис немецкого языка, М., 1963.
3. Адонян Н., Дионисий Фракийский и армянские толкователи, СПб., 1915.
4. Алисова Т.Б., Семантико-коммуникативный субстрат безличных предложений, "Инвариантные синтаксические значения и структура предложения", М., 1969.
5. Алисова Т.Б., Очерки синтаксиса современного итальянского языка. "Семантическая и грамматическая структура простого предложения", М., 1971.
6. Апресян Ю.Д., Экспериментальное исследование семантики русского глагола, М., 1967.
7. Апресян Ю.Д., Идеи и методы современной структурной лингвистики, М., 1966.
8. Арутюнова Н.Д., О значимых единицах языка, "Исследования по общей теории грамматики", М., 1968.
9. Арутюнова Н.Д., Вариации на тему предложения, "Инвариантные синтаксические значения и структура предложения", М., 1969.
10. Арутюнова Н.Д., Предложение и его смысл, М., 1976.
11. Арутюнова Н.Д., Ширяев Е.Н., Русское предложение. Битийный тип (структура и значение), М., 1983.
12. Атаян Э.Р., Понятие элементарной синтаксической структуры, Ереван, 1964.
13. Атаян Э.Р., Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968.
14. Атаян Э.Р., Язык и внеязыковая действительность, Ереван, 1987.
15. Ахманова О.С., Логические формы и их выражения в языке, М., 1957.
16. Ахманова О.С., Микаелян Г.Б., Современные синтаксические теории, М., 1963.
17. Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., 1966.
18. Бабайцева В.В., Предложения с безлично-предикативными словами в современном русском языке (без инфинитива), М., 1955.
19. Бархударов Л.С., Структура простого предложения современного английского языка, М., 1966.
20. Белошапкова В.А., Современный русский язык, М., 1981.
21. Бенвенист Э., Общая лингвистика, М., 1974.
22. Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1979.
23. Берка К., Функции глагола "быть" с точки зрения современной формальной логики, "Логико-грамматические очерки", М., 1961.
24. Биребаум Я., Горизонтальные синтаксические связи, "Вопросы языкознания", 1979, No 5.
25. Блох М.Л., Теоретическая грамматика английского языка, М., 1981.
26. Болданов В.В., Семантико-синтаксическая организация предложения, Л., 1977.
27. Бродович О.И., Штейнберг Н.А., Конструкции с каузативными глаголами в древнеанглийском языке, "Взаимодействие языковых структур в системе", вып. 4, Л., 1980.
28. Брутян Л.Г., Лингвистический анализ языковых выражений конъюкции, Ереван, 1983.
29. Будагов Р.А., К теории синтаксических отношений, "Вопросы языкознания", 1973, No 1.
30. Бурсье Э., Основы романского языкознания, М., 1972.
31. Валгина Н.С., Розенталь Д.Э., Фомина М.И., Русский язык, М., 1972.
32. Валгина Н.С., Синтаксис современного русского языка, М., 1978.
33. Вандриес Ж., Язык, Л., 1937.

34. Ваняников Ю.В., Котляр Т.Р., Вопросы строения предложения. Саратов. 1960.
35. Вопросы синтаксиса английского языка, т.361, Л., 1967.
36. Галкина-Федорук Е.М., Суждение и предложение, М., 1956.
37. Галкина-Федорук Е.М., Горшкова К.В., Шанский Н.М., Современный русский язык (Синтаксис), М., 1958.
38. Гаспаров Б.М., Опыт классификации синтаксических структур современного русского языка на основе строения их парадигм, "Труды по русской и славянской филологии", вып. 245, Тарту, 1970.
39. Гвоздев А.Н., Современный русский литературный язык (Синтаксис), М., 1973.
40. Глисон Г.А., Введение в дескриптивную лингвистику, М., 1959.
41. Гухман М.М., Глагольные аналитические конструкции как особый тип сочетания частичного и полного слова, "Вопросы грамматического строя", М., 1955.
42. Долинина И.Б., Штейнберг Н.А., Глагольные каузативные конструкции в древнеанглийском языке, "Вопросы структуры английского языка в синхронии и диахронии", вып. 3, Л., 1973.
43. Дымарская-Бабаян Н.Н., О безличных глаголах в современном русском языке, "Русский язык в школе", 1956, No 2.
44. Единицы разных уровней грамматического строя языка и их взаимодействие, М., 1969.
45. Ермакова О.П., О взаимообусловленности форм подлежащего и сказуемого в современном русском языке, «Синтаксис и норма», М., 1974.
46. Есперсен О., Философия грамматики, М., 1958.
47. Звегинцев В.А., Предложение и его отношение к языку и речи, М., 1976.
48. Кротевич Е.В., Управления как способ выражения синтаксических отношений, Львов, 1958.
49. Лайонз Дж., Введение в теоретическую лингвистику, М., 1978.
50. Лекант П.А., Синтаксис простого предложения в современном русском языке, М., 1974.
51. Лекант П.А., Изучение структуры предложения и словосочетания в курсе современного русского языка, М., 1977.
52. Лекант П.А., Гольцова Н.Г., Жуков В.П., Современный русский литературный язык, М., 1988.
53. Лиз Р.Б., Что такое трансформация?, "Вопросы языкознания", 1961, No 3.
54. Ломтев Т.П., Об абсолютных и реляционных свойствах синтаксических единиц (филологические науки), 1960, No 4.
55. Мейе А., Введение в сравнительное изучение индо-европейских языков, М.- Л., 1938.
56. Мельников Г.П., Сущность предикации и способы ее языкового выражения, "Инвариантные синтаксические значения и структура предложения", М., 1969.
57. Мещанинов Н.Н., Глагол, М.- Л., 1949.
58. Микуш Р.Ф., Рецензия на книгу Л.Теньера "Элементы структурального синтаксиса", "Вопросы языкознания", 1960, No 3.
59. Морозова Т.С., Синтаксические свойства глагола и его словообразовательный потенциал, "Проблемы структурной лингвистики-1982", М., 1984.
60. Мразек Р., Синтаксическая дистрибуция глаголов и их классы, "Вопросы языкознания", 1964, No 3.
61. Мухин А.М., Функциональный анализ синтаксических элементов, М.- Л., 1964.
62. Мухин А.М., Синтаксический анализ и проблема уровней языка, Л., 1978.

63. Покусаенко В.К., Использование потенциального предикативных сочетаний в функции членов предложения, "Вопросы синтаксиса русского языка", Ростов-на-Дону, 1978.
64. Руднев А.Г., Односоставные предложения (Лекция из курса синтаксис современного русского языка), Л., 1957.
65. Руднев А.Г., Синтаксис простого предложения, М., 1960.
66. Руднев А.Г., Синтаксис современного русского языка, М., 1968.
67. Русская грамматика, т.2. Синтаксис (под ред. Н.Ю.Шведовой), М., 1980.
68. Русская грамматика, т. 2, Синтаксис, М., 1982.
69. Седельников Е.А., О грамматических категориях простого предложения в современном русском языке, "Исследование по современному русскому языку", М., 1970.
70. Сепир Э., Введение и изучение речи, М.- Л., 1934.
71. Синтаксис и норма, М., 1974.
72. Синтаксис текста, М., 1979.
73. Синтаксические связи в русском языке, Владивосток, 1974.
74. Синтаксический и семантический компонент лингвистического обеспечения.
75. Соболевский С.И., Древнегреческий язык, М., 1948.
76. Современный русский язык (под ред. Д.Э.Розенталя), ч. 2, М., 1976.
77. Современный русский язык, ч.II. Синтаксис (под ред. Д.Э.Розенталя), М., 1979.
78. Современный русский язык (под ред. В. А. Белошапковой), М., 1989.
79. Степанова М.Д., Методы синхронного анализа лексики, М., 1968.
80. Теньер Л., Элементы структурального синтаксиса, М., 1959.
81. Томсон А., Историческая грамматика современного армянского языка, Тифлис-СПБ, 1890.
82. Туманян Э.Г., Древнеармянский язык, М., 1971.
83. Хабургаев Г.А., Предложения с нулевым глагольным сказуемым в современном русском языке, "Русский язык и методика его преподавания в средней школе", т. 42, Воронеж, 1962.
84. Хемп Э., Словарь американской лингвистической терминологии, М., 1964.
85. Холодович А.А., Опыт теории подклассов слова, "Вопросы языкознания", 1960, No 1.
86. Хомский Н., Синтаксические структуры, "Новое в лингвистике", М., 1962.
87. Чейф У., Значение и структура языка, М., 1975.
88. Шведова Н.Ю., Грамматика современного русского литературного языка, М., 1970.
89. Шендельс Е.И., Многозначность и синонимность в грамматике, М., 1970.
90. Шухардт Г., Избранные статьи по языкознанию, М., 1956.
91. Юрченко В.С., Структура предложения и система синтаксиса, "Вопросы языкознания", 1979, No 4.

Գ. Օւսմը լեզուի կառուցման

1. Brunot F. et Bruneau Ch., Précis de grammaire historique, Paris, 1949.
2. Damourette J. et Pichon E., Des mots à la pensée, t.I, Paris, 1911.
3. Duvivier G., Ch. Grammaire des grammaires, Bruxelles, 1843.
4. Irtenyeva N.E., Barsova O.M., Blokh M.I., Skarpin A.P., A Theoretical English Grammar (Syntax), M., 1969.
5. Harris Z.S., String analysis of sentence structure, The Hague, 1962.

6. Kobrina N.A., *An outline of Modern English Syntax*, M., 1965.
7. Le Bidois G. et R., *Syntaxe du français moderne*, Paris, 1967.
8. Meillet A., *Recherches sur la Syntax comparée de l'Arménien*, Paris, Tint X, 1898.
9. Meillet A., *Linguistique historique et linguistique générale*, 2^e éd., Paris, 1926.
10. Referovskaja E.A., Vassilie'va A.K., *Essai de grammaire française, Cours théorique*, M., 1973.
11. Scheurweghs G., *Present- Day English Syntax*, Longmans, 1966.
12. Strang B.M., *Modern English Sentence Patterns*, The University of Michigan Press, 1960.
13. Searlt J.R., *Speech Acts* Cambridge, 1969.
14. Tesnière L., *Éléments de syntaxe structurale*, Paris, 1959.
15. Vogt N., *Les Formes nominales du verbe arménien classique* – S.L.S.A, 1935.

Ն Ե Ր Ա Ճ ՈՒ Թ Յ ՈՒ Ն	3
-----------------------------	---

ԳԼՈՒԽ I

ԳՐԱԲԱՐԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ

ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺՈՒՅԹԸ

Ա. Գրաբարի հարադրավոր բայերը	31
Բ. Գրաբարի հարադրավոր բայերի արժույթը	90
Բ.1. Ներգործական սեռի հարադրավոր բայերի արժույթը	91
Բ.1.1. Ներգործական սեռի հարադրավոր բայերի ենթակաառությունը ..	91
Բ.1.2. Ներգործական սեռի հարադրավոր բայերի ստորոգառությունը ...	95
Բ.1.3. Ներգործական սեռի հարադրավոր բայերի խնդրառությունը	98
Բ.1.3.1. Խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի բայեր	100
Բ.1.3.2. Խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի բայեր	106
Բ.1.4. Ներգործական սեռի հարադրավոր բայերի պարագաառությունը ..	112
Բ.1.5. Ներգործական սեռի հարադրավոր բայերի և նրանց պահանջած սեռի խնդիրների դասային խմբերը	118
Բ.2. Չեզոք սեռի հարադրավոր բայերի արժույթը	127
Բ.2.1. Չեզոք սեռի հարադրավոր բայերի ենթակաառությունը	127
Բ.2.2. Չեզոք սեռի հարադրավոր բայերի ստորոգառությունը	132
Բ.2.3. Չեզոք սեռի հարադրավոր բայերի խնդրառությունը	136
Բ.2.3.1. Խնդրառությամբ արժութագուրկ չեզոք սեռի բայեր	137
Բ.2.3.2. Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայեր	149
Բ.2.3.3. Խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայեր	171
Բ.2.4. Չեզոք սեռի հարադրավոր բայերի պարագաառությունը	175
Բ.2.5. Չեզոք սեռի հարադրավոր բայերի և նրանց պահանջած բնության խնդիրների դասային խմբերը.....	188
Բ.3. Կրավորական սեռի հարադրավոր բայերի արժույթը	196

ԳԼՈՒԽ II

ԳՐԱԲԱՐԻ ԶՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ

ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺՈՒՅԹԸ

Ա. Գրաբարի զուգաբայական հարադրությունները	203
Բ. Չուգաբայական հարադրությունների արժույթը	223
Բ.1. Չուգաբայական հարադրությունների ենթակաառությունը	223
Բ.2. Չուգաբայական հարադրությունների ստորոգառությունը	225
Բ.3. Չուգաբայական հարադրությունների խնդրառությունը	226
Բ.3.1. Ներգործական սեռի զուգաբայական հարադրությունների խնդրառական արժույթը	227
Բ.3.2. Չեզոք սեռի զուգաբայական հարադրությունների խնդրառական արժույթը	231
Բ.4. Չուգաբայական հարադրությունների պարագաառությունը	234
Բ.5. Չուգաբայական հարադրությունների և նրանց պահանջած սեռի և բնության խնդիրների դասային խմբերը	240

ԳԼՈՒԽ III

ԳՐԱԲԱՐԻ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ

ԲԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺՈՒՅԹԸ

Պատճառական հարադրավոր բայերի առաջացումը	242
Ա. Պատճառական հարադրավոր բայերը	248
Բ. Պատճառական հարադրավոր բայերի արժույթը	253
Բ.1. Պատճառական հարադրավոր բայերի ենթակաառությունը	253
Բ.2. Պատճառական հարադրավոր բայերի ստորոգառությունը	254
Բ.3. Պատճառական հարադրավոր բայերի խնդրառությունը	254
Բ.4. Պատճառական հարադրավոր բայերի պարագաառությունը	262
Բ.5. Պատճառական հարադրավոր բայերի և նրանց պահանջած սեռի և բնության խնդիրների դասային խմբերը	264
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	267
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	279
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԵՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱ- ՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	296
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	297

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
7	Ա.13	(հետազայում նաև մյուս (եզվաբանները)	, հետազայում նաև մյուս (եզվաբանները
17	Ա.15	ուսումնասիրության	արժույթի արտահայտություն
17	Ա.10	որոնք,	որոնք
27	Ա.1	կոչականն ու ստորոգելին	կոչականը
28	Վ.1	կապակցվող խնդիրները	կապակցվող ստորոգելին, խնդիրները
30	Ա.3	որոնք	սրանք
31	Ա.3	. կամ էլ	կամ էլ
39	Վ.1	դրա	դրան
46	Ա.11	(Ազաթ., 66),	(Ազաթ., 66)
57	Վ.2	այս կամ այն	գրաբարյան
57	Վ.6	այս կամ այն	բոլոր
63	Ա.8	սեռի	չեզոք սեռի
72	Վ.1	արտահայտվում է նաև	արտահայտվում է
79	Վ.8	մանրամասնորեն մի	մի
99	Վ.13	հարադրի կախյալ բաղադրիչ:	հարադիր (կախյալ բաղադրիչ):
130	Վ.10	երկու	երեք
131	Ա.5	ենթակառուցյալ	3. ենթակառուցյալ
171	Վ.14	որժույթի	արժույթի
176	Վ.11	էառանձին	է առանձին
210	Վ.12	ինչպես	ինչպես՝
212	Վ.13	կիրառության մեջ դեպքում	կիրառության մեջ
237	Վ.9	հարսանէ	հասանէ

[130077]

Գուրգեն Կիպրոնի ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ԳՐԱԲԱՐԻ
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԱՐԺՈՒՅԹԸ**

Гурген Кипронович ХАЧАТРЯН

**ВАЛЕНТНОСТЬ
АНАЛИТИЧЕСКИХ ГЛАГОЛОВ
ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА**



«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
ԵՐԵՎԱՆ
2000թ.

Խմբագիր՝ Բ.Գ.Պ. Լ.Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Համակարգչային շարվածք
և ձեռագրություն՝

Վ. ՇԵԿՈՅԱՆ
Ա. ԱԼՈՅԱՆ
Վ. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԵՂԻՍՋԱՐՅԱՆ

Ծավալը՝ 19.25 տպ. մամուլ: Չափը՝ (80x84)1/16: Տպաքանակը՝ 400:

 Տպագրվել է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը

A U
86098